ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

2017 թվական

Հատոր IX

ՄԱՍ II

ԵՐԵՎԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ – 2018

ՀՏԴ 343.1
ԳՄԴ 64.411
Հ 247

Կազմեցին՝

Անի Դանիելյանը
ՀՀ դատական դեպարտամենտի միջազգային համագործակցության
վարչության պետ

Առնոլդ Վարդանյանը
ՀՀ վճռաբեկ դատարանի դատավորի
ավագ օգնական

Էլեն Վարդապետյանը
ՀՀ վճռաբեկ դատարանի դատավորի
ավագ օգնական

Հ 247 Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու/Կազմ՝ Ա. Դանիելյան, Ա. Վարդանյան, Է. Վարդապետյան. – Եր.: Էդիթ Պրինտ, 2018, Հ. IX, Մ. II. – 584 էջ:

ՀՏԴ 343.1
ԳՄԴ 64.411

ISBN 978-9939-75-258-7

Գիրքը վաճառքի ենթակա չէ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Partnership for Good Governance

Գործընկերություն հանուն լավ կառավարման





Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական գործերով 2017թ. որոշումների ժողովածուի տպագրությունն իրականացվել է **«Աջակցություն Հայաստանում քրեական արդարադատության համակարգի բարեփոխումներին և պայքար վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ»** ծրագրի կողմից, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագրի շրջանակներում: Սույն ժողովածուի մեջ ներկայացված տեսակետները որևէ կերպ չեն արտահայտում Եվրոպական միության և/կամ Եվրոպայի խորհրդի պաշտոնական տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 6

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների առարկայական դասակարգում 10

Աղբյուրների ցանկ թիվ 1.

ՀՀ Սահմանադրության դրույթներ 19

Աղբյուրների ցանկ թիվ 2.

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ 20

Աղբյուրների ցանկ թիվ 3.

ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներ 22

1. Ս.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0018/11/16 23

2. Ա.Մկրտչյանի և Ն.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԿԴ1/0014/01/16 38

3. Ն.Ալավերդյանի վերաբերյալ որոշում, ԿԴ1/0143/01/14 51

4. Ա.Մկրտչյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԴ/0024/01/15 60

5. Ա.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0180/01/15 81

6. Ս.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԿԴ2/0054/01/15 95

7. Վ.Կարապետյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0120/01/15 115

8. Հ.Սիմոնյանի վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0027/01/15 164

9. Վ.Գասպարիի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0190/11/16 178

10. Ս.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0012/11/15 202

11. Ա.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0986/06/16 215

12. Տ.Թամրազյանի վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0076/01/15 232

13. Ա.Մամաջանյանի վերաբերյալ որոշում, ԼԴ2/0055/01/15 245

14. Մ.Ավետյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0235/01/16 268

15. Ա.Միքայելյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0079/01/16 283

16. Հ.Ներսիսյանի և Է.Ամիրյանի վերաբերյալ որոշում, ՏԴ2/0005/01/16 295

17. Տ.Պետրոսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0084/06/16 309

18. Ա.Մացակյանի վերաբերյալ որոշում, ԿԴ3/0001/06/17 322

19. Ա.Մացակյանի վերաբերյալ որոշում (2), ԿԴ3/0001/06/17 344

20. Բ.Երիցյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0074/01/15 356

21. Ա.Գրիգյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԱՐԴ1/0006/11/16 374

22. Ա.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0106/01/17 385
23. Ֆ.Բոլդիրևի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0024/06/17 396
24. Ա.Գրինչուկի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0025/06/17 416
25. Ա.Ղարիբյանի վերաբերյալ որոշում, ԿԴ1/0008/15/16 437
26. Է.Մոսեսի վերաբերյալ որոշում, ԱՎԴ2/0020/01/16 445
27. Ա.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0265/06/11 455
28. Հ.Շահբազյանի վերաբերյալ որոշում, ՇԴ3/0012/01/15 470
29. Գ.Ղազարյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԴ/0017/13/12 483
30. Դ.Վարդանյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0115/01/16 491
31. Գ.Կուչուրյանի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0154/01/14 500
32. Ա.Մուրադյանի վերաբերյալ որոշում, ԵՄԴ/0072/01/16 509
33. Ս.Ավդոյանի վերաբերյալ որոշում, ԱՐԴ/0061/01/15 521
34. Տ.Քելյավցևայի և Շ.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0025/11/16 538
35. Շ.Կեշիշյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0097/06/17 549
36. Դ.Փաշայանի վերաբերյալ որոշում, ՇԴ3/0029/01/16 559
37. Ս.Ասատրյանի վերաբերյալ որոշում, ՎՔ-04/12 572

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ,
2017 ԹՎԱԿԱՆ

ՆԱԽԱԲԱՆ

Քրեական պալատի որոշումների նախադեպային բնույթով պայմանավորված՝ դրանք զգալի դերակատարություն ունեն քրեական արդարադատության ոլորտում իրավունքի գերակայությունն ապահովելու, վստահելի, կանխատեսելի և թափանցիկ արդարադատություն ձևավորելու, մարդու իրավունքները և ազատությունները երաշխավորելու գործում: Կարևորելով այդ որոշումներն իրավաբանական հանրությանը, ինչպես նաև հասարակության լայն շրջանակներին հասու դարձնելու նշանակությունը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը 2009 թվականից նախաձեռնել է իր որոշումների ամենամյա ժողովածուների հրատարակման գործընթաց:

Ձևավորված ավանդույթի շարունակությունն է սույն ժողովածուն, որը ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների 9-րդ հատորյակն է: Ժողովածուն ընդգրկում է 2017 թվականին ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից դռնբաց դատական նիստում քննված բողոքներով կայացված բոլոր նախադեպային որոշումները, որոնք թվով 81-ն են[1]: Ուշագրավ է այն հանգամանքը, որ մինչև 2017 թվականը քրեական պալատի հիմնարար որոշումների քանակը չի գերազանցել 60-ը: Այսպիսով, կարող ենք փաստել, որ 2017 թվականին գրանցվել է որոշումների աննախադեպ քանակ (այդ պատճառով 9-րդ հատորը բաղկացած է երկու մասից):

Հիշյալ որոշումները վերաբերում են ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքին:

Մասնավորապես, *Արթուր Օսիպյանի* վերաբերյալ 2017 թվականի հունիսի 22-ին կայացված թիվ ԵԿԴ/0046/13/16 որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ ծանր հիվանդության հիմքով անձին պատժի կրումից ազատելը դատարանի հայեցողությունն է, որն իրացնելիս դատարանը պետք է գնահատի օրենքով սահմանված հիմքերի առկայությունը, որպիսիք են ոչ միայն կատարված հանցանքի ծանրությունը, դատապարտյալի անձը, այլև հիվանդության բնույթը, դատապարտյալի առողջական վիճակը, ազատազրկման վայրում տրամադրվող բժշկական օգնության համարժեքությունը, առողջական վիճակի դինամիկան, անձի վարքագիծը (այն է՝ բժիշկների հետ համագործակցելուց նրա շարունակաբար հրաժարվելը) և այլ հանգամանքներ: ՀՀ վճռաբեկ դատարանը

[1] Մեկ բողոք քննարկվել է դռնփակ դատական նիստում, հետևաբար դրանով կայացված որոշումը տեղ չի գտել սույն ժողովածուում:

փաստել է, որ եթե անձի առողջական վիճակով պայմանավորված՝ պատիժը կրելուն զուգընթաց անհնարին է վերջինիս ապահովել համապատասխան պատշաճ բժշկական օգնությամբ, ապա հաշվի առնելով անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի բացարձակ արգելքը՝ անձին պատիժը կրելուց չազատելը չի կարող արդարացվել նրա կատարած արարքի բարձր հանրային վտանգավորությամբ և/ կամ նրա դրսևորած վարքագծով:

Անդրանիկ Խոջումյանի վերաբերյալ 2017 թվականի հունիսի 22-ին կայացված թիվ ՏԴ/0101/01/14 որոշման շրջանակներում ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ խուլիգանության և ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով նախատեսված՝ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույքը ոչնչացնելու սպառնալիքի հանցակազմերի հիմնական հատկանիշների մեկնաբանմանը և դրանց հարաբերակցության հիմնախնդրին՝ ընդգծելով, որ բոլոր այն դեպքերում, երբ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով թվարկված գործողությունները կատարելու սպառնալիքը մեկ այլ հանցագործության բաղկացուցիչ մասն է, ապա արարքը որակվում է ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով կամ հանցագործությունների համակցության կանոններով, այլ միայն այն նորմով, որը պարունակում է հանցագործության հատկանիշների առավել ամբողջական նկարագրություն: *Ազատ Խլղաթյանի* վերաբերյալ 2017 թվականի ապրիլի 12-ին կայացված թիվ ՏԴ/0085/01/14 որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձ է կատարել խուլիգանությունը ծանրացնող հանգամանքներով, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով (զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ կատարելը) որակելու խնդրին՝ նշելով, որ քննարկվող ծանրացնող հանգամանքը հանցավորին կարող է մեղսագրվել, եթե նշված առարկաների օգտագործումը զուգորդվել է բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիքով կամ անձանց կյանքի կամ առողջության համար իրական վտանգ ստեղծելով: *Սամվել Հովսեփյանի* վերաբերյալ 2017 թվականի ապրիլի 12-ին կայացված թիվ ԼԴ/0193/01/10 որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ հափշտակությունների և սեփականության դեմ ուղղված այլ հանցագործությունների դեպքում պատճառված նյութական վնասը հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող կարևոր գործոն է, հետևաբար՝ որքան մեծ է հանցագործությամբ պատճառված վնասի չափը, այնքան բարձր է արարքի հանրային վտանգավորության աստիճանը, ուստի վնասը վերականգնված չլինելու պարագայում ինքնին նվազում է պատիժը պայմանականորեն չկիրառելու հավանականությունը:

Էդգար Եղիազարյանի վերաբերյալ 2017 թվականի հունիսի 22-ին կայացված թիվ ԵԱՆԴ/0017/06/16 որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է կալանավորման պայմաններից մեկի՝ հիմնավոր կասկածի մեկնաբանմանը և դրա առկայու-

թյունը ստուգելիս մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմաններին: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը դիրքորոշում է արտահայտել առ այն, որ հիմնավոր կասկածի առկայությունը ստուգելիս դատարանն իրավասու չէ կանխորոշելու մեղքի հարցը, իրավական գնահատական տալու անձի մեղավորությանը կամ անմեղությանը, անմիջականորեն փաստելու անձի արարքում հանցակազմի առկայությունը կամ բացակայությունը: Հիշյալի հաշվառմամբ դատարանը քրեական գործով վարույթը բացառող հանգամանքի առերևույթ առկայությունը և դրա հնարավոր կիրառելիությունը պետք է հաստատի ոչ թե ներկայացված նյութերի, այդ թվում՝ ապացույցների՝ գործն ըստ էության քննելու և լուծելու ժամանակ պահանջվող աստիճանի չափ բազմակողմանի և խոր վերլուծության, այլ ներկայացված նյութերից բխող համեմատաբար ակնհայտ փաստերի հիման վրա (օրինակ՝ արարքը, որի կատարման մեջ մեղադրվում է անձը, դրա կատարման պահին հանցագործություն չի համարվել կամ որպես մեղադրյալ է ներգրավվել քրեական պատասխանատվության ենթարկվելու տարիքի չհասած անձը, կամ անցել են վաղեմության ժամկետները, ընդունվել է համաներման ակտ և այլն): Միևնույն ժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծեց, որ հիմնավոր կասկածի հարցը գնահատման ենթարկելիս վճռորոշ նշանակություն կարող են ունենալ այն իրավիճակները, երբ արարքին տրված իրավական որակումն ակնհայտորեն չհամապատասխանի արարքի փաստական նկարագրությանը (կամ անձին վերագրված փաստերը հաստատող՝ միջնորդությանը կից ներկայացված նյութերին), իսկ արարքի փաստական կողմն առերևույթ վկայի արարքին տրված իրավական որակման համեմատությամբ իր բնույթով առավել նվազ ծանրության ենթադրյալ հանցագործության կատարման մասին:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախադեպային դիրքորոշումներ է արտահայտել նաև այնպիսի իրավական հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են պաշտոնական կեղծիքի (ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդված) և փաստաթղթեր կեղծելու (ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդված) հանցակազմերի մեկնաբանումը (22.06.2017 թվականին կայացված թիվ ԱՐԴ/0116/01/15 և ԵԾԴ/0155/01/15 որոշումներ), ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնների մրցակցությունը (22.06.2017 թվականին կայացված թիվ ԼԴ4/0031/01/16 որոշում), սուտ մատնության դեպքի առթիվ քրեական գործ հարուցելու հիմքերի բավարարության գնահատումը (15.11.2017 թվականին կայացված թիվ ԼԴ2/0055/01/15 որոշում), խոշտանգման փաստի առթիվ արդյունավետ քննություն իրականացնելու չափանիշները (30.08.2017 թվականին կայացված թիվ ԵԱՔԴ/0190/11/16 որոշում), հետախուզվող մեղադրյալի նկատմամբ ընտրված կալանքը գրավով փոխարինելը (20.12.2017 թվականին կայացված թիվ ԵԿԴ/0265/06/11 որոշում), գործի հարուցման փուլի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողության սահմանները (30.08.2017 թվականին կայացված թիվ ԼԴ/0018/11/16 որոշում), բացարկման ենթակա անձի կողմից քրեական գործ հարուցելու իրավական հետևանքները (15.11.2017 թվականին կայացված թիվ ՏԴ2/0005/01/16 որոշում) և այլն:

Ժողովածուի կիրառական արդյունավետությունը բարձրացնելու նպատակով դրանում սահմանված է որոշումների առարկայական դասակարգման գործիք, որում առանձին ներկայացվում է, թե կոնկրետ որոշումը որ իրավադրույթի մեկնաբանության է վերաբերում: Ավելին՝ դրանում, ինչպես և նախորդ հատորներում, սահմանված են յուրաքանչյուր որոշման առարկայական մյուս բնութագրիչները, որոնք վերաբերում են ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում վկայակոչված և կիրառված ՀՀ Սահմանադրության դրույթներին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներին, ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներին:

Ժողովածուն ներառում է նաև լազերային սկավառակ, որում նույնությամբ առկա են հատորյակում ներառված դատական ակտերը, ինչն առավել դյուրին է դարձնում ժողովածուում զետեղված դատական ակտերին ծանոթանալը:

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածուի սույն հատորի հրատարակումը հնարավոր է դարձել Եվրոպայի խորհրդի հետ համագործակցության շնորհիվ:

Ս.Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ
ՀՀ վճռաբեկ դատարանի
քրեական պալատի նախագահ,
իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

Նյութական իրավունքի վերաբերյալ որոշումներ

Ն[2]-I Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատժի արդարացիությունը, պատժի նպատակները, պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները (ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ հոդվածներ)

Ն-I-1 Հ.Սիմոնյանի վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0027/01/15 (8, նույն որոշումը տե՛ս նաև Դ-V-2, Դ-XI-1, Դ-XXIX-3, Դ-XXXIV-1) 164

Ն-I-1-2 Դ.Վարդանյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0115/01/16 (30, նույն որոշումը տե՛ս նաև Ն-V-5) 491

Ն-II Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական օրենքի հետադարձ ուժը (ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդված)

Ն-II-1 Հ.Շահբազյանի վերաբերյալ որոշում, ՇԴ-3/0012/01/15 (28, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XIII-1) 470

Ն-III Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցագործության հասկացությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդված)

Ն-III-1 Ս.Ավդոյանի վերաբերյալ որոշում, ԱՐԴ/0061/01/15 (33) 521

Ն-IV Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցափորձը (ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ հոդված)

Ն-IV-1 Ս.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԿԴ-2/0054/01/15 (6, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXVII-1) 95

Ն-IV-2 Տ.Թամրազյանի վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0076/01/15 (12, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VII-1, Ն-VIII-1) 232

Ն-V Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատիժը պայմանականորեն չկիրառելը (ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդված)

Ն-V-1 Ա.Սկրտչյանի և Ն.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԿԴ-1/0014/01/16 (2, նույն որոշումը տե՛ս նաև Ն-X-1, Ն-XIV-1) 38

Ն-V-2 Ա.Միքայելյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0079/01/16 (15) 283

Ն-V-3 Ա.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0106/01/17 (22) 385

Ն-V-4 Է.Մոսեսի վերաբերյալ որոշում, ԱՎԴ-2/0020/01/16 (26) 445

Ն-V-5 Դ.Վարդանյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0115/01/16 (30, նույն որոշումը տե՛ս նաև Ն-I-1-2) 491

[2] Սույն դասակարգման մեջ նյութական իրավունքի վերաբերյալ որոշումները վկայակոչված են «Ն» տառով:

Ն-V-6 Դ.Փաշայանի վերաբերյալ որոշում, ՇԴ3/0029/01/16 (36)..... 559

Ն-VI Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական պատասխանատվությունից ազատելը վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով (ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդված)
Ն-VI-1 Ա.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0180/01/15 (5, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XVI-1)..... 81
Ն-VI-2 Վ.Կարապետյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0120/01/15 (7, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IX-1, Ն-XII-1, Դ-IV-1, Դ-IX-1, Դ-XIV-2, Դ-XXIX-2)..... 115

Ն-VII Մեկնաբանվող իրավադրույթ՝ սպանությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդված)
Ն-VII-1 Տ.Թամրազյանի վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0076/01/15 (12, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IV-2, Ն-VIII-1)..... 232

Ն-VIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը (ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդված)
Ն-VIII-1 Տ.Թամրազյանի վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0076/01/15 (12, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IV-2, Ն-VII-1)..... 232

Ն-IX Մեկնաբանվող իրավադրույթ՝ ծեծը (ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդված)
Ն-IX-1 Վ.Կարապետյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0120/01/15 (7, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VI-2, Ն-XII-1, Դ-IV-1, Դ-IX-1, Դ-XIV-2, Դ-XXIX-2)..... 115

Ն-X Մեկնաբանվող իրավադրույթ՝ աշխատանքի պաշտպանության կանոնները խախտելը (ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդված)
Ն-X-1 Ա.Սկրտչյանի և Ն.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԿԴ1/0014/01/16 (2, նույն որոշումը տե՛ս նաև Ն-V-1, Ն-XIV-1)..... 38

Ն-XI Մեկնաբանվող իրավադրույթ՝ խարդախությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդված)
Ն-XI-1 Ս.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0012/11/15 (10)..... 202

Ն-XII Մեկնաբանվող իրավադրույթ՝ գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը (ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդված)
Ն-XII-1 Վ.Կարապետյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0120/01/15 (7, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VI-2, Ն-IX-1, Դ-IV-1, Դ-IX-1, Դ-XIV-2, Դ-XXIX-2)..... 115

Ն-XIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ մաքսանենգությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդված)
Ն-XIII-1 Հ.Շահբազյանի վերաբերյալ որոշում, ՇԴ3/0012/01/15 (28, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-1)..... 470

Ն-XIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը (ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդված)
Ն-XIV-1 Ա.Սկրտչյանի և Ն.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԿԴ-1/0014/01/16 (2, նույն որոշումը տե՛ս նաև Ն-V-1, Ն-X-1).....38

Ն-XV Մեկնաբանվող իրավադրույթ՝ խուլիգանությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդված)
Ն-XV-1 Մ.Ավետյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0235/01/16 (14).....268

Ն-XVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառությունն առանց իրացնելու նպատակի (ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդված)
Ն-XVI-1 Ա.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0180/01/15 (5, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VI-1).....81

Ն-XVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ սուտ մատնությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդված)
Ն-XVI-1 Ա.Մամաջանյանի վերաբերյալ որոշում, ԼԴ-2/0055/01/15 (13, նույն որոշումը տե՛ս նաև Դ-V-3, Դ-XI-2, Դ-XIII-1, Դ-XIX-2).....245

Դատավարական իրավունքի վերաբերյալ որոշումներ

Դ[3]-I Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած հիմնական հասկացությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդված)
Դ-I-1 Գ.Ղազարյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԴ/0017/13/12 (29, նույն որոշումը տե՛ս նաև Դ-X-2).....483

Դ-II Մեկնաբանվող իրավադրույթ՝ ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը և անձնական ազատությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդված)
Դ-II-1 Վ.Գասպարիի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0190/11/16 (9).....178
Դ-II-2 Ա.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0986/06/16 (11, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XVI-1).....215
Դ-II-3 Տ.Պետրոսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0084/06/16 (17, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XVI-2).....309
Դ-II-4 Ա.Մացակյանի վերաբերյալ որոշում, ԿԴ-3/0001/06/17 (18, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XV-1, Դ-XVIII-1).....322

[3] Սույն դասակարգման մեջ դատավարական իրավունքի վերաբերյալ որոշումները վկայակոչված են «Դ» տառով:

Դ-II-5 Ֆ.Քոլդիրևի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0024/06/17 (23, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XIII-5, Դ-XVI-3) 396
Դ-II-6 Ա.Գրիճչուկի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0025/06/17 (24, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XVI-4) 416

Դ-III Մեկնաբանվող իրավադրույթ՝ գործի արդարացի քննությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդված)
Դ-III-1 Ա.Մացակյանի վերաբերյալ որոշում (2), ԿԴ-3/0001/06/17 (19, նույն որոշումը տե՛ս նաև Դ-VI-1, Դ-XXIV-1, Դ-XXXIII-1) 344
Դ-III-2 Ա.Մուրադյանի վերաբերյալ որոշում, ԵՄԴ/0072/01/16 (32, նույն որոշումը տե՛ս նաև Դ-VI-2, Դ-XI-3) 510

Դ-IV Մեկնաբանվող իրավադրույթ՝ անմեղության կանխավարկածը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդված)
Դ-IV-1 Վ.Կարապետյանի վերաբերյալ որոշում, ԵԾԴ/0120/01/15 (7, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VI-2, Ն-IX-1, Ն-XII-1, Դ-IX-1, Դ-XIV-2, Դ-XXIX-2) 115
Դ-IV-2 Բ.Երիցյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0074/01/15 (20, նույն որոշումը տե՛ս նաև Դ-IX-2, Դ-XIV-3) 357

Դ-V Մեկնաբանվող իրավադրույթ՝ կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը և դրա ապահովումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդված)
Դ-V-1 Ն.Ալավերդյանի վերաբերյալ որոշում, ԿԴ-1/0143/01/14 (3, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXX-1, Դ-XXXI-1) 51
Դ-V-2 Հ.Սիմոնյանի վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0027/01/15 (8, նույն որոշումը տե՛ս նաև Ն-I-1, Դ-XI-1, Դ-XXIX-3, Դ-XXXIV-1) 164
Դ-V-3 Ա.Մամաջանյանի վերաբերյալ որոշում, ԼԴ2/0055/01/15 (13, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XVI-1, Դ-XI-2, Դ-XIII-1, Դ-XIX-2) 245

Դ-VI Մեկնաբանվող իրավադրույթ՝ մրցակցությունը քրեական դատավարության ընթացքում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդված)
Դ-VI-1 Ա.Մացակյանի վերաբերյալ որոշում (2), ԿԴ-3/0001/06/17 (19, նույն որոշումը տե՛ս նաև Դ-III-1, Դ-XXIV-1, Դ-XXXIII-1) 344
Դ-VI-2 Ա.Մուրադյանի վերաբերյալ որոշում, ԵՄԴ/0072/01/16 (32, նույն որոշումը տե՛ս նաև Դ-III-2, Դ-XI-3) 509

Դ-VII Մեկնաբանվող իրավադրույթ՝ ապացույցների ազատ գնահատումը և ստուգումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ, 126-րդ հոդվածներ)
Դ-VII-1 Ա.Մկրտչյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԴ/0024/01/15 (4, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XIV-1, Դ-XXIX-1) 60

Դ–VIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործ հարուցելու և հանցագործությունը բացահայտելու պարտականությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդված)
Դ-VIII-1 Ս.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0018/11/16 (1, նույն որոշումը տե՛ս նաև Դ–XIX-1, Դ–XXI-1) 23
Դ-VIII-2 Հ.Ներսիսյանի և Է.Ամիրյանի վերաբերյալ որոշում, ՏԴ2/0005/01/16 (16, նույն որոշումը տե՛ս նաև Դ–XII-1, Դ–XIX-3, Դ–XX-1, Դ–XXII-1) 295

Դ–IX Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդված)
Դ–IX-1 Վ.Կարապետյանի վերաբերյալ որոշում, ԵԾԴ/0120/01/15 (7, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VI-2, Ն-IX-1, Ն-XII-1, Դ-IV-1, Դ-XIV-2, Դ–XXIX-2) 115
Դ–IX-2 Բ.Երիցյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0074/01/15 (20, նույն որոշումը տե՛ս նաև Դ–IV-2, Դ-XIV-3) 356

Դ–X Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատարանի կազմը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդված)
Դ-X-1 Ա.Ղարիբյանի վերաբերյալ որոշում, ԿԴ1/0008/15/16 (25, նույն որոշումը տե՛ս նաև Դ–XXXII-1) 437
Դ-X-2 Գ.Ղազարյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԴ/0017/13/12 (29, նույն որոշումը տե՛ս նաև Դ–I-1) 483

Դ–XI Մեկնաբանվող իրավադրույթ՝ մեղադրյալի իրավունքները և պարտականությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդված)
Դ-XI-1 Հ.Սիմոնյանի վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0027/01/15 (8, նույն որոշումը տե՛ս նաև Ն-I-1, Դ–V-2, Դ–XXIX-3, Դ–XXXIV-1) 164
Դ-XI-2 Ա.Մամաջանյանի վերաբերյալ որոշում, ԼԴ2/0055/01/15 (13, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XVI-1, Դ–V-3, Դ–XIII-1, Դ–XIX-2) 245
Դ-XI-3 Ա.Մուրադյանի վերաբերյալ որոշում, ԵՄԴ/0072/01/16 (32, նույն որոշումը տե՛ս նաև Դ–III-2, Դ–VI-2) 509

Դ–XII Մեկնաբանվող իրավադրույթ՝ բացարկները, ինքնաբացարկները և գործով վարույթից հեռացնելու մասին միջնորդությունները, դատավորի ինքնաբացարկը, դատախազին բացարկելը, քննիչին կամ հետաքննության մարմնի աշխատակցին բացարկելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 88-րդ, 90-92-րդ հոդվածներ)
Դ–XII-1 Հ.Ներսիսյանի և Է.Ամիրյանի վերաբերյալ որոշում, ՏԴ2/0005/01/16 (16, նույն որոշումը տե՛ս նաև Դ–VIII-2, Դ–XIX-3, Դ–XX-1, Դ–XXII-1) 295

Դ–XIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ որպես ապացույց չթույլատրվող նյութերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդված)
Դ–XIII-1 Ա.Մամաջանյանի վերաբերյալ որոշում, ԼԴ-2/0055/01/15 (13, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XVI-1, Դ–V-3, Դ–XI-2, Դ–XIX-2) 245

Դ–XIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ ապացույցների գնահատումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդված)
Դ–XIV-1 Ա.Սկրտչյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԴ/0024/01/15 (4, նույն որոշումը տե՛ս նաև Դ–VII-1, Դ–XXIX-1) 60
Դ–XIV-2 Վ.Կարապետյանի վերաբերյալ որոշում, ԵԾԴ/0120/01/15 (7, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VI-2, Ն-IX-1, Ն-XII-1, Դ–IV-1, Դ–IX-1, Դ–XXIX-2) 115
Դ–XIV-3 Բ.Երիցյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0074/01/15 (20, նույն որոշումը տե՛ս նաև Դ–IV-2, Դ–IX-2) 356

Դ–XV Մեկնաբանվող իրավադրույթ՝ կասկածյալի ձերբակալման կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131.1-րդ հոդված)
Դ–XV-1 Ա.Մացակյանի վերաբերյալ որոշում, ԿԴ3/0001/06/17 (18, նույն որոշումը տե՛ս նաև Դ–II-4, Դ–XVIII-1) 322

Դ–XVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ խափանման միջոց կիրառելու հիմքերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդված)
Դ–XVI-1 Ա.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0986/06/16 (11, նույն որոշումը տե՛ս նաև Դ–II-2) 215
Դ–XVI-2 Տ.Պետրոսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0084/06/16 (17, նույն որոշումը տե՛ս նաև Դ–II-3) 309
Դ–XVI-3 Ֆ.Բոլղիրևի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0024/06/17 (23, նույն որոշումը տե՛ս նաև Դ–II-5) 396
Դ–XVI-4 Ա.Գրիճչուկի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0025/06/17 (24, նույն որոշումը տե՛ս նաև Դ–II-6) 416
Դ–XVI-5 Ա.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0265/06/11 (27, նույն որոշումը տե՛ս նաև Դ–XVII-1) 455

Դ–XVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ գրավը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդված)
Դ–XVII-1 Ա.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0265/06/11 (27, նույն որոշումը տե՛ս նաև Դ–XVI-5) 455

Դ–XVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ ժամկետների հաշվումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդված)
Դ–XVIII-1 Ա.Մացակյանի վերաբերյալ որոշում, ԿԴ3/0001/06/17 (18, նույն որոշումը տե՛ս նաև Դ–II-4, Դ–XV-1) 322

Դ–XIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործ հարուցելու պարտականությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 175-րդ հոդված)
Դ–XIX-1 Ս.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0018/11/16 (1, նույն որոշումը տե՛ս նաև Դ–VIII-1, Դ–XXI-1).....23
Դ–XIX-2 Ա.Մամաջանյանի վերաբերյալ որոշում, ԼԴ2/0055/01/15 (13, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XVI-1, Դ–V-3, Դ–XI-2, Դ–XIII-1).....245
Դ–XIX-3 Հ.Ներսիսյանի և Է.Ամիրյանի վերաբերյալ որոշում, ՏԴ2/0005/01/16 (16, նույն որոշումը տե՛ս նաև Դ–VIII-2, Դ–XII-1, Դ–XX-1, Դ–XXII-1) 295

Դ–XX Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործ հարուցելու առիթները, քրեական գործի նյութերով նոր գործի հարուցումը, քննչական ենթակայությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ, 184-րդ, 190-րդ հոդվածներ)
Դ–XX-1 Հ.Ներսիսյանի և Է.Ամիրյանի վերաբերյալ որոշում, ՏԴ2/0005/01/16 (16, նույն որոշումը տե՛ս նաև Դ–VIII-2, Դ–XII-1, Դ–XIX-3, Դ–XXII-1).....295

Դ–XXI Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման կարգը, քրեական գործի հարուցումը մերժելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ, 185-րդ հոդվածներ)
Դ–XXI-1 Ս.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0018/11/16 (1, նույն որոշումը տե՛ս նաև Դ–VIII-1, Դ–XIX-1).....23

Դ–XXII Մեկնաբանվող իրավադրույթ՝ քննչական ենթակայությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդված)
Դ–XXII-1 Հ.Ներսիսյանի և Է.Ամիրյանի վերաբերյալ որոշում, ՏԴ2/0005/01/16 (16, նույն որոշումը տե՛ս նաև Դ–VIII-2, Դ–XII-1, Դ–XIX-3, Դ–XX-1).....295

Դ–XXIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանավորման ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունների քննումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդված)
Դ–XXIII-1 Շ.Կեշիշյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0097/06/17 (35, նույն որոշումը տե՛ս նաև Դ–XXIV-2) 549

Դ–XXIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդված)
Դ–XXIV-1 Ա.Մացակյանի վերաբերյալ որոշում (2), ԿԴ3/0001/06/17 (19, նույն որոշումը տե՛ս նաև Դ–III-1, Դ–VI-1, Դ–XXXIII-1).....344
Դ–XXIV-2 Շ.Կեշիշյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0097/06/17 (35, նույն որոշումը տե՛ս նաև Դ–XXIII-1).....549

Դ–XXV Մեկնաբանվող իրավադրույթ՝ հետագա դատական վերահսկողությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդված)
Դ-XXV-1 Տ.Քելյավցևայի և Ծ.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԴ/0025/11/16 (34) 538

Դ–XXVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ քաղաքացիական պատասխանողի մասնակցությունը դատական քննությանը և նրա չներկայանալու հետևանքները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 305-րդ հոդված)
Դ-XXVI-1 Գ.Կուչուրյանի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0154/01/14 (31) 500

Դ–XXVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական քննության սահմանները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդված)
Դ-XXVII-1 Ս.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԿԴ2/0054/01/15 (6, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IV-1) 95

Դ–XXVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ հետագա դատական վերահսկողությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդված)
Դ-XXVIII-1 Ա.Գրիգորյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԱՐԴ1/0006/11/16 (21, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXIX-4) 374

Դ–XXIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատավճռի օրինական, հիմնավորված և պատճառաբանված լինելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդված)
Դ-XXIX-1 Ա.Սկրտչյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԴ/0024/01/15 (4, նույն որոշումը տե՛ս նաև Դ-VII-1, Դ-XIV-1) 60
Դ-XXIX-2 Վ.Կարապետյանի վերաբերյալ որոշում, ԵԾԴ/0120/01/15 (7, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VI-2, Ն-IX-1, Ն-XII-1, Դ-IV-1, Դ-IX-1, Դ-XIV-2) 115
Դ-XXIX-3 Հ.Սիմոնյանի վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0027/01/15 (8, նույն որոշումը տե՛ս նաև Ն-I-1, Դ-V-2, Դ-XI-1, Դ-XXXIV-1) 164
Դ-XXIX-4 Ա.Գրիգորյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԱՐԴ1/0006/11/16 (21, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXVIII-1) 374

Դ–XXX Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատավճռի պատճենը հանձնելը դատապարտվածին կամ արդարացվածին (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդված)
Դ-XXX-1 Ն.Ալավերդյանի վերաբերյալ որոշում, ԿԴ1/0143/01/14 (3, նույն որոշումը տե՛ս նաև Դ-V-1, Դ-XXXI-1) 51

Դ–XXXI Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ բողոք բերելու ժամկետը, բողոքարկման ժամկետը վերականգնելու կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-380-րդ հոդվածներ)
Դ–XXXI-1 Ն.Ալավերդյանի վերաբերյալ որոշում, ԿԴ1/0143/01/14 (3, նույն որոշումը տե՛ս նաև Դ–V-1, Դ–XXX-1).....51

Դ–XXXII Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննության կարգով գործը քննող դատարանի կազմը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 387-րդ հոդված)
Դ-XXXII-1 Ա.Ղարիբյանի վերաբերյալ որոշում, ԿԴ1/0008/15/16 (25, նույն որոշումը տե՛ս նաև Դ–X-1) 437

Դ–XXXIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ դատարանում գործի քննության կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդված)
Դ-XXXIII-1 Ա.Մացակյանի վերաբերյալ որոշում (2), ԿԴ3/0001/06/17 (19, նույն որոշումը տե՛ս նաև Դ–III-1, Դ–VI-1, Դ–XXIV-1) 344

Դ–XXXIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ նշանակված պատժի անհամապատասխանությունը հանցագործության ծանրությանը և ամբաստանյալի անձին (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 399-րդ հոդված)
Դ-XXXIV-1 Հ.Սիմոնյանի վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0027/01/15 (8, նույն որոշումը տե՛ս նաև Ն-I-1, Դ–V-2, Դ–XI-1, Դ–XXIX-3).....164

Դ–XXXV Մեկնաբանվող իրավադրույթ՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտը վերանայող դատարանը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդված)
Դ–XXXV-1 Ս.Ասատրյանի վերաբերյալ որոշում, ՎԲ-04/12 (37).....572

Աղբյուրների ցանկ թիվ 1
ՀՀ Սահմանադրության դրույթներ

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդված	
(2015 թվականի փոփոխություններով)	(13)
ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդված	
(2015 թվականի փոփոխություններով)	(13)
ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդված	
(2015 թվականի փոփոխություններով)	(9)
ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդված	
(2015 թվականի փոփոխություններով)	(11), (17), (18), (23), (24)
ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդված	
(2015 թվականի փոփոխություններով)	(8)
ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդված	
(2015 թվականի փոփոխություններով)	(3)
ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդված	
(2015 թվականի փոփոխություններով)	(3), (16), (18)

Աղբյուրների ցանկ թիվ 2
Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ

1. Barabanshchikov v. Russia, 2009 թվականի հունվարի 8-ի վճիռ (9)
2. Boicenco v. Moldova, 2006 թվականի հուլիսի 11-ի վճիռ (9)
3. Gul v. Turkey, 2000 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռ (9)
4. Tanrıkulu v. Turkey, 1999 թվականի հուլիսի 8-ի վճիռ (9)
5. Khadzhialiyev and Others v. Russia, 2008 թվականի նոյեմբերի 6-ի վճիռ (9)
6. Ognyanova and Choban v. Bulgaria, 2006 թվականի փետրվարի 23-ի վճիռ (9)
7. Amine Guzel v. Turkey, 2013 թվականի սեպտեմբերի 17-ի վճիռ (9)
8. Hugh Jordan v. the UK, 2001 թվականի մայիսի 4-ի վճիռ (9)
9. Mikheev v. Russia, 2006 թվականի հունվարի 26-ի վճիռ (9)
10. Ergi v. Turkey, 1998 թվականի հուլիսի 28-ի վճիռ (9)
11. Mehmet Emin Yuksel v. Turkey, 2004 թվականի հուլիսի 20-ի վճիռ (9)
12. Ogur v. Turkey, 1999 թվականի մայիսի 20-ի վճիռը (9)
13. Pankov v. Bulgaria, 2010 թվականի հոկտեմբերի 7-ի վճիռ (9)
14. Bati and Others v. Turkey, 2004 թվականի հունիսի 3-ի վճիռ (9)
15. Aksoy v. Turkey, 1996 թվականի դեկտեմբերի 18-ի վճիռ (9)
16. McKerr v. the United Kingdom, 2001 թվականի մայիսի 4-ի վճիռ (9)
17. Ozbey v. Turkey, 2001 թվականի մարտի 8-ի որոշում (9)
18. Gorgiev v. the former Yugoslav Republic of Macedonia, 2012 թվականի ապրիլի 19-ի վճիռ (9)
19. El Masri v. "the former Yugoslav Republic of Macedonia", 2012 թվականի դեկտեմբերի 13-ի վճիռ (9)
20. J.L. v. Latvia, 2012 թվականի ապրիլի 17-ի վճիռ (9)
21. Lopata v. Russia, 2010 թվականի հուլիսի 13-ի վճիռ (9)
22. Afanasyev v. Ukraine, 2005 թվականի ապրիլի 5-ի վճիռ (9)
23. Lyapin v. Russia, 2014 թվականի հոկտեմբերի 24-ի վճիռ (9)
24. 97 Members of the Gldani Congregation of Jehovah's Witnesses and Others v. Georgia, 2007 թվականի մայիսի 3-ի վճիռ (9)
25. Bekos and Koutropoulos v. Greece, 2005 թվականի դեկտեմբերի 13-ի վճիռ (9)
26. Labita v. Italy, 2000 թվականի ապրիլի 6-ի վճիռ (9)
27. Assenov and Others v. Bulgaria, 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռ (9)
28. Zelilof v. Greece, 2004 թվականի մայիսի 24-ի վճիռ (9)
29. Buzadji v. the Republic of Moldova [GC], 2016 թվականի հուլիսի 5-ի վճիռ (17)

30. Aleksanyan v. Russia, 2008 թվականի դեկտեմբերի 22-ի վճիռ (17)
31. Boicenco v. Moldova, 2006 թվականի հուլիսի 11-ի վճիռ (17)
32. Khoudoiorov v. Russia, 2005 թվականի նոյեմբերի 8-ի վճիռ (17)
33. Piruzyan v. Armenia, 2012 թվականի հունիսի 26-ի վճիռ (17)
34. Aquilina v. Malta, 1999 թվականի ապրիլի 29-ի վճիռ (18)
35. Stephens v. Malta (թիվ 2), 2009 թվականի ապրիլի 21-ի վճիռ (18)
36. Ladent v. Poland, 2008 թվականի մարտի 18-ի վճիռ (18)
37. McKay v. The United Kingdom, 2006 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռ (18)
38. Varga v. Romania, 2008 թվականի ապրիլի 1-ի վճիռ (18)
39. Viorel Burzo v. Romania, 2009 թվականի հունիսի 30-ի վճիռ (18)
40. Mooren v. Germany [GC], 2009 թվականի հուլիսի 9-ի վճիռ (18)
41. Zalyan and others v. Armenia, 2016 թվականի մարտի 17-ի վճիռ (18)
42. Creanga v. Romania, 2012 թվականի փետրվարի 23-ի վճիռ (18)
43. Penev v. Bulgaria, 2010 թվականի հունվարի 7-ի վճիռ (18)
44. Hermi v. Italy, 2006 թվականի հոկտեմբերի 18-ի վճիռ (18)
45. Minelli v. Switzerland, 1983 թվականի մարտի 25-ի վճիռ (22)
46. Nerattini v. Greece, 2008 թվականի դեկտեմբերի 18-ի վճիռ (22)
47. Didu v. Romania, 2009 թվականի ապրիլի 14-ի վճիռ (22)
48. Belane Nagy v. Hungary, 2016 թվականի դեկտեմբերի 16-ի վճիռ (1)
49. Idalov v. Russia, 2012 թվականի մայիսի 22-ի վճիռ (27)
50. Musuc v. Moldova, 2007 թվականի նոյեմբերի 6-ի վճիռ (27)
51. Aleksandr Makarov v. Russia, 2009 թվականի մարտի 14-ի վճիռ (27)
52. Vrencev v. Serbia, 2008 թվականի սեպտեմբերի 23-ի վճիռ (27)
53. Neumeister v. Austria, 1968 թվականի հունիսի 27-ի վճիռ (27)
54. Asatryan v.Armenia, 2017 թվականի ապրիլի 27-ի վճիռ (37)

Աղբյուրների ցանկ թիվ 3
ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներ

1. ՍԴՈ-844, 2009 թվականի դեկտեմբերի 7 (21)
2. ՍԴՈ-1387, 2017 թվականի նոյեմբերի 21 (27)

1.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼԴ/0018/11/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատախազ Ա.ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

2017 թվականի օգոստոսի 30-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2016 թվականի հոկտեմբերի 10-ի որոշման դեմ դիմող Սիրվարդ Յուրիկի Գևորգյանի ներկայացուցիչ Ռոման Կոնինյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2016 թվականի ապրիլի 14-ին դիմող Սիրվարդ Գևորգյանը հաղորդում է ներկայացրել ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժին այն մասին, որ 1981 թվականին ժառանգությամբ փոխանցված անասնագոմը Հարություն Ամիրջանյանի կողմից ապօրինի քանդվել է: Շնող համայնքի ղեկավար Հովիկ Սահակյանը, հանդիսանալով պաշտոնատար անձ, իր պաշտոնեական դիրքը ծառայողական շահերին հակառակ է օգտագործել, կատարել է այնպիսի գործողություններ, որոնք ակնհայտորեն դուրս են եկել իր լիազորությունների շրջանակից, այն է՝ հանրային ճանա-

պարհը տրամադրել է քաղաքացուն, որն ապօրինի շինարարություն է կատարել, չի արգելել հանրային ճանապարհի վրա Հարություն Ամիրջանյանի կողմից պատնեշի կառուցումը, վարչական պատասխանատվության չի ենթարկել զանցանք կատարած անձին:

ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնի ավագ հետաքննիչ Ք.Արամյանի՝ 2016 թվականի ապրիլի 22-ի որոշմամբ Ս.Գևորգյանի հաղորդման վերաբերյալ նախապատրաստած նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է Հարություն Ամիրջանյանի և Հովիկ Սահակյանի արարքներում հանցակազմի բացակայության հիմքով:

Քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ դիմող Ս.Գևորգյանի կողմից Լոռու մարզի դատախազ Գ.Էլիզբարյանին ներկայացված բողոքը 2016 թվականի մայիսի 2-ի որոշմամբ մերժվել է անհիմն լինելու պատճառաբանությամբ:

2. Դատախազ Գ.Էլիզբարյանի որոշման դեմ դիմող Ս.Գևորգյանը 2016 թվականի մայիսի 17-ին բողոք է ներկայացրել Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել բողոքը մերժելու մասին որոշումը, պարտավորեցնել հարուցել քրեական գործ և իրականացնել քրեական հետապնդում:

Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 11-ի որոշմամբ դիմող Ս.Գևորգյանի բողոքը բավարարվել է, այն է՝ վերացվել են ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնի ավագ հետաքննիչ Ք.Արամյանի՝ 2016 թվականի ապրիլի 22-ի և Լոռու մարզի դատախազ Գ.Էլիզբարյանի՝ 2016 թվականի մայիսի 2-ի որոշումները:

3. Շահագրգիռ անձ Հ.Ամիրջանյանի ներկայացուցիչ Ա.Սուքիասյանի և Լոռու մարզի դատախազի տեղակալ Մ.Մովսիսյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2016 թվականի հոկտեմբերի 10-ի որոշմամբ բողոքները բավարարվել են. այն է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 11-ի որոշումը բեկանվել է, և դիմող Ս.Գևորգյանի բողոքը՝ մերժվել:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 10-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դիմող Ս.Գևորգյանի ներկայացուցիչ Ռ.Կոնինյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի որոշմամբ Ս.Գևորգյանի ներկայացուցիչ Ռ.Կոնինյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքին 2017 թվականի մարտի 9-ին պատասխան է ներկայացրել շահագրգիռ անձ Հարություն Ամիրջանյանի ներկայացուցիչ Արթուր Սուքիասյանը՝ խնդրելով մերժել վճռաբեկ բողոքը և օրինական ուժի

մեջ թողնել Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 10-ի որոշումը:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 11-ի որոշման համաձայն՝ *«(…) [Ն]յութերի նախապատրաստման ընթացքում վարույթն իրականացնող մարմինը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն չի կատարել՝ պարզելու, թե վիճելի տարածքում ի վերջո անասնագոմ փաստացի եղել է, թե ոչ, բավարարվելով միայն այն հանգամանքով, որ վիճելի տարածքի նկատմամբ Ս.Գևորգյանի սեփականության իրավունքը գրանցված չէ, և այն սեփականության իրավունքով պատկանում է Հ.Ամիրջանյանին:*

Միևչդեռ նյութերի նախապատրաստության ընթացքում Ս.Գևորգյանը պնդել է, որ նշված տարածքում իր ընտանիքն ունեցել է անասնագոմ, այն փաստացի տիրապետել են մինչև 2012 թվականը Շնող գյուղի բնակիչ Ս.Բեկթաշյանն իր բացատրության մեջ նշել է, որ վիճելի տարածքում Ս.Գևորգյանի սկեսրայրին 1980-ական թվականներին թույլատրվել է կառուցել փոքրիկ գոմ, որը հետագայում վերածվել է հողաթմբի: Հ.Ամիրջանյանը բացատրություն է տվել, որ նշված տարածքում գտնվել է իր հող «արաղանոցը», իսկ Շնող համայնքի ղեկավար Հ.Սահակյանը դատարանում հայտնեց, որ նշված տարածքում եղել է ինչ-որ հողաշեն շինություն:

Դատարանը գտնում է, որ վարույթն իրականացնող մարմինը վիճահարույց տարածքում գտնվող շինության մասին վերոգրյալ փաստական տվյալների առկայության պայմաններում բավարար և անհրաժեշտ միջոցառումներ չի ձեռնարկել պարզելու, թե ի վերջո վիճահարույց տարածքում ինչ շինություն է գտնվել, ում կողմից է այն փաստացի տիրապետվել և օգտագործվել, ինչ նպատակի է ծառայել, երբ և ում կողմից է քանդվել:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ վիճելի տարածքի նկատմամբ Ս.Գևորգյանի սեփականության իրավունքը գրանցված չէ, ապա Դատարանը գտնում է, որ այդ փաստը բավարար չէ հաստատապես պնդելու, որ վիճելի տարածքում անասնագոմ չի եղել և փաստացի չի տիրապետվել Ս.Գևորգյանի ընտանիքի կողմից: Ինչ վերաբերվում է այն հանգամանքին, որ վիճելի տարածքի նկատմամբ գրանցված է Հ.Ամիրջանյանի սեփականությունը, ապա Դատարանն արձանագրում է, որ վերջինս այդ իրավունքը գրանցել է վիճարկվող գործողություններից առնվազն մեկ տարի անց, ուստի այդ հանգամանքը ևս չի կարող բացառել, որ վիճելի տարածքում անասնագոմ է եղել:

Դատարանը գտնում է, որ առանց վերոգրյալ փաստական տվյալների բազմակողմանի և լրիվ ստուգման հնարավոր չէ հիմնավոր եզրահանգման

գալ Հ.Ամիրջանյանի ենթադրյալ արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածով սահմանված հանցակազմի առկայության կամ բացակայության վերաբերյալ: (...)

Դատարանը փաստում է, որ նյութերի նախապատրաստության ընթացքում ձեռք բերված տվյալներով պարզվել է, որ Հ.Ամիրջանյանն իր դարպասին կից տարածքում՝ համայնքին պատկանող հանրային ճանապարհի վրա ինքնակամ պարիսպ է կառուցել՝ օրենքով սահմանված կարգի շրջանցմամբ՝ շինարարության թույլտվության հարցը համայնքի ավագանու նիստում չի քննարկվել, համապատասխան որոշում չի կայացվել, այլ համայնքի ղեկավարը Հ.Ամիրջանյանին միանձնյա բանավոր թույլտվություն է տվել՝ կառուցել պարիսպը, ինչպես նաև վերջինիս կողմից Հ.Ամիրջանյանի նկատմամբ վարչական պատասխանատվության միջոցներ չեն կիրառվել, իսկ դիմողի ներկայացուցիչը դատարանում հայտնեց, որ Հ.Ամիրջանյանի շինարարությունը փաստացի կասեցված չէ: Հետագայում՝ 23.03.2016թ. նշված հանրային ճանապարհի գործառնական նշանակությունը փոխվել է, և հողամասը վաճառվել է Հ.Ամիրջանյանին:

Անդրադառնալով Շնող համայնքի ղեկավար Հ.Սահակյանի կատարած ենթադրյալ արարքին վարույթն իրականացնող մարմնի տված գնահատականին՝ Դատարանն արձանագրում է, որ այս առումով ևս վարույթն իրականացնող մարմինը բավարար և անհրաժեշտ միջոցներ չի ձեռնարկել պարզելու վերոնշյալ պայմաններում Հ.Սահակյանի ենթադրյալ արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 315.2-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի առկայությունը կամ բացակայությունը: (...)

Վերոգրյալի հիման վրա Դատարանն արձանագրում է, որ իրավաչափ չէ վարույթն իրականացնող մարմնի հետևությունը, որ Ս.Գևորգյանի հաղորդման մեջ նշված հանգամանքների կապակցությամբ իրականացված նախնական ստուգման արդյունքում ձեռք բերված փաստական տվյալները բավարար են հավաստելու, որ քրեական գործ հարուցելու օրինական հիմքերը բացակայում են: (...)» (տե՛ս նախապատրաստված նյութեր, թերթեր 110-113):

6. Վերաքննիչ դատարանը 2016 թվականի հոկտեմբերի 10-ի որոշմամբ վկայակոչելով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի՝ Գագիկ Ղևոնդյանի վերաբերյալ թիվ ԵԿԴ/0041/11/13 գործով կայացված որոշումը, նշել է հետևյալը. *«(…) Լոռու մարզի ընդհանուր իրավասության [առաջին ատյանի] դատարանը հիմք է ընդունել միայն դիմողի հայտարարությունը, թե վիճահարույց տարածքում անասնագոմ են ունեցել, անտեսելով Հարություն Ամիրջանյանի, Հովիկ Սահակյանի, Սպարտակ Բեկքաշյանի բացատրությունները, պետական մարմիններից ստացված տեղեկատվությունները: Եթե պայմանականորեն էլ ընդունել, որ վիճահարույց տարածքում նախկին դարում ինչ-որ ինքնակամ կառույց է եղել, ապա այն*

գտնվել է համայնքային ճանապարհի վրա, բնականաբար պատկանել է համայնքին, իսկ համայնքը բողոք չի ներկայացրել, ուստի՝ քրեական գործ չի կարող ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել, քանզի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերը հարուցվում են ոչ այլ կերպ, քան տուժողի բողոքի հիման վրա:

(...)

Քրեական վարույթն իրականացնող մարմինը միանգամայն իրավացիորեն է հիմնվել ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ կետի վրա ու ՀՀ քրեական օրենսգրքի 315.2-րդ հոդվածով քրեական գործ չի հարուցել, քանզի համայնքի ղեկավարի գործողությունների հետևանքով վնաս չի պատճառվել ոչ համայնքին, ոչ էլ որևէ ֆիզիկական անձի:

(...)

Ինչ վերաբերում է Շնող համայնքի ղեկավար Հովիկ Սահակյանի կողմից իր պաշտոնեական լիազորությունները չարաշահելուն, պաշտոնեական լիազորություններն անցնելուն, ապա քրեական վարույթն իրականացնող մարմինը միանգամայն իրավացիորեն հանգել է ճիշտ հետևության, որ նշյալ հոդվածները նյութական հանցակազմեր են ու ավարտված են համարվում օրենսդրի կողմից մատնանշված որոշակի հատուկ՝ էական վնասի առաջացման պայմաններում: Շնող համայնքի ղեկավարի գործողությունների հետևանքով անձանց կամ համայնքի օրինական շահերին վնաս պատճառվելու վերաբերյալ նյութերի նախապատրաստմամբ տվյալներ ձեռք չեն բերվել:

Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ առաջին ատյանի դատարանը դիմող Ս.Գևորգյանի բողոքը բավարարելիս և «Քրեական գործի հարուցումը մերժելու մասին» ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնի հետաքննության խմբի ավագ տեսուչ Ք.Սրամյանի 22.04.2016թ., «Բողոքը մերժելու մասին» Լոռու մարզի դատախազ Գ.Էլիզբարյանի 02.05.2016թ. որոշումները վերացնելու բավարար հիմքեր չի ունեցել, ուստի գործով շահագրգիռ անձ Հ.Ամիրջանյանի ներկայացուցիչ Ա.Սուքիասյանի և Լոռու մարզի դատախազի տեղակալ Մ.Մովսիսյանի վերաքննիչ բողոքները պետք է բավարարել, իսկ դատարանի որոշումը բեկանել՝ մերժելով Ս.Գևորգյանի բողոքը» (տե՛ս նախապատրաստված նյութեր, թերթեր 240-265):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքի հեղինակի կարծիքով Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 10-ի որոշումն օրինական և հիմնավոր չէ, դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա, որոնց պարագայում կայացված դատական ակտը ենթակա է բեկանման:

7.1 Մասնավորապես՝ բողոքի հեղինակը, անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման հետ կապված Վերաքննիչ դատարանի դիրքորոշմանը, ընդգծել է, որ վերջինս առանց պատճառաբանելու, հպանցիկ կերպով նշել է միայն, որ անասնագոմի նկատմամբ Սիրվարդ Գևորգյանի սեփականության իրավունքը գրանցված չէ, և Հարությունյան Ամիրջանյանի կողմից Սիրվարդ Գևորգյանի գույքը ոչնչացնելու վերաբերյալ ապացույցներ չկան: Մինչդեռ, ըստ բողոքաբերի՝ վերոգրյալ պատճառաբանությունը հիմնավոր չէ:

Բացի այդ, բողոք բերած անձի համոզմամբ իրավաչափ համարվել չի կարող նաև Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, թե քրեական գործ չի կարող հարուցվել, քանի որ բացակայում է տուժողի բողոքը: Ըստ բողոքաբերի՝ այդ պարագայում կստացվի այնպես, որ սեփականության իրավունքի ձեռքբերման գործընթացում գտնվող ինքնակամ շինությունը կարող է քանդվել ցանկացած անձի կողմից, իսկ այդ շինությունը տիրապետող ու օգտագործող անձը չի կարող համարվել տուժող և հայցել իրավական պաշտպանություն երրորդ անձանց ոտնձգություններից:

8. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության կամ, եթե գործի փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս, օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի որոշմանը:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործի հարուցման փուլի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողության սահմանների հստակեցման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ են արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունները այն մասին, որ Առաջին ատյանի դատարանը քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելու բավարար հիմքեր չի ունեցել:

10. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝ *«Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը պարտավոր են իրենց իրավասության սահմաններում քրեական գործ հարուցել հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում, օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկել հանցագործություն կատարած անձանց և հանցագործության, ինչպես նաև դրա կատարման հանգամանքները բացահայտելու համար:*

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 175-րդ հոդվածի համաձայն՝ *«Քրեական գործ հարուցելու՝ սույն օրենսգրքով նախատեսված առիթների և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը, իրենց իրավասության շրջանակներում, պարտավոր են քրեական գործ հարուցել»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում:

2. Նշված ժամկետում կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ, այլ նյութեր, ինչպես նաև կարող է կատարվել դեպքի վայրի զննություն, հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում կարող են բերման և անձնական խուզարկության ենթարկվել անձինք, հետազոտման համար վերցվել նմուշներ, նշանակվել փորձաքննություն:

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քրեական գործ հարուցելու առիթն անօրինական լինելու կամ հիմքերի բացակայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին:*

(...)»:

5. Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն: Բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից գործի հարուցումը»:

11. Մեջբերված նորմերի համակարգային վերլուծության համատեքստում գործի հարուցման փուլի և դրա կապակցությամբ իրականացվող դատական վերահսկողության սահմանների հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է իր կողմից կայացված մի շարք որոշումներում՝ արտահայտելով հետևյալ իրավական դիրքորոշումները.

- «(...) Քրեական գործի հարուցման փուլում վարույթն իրականացնող մարմինը պարզում է քրեական գործ հարուցելու առիթների և հիմքերի առկայության կամ բացակայության փաստը: Այս փուլում հանցագործության փաստի հաստատման և անձի մեղքի հարց չի քննարկվում» (տե՛ս Գագիկ Ղևոնդյանի վերաբերյալ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0044/11/13 որոշման 14-րդ կետը):

- «(...) քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննության ընթացքում դատարանը վերահսկողություն չի իրականացնում նախնական քննության ընթացքի նկատմամբ: Դատարանը չի միջամտում քրեական դատավարության ընթացքին, չի անդրադառնում բողոքարկվող որոշման կայացման համար հիմք հանդիսացած քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարման անհրաժեշտությանը կամ նպատակահարմարությանը: Այս հարցերը գտնվում են նյութերի նախապատրաստությունն իրականացնող մարմինների բացառիկ լիազորությունների սահմաններում, (...):

Դատարանի խնդիրն այս դեպքում կայանում է նրանում, որպեսզի պարզվի, թե վիճարկվող որոշումը կայացվե՞լ է արդյոք նյութական և դատավարական օրենսդրության պահանջներին համապատասխան և բխո՞ւմ է արդյոք նյութերի նախապատրաստության արդյունքում ձեռք բերված փաստական տվյալներից» (տե՛ս Գագիկ Ղևոնդյանի վերաբերյալ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0044/11/13 որոշման 16-րդ կետը):

- «(...) մինչդատական վարույթի նկատմամբ հետագա վերահսկողության շրջանակներում դատական ստուգման ենթարկելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը, դատարանը պետք է պարզի, թե հաղորդման մեջ նշված հանգամանքների կապակցությամբ իրականացված նախնական ստուգման արդյունքում ձեռք բերված փաստական տվյալները բավարա՞ր են արդյոք հավաստելու, որ քրեական գործ հարուցելու օրինական հիմքերը բացակայում են: Բացի այդ, դատարանի խնդիրն է պարզել, թե քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելիս իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) կողմից նյութական և դատավարական օրենսդրության պահանջները չպահպանելու հետևանքով խախտվե՞լ են արդյոք անձի իրավունքները և ազատությունները:

Ի թիվս այլոց, պարզաբանման ենթակա են հետևյալ հարցերը՝

1) պահպանվե՞լ է արդյոք հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածով նախատեսված կարգը,

2) առկա՞ են արդյոք քրեական գործի հարուցումը մերժելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված օրինական հիմքերը,

3) պահպանվե՞լ են արդյոք քրեական գործի հարուցումը մերժելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով նախատեսված պահանջները: (...)» (տե՛ս Գագիկ Ղևոնդյանի վերաբերյալ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0044/11/13 որոշման 18-րդ կետը):

- «(...) քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության շրջանակներում ստուգման ենթարկելիս՝ դատարանի խնդիրն է ներկայացված բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում պարզել, թե վարույթն իրականացնող մարմինն արդյո՞ք ստուգման է ենթարկել և հաշվի է առել այն հանգամանքները, որոնք կարող էին ազդել քրեական գործի հարուցման հարցը լուծելու վրա կամ հանգեցնել անձի իրավունքների և ազատությունների խախտմանը (...):

[Ք]րեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության շրջանակներում ստուգման ենթարկելիս դատարանն իրավասու չէ իրավական գնահատական տալ գործում առկա նյութերին, կարծիք հայտնել անձի մեղավորության, գործում առկա (փաստական) տվյալների թույլատրելիության կամ անթույլատրելիության վերաբերյալ: Քրեական գործի հարուցման հարցը լուծելու փուլում ձեռք բերված (փաստական) տվյալներին դատարանի կողմից տրված իրավական գնահատականները, նախնական քննության մարմիններին հասցեագրված «քողարկված» ցուցումները, ուղղորդումները դուրս են մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության տրամաբանությունից» (տե՛ս Վահագն Եղիազարյանի վերաբերյալ 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԾԴ/0012/11/13 որոշման 20-րդ կետը):

- « (...) քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման դատական ստուգման ընթացքում դատարանը պետք է պարզի՝ արդյո՞ք առկա է քրեադատավարական օրենսդրության պահանջների խախտում, իսկ այդպիսի խախտում հայտնաբերելու դեպքում՝ արդյո՞ք այն հանգեցրել է անձի իրավունքների և օրինական շահերի խախտման (...)» (տե՛ս Դավիթ Վարոսյանի վերաբերյալ 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԾԴ/0005/11/14 որոշման 20-րդ կետը):

12. Վերահաստատելով և զարգացնելով վերը մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործի հարուցման փուլի իրավական նշանակությունն այնպիսի դատավարական կարգի ապահովման մեջ է, որի պայմաններում կբացառվի քրեադատավարական գործիքակազմի անհիմն և աննպատակահարմար կիրառումը, հետևաբար նաև՝ ոչ հանցավոր իրադարձությունների կապակցությամբ անձանց իրավունքների ու օրինական շահերի սահմանափակումները և հանրային ռեսուրսների վատնումը: Դրանով պայմանավորված՝ քննարկվող փուլի

առաջնային խնդիրներից է քրեական գործ հարուցելու առիթի օրինականության, ինչպես նաև հիմքերի բավարարության պարզումը:

Քրեական գործ հարուցելու առիթը պայման է, որի առկայության դեպքում օրենքը լիազորում է իրավասու մարմիններին և պաշտոնատար անձանց մտնել իրավահարաբերությունների մեջ, կատարել գործողություններ, որոնք իրենց միասնությամբ ներկայացնում են քրեական դատավարության սկզբնական փուլի գործունեություն *(տե՛ս Էմմա Կարապետյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2007 թվականի հուլիսի 13-ի թիվ ՎԲ-133/07 որոշումը)*: Առիթն օրենքով սահմանված այն աղբյուրն է, որտեղից իրավասու պաշտոնատար անձը տեղեկություններ է ստանում նախապատրաստվող, կատարվող կամ կատարված հանցագործությունների մասին *(տե՛ս Ռուզաննա Նիազյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԿԴ/0118/11/13 որոշման 20-րդ կետը)*: Ընդ որում, քրեական գործ հարուցելու առիթը պետք է բավարարի օրենքով նախատեսված և՛ ձևական (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-179-րդ հոդվածներով նախատեսված), և՛ բովանդակային պահանջներին *(մանրամասն տե՛ս Էմմա Կարապետյանի, ինչպես նաև Ռուզաննա Նիազյանի գործերով Վճռաբեկ դատարանի վերը հիշատակված որոշումները)*:

Քրեական գործ հարուցելու հիմքը հանցագործության հատկանիշների առկայության մասին վկայող տվյալներն են: Ընդ որում, քրեական գործ կարող է հարուցվել միայն հանցագործության հատկանիշների վերաբերյալ տվյալների բավարարության դեպքում: Դրանց բավարարության գնահատման կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ քրեական գործ հարուցելու համար անհրաժեշտ է ոչ թե հանցակազմի բոլոր տարրերի, այլ սոսկ հանցագործության արտաքին հատկանիշների առկայության հավաստումը: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցագործության հատկանիշների առկայության վերաբերյալ ենթադրությունն օբյեկտիվորեն կրում է հավանական բնույթ, քանի որ դրա վերջնական հաստատումը գործի քննության հետագա փուլերի խնդիրն է: Քրեական գործ հարուցելու հիմքերի բավարարությունը ենթադրում է հանցագործության հատկանիշների վերաբերյալ տվյալների այնպիսի համակցություն, որն օբյեկտիվ դիտորդին հնարավորություն կտա ենթադրություն կատարել հանցագործության հավանական առկայության վերաբերյալ: Հանցագործության հատկանիշների առկայության վերաբերյալ ողջամիտ կասկածների դեպքում պետք է հարուցվի քրեական գործ (քրեական վարույթը բացառող հանգամանքների բացակայության դեպքում), քանի որ նման կասկածները կարող են վերացվել միայն բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության միջոցով, ինչն էլ հնարավոր է հարուցված քրեական գործի պայմաններում: Այսինքն՝ քրեական գործի հարուցման հարցը լուծելիս վարույթն իրականացնող

մարմինը պետք է ղեկավարվի նման կասկածները հօգուտ լիարժեք քննություն իրականացնելուն մեկնաբանելու սկզբունքով:

13. Քրեական գործ հարուցելու հարցի լուծման վերոհիշյալ առանձնահատկություններն էլ պայմանավորում են քննարկվող փուլի նկատմամբ հետագա (post factum) դատական վերահսկողության սահմանները: Մասնավորապես՝ այս գործառույթն իրականացնելիս դատարանն իրավասու չէ միջամտելու քրեական գործով նյութերի նախապատրաստման ընթացքին, մատնանշելու կոնկրետ քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարման անհրաժեշտությունը՝ այդ կերպ անուղղակիորեն տալով որոշակի գործողությունների կատարման ցուցումներ կամ հանձնարարություններ: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ դատարանը զրկված չէ քրեադատավարական կարգի պահպանվածության և վիճարկվող որոշմամբ արձանագրված եզրահանգումների իրավաչափության վերաբերյալ իրավական գնահատականներ տալու հնարավորությունից:

Մասնավորապես, քրեական գործի հարուցման փուլի նկատմամբ դատական վերահսկողության խնդիրներով պայմանավորված՝ դատական վերահսկողության սահմանները պետք է ընդգրկեն հետևյալ հարցադրումները.

ա) արդյո՞ք պահպանվել են «Քրեական գործ հարուցելը» վերտառությունը կրող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ գլխում զետեղված պահանջները,

բ) արդյո՞ք վիճարկվող որոշմամբ վարույթն իրականացնող մարմնի եզրահանգումները համապատասխանում են նրա կողմից ձեռք բերված տվյալների ամբողջությանը,

գ) արդյո՞ք ձեռք են բերվել ողջամտորեն անհրաժեշտ տվյալներ քրեական գործ հարուցելու հարցի լուծման տեսանկյունից իրավական նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար,

դ) վեր հանված խախտումներն արդյո՞ք հանգեցրել են անձի իրավունքների կամ օրինական շահերի խախտման:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2016 թվականի ապրիլի 22-ի որոշման և վերջինիս դեմ ներկայացված բողոքը մերժելու մասին դատախազի որոշման դեմ դիմող Սիրվարդ Գևորգյանի բողոքն Առաջին ատյանի դատարանը 2016 թվականի օգոստոսի 11-ին կայացված որոշմամբ բավարարել է՝ նշելով, որ նյութեր նախապատրաստող մարմնի եզրահանգումն այն մասին, որ ձեռք բերված փաստական տվյալները բավարար չեն հավաստելու քրեական գործ հարուցելու օրինական հիմքերի առկայությունը, հիմնավոր չէ:

Մասնավորապես, կայացված որոշմամբ Առաջին ատյանի դատարանը նշել է, որ քրեական վարույթն իրականացնող մարմինը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն չի կատարել ըստ էության պարզելու համար՝

ա) վիճելի տարածքում անասնագոմ եղե՞լ է, թե՞՝ ոչ, որի մասին իրենց բացատրություններում նշել են նյութերի նախապատրաստության ընթացքում բացատրություն տված անձինք,

բ) վիճահարույց տարածքում ինչ շինություն է գտնվել, ում կողմից է այն փաստացի տիրապետվել և օգտագործվել, ինչ նպատակի է ծառայել, երբ և ում կողմից է քանդվել,

գ) քրեական օրենքով արգելված արարքի կատարման հատկանիշների հնարավոր առկայությունն այն պայմաններում, երբ նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ Հ.Ամիրջանյանը համայնքին պատկանող հանրային ճանապարհի վրա ինքնակամ շինություն է կառուցել՝ օրենքով սահմանված կարգի շրջանցմամբ՝ առանց շինարարության թույլտվության հարցը համայնքի ավագանու նիստում քննարկելու, համապատասխան որոշում կայացնելու, այլ համայնքի ղեկավարի միանձնյա բանավոր թույլտվությամբ, ինչպես նաև առանց Հ.Ամիրջանյանի նկատմամբ վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու:

Վերոգրյալի հիման վրա Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ առանց վերոնշյալ հանգամանքների պարզման հնարավոր չէ հիմնավոր եզրահանգման գալ քրեական օրենքով արգելված արարքի հատկանիշների առկայության մասին *(տե՛ս սույն որոշման 5-րդ կետը)*:

Սինչղեո Վերաքննիչ դատարանը 2016 թվականի հոկտեմբերի 10-ի որոշմամբ բեկանելով Առաջին ատյանի դատարանի որոշումը և մերժելով Ս.Գևորգյանի բողոքը, նշել է, որ վիճահարույց տարածքում անասնագոմի առկայության կապակցությամբ Առաջին ատյանի դատարանը հիմք է ընդունել միայն դիմողի հայտարարությունը՝ անտեսելով Հարություն Ամիրջանյանի, Հովիկ Սահակյանի, Սպարտակ Բեկթաշյանի բացատրությունները, պետական մարմիններից ստացված տեղեկատվությունը, ինչպես նաև հայտնել, որ եթե նույնիսկ վիճահարույց տարածքում նախկին դարում ինչ-որ ինքնակամ կառույց է եղել, ապա այն գտնվել է համայնքային ճանապարհի վրա, որը բնականաբար պատկանել է համայնքին, իսկ համայնքը բողոք չի ներկայացրել, ուստի՝ քրեական գործ չի կարող հարուցվել:

Անդրադառնալով Ճնող համայնքի ղեկավարի գործողություններին՝ Վերաքննիչ դատարանը նշել է, որ դրանց հետևանքով անճանց կամ համայնքի օրինական շահերին վնաս պատճառվելու վերաբերյալ նյութերի նախապատրաստմամբ տվյալներ ձեռք չեն բերվել, հետևաբար քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը եղել է իրավաչափ:

Սինևույն ժամանակ Վերաքննիչ դատարանը նշել է, որ ներկայացված հաղորդման հիման վրա քրեական գործ չի կարող հարուցվել, քանի որ վիճահարույց տարածքը գտնվել է համայնքի վրա և պատկանել վերջինիս, ուստի քրեական գործ կարող է հարուցվել ոչ այլ կերպ, քան տուժողի բողոքի

հիման վրա, մինչդեռ համայնքի կողմից բողոք չի ներկայացվել *(տե՛ս սույն որոշման 6-րդ կետը)*:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-13-րդ կետերում շարադրված իրավական նորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը կայացված որոշմամբ իրավական գնահատականի է արժանացրել նյութերը նախապատրաստող մարմնի եզրահանգումները և նշել փաստական տվյալներ ձեռք բերելու անհրաժեշտության մասին այն հանգամանքների կապակցությամբ, որոնք ունեն էական նշանակություն՝ ներկայացված հաղորդմամբ քրեական գործ հարուցելու հարցը լուծելու համար:

Մասնավորապես, Առաջին ատյանի դատարանը քրեական գործի հարուցման փուլի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողության սահմաններում եզրահանգել է, որ ներկայացված հաղորդման կապակցությամբ քրեական գործի հարուցման հարցը լուծելիս էական նշանակություն ունի պարզել, թե արդյոք անասնագոմ գոյություն ունեցել է թե ոչ, և եթե քանդվել է այն, ապա ինչպիսի հանգամանքներում:

Միևնույն ժամանակ համայնքի ղեկավարի կողմից Հ.Ամիրջանյանին ինքնակամ պարիսպ կառուցելու համար բանավոր թույլտվություն տալու, ինչպես նաև նրա նկատմամբ վարչական պատասխանատվության միջոցներ չկիրառելու վերաբերյալ ձեռք բերված փաստական տվյալների առկայության պարագայում Առաջին ատյանի դատարանը եզրահանգել է, որ այդ կապակցությամբ անհրաժեշտ է իրականացնել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի որոշումը, արտահայտել է վերացական և ենթադրություններ վրա հիմնված դիրքորոշումներ անասնագոմի գոյության, վերջինիս պատկանելության մասին, որոնք չեն բխում նախապատրաստված նյութերով ձեռք բերված տեղեկություններից, փաստերից և փաստական տվյալներից:

Նման պայմաններում ընդունելի չեն կարող համարվել նաև Ծնող համայնքի ղեկավարի գործողությունների արդյունքում էական վնաս չպատճառելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի դատողությունները՝ հաշվի առնելով, որ այդ կապակցությամբ ևս նյութերի նախապատրաստման ընթացքում որևէ փաստական տվյալ ձեռք չի բերվել, ուստի այդ հարցը կարող է քննարկվել բացառապես քրեական գործի հարուցման հարցը լուծելուն հաջորդող քրեական վարույթի ընթացքում:

Ինչ վերաբերում է ինքնակամ կառույցի՝ համայնքին պատկանելու և վերջինիս բողոքի բացակայության պայմաններում ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածով քրեական գործ հարուցելու անթույլատրելիության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններին՝ Վճռաբեկ

դատարանն իր համաձայնությունն է արտահայտում բողոքաբերի՝ սույն որոշման 7.1-րդ կետում նշված փաստարկին և արձանագրում, որ քրեադատավարական իրավահարաբերություններում իրավական պաշտպանություն հայցելու մեխանիզմները չեն կարող կախման մեջ դրվել քաղաքացիական իրավահարաբերությունները կարգավորող նորմերից, բացառությամբ այն դեպքերի, երբ պաշտպանության առարկան կազմող իրավահարաբերությունները իրենց բնույթով ենթակա են կարգավորման բացառապես քաղաքացիական իրավանորմերի գործադրման արդյունքում *(mutatis mutandis տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Լ.Ավետիսյանի վերաբերյալ թիվ ԵԿԴ/0176/01/09 գործով 2011 թվականի փետրվարի 29-ի որոշման 30-րդ կետը, Վ.Մաթևոսյանի վերաբերյալ թիվ ԵՇԴ/0037/01/11 որոշման 25-27-րդ կետերը, Ռ.Բալասանյանի վերաբերյալ թիվ ԵԿԴ/0199/01/13 գործով 2014 թվականի դեկտեմբերի 16-ի որոշման 19-րդ կետը)*:

Սույն գործի շրջանակներում հայցվող իրավական պաշտպանության առարկան է կազմում անձի կողմից ենթադրաբար տիրապետվող և օգտագործվող շինության նկատմամբ հնարավոր ոչ իրավաչափ գործողությունների կանխումը, որի կապակցությամբ քրեադատավարական կառուցակարգերի գործադրումը չի կարող պայմանավորվել անձի սեփականության իրավունքի՝ քաղաքացիական օրեսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված լինելու պարտադիր պահանջի հետ: Հակառակ պարագայում հայցվող իրավական պաշտպանության մեխանիզմը կդառնա ձևական: Վերջիվերջո, անձի սեփականության իրավունքը կարող է խախտվել ոչ միայն այն դեպքում, երբ անձը հանդես է եկել գույքի սեփականատիրոջ կարգավիճակով, այլ նաև այն դեպքում, երբ նա ունեցել է «օրինական ակնկալիք» այդ գույքի ձեռքբերման վերաբերյալ (*տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի* Belane Nagy *v. Hungary գործով 2016 թվականի դեկտեմբերի 16-ի վճիռը, գանգատ թիվ 53080/13, 72-79-րդ կետեր*) (Օրինակ, երբ ավտոմեքենա ձեռք բերելու և մինչև իր անվամբ գրանցելու պահն այն ենթարկվում է հանցավոր ոտնձգության, անձը պետք է իրավունք ունենա այդ ավտոմեքենայի սեփականության իրավունքի ձեռք բերման «օրինական ակնկալիքի» ուժով քրեադատավարական կառուցակարգերի գործադրմամբ հայցելու իրավական պաշտպանություն): Այլ կերպ, Վճռաբեկ դատարանը ընդգծում է, որ գույքի տիտղոսային սեփականատեր չլինելու հանգամանքը դեռևս չի բացառում նրա՝ ենթադրյալ հանցավոր արարքից տուժած լինելու հնարավորությունը: Ուստի Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ քրեական գործ չի կարող հարուցվել, քանի որ բացակայում է վիճահարույց տարածքի սեփականատեր հանդիսացող համայնքի բողոքը, իրավաչափ չէ:

Ամփոփելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի հետևություններն այն մասին, որ Առաջին ատյանի դատա-

րանը քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելու բավարար հիմքեր չի ունեցել, հիմնավորված չեն:

16. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Սիրվարդ Գևորգյանի կողմից ներկայացված հաղորդման հիման վրա քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգման ընթացքում Վերաքննիչ դատարանի կողմից թույլ են տրվել քրեադատավարական օրենքի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ, 185-րդ հոդվածների խախտումներ, որոնք էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա՝ Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք է:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով դատական ակտ կայացնելիս Առաջին ատյանի դատարանը դատական սխալ թույլ չի տվել, կայացված որոշումն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, ուստի պետք է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի որոշմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361^1 -րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող Սիրվարդ Յուրիկի Գևորգյանի բողոքի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 10-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի օգոստոսի 11-ի որոշմանը՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

2.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԴ1/0014/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

մասնակցությամբ՝
ամբաստանյալ Ա.ՄԿՐՏՉՅԱՆԻ
պաշտպան Ա.ՂԱԶԱՐՅԱՆԻ

2017 թվականի օգոստոսի 30-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Նորիկ Արտուշի Հարությունյանի և Արտաշես Միշայի Մկրտչյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 28-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2015 թվականի մայիսի 14-ին ՀՀ քննչական կոմիտեի Աբովյանի քննչական բաժնի քննիչ Ս.Սեդրակյանի որոշմամբ հարուցվել է թիվ 20119515 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

2016 թվականի մարտի 12-ի որոշմամբ Նորիկ Հարությունյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով: Նույն օրվա մեկ այլ որոշմամբ Ն.Հարությունյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2016 թվականի մարտի 12-ի որոշմամբ Արտաշես Սկրտչյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով: Նույն օրվա մեկ այլ որոշմամբ Ա.Սկրտչյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

Ն.Հարությունյանի և Ա.Սկրտչյանի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մայիսի 5-ի դատավճռով, դատական քննության արագացված կարգի կիրառմամբ, Ն.Հարությունյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 6 (վեց) ամիս ժամկետով՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելով 1 (մեկ) տարի ժամկետով:

Նույն դատավճռով Ա.Սկրտչյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով՝ ավտոգազալիցքավորման ճնշակայանների կառուցման և շահագործման բնագավառում գործունեություն իրականացնելու իրավունքից զրկելով 1 (մեկ) տարի ժամկետով:

3. Ամբաստանյալ Ն.Հարությունյանի պաշտպան Ա.Ղազարյանի և ամբաստանյալ Ա.Սկրտչյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի հոկտեմբերի 28-ի որոշմամբ պաշտպան Ա.Ղազարյանի բողոքն ամբողջությամբ, իսկ ամբաստանյալ Ա.Սկրտչյանի բողոքը մասնակիորեն բավարարել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մայիսի 5-ի դատավճիռը պատժի մասով բեկանել է, ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա ամբաստանյալներ Ն.Հարությունյանի և Ա.Սկրտչյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառել և սահմանել է փորձաշրջան՝ համապատասխանաբար 1 (մեկ) և 2 (երկու) տարի ժամկետներով:

4. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի մարտի 23-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել ամբաստանյալներ Ն.Հարությունյանի և Ա.Սկրտչյանի պաշտպան Ա.Ղազարյանը, որտեղ իր անհամաձայնությունն է հայտնել բողոքաբերների փաստարկներին և խնդրել վճռաբեկ բողոքը մերժել՝ ստորադաս դատարանի դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Ն.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«(…) [Ն]ա, ունենալով վարորդական իրավունքի վկայական և խախտելով «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետի, «Գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործման» հրահանգի 4-րդ բաժնի 2.3 կետի և «Սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և բալոնների պարբերական վկայագրման և տեխնիկական կանոնագրքի 5-րդ կետի պահանջները, այն է՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրում կարող են կատարել միայն այն իրավաբանական անձինք և անհատ ձեռներեցները, ովքեր ունեն Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրված հավատարմագրման վկայագիր, 2009թ. գազաբալոն ձեռք բերելուց հետո չունենալով համապատասխան իրավասություն սեփականության իրավունքով իր հայր՝ Արտուշ Բագրատի Հարությունյանին պատկանող «Վազ 2121» մակնիշի 43 OS 399 հաշվառման համարանիշի ավտոմոբիլի բեռնախցիկում տեղադրելով սեղմված բնական գազով լիցքավորման համար նախատեսված բալոն և առանց գազաբալոնային սարքավորման համապատասխան վերասարքավորման, ընդունման հանձնման և բալոնների ճնշափորձարկման վաստաքղթերի, վերջին պլանավորված փորձարկումների բացակայության պայմաններում չհահագործելով հիշյալ ավտոմեքենան՝ 2015թ, մայիսի 14-ին՝ ժամը 09:30-ի սահմաններում, «Վազ 2121» մակնիշի 43 OS 399 հաշվառման համարանիշի ավտոմեքենան գազով լիցքավորելու նպատակով վարել է «Արտաշես Սկրտչյան» ԱՁ-ին պատկանող Կոտայքի մարզի Գառնի գյուղի Ազատամարտիկների փողոցի 1-ին հասցեում գտնվող գազալցակայան, որտեղ պատվիրել է այն ամբողջությամբ լիցքավորել, որից հետո գազ լիցքավորող Ռոման Բագրատի Սիմոնյանը գազաբալոնը 200 կգ/սմ քառակուսի ավելի ճնշում լիցքավորելուց հետո, ավտոմեքենայի գազաբալոնից փորձել է անջատել AEG-1 տիպի գազի լիցքավորման բախշիչ աշտարակի ռետինե խողովակը, և քանի որ գազաբալո-*

ճի պատի հաստությունը թույլատրելի նվազագույնից փոքր է եղել և բալոնի փորձարկման պայմաններում ենթակա է եղել հայտնաբերման ու չի համապատասխանել սեղմված բնական մեթան գազով լիցքավորվող բալոնների տեխնիկական չափանիշներին, գազաբալոնը պայթել է, ինչի հետևանքով Ռոման Սիմոնյանը ստացած մարմնական վնասվածքներից մահացել է» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 223-224):

5.1. Ա.Սկրտչյանին ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«(…) Ը)ա, 2008թ. հանդիսանալով «Արտաշես Սկրտչյան» ԱՁ-ին պատկանող Կոտայքի մարզի Գառնի գյուղի Ազատամարտիկների փողոցի 1-ին հասցեում գործող գազալցակայանի տնօրեն և համաձայն «ՀայՌուսգազարտ» ՓԲԸ «Ավտոգազ» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ 0061 վկայականի ստանձնելով տվյալ ԱԳԼՃԿ-ի պետի և աշխատանքի անվտանգության հրահանգավորման, տեխնիկայի անվտանգության և աշխատանքի պաշտպանության ապահովման պատասխանատու անձի պարտականությունները, խախտել է «Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում» տեխնիկական կանոնակարգի 22-րդ բաժնի 94-րդ կետի և 13-րդ բաժնի 72-րդ կետի, ինչպես նաև «Ավտոգազալիցքավորման ճնշակայանների կառուցման և շահագործման նվազագույն պահանջներ» տեխնիկական կանոնակարգի 94-րդ կետի պահանջները, այն է՝ թույլատրել է շահագործել անսարք և ապակարգաբերված վիճակում գտնվող գազ լիցքավորող աշտարակը, որով հնարավոր է եղել ավտոմոբիլների գազաբալոնների լիցքավորումը 200 կգ/սմ-ից ավելի ճնշմամբ: Բացի այդ, Ա.Սկրտչյանը գազ լիցքավորող Ռոման Բագրատի Սիմոնյանին և մյուս աշխատակիցներին չի հրահանգավորել ավտոտրանսպորտային միջոցները բնական սեղմված գազով լցավորման անվտանգության պահանջների վերաբերյալ հրահանգները, դրանով իսկ խախտել է 2005թ.-ի հոկտեմբերի 24-ին ընդունված «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 2-րդ գլխի, 8-րդ կետի պահանջները, այն է՝ անվտանգ շահագործման համար պատասխանատու անձինք պարտավոր են առնվազն տարին երկու անգամ անցկացնել գազի օգտագործման հետ առնչվող բոլոր աշխատողների հրահանգավորում գազի սարքավորումների անվտանգ շահագործման կանոնների վերաբերյալ, ինչի հետևանքով անհրաժեշտ հրահանգավորում չստացած, գազալիցքավորող Ռոման Սիմոնյանը խախտելով ՀՀ կառավարության 22.12.2005թ., N2399-Ն որոշմամբ սահմանված «անվտանգության կանոնները գազի տնտեսությունում» տեխնիկական կանոնակարգի 7-րդ գլխի 13-րդ կետի 71-րդ ենթակետի պահանջները՝ գազով վարելու իրավունքի, գազաբալոնի տեղադրման և փորձարկման ակտերի բացակայության պայմաններում 2015թ. մայիսի 14-ին՝ ժամը 09:30-ի սահմաններում, նշված գազալցակայանում Նորիկ Արտուշի Հարությունյանի վարած «Վազ 2121» մակնիշի 43 OS 399 հաշվառ-*

ման համարանիշի ավտոմեքենայի սեղմված բնական մեթան գազով լցավորվող բալոնների տեխնիկական չափանիշներին չհամապատասխանող գազաբալոնը AEG-1 տիպի գազի լիցքավորման բաշխիչ աշտարակի միջոցով 200 կգ/սմ-ից ավելի ճնշմամբ լիցքավորելով տեղի է ունեցել գազաբալոնի պայթյուն, ինչի արդյունքում Ռ.Սիմոնյանը ստացած մարմնական վնասվածքներից մահացել է, իսկ Ն.Հարությունյանին պատճառվել է առողջության միջին ծանրության վնաս՝ առողջության տևական քայքայումով» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 222-223):

6. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է. *«Պատիժ նշանակելիս (...) [ո]րպես Նորիկ Հարությունյանի անձը բնութագրող հանգամանք, Դատարանը հաշվի է առնում նրա դրական բնութագրվելը (...):*

(...) Դատարանը ամբաստանյալ Նորիկ Հարությունյանի արարքում նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է դիտում կատարած հանցանքի համար զղջալը, ինչպես նաև նրա վատառողջ լինելու հանգամանքը, այն, որ նրա մոտ ախտորոշվել է «Շաքարային դիաբետ տիպ II, պոլիաթրիթ», (...):

(...) [Ա]մբաստանյալ Նորիկ Հարությունյանի արարքում պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Որպես Արտաշես Մկրտչյանի անձը բնութագրող հանգամանք, Դատարանը հաշվի է առնում նրա դրական բնութագրվելը (...), ինչպես նաև նախկինում նրա դատապարտված չլինելու հանգամանքը (...):

Դատարանը, (...) ամբաստանյալ Արտաշես Մկրտչյանի արարքում նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է դիտում այն, որ նրա խնամքին է գտնվում մինչև 14 տարեկան մեկ երեխա (...):

[Բացի այդ] ամբաստանյալ Արտաշես Մկրտչյանի արարքում նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է դիտում կատարած հանցանքի համար զղջալը:

(...) [Ա]մբաստանյալ Ա.Մկրտչյանի արարքում պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

(...) Դատարանն ամբաստանյալների նկատմամբ պատիժ նշանակելիս, պատժի տեսակն ու չափն ընտրելիս հաշվի է առնում նրանց կողմից կատարված հանցագործության կատարման եղանակը և հանգամանքները, հանցագործության կատարման մեջ նրանց մեղավորության աստիճանը, հանցանքի կատարմանը նպաստող պայմաններն ու պատճառները, ինչպես նաև հանցանքը կատարելուց հետո նրանց վարքագիծը:

(...) Հաշվի առնելով ամբաստանյալների[ի] անձը դրական բնութագրող հանգամանքները, նրանց կողմից կատարված արարքների բնույթն ու վտանգավորության աստիճանը, պատժի՝ սոցիալական արդարության վերականգն-

ման և պատժի ենթարկված անձի ուղղվելու նպատակների իրացման հարցը, Դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում ամբաստանյալների նկատմամբ նշանակվելիք պատիժը պայմանականորեն չկիրառելու և փորձաշրջան սահմանելու հիմքեր չկան, քանի որ միայն ազատազրկման ձևով նշանակված պատիժը ռեալ կրելու պայմաններում հնարավոր է ապահովել պատժի նպատակները (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 160-166):

7. Վերաքննիչ դատարանը, պատժի մասով բեկանելով Առաջին ատյանի դատական ակտը, փաստել է. *«(...) Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Դատարանն ամբաստանյալներ[ի] նկատմամբ պատժատեսակի ու պատժաչափի ընտրության հարցում թեև հանգել է ճիշտ հետևության, սակայն ազատազրկման ձևով նշանակված պատիժները ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չկիրառելն անթույլատրելի ճանաչելու հարցում հանգել է ոչ իրավաչափ հետևության:*

Վերաքննիչ դատարանը (...) սույն գործում առկա, օբյեկտիվ գոյություն ունեցող տվյալների վերլուծության հիման վրա գալիս է համոզման, որ վերջիններիս ուղղվելը հնարավոր է նաև առանց ազատազրկման ձևով նշանակված պատիժը փաստացի կրելու միջոցով:

Վերաքննիչ դատարանը նման հետևության հանգում է՝ հիմնվելով ամբաստանյալներ Ա.Մկրտչյանի և Ն.Հարությունյանի կողմից կատարված հանցագործությունների, նրանց անձի, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների, գործի կոնկրետ տվյալների բազմակողմանի գնահատման վրա՝ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքներին համապատասխան:

Սույն գործի նյութերով հաստատված և հիմնավորված է, որ ամբաստանյալներ Ն.Հարությունյանը և Ա.Մկրտչյանն իրենց մեղսագրված հանցանքները կատարել են առաջին անգամ, որոնցից երկուսն էլ (...) ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի՝ դասակարգվում են միջին ծանրության անզգույշ հանցագործությունների շարքին, ամբաստանյալները նախկինում դատապարտված չեն եղել, բնակության վայրից բնութագրվում են դրական, (...):

Ամբաստանյալ Ն.Հարությունյանը վատառողջ է, պայթյունի ալիքի ներգործության հետևանքով ստացել է մարմնական վնասվածքներ, (...):

Ամբաստանյալներից Ա.Մկրտչյանն ամուսնացած է, նրա խնամքին է գտնվում 03.10.2014 թվականին ծնված մանկահասակ երեխան՝ Ջուլիետա Արտաշեսի Մկրտչյանը:

Ամբաստանյալներն ընդունել են իրենց մեղքը, անկեղծորեն զղջացել են կատարած հանցանքների համար, դեպքի կապակցությամբ ի սկզբանե տվել են ճշմարտացի, ինքնախոստովանական ցուցմունքներ:

(...) Վերաքննիչ դատարանը հաշվի է առնում նաև սույն գործի կոնկրետ տվյալները, մասնավորապես այն, որ տուժողի իրավահաջորդը հաշտ-

վել է ամբաստանյալներ[ի] հետ և խնդրել է վերջիններիս նկատմամբ սահմանել մեղմ պատիժ:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ (...) պատժի նպատակների իրագործման տեսանկյունից կարևոր է նաև հանցավորների դրսևորած վարքագիծը՝ կատարած հանցագործություններից հետո: Մասնավորապես ամբաստանյալներ[ը] հանցագործությունները կատարելուց հետո դրսևորել են դրական վարքագիծ, ինչն արտահայտվել է նրանում, որ հատուցել են հանցագործությունների հետևանքով տուժողին պատճառված վնասը, բացի այդ, շուրջ 1 տարի 6 ամիս գտնվելով ազատության մեջ, դրսևորել են պատշաճ վարքագիծ, ինչը վկայում է այն մասին, որ նրանք այլևս գիտակցել են իրենց արարքների հանրային վտանգավորության աստիճանը և զղջացել են դրա համար, որպիսի պայմաններում քրեական պատժի նպատակների իրացումը, այդ թվում՝ պատժի ենթարկված անձանց ուղղվելու հավանականությունը զգալիորեն բարձրանում է:

Վերաքննիչ դատարանը (...) պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող որևէ հանգամանք չի արձանագրում:

(...) [Մ]ատնանշված վերոգրյալ հանգամանքներն իրենց համակցությամբ էականորեն նվազեցնում են ամբաստանյալներ[ի] կողմից կատարած հանցանքների՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և հիմք են հանդիսանում վերջիններիս նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժները ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չկիրառելու համար (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 81-86):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերը փաստել է, որ ստորադաս դատարանի որոշումն օրինական և հիմնավոր չէ, կայացված որոշմամբ թույլ է տրվել դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա: Մասնավորապես բողոքի հեղինակը, վկայակոչելով Վճռաբեկ դատարանի՝ *Գ.Հովհաննիսյանի, Գ.Մաղաքյանի, Ա.Սահակյանի, Պ.Բայրամյանի* և *Է.Ասատրյանի* գործերով արտահայտած իրավական դիրքորոշումները, գնահատելով ստորադաս դատարանի կողմից պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքում դրված փաստական հանգամանքները, գտել է, որ ստորադաս դատարանի կողմից ամբաստանյալներին վերագրվող արարքների բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը ճիշտ չեն գնահատվել, կարևորություն չի տրվել հանցագործության արդյունքում վրա հասած հանրորեն վտանգավոր հետևանքներին՝ անտեսելով, որ դրսևորած անզգուշության արդյունքում վնասվել է օրենքով

առավել խիստ պաշտպանվող օբյեկտը, այն է՝ մարդու կյանքի անվտանգության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները:

Բողոքաբերը փաստել է նաև, որ ամբաստանյալներին մեղսագրվող արարքները կապված են առավել վտանգի աղբյուր հանդիսացող տեխնիկական միջոցների անվտանգության և շահագործման կանոնների այնպիսի խախտման հետ, որն ավելի է բարձրացնում դրանցից բխող վտանգը, վերաբերելի է անձանց անորոշ շրջանակի, ինչն իր հերթին էական նշանակություն ունի արարքի հանրային վտանգավորության աստիճանի գնահատման համար:

8.1. Վկայակոչելով Վճռաբեկ դատարանի՝ *Ա.Հովհաննիսյանի* վերաբերյալ գործով որոշումը՝ բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանի կողմից որպես մեղմացնող դիտված՝ հանցանքն առաջին անգամ կատարելը, նախկինում դատապարտված չլինելը, պատշաճ վարքագիծ դրսևորելը չեն կարող գնահատվել որպես անձի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ: Իսկ ինչ վերաբերում է տուժողի դիրքորոշմանը, ապա ամբաստանյալներին մեղսագրվել են հանրային հետապնդման հանցանքներ, ուստի տուժողի բողոք չունենալը և ամբաստանյալներին մեղմ վերաբերվելու խնդրանքը որևէ կերպ չեն կարող ազդել հանցանք կատարած անձի կամ նրա արարքի հանրային վտանգավորության աստիճանի վրա, ուստի չեն կարող հաշվի առնվել որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք:

9. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 28-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մայիսի 5-ի դատավճռին:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ամբաստանյալներ Արտաշես Սկրտչյանի և Նորիկ Հարությունյանի նկատմամբ նշանակված պատիժները պայմանականորեն չկիրառելիս Վերաքննիչ դատարանն արդյո՞ք պատշաճ իրավական գնահատականի է ենթարկել նրանց մեղսագրվող հանցագործությունների (նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ և 242-րդ հոդվածների 2-րդ մասերով) հանրային վտանգավորության աստիճանը:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Եթե դատարանը, կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:*

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները: (...)»:

Վերոնշյալ իրավադրույթը Վճռաբեկ դատարանի կողմից բազմիցս վերլուծության է ենթարկվել մի շարք գործերով կայացված նախադեպային որոշումներում, և մշտապես վերահաստատվել է դիրքորոշումն առ այն, որ դատարանի համոզվածությունը, վստահությունն այն մասին, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց իրական պատիժ կրելու, պետք է հիմնվի օբյեկտիվ գոյություն ունեցող այնպիսի տվյալների համակողմանի վերլուծության վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ թեև պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգիրքը հնչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսում, սակայն դատարանի հետևությունները պետք է, ի թիվս այլոց, հիմնված լինեն նաև հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի ամբողջական գնահատման վրա՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթը, մեղքի ձևը և տեսակը, պատճառված վնասի չափը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, հանցագործության հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, նպատակներն ու շարժառիթները և այլն *(տե՛ս Սամսոն Ամիրխանյանի գործով 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԱԴԴ/0034/01/12, Արսեն Մկրտչյանի գործով 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԼԴ/0093/01/12, Վանյա Բեգլյանի գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ՏԴ/0018/01/13, Արամայիս Հովհաննիսյանի գործով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԳԴ/0014/01/14, Մհեր Հովհաննիսյանի գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0039/01/15 և այլ որոշումները):*

12. ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում տեխնիկայի անվտանգության կամ աշխատանքի պաշտպանության կանոնները խախտելու համար՝ դրանց պահպանման համար պատասխանատու անձի կողմից, որն անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ: Քննարկվող հանցակազմը զետեղված է «Մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների դեմ ուղղված հանցագործությունները» վերտառությունը կրող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ գլխում և կոչված է ապահովելու ՀՀ Սահմանադրության 82-րդ հոդվածով երաշխավորված՝ առողջ և անվտանգ աշխատանքային պայմաններ ունենալու իրավունքի իրացումը, որն ապահովելու պարտականությունը յուրաքանչյուր աշխատողի համար կրում է գործատուն *(տե՛ս Ստոմ Մանուկյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԿԴ/0032/01/12 որոշման 13-րդ կետը):*

ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպոր-

տային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու համար, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ: Սույն հանցագործությունն ընդգրկված է «Հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները» վերտառությունը կրող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 23-րդ գլխում և կոչված է ապահովելու ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնների խախտման կապակցությամբ մարդու, հասարակության և պետության անվտանգության պաշտպանությունը:

12.1. Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ քննարկվող հանցագործություններն ունեն միևնույն լրացուցիչ օբյեկտը, այն է՝ մարդու կյանքի և առողջության անվտանգության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները: Ինչ վերաբերում է հանցագործությունների սուբյեկտիվ կողմին, ապա վերջիններս դրսևորվում են անզգույշ մեղքի ձևով: Մասնավորապես հանցավորը կա՛մ նախատեսում է իր կողմից թույլ տրված տեխնիկայի անվտանգության, աշխատանքի պաշտպանության, կամ ճանապարհային երթևեկության, տրանսպորտային միջոցների շահագործման կանոնների խախտման արդյունքում հետևանքների առաջացման հնարավորությունը, սակայն առանց բավարար հիմքերի, ինքնավստահորեն հույս է ունենում, որ դրանք կկանխվեն (հանցավոր ինքնավստահություն), կա՛մ թեև չի նախատեսում հետևանքների առաջացման հնարավորությունը, սակայն տվյալ իրադրությունում ոչ միայն պարտավոր էր, այլև կարող էր նախատեսել դա (հանցավոր անփութություն) *(տե՛ս Ստոմ Մանուկյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԿԴ/0032/01/12 որոշման 14-րդ կետը, Էդմոն Ասատրյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵԷԴ/0201/01/11 որոշման 17-րդ կետը):*

13. Հիմք ընդունելով սույն որոշման 11-12.1-րդ կետերում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քննարկվող հանցագործությունների դեպքում պատժի տեսակ և չափ ընտրելիս, ինչպես նաև դրանց կրման նպատակահարմարության հարցը լուծելիս դատարանը պետք է, ի թիվս այլոց, մանրամասն գնահատման ենթարկի այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են թույլ տրված կանոնների խախտման բնույթը, կանոնների խախտման, ինչպես նաև առաջացած հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը, քանի որ համապատասխան կանոնները գիտակցաբար խախտելը, ինչպես նաև հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը նախատեսելը վկայում են հանցավորի անձի և կատարված արարքի առավել բարձր վտանգավորության աստիճանի մասին *(տե՛ս Արամ Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԳԴ1/0003/01/10 որոշման 19-րդ կետը, Էդմոն Ասատրյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵԷԴ/0201/01/11 որոշման 18-րդ կետը, Արտակ*

Գասպարյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԾԴ3/0014/01/15 որոշման 12-րդ կետը, Գագիկ Ղուկասյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԵԱՔԴ/0071/01/16 որոշման 13-րդ կետը):

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով ամբաստանյալ Ա.Սկրտչյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով, իսկ Ն.Հարությունյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով կատարված հանցանքի բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը, գնահատելով նրանց անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, գտել է, որ ամբաստանյալների նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերը բացակայում են, քանի որ միայն ազատազրկման ձևով նշանակված պատիժը կրելու պայմաններում է հնարավոր հասնել պատժի նպատակների իրագործմանը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով ամբաստանյալներ Ա.Սկրտչյանի և Ն.Հարությունյանի կատարած հանցագործությունների ծանրության աստիճանը (միջին), անզգուշությամբ կատարված լինելը, ամբաստանյալների նախկինում դատապարտված չլինելը, դրական բնութագրվելը, անկեղծորեն զղջալը և ինքնախոստովանական ցուցմունքներ տալը, տուժողի հետ հաշտվելը, նրան նյութական հատուցում տալը, Ն.Հարությունյանի վատառողջ լինելը, Ա.Սկրտչյանի ամուսնացած լինելը և խնամքին մանկահասակ երեխայի առկայությունը, ինչպես նաև ամբաստանյալների պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, 1 տարի 6 ամիս ազատության մեջ գտնվելով նրանց կողմից պատշաճ վարքագիծ դրսևորելը, գտել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա Ն.Հարությունյանի և Ա.Սկրտչյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժները պայմանականորեն կիրառման ենթակա չեն (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

15. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 11-13-րդ կետերում վկայակոչված իրավաղրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը պատշաճ վերլուծության է ենթարկել ամբաստանյալներ Ն.Հարությունյանի և Ա.Սկրտչյանի կողմից կատարված հանցանքների բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը և հանգել հետևության, որ նրանց նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերը բացակայում են:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը չի գնահատել Ա.Սկրտչյանի և Ն.Հարությունյանի արարքների հանրային վտանգավորության աստիճանի վրա ազ-

դող այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են տեխնիկայի անվտանգության և աշխատանքի պաշտպանության կանոնների խախտման բնույթը և առաջացած հետևանքների նկատմամբ Ա.Սկրտչյանի հոգեբանական վերաբերմունքը, ինչպես նաև Ն.Հարությունյանի կողմից թույլ տրված տրանսպորտային միջոցի շահագործման կանոնների խախտման բնույթն ու դրա արդյունքում առաջացած հետևանքների նկատմամբ նրա դրսևորած հոգեբանական վերաբերմունքը: Մասնավորապես, ամբաստանյալները, մշտապես առնչվելով առավել վտանգի աղբյուրի հետ, նախատեսելով վերջինիս հետ վարվելակերպի սահմանված կանոնների խախտման արդյունքում հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, ինքնավստահորեն հույս են ունեցել, որ հետևանքների առաջացումից կարող են խուսափել: Այսինքն՝ ամբաստանյալներ Ա.Սկրտչյանը և Ն.Հարությունյանն իրենց ամենօրյա գործունեությամբ յուրաքանչյուր պահի իրական վտանգ են ստեղծել իրենց շրջապատող անորոշ թվով անձանց կյանքի և առողջության համար:

Այսպես՝ ամբաստանյալ Ա.Սկրտչյանը թույլատրել է օգտագործել անսարք, ապակարգաբերված վիճակում գտնվող գազ լիցքավորող աշտարակը, չի հրահանգավորել ավտոտրանսպորտային միջոցները բնական սեղմված գազով լցավորման անվտանգության պահանջների վերաբերյալ հրահանգները՝ չապահովելով գազաբալոնային սարքավորումների լիցքավորման համար սահմանված նորմատիվները՝ այդ կերպ յուրաքանչյուր պահի վտանգի տակ դնելով գազալիցքավորման սարքից օգտվող կամ սարքի տեղաբաշխման վայրում գտնվող անձանց կյանքն ու առողջությունը:

Ինչ վերաբերում է ամբաստանյալ Ն.Հարությունյանին, ապա վերջինս տրանսպորտային միջոցների շահագործման կանոնների խախտմամբ, առանց համապատասխան իրավասության, իր կողմից վարած ավտոմեքենայում տեղադրել է սահմանված տեխնիկական չափանիշներին չհամապատասխանող գազաբալոնային սարքավորում և օգտագործել այն՝ այդ կերպ վտանգելով իր ավտոմեքենայով երթևեկող կամ ավտոմեքենայի շահագործման ընթացքում շրջակայքում գտնվող անձանց կյանքն ու առողջությունը:

16. Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ամբաստանյալների կողմից թույլ տրված խախտումների բնույթը, ինչպես նաև արարքի և դրա հետևանքների նկատմամբ նրանց դրսևորած հոգեբանական վերաբերմունքն էականորեն բարձրացնում են կատարված հանցանքների հանրային վտանգավորության աստիճանը, քանի որ վերջիններս, այդ խախտումները գիտակցաբար թույլ տալով, թեպետ նախատեսել են դրանց արդյունքում վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, այնուամենայնիվ շարունակել են իրենց գործունեությունը՝ հույսը դնելով պատահականության վրա, որը ենթադրաբար կարող էր չեզոքացնել վտանգավոր հետևանքների առաջացումը: Արդյունքում համապատասխան արարքները հանգեցրել են Ռ.Սիմոնյանի մահվան և Ն.Հարությունյանի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելուն:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալներ Արտաշես Մկրտչյանի և Նորիկ Հարությունյանի նկատմամբ նշանակված պատիժները պայմանականորեն չկիրառելիս Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատականի չի ենթարկել նրանց մեղսագրվող հանցագործությունների (ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ և 157-րդ հոդվածների 2-րդ մասեր) հանրային վտանգավորության աստիճանը:

17. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի ոչ ճիշտ կիրառում: Այսինքն՝ թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված նյութական իրավունքի խախտում, որը հիմք է դատական ակտը բեկանելու համար: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով դատական ակտ կայացնելիս Առաջին ատյանի դատարանը դատական սխալ թույլ չի տվել, կայացված որոշումն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, ուստի պետք է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի դատավճռին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1] -րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալներ Արտաշես Միշայի Մկրտչյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով և Նորիկ Արտուշի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 28-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մայիսի 5-ի դատավճռին՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

3.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԴ1/0143/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝
պաշտպան Տ.ՍԱՐԳՍՅԱՆԻ

2017 թվականի օգոստոսի 30-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման դեմ ամբաստանյալ Նավասարդ Սեմյոնի Ալավերդյանի պաշտպան Ա.Սխիքարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>

1. Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2016 թվականի փետրվարի 29-ի դատավճռով Նավասարդ Սեմյոնի Ալավերդյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով (վեց դրվագ), 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1.-ին կետով (երեք դրվագ), 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1.-ին կետով (երկու դրվագ), 34-177-րդ

հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով (երեք դրվագ), 165-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով նախատեսված հանցագործությունների կատարման մեջ, և նրա նկատմամբ նշանակվել է ազատազրկման ձևով պատիժ՝ 5 տարի 6 ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, և տուգանք՝ 800.000 ՀՀ դրամի չափով: Ազատազրկման ձևով նշանակված պատժի ժամկետի մեջ հաշվակցվել է Ն.Ալավերդյանի՝ նախնական կալանքի տակ գտնվելու ժամանակը, և վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի 9 (ինը) ամիս 10 օր ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, և տուգանք՝ 800.000 ՀՀ դրամի չափով:

2. Ն.Ալավերդյանի պաշտպան Ա.Մխիթարյանի՝ 2016 թվականի ապրիլի 4-ին ներկայացրած վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2016 թվականի ապրիլի 25-ի որոշմամբ թողնվել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

3. Ն.Ալավերդյանի պաշտպան Ա.Մխիթարյանի՝ վերաքննիչ բողոք բերելու համար բաց թողնված ժամկետը հարգելի համարելու միջնորդությունն Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 29-ի որոշմամբ մերժվել է:

4. Ն.Ալավերդյանի պաշտպան Ա.Մխիթարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 14-ի որոշմամբ բողոքը մերժվել է:

5. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Ն.Ալավերդյանի պաշտպան Ա.Մխիթարյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 8-ի որոշմամբ վերադարձվել է:

Ն.Ալավերդյանի պաշտպան Ա.Մխիթարյանի կողմից կրկին ներկայացված վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

6. Առաջին ատյանի դատարանը, մերժելով ամբաստանյալ Ն.Ալավերդյանի պաշտպան Ա.Մխիթարյանի՝ վերաքննիչ բողոք բերելու համար բաց թողնված ժամկետը հարգելի համարելու միջնորդությունը, իր՝ 2016 թվականի հուլիսի 29-ի որոշման շրջանակներում փաստել է. *«(...) 2016թ. հուլիսի 25-ին ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան է ստացվել Նավասարդ Ալավերդյանի շահերի պաշտպան Ա.Մխիթարյանի*

միջնորդությունը՝ վերաքննիչ բողոք բերելու համար բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին:

*Միջնորդության քննության վերաբերյալ կայացած դատական նիստի ժամանակ (...) **Ա.Մխիթարյանը** (...) [նշել է, որ] **դատական ակտը ստացել է իր պաշտպանյալի միջոցով՝ 2016թ. մարտի 10-ին** և չունենալով դատական ակտի հիմնավորումները՝ զրկված է եղել առավել վաղ հիմնավոր բողոք ներկայացնելու հնարավորությունից: Սույն գործով դատական ակտը՝ 2016թ. մարտի 04-ի կից գրությամբ ստացել է 2016թ. մարտի 10-ին: Վերաքննիչ բողոքը տարվել է **2016թ. ապրիլի 04-ին** (...):*

*(...) [Առաջին ատյանի դատարանը փաստում է, որ] ըստ քրեական գործի նյութերի՝ **Նավասարդ Ալավերդյանը** ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2016թ. փետրվարի 29-ի **դատավճիռը ստացել է 2016թ. մարտի 04-ին և նշել, որ դատարանից ստանում է նաև իր պաշտպան Ա.Մխիթարյանին հանձնվող դատավճռի պատճենը՝ վերջինիս հանձնելու համար:***

Ավելին, դատարանն արձանագրում է, որ պաշտպան Ա.Մխիթարյանի կողմից դատարանին չի ներկայացվել որևէ հարգելի պատճառ (օրինակ՝ հիվանդության հիմքով, երկրից հարգելի պատճառով բացակայելու դեպքում) ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2016թ. փետրվարի 29-ի դատավճիռը բողոքարկելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու վերաբերյալ (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 12, թերթեր 145-148):

7. Վերաքննիչ դատարանը, ստուգելով Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը, իր՝ 2016 թվականի հոկտեմբերի 14-ի որոշմամբ արձանագրել է. *«(...) [Ս]ույն քրեական գործով **բողոքարկման ժամկետը պետք է հաշվարկել առնվազն դատավճիռը պաշտպանի կողմից ստանալու պահից (2016 թվականի մարտի 04-ից) 25 օրվա ընթացքում, և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ 2016 թվականի մարտի 04-ին դատավճռի օրինակներն ամբաստանյալին են հանձնվել՝ մեկ օրինակը պաշտպանին տրամադրելու համար,** և բացի այդ, պաշտպան Ա.Մխիթարյանի կողմից Վերաքննիչ դատարան չի ներկայացվել որևէ հարգելի պատճառ Առաջին ատյանի դատարանի 2016թ. փետրվարի 29-ի դատավճիռը բողոքարկելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու վերաբերյալ, իսկ Առաջին ատյանի դատարանի 2016 թվականի փետրվարի 29-ի դատավճռի բողոքարկման ժամկետը վերջանում է 2016 թվականի մարտի 29-ին, մինչդեռ բողոք բերվել է դատական ակտը ստանալու պահից 1 (մեկ) ամիս 5 (հինգ) օր հետո՝ 2016 թվականի ապրիլի 04-ին»* (տե՛ս քրեական գործ, հատոր 12, թերթեր 202-208):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական և հիմնավոր չէ, դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա, որոնց պարագայում կայացված դատական ակտը ենթակա է բեկանման:

8.1. Ի հիմնավորումն վերոհիշյալ փաստարկի՝ բողոքաբերը հայտնել է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 29-ի դատավճռի օրինակը ստացել է ոչ թե դատարանից, այլ իր պաշտպանյալ Ն.Ալավերդյանից 2016 թվականի մարտի 10-ին, որպիսի պարագայում իր կողմից վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը պետք է ճանաչվեր հարգելի:

Բողոքաբերը,վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ և 380-րդ հոդվածները, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի՝ թիվ ՍԴՈ-1052, ՍԴՈ-1062, ՍԴՈ-1268 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, նշել է, որ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով բաց թողնված ժամկետը հարգելի համարելու միջնորդությունը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումը, իր պաշտպանյալին զրկել է արդյունավետ դատական պաշտպանություն հայցելու իրավունքից:

9. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 14-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ բավարարելով ներկայացված բողոքը:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

10. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածով սահմանված կարգով դատավճռի պատճենը պաշտպանին հանձնելու և դրա հետ փոխկապված՝ վերջինիս կողմից դատական ակտի բողոքարկման ժամկետի հաշվարկման սկիզբը որոշելու հարցի առնչությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր են արդյոք ստորադաս դատարանների հետևություններն առ այն, որ պաշտպան Ա.Մխիթարյանի կողմից Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 29-ի դատավճռի բողոքարկման ժամկետի սկիզբը պետք է հաշվել ամբաստանյալ Ն.Ալավերդյանի կողմից պաշտպանին հանձնման ենթակա դատավճռի պատճենը դատարանից ստանալու պահից:

12. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»*:

Մեջբերված, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 13-րդ, ՄԱԿ-ի «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 8-րդ, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածների համակարգային վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ իրավունքների պաշտպանության միջոցների շարքում դատական պաշտպանությունն առանձնահատուկ տեղ է գրավում, քանի որ իրականացվում է իշխանությունների տարանջատման համակարգում ինքնուրույն և անկախ կարգավիճակ ունեցող մարմնի կողմից: Դատական պաշտպանության իրավունքն անձի անօտարելի իրավունքներից մեկն է և միաժամանակ հանդիսանում է այլ իրավունքների ու ազատությունների ապահովման միջոց ու երաշխիք: Միևնույն ժամանակ, խնդրո առարկա հիմնարար իրավունքը բացարձակ չէ, այն սահմանափակված է որոշակի օբյեկտիվ պայմաններով: Մասնավորապես, դատական ակտերը վերադասության կարգով բողոքարկելու համար օրենսդիրը սահմանել է որոշակի ժամկետներ, որոնք նպատակ են հետապնդում ապահովելու քրեական դատավարության պատշաճ իրականացումը: Նշված ժամկետները, սակայն, չեն կարող լինել կամայական, դրանք պետք է լինեն ողջամիտ, ինչը ենթադրում է գործի մասնակից բոլոր անձանց շահերի հավասարակշռված հաշվառում, որպեսզի բացառվեն մի կողմից դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու անհիմն ուշացումները, մյուս կողմից՝ այդ ակտի դեմ բողոք բերելու անհամաչափ բարդությունները: Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ դատական ակտի բողոքարկման ժամկետի ողջամտությունն ապահովված կհամարվի նախևառաջ այն դեպքում, եթե շահագրգիռ անձին բավարար ժամանակ տրամադրվի բողոքն օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ նախապատրաստելու և համապատասխան դատարան ներկայացնելու համար: Իրավունքների ենթադրյալ խախտումներից դատարանի առջև իրավական պաշտպանություն հայցող անձի կողմից հիմնավոր բողոք ներկայացնելու համար անհրաժեշտ և բավարար ժամանակահատվածի տևողությունը պայմանավորված է նաև այդ ժամկետի հաշվարկման ողջամիտ սկզբի սահմանմամբ (տե՛ս, mutatis mutandis, *Տիգրան Հովհաննիսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԵԿԴ/0066/11/12 որոշման 17-18-րդ կետերը, տե՛ս նաև, mutatis mutandis, *Մինաս Սկրտչյանի և Միքայել Միքայելյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԷԴ/0110/01/12 որոշման 23-23.1-րդ կետերը, *Վահան Թորոսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԵԱԴԴ/0005/15/16 որոշման 15-րդ կետը):

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է.«*Կասկածյալը և մեղադրյալն իրավունք ունեն մեղադրանքից պաշտպանվել ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի (...) միջոցով (...)*»:

Վերոնշյալ իրավադրույթի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրյալը (կամ կասկածյալը) և պաշտպանը քրեական դատավարության ինքնուրույն սուբյեկտներ են, որոնք ունեն իրավունքների և պարտականությունների ինքնուրույն շրջանակ: Նրանց գործունեությունն ուղղված է միևնույն՝ պաշտպանության գործառույթի իրականացմանը, որի ուժով էլ նրանք լրացնում են միմյանց: Կասկածյալը կամ մեղադրյալն իր բոլոր իրավունքները կամ դրանց մի մասը չի զիջում պաշտպանին, պաշտպանի իրավունքներն էլ ածանցյալ չեն կասկածյալի կամ մեղադրյալի իրավունքներից: Պաշտպանը քրեական դատավարությանը մասնակցում է մեկ հիմնական նպատակով՝ պաշտպանել կասկածյալի կամ մեղադրյալի իրավունքներն ու օրինական շահերը:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածը սահմանում է. «*Դատավճիռը հրապարակվելուց ոչ ուշ, քան 5 օրում դրա պատճենը պետք է հանձնվի դատապարտվածին կամ արդարացվածին, նրա պաշտպանին և մեղադրողին: (...)*»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «*Վերաքննիչ բողոք բերվում են.*

1) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը՝ հրապարակվելու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում. (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝«*Հարգելի պատճառներով բողոքարկման համար սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքում բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձինք կարող են դատական ակտը կայացրած դատարանի առաջ միջնորդել՝ վերականգնելու բաց թողնված ժամկետը: (...)*»:

Սույն որոշման 12-13-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո վերլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը նախատեսել է դատավճռի պատճենը համապատասխան ժամկետում ոչ միայն դատապարտվածին կամ արդարացվածին, այլև **պաշտպանին** հանձնելու պարտավորություն, ինչն առավելապես պայմանավորված է պաշտպանի՝ քրեական դատավարության ինքնուրույն սուբյեկտ լինելու հանգամանքով. այն նաև կասկածյալի ու մեղադրյալի պաշտպանության, դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրացումն ապահովելու երաշխիք է: Այդ համատեքստում վերլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, ինչ-

պես նաև հաշվի առնելով այդ նորմի առնչությամբ նախկինում ձևավորած իրավական դիրքորոշումները (տե՛ս *Հովհաննես Դավթյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԵԷԴ/0129/01/15 որոշումը)՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ պաշտպանի կողմից դատական ակտի բողոքարկման ժամկետի հաշվարկման սկիզբը չի կարող սահմանվել պաշտպանյալի կողմից նաև պաշտպանին հանձնման ենթակա դատավճռի պատճենը դատարանից ստանալու պահը, եթե այն փաստացի ավելի ուշ է հասու դառնում պաշտպանին: Այլ կերպ՝ Վճռաբեկ դատարանը, չբացառելով պաշտպանին հանձնման ենթակա դատավճռի պատճենը պաշտպանյալի կողմից ստանալու հնարավորությունը, միևնույն ժամանակ արձանագրում է, որ նման դեպքում պաշտպանի կողմից դատական ակտի բողոքարկման ժամկետի սկիզբը պետք է հաշվարկվի ոչ թե պաշտպանին հանձնման ենթակա դատավճռի պատճենը պաշտպանյալի կողմից ստանալու պահից, այլ այն պահից, երբ այդ փաստաթուղթը հասու է դարձել պաշտպանին: Վերջինի հետ կապված՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել նաև, որ դատավճռի պատճենը պաշտպանյալի միջոցով պաշտպանին փոխանցելիս վերջինիս կողմից այն ստանալու պահի առնչությամբ գործնականում հնարավոր խնդիրների առաջացումից և չարաշահումներից խուսափելու համար դատարանը պաշտպանին հանձնման ենթակա դատավճռի պատճենն օրենքով սահմանված կարգով պետք է հանձնի (ուղարկի) վերջինիս նույնիսկ այն դեպքում, երբ պաշտպանյալը դատարանից ստանում է նաև պաշտպանին հանձնման ենթակա համապատասխան փաստաթուղթը: Այլ խոսքով՝ պաշտպանին հանձնման ենթակա դատավճռի պատճենը պաշտպանյալի կողմից դատարանից ստանալը դատարանին չի ազատում այդ փաստաթուղթն օրենքով սահմանված կարգով պաշտպանին հանձնելու պարտավորությունից:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը, մերժելով Ն.Ալավերդյանի պաշտպան Ա.Մխիթարյանի՝ վերաքննիչ բողոք բերելու համար բաց թողնված ժամկետը հարգելի համարելու միջնորդությունը, իսկ Վերաքննիչ դատարանը, իր հերթին անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, արձանագրել են, որ **ամբաստանյալ Ն.Ալավերդյանն** Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 29-ի **դատավճիռը ստացել է 2016 թվականի մարտի 4-ին, և նշել, որ դատարանից ստանում է նաև իր պաշտպան Ա.Մխիթարյանին հանձնվող դատավճռի պատճենը՝ վերջինիս հանձնելու համար**: Մինչդեռ պաշտպան Ա.Մխիթարյանի կողմից **վերաքննիչ բողոքը ներկայացվել է 2016 թվականի ապրիլի 4-ին**: Ըստ Վերաքննիչ դատարանի՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 29-ի դատավճռի բողոքարկման ժամկետը վերջանում էր 2016 թվականի մարտի 29-ին, սակայն

բողոքը բերվել է դատական ակտը ստանալու պահից 1 (մեկ) ամիս 5 (հինգ) օր հետո՝ 2016 թվականի ապրիլի 4-ին (տե՛ս սույն որոշման 6-7-րդ կետերը):

Պաշտպան Ա.Մխիթարյանը դատական քննության ժամանակ նշել է, որ **դատական ակտը ստացել է իր պաշտպանյալի միջոցով՝ 2016 թվականի մարտի 10-ին** և չունենալով դատական ակտի հիմնավորումները՝ զրկված է եղել առավել վաղ հիմնավոր բողոք ներկայացնելու հնարավորությունից (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Մեջբերված փաստական հանգամանքների վերլուծությունից հետևում է, որ ստորադաս դատարանները որպես պաշտպան Ա.Մխիթարյանի կողմից Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 29-ի դատավճռի բողոքարկման ժամկետի սկիզբ հաշվել են ամբաստանյալ Ն.Ալավերդյանի կողմից պաշտպանին հանձնման ենթակա դատավճռի պատճենը դատարանից ստանալու պահը, այն դեպքում, երբ պաշտպան Ա.Մխիթարյանը համապատասխան փաստաթուղթ իր պաշտպանյալից փաստացի ստացել է ավելի ուշ՝ 2016 թվականի մարտի 10-ին:

16. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստերը գնահատելով սույն որոշման 14-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիմնավոր չեն ստորադաս դատարանների հետևություններն առ այն, որ պաշտպան Ա.Մխիթարյանի կողմից Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 29-ի դատավճռի բողոքարկման ժամկետի սկիզբը պետք է հաշվել ամբաստանյալ Ն.Ալավերդյանի կողմից պաշտպանին հանձնման ենթակա դատավճռի պատճենը դատարանից ստանալու պահից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով պաշտպան Ա.Մխիթարյանի կողմից Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի փետրվարի 29-ի դատավճռի բողոքարկման ժամկետի հաշվարկման սկիզբն անհրաժեշտ էր հաշվել ոչ թե ամբաստանյալ Ն.Ալավերդյանի կողմից պաշտպանին հանձնման ենթակա դատավճռի պատճենը դատարանից ստանալու պահից, այլ այն պահից, երբ համապատասխան փաստաթուղթը հասու էր դարձել պաշտպան Ա.Մխիթարյանին, այսինքն՝ 2016 թվականի մարտի 10-ից:

17. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը՝ Վերաքննիչ դատարանը սույն գործով թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ, 380-րդ հոդվածների խախտումներ, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների, հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններ-

րով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1] -րդ, 398-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Նավասարդ Սեմյոնի Ալավերդյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 14-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

4.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԴ/0024/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝	
դատավորներ	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
	Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝	
պաշտպան	Ա.ՋԱՔԱՐՅԱՆԻ

2017 թվականի օգոստոսի 30-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Անդրանիկ Հենրիկի Մկրտչյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 7-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2014 թվականի մայիսի 27-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Արագածոտնի մարզային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 29104114 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի ապրիլի 29-ի որոշմամբ Ա.Սկրտչյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի սեպտեմբերի 10-ի որոշմամբ Ա.Սկրտչյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով:

2015 թվականի հոկտեմբերի 16-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 16-ի դատավճռով ամբաստանյալ Ա.Սկրտչյանը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով առաջադրված մեղադրանքում արդարացվել է, և նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է՝ կատարված հանցագործությանը վերջինիս մասնակցությունն ապացուցված չլինելու պատճառաբանությամբ:

3. Մեղադրողի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի նոյեմբերի 7-ի որոշմամբ մեղադրողի վերաքննիչ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 16-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի մարտի 20-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Ա.Սկրտչյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ. *«(...) [Ն]ա, դիտավորությամբ Արտավազդ Հաբեթի Գոհարյանի առողջությանը պատճառել է կյանքի համար վտանգավոր ծանր վնաս՝ անզգուշությամբ առաջացնելով տուժողի մահ, որպիսի գործողություններն արտահայտվել են հետևյալում.*

Անդրանիկ Սկրտչյանը, 2008 թվականի դեկտեմբերի 18-ին դատապարտվել է 9 (ինը) տարի ժամկետով ազատազրկման և 2011 թվականի ապ-

րիլ ամսից մինչև 2015 թվականի մարտի 16-ն ընկած ժամանակահատվածում պատիժը կրել է ՀՀ ԱՆ «Կոշ» քրեակատարողական հիմնարկում:

2014 թվականի մայիս ամսվա ընթացքում Անդրանիկ Մկրտչյանը բնակվել է «Կոշ» ՔԿ հիմնարկի 4-րդ մասնաշենքի 1-ին հարկում տեղակայված, կացարանի հարմարեցված խաղասենյակում, որտեղ կենցաղային բնույթի աշխատանքներ է կատարել նույն հիմնարկի դատապարտյալ Արտավազդ Գոհարյանը:

Անդրանիկ Մկրտչյանը, համոզված լինելով, որ Արտավազդ Գոհարյանը հիշյալ կացարանից գաղտնի հափշտակել է տարբեր կենցաղային պարագաներ, որպես «քրեական հեղինակություն», վերջինիս պատժելու նպատակով 2014 թվականի մայիսի 19-ին՝ ժամը 23:00-23:30-ն ընկած ժամանակահատվածում, նույն սենյակում, փայտով դիտավորյալ հարվածներ է հասցրել Արտավազդ Գոհարյանի մարմնի տարբեր մասերին ու գլխի գագաթային շրջանին, ինչի հետևանքով վերջինիս առողջությանը պատճառել է կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս՝ բաց, բութ գանգուղեղային վնասվածք: Այնուհետև Արտավազդ Գոհարյանը տեղափոխվել է նույն քրեակատարողական հիմնարկի բուժսպասարկման ստացիոնար բաժին, որտեղ 2014 թվականի մայիսի 20-ին՝ ժամը 03:40-ին մահացել է (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթ 171):

6. Վկա Արայիկ Սիրոյանը **նախաքննության ընթացքում՝ 2014 թվականի հոկտեմբերի 3-ի** հարցաքննության ժամանակ, տվել է ցուցմունք այն մասին, որ 2014 թվականի փետրվարի 6-ից պատիժ է կրել ՀՀ ԱՆ «Կոշ» ՔԿ հիմնարկում, որտեղ ծանոթացել է նույն հիմնարկի դատապարտյալ, «Ափո» մականունով Արտավազդ Գոհարյանի հետ: Վերջինս քրեակատարողական հիմնարկի տարածքում կատարել է տարբեր կենցաղային, տնտեսական և շինարարական աշխատանքներ, մշակել է տարածքի ծառերն ու ծաղիկները: Ա.Գոհարյանը նմանատիպ աշխատանքներ է կատարել նաև քրեական հեղինակություն համարվող, «զոն նայող» դատապարտյալ Ա.Մկրտչյանի քնելատեղում, որը գտնվել է հիմնարկի «Սանչաստ» կոչվող հանրակացարանի 1-ին հարկի խաղասենյակում: 2014 թվականի մայիսի 1-ից 10-ն ընկած ժամանակահատվածում, օրը հստակ չի հիշում, Ա.Մկրտչյանի սենյակի մոտով անցնելիս, բաց դռնից տեսել է, որ վերջինս, հայհոյանքներ տալով, ծեծում է Ա.Գոհարյանին՝ ձեռքերով և փայտի կտորով հարվածներ հասցնելով վերջինիս մարմնի տարբեր մասերին: Այնուհետև տեսել է, որ Ա.Գոհարյանն արյունոտ դեմքով դուրս է եկել Ա.Մկրտչյանի սենյակից և հեռացել: Մեկ-երկու օր անց հանդիպել է Ա.Գոհարյանին և հետաքրքրվել տեղի ունեցածի մասին: Վերջինս պատմել է, որ Ա.Մկրտչյանն իրեն մեղադրում է իր սենյակից ծխախոտ, սուրճ, ժամացույց և կրակայրիչ գողանալու մեջ: Նա սկզբում հերքել է իր կողմից գողություն կատարելու փաստը, սակայն հետո ընդունել է և խնդրել որևէ մեկին չպատմել այդ մասին: Հետագայում Ա.Գո-

հարյանի հետ շփումներից հասկացել է, որ վերջինս ցանկանում է տեղափոխվել և պատժի մնացած մասը կրել այլ քրեակատարողական հիմնարկում: 2014 թվականի մայիսի 19-ին՝ ժամը 23:00-ի սահմաններում, «Սանչաստ» կոչվող հանրակացարանի շենքի միջանցքով՝ Ա.Մկրտչյանի սենյակի մոտով անցնելիս, բաց դռնից տեսել է, որ վերջինս հաստ փայտով հարվածում է Ա.Գոհարյանի մարմնի տարբեր մասերին և մեղադրում նրան գողություն կատարելու մեջ: Որոշ ժամանակ անց Ա.Գոհարյանը գլխի գագաթային մասը բռնած, արյունոտ դուրս է եկել Ա.Մկրտչյանի սենյակից: Այնուհետև դատապարտյալներից լսել է, որ Ա.Գոհարյանը լավ չի զգում, նրան տարել են բուժմաս, և այնտեղ նա մահացել է: Բուժմասի բուժպասարկման սենյակի պատուհանից տեսել է, որ Ա.Գոհարյանը պառկած է պատգարակին, իսկ դատապարտյալ Վալերը կապում է նրա գլուխը, հավանաբար, որ գլխի վերքը չերևա: Այնուհետև եկել են հիմնարկի պետ Ստեփանյանը և նրա տեղակալները: Տեսել է նաև, թե ինչպես են նրանք խոսել Ա.Մկրտչյանի հետ: Որոշ ժամանակ անց խոսակցություններ են տարածվել, թե Ա.Գոհարյանի խոցը պայթել է, նա ընկել է գետնին և մահացել է:

Ա.Միրզոյանը հայտնել է նաև, որ Ա.Մկրտչյանը Ա.Գոհարյանին հարվածել է «քառակուսիոտ» փայտով, որը կուներևար մոտ մեկ մետր երկարություն, 3 սմ հաստություն: Ա.Մկրտչյանի գլխի գագաթային հատվածում տեսել է հոսող արյուն, նրա հագին եղել է մուգ գույնի շալվար և սվիտեր, որը արյունոտ էր, իսկ երբ նրան տեսել է բուժմասում մահացած վիճակում, նրա սվիտերը փոխված է եղել: Հայտնել է նաև, որ դեպքի ժամանակ միջանցքի բաց դռնից տեսել է, թե ինչպես է Ա.Մկրտչյանը փայտով հարվածել Ա.Գոհարյանի մարմնի տարբեր մասերին և գլխին, 1-2 րոպե այդ ամենը տեսնելուց հետո էլ չի կարողացել նայել, դուրս է եկել շենքի դիմաց ու շուրջ 30 րոպե լսել է հարվածների և Ա.Գոհարյանի գոռոցի ձայները:

Հայտնել է նաև, որ Ա.Մկրտչյանը գրեթե ամեն օր տարբեր պատճառներով ծեծի է ենթարկել դատապարտյալներին (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 172-177):

Վկա Արայիկ Սիրզոյանը **նախաքննության ընթացքում՝ 2015 թվականի հունվարի 15-ի հարցաքննության ժամանակ,** տվել է լրացուցիչ ցուցմունք այն մասին, որ Ա.Մկրտչյանը ունեցել է երկարավուն փայտ՝ 4-5 սմ հաստությամբ, անկյունները քառակուսի, որը կոչվում էր «կոլ»: Այդ փայտով նա ծեծում էր դատապարտյալներին, այդ թվում՝ Ա.Գոհարյանին, ով գլխի շրջանում ստացած վնասվածքից մահացել է: Իր իմանալով՝ Ա.Մկրտչյանն Ա.Գոհարյանին 2014 թվականի մայիս ամսվա ընթացքում ծեծել է երկու անգամ: 2014 թվականի մայիսի սկզբին, կոնկրետ օրը չի հիշում, Ա.Մկրտչյանի սենյակի մոտով անցնելիս կիսաբաց դռնից տեսել է, որ սենյակում են գտնվում դատապարտյալներ Անդրանիկ Մկրտչյանը, Արթուր Թադևոսյանը, «Տիյա» մականունով Հովհաննես Վարդանյանը և Արտավազդ Գոհարյանը:

Լսել է, թե ինչպես է Ա.Մկրտչյանը, հայհոյանքներ տալով, Ա.Գոհարյանին մեղադրել իր սենյակից գողություն կատարելու մեջ, ինչից Ա.Գոհարյանը հրաժարվել է, որից հետո Ա.Մկրտչյանը ձեռքերով, ոտքերով, ինչպես նաև «կոլ» կոչվող փայտով հարվածել է Ա.Գոհարյանի մարմնի տարբեր հատվածներին:

2014 թվականի մայիսի 19-ի կեսօրին քրեակատարողական հիմնարկի տարածքում զբոսնելիս դատապարտյալների խոսակցություններից տեղեկացել է, որ Ա.Գոհարյանին առողջական խնդիրներ ունենալու պատճառով շտապ օգնության ավտոմեքենայով տեղափոխել են Աշտարակ քաղաքի հիվանդանոց: Զարմացել է, քանի որ Ա.Գոհարյանը երբևէ չի դժգոհել առողջությունից: Մի քանի ժամ անց տեղեկացել է, որ վերջինս վերադարձել է քրեակատարողական հիմնարկ, քանի որ հետազոտության արդյունքներով բժիշկները նրա մոտ որևէ խնդիր չեն հայտնաբերել: Նույն օրը՝ ժամը 23:00-ից մինչև 23:30-ն ընկած ժամանակահատվածում, երբ գտնվել է «Սանչաստ» կոչվող հանրակացարանի մոտակայքում՝ նստարանին նստած, Ա.Մկրտչյանի սենյակից լսել է գոռգոռոցի և հայհոյանքների ձայներ: Անմիջապես մտել է շենքի միջանցք և լսել, թե ինչպես է վերջինս մեղադրել Ա.Գոհարյանին գողություն կատարելու մեջ: Ա.Մկրտչյանի ձեռքում տեսնելով «կոլ» կոչվող փայտը՝ հասկացել է, որ նա պատրաստվում է հարվածել Ա.Գոհարյանին: Ներսում գտնվողների կողմից չնկատվելու համար դուրս է եկել շենքից, գնացել է դեպի հակառակ կողմ, այնտեղ գտնվող պատուհանից հետևել է սենյակում տեղի ունեցող իրադարձություններին: Տեսել և լսել է, թե ինչպես է Ա.Մկրտչյանը, հայհոյանքներ տալով, հարվածում Ա.Գոհարյանի մարմնի տարբեր մասերին: Լսել է նաև Ա.Գոհարյանի բղավոցի ձայները. «Վախ, մամա ջան, ցավումա, մի խփի»: Ստույգ չի հիշում, թե Ա.Մկրտչյանը քանի անգամ է հարվածել Ա.Գոհարյանին, ինչով և որ հատվածներին, սակայն նախկին տեսածից ու իմացածից կարող է վստահ հայտնել, որ Ա.Մկրտչյանը հարվածել է ձեռքերով, ոտքերով և «կոլ» կոչվող փայտով: Դեպքը տևել է մոտ 20-30 րոպե, որին ներկա են գտնվել Ա.Մկրտչյանի մտերիմները՝ դատապարտյալներ Արթուրը, Հայկը և «Տիյան»: Այդ ամենը տեսել է պատուհանից՝ կանգնած լինելով շուրջ 5 մետր հեռավորության վրա գտնվող «բորդյուրի» վրա: Այնուհետև ինքը վերադարձել է շենքի մուտքի մոտ և տեսել է, որ Ա.Գոհարյանը ձեռքերով գլուխը բռնած դուրս է եկել սենյակից, իսկ «Տիյան» և Հայկը Ա.Գոհարյանին ուղեկցել են կողքի խաղասենյակ: Մի քանի րոպե անց վերջիններս Ա.Գոհարյանին թևերից բռնած տարել են դեպի բուժկետ: Ինքը նույնպես գնացել է բուժկետի մոտ և տեսել, որ Ա.Գոհարյանն անշարժ, մեջքի վրա պառկած է բուժկետում գտնվող պատգարակին, իսկ Սերվենտը և Հարութը մաքրում են նրա գլխի արյունը: Այնուհետև Վալերը և «SS» մականունով Արմենը բինտով կապել են Ա.Գոհարյանի գլուխը և ոտքերը:

Հայտնել է նաև, որ, իր կարծիքով, Ա.Սկրտչյանը «կոլ» կոչվող փայտով է հարվածել Ա.Գոհարյանի գլխին, ինչի հետևանքով էլ նա մահացել է, իսկ իրեն Ա.Սկրտչյանը երբևէ չի ծեծել (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 148-160):

Վկա Արայիկ Միրզոյանը **նախաքննության ընթացքում՝ 2015 թվականի մարտի 27-ի** հարցաքննության ժամանակ, տվել է լրացուցիչ ցուցմունք՝ հայտնելով, որ պնդում է նախաքննության ընթացքում իր տված ցուցմունքներն այն մասին, որ դեպքի պահին գտնվել է «Սանչաստ» կոչվող շենքի միջանցքում, կիսաբաց դռնից տեսել է, թե ինչպես է «զոհ նայող» դատապարտյալ Ա.Սկրտչյանն իր սենյակում ձեռքերով և «կոլ» կոչվող փայտով հարվածում Ա.Գոհարյանի մարմնի տարբեր մասերին և մեկ անգամ էլ գլխի վերևի մասին, որի հետևանքով նրա գլխից արյուն է հոսել: Դեպքը տևել է մոտ 30 րոպե: Այնուհետև դատապարտյալներից լսել է, որ Ա.Գոհարյանը լավ չի զգում, նրան տարել են բուժմաս: Ինքը նույպես գնացել է այնտեղ և բուժմասի պատուհանից տեսել է, որ Ա.Գոհարյանը պառկած է մահճակալին, իսկ դատապարտյալներ «SS» մականունով Արմենը և Վալերը կապում են Ա.Գոհարյանի գլուխը, ձեռքերը և ոտքերը, որպեսզի վնասվածքները չերևան (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 70-71):

Վկա Արայիկ Միրզոյանը **2015 թվականի օգոստոսի 5-ին, 2015 թվականի օգոստոսի 27-ին և 2015 թվականի օգոստոսի 31-ին՝** դատապարտյալ Անդրանիկ Սկրտչյանի հետ **առերես հարցաքննությունների ժամանակ,** պնդել է նախաքննության ընթացքում իր տված ցուցմունքներն այն մասին, որ տեսել է, թե ինչպես է Ա.Սկրտչյանը, հայհոյանքներ տալով, ծեծում Ա.Գոհարյանին, ինչպես նաև ձեռքերով և փայտի կտորով հարվածներ հասցնում վերջինիս մարմնի տարբեր մասերին: Հայտնել է նաև, որ դեպքի ժամանակ կանգնած չի եղել Ա.Սկրտչյանի կողքին, որպեսզի տեսներ, թե նա Ա.Գոհարյանի մարմնի որ հատվածներին է շատ հարվածել, բայց «կոլ» կոչվող փայտը տեսել է Ա.Սկրտչյանի ձեռքին: Այնուհետև, երբ Ա.Գոհարյանին բուժկետ են տեղափոխել, տեսել է, որ վերջինիս գլխից արյուն է հոսում:

Հայտնել է նաև, որ Ա.Սկրտչյանի հետ գտնվել է նորմալ հարաբերությունների մեջ և երբևէ նրա հետ կոնֆլիկտ չի ունեցել (տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 87-89, 123-128, 130-133):

Վկա Արայիկ Միրզոյանն **Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 6-ի, 2016 թվականի դեկտեմբերի 11-ի և 2017 թվականի հունվարի 18-ի դատական նիստերի ընթացքում** տվել է գրեթե նույնաբովանդակ ցուցմունքներ՝ Ա.Սկրտչյանի կողմից Ա.Գոհարյանին ծեծի ենթարկելուն ականատես լինելու մասին: Միաժամանակ պնդել է, որ երբ կանգնել է «Կոշ» ՔԿ հիմնարկի «Սանչաստ» կոչվող շենքի՝ Ա.Սկրտչյանի սենյակի դիմաց, պատուհանից տեսել է, թե ինչպես է վերջինս ծեծի ենթարկում Ա.Գոհարյանին, ընդ որում, տեսել է, որ Ա.Սկրտչյանը «կոլ» կոչվող փայտով ղեմ-

քով դեպի իրեն կանգնած Ա.Գոհարյանի գլխի գագաթային հատվածին հարվածել է դիմացից, վերևից ներքև ուղղությամբ, որից հետո վերջինիս գլխից սկսել է արյուն հոսել: Նշել է նաև, որ «կոլ» կոչվող փայտը «կլորավուն» էր՝ շուրջ 50 սմ երկարությամբ և 2-3 սմ հաստությամբ:

Վկա Արայիկ Միրզոյանն **Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունվարի 29-ի և 2017 թվականի փետրվարի 12-ի դատական նիստերի ընթացքում** նշել է, որ ինչպես նախաքննության ընթացքում, այնպես էլ դատաքննության սկզբում իր կողմից տրված ցուցմունքներն այն մասին, որ անձամբ տեսել է, թե ինչպես է Ա.Մկրտչյանը ծեծի ենթարկել Ա.Գոհարյանին և «կոլ» կոչվող փայտով հարվածել նրա գլխին, որի հետևանքով վերջինս մահացել է, սուտ են: Իրականում նման բան չի եղել, նման բան ինքը չի տեսել, և ընդհանրապես երբևէ Ա.Մկրտչյանի ձեռքին փայտ չի տեսել: Ա.Գոհարյանի մահվան վերաբերյալ տեղեկացել է դատապարտյալներից, լսել է, որ վերջինիս խոցն է պայթել, և բաղնիքի մոտ ընկել է, որի հետևանքով էլ մահացել է: Ինքն իրականում զրպարտել է Ա.Մկրտչյանին, քանի որ ցանկացել է վրեժխնդիր լինել նրանից այն բանի համար, որ նա Ա.Գոհարյանի մահանալուց շուրջ երկու ամիս անց խնդրահարույց հարցի կապակցությամբ, որպես «զոն նայող» իրեն կանչել է, նախատել և ապտակել է: Ինքը զայրացած է եղել Ա.Մկրտչյանի վրա, նույն ընթացքում էլ հայտնվել են մարդիկ, ովքեր իրեն ուղղորդել են սուտ ցուցմունքներ տալ, սակայն այդ մասին չի կարող պատմել: Նշել է, որ ընդունում է իր սխալը և նույնիսկ պատրաստ է դրա համար ենթարկվել պատասխանատվության (տե՛ս դատական նիստի արձանագրությունը):

6.1. Վկա Սերյոժա Սիմոնյանը **նախաքննության ընթացքում՝** 2014 թվականի նոյեմբերի 15-ի հարցաքննության ժամանակ, տվել է ցուցմունք այն մասին, որ պատժի կրման ընթացքում ծանոթացել է դատապարտյալ Ա.Գոհարյանի հետ: Հայտնել է, որ 2014 թվականի ընթացքում «Կոշ» ՔԿ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալների շրջանում չգրված օրենքներով ղրությունը հսկել է դատապարտյալ Ա.Մկրտչյանը, ով դատապարտյալների շրջանում լուծել է բոլոր տեսակի հարցերը, այդ թվում՝ հարկ եղած դեպքում որպես «պատիժ» փայտով ծեծել է դատապարտյալներին, քանի որ, բացի «զոն նայողից», որևէ այլ դատապարտյալ ծեծելու իրավունք չի ունեցել: Ա.Մկրտչյանն ուներ ծիրանի ծառի ճյուղից պատրաստած փայտ, որը կոչվում էր «կոլ», որով էլ ծեծում էր սխալ արարք թույլ տված դատապարտյալներին: Այդ ժամանակահատվածում Ա.Մկրտչյանը բնակվել է դատապարտյալ Արթուրի հետ՝ «Սանչաստ» կոչվող հանրակացարանի 1-ին հարկի խաղասենյակում:

2014 թվականի մայիսի 19-ի լույս 20-ի գիշերը՝ ժամը 02.00-03.00-ն ընկած ժամանակահատվածում, դատապարտյալների շրջանում տարածված խոսակցություններից տեղեկացել է, որ Ա.Գոհարյանը բաղնիքի մոտ վայր է

ընկել և գլխով հարվածել գետնին, որի պատճառով տեղափոխվել է բուժմաս: Մոտ 30 րոպե անց գնացել է բուժմասի մոտ, որտեղ տեսել է հավաքված մի շարք դատապարտյալների և օրվա հերթափոխի աշխատակիցներին, որոնցից էլ տեղեկացել է Ա.Գոհարյանի մահվան մասին: Բուժմասի մահճակալին տեսել է Ա.Գոհարյանին մահացած՝ մեջքի վրա պառկած դիրքով: Տեսել է նաև «SS» մականունով դատապարտյալ Արմեն Գևորգյանին, ով կապել է Ա.Գոհարյանի ոտքերը, կապված է եղել նաև նրա գլուխը, իսկ գլխի գագաթային հատվածում վիրակապը եղել է արյունոտ:

Դեպքից մի քանի օր անց դատապարտյալների շրջանում տարածված խոսակցություններից տեղեկացել է, որ Ա.Գոհարյանը դատապարտյալ Արթուրի սենյակից գողացել է սուրճ, թեյ, ծխախոտ և այլ իրեր, որի մասին հայտնի է դարձել Ա.Մկրտչյանին: Հաշվի առնելով, որ դատապարտյալների շրջանում «պատժելու» իրավունք ունեցել է միայն դրությունը հսկողը, ով տվյալ դեպքում հանդիսացել է Ա.Մկրտչյանը, վերջինս դրա համար «կոլ» կոչվող փայտով ծեծել է Ա.Գոհարյանին, որի ընթացքում էլ հարվածել է նաև գլխին և պատճառել վնասվածք, ինչից էլ վերջինս մահացել է: Դեպքի հետ կապված՝ Ա.Մկրտչյանը դատապարտյալներին ասել է, որ Ա.Գոհարյանի մահվան դեպքով ոստիկանության աշխատակիցների գալու դեպքում ավելորդ ոչ մի բան չասեն, պատասխանեն միայն, թե իբրև նա մահացել է խոցը պայթելուց, հետո վայր է ընկել բաղնիքի և զուգարանի միջնամասում՝ գլուխը պատին հարվածելու արդյունքում:

Հայտնել է նաև, որ 2014 թվականի հունիսի վերջին «Կոշ» ՔԿ հիմնարկում պատիժ կրող մի դատապարտյալի հետ ունեցած տարաձայնության պատճառով Ա.Մկրտչյանն իրեն կանչել է կացարան, որտեղ փայտով հարվածել է իր ձախ ուսին, պատճառել ֆիզիկական ցավ, որի կապակցությամբ բուժօգնության չի դիմել: Ա.Մկրտչյանի դեմ բողոք չի ներկայացրել (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 8-22):

Վկա Սերյոժա Սիմոնյանը **դատաքննության ընթացքում** հայտնել է, որ երբևէ չի տեսել, որ Ա.Մկրտչյանը ծեծի ենթարկի Ա.Գոհարյանին կամ որևէ այլ դատապարտյալի: Իմանալով Ա.Գոհարյանի մահվան մասին՝ գնացել է բուժմաս, տեսել է Ա.Գոհարյանին մահճակալին պառկած, գլուխը կապված վիճակում, իսկ նրա մարմնի վրա գցած է եղել սավան: Արյուն չի տեսել: Ինչ վերաբերում է «կոլ» տեսակի փայտին, ապա ինքը նույնիսկ պատկերացում չունի դրա մասին: Նշել է նաև, որ դատապարտյալների շրջանում տարածված խոսակցություններից տեղեկացել է, որ Ա.Գոհարյանը մահացել է ընկնելուց, լսել է նաև, որ վերջինիս մահվան պատճառ է հանդիսացել ստացված հարվածը:

Ինչ վերաբերում է Ա.Մկրտչյանի կողմից իրեն հարվածելու դեպքին, նշել է, որ Ա.Մկրտչյանը ծիրանի ծառի բարակ ճյուղով է իրեն հարվածել և

Ա.Սկրտչյանի դեմ որևէ բողոք չունի (տե՛ս դատական նիստի արձանագրությունը):

6.2. Վկա Ավետիք Խաչատրյանը **նախաքննության ընթացքում**՝ 2014 թվականի նոյեմբերի 25-ի հարցաքննության ժամանակ, տվել է ցուցմունք այն մասին, որ 2014 թվականին պատիժ կրելու ընթացքում դատապարտյալների շրջանում չգրված օրենքներով որոշակի ժամանակ, այսպես կոչված, «զոն նայող» է համարվել դատապարտյալ Ա.Սկրտչյանը: Միայն նա է իրավունք ունեցել «պատժելու», այդ թվում՝ ծեծի ենթարկելու, չգրված օրենքների համաձայն, սխալ արարք կատարած դատապարտյալի: Նա աչքի է ընկել իր դաժան և ագրեսիվ պահվածքով, հաճախակի դատապարտյալներին ձեռքերով ու ոտքերով դաժանորեն ծեծի է ենթարկել, իսկ վերջիններս, ըստ չգրված օրենքների, պաշտպանվելու իրավունք չեն ունեցել: Ա.Սկրտչյանը որոշ ժամանակ բնակվել է իր ընկեր դատապարտյալ Արթուրի հետ «Սանչաստ» կոչվող հանրակացարանի 1-ին հարկի՝ կացարանի հարմարեցված խաղասենյակում:

Պատիժ կրելու ընթացքում ճանաչել է նաև «Ափո» մականունով դատապարտյալ Ա.Գոհարյանին: Իր հիշելով՝ Ա.Գոհարյանը մահացել է 2014 թվականի մայիսի վերջին: Դեպքի օրը՝ կեսօրին, տեսել է, որ նրան պատգարակով դուրս են բերել քրեակատարողական հիմնարկի տարածքից, որպեսզի տեղափոխեն «Աշտարակի բժշկական կենտրոն»՝ բուժօգնության համար: Դատապարտյալների խոսակցություններից տեղեկացել է, թե իբր Ա.Գոհարյանի ստամոքսի խոցը բացվել է: Այդ ամենից զարմացել է, քանի որ դրանից ժամեր առաջ հանդիպել է Ա.Գոհարյանին, ով քրեակատարողական հիմնարկի տարածքում աշխատելիս է եղել և նույնիսկ հետաքրքրվել ու իմացել է, որ լավ է զգում:

Հաջորդ օրը՝ առավոտյան անվանականչի ժամանակ, դատապարտյալների շրջանում տարածված խոսակցություններից տեղեկացել է, որ Ա.Գոհարյանը մահացել է, իսկ մահվան պատճառը հանդիսացել է դատապարտյալներից մեկի կողմից նրան ծեծելը: Տեղյակ չէ, թե կոնկրետ ով է ծեծել, սակայն քրեակատարողական հիմնարկի տարածքում նման իրավունք ունեցել է միայն դատապարտյալների շրջանում, այսպես կոչված, «զոն նայող» համարվող դատապարտյալը, ով տվյալ ժամանակահատվածում հանդիսացել է Ա.Սկրտչյանը: Նա է վիճելի հարցերին լուծում տվել և սխալ արարք կատարած դատապարտյալներին պատժել այնպես, ինչպես ցանկացել է: Բազմիցս լսել է տարբեր դատապարտյալների գոռգոռոցի ձայներ, որոնց Ա.Սկրտչյանը տարբեր պատճառներով ծեծի է ենթարկել քրեակատարողական հիմնարկի «Դպրոց» կոչվող հանրակացարանի շենքի 3-րդ հարկի սենյակում (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 39-49):

Վկա Ավետիք Խաչատրյանը **դատաքննության ընթացքում** նշել է, որ տեղյակ չի եղել Ա.Սկրտչյանի կողմից Ա.Գոհարյանին ծեծի ենթարկելու

մասին: Դատապարտյալներից լսել է, որ Ա.Գոհարյանը մահացել է ստամոքսի խոցը պայթելուց: Նշել է, որ քրեակատարողական հիմնարկում ոչ ոք իրավունք չուներ դատապատյալներին ծեծելու, այդ թվում նաև՝ «զոն նայողը»: Նշել է նաև, որ երբևէ չի տեսել «կոլ» կոչվող փայտը (տե՛ս դատական նիստի արձանագրությունը):

6.3. Դիակի դատաբժշկական փորձաքննության թիվ 46 եզրակացության համաձայն՝ *«(...) Արտավազդ Գոհարյանի մահը վրա է հասել գլխուղեղի կենսականորեն կարևորագույն ֆունկցիաների սուր խանգարումից՝ բաց, բութ գանգուղեղային վնասվածք ստանալու հետևանքով, որն էլ գտնվում է ուղղակի պատճառական կապի մեջ՝ մահվան անմիջական պատճառի հետ: Սույն հետևությունը հիմնավորվում է դիակի դատաբժշկական փորձաքննությամբ հայտնաբերված՝ գլխի աջ հետին գագաթային շրջանի սալջարդ վերքի, գլխամաշկի տակ տարածուն արյունազեղման, գլխուղեղի արյունազեղումների, գլխուղեղի կողմնային փորոքներում հեղուկ արյան, գլխուղեղի արտահայտված այտուցի, գլխուղեղի անոթների գերարյունալցման առկայություններով, որոնք առաջացել են՝ կենդանության օրոք, բութ առարկայի մեկանգամյա ներգործության հետևանքով և բերել են մահվան: Ա.Գոհարյանի գլխի աջ հետին գագաթային շրջանի սալջարդ վերքը պատճառվել է կենդանության օրոք, մահվանից մինչև 2 ժամ առաջ ընկած ժամանակահատվածում: Ա.Գոհարյանի դիակի վրա հայտնաբերված վերքը որևիցե բժշկական միջամտության ենթարկված չի եղել: Ա.Գոհարյանի դիակի վրա հայտնաբերված վերքը, ելնելով իր բնույթից, պետք է արյունահոսեր: Ելնելով վնասվածքների բնույթից, կարելի է ասել, որ գանգուղեղային վնասվածքը ստանալուց հետո չի բացառվում, որ Ա.Գոհարյանը որոշակի կարճ ժամանակահատվածի ընթացքում կարողանար կատարել ինքնուրույն գործողություններ, այդ թվում նաև՝ տեղաշարժվեր:*

Թիվ 6 լուսանկարի վրա մատնացույց արված հատվածում՝ պատերի միացման անկյան շրջանում բացառվում է գլխի շրջանի վերքի առաջացումը՝ ելնելով պատի ներկված հատվածի և վերքի առանձնահատկություններից: Ելնելով վերքի բնույթից և տեղակայումից, թիվ 11 լուսանկարի վրա առկա պատերի միացման հատվածի քարե շրիշակի անկյան շրջանի առանձնահատկություններից, ինչպես նաև, այդ անկյունից պատի վրա 19,5 սմ հեռավորության վրա դատակենսաբանական ուսումնասիրությամբ հայտնաբերված արյան հետքի առկայությունից, չի բացառվում Ա.Գոհարյանի կողմից սեփական մարմնի բարձրությունից նշված հատվածում վայր ընկնելու և գլխով հարվածելու հետևանքով: (...) Արտավազդ Գոհարյանը կենդանության օրոք տառապել է հաստ աղու էռոզիվ կոլիտով, վերջինովս էլ պայմանավորված հաստ աղու լուսանցքում հայտնաբերված 300 մլ արյան առկայությունով, որոնք մահվան հետ չեն գտնվում պատճառական կապի մեջ (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 74):

Լրացուցիչ դատաբժշկական փորձաքննության թիվ 123/լ եզրակացության համաձայն՝ *«(...) Արտավազդ Գոհարյանի դիակի դատաբժշկական փորձաքննությամբ հայտնաբերված՝ աջ ուսահոդի շրջանի հետին մակերեսի, կրծքավանդակի աջ կեսի հետին մակերեսի և ձախ սրունքի վերին երրորդի առաջնային մակերեսի քերծվածքները, ելնելով իրենց բնույթից, կազմաբանական առանձնահատկություններից, պատճառվել են կենդանության օրոք, մահվանից մինչև ութ օր առաջ, բութ, կոշտ, սահմանափակ մակերեսներ ունեցող առարկայով(ներով), ինչպիսին կարող էր լինել նաև փայտը, որոնք ինչպես առանձին-առանձին, այնպես էլ միասին՝ առողջությանը թեթև վնասի հատկանիշներ չեն պարունակում: Վերը նշված մարմնական վնասվածքները ստանալիս քաղ. Արտավազդ Գոհարյանը կարող էր գտնվել նման վնասվածքների առաջացումը չբացառող ցանկացած հնարավոր դիրքում (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթ 159):

Լրացուցիչ դատաբժշկական փորձաքննության թիվ 180/լ եզրակացության համաձայն՝ *«(...) Արտավազդ Գոհարյանի դիակի դատաբժշկական փորձաքննությամբ հայտնաբերված՝ գանգուղեղային բաց, բութ վնասվածքը (գլխի աջ հետին գագաթային շրջանի սալջարդ վերքը, գլխի մաշկի տակ և գլխուղեղում արյունազեղումների առաջացումով և գլխուղեղի կողմնային փորոքներ հեղուկ արյան թափանցումով), կենդանի անձանց մոտ ունի առողջությանը ծանր վնասի պատճառման հատկանիշներ՝ որպես կյանքի համար վտանգ սպառնացող, որը տվյալ դեպքում բերել է մահվան: Նշված վնասվածքը պատճառվել է սահմանափակ մակերես ունեցող բութ առարկայով, ինչպիսին կարող էր լինել նաև նկարագրված փայտը: Դիակի դատաբժշկական փորձաքննությամբ հայտնաբերված, վերը նշված մարմնական վնասվածքը ստանալիս քաղ. Արտավազդ Գոհարյանը կարող էր գտնվել հնարավոր բոլոր դիրքերում, որոնք կապահովեին և չէին խոչընդոտի նման վնասվածքի առաջացմանը: Վնասվածքը ստանալու պահին Ա.Գոհարյանը գլխի համապատասխան մասով ուղղված է եղել դեպի վնասող առարկան (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթ 164):

7. Առաջին ատյանի դատարանը, ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով առաջադրված մեղադրանքում Ա.Մկրտչյանին արդարացնելով, իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. *«(...) Ինչպես նախաքննության ընթացքում, այնպես էլ դատարանում ամբաստանյալ Անդրանիկ Մկրտչյանը պնդեց, որ Արտավազդ Գոհարյանի հետ երբևէ վիճաբանություն չի ունեցել և նրան ծեծի չի ենթարկել: Գոհարյանի մահանալու գիշերը ինքը սենյակում քնած է եղել և նրա մահվան մասին լսել է դատապարտյալներից: Անմիջապես գնացել է հիմնարկի բուժ.մաս և տեսել Գոհարյանին արդեն մահացած վիճակում: Ինչ վերաբերում է նույն ՔԿՀ-ի դատապարտյալ Արայիկ Միրզոյանի ցուցմունքին այն մասին, թե տեսել է, որ Գոհարյանին ինքը ծեծի է ենթարկել ու «կոլով» հարվածել է նրա*

գլխին, ինչի պատճառով վերջինս մահացել է, սուտ է: Արայիկ Միրզոյանը զրպարտել է իրեն զուտ այն պատճառով, որ բազմիցս ինքը նրան՝ թույլ տված վատ արարքների համար դիտողություններ է արել և մեկ անգամ էլ ապտակել է:

Չնայած դատարանում վկա Արայիկ Միրզոյանը պատճառաբանեց, որ վրեժ լուծելու նպատակով զրպարտել է Անդրանիկ Մկրտչյանին և նախկինում սուտ ցուցմունքներ է տվել այն մասին, որ տեսել է, թե ինչպես Անդրանիկ Մկրտչյանը իր սենյակում ծեծի է ենթարկել Արտավազդ Գոհարյանին և «կոլ» կոչվող փայտով հարվածել է նրա գլխի գագաթային հատվածին, դատարանը Անդրանիկ Մկրտչյանին առաջադրված մեղադրանքի հիմքում դրված ապացույցները, այդ թվում Արայիկ Միրզոյանի կողմից նախկինում տրված հակասական ցուցմունքները՝ Անդրանիկ Մկրտչյանի կողմից Արտավազդ Գոհարյանին ծեծի ենթարկելուն ականատես լինելու, Անդրանիկ Մկրտչյանի կողմից Արտավազդ Գոհարյանի գլխի գագաթային հատվածին «կոլ» կոչվող փայտով հարվածելու պահը և մեխանիզմը տեսնելու ու «կոլ» տեսակի փայտի առանձնահատկությունների վերաբերյալ, արժանահավատության տեսանկյունից համադրելով դատաքննության ընթացքում հետազոտված այլ ապացույցների համակցության մեջ, գտնում է, որ Անդրանիկ Մկրտչյանին առաջադրված մեղադրանքը դատաքննությամբ չապացուցվեց:

[Առաջին ատյանի] [դ]ատարանը սույն դատաքննությամբ հետազոտված և սույն դատավճռում շարադրված ապացույցների վերլուծության և գնահատման հիման վրա հիմնավորված չի համարում, որ վկա Արայիկ Միրզոյանի նախաքննության ընթացքում և դատաքննության սկզբում տված հակասական ցուցմունքները արժանահավատ են, իսկ դրանից հետո տված ցուցմունքները՝ անարժանահավատ: Մեղադրանքի հիմքում դրված և դատաքննությամբ հետազոտված մյուս ապացույցները նշված պայմաններում ինչպես առանձին, այնպես էլ համակցությամբ չեն հաստատում սույն գործով ապացուցման առարկան կազմող այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են՝ Անդրանիկ Մկրտչյանի առնչությունը դեպքին, նրա մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված և նրան մեղսագրված արարքը կատարելու մեջ: Նշված ապացույցները, մասնավորապես՝ դեպքի վայրի զննության, առգրավում կատարելու, հագուստները ներկայացնելու, վերցնելու և զննելու մասին արձանագրությունները, դիակի դատաբժշկական թիվ 46, լրացուցիչ դատաբժշկական թիվ 123/1 և 180/1 փորձաքննությունների եզրակացությունները, դատակենսաբանական փորձաքննությունների թիվ 228, 229 և 268 եզրակացությունները, վկաներ, դատապարտյալներ Սերյոժա Սիմոնյանի, Ավետիք Խաչատրյանի, Արթուր Թադևոսյանի, Հովհաննես Վարդանյանի, Ռաֆայել Մասումյանի, Սերվենտ Խաչատրյանի, Արմեն Գևորգյանի, Վալերի Թումանյանի, ՀՀ ԱՆ «Կոշ» ՔԿՀ-ի աշխատակիցներ Հարություն Խա-

չատրյանի, Սպարտակ Ավետիսյանի, Ծերուն Բունիաթյանի, Վռամ Գևորգյանի, Աշտարակի ԲԿ-ի շտապօգնության բժիշկ Նաիրի Մանվելյանի, քննիչ Արթուր Դավթյանի, ՀՀ ՄՆ ԴԲԳԳԿ-ի փորձագետ Սերգեյ Աբգարյանի ցուցմունքները վկայում են այն մասին, որ Արտավազդ Գոհարյանը գլխի վնասվածքը ստացել է այլ հանգամանքներում և մահանալուց, այսինքն 2014թ. մայիսի լույս 20-ի գիշերը ժամը 03:40-ից երկու ժամ առաջ, այլ ոչ թե մայիսի 19-ին ժամը 23:00-23:30-ը ընկած ժամանակահատվածում: Որևէ ապացույց ձեռք չբերվեց նաև Արտավազդ Գոհարյանի կողմից ՔԿՀ-ում գողություն կատարելու փաստի վերաբերյալ, ինչը ըստ Արայիկ Միրզոյանի սկզբնական ցուցմունքների՝ հանդիսանում էր Անդրանիկ Մկրտչյանի կողմից Գոհարյանին ծեծի ենթարկելու դրդապատճառը:

Այսպիսով, [Առաջին ատյանի] [դ]ատարանը (...) արձանագրում է, որ սույն քրեական գործով դատարանում հետազոտված ապացույցների համակցությունը բավարար չէ հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատված համարելու, որ Անդրանիկ Հենրիկի Մկրտչյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով նախատեսված հանցավոր արարք, այն է՝ Արտավազդ Գոհարյանի առողջությանը դիտավորությամբ պատճառել է ծանր վնաս, որն անզգուշությամբ առաջացրել է վերջինիս մահը, և գտնում է, որ Անդրանիկ Մկրտչյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով առաջադրված մեղադրանքով պետք է կայացվի արդարացման դատավճիռ (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթ 123):

8. Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, իր որոշման շրջանակներում փաստել է հետևյալը. «*(...) [Առաջին ատյանի] [դ]ատարանը հիմնավորված չի համարել, որ վկա Արայիկ Միրզոյանի նախաքննության ընթացքում և դատաքննության սկզբում տված հակասական ցուցմունքները արժանահավատ են, իսկ դրանից հետո տված ցուցմունքները՝ անարժանահավատ, ինչը ընդունելի է նաև Վերաքննիչ դատարանի համար:*

Վերաքննիչ դատարանը, քրեական գործի ուսումնասիրությամբ, եզրահանգում է, որ [Առաջին ատյանի] [դ]ատարանը, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում ստուգման ենթարկելով քրեական գործի հիմքում դրված ապացույցների ձեռքբերման աղբյուրները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ղեկավարվելով օրենքով, ներքին համոզմամբ ճիշտ հետևության է եկել այն մասին, որ ամբաստանյալ Անդրանիկ Մկրտչյանը չի կատարել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով նախատեսված հանցավոր արարք (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 9-րդ, թերթ 70):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքաբերը փաստարկել է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 16-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 7-ի որոշումն օրինական և հիմնավորված չէ, Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, որը խաթարում է արդարադատության բուն էությունը և ազդել է գործի ելքի վրա, հետևաբար դատական ակտը ենթակա է բեկանման:

Ի հիմնավորումն վերոհիշյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ քրեական գործով հավաքված ապացույցները բավարար են հաստատված համարելու Ա.Սկրտչյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով նախատեսված հանրորեն վտանգավոր արարք կատարելու հանգամանքը, մինչդեռ Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններն անհիմն են և չեն բխում քրեական գործով ձեռք բերված ապացույցների բավարար համակցությունից ու գործի փաստական հանգամանքներից:

Բողոքաբերի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 7-ի որոշումը հակասում է Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13, Հմայակ Դավթյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի մայիսի 8-ի թիվ ԾԴ/0126/01/12, Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵՔՐԴ/0632/01/18 նախադեպային որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումներին:

10. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 16-ի դատավճիռն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 7-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված և պատճառաբանվա՞ծ են արդյոք ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով նախատեսված հանցանքը կատարելու մեջ Ա.Սկրտչյանի մասնակցությունն ապացուցված չլինելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝

«Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը ապացույցները գնահատում են իրենց ներքին համոզմամբ:

Քրեական դատավարությունում ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի: Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը չպետք է կանխակալ մոտեցում ցուցաբերեն ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տան՝ մինչև դրանց հետազոտումը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի համաձայն՝

«Գործով հավաքված ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման՝ ճեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ճեռքբերման աղբյուրներն ստուգելու միջոցով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:

2. Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

Մեջբերված նորմերը վերլուծության ենթարկելիս Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ ապացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա, ինչը՝ որպես ապացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անխզելի կապով. այն մի կողմից պետք է բխի հետազոտվող ապացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից անկողմնակալ դիտորդի մոտ պետք է առաջացնի այն վստահությունը, որ ապացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ: Ընդ որում, թեև ապացույցները գնահատվում են ներքին համոզմունքի հիման վրա, այնուամենայնիվ, այն չի կարող կամայական լինել և պետք է բխի գործի հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությունից: Այլ կերպ՝ յուրաքանչյուր գործով ապացուցման ենթակա հանգամանքները հաստատելիս (հանցագործության դեպքը և հանգամանքները, կասկածյալի և մեղադրյալի առնչությունը դեպքին, անձի մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ և այլն) դատարանը կրում

է առկա ապացույցները բարեխիղճ գնահատման ենթարկելու պարտականություն, ինչն էլ իր հերթին պետք է արտահայտվի պատճառաբանված եզրահանգումների տեսքով (տե՛ս, mutatis mutandis, *Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵՔԴ/0632/01/08 և *Հմայակ Դավթյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի մայիսի 8-ի թիվ ԾԴ/0126/01/12 որոշումները*):*

12.1. Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ «ներքին համոզմունքը» սուբյեկտիվ-օբյեկտիվ կատեգորիա է: Այն ապացույցների գնահատումն իրականացնող սուբյեկտի գիտակցված և ողջամիտ համոզվածությունն է իր իսկ կողմից կայացված որոշման հիմնավորվածության մեջ: Այդպիսի համոզվածությունը պետք է ձևավորված լինի գործի բոլոր հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննության արդյունքում և հիմնվի թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների բավարար համակցությամբ հաստատված փաստերի վրա, որոնք անկողմնակալ դիտորդի մոտ ողջամտորեն կձևավորեն նույն համոզվածությունը: Ներքին համոզմունքը հիմնվում է ողջամիտ կարծիքի, գիտելիքի վրա, այլ ոչ թե ենթադրությունների, երևակայության, համակրանքի, հակակրանքի կամ կանխակալ կարծիքի վրա:

Ապացույցի արժանահավատության հատկանիշը նույնպես վերաբերում է ապացույցի բովանդակային գնահատմանը: Արժանահավատ է այն ապացույցը, որի ճշմարտացիությունը կասկած չի հարուցում: Յուրաքանչյուր ապացույց արժանահավատության տեսանկյունից պետք է գնահատվի ապացույցների համակցության մեջ՝ բազմակողմանի և մանրամասն գնահատելով փաստական տվյալների ստացման աղբյուրները և ապացույցի ձևավորման ամբողջ ընթացքը: Ապացույցի արժանահավատության վերաբերյալ վերջնական որոշում կարող է կայացվել դրա բովանդակությունն այլ աղբյուրներից ստացված տեղեկությունների հետ համադրելու արդյունքում: Որոշակի փաստի վերաբերյալ այս կամ այն աղբյուրից ստացված տեղեկությունների արժանահավատությունը գնահատելու համար անհրաժեշտ է վերլուծել ստացված տեղեկությունների բովանդակությունը, համադրել դրանք այլ ապացույցների հետ, պարզել դրանց համապատասխանությունը կամ հակասությունը, հակասության դեպքում՝ դրա պատճառները: Ապացույցի արժանահավատության վերաբերյալ դատարանի եզրահանգումները պետք է հիմնվեն գործում առկա փաստական տվյալների վրա (տե՛ս *Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 31-րդ կետը):*

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի համաձայն՝

«1. Դատարանի դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված:

(...)

3. Դատարանի դատավճիռը հիմնավորված է, եթե՝

դրա հետևությունները հիմնված են միայն դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա.

այդ ապացույցները բավարար են մեղադրանքը գնահատելու համար.

դատարանի կողմից հաստատված ճանաչված հանգամանքները համապատասխանում են դատարանում հետազոտված ապացույցներին:

4. Դատարանի դատավճիռը պետք է լինի պատճառաբանված: Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի համաձայն՝ *«Դատավճռի նկարագրական-պատճառաբանական մասում ցույց է տրվում (...)*

3) այն ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները, ինչպես նաև այս կամ այն ապացույցն անարժանահավատ համարելու փաստարկները»:

Մեջբերված նորմերը Վճռաբեկ դատարանը բազմիցս վերլուծության է ենթարկել իր նախադեպային իրավունքի շրջանակներում և վերահաստատել դիրքորոշումն առ այն, որ դատարանը պարտավոր է դատական ակտում ամրագրել և թույլատրելիության, վերաբերելիության ու արժանահավատության տեսանկյունից գնահատման ենթարկել այն ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները, ինչպես նաև նշել այս կամ այն ապացույցն անարժանահավատ համարելու փաստարկները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 3-րդ կետ): Հակառակ դեպքում ապացույցների գնահատումը, դրա արդյունքում դատարանի ներքին համոզմունքի ձևավորումը կկրեն սուբյեկտիվ բնույթ և կհանգեցնեն կամայականության (տե՛ս, mutatis mutandis, *Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 32-րդ կետը, *Արսեն Մակարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0016/11/15 որոշման 14-րդ կետը):

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը, ամբաստանյալ Ա.Մկրտչյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով առաջադրված մեղադրանքում արդարացնելով, արձանագրել է, որ մեղադրանքի հիմքում դրված ապացույցները, այդ թվում՝ Ա.Սիրզոյանի կողմից նախկինում տրված հակասական ցուցմունքները՝ Ա.Մկրտչյանի կողմից Ա.Գոհարյանին ծեծի ենթարկելուն ականատես լինելու, վերջինիս գագաթային հատվածին «կոլ»

կոչվող փայտով հարվածելու պահը և մեխանիզմը տեսնելու ու «կոլ» տեսակի փայտի առանձնահատկությունների վերաբերյալ, արժանահավատության տեսանկյունից համադրելով դատաքննության ընթացքում հետազոտված այլ ապացույցների համակցության հետ, չեն ապացուցում Ա.Սկրտչյանին առաջադրված մեղադրանքը:

Առաջին ատյանի դատարանն արձանագրել է նաև, որ գործով ձեռք բերված ապացույցները վկայում են այն մասին, որ տուժողը գլխի վնասվածքը ստացել է այլ հանգամանքներում և մահանալուց, այսինքն՝ 2014 թվականի մայիսի լույս 20-ի գիշերը՝ ժամը 03:40-ից երկու ժամ առաջ, այլ ոչ թե մայիսի 19-ին՝ ժամը 23:00-23:30-ն ընկած ժամանակահատվածում (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում փաստել է, որ Առաջին ատյանի դատարանը ճիշտ հետևության է եկել այն մասին, որ ամբաստանյալ Ա.Սկրտչյանը չի կատարել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով նախատեսված հանցավոր արարքը (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

15. Սույն որոշման նախորդ, ինչպես նաև 5-8-րդ կետերում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-13-րդ կետերում շարադրված նորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները գործով ձեռք բերված ապացույցները պատշաճ վերլուծության և իրավական գնահատականի չեն արժանացրել:

Այսպես՝ Առաջին ատյանի դատարանը, անդրադառնալով հանցագործության որոշ հանգամանքների վերաբերյալ վկա Ա.Միրզոյանի ցուցմունքներում առկա հակասություններին, ինչպես նաև հետագայում նրա կողմից տրված ցուցմունքները փոխելուն, դրանք համարել է անարժանահավատ, սակայն որևէ վերլուծության չի ենթարկել այդ ապացույցի ձևավորման ողջ ընթացքը, դրա բովանդակությունը հաստատող կամ հերքող հանգամանքների առկայությունը, ինչպես նաև ցուցմունքների փոփոխության հնարավոր պատճառներն ու դրանց վրա ազդող գործոնները: Մասնավորապես՝

ա) ստորադաս դատարանները որևէ գնահատականի չեն արժանացրել այն, որ նախաքննության ողջ ընթացքում վկա Ա.Միրզոյանը պնդել է իր ցուցմունքն առ այն, որ ամբաստանյալը **փայտով հարվածել է տուժողի մարմնի տարբեր մասերին և գլխի շրջանում:** Ա.Միրզոյանը վերոնշյալ ցուցմունքները պնդել է նաև 2015 թվականի օգոստոսի 5-ին, 2015 թվականի օգոստոսի 27-ին և 2015 թվականի օգոստոսի 31-ին՝ Ա.Սկրտչյանի հետ **առերես հարցաքննության ժամանակ, և վերահաստատել դատաքննության սկզբում** (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

բ) Վկա Ա.Միրզոյանի ցուցմունքները չեն համադրել գործում առկա այլ ապացույցների հետ, որոնք կարող էին հաստատել կամ հերքել նրա կողմից հայտնած որոշ տեղեկություններ:

Այսպես՝ վկա Ս.Սիմոնյանը նախաքննության ընթացքում հայտնել է, որ դատապարտյալների շրջանում տարածված խոսակցություններից տեղեկացել է, որ Ա.Գոհարյանը դատապարտյալ Ա.Մկրտչյանի սենյակից **գողացել է սուրճ, թեյ, ծխախոտ և այլ իրեր, ինչի մասին վերջինիս հայտնի է դարձել:** Քանի որ դատապարտյալների շրջանում **«պատժելու»** իրավունք ունեցել է միայն դրությունը հսկողը, **ով տվյալ դեպքում հանդիսացել է Ա.Մկրտչյանը, «կոլ» կոչվող փայտով ծեծել է Ա.Գոհարյանին, որի ընթացքում էլ հարվածել է նաև գլխին ու պատճառել վնասվածք,** ինչից էլ տուժողը մահացել է: Դեպքի հետ կապված **Ա.Մկրտչյանը դատապարտյալներին ասել է, որ ոստիկանության աշխատակիցներին ավելորդ ոչ մի բան չասեն,** պատասխանեն միայն, թե իբրև նա մահացել է խոցը պայթելուց, հետո վայր է ընկել բաղնիքի և զուգարանի միջնամասում՝ գլուխը պատին հարվածելու արդյունքում (տե՛ս սույն որոշման 6.1-րդ կետը):

Վկա Ա.Խաչատրյանը նախաքննության ժամանակ ցուցմունք է տվել այն մասին, որ դատապարտյալների շրջանում տարածված խոսակցություններից տեղեկացել է, որ Ա.Գոհարյանը **մահացել է դատապարտյալներից մեկի կողմից նրան ծեծի ենթարկելու արդյունքում:** Տեղյակ չէ, թե կոնկրետ ով է ծեծել, **սակայն քրեակատարողական հիմնարկի տարածքում նման իրավունք ունեցել է միայն, այսպես կոչված, «զոն նայող» համարվող դատապարտյալը, ով տվյալ ժամանակահատվածում եղել է Ա.Մկրտչյանը** (տե՛ս սույն որոշման 6.2-րդ կետը):

Լրացուցիչ դատաբժշկական փորձաքննության թիվ 180/լ եզրակացությամբ հաստատվել է, որ Ա.Գոհարյանի դիակի դատաբժշկական փորձաքննությամբ հայտնաբերված՝ գանգուղեղային բաց, բութ վնասվածքը (գլխի աջ հետին գագաթային շրջանի սալջարդ վերքը, գլխի մաշկի տակ և գլխուղեղում արյունազեղումների առաջացումով և գլխուղեղի կողմնային փորոքներ հեղուկ արյան թափանցումով), որը տվյալ դեպքում բերել է մահվան, **պատճառվել է սահմանափակ մակերես ունեցող բութ առարկայով, ինչպիսին կարող էր լինել նաև նկարագրված փայտը** (տե՛ս սույն որոշման 6.3-րդ կետը):

գ) Ստորադաս դատարանները որևէ կերպ չեն փորձել պարզել նախաքննության ընթացքում իրենց ցուցմունքները պնդած վկաների կողմից հետագայում դրանք փոխելու հնարավոր պատճառները և նպաստող գործոնները, քանի որ վերջիններս, լինելով դատապարտյալ և պատիժը կրելով նույն քրեակատարողական հիմնարկում, ինչ ամբաստանյալ Ա.Մկրտչյանը, հնարավոր է, որ եղել են կաշկանդված և գործել են ճնշման ազդեցության ներքո: Հետևաբար վկաների նախաքննական և դատաքննական ցուցմունք-

ներն արժանահավատության տեսանկյունից գնահատելու համար վերոնշյալ հանգամանքների բացահայտումն ունի կարևոր նշանակություն:

դ) Առաջին ատյանի դատարանը, քվարկելով գործում առկա որոշ ապացույցներ, մասնավորապես՝ դեպքի վայրի զննության, առգրավում կատարելու, հագուստները ներկայացնելու, վերցնելու և զննելու մասին արձանագրությունները, դիակի դատաբժշկական թիվ 46, լրացուցիչ դատաբժշկական թիվ 123/լ և 180/լ փորձաքննությունների եզրակացությունները, դատակենսաբանական փորձաքննությունների թիվ 228, 229 և 268 եզրակացությունները, վկաներ, դատապարտյալներ Սերյոժա Սիմոնյանի, Ավետիք Խաչատրյանի, Արթուր Թադևոսյանի, Հովհաննես Վարդանյանի, Ռաֆայել Մասումյանի, Սերվենտ Խաչատրյանի, Արմեն Գևորգյանի, Վալերի Թումանյանի, ՀՀ ԱՆ «Կոշ» ՔԿՀ-ի աշխատակիցներ Հարություն Խաչատրյանի, Սպարտակ Ավետիսյանի, Ծերուն Բունիաթյանի, Վռամ Գևորգյանի, Աշտարակի ԲԿ-ի շտապօգնության բժիշկ Նաիրի Մանվելյանի, քննիչ Արթուր Դավթյանի, ՀՀ ԱՆ ԴԲԳԳԿ-ի փորձագետ Սերգեյ Աբգարյանի ցուցմունքները, արձանագրել է, որ տուժողը գլխի վնասվածքը ստացել է *այլ հանգամանքներում,* սակայն այդ ապացույցները բովանդակային վերլուծության չի ենթարկել և որևէ կերպ չի պատճառաբանել, թե կոնկրետ որ ապացույցով գործի համար նշանակություն ունեցող հատկապես ինչ հանգամանքն է հաստատվել, որն էլ վկայում է, որ տուժողի մահը վրա է հասել այլ պայմաններում: Համապատասխան պատճառաբանությունները բացակայում են նաև Վերաքննիչ դատարանի դատական ակտում (տե՛ս սույն որոշման 7-8-րդ կետերը): Այս առումով Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ստորադաս դատարանների հետևությունները անորոշ են և չպատճառաբանված:

Ինչ վերաբերում է Առաջին ատյանի դատարանի այն փաստարկին, որ տուժողը գլխի վնասվածքը ստացել է ոչ թե մայիսի 19-ին՝ ժամը 23:00-23:30-ն ընկած ժամանակահատվածում, այլ 2014 թվականի մայիսի լույս 20-ի գիշերը՝ մահանալուց, այսինքն՝ ժամը 03:40-ից երկու ժամ առաջ, ապա հարկ է նկատել, որ դատաբժշկական եզրակացությունում նշված՝ վնասվածքը ստանալու ժամանակահատվածը վերոգրյալ ապացույցների համակցության մեջ դեռևս հիմք չէ պնդելու, որ մահը վրա է հասել այլ պայմաններում ու հանգամանքներում:

16. Վճռաբեկ դատարանը սույն որոշման 14-15-րդ կետերում շարադրված փաստական տվյալների վերլուծության արդյունքում արձանագրում է, որ ստորադաս դատարանները պատշաճ ստուգման և գնահատման չեն ենթարկել սույն գործի փաստական հանգամանքները:

Հետևաբար ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով նախատեսված հանցանքը կատարելու մեջ Ա.Սկրտչյանի մասնակցությունն ապացուցված չլինելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված և պատճառաբանված չեն:

17. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները խախտել են ապացույցները գնահատելու վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ, 126-րդ, 127-րդ հոդվածների պահանջները, կայացրել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտեր, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, քրեադատավարական օրենքի էական խախտում է և հիմք է դատական ակտերը բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանը, վերացնելով արձանագրված խախտումները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, պետք է հանգի համապատասխան հետևության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361^1 -րդ, 403-406-րդ, 419-րդ, 420-րդ, 422-423-րդ, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Անդրանիկ Հենրիկի Սկրտչյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 16-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 7-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Անդրանիկ Հենրիկի Սկրտչյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել չհեռանալու մասին ստորագրությունը:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

5.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0180/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ա.ՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝
պաշտպան Վ.ՋՈՒՌՆԱՉՅԱՆԻ

2017 թվականի օգոստոսի 30-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 23-ի որոշման դեմ ամբաստանյալ Անդրանիկ Գրիգորյանի պաշտպան Վարդան Ջուռնաչյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթի քննչական բաժնում 2014 թվականի հունվարի 23-ին ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 11104314 քրեական գործը:

2014 թվականի սեպտեմբերի 11-ին Անդրանիկ Գրիգորյանը որպես մեղադրյալ է ներգրավվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով և 34-268-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հունիսի 30-ի որոշմամբ թիվ 11104314 քրեական գործի նյութերից Անդրանիկ Գրիգորյանի վերաբերյալ մասն անջատվել է առանձին վարույթում՝ ստանալով թիվ 69106115 համարը:

2015 թվականի հունիսի 15-ին Անդրանիկ Գրիգորյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 34-268-րդ հոդվածի 1-ին մասով և 266-րդ հոդվածի 1-ին մասով (երկու դրվագ):

2015 թվականի հունիսի 26-ին Անդրանիկ Գրիգորյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 34-268-րդ հոդվածի 1-ին մասով, 268-րդ հոդվածի 1-ին մասով և 266-րդ հոդվածի 1-ին մասով (երկու դրվագ):

2015 թվականի հուլիսի 8-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մայիսի 17-ի դատավճռով ճանաչվել և հռչակվել է Անդրանիկ Գրիգորյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հանցանքի կատարման մեջ:

Նույն դատավճռով Անդրանիկ Գրիգորյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 1-ին մասով, 266-րդ հոդվածի 1-ին մասով (երկու դրվագ) և 268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքների կատարման մեջ՝ համապատասխանաբար նշանակված 9 ամսով, 5 տարով, 5 տարով և 1 տարով ազատազրկման ժամկետների մասնակի (6 ամիս, 5 տարի, 1 տարի և 6 ամիս) գումարման արդյունքում պատիժ նշանակելով ազատազրկում՝ 7 տարի ժամկետով:

Նույն դատավճռով նշանակված պատժին մասնակի գումարվել է թիվ ԵԿԴ/0206/01/10 քրեական գործով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2010 թվականի նոյեմբերի 4-ի դատավճռով նշանակված պատժի չկրած մասից ազատազրկում 1 տարի ժամկետով՝ վերջնական պատիժ նշանակելով ազատազրկում 8 տարի ժամկետով՝ սկիզբը հաշվելով 2016 թվականի մայիսի 17-ից:

3. Անդրանիկ Գրիգորյանի պաշտպան Վ.Զուռնաչյանի՝ վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այ-

սուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի նոյեմբերի 23-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի 2016 թվականի նոյեմբերի 23-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Անդրանիկ Գրիգորյանի պաշտպան Վ.Զուռնաչյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 14-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

5. Անդրանիկ Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված այն հանցանքի կատարման համար, որ նա, «*պատիժ կրելով ՀՀ ՄՆ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում, 2014թ. հունվարի 23-ին համաձայնության է եկել ՀՀ ՄՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալ Աշոտ Հովհաննիսյանի հետ՝ իր կողմից իրացնելու նպատակով ապօրինի ձեռք բերված և Արարատի մարզի Այնթափ գյուղում՝ հանցակիցների մոտ թաքցված խոշոր չափերով «փուպրեմորֆին» տեսակի թմրամիջոցը համատեղ ապօրինի իրացնելու շուրջ:*

Հիշյալ թմրամիջոցը Մարատ Հարությունյանին, ՀՀ ՄՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալ Հովհաննես Կարապետյանի ընկերոջը՝ Սուրեն Ազիզյանին և նույն քրեակատարողական հիմնարկի դատապարտյալ Արթուր Բարոյանին ապօրինի իրացնելու վերաբերյալ նույն օրն Աշոտ Հովհաննիսյանը հեռախոսային խոսակցությունների միջոցով առանձին-առանձին պայմանավորվածություն է ձեռք բերել վերջիններիս հետ:

Պայմանավորվածության համաձայն, թմրամիջոցների արժեքը՝ 50.000-ական ՀՀ դրամը ստանալու նպատակով Անդրանիկ Գրիգորյանի առաջարկով Աշոտ Հովհաննիսյանը Մարատ Հարությունյանին, Սուրեն Ազիզյանին և Արթուր Բարոյանին օժանդակող Հարություն Գարեգինյանին ուղղորդել է Երևանի «Գումի շուկա» կոչվող վայր, որտեղ վերջիններս, հանդիպելով միմյանց, ընդհանուր՝ 150.000 ՀՀ դրամը Սուրեն Ազիզյանի միջոցով փոխանցել են Անդրանիկ Գրիգորյանի մատնանշած անձին:

Այնուհետև, Անդրանիկ Գրիգորյանի ցուցումով և Աշոտ Հովհաննիսյանի անմիջական ուղղորդմամբ Սուրեն Ազիզյանը և Հարություն Գարեգինյանը վերջինիս վարած ավտոմեքենայով մեկնել են Արարատի մարզի Այնթափ գյուղ, որտեղ Սուրեն Ազիզյանն Աշոտ Հովհաննիսյանի մատնանշած վայ-

րից՝ Անդրանիկ Գրիգորյանի հանցակիցների կողմից պատրաստված թաքստոցից ստացել է խոշոր չափերով՝ մոտ 0,021 գրամ «քուպրենորֆին» տեսակի թմրամիջոց պարունակող երեք դեղահատ, որից մոտ 0,0078 գրամ թմրամիջոց պարունակող մեկ դեղահատը պահել է իր մոտ, 0,0078 գրամ թմրամիջոց պարունակող դեղահատը հանձնել է Հարությունին, իսկ մոտ 0,0054 գրամ թմրամիջոց պարունակող դեղահատը վերջինիս ավտոմեքենայով տեղափոխել են Նորագավիթի կամուրջի մոտ և հանձնել Մարատ Հարությունյանին»:

Բացի այդ, Անդրանիկ Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված այն հանցանքի կատարման համար, որ նա *«2014թ. փետրվարի 12-ին հեռախոսային խոսակցությունների միջոցով պայմանավորվածություն է ձեռք բերել ՀՀ ԱՆ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալ «Նոս» մականվամբ Անդրանիկ Մելքոնյանի և վերջինիս միջոցով Ռաֆիկ Զաքեյանի հետ՝ առանց իրացնելու նպատակի զգալի չափերով թմրամիջոց ապօրինի ձեռք բերելուց իրեն օժանդակելու վերաբերյալ:*

Հանցավոր մտադրությունն իրականացնելու նպատակով Անդրանիկ Գրիգորյանի ցուցումով և Անդրանիկ Մելքոնյանի անմիջական ուղղորդմամբ Ռաֆիկ Զաքեյանը նույն օրը մեկնել է Անդրանիկ Գրիգորյանի մատնանշած վայր՝ Արարատի մարզի Այնթափ համայնքում գտնվող «Պագո» խաղատան մոտ, որտեղ հանդիպել է Անդրանիկ Գրիգորյանի կողմից ուղարկված, թմրամիջոցի ապօրինի ձեռք բերելիս նրան օժանդակող Ծերուն Ղազարյանին, ումից ստացել է Անդրանիկ Գրիգորյանի համար նախատեսված զգալի չափերով՝ 0.0119 գրամ «քուպրենորֆին» և 0.789 գրամ «մեթադոն» տեսակների թմրամիջոցները՝ վերջինիս փոխանցելու համար Շիրակի մարզի Հոռոմ գյուղ տեղափոխելու և քննությամբ չպարզված անձին հանձնելու նպատակով, սակայն ինչպես Անդրանիկ Գրիգորյանը, Ծերուն Ղազարյանը, այնպես էլ Ռաֆիկ Զաքեյանը, Անդրանիկ Մելքոնյանը հանցավոր արարքներն ավարտին չեն հասցրել իրենց կամքից անկախ հանգամանքներով, քանի որ թմրամիջոցը ստանալուց հետո Ռաֆիկ Զաքեյանը բերման է ենթարկվել ոստիկանություն, որտեղ նրա ավտոմեքենայի զննությամբ հայտնաբերվել և առգրավվել են հիշյալ թմրամիջոցները»:

Բացի այդ, Անդրանիկ Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված այն հանցանքի կատարման համար, որ նա *«2014թ. փետրվարի 21-ին հեռախոսային խոսակցությունների միջոցով պայմանավորվածություն է ձեռք բերել ՀՀ ԱՆ «Հրազդան» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալ Արմեն Շամիրյանի հետ՝ նրան զգալի չափերով թմրամիջոց ապօրինի իրացնելու վերաբերյալ:*

Հանցավոր մտադրությունն իրականացնելու նպատակով Անդրանիկ Գրիգորյանի ցուցումով, նրա կողմից թմրամիջոցի ապօրինի իրացմանն օժանդակող, վերջինիս որդին՝ Գևորգ Գրիգորյանն Արմեն Շամիրյանի համար նախատեսված զգալի չափերով՝ 0.008 գրամ «քուպրենորֆին» տեսակի թմրամիջոց պարունակող դեղահատը «Դավիդով» տեսակի ծխախոտի տուփով տեղադրել է Արարատի մարզի Այնթափ համայնքում գտնվող այգում պատրաստված թաքստոցում, որից հետո Անդրանիկ Գրիգորյանի ուղղորդմամբ Արմեն Շամիրյանի որդին՝ Ջիվան Շամիրյանը նշված վայրից վերցնելով ապօրինի ձեռք է բերել նշված թմրամիջոցը՝ միաժամանակ նույն վայրում դնելով թմրամիջոցի արժեքը կազմող 45.000 ՀՀ դրամը: Նույն օրը թմրամիջոց ապօրինի պահելու կասկածանքով Ջիվան Շամիրյանը բերման է ենթարկվել ոստիկանություն, որտեղ նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել և առգրավվել է հիշյալ դեղահատը»:

Բացի այդ, Անդրանիկ Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված այն հանցանքի կատարման համար, որ նա *«2014թ. մարտի 05-ին հեռախոսային խոսակցությունների միջոցով պայմանավորվածություն է ձեռք բերել ՀՀ ԱՆ «Կոշ» քրեակատարողական հիմնարկի՝ քննությամբ դեռևս չպարզված դատապարտյալի հետ՝ նրան զգալի չափերով թմրամիջոց ապօրինի իրացնելու վերաբերյալ:*

Հանցավոր մտադրությունն իրականացնելու նպատակով Անդրանիկ Գրիգորյանի ցուցումով, նրա կողմից թմրամիջոցի ապօրինի իրացմանն օժանդակող Ծերուն Ղազարյանը ՀՀ ԱՆ «Կոշ» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալի համար նախատեսված զգալի չափերով՝ 0.016 գրամ «քուպրենորֆին» տեսակի թմրամիջոց պարունակող երկու դեղահատերը «Դավիդով» տեսակի ծխախոտի տուփով տեղադրել է Արարատի մարզի Այնթափ համայնքում գտնվող ճամփեզրի պատի տակ պատրաստված թաքստոցում, որից հետո Անդրանիկ Գրիգորյանի ուղղորդմամբ դատապարտյալի կողմից թմրամիջոցի ապօրինի ձեռք բերմանն օժանդակող Ջիվան Սարգսյանը, նույն թաքստոցից վերցնելով, ապօրինի ձեռք է բերել նշված թմրամիջոցը: Նույն օրը թմրամիջոց ապօրինի պահելու կասկածանքով Ջիվան Սարգսյանը բերման է ենթարկվել ոստիկանություն, որտեղ նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել և առգրավվել են հիշյալ դեղահատերը»:

Բացի այդ, Անդրանիկ Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված այն հանցանքի կատարման համար, որ նա *«քննությամբ չպարզված հանգամանքներում առանց իրացնելու նպատակի ապօրինի ձեռք է բերել և իր՝ Արարատի մարզի Այնթափ գյուղի 1-ին փողոցի 3-րդ տանն ապօրինի պահել է զգալի չափերով՝ 0.05 գրամ «տրամադոլ» տեսակի հոգեմետ նյութ պարունակող*

դեղահատ, որը 2014թ. հունիսի 04-ին հայտնաբերվել և առգրավվել է ոստիկանության աշխատակիցների կողմից՝ նրա տանը կատարված խուզարկության ժամանակ» (տե՛ս քրեական գործ, հատոր 8, թերթեր 224-230):

6. Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ *«[Ի]րավաևորմերի և գործի փաստական հանգամանքների վերլուծության արդյունքում դատարանը գտնում է (...), որ ամբաստանյալ Ա.Գրիգորյանի կողմից, նրա մեղավորությամբ, առանց իրացնելու նպատակի զգալի չափերով թմրամիջոց ապօրինի ձեռք բերելու փորձ կատարելը, այսինքն՝ որպես երկրորդ դրվագ ներկայացված արարքն ապացուցված է, նրա արարքը ճիշտ է որակված և համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին:*

Ապացուցված է նաև ամբաստանյալ Ա.Գրիգորյանի կողմից, նրա մեղավորությամբ, նրան վերագրվող, որպես երրորդ և չորրորդ դրվագներ ներկայացված երկու դրվագներից յուրաքանչյուրով, զգալի չափերով թմրամիջոց ապօրինի իրացնելը, նրա այդ արարքներից յուրաքանչյուրը նույնպես ճիշտ է որակված և համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին:

Ապացուցված է նաև ամբաստանյալ Ա.Գրիգորյանի կողմից, նրա մեղավորությամբ, առանց իրացնելու նպատակի զգալի չափերով հոգեմետ նյութ ապօրինի ձեռք բերելը և պահելը, նրա այդ արարքը նույնպես ճիշտ է որակված և համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին:

(...)

ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 1-ին մասով և 268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված յուրաքանչյուր հանցագործության կատարման համար ամբաստանյալ Անդրանիկ Գրիգորյանը ենթակա է պատժի ազատազրկման ձևով (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 11, թերթեր 96, 100):

7. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ *«(…) [Ա]նդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 34-268 հոդվածի 1-ին մասով, երկու դրվագներով՝ 266 հոդվածի 1-ին մասով, 268 հոդվածի 1-ին մասով ամբաստանյալ Ա.Գրիգորյանի անմեղության վերաբերյալ պաշտպանի փաստարկներին, քրեական գործի ուսումնասիրությամբ եզրահանգում է, որ դատարանը, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում ստուգման ենթարկելով քրեական գործի հիմքում դրված ապացույցների ձեռքբերման աղբյուրները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից և դրանք դնելով ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի հիմքում, ղեկավարվելով օրենքով, ներքին համոզմամբ հանգել է ճիշտ և իրավաչափ հետևության՝ արդյունքում կայացնելով օրինական, հիմնավորված և պատճառաբանված դատական ակտ:*

Ինչ վերաբերում է պաշտպանի վերաքննիչ բողոքում նշված այն հանգամանքին, որ Ա.Գրիգորյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268 հոդվածի 1-ին մասով (հինգերորդ դրվագ) պատասխանատվության ենթարկելու ժամկետը անցել է, քանի որ արարքը կատարվել է 2009 թվականից առաջ, իսկ ամբաստանյալը նույն թվականին դատապարտվել է և մինչև 2014 թվականը (թմրամիջոցները ամբաստանյալի տնից հայտնաբերվելը) գտնվել է անազատության մեջ, ապա Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նկատել, որ այդ պնդումն անհիմն է, քանի որ առանց իրացնելու նպատակի, զգալի չափերով թմրամիջոցներ ապօրինի պահելը դասվում է տևող հանցագործությունների շարքին, և այս դեպքում այն ավարտված է համարվել 2014 թվականի հունիսի 4-ին՝ թմրամիջոցները խուզարկությամբ ամբաստանյալի տնից հայտնաբերվելու պահից» (տե՛ս քրեական գործ, հատոր 13, թերթ 51):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական և հիմնավոր չէ, դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա, որոնց պարագայում կայացված դատական ակտը ենթակա է բեկանման:

8.1 Մասնավորապես, բողոքաբերը նշել է, որ գործով ձեռք բերված ապացույցները պատշաճ գնահատման չեն ենթարկվել ստորադաս դատարանների կողմից, դրանցով չի ապացուցվել Անդրանիկ Գրիգորյանի մեղավորությունն իրեն առաջադրված մեղադրանքում, ուստի նրա նկատմամբ պետք է կայացվեր արդարացման դատավճիռ՝ հանցակազմի բացակայության հիմքով:

8.2 Բացի այդ, բողոքի հեղինակը, վկայակոչելով Է.Ներսիսյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը, նշել է, որ ստորադաս դատարանները պատժի սկիզբը պետք է հաշվարկեին ոչ թե սույն գործով դատավճռի կայացման օրվանից, այլ թիվ ԵԿԴ/0206/01/10 քրեական գործով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2010 թվականի նոյեմբերի 4-ի դատավճռով նշանակված պատժի կրման օրվանից՝ 2010 թվականի նոյեմբերի 4-ից:

8.3 Բողոք բերած անձը, վկայակոչելով ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, նշել է նաև, որ Անդրանիկ Գրիգորյանին մեղսագրվող ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 1-ին մասով և 268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքները, լինելով ոչ մեծ ծանրության, ավարտվել են համապատասխանաբար 2014 թվականի փետրվարի 12-ին և հունիսի 4-ին, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանն Անդրանիկ Գրիգորյանին չի ազատել քրեական պատասխանատվությունից՝ վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով:

9. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2016 թվականի նոյեմբերի 23-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ կամ գործն ուղարկել Վերաքննիչ դատարան՝ այլ կազմով նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է՝ հիմնավորվա՞ծ են արդյոք ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 1-ին մասով, 266-րդ հոդվածի 1-ին մասով (երկու դրվագ) և 268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքները կատարելու մեջ ամբաստանյալ Ա.Գրիգորյանի մեղավորության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

11. Բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում ստուգման ենթարկելով քրեական գործի փաստական հանգամանքների բացահայտման ճշտությունը, գործը քննելիս և լուծելիս քրեադատավարական օրենքի պահանջների պահպանումը, ինչպես նաև ուսումնասիրության և գնահատման ենթարկելով քրեական գործում առկա նյութերը՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն հետևության, որ ստորադաս դատարաններն ամբաստանյալ Ա.Գրիգորյանի մեղավորության վերաբերյալ հանգել են ճիշտ հետևության (տե՛ս սույն որոշման 6-րդ և 7-րդ կետերը):

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Գրիգորյանի մեղքը ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 1-ին մասով, 266-րդ հոդվածի 1-ին մասով (երկու դրվագ) և 268-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված արարքներում հաստատված է, իսկ բողոքաբերի պատճառաբանությունները հերքված են Ռաֆիկ Զաքեյանի, Ջիվան Շամիրյանի, Արթուր Ֆարյանի, Ջիվան Սարգսյանի ցուցմունքներով, վկաներ Սեյրան Ասրյանի, Հոռոմսիմ Գրիգորյանի ցուցմունքներով, նյութագիտական փորձաքննության թիվ 14-0404, դատաքիմիական փորձաքննության թիվ 14-0563, նյութագիտական փորձաքննության թիվ 14-0660, դատաքիմիական և դատաբուսաբանական փորձաքննության թիվ 180 Ք-14 եզրակացություններով, «Օփել Աստրա» մակնիշի L7396 համարանիշի ավտոմեքենան զննության ենթարկելու մասին 2014 թվականի փետրվարի 12-ի արձանագրությամբ, Ջիվան Շամիրյանին անձնական խուզարկության ենթարկելու մասին 2014 թվականի փետրվարի 21-ի արձանագրությամբ, Ջիվան Սարգսյանին անձնական խուզարկության ենթարկելու մասին 2014 թվականի մարտի 5-ի արձանագրությամբ, Անդրանիկ Գրիգորյանի՝ ՀՀ Արարատի մարզի Այնթափ համայնքի 1-ին փողոցի թիվ 3 տանը խուզարկություն կատարելու մասին 2014 թվականի հունիսի 4-ի արձանագրությամբ, հեռախոսահամարների մուտքային և ելքային հեռախոսազանգերի վերծանումները պարունակող լազերային սկավառակներով, դրանցից արտատպված փաստաթղթերով և դրանց զննություն կատարելու մասին

2016 թվականի հունիսի 16-ի և հունիսի 23-ի արձանագրություններով, որպես այլ փաստաթուղթ՝ ապացույց ճանաչված հեռախոսային խոսակցությունների վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում Անդրանիկ Գրիգորյանի հեռախոսային խոսակցությունների ձայնագրությունները պարունակող լազերային սկավառակներով և հեռախոսային խոսակցությունների բովանդակության տպագիր ամրագրմամբ ամփոփագրերի, Ջիվան Սարգսյանի մասնակցությամբ քննչական փորձարարություն կատարելու մասին 2014 թվականի մայիսի 20-ի արձանագրությամբ, իրեղեն ապացույց ճանաչված՝ Անդրանիկ Գրիգորյանի տան խուզարկությամբ հայտնաբերված, զգալի չափերով՝ 0.05 գրամ «տրամադոլ» տեսակի հոգեմետ նյութ պարունակող դեղահատով, Ջիվան Սարգսյանի անձնական խուզարկությամբ հայտնաբերված զգալի չափերով՝ 0.016 գրամ «բուպրենորֆին» տեսակի թմրամիջոց պարունակող երկու դեղահատերով:

Վերոգրյալից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 1-ին մասով, 266-րդ հոդվածի 1-ին մասով (երկու դրվագ) և 268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքները կատարելու մեջ ամբաստանյալ Ա.Գրիգորյանի մեղավորության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված են:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հաջորդ իրավական հարցը հետևյալն է. ամբաստանյալ Ա.Գրիգորյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 1-ին մասով և 268-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը ենթակա՞ է արդյոք դադարեցման քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Առանց իրացնելու նպատակի զգալի չափերով թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր ապօրինի պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը կամ առաքելը՝

պատժվում է կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Միջին ծանրության հանցագործություններ են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում հինգ տարի ժամկետով ազատազրկումը (…)»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն՝

«1. Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են հետևյալ ժամկետները.

1) երկու տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

(...)

2. Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը: (...)

3. Վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է, եթե մինչև նշված ժամկետներն անցնելն անձը կատարում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր նոր հանցանք: Այս դեպքում վաղեմության ժամկետի հաշվարկն սկսվում է նոր հանցանքի ավարտված համարելու պահից»:

Վերոնշյալ քրեաիրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասում նկարագրված արարքը դիտավորյալ հանցագործություն է, իսկ հոդվածի սանկցիայով նախատեսված ազատազրկման ձևով պատժի ժամկետը չի գերազանցում 2 տարին, ուստի քննարկվող հանցավոր արարքը դասվում է ոչ մեծ ծանրության հանցագործությունների թվին: Հետևաբար այն կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահն անցել է երկու տարի:

ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված նորմի վերլուծությունից հետևում է, որ դրանով նախատեսված հանցակազմը ձևական է. այդ հանցագործությունը համարվում է ավարտված հոդվածի դիսպոզիցիայում նշված գործողությունների կատարման պահից: Մասնավորապես, այն ավարտված է համարվում առանց իրացնելու նպատակի զգալի չափերով թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր ապօրինի պատրաստելու, վերամշակելու, ձեռք բերելու, պահելու, փոխադրելու կամ առաքելու պահից:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ *«Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *«Սույն հոդվածի առաջին մասի 6-րդ [կետում նշված հիմքով] գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Այս դեպքում գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով»:*

Մեջբերված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը վաղեմության ժամկետն անցնելը դիտում է որպես քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանք՝ սահմանելով, որ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները: Միևնույն ժամանակ քրեադատավա-

րական օրենքը վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու պարտադիր նախապայման է դիտում մեղադրյալի համաձայնությունը, որի բացակայությունը ենթադրում է վարույթի շարունակում ընդհանուր կարգով: Այսինքն՝ այն դեպքում, երբ անձը համաձայն չէ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու, իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և գործի վարույթը կարճելու հետ, նրան պետք է հնարավորություն ընձեռվի դատական քննության միջոցով հասնելու իր անմեղության ապացուցման:

Այն դեպքում, երբ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը լրանում է գործի դատական քննության փուլում, այդ հիմքով նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու ընթացակարգի իրականացման պարտականությունը կրում է դատարանը: Ընդ որում, դատական քննությունը ենթադրում է վարույթն ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ ու վճռաբեկ դատարաններում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 6-րդ մասի մանրամասն վերլուծությունը *mutatis mutandis* տե՛ս *Անահիտ Սաղաթելյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ-5/0022/01/10 որոշումը, *Սիրած Ղամբարյանի և այլոց* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԴ/0055/01/11 որոշումը, *Հրանտ Մազմանյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի մարտի 27-ի թիվ ԵԿԴ/0121/11/14 որոշումը):

Մասնավորապես, դատարանը պետք է պարզի, թե արդյոք ամբաստանյալը համաձայն է, որ նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվի քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով: Անձի համաձայնությունն ստանալու դեպքում դատարանը պարտավոր է դադարեցնել նրա նկատմամբ քրեական հետապնդումը, իսկ համաձայնության բացակայության դեպքում պետք է դատական քննությունը շարունակի ընդհանուր կարգով, սակայն դատավճիռ կայացնելիս՝ դադարեցնի անձի նկատմամբ քրեական հետապնդումը:

Ընդ որում, երբ անձն արդեն հնարավորություն է ունեցել առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում (վերջին դեպքում՝ վճռաբեկ բողոք բերելու միջոցով) վիճարկելու իրեն առաջադրված մեղադրանքը, ապա քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելիս նրա դիրքորոշումը լրացուցիչ ճշտելու անհրաժեշտությունը բացակայում է (տե՛ս *Սիրած Ղամբարյանի և այլոց* գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԴ/0055/01/11 որոշման 25-րդ կետը):

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ ամբաստանյալ Ա.Գրիգորյանը մեղավոր է ճանաչվել.

- ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված այն արարքի համար, որ **2014 թվականի փետրվարի 12-ին** հեռախոսային խոսակցությունների միջոցով պայմանավորվածություն է ձեռք բերել ՀՀ ԱՆ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալ «Նոս» մականվամբ Անդրանիկ Մելքոնյանի և վերջինիս միջոցով Ռաֆիկ Զաքեյանի հետ՝ առանց իրացնելու նպատակի զգալի չափերով թմրամիջոց ապօրինի ձեռք բերելուն իրեն օժանդակելու վերաբերյալ, սակայն հանցավոր արարքն ավարտին չի հասցվել իր կամքից անկախ հանգամանքներով, քանի որ թմրամիջոցը ստանալուց հետո Ռաֆիկ Զաքեյանը ըերման է ենթարկվել ոստիկանություն, որտեղ նրա ավտոմեքենայի զննությամբ հայտնաբերվել և առգրավվել են թմրամիջոցները (տե՛ս սույն որոշման 2-րդ, 5-7-րդ կետերը),

- **2014 թվականի փետրվարի 21-ին և նույն թվականի մարտի 5-ին** ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքներ կատարելու համար (տե՛ս սույն որոշման 5-7-րդ կետերը),

- ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված այն արաքը կատարելու համար, որ քննությամբ չպարզված հանգամանքներում առանց իրացնելու նպատակի ապօրինի ձեռք է բերել և իր՝ Արարատի մարզի Այնթափ գյուղի 1-ին փողոցի 3-րդ տանն ապօրինի պահել է զգալի չափերով՝ 0.05 գրամ «տրամադոլ» տեսակի հոգեմետ նյութ պարունակող դեղահատ, որը **2014 թվականի հունիսի 4-ին** հայտնաբերվել և առգրավվել է ոստիկանության աշխատակիցների կողմից՝ նրա տանը կատարված խուզարկության ժամանակ (տե՛ս սույն որոշման 5-7-րդ կետերը):

ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 1-ին մասով և 268-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված հանցագործությունները կատարելու մեջ Ա.Գրիգորյանի մեղքը հաստատող մեղադրական դատավճիռը կայացվել է **2016 թվականի մայիսի 17-ին** (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը), իսկ դրա վերաքննիչ վերանայման շրջանակներում Վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել 2016 թվականի նոյեմբերի 23-ին, որը դեռևս օրինական ուժի մեջ չի մտել (տե՛ս սույն որոշման 3-րդ կետը):

16. Նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով սույն որոշման 13-14-րդ կետերում շարադրված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ա.Գրիգորյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 1-ին մասով և 268-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված արարքներն ավարտվել են համապատասխանաբար 2014 թվականի փետրվարի 12-ին և 2014 թվականի հունիսի 4-ին: Սակայն, եթե ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի համար վաղեմության ժամկետը ենթակա է հաշվարկման 2014 թվականի հունիսի 4-ից, ապա 34-268-րդ հոդվածով նախատեսված հանցանքի համար 2014 թվականի փետրվարի 12-ից հաշվարկվող վաղեմության ժամկետն ընդհատվել է Ա.Գրիգորյանի

կողմից 2014 թվականի փետրվարի 21-ին, մարտի 5-ին և հունիսի 4-ին նոր հանցանքների կատարման հիմքով, որպիսի պայմաններում այն ևս ենթակա է հաշվարկման 2014 թվականի հունիսի 4-ից:

Ընդ որում, ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի կատարման համար վաղեմության ժամկետը 2014 թվականի հունիսի 4-ից հաշվարկելու հանգամանքն արձանագրվել է նաև Վերաքննիչ դատարանի կողմից 2016 թվականի նոյեմբերի 23-ին կայացված որոշմամբ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը): Մինչդեռ Վերաքննիչ դատարանը չի քննարկել վաղեմության ժամկետն անցնելու հիմքով ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով և 34-268-րդ հոդվածի 1-ին մասով Ա.Գրիգորյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Գրիգորյանի նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը 2016 թվականի հունիսի 4-ի դրությամբ օրինական ուժի մեջ մտած չի եղել, հետևաբար նրան ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով և 34-268-րդ հոդվածի 1-ին մասով քրեական պատասխանատվության ենթարկելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1ին մասի 1-ին կետով սահմանված վաղեմության ժամկետն անցել է:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Ա.Գրիգորյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 1-ին մասով և 268-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

17. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով և 34-268-րդ հոդվածի 1-ին մասով քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու պարագայում Ա.Գրիգորյանի նկատմամբ քրեական հետապնդումը չդադարեցնելով՝ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջները՝ թույլ տալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածով 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված դատական սխալ: Վերջինս հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար:

18. Անդրադառնալով բողոքաբերի՝ սույն որոշման 8.2-րդ կետում նշված պնդմանը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վճռաբեկ դատարանի՝ Է.Ներսիսյանի գործով կայացված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները վերաբերում են ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված՝ հանցագործությունների համակցության դեպքում պատժի սկիզբը հաշվարկելու կարգին և կիրառելի չեն ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածով դատավճիռների համակցության դեպքում պատժի սկիզբը հաշվարկելու կարգի նկատմամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1] -րդ, 397-րդ, 398-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Անդրանիկ Գևորգի Գրիգորյանին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2րդ կետերով արդարացնելու, ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 1-ին մասով, 268-րդ հոդվածի 1-ին մասով և 266-րդ հոդվածի 1-ին մասով (երկու դրվագ) մեղավոր ճանաչելու վերաբերյալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մայիսի 17-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 23-ի որոշումը բեկանել և փոփոխել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 1-ին մասով և 268-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ:

2. Հանցանքների և դատավճիռների համակցությամբ Անդրանիկ Գևորգի Գրիգորյանի նկատմամբ սահմանված 8 (ութ) տարի ժամկետով ազատազրկում պատժից հանել վերոնշյալ յուրաքանչյուր հոդվածով նշանակված և գումարված 6 (վեց) ամիս ժամկետը՝ վերջնական թողնելով կրելու ազատազրկում՝ 7 (յոթ) տարի ժամկետով:

3. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մայիսի 17-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 23-ի որոշումը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

6.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԴ2/0054/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
	Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ պաշտպան	Կ.ՍԱՐԴԱՐՅԱՆԻ

2017 թվականի օգոստոսի 30-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Սմբատ Կորյունի Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 21-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2007 թվականի փետրվարի 7-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Կոտայքի մարզային քննչական վարչության Կոտայքի քննչական բաժանմունքի քննիչ Է.Ղազարյանի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել և վարույթ է ընդունվել թիվ 20101207 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2007 թվականի փետրվարի 9-ի, նույն թվականի մարտի 2-ի և մարտի 5-ի որոշումներով համապատասխանաբար Սեր-

յոժա Գևորգյանը, Գառնիկ Սողոմոնյանը և Վահագն Հակոբյանը ճանաչվել են տուժողներ, իսկ 2007 թվականի փետրվարի 26-ի որոշմամբ Վահան Գևորգյանը՝ տուժող Ս.Գևորգյանի իրավահաջորդ:

2007 թվականի փետրվարի 14-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Կոտայքի քննչական բաժանմունք է ներկայացել Սմբատ Գրիգորյանը, ում նկատմամբ նույն թվականի փետրվարի 15-ին որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

Նախաքննության մարմնի՝ 2007 թվականի փետրվարի 22-ի որոշմամբ կասկածյալ Ս.Գրիգորյանի նկատմամբ ընտրված ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը վերացվել է:

2007 թվականի մարտի 8-ին Ս.Գրիգորյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով, և նույն օրը նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2007 թվականի մարտի 8-ի որոշմամբ Ս.Գրիգորյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2007 թվականի ապրիլի 3-ին Ս.Գրիգորյանին առաջադրված մեղադրանքը լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով և 113-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ 2007 թվականի ապրիլի 7-ի որոշմամբ քրեական գործով վարույթը կասեցվել է քննությունից Ս.Գրիգորյանի թաքնվելու պատճառաբանությամբ:

2014 թվականի սեպտեմբերի 9-ին Ս.Գրիգորյանը հայտնաբերվել է և արգելանքի է վերցվել:

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 12-ի որոշմամբ Ս.Գրիգորյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերահաստատվել է:

2015 թվականի ապրիլի 16-ին Ս.Գրիգորյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով և 113-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով:

2015 թվականի հուլիսի 22-ին Ս.Գրիգորյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, լրացվել, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 10-րդ կետերով:

2015 թվականի օգոստոսի 10-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մայիսի 3-ի դատավճռով Ս.Գրիգորյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել ազատազրկման՝ 11 տարի ժամկետով:

Տուժողի իրավահաջորդ Վ.Գևորգյանի քաղաքացիական հայցը թողնվել է առանց քննության:

3. Ամբաստանյալ Ս.Գրիգորյանի պաշտպան Կ.Սարդարյանի, տուժող Գ.Սողոմոնյանի ներկայացուցիչ Գ.Մելիքյանի և տուժող Վ.Հակոբյանի վերաքննիչ բողոքների հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի նոյեմբերի 21-ին որոշում է կայացրել բողոքները մերժելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մայիսի 3-ի դատավճիռը թեկանելու և փոփոխելու մասին: Սմբատ Գրիգորյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասով և 117-րդ հոդվածով քրեական հետապնդումը դադարեցվել է համապատասխանաբար տուժողներ Գ.Սողոմոնյանի և Վ.Հակոբյանի բողոքների բացակայության պատճառաբանությամբ: Նույն որոշմամբ Սմբատ Գրիգորյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման՝ 9 տարի ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 21-ի որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են բերել ամբաստանյալ Ս.Գրիգորյանի պաշտպան Կ.Սարդարյանը և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 19-ի որոշմամբ պաշտպան Կ.Սարդարյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, իսկ նույն օրվա մեկ այլ որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի՝ վճռաբեկ բողոք բերելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը բավարարվել է, և վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Ամբաստանյալ Ս.Գրիգորյանի պաշտպան Կ.Սարդարյանը ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան՝ խնդրելով մերժել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի վճռաբեկ բողոքը:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Ս.Գրիգորյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 10-րդ կետերով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա *«(…) 2007 թվականի հունվարի 31-ին՝ ժամը 20-ի սահմաններում, Կոտայքի մարզի Բալահովիտ գյուղի նախկին կաթի գործարան տանող ճանապարհին՝ խուլիգանական դրդումներով, փորձել է երկու և ավելի անձանց՝ Սերյոժա Գևորգյանին, Գառնիկ Սողոմոնյանին և Վահագն Հակոբյանին,*

ապօրինաբար, դիտավորությամբ կյանքից զրկել, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով չի կարողացել հանցագործությունն ավարտին հասցնել:

Այսպես.

Սմբատ Գրիգորյանը, 2007 թվականի հունվարի 31-ին՝ ժամը 20-ի սահմաններում, իր «ՎԱԶ 2121» մակնիշի 43VU133 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով երթևեկելիս՝ Կոտայքի մարզի Բալահովիտ գյուղի նախկին կաթի գործարան տանող ճանապարհին նկատել է համագյուղացիներ Սերյոժա Վահանի Գևորգյանին, Գառնիկ Էդիկի Սողոմոնյանին, Վահագն Հակոբի Հակոբյանին: Գառնիկ Սողոմոնյանի կողմից իբր իր ուղղությամբ «չեղ հայացք նետելու» պատճառաբանությամբ մեքենան կանգնեցրել է ճամփեզրին, մոտեցել է վերջինին և, որպես պատրվակ օգտագործելով նշված չնչին առիթը, վիճաբանության է բռնվել Գառնիկ Սողոմոնյանի հետ: Վիճաբանության ընթացքում Սմբատ Գրիգորյանը, չբավարարվելով Գառնիկ Սողոմոնյանի և վեճին միջամտած Սերյոժա Գևորգյանի բազմաթիվ պնդումներին, որ իրեն ոչ ոք չեղ չի նայել ու մթության պայմաններում նա չէր կարող դա նկատել, խուլիգանական դրդումներով, իր վարքով հակադրվելով ինչպես վերը թվարկված անձանց, այնպես էլ ընդհանրապես վարքագծի և մարդկանց միջև փոխհարաբերությունների հաստատեն ընդունված նորմերին, սեփական անձի առավելությունն ընդգծելու մղումից դրդված, շարունակել է պնդել, որ ինքը չի սխալվում ու ծեծկռտուք հրահրելու խուլիգանական մղումներով հրել է Սերյոժա Գևորգյանին: Հրելուց անմիջապես հետո Սերյոժա Գևորգյանը մեկ անգամ ոտքով հարվածել է Սմբատ Գրիգորյանին, ինչից անմիջապես հետո Սմբատ Գրիգորյանը խուլիգանական դրդումներով երկու և ավելի անձանց՝ Սերյոժա Գևորգյանին, Գառնիկ Սողոմոնյանին և Վահագն Հակոբյանին, սպանելու դիտավորությամբ իր մոտ եղած սուր կտրող-ծակող գործիքով ապօրինաբար, Գառնիկ Սողոմոնյանին դիտավորությամբ կյանքից զրկելու նպատակով, մեկ անգամ հարվածել է նրա կյանքի կենսական կարևոր օրգանների շրջանին՝ կրծքավանդակի ձախ կեսի առաջային մակերեսին՝ պատճառելով ծակած-կտրած, չթափանցող, խորանիստ մկանների վնասումով վերքի ձևով առողջության միջին ծանրության վնաս՝ առողջության տևական քայքայումով: Կրծքավանդակի վերքից հոսող արյունը տեսնելով՝ Գառնիկ Սողոմոնյանը բարձրաձայնել է, որ իրեն դանակահարեցին, ինչից հետո Սերյոժա Գևորգյանը մոտեցել է նրան օգնության: Այդ պահին Սմբատ Գրիգորյանն իր միասնական հանցավոր մտադրության իրականացումն ավարտին հասցնելու միտումով թիկունքից մոտեցել է Սերյոժա Գևորգյանին և ապօրինաբար նրան դիտավորությամբ կյանքից զրկելու նպատակով նույն գործիքով հինգ հարված է հասցրել նրա մարմնի կյանքի համար կենսական կարևոր նշանակություն ունեցող տարբեր մասերին՝ պատճառելով աջից և ձախից կրծքավանդակի մեկական թա-

փանցող, ձախից կրծքավանդակի, ձախից զտասրբանային հողի շրջանի մեկական չթափանցող, ձախ ազդրի ստորին երրորդականի դրսային մակերեսի մեկ ծակած-կտրած կյանքին վտանգ սպառնացող ծանր վնասվածքներ: Դրանից հետո Սմբատ Գրիգորյանը, շարունակելով իր հանցավոր մտադրության իրականացումը և ապօրինաբար դիտավորությամբ կյանքից զրկելու նպատակով, նույն գործիքով հարվածել է նաև բաժանելու և միջադեպը կանխելու փորձ կատարող Վահագն Հակոբյանի կյանքի համար կենսական կարևոր նշանակություն ունեցող օրգանների շրջանին՝ կրծքավանդակի ձախ կեսի առաջային մակերեսին՝ նրան պատճառելով ծակած-կտրած, չթափանցող վերքի ձևով առողջության կարճատև քայքայումով բեթև վնաս: Սմբատ Գրիգորյանին չի հաջողվել հանցանքն ավարտին հասցնել իր կամքից անկախ հանգամանքներով, քանի որ Սերյոժա Գևորգյանի, Գառնիկ Սողոմոնյանի և Վահագն Հակոբյանի՝ փոխադարձ իրար օգնելուն ուղղված գործողություններով նրանց հաջողվել է խուսափել մահացու հարվածներից և փախուստի դիմել դեպքի վայրից: Նույն գիշերը Սերյոժա Գևորգյանը տեղափոխվել է «Աբովյան» բժշկական կենտրոն, իսկ հինգ օր անց՝ Երևանի «Էրեբունի» բժշկական կենտրոն, որտեղ նրան ցուցաբերվել է բժշկական օգնություն: Սակայն ստացած ծակած-կտրած վնասվածքներից հետագայում նրա մոտ զարգացած աջակողմյան ենթամաշկային էմֆիզեմայի, ձախակողմյան հեմոթորաքսի, ներքին արյունահոսության, հեմոռագիկ պլևրոպուլմոնալ շոկի, զարգացած կոագուլոպաթիայի, ներանոթային տարածուն մակարդակում, մասսիվ հեմոտրանսֆուզիայի համախտանիշի, թոքի խոշոր անոթների խցանող, օրգանիզացված, խառը կառույցի թրոմբերով էմբոլիայի, թոքային հյուսվածքի դիստելեկտազի, խիստ արտահայտված թարախային բրոնխոպնևմոնիայի, թոքային հյուսվածքի կարնիֆիկացիայի, մեկ բլթի ատելեկտազի, խիստ արտահայտված ֆիբրինոզ-թարախային պլևրիտի հետևանքով առաջացած օրգանիզմի ինքնաթունավորումից 2007 թվականի փետրվարի 18-ին «Էրեբունի» [բժշկական կենտրոնում] Սերյոժա Գևորգյանը մահացել է» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 285-296):

5.1. Դատաբժշկական փորձագետի թիվ 4/Հ եզրակացության համաձայն՝ *«[Սերյոժա Գևորգյանի] ստացած մարմնական վնասվածքները՝ կրծքավանդակի աջ կեսի հետին մակերեսի թվով մեկ, ձախ կեսի հետին մակերեսի թվով երկու ծակած-կտրած, թափանցող, ձախ զտասրբանային հողի շրջանի և ձախ ազդրի միջին երրորդականի դրսային մակերեսի մեկական ծակած-կտրած, ազդրի խորանիստ մկանների վնասումով վերքերի ձևով, հասցված են ծակող-կտրող գործիքով (գործիքներով) (…): Կրծքավանդակի վերքերը պատճառել են առողջության ծանր վնաս՝ որպես կյանքին վտանգ սպառնացող: Ձախ զտասրբանային հողի շրջանի և ձախ ազդրի վերքերը պատճառել են առողջության միջին ծանրության վնաս՝ առողջության տևա-*

կան քայքայումով, նկատի ունենալով վնասվածքների հետ անմիջական կապի մեջ եղած հետևանքների տևողությունը երեք շաբաթից ավելի ժամանակով (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 26-27):

5.2. Դատաբժշկական փորձագետի թիվ 32 եզրակացության համաձայն՝ *«(...) [Վահագն Հակոբյանի] ստացած մարմնական վնասվածքը՝ կրծքավանդակի ձախ կեսի առաջային մակերեսի ծակած-կտրած, չբափանցող վերքի ձևով, հասցված է ծակող-կտրող գործիքով, հնարավոր է քննվողի հայտարարած ժամանակին և հանգամանքներում, ներկա տվյալներով պատճառվել է առողջության թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով, նկատի ունենալով վնասվածքի հետ անմիջական կապի մեջ եղած հետևանքների տևողությունը վեց օրից ոչ պակաս, բայց ոչ ավելի, քան երեք շաբաթից ժամանակով (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 125-126):

5.3. Դատաբժշկական փորձագետի թիվ 31 եզրակացության համաձայն՝ *«(...) [Գառնիկ] Սողոմոնյանի ստացած մարմնական վնասվածքը՝ կրծքավանդակի ձախ կեսի առաջային մակերեսի ծակած-կտրած, խորանիստ մկանների վնասումով վերքի ձևով, հասցված է ծակող-կտրող գործիքով, հնարավոր է քննվողի հայտարարած ժամանակին, որոշմամբ ներկայացված հանգամանքներում, (...) պատճառվել է առողջության միջին ծանրության վնաս՝ առողջության տևական քայքայումով՝ նկատի ունենալով վնասվածքի հետ անմիջական կապի մեջ եղած հետևանքների տևողությունը երեք շաբաթից ավելի ժամանակով (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 136-137):

5.4. Տուժող Ս.Գևորգյանի դիակի դատաբժշկական փորձաքննության թիվ 39 եզրակացության համաձայն՝ *«(...) Ս.Գևորգյանի մահը վրա է հասել օրգանիզմի ընդհանուր ինքնաթունավորումից, որը հետևանք է աջից և ձախից կրծքավանդակի մեկական ծակած-կտրած, թափանցող վնասվածքների, ձախից կրծքավանդակի, ձախից զտասրբանային հողի շրջանի մեկական ծակած-կտրած, չթափանցող վնասվածքների, ձախ ազդրի ստորին երրորդականի դրսային մակերեսի թվով մեկ ծակած-կտրած վնասվածքի հետևանքով զարգացած աջակողմյան ենթամաշկային էմֆիզեմիայի, ձախակողմյան հեմոթորաքսի, ներքին արյունահոսության, հեմոռագիկ, պլևրոպուլմոնալ շոկի (երկրորդային), որի արդյունքում էլ զարգացել է կոագուլոպաթիա, ներանոթային տարածուն մակարդում, մասսիվ հեմոտրանսֆուզիայի համախտանիշ, թոքի խոշոր անոթների խցանող, օրգանիզացված, խառը կառույցի թրոմբերով էմբոլիա, թոքային հյուսվածքի դիզտելեկտազ, խիստ արտահայտված թարախային բրոնխոպնևմոնիա, թոքային հյուսվածքի կարնիֆիկացիա, մեկ բլթի ատելեկտազ, խիստ արտահայտված ֆիբրինոզ-թարախային պլևրիտ (...): Նշված ծակած-կտրած վնասվածքները հասցված են ծակած-կտրած գործիքով, մահվան անմիջական պատճառի*

հետ գտնվում են ուղղակի անմիջական կապի մեջ: Նման վնասվածքները կենդանի անձանց մոտ սովորաբար բերում են առողջության ծանր վնասի: Կրծքավանդակի աջ կեսի հետին մակերեսի ծակած-կտրած, թափանցող վերքից սկիզբ առնող վերքային խողովակն ունի հետևից աջ, համարյա հորիզոնական ուղղություն, ոչ պակաս, քան մոտ 2,4 սմ խորություն, վերքային խողովակի ընթացքով վնասված են մաշկը և ենթամաշկային ճարպաբջջանքը, որոնք նշված շրջանում ունեն 1,6 սմ հաստություն, 10-րդ միջկողային մկանը, որը նշված հատվածում ունի 0,8 սմ հաստություն, վերքային խողովակը թափանցում է պլևրալ խոռոչ: Կրծքավանդակի ձախ կեսի կողմնահետին մակերեսի ծակած-կտրած, թափանցող վերքից սկիզբ առնող վերքային խողովակն ունի հետևից աջ, քիչ ձախից աջ, համարյա հորիզոնական ուղղություն, ոչ պակաս, քան մոտ 2,5 սմ խորություն, վերքային խողովակի ընթացքով վնասված են մաշկը և ենթամաշկային ճարպաբջջանքը, որոնք նշված շրջանում ունեն 1,6 սմ հաստություն, 10-րդ միջկողային մկանը, որը նշված հատվածում ունի 0,9 սմ հաստություն, վերքային խողովակը թափանցում է պլևրալ խոռոչ: Ըստ առկա բժշկական փաստաթղթերի՝ Ս.Գևորգյանի մահը վրա է հասել 2007 թվականի փետրվարի 18-ին՝ ժամը 10:30-ին: (...) Ս.Գևորգյանի դիակի դատաբժշկական փորձաքննության ընթացքում հայտնաբերվել է հետվիրահատական վիճակ թորոկոտոմիայից, լապարոտոմիայից, պլևրալ խոռոչների դրենավորումից հետո» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 139-145):

5.5. Քրեական հետապնդում չհրականացնելու մասին նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հուլիսի 25-ի որոշման համաձայն՝ *«(...) Թիվ 20101207 քրեական գործով Էդգար Սամվելի Ղազարյանի (...) նկատմամբ պաշտոնեական կեղծիք և անփութություն կատարելու համար քրեական հետապնդում չհրականացնել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով և 315-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարքներ կատարելու համար նախատեսված քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:*

Սերյոժա Գևորգյանին բժշկական օգնություն ցուցաբերած բուժաշխատողների նկատմամբ քրեական հետապնդում չհրականացնել՝ նրանց կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի բացակայության հիմքով (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 268-275):

5.6. Դատաբժշկական լրացուցիչ փորձաքննության թիվ 121 եզրակացության համաձայն՝ *«(...) Սերյոժա Գևորգյանի դիակի, Գառնիկ Սողոմոնյանի և Վահագն Հակոբյանի մարմնի վրա հայտնաբերված ծակած-կտրած վերքերի արտաքին չափերից, օրգանիզմ թափանցման խորությունից կարելի է գալ այն եզրակացության, որ ծակած-կտրած վնասվածքները կարող*

էին առաջանալ ինչպես մեկ, այնպես էլ մեկից ավելի ծակող-կտրող գործիքներով (…)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 33-34):

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ *«(…) [Հ]իմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատված է համար[վ]ում, որ Սմբատ Գրիգորյանը 2007 թվականի հունվարի 31-ին՝ ժամը 21-ի սահմաններում, Կոտայքի մարզի Բալահովիտ գյուղի նախկին կաթի գործարան տանող ճանապարհին վիճաբանության և կռվի մեջ է մտել համագյուղացիներ Սերյոժա Գևորգյանի, Գառնիկ Սողոմոնյանի և Վահագն Հակոբյանի հետ: Վիճաբանության ընթացքում Սմբատ Գրիգորյանն իր մոտ եղած սուր կտրող-ծակող գործիքով մեկ անգամ հարվածել է Գառնիկ Սողոմոնյանի կրծքավանդակի ձախ կեսի առաջային մակերեսին՝ պատճառելով ծակած-կտրած, չբափանցող, խորանիստ մկանների վնասումով վերքի ձևով առողջության միջին ծանրության վնաս՝ առողջության տևական քայքայումով: Դրանից հետո Սմբատ Գրիգորյանը թիկունքից մոտեցել է Գառնիկ Սողոմոնյանին օգնություն ցույց տվող Սերյոժա Գևորգյանին և նույն սուր կտրող-ծակող գործիքով հինգ հարված է հասցրել նրա մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով աջից և ձախից կրծքավանդակի մեկական ծակած-կտրած թափանցող վնասվածքների, ձախից կրծքավանդակի, ձախից զստասրբանային հողի շրջանի մեկական ծակած-կտրած չբափանցող, ձախ ազդրի ստորին երրորդականի դրսային մակերեսի մեկ ծակած-կտրած կյանքին վտանգ սպառնացող ծանր վնասվածք: Դրանից հետո Սմբատ Գրիգորյանը նույն գործիքով մեկ անգամ հարվածել է նաև բաժանելու և միջադեպը կանխելու փորձ կատարող Վահագն Հակոբյանի կրծքավանդակի ձախ կեսի առաջային մակերեսին՝ պատճառելով ծակած-կտրած, չբափանցող վերքի ձևով առողջության կարճատև քայքայումով թեթև վնաս:*

Վերը նշված փաստական հանգամանքների շրջանակներում գնահատելով ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի իրավաբանական որակման հիմնավորվածությունը, հաշվի առնելով հանցավոր արարքի կատարման եղանակը, տուժողներին պատճառված մարմնական վնասվածքների քանակը, բնույթը և տեղակայումը (դրանք ամբողջությամբ պատճառված են կենսականորեն կարևոր օրգանների շրջանում), ինչպես նաև՝ հանցավորի և տուժողների վարքագիծը հանցագործությանը նախորդող և հաջորդող պահերին՝ [Առաջին ատյանի դատարանը] գտնում է, որ Սմբատ Գրիգորյանն ուղղակի դիտավորությամբ ապօրինաբար ցանկացել է կյանքից զրկել Սերյոժա Գևորգյանին, Գառնիկ Սողոմոնյանին և Վահագն Հակոբյանին, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով չի կարողացել հանցագործությունն ավարտին հասցնել: Այսինքն՝ Ս.Գրիգորյանի կատարած արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատ-

կանիշներին, ինչի համար նա ենթակա է քրեական պատասխանատվության և պատժի:

Միևնույն ժամանակ, անդրադառնալով Ս.Գրիգորյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով առաջադրված մեղադրանքին՝ [Առաջին ատյանի դատարանն] արձանագրում է, որ հանցավորի արարքը ենթակա է որակման նշված հոդվածով, եթե սպանության հիմնական շարժառիթը խուլիգանական է, այսինքն՝ հանցավորի գործողություններում գերակայում է հասարակական կարգի նկատմամբ արհամարհանքը, երբ սպանությունը տեղի է ունենում որպես աննշան առիթին տրված պատասխան գործողություն, և դրանով արտահայտվում է հանցավորի անհարգալից, արհամարհական վերաբերմունքը հասարակության նկատմամբ: Արարքը որպես խուլիգանական դրդումներով կատարված կամ հասարակ սպանություն որակելու հարցում վճռորոշ նշանակություն ունի հանցագործության շարժառիթների, ինչպես նաև սուբյեկտիվ կողմը բնութագրող այլ հատկանիշների մանրակրկիտ ուսումնասիրությունը (...):

Տվյալ դեպքում [Առաջին ատյանի դատարանը] գտնում է, որ դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների համակցությունը բավարար չէ հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատված համարելու այն, որ Ս.Գրիգորյանի կողմից կատարված երեք անձանց սպանության փորձը եղել է որպես աննշան առիթին տրված պատասխան գործողություն և դրանով հանցավորն արտահայտել է արհամարհական վերաբերմունք հասարակության նկատմամբ: Այս առումով դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների համակցությունը բավարար չէ գործի փաստական հանգամանքները հաստատված համարելու այն ծավալով, որը կբացառի դրա ապացուցվածության վերաբերյալ ցանկացած ողջամիտ կասկած: Հետևաբար ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետը պետք է հանել ամբաստանյալ Ս. Գրիգորյանի մեղադրանքի ծավալից:

(...) Հիմք ընդունելով ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության և քրեական օրենքի հետադարձ ուժի կանոնները սահմանող վերը մեջբերված նորմերը, ինչպես նաև այն, որ Ս.Գրիգորյանը հանցավոր արարքը կատարել է 2007 թվականի հունվարի 31-ին՝ [Առաջին ատյանի դատարանը] փաստում է, որ նրա նկատմամբ պատիժ պետք է նշանակվի արարքը կատարելու ժամանակ գործող ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայի սահմաններում՝ հաշվի առնելով չավարտված հանցագործությունների համար պատիժ նշանակելու ՀՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կանոնները (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթեր 35-59):

7. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ փաստել է. *«(...) [Ա]ռաջին ատյանի դատարանը, դատաքննության ընթացքում հաստատված փաստա-*

կան հանգամանքների շրջանակներում գնահատելով ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի իրավաբանական որակման հիմնավորվածությունը, հաշվի առնելով հանցավոր արարքի կատարման եղանակը, տուժողներին պատճառված մարմնական վնասվածքների քանակը, բնույթը և տեղակայումը, ինչպես նաև՝ հանցավորի և տուժողների վարքագիծը հանցագործությանը նախորդող և հաջորդող պահերին, եկել է եզրահանգման, որ Սմբատ Գրիգորյանն ուղղակի դիտավորությամբ ապօրինաբար ցանկացել է կյանքից զրկել Սերյոժա Գևորգյանին, Գառնիկ Սողոմոնյանին և Վահագն Հակոբյանին, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով չի կարողացել հանցագործությունն ավարտին հասցնել: Վերաքննիչ դատարանի համար ընդունելի չէ [Ա]ռաջին ատյանի դատարանի այն դիրքորոշումը, համաձայն որի՝ Սմբատ Գրիգորյանն ուղղակի դիտավորությամբ ապօրինաբար ցանկացել է կյանքից զրկել Գառնիկ Սողոմոնյանին և Վահագն Հակոբյանին, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով չի կարողացել հանցագործությունն ավարտին հասցնել:

(…)

Քննարկվող հանցակազմի սուբյեկտիվ կողմը բնութագրվում է դիտավորությամբ, որը կարող է լինել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի: Ուղղակի դիտավորության դեպքում հանցավորը գիտակցում է, որ ուրիշի կյանքի համար վտանգավոր արարք է կատարում, նախատեսում է մարդուն կյանքից զրկելու հնարավորությունը կամ անխուսափելիությունը և ցանկանում է տուժողին մահ պատճառել: Անուղղակի դիտավորության դեպքում անձը գիտակցում է, որ ուրիշի կյանքի համար վտանգավոր արարք է կատարում, նախատեսում է մարդուն կյանքից զրկելու հնարավորությունը, չի ցանկանում, բայց գիտակցաբար թույլ է տալիս տուժողի մահվան առաջացումը կամ անտարբերություն է դրսևորում այդ հետևանքի առաջացման նկատմամբ:

(…) Այսինքն՝ վերը նշված իրավանորմից հետևում է, որ հանցափորձի համար պարտադիր է, որպեսզի գործողությունը (անգործությունը), որն անմիջականորեն ուղղված է հանցանք կատարելուն, կատարված լինի ուղղակի դիտավորությամբ:

(…) Վերը նշված հանգամանքների համադրման և վերլուծության հիման վրա է հնարավոր միայն բացահայտել դիտավորության ուղղվածությունը և դրա տեսակները, ինչն էլ իր հերթին կհանգեցնի կատարված արարքին քրեաիրավական ճիշտ գնահատական տալուն և տարբեր հանցակազմերը, մասնավորապես՝ սպանության փորձը տուժողի առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելուց սահմանազատելուն:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ սույն քրեական գործով ձեռք չի բերվել ոչ մի օբյեկտիվ տվյալ այն մասին, որ Սմբատ Գրիգորյանի

գործողություններն ուղղված են եղել տուժողներ Գառնիկ Սողոմոնյանին և Վահագն Հակոբյանին կյանքից զրկելուն:

Վերաքննիչ դատարանը նման եզրահանգման է գալիս, հաշվի առնելով հանցագործության բոլոր հանգամանքների համակցությունը, ինչպես նաև հանցավոր արարքի կատարման եղանակը, բնույթը, հանցավորի կողմից հանցավոր գործողությունների դադարեցման պատճառները և մարմնական վնասվածքների քանակը, մասնավորապես՝ այն, որ ամբաստանյալ Սմբատ Գրիգորյանի կողմից տուժողներ Գառնիկ Սողոմոնյանին և Վահագն Հակոբյանին հասցվել է սուր կտրող-ծակող գործիքի ընդամենը մեկական հարված և դա այն պարագայում, երբ նույն վիճաբանության ժամանակ մյուս տուժող Սերյոժա Գևորգյանին հասցվել է հինգ հարված:

Միևնույն ժամանակ, անդրադառնալով տուժող Սերյոժա Գևորգյանին հասցված մարմնական վնասվածքին՝ վերը նշված հանգամանքների համադրման և վերլուծության հիման վրա, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Սմբատ Գրիգորյանն ուղղակի դիտավորություն է ունեցել ապօրինաբար Սերյոժա Գևորգյանին կյանքից զրկել և հասել է իր նպատակին:

Վերաքննիչ դատարանը նման եզրահանգման է գալիս վերլուծելով հանցագործության բոլոր հանգամանքների համակցությունը և հաշվի առնելով, մասնավորապես, հանցավոր արարքի կատարման եղանակը, վնասվածքներ հասցնելիս օգտագործվող գործիքը, մարմնական վնասվածքների քանակը, բնույթը և տեղակայումը, ինչպես նաև հանցավորի և տուժողի վարքագիծը հանցագործությանը նախորդող և հաջորդող պահերին, նրանց փոխհարաբերությունները, հանցավորի կողմից հանցավոր գործողությունների դադարեցման պատճառները:

Ելնելով վերոգրյալից՝ [Վերաքննիչ] դատարանը գտնում է, որ Սմբատ Գրիգորյանի վերոգրյալ արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցակազմը:

(…) Վերաքննիչ դատարանը սույն քրեական գործով Սմբատ Գրիգորյանին առաջադրված մեղադրանքը ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետից ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով, 113-րդ հոդվածի 1-ին մասով և 117-րդ հոդվածով փոփոխելը հնարավոր է համարում, քանի որ մեղադրանքի նման փոփոխությունով ամբաստանյալի վիճակը չի վատթարանում: Ավելին՝ դրանով ամբաստանյալի վիճակը բարելավվում է (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 115-143):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոք բերած անձի համոզմամբ՝ Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական և հիմնավորված չէ, քանի որ դրանով թույլ են տրվել նյութական

և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

Մասնավորապես բողոքաբերը, վերլուծելով սպանության հանցակազմի առանձնահատկությունների, ինչպես նաև ապացույցների գնահատման վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԱՆԴ/0110/01/12, թիվ ՇԴ/0126/01/12, թիվ ԵՔՐԴ/0632/01/08 գործերով որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, համադրել է դրանք սույն գործի փաստական հանգամանքների հետ և եզրահանգել, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ապացույցների ազատ գնահատման քրեադատավարական սկզբունքը, ինչն արտահայտվել է գործում առկա ապացույցներն անտեսելով և դրանք սխալ գնահատելով: Արդյունքում Վերաքննիչ դատարանն ամբաստանյալ Ս.Գրիգորյանի արարքի որակման հարցում հանգել է սխալ հետևության:

Այսպես՝ բողոքի հեղինակը սույն քրեական գործում առկա մի շարք ապացույցների և փաստական տվյալների հաշվառմամբ եկել է այն եզրահանգման, որ ամբաստանյալ Ս.Գրիգորյանն ուղղակի դիտավորությամբ ցանկացել է կյանքից զրկել ինչպես Ս.Գևորգյանին, այնպես էլ Գ.Սողոմոնյանին ու Վ.Հակոբյանին, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով հանցագործությունն ավարտին չի հասցվել:

8.1. Բացի այդ, բողոքաբերը, վկայակոչելով նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հուլիսի 25-ի որոշմամբ տուժող Ս.Գևորգյանին բժշկական օգնություն ցուցաբերած բուժաշխատողների նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը, գտել է, որ Ս.Գրիգորյանի արարքը որպես սպանության փորձ որակելով՝ վարույթն իրականացնող մարմինը հիմք է ընդունել այն հանգամանքը, որ նախաքննությամբ չի պարզվել՝ տուժող Ս.Գևորգյանի մահը վրա է հասել ամբաստանյալ Ս.Գրիգորյանի արարքի՞, թե՞ հնարավոր բժշկական սխալի հետևանքով: Նման պայմաններում ամբաստանյալի արարքը որպես ավարտված սպանություն որակելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունն իրավաչափ չէ:

Վերոշարադրյալի հիման վրա ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի դատավճռին:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է՝ հիմնավո՞ր են արդյոք Ս.Գրիգորյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետից ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով, 113-րդ հոդվածի 1-ին մասով և 117-րդ հոդվածով վերաորակելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

10. ՀՀ քրեական օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Ավարտված հանցագործություն է համարվում այն արարքը, որը պարունակում է սույն օրենսգրքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ հոդվածի համաձայն՝ *«Հանցափորձ է համարվում ուղղակի դիտավորությամբ կատարված այն գործողությունը (անգործությունը), որն անմիջականորեն ուղղված է հանցանք կատարելուն, եթե հանցագործությունն ավարտին չի հասցվել անձի կամքից անկախ հանգամանքներով»:*

Հանցափորձի և դրա հատկանիշների իրավական վերլուծությանը, մեկ այլ ավարտված հանցագործության հատկանիշներից այն տարբերակելու, անձի դիտավորության ուղղվածությունը որոշելու և կատարված արարքին ճիշտ քրեաիրավական գնահատական տալու հիմնահարցերին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է մի շարք որոշումների շրջանակներում (տե՛ս, մասնավորապես, *Ս.Հունիկյանի* վերաբերյալ գործով 2008 թվականի փետրվարի 29-ի թիվ ՎԲ-11/08, *Ա.Բաղդասարյանի* վերաբերյալ գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0168/01/10, *Կ.Հովհաննիսյանի և մյուսների* վերաբերյալ գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԿԴ/0087/01/12, *Գ.Մանուկյանի* վերաբերյալ գործով 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԱՆԴ/0110/01/12 որոշումները):

Այսպես՝ *Ա.Բաղդասարյանի* վերաբերյալ գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է. «*(...) Օբյեկտիվ կողմից հանցափորձը բնութագրվում է՝*

1. գործողությամբ (անգործությամբ), որն անմիջականորեն ուղղված է հանցանքի կատարմանը,

2. հանցագործությունն անձի կամքից անկախ հանգամանքներով ավարտին չհասցնելով:

Հանցափորձն առկա է այն ժամանակ, երբ հանցագործությունը մինչև վերջ չի հասցվում, այլ կերպ՝ հանցակազմի օբյեկտիվ կողմի կատարումն սկսվում է, սակայն չի ավարտվում: Նյութական հանցագործության դեպքում չի առաջանում օրենքով նախատեսված հետևանքը կամ հետևանքն առաջանում է, սակայն ոչ հանցավորի դիտավորությամբ նախատեսվածը (օրինակ՝ սպանության փորձի ժամանակ տուժողը ոչ թե մահանում է, այլ ստանում է ծանր մարմնական վնասվածք): Ուստի, այն դեպքերում, երբ հանցագործության փորձի ժամանակ առաջանում են այնպիսի հետևանքներ, որոնք ոչ թե հանցավորի դիտավորության մեջ ընդգրկված, այլ մեկ ուրիշ ավարտված հանցագործության հատկանիշներ են, ապա դրանք կլանվում են հանցավորի դիտավորությամբ ընդգրկված հանցագործության փորձի մեջ և ինքնուրույն չեն որակվում:

Հանցափորձը բնութագրող հաջորդ հատկանիշն այն է, որ հանցագործությունը մինչև վերջ չի հասցվում հանցավորի կամքից անկախ հանգամանքներում: Սուբյեկտիվ կողմից հանցափորձը հնարավոր է միայն ուղղակի դիտավորությամբ» (տե՛ս Արարատ Քաղդասարյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ին կայացված թիվ ԵԷԴ/0168/01/10 որոշման 16-րդ կետը):

10.1. Ձարգացնելով մեջբերված որոշմամբ արտահայտված դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը *Գ.Մանուկյանի* վերաբերյալ գործով որոշմամբ արձանագրել է հետևյալը՝ *«(...) [Հ]անցափորձ են ճևավորում միայն ուղղակի դիտավորությամբ կատարվող այն գործողությունները (անգործությունը), որոնք անմիջականորեն ուղղված են հանցանքի կատարմանը: «Անմիջականությունը» ենթադրում է, որ հանցավորը ճեռնամուխ է լինում հանցագործության օբյեկտիվ կողմի իրականացմանը, սակայն այն ավարտին չի հասցնում իր կամքից անկախ այնպիսի օբյեկտիվ կամ սուբյեկտիվ հանգամանքներով, որոնք նա չէր նախատեսել կամ չէր կարողացել հաղթահարել: Այլ կերպ ասած՝ հանցափորձի դեպքում հանցագործությունը չի ավարտվում, քանի որ կա՛մ հանցավոր արարքն ամբողջությամբ չի իրականացվում, կա՛մ արարքն իրականացվում է, սակայն չի առաջանում հանցավորի դիտավորության մեջ ընդգրկված և նրա համար ցանկալի հանրորեն վտանգավոր հետևանքը (նյութական հանցակազմերի դեպքում):*

Վերոշարադրյալից բխում է, որ նյութական հանցակազմերի դեպքում ավարտված հանցագործության և հանցափորձի տարանջատման հիմնական չափանիշն անձի դիտավորության ուղղվածությունն է: Մասնավորապես, եթե կատարվածի արդյունքում առաջանում են անձի դիտավորության մեջ չընդգրկված, սակայն ավարտված մեկ այլ հանցագործության հատկանիշներ, ապա արարքը պետք է որակել ոչ թե ըստ փաստացի վրա հասած հետևանքի, այլ ըստ անձի սուբյեկտիվ ընկալման՝ որպես իր դիտավորության մեջ ընդգրկված հանցագործության փորձ: Այսինքն՝ արարքը փորձ կամ ավարտված հանցագործություն որակելու հարցում էական նշանակություն ունի անձի դիտավորության ուղղվածության բացահայտումը, ինչը հնարավոր է գործի փաստական հանգամանքների համադրման և ամբողջական վերլուծության արդյունքում:

(...) [Հ]անցավորի դիտավորության ուղղվածության հարցը լուծելիս անհրաժեշտ է ելնել հանցագործության բոլոր հանգամանքների համակցությունից և հաշվի առնել, մասնավորապես, հանցավոր արարքի կատարման եղանակը, վնասվածքներ հասցնելիս օգտագործվող գործիքները, մարմնական վնասվածքների քանակը, բնույթը և տեղակայումը (օրինակ՝ մարդու կենսականորեն կարևոր օրգանների վնասումը), ինչպես նաև հանցավորի և տուժողի վարքագիծը հանցագործությանը նախորդող և հաջորդող պահերին, նրանց փոխհարաբերությունները, հանցավորի կողմից հանցա-

վոր գործողությունների դադարեցման պատճառները և այլն (...)» (տե՛ս Գրիգոր Մանուկյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 28-ին կայացված թիվ ԵԱՆԴ/0110/01/12 որոշման 16-րդ կետը):

11. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Ս.Գրիգորյանը 2007 թվականի հունվարի 31-ին ժամը 21-ի սահմաններում ծագած վեճի արդյունքում իր մոտ եղած սուր կտրող-ծակող գործիքով մեկ անգամ հարվածել է Գ.Սողոմոնյանի կրծքավանդակի ձախ կեսի առաջային մակերեսին՝ պատճառելով ծակած-կտրած, չբափանցող, խորանիստ մկաների վնասումով վերքի ձևով առողջության միջին ծանրության վնաս՝ առողջության տևական քայքայումով, որից հետո Ս.Գրիգորյանը թիկունքից մոտեցել է Գ.Սողոմոնյանին օգնություն ցույց տվող Ս.Գևորգյանին և նույն սուր կտրող-ծակող գործիքով հինգ հարված է հասցրել նրա մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով աջից և ձախից կրծքավանդակի մեկական ծակած-կտրած թափանցող վնասվածքների, ձախից կրծքավանդակի, ձախից զստասրբանային հողի շրջանի մեկական ծակած-կտրած չթափանցող, ձախ ազդրի ստորին երրորդականի դրսային մակերեսի մեկ ծակած-կտրած կյանքին վտանգ սպառնացող ծանր վնասվածք: Դրանից հետո Ս.Գրիգորյանը նույն գործիքով մեկ անգամ հարվածել է նաև բաժանելու և միջադեպը կանխելու փորձ կատարող Վ.Հակոբյանի կրծքավանդակի ձախ կեսի առաջային մակերեսին՝ պատճառելով ծակած-կտրած, չթափանցող վերքի ձևով առողջության կարճատև քայքայումով թեթև վնաս (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ Ս.Գրիգորյանն ուղղակի դիտավորությամբ, ապօրինաբար ցանկացել է կյանքից զրկել Ս.Գևորգյանին, Գ.Սողոմոնյանին և Վ.Հակոբյանին, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով հանցագործությունն ավարտին չի հասցրել (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր հերթին արձանագրել է, որ սույն քրեական գործով ձեռք չի բերվել որևէ օբյեկտիվ տվյալ առ այն, որ Ս.Գրիգորյանի գործողություններն ուղղված են եղել տուժողներ Գ.Սողոմոնյանին և Վ.Հակոբյանին կյանքից զրկելուն: Մասնավորապես Վերաքննիչ դատարանն ընդգծել է, որ ամբաստանյալ Ս.Գրիգորյանը տուժողներ Գ.Սողոմոնյանին և Վ.Հակոբյանին սուր կտրող-ծակող գործիքով ընդամենը մեկական հարված է հասցրել և դա այն պարագայում, երբ նույն վիճաբանության ժամանակ մյուս տուժող Ս.Գևորգյանին հասցրել է հինգ հարված:

Սինհնույն ժամանակ Վերաքննիչ դատարանը գտել է, որ Ս.Գրիգորյանն ուղղակի դիտավորություն է ունեցել ապօրինաբար Ս.Գևորգյանին զրկել կյանքից և հասել է իր նպատակին: Արդյունքում ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետից վերաորակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդ-

վածի 1-ին մասով, 113-րդ հոդվածի 1-ին մասով և 117-րդ հոդվածով (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

12. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-10.1-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման չի ենթարկել գործում առկա տվյալները և սխալ եզրահանգման է եկել անձի դիտավորության ուղղվածության, հետևաբար նաև արարքի քրեաիրավական որակման հարցում:

Մասնավորապես Վերաքննիչ դատարանի կողմից անտեսվել է հանցավորի՝ հանցագործության ընթացքում դրսևորած վարքագիծը, հանցագործության եղանակը, տուժողներին պատճառված մարմնական վնասվածքների քանակը, բնույթը և տեղակայումը: Այսպես՝ ամբաստանյալ Ս.Գրիգորյանն իր մոտ եղած սուր կտրող-ծակող գործիքով հարվածներ է հասցրել տուժողների կենսականորեն կարևոր օրգանների շրջանում, այն է՝ մեկ անգամ հարվածել է ***Գ.Սողոմոնյանի կրծքավանդակի ձախ կեսի առաջային մակերեսին,*** ինչից հետո թիկունքից մոտեցել է Գ.Սողոմոնյանին օգնություն ցույց տվող ***Ս.Գևորգյանին և հինգ հարված է հասցրել նրա մարմնի տարբեր մասերին,*** այնուհետև մեկ անգամ հարվածել է նրանց բաժանելու և միջադեպը կանխելու փորձ կատարող ***Վ.Հակոբյանի կրծքավանդակի ձախ կեսի առաջային մակերեսին:***

12.1. Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ հանցավորի՝ հանցագործության ընթացքում դրսևորած վարքագծի ամբողջական և համակցության մեջ դիտարկումը, ինչպես նաև օգտագործված գործիքը, պատճառված մարմնական վնասվածքների քանակը, բնույթն ու տեղակայումը թույլ են տալիս բացահայտել վերջինիս դիտավորության ուղղվածությունն ու բովանդակությունը: Այսպես՝ Ս.Գրիգորյանը թե՛ Գ.Սողոմոնյանին, թե՛ Վ.Հակոբյանին մեկական հարված է հասցրել կրծքավանդակի ձախ կեսի առաջնային մակերեսին, իսկ Ս.Գևորգյանին հինգ անգամ հարվածել է նրա կյանքի համար կենսական կարևոր օրգանների շրջանում, որպիսի փաստերն իրենց համակցության մեջ արդեն իսկ վկայում են, որ ամբաստանյալն ուղղակի դիտավորությամբ ցանկացել է կյանքից զրկել տուժողներին, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով հանցագործությունն ավարտին չի հասցրել: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ ամբաստանյալ Ս.Գրիգորյանի կողմից տուժողներ Գ.Սողոմոնյանին և Վ.Հակոբյանին սուր կտրող-ծակող գործիքով ընդամենը մեկական հարված է հասցվել, և դա այն պայմաններում, երբ նույն վիճաբանության ժամանակ Ս.Գևորգյանին հինգ հարված է հասցվել, ուստի ամբաստանյալի

մոտ Գ.Սողոմոնյանին և Վ.Հակոբյանին սպանելու դիտավորությունը բացակայել է, անհիմն է:

13. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, Ս.Գրիգորյանի արարքը երկու կամ ավելի անձանց սպանության փորձից վերառորակելով որպես ավարտված սպանություն և դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության և թեթև վնասի պատճառում, պատշաճ վերլուծության չի ենթարկել գործի փաստական հանգամանքները:

Հետևաբար, Ս.Գրիգորյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետից ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով, 113-րդ հոդվածի 1-ին մասով և 117-րդ հոդվածով վերառորակելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր չեն:

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. Ս.Գրիգորյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վերաքննիչ դատարանը պահպանե՞լ է արդյոք դատական քննության սահմաններն ամրագրող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Գործի քննությունը դատարանում կատարվում է միայն ամբաստանյալի նկատմամբ և միայն այն մեղադրանքի սահմաններում, որով նրան մեղադրանք է առաջադրվել»:*

15. Մեջբերված նորմը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Ա.Մերոբյանի* վերաբերյալ որոշման շրջանակներում՝ արտահայտելով հետևյալ իրավական դիրքորոշումը. *«(…) Թե առաջին ատյանի դատարանը, թե վերաքննիչ դատարանը և թե վճռաբեկ դատարանը ամբաստանյալի կամ դատապարտյալի նկատմամբ գործը քննելիս և լուծելիս չեն կարող դուրս գալ նրան առաջադրված մեղադրանքի սահմաններից: Հակառակ դեպքում կխախտվի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածով նախատեսված սկզբունքը՝ «Կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը և դրա ապահովումը»: Մասնավորապես կխախտվեն այն հիմնարար իրավադրույթները, որ «Կասկածյալը և մեղադրյալն ունեն պաշտպանության իրավունք», և որ «Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին բացատրել նրանց իրավունքները և ապահովել օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից նրանց պաշտպանվելու փաստացի հնարավորությունը» (Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր): Եթե Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվա-*

ծում օգտագործված «մեղադրանք» եզրույթը հասկացվի սոսկ «քրեաիրավական որակում» իմաստով և այն իր մեջ չներառի արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստական հանգամանքները, ապա կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը չի լինի կոնկրետ և իրական, այլ կլինի վերացական և պատրանքային, քանի որ առանց փաստական հիմքի՝ քրեաիրավական որակումից պաշտպանվելու իրավունքը առարկայազուրկ է:

Մինչդեռ համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»: Իսկ անմիջականորեն գործող իրավունքը չի կարող վերացական լինել:

(...)

Այսպիսով, դատարանը գտնում է, որ կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի, ինչպես նաև գործի դատական քննության սահմանների առումով «մեղադրանք» հասկացությունը ներառում է նաև արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստերը (...)» (տե՛ս Արթուր Սերոբյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2007 մարտի 30-ին կայացված թիվ ՎՔ-46/07 որոշումը):

15.1. Վերահաստատելով և զարգացնելով *Ա.Սերոբյանի* վերաբերյալ գործով արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը *Ա.Պապյանի* գործով որոշմամբ արձանագրել է. *«(...) [Մ]եղադրանքի ճնակերպումը պետք է արտացոլի մեղսագրվող գործողությունների կամ անգործության բովանդակությունը, հետևաբար պետք է ներառի հանցակազմի բոլոր պարտադիր հատկանիշները բնութագրող փաստական տվյալները: Փաստական տվյալների ներառումն անհրաժեշտ նախապայման է, որպեսզի մեղադրանքի մեջ նշվի այն քրեական օրենքը, որով նախատեսված են հանրության համար վտանգավոր, հակաիրավական և քրեորեն պատժելի արարքի հատկանիշները, այսինքն՝ հանգեցնի մեղադրանքում ճնակերպված արարքին համապատասխան իրավաբանական գնահատական տալուն (...)»* (տե՛ս Արկադի Պապյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի նոյեմբերի 5-ին կայացված թիվ ՏԴ/0115/01/09 որոշումը):

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ս.Գրիգորյանին առաջադրված մեղադրանքում *«դիտավորությամբ ապօրինաբար մեկ ուրիշին կյանքից զրկելու»* հատկանիշը բնութագրող և դրա առկայությունը հաստատող որևէ փաստական տվյալ չի նկարագրվել, հետևապես այն ամբաստանյալին չի մեղսագրվել (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Սինչղեո Վերաքննիչ դատարանը գտել է, որ Ս.Գրիգորյանն ուղղակի դիտավորություն է ունեցել ապօրինաբար Ս.Գևորգյանին զրկել կյանքից և հասել է իր նպատակին (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

16.1. Մեջբերված փաստական տվյալների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ս.Գևորգյանին մահ պատճառելը Ս.Գրիգորյանին առաջադրված մեղադրանքի ծավալում ընդգրկված չի եղել, այսինքն՝ վերջինիս չի մեղսագրվել: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավադրույթը, արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն իրավասու չէր Ս.Գրիգորյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով մեղսագրված արարքը վերաորակելու ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով՝ որպես ավարտված սպանություն:

Հետևաբար՝ Վերաքննիչ դատարանը, Ս.Գրիգորյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով, չի պահպանել դատական քննության սահմանները ամրագրող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:

17. Ամփոփելով սույն որոշման 10-16.1-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատական ակտը բեկանելով և Ս.Գրիգորյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետից ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով, 113-րդ հոդվածի 1-ին մասով և 117-րդ հոդվածով վերաորակելով, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ, 104-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածների ոչ ճիշտ կիրառում: Այսինքն՝ թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի խախտում, ինչը հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար: Սինևույն ժամանակ Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ: Ուստի արդարադատության արդյունավետության շահերից ելնելով՝ անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մայիսի 3-ի դատավճռին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Սմբատ Կորյունի Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 21-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ նրա վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մայիսի 3-ի դատավճռին՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

7.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՇԴ/0120/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
	Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
քարտուղարությամբ՝	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ պաշտպան	Ս.ՈՍԿԱՆՅԱՆԻ
ամբաստանյալ	Վ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ

2017 թվականի օգոստոսի 30-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Վազգեն Վաչագանի Կարապետյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 5-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2014 թվականի մարտի 20-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի վարչության Շենգավիթի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի հատկանիշներով հարուցվել է թիվ 11123014 քրեական գործը:

2014 թվականի սեպտեմբերի 18-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի վարչության Շենգավիթի քննչական

բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է թիվ 11821814 քրեական գործը:

2015 թվականի հունվարի 5-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի և 185-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 11100515 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հունվարի 15-ի որոշմամբ թիվ 11821814 և թիվ 11100515 քրեական գործերը միացվել են, և քննությունը շարունակվել է մեկ վարույթում՝ 11100515 համարով:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հունվարի 28-ի որոշմամբ Վազգեն Կարապետյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով և 2 դրվագով՝ 118-րդ հոդվածով:

2015 թվականի փետրվարի 8-ին ՀՀ քննչական կոմիտեի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի, 235-րդ հոդվածի 1-ին մասի և 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 11106015 քրեական գործը:

2015 թվականի փետրվարի 15-ին Վազգեն Կարապետյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, 235-րդ հոդվածի 1-ին մասով և 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի փետրվարի 20-ի և 23-ի որոշումներով թիվ 11100515 և թիվ 11123014 քրեական գործերը միացվել են թիվ 11106015 քրեական գործին:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի օգոստոսի 3-ի որոշմամբ Վ.Կարապետյանին ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով, 235-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքի մասը վերացվել է, քրեական հետապնդումը՝ դադարեցվել, և նրան մեղադրանք է առաջադրվել 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 118-րդ հոդվածով և 185-րդ հոդվածի 1-ին մասով:

2015 թվականի օգոստոսի 20-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 12-ի դատավճռով Վ.Կարապետյանը ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով ճանաչվել է անպարտ և արդարացվել: Նույն դատավճռով Վ.Կարապետյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով և 118-րդ հոդվածով՝ առանց պատիժ նշանակելու, իսկ

նույն օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով՝ դատապարտվել ազատազրկման՝ 6 տարի 6 ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

3. Ամբաստանյալ Վ.Կարապետյանի պաշտպան Ս.Ոսկանյանի և մեղադրող Կ.Ադամյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի դեկտեմբերի 5-ին որոշում է կայացրել բողոքները մասնակիորեն բավարարելու, ամբաստանյալ Վ.Կարապետյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 12-ի դատավճիռը բեկանելու և այդ մասով գործը նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության ուղարկելու մասին: Նույն որոշմամբ Վ.Կարապետյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը փոփոխվել է, կիրառվել է կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավ, և գրավի գումարի չափ է սահմանվել 2.000.000 ՀՀ դրամ գումարը: Որոշվել է նաև Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով և 185-րդ հոդվածի 1-ին մասով, թողնել անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի՝ վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 28-ի որոշմամբ ներկայացված վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Վ.Կարապետյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«(...) նա 2014 թվականի սեպտեմբերի 9-ին՝ ժամը 20:00-ի սահմաններում, Երևան քաղաքի Արտաշիսյան փողոցի 46/1 հասցեում գտնվող «Փոքր Մասյամի» կոչվող հյուրանոցային համալիրի հետնամասում, իր հեռախոսը չվերադարձնելու հարցի շուրջ վիճաբանել է Երևան քաղաքի բնակչուհի Արփինե Սամվելի Հովհաննիսյանի հետ, որի ընթացքում ձեռքին եղած դանակի հետնամասով, այնուհետև ոտքով և ձեռքերով բազմաթիվ հարվածներ է հասցրել Ա.Հովհաննիսյանի դեմքին և մարմնի տարբեր մասերին՝ վերջինիս առողջությանը դիտավորությամբ պատճառելով որովայնի շրջանի քերծվածքների ձևով, թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ:*

Բացի այդ, Վազգեն Վաչագանի Կարապետյանը 2014 թվականի դեկտեմբերի 23-ին՝ ժամը 23:00-ի սահմաններում, Երևան քաղաքի Արտաշիս-

յան փողոցի 46 շենքի մոտ, ուրիշի գույքը վնասելու դիտավորությամբ, քարով դիտավորյալ հարվածել է Քրիստինե Գալոյանին պատկանող «Մազդա» մակնիշի 27OO216 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի հետևամասի ապակուն, կոտրել այն՝ այնուհետև դիտավորությամբ ոտքով հարվածել է նշված ավտոմեքենայի հետին ճախ անվաթևին՝ վնասելով այն՝ Ք.Գալոյանին պատճառելով զգալի չափի՝ 140.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

Բացի այդ, նա 2015 թվականի փետրվարի 8-ին՝ ժամը 04:30-ի սահմաններում, իր ազգական Հարություն Սարգսյանի վարած՝ «ՎԱԶ 21214» մակնիշի, 75LR777 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով երթևեկելով Երևան քաղաքի Բագրատունյաց և Արտաշիսյան փողոցների խաչմերուկում և նկատելով լուսացույցի ներքո կայանված «Օպել Աստրա» մակնիշի 60AR101 հաշվառման համարանիշի տաքսի ավտոմեքենայում գտնվող իր ծանոթ, ուղևոր Իգոր Կովալյովին, պահանջել է վերջինից՝ նստել «ՎԱԶ 21214» մակնիշի, 75LR777 հաշվառման համարանիշի ավտոմեքենան: Ի.Կովալյովը, նստելով նշված ավտոմեքենայի հետևամասում, գնացել են Երևան քաղաքի Արտաշիսյան փողոցի 46/1 հասցեում գտնվող «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնի տարածք, որտեղ Հ.Սարգսյանը իջել է ավտոմեքենայից, իսկ Վ.Կարապետյանը «ՎԱԶ 21214» մակնիշի, 75LR777 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի սրահում ավազակությամբ ուրիշի գույքը հափշտակելու նպատակով՝ հարձակման եղանակով, այն է՝ դիտավորությամբ որպես զենք օգտագործվող դանակը պահելով Երևան քաղաքի բնակիչ Իգոր Կովալյովի պարանոցին և սպանության սպառնալիք տալով՝ պահանջել է նրա մոտ եղած գումարը, սակայն Ի.Կովալյովի մոտ գումար չի եղել:

Բացի այդ, Վազգեն Կարապետյանը նույն օրը՝ ժամը 04:45-ի սահմաններում, Երևան քաղաքի Արտաշիսյան փողոցի 46/1 հասցեում գտնվող «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնի տարածքում կայանված «ՎԱԶ 21214» մակնիշի 75LR777 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի սրահում ավտոմեքենայի սրահի գրպանիկից վերցնելով ատրճանակին նմանվող չպարզված առարկան և փողն ուղղելով Ի.Կովալյովի ուղղությամբ, իրեն խաբելու՝ իր նախկին ընկերուհի Քրիստինե Սամվելի Գալոյանի հետ ունեցած շփման փաստը թաքցնելու համար սպանության սպառնալիք տալով՝ Ի.Կովալյովից պահանջել է առանձնապես խոշոր չափերի՝ 4.774.600 ՀՀ դրամին համարժեք 10.000 ԱՄՆ դոլար: Ի.Կովալյովը, հասկանալով, որ սպառնալիքն իրական է, համաձայնել է մինչև 2015 թվականի փետրվար ամսվա երրորդ տասնօրյակը Վ.Կարապետյանին հանձնել 300.000 ՀՀ դրամ գումար, որից հետո հեռացել են (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթեր 104-118):

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ *«Առաջադրված մեղադրանքում **ամբաստանյալ Վազգեն Կարապետյանն** իրեն մեղավոր չճանաչեց և ցուցմունք տվեց այն մասին, որ Իգոր Կովալյովին առաջին*

և վերջին անգամ հանդիպել է 2015թ. փետրվարի 8-ին, երբ հորաքրոջ որդու՝ Հարությունի Սարգսյանի հետ գտնվել է իրենց շենքի բակում: Այդ ժամանակ Իգորն իրենց մոտեցել է արծաթագույն «Օպել» մակնիշի ավտոմեքենայով, որը վարել է իրեն անծանոթ մի երիտասարդ, ում հետագայում ճանաչել է որպես Արթուր: Մոտենալով՝ Իգորն ասել է, որ ոմն Մերիհի տոկոսով 130.000 դրամ գումար է տվել և չի կարող այն ստանալ, խնդրել է իր աջակցությունը գումարը վերադարձնելու հարցում՝ խոստանալով վարձատրություն: Ինքը զայրացած պատասխանել է, որ նման հարցերով չի զբաղվում, որից հետո գնացել է շենքի մոտ կայանված իր «Ջիպ Գրանդ Չերոկի» մակնիշի ավտոմեքենայի մոտ, որն անսարք վիճակում մոտ երկու ամիս այդտեղ կանգնած է եղել: Դրանից հետո Իգորն ու նրա ընկեր Արթուրը «Օպել» մակնիշի ավտոմեքենայով հեռացել են, և ինքը նրանց այլևս չի հանդիպել (...):

Վկա Արթուր Դավթյանը *ցուցմունք է տվել այն մասին, որ ճանաչում է Իգոր Կովալյովին և նրա հետ գտնվել է ընդմիջ հարաբերությունների մեջ: Ճանաչում է նաև Վազգեն Կարապետյանին, ում հետ շփում չի ունեցել: Իր «Օպել» մակնիշի ավտոմեքենայով տաքսի ծառայություն է իրականացրել և 2015թ. փետրվարի 8-ին՝ ժամը 01.00-ի սահմաններում, Իգոր Կովալյովի խնդրանքով նրան տեղափոխել է «Փոքր Մայամի» հյուրանոցային համալիրի մոտ: Ճանապարհին՝ «Ծերեթելի» խաչմերուկի մոտ, նկատել են կողք կողքի կայանված «Ջիպ» և «Նիվա» մակնիշի ավտոմեքենաներ: Դրանց մոտ տեսել են Վազգեն Կարապետյանին, ով, հավանաբար, ավտոմեքենան է ընդոգելուց եղել, քանի որ նրա ձեռքերը կեղտոտված են եղել: Իգորը խնդրել է կայանել այդ ավտոմեքենաների մոտ, որից հետո իջել է և մոտեցել Վազգենին: Իգորի հետևից ավտոմեքենայից իջել է նաև ինքը: Դիմելով Վազգենին՝ Իգորը խնդրել է ինչ-որ աղջկա տված գումարը վերադարձնելու նրա աջակցությունը՝ խոստանալով վարձատրություն: Սակայն Վազգենը մերժել է: Քիչ անց իրեն զանգահարել է կինը, և ինքն առանձնացել է ու նստել ավտոմեքենայի մեջ: Քիչ անց եկել է Իգորը, և ինքն ավտոմեքենան վարել է նրա շենքի բակ: Ճանապարհին Իգորը բողոքել է Վազգենից՝ ասելով, որ նա չի թողնում, որ բակի մարմնավաճառներն աշխատեն և իրեն գումար տան: Իգորն ասել է նաև, որ Վազգենը դրա համար պատասխան է տալու: Ժամը 02:00-ի սահմաններում Իգորենց շենքի բակում իրենք հրաժեշտ են տվել միմյանց և հեռացել: Հետագայում հեռուստահաղորդումներից մեկից տեղեկացել է, որ Վազգենը ձերբակալվել է Իգորի նկատմամբ ինչ-որ ոտնձգություն կատարելու համար, ինչի կապակցությամբ զանգահարել է վերջինիս և հետաքրքրվել կատարվածի մասին: Իգորի պատասխանից հասկացել է, որ նա անհիմն մեղադրել է Վազգենին:*

Ամբաստանյալ Վազգեն Կարապետյանի և վկա Արթուր Դավթյանի պատճառաբանություններն անհիմն են, դրանցով ամբաստանյալը նպա-

տակ է հետապնդում խուսափելու քրեական պատասխանատվությունից, իսկ վկան՝ հովանավորելու ամբաստանյալին և թեթևացնելու նրա վիճակը:

Վերոհիշյալ անձանց՝ դատարանում տված ցուցմունքները հերքվում են գործով ճեղք բերված և դատարանում հետազոտված հետևյալ ապացույցներով:

Տուժող Իգոր Կովալյովը *ցուցմունք է տվել այն մասին, որ ճանաչում է Վազգեն Կարապետյանին, սակայն նրա հետ շփում չի ունեցել: Ճանաչում է նաև «Փոքր Մայամի» հյուրանոցային համալիրի մոտակայքում մարմնավաճառությամբ զբաղվող Քրիստինա Գալոյանին, ում հետ գտնվում է ոչորմալ հարաբերությունների մեջ: Քրիստինայի հետ ծանոթանալուց մոտ երեք ամիս անց իրեն հանդիպել է Վազգենն ու պահանջել, որ ինքը հեռու մնա Քրիստինայից: Ինքը պատասխանել է, որ Քրիստինան պարզապես ծանոթ է, և նրա հետ որևէ այլ հարաբերություններ չկան: Դրանից որոշ ժամանակ անց պատահական հանդիպել է Քրիստինային և պատմել Վազգենի հետ տեղի ունեցած զրույցի մասին: Քրիստինան պատասխանել է, որ Վազգենի հետ այլևս որևէ շփում չունի: 2015թ. փետրվարի 8-ին՝ ժամը 03.00-ի սահմաններում, իր ծանոթ Արթուրի վարած տաքսի ավտոմեքենայով եկել է «Փոքր Մայամի» հյուրանոցի մոտ, հանդիպել Քրիստինային և որոշ ժամանակ զրուցելուց հետո որոշել է գնալ տուն: Ճանապարհին՝ Արտաշիսյան և Բագրատունյաց փողոցների խաչմերուկի լուսացույցի տակ կանգնած ժամանակ, իրենց ավտոմեքենային մոտեցել է 75 LR 777 համարանիշի սպիտակ գույնի «Նիվա» մակնիշի ավտոմեքենան, որի վարորդի կողքին նստած է եղել Վազգենը: Վերջինս իրենից պահանջել է նստել նրա ավտոմեքենան՝ ասելով, որ խոսելու բան ունի: Ինքը նստել է Վազգենենց ավտոմեքենայի հետևի նստատեղին, իսկ Արթուրին խնդրել է վարել իրենց հետևից: Վազգենենց ավտոմեքենան վարել է նրա ազգականը, ում նախկինում մի քանի անգամ տեսել է Վազգենի հետ «Մայամի» հյուրանոցի մոտ: Վազգենն ընկերոջը խնդրել է ավտոմեքենան վարել «Մայամիի» մոտ: «Մայամիի» կողքով վարորդն աջ է թեքվել: Այնտեղ ավտոտնակներ են եղել, և վարորդն ավտոմեքենան կայանել է դրանց մոտ: Այնուհետև նա իջել է ավտոմեքենայից, իսկ Արթուրն ավտոմեքենան կայանել է իրենց հետևում: Այդ ժամանակ Վազգենն իրենից հարցրել է իր և Քրիստինայի հարաբերությունների մասին՝ ասելով, որ տեղյակ է իրենց զրույցից: Ինքը պատասխանել է, որ Քրիստինային ոչինչ չի պատմել և առաջարկել է գնալ և հանդիպել նրան: Վազգենն ասել է, որ չի ցանկանում տեսնել Քրիստինային, որից հետո պահանջել է զանգահարել նրան: Ինքն իր 098-63-10-37 հեռախոսահամարից զանգահարել է Քրիստինայի՝ 077-66-61-13 հեռախոսահամարին, սակայն չցանկանալով Վազգենի ներկայությամբ զրուցել նրա հետ՝ միտումնավոր վերջում հավաքել է նաև 3 թիվը: Այդ ժամանակ Վազգենը պահանջել է իր հեռախոսը, սակայն ինքը չի տվել, և վերջինս, ավտոմեքենայի փոխանցման տու-*

փի մոտից վերցնելով կարմիր գույնի բռնակով ծալովի դանակը, բացել է այն ու սկսել է սպառնալ իրեն: Դրանից հետո նա դանակը պահել է իր կոկորդին ու ձեռքից վերցրել հեռախոսը: Զննելով իր հեռախոսը և տեսնելով, որ ինքը մեկ թիվ ավելի է հավաքել, Վազգենը սկսել է դանակը թափահարել իր առջև՝ պահանջելով զանգահարել Քրիստինային, հակառակ դեպքում կսպանի: Ինքը ստիպված զանգահարել է Քրիստինային ու միացրել բարձրախոսը: Իր հարցին Քրիստինան պատասխանել է, որ Վազգենի հետ շփում չունի և հայհոյանք է հնչեցրել նրա հասցեին: Դա լսելով՝ Վազգենն ավելի է զայրացել և դրսում կանգնած ընկերոջից պահանջել է ավտոմեքենան վարել մանկական հիվանդանոցի ուղղությամբ: Վերջինս ավտոմեքենան վարել է «Սուրբ Աստվածամայր» հիվանդանոցի բակ: Իրենց հետևից եկել է նաև Արթուրը: Այնտեղ Վազգենի ընկերը դարձյալ իջել է ավտոմեքենայից, որից հետո Վազգենը, վերցնելով դանակն ու այն պահելով իր կոկորդին, պահանջել է դատարկել գրպաններն ու նրան տալ ողջ գումարը: Սակայն իր գրպաններում գումար չի եղել, եղել են միայն ծխախոտի տուփն ու հեռախոսը: Տեսնելով, որ իր մոտ գումար չկա, Վազգենը փակել է դանակը և այն դրել փոխանցման տուփի մոտ: Այնուհետև նա ավտոմեքենայի սրահի պահատուփից վերցրել է սև գույնի ատրճանակ, լիցքավորել այն և պահել իր վրա՝ սուտ խոսելու համար պահանջելով 10.000 ԱՄՆ դոլար: Ինքը պատասխանել է, որ այդքան գումար չունի: Վազգենն ասել է, որ այս անգամ ներում է իրեն, սակայն մինչև փետրվարի 15-ն ինքը պետք է տա 150.000 դրամ, որից հետո, ամսվա վերջում՝ ևս 150.000 դրամ: Վախից ինքը համաձայնել է: Այդ պահին մոտ 150 մետր հեռավորության վրա երևացել է ոստիկանական ավտոմեքենա, և Վազգենը վերցրել է դանակն ու ատրճանակը և դուրս նետել պատուհանից: Այնուհետև, երբ ոստիկանական ավտոմեքենան հեռացել է, ինքը դուրս է եկել ավտոմեքենայից և Արթուրի հետ գնացել տուն, որտեղից զանգահարել է ոստիկանություն ու հայտնել կատարվածի մասին:

Տուժողը հայտնեց նաև, որ երբ ավտոմեքենայի մեջ Վազգենն իր առջև թափահարել է դանակը, այն դիպել է իր հագին եղած բաճկոնի ձախ թևին և վնասել:

***Դեպքի վայրի զննության մասին 2015թ. փետրվարի 8-ի արձանագրության** համաձայն՝ Իգոր Կովալյովի կողմից մատնացույց արված վայրում՝ Երևան քաղաքի Արտաշիսյան փողոցի թիվ 46ա հասեցում գտնվող «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնի հետնամասում առկա՝ «Նահրի» մարզադաշտ տանող ճանապարհի վերջնամասի ձախակողմյան հատվածում, հայտնաբերվել և վերցվել է մեկ հատ ծալովի դանակ՝ փակված վիճակում:*

***Զննում կատարելու մասին 2015թ. փետրվարի 8-ի արձանագրության** համաձայն՝ Իգոր Կովալյովի ներկայացրած՝ «Նոկիա 301» մոդելի բջջային հեռախոսի մեջ տեղադրված 098-63-10-37 հեռախոսահամարից առկա է ել-*

քային հեռախոսազանգ 077-66-61-13 հեռախոսահամարին, որը կատարվել է 2015թ. օգոստոսի 8-ին, ժամը 03:47-ին՝ 0 վայրկյան տևողությամբ, քանի որ զանգահարողի կողմից 077-66-61-13 զանգվող հեռախոսահամարի վերջում հավաքվել է ավելի «3» թվանշանը, որպիսի հանգամանքը հնարավորություն չի տվել զանգ իրականացնել:

Առգրավում և զննում կատարելու մասին 2015թ. փետրվարի 8-ի արձանագրության համաձայն՝ առգրավվել և զննության են ենթարկվել դեպքի պահին Իգոր Կովալյովի հագին եղած բաճկոնը և սպորտային տաբատը: Զննությամբ բաճկոնի ձախ թևին՝ ներքևից 13սմ բարձրության վրա, առկա է 1.5սմ թեքությամբ պատռվածք: Իգոր Կովալյովը հայտարարել է, որ պատռվածքն առաջացել է դեպքի ժամանակ Վազգեն Կարապետյանի կողմից դանակով իրեն հարվածելուց:

Խուզարկություն կատարելու մասին 2015թ. փետրվարի 8-ի արձանագրության համաձայն՝ «ՎԱԶ-2121» մակնիշի 75 LR 777 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի հետևի ձախակողմյան հատվածի ներքևի մասից հայտնաբերվել և վերցվել է մեկ հատ «Winston» տեսակի ծխախոտի ծխուկ:

ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության փորձագետի 2015թ. փետրվարի 20-ի թիվ 339-15 եզրակացության համաձայն՝ փորձաքննության ներկայացված զպպանակային ծալովի դանակի վրա անճի հայտնաբերման համար պիտանի ձեռքի հետքեր չեն հայտնաբերվել: Փորձաքննության ներկայացված տնտեսակենցաղային նշանակության սևեռվող շեղբով զպպանակային ծալովի դանակը գործարանային արտադրության է, սակայն զենք չի հանդիսանում, ներկայացված վիճակում տեխնիկապես անսարք է:

Դեպքի վայրի զննության մասին 2015թ. մարտի 9-ի արձանագրության համաձայն՝ դեպքի վայր է հանդիսանում Երևան քաղաքի Արտաշիսյան փողոցի 45/21 շենքի մոտակա հատվածը: Իգոր Կովալյովը հայտարարել է, որ 2015թ. փետրվարի 8-ին՝ ժամը 03:30-ի սահմաններում, Արթուր Դավթյանի հետ վերջինիս ավտոմեքենայով այդ հատվածով ընթանալիս «Նիվա» մակնիշի ավտոմեքենայով իրենց կողքին է կանգնել Վազգեն Կարապետյանը, ով նստած է եղել վարորդի կողքի նստատեղին: Այնուհետև Իգոր Կովալյովը մատնացույց է արել Բագրատունյաց պողոտայի և Արտաշիսյան փողոցի խաչմերուկից աջ 30-40 մետր հեռավորության վրա ընկած հատվածը և հայտարարել, որ նշված հատվածում են կանգնել երկու ավտոմեքենաները, որից հետո Վազգեն Կարապետյանի պահանջով ինքը նստել է «Նիվա» մակնիշի ավտոմեքենան, որից հետո ուղևորվել են «Փոքր Մայամի» հյուրանոցային համալիրի հարևանությամբ գտնվող ավտոտնակների մոտ: Այնուհետև Իգոր Կովալյովը մատնացույց է արել Արտաշիսյան փողոցի թիվ 46/1 հասցեում գտնվող «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնի հետնամասի անկյունային հատվածը և հայտարարել, որ նշված վայրում է կայան-

վել «Նիվա» մակնիշի ավտոմեքենան, որի սրահում Վազգեն Կարապետյանը զենքի և դանակի սպառնալիքներով իրենից գումար է պահանջել:

***«ՀՀ փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության փորձագետի 2015թ. ապրիլի 18-ի թիվ 09771505 եզրակացության** համաձայն՝ փորձաքննությանը ներկայացված անդրավարտիքի վրա մեխանիկական բնույթի վնասվածքներ չկան: Կուրտկայի վրա առկա են մեխանիկական ճզվածությունների հետևանքով առաջացած պատռվածքներ և սահմանափակ մակերեսով, համեմատաբար սուր ծայր ունեցող, այդ թվում նաև ցանկացած դանակի ծայրի դիմամիկ, շոշափող ազդեցության հետևանքով առաջացած վնասվածք: Հագուստների վրա ծակած-կտրած բնույթի վնասվածքներ չեն հայտնաբերվել:*

***ՀՀ առողջապահության նախարարության հանրապետական դատական բժշկության գիտագործնական կենտրոնի փորձագետի 2015թ. մայիսի 1-ի թիվ 123 եզրակացության** համաձայն՝ փորձաքննության ներկայացված՝ Իգոր Կովալյովի արյան նմուշն ըստ արյան ABO իզոշճաբանական համակարգի՝ պատկանում է O խմբին: Նրա քրի նմուշում կլանման-անջատման ռեակցիայով հայտնաբերվել է H հակածին:*

Փորձաքննության ներկայացված «Վինսթոն Իքսսթայլ Բլյու» տեսակի ծխախոտի մեկ մնացորդի զտիչի ազատ եզրին հայտնաբերվել է մարդկային ծագման քրտք, որն առաջացել է արտաթրություններում՝ մասնավորապես քրտում H հակածին պարունակող և արյան O խումբ ունեցող որևէ անձից կամ անձանցից, այդ թվում նաև Իգոր Կովալյովից:

***ՀՀ առողջապահության նախարարության հանրապետական դատական բժշկության գիտագործնական կենտրոնի փորձագետի 2015թ. հունիսի 2-ի թիվ 64 եզրակացության** համաձայն՝ համեմատական մոլեկուլային գենետիկական փորձաքննության արդյունքները ցույց տվեցին, որ փորձաքննությանը ներկայացված «Վինսթոն Իքսսթայլ Բլյու» տեսակի ծխախոտի մեկ մնացորդի վրա հայտնաբերված քրի հետքերից ԴՆԹ անջատվել է:*

Ներկայացված «Վինսթոն Իքսսթայլ Բլյու» տեսակի ծխախոտի մեկ մնացորդի վրա հայտնաբերված քրի հետքերից անջատված ԴՆԹ-ի գենետիկական բնութագիրը 99.9% հավանականությամբ համընկնում է Իգոր Կովալյովի արյան նմուշից անջատված ԴՆԹ-ի գենետիկական բնութագրի հետ:

***Զննություն կատարելու մասին 2015թ. հուլիսի 25-ի արձանագրության համաձայն՝** զննության են ենթարկվել «Ղ-Տելեկոմ» ՓԲ ընկերության կողմից տրամադրված 098-63-10-37 և 077-66-61-13 հեռախոսահամարների վերծանումները, որոնց զննությամբ պարզվել է, որ 098-63-10-37 և 077-66-61-13 հեռախոսահամարների միջև 2015թ. փետրվարի 08-ին, ժամը 03:37-ից մինչև ժամը 19:15-ն առկա են պարբերաբար հեռախոսազանգեր, բացի այդ 2015թ. փետրվարի 08-ին, ժամը 03:11-ից մինչև ժամը 05:08-ը 098-63-10-37 հեռա-*

խոսահամարներն սպասարկվել են Երևան քաղաքի Արտաշիսյան 46ա հասցեում տեղակայված ալեհավաք կայանի կողմից:

Զննություն կատարելու մասին 2015թ. հուլիսի 25-ի արձանագրության *համաձայն՝ զննության են ենթարկվել «Ղ-Տելեկոմ» ՓԲ ընկերության կողմից տրամադրված 098-30-80-10 հեռախոսահամարի վերծանումները, որոնց զննությամբ պարզվել է, որ 2015թ. փետրվարի 8-ից մինչև փետրվարի 10-ն ընկած ժամանակահատվածում վկա Արթուր Դավթյանի նշված հեռախոսահամարից զանգեր են կատարվել Վազգեն Կարապետյանի՝ 094-60-06-66 հեռախոսահամարին, մասնավորապես՝ 2015թ. փետրվարի 8-ին՝ ժամը 20:50-ին, 1 րոպե 44 վայրկյան տևողությամբ, 2015թ. փետրվարի 10-ին՝ ժամը 13:33-ին, 1 րոպե 9 վայրկյան տևողությամբ, ժամը 13:51-ին՝ 9 վայրկյան տևողությամբ, իսկ ժամը 23:05-ին՝ 3 վայրկյան տևողությամբ: Զննությամբ պարզվել է նաև, որ 2015թ. փետրվարի 10-ից մինչև փետրվարի 12-ն ընկած ժամանակահատվածում Վազգեն Կարապետյանի՝ 094-60-06-66 հեռախոսահամարից զանգեր են կատարվել վկա Արթուր Դավթյանի 098-30-80-10 հեռախոսահամարին, մասնավորապես՝ 2015թ. փետրվարի 10-ին՝ ժամը 13:35-ին, 4 րոպե 2 վայրկյան տևողությամբ, ժամը 13:46-ին՝ 13 վայրկյան տևողությամբ, ժամը 13:49-ին՝ 3 վայրկյան տևողությամբ, ժամը 13:50-ին՝ 16 վայրկյան տևողությամբ, ժամը 22:59-ին՝ 26 վայրկյան տևողությամբ, ժամը 23:05-ին՝ 3 րոպե 2 վայրկյան տևողությամբ, ժամը 23:32-ին՝ 3 վայրկյան տևողությամբ, 2015թ. փետրվարի 12-ին՝ 0 վայրկյան տևողությամբ»:*

Իգոր Կովալչուկին պատկանող բաճկոնը, հայտնաբերված ծալովի դանակը և «Վինսթոն» տեսակի ծխախոտի ծխուկը ճանաչվել են իրեղեն ապացույցներ» (տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 177-183):

6.1. Արդյունքում Առաջին ատյանի դատարանը եզրահանգել է. *«(…) [Գ]նահատելով ամբաստանյալ Վազգեն Կարապետյանի և վկա Արթուր Դավթյանի՝ դատաքննության ժամանակ տված ցուցմունքները և դրանք համադրելով գործով ձեռք բերված և դատաքննությամբ հետազոտված վերոհիշյալ ապացույցների հետ, [Առաջին ատյանի] դատարանն անհիմն է համարում վերը նշված անճանց պատճառաբանությունները՝ դրանք որակելով ոչ արժանահավատ:*

Ամբաստանյալ Վազգեն Կարապետյանի տված ցուցմունքի անարժանահավատության մասին է վկայում, օրինակ, այն փաստը, որ, ըստ ամբաստանյալի՝ դեպքի օրը և ժամին իր և տուժողի միջև եղած զրույցը տեղի է ունեցել «ՎԱԶ-2121» մակնիշի 75 LR 777 հաշվառման համարանիշի ավտոմեքենայից դուրս, և տուժողն իրենց ավտոմեքենան չի նստել՝ այն դեպքում, երբ 2015թ. փետրվարի 8-ի խուզարկությամբ տուժողին պատկանող «Winston» տեսակի ծխախոտի ծխուկը հայտնաբերվել է նշված ավտոմեքենայի հետևի ճախակողմյան հատվածի ներքևի մասից:

Վկա Արթուր Դավթյանի տված ցուցմունքի անարժանահավատության մասին է վկայում, օրինակ, այն փաստը, որ, ըստ վկայի՝ նա Վազգեն Կարապետյանի հետ շփում չի ունեցել՝ այն դեպքում, երբ հեռախոսահամարների վերծանումների համաձայն՝ նրա 098-30-80-10 հեռախոսահամարից 2015թ. փետրվարի 8-ից մինչև փետրվարի 12-ն ընկած ժամանակահատվածում պարբերաբար տարբեր տևողությամբ զանգեր են կատարվել, ինչպես նաև ընդունվել Վազգեն Կարապետյանի՝ 094-60-06-66 հեռախոսահամարից:

Այսպիսով, գնահատելով գործով ձեռք բերված և դատաքննությամբ հետազոտված վերը նշված ապացույցները, [Առաջին ատյանի դատարանը] հաստատված է համարում (...) Վազգեն Կարապետյանի կողմից 2015թ. փետրվարի 8-ին՝ ժամը 04:30-ի սահմաններում Երևան քաղաքի Արտաշիսյան փողոցի թիվ 46/1 հասցեում գտնվող «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնի հարևանությամբ, «ՎԱԶ-21214» մակնիշի 75 LR 777 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի սրահում որպես զենք օգտագործվող դանակի գործադրմամբ Իգոր Կովալյովի նկատմամբ ավազակային հարձակում կատարելու փաստը, այսինքն՝ դատարանը հաստատված է համարում Վազգեն Կարապետյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 175 հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հանցանք կատարելը:

Միևնույն ժամանակ, [Առաջին ատյանի] դատարանը հանգեց հետևության, որ հետազոտված ապացույցներով չի հիմնավորվում ամբաստանյալ Վազգեն Կարապետյանի մեղավորությունը ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցանքում (...):

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Վազգեն Կարապետյանը ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել և բոլոր ցուցմունքներում՝ թե՛ նախաքննական, թե՛ դատաքննական, հերքել է շորթում կատարելու հանգամանքը, և նշված դրվագով նրան մեղադրանք է առաջադրվել բացառապես տուժող Իգոր Կովալյովի ցուցմունքների հիման վրա:

(...) Ուսումնասիրելով սույն գործի նյութերը՝ ՀՀ վճռաբեկ դատարանի (...) որոշումների լույսի ներքո, [Առաջին ատյանի] դատարանն արձանագրում է, որ միայն տուժողի ցուցմունքը բավարար չէ ամբաստանյալի մեղքը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, ապացուցված համարելու համար:

(...) [Առաջին ատյանի] դատարանը գտնում է, որ Վազգեն Կարապետյանը պետք է արդարացվի ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, և նա ենթակա է քրեական պատասխանատվության միայն ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, 185-րդ հոդվածի 1-ին մասով և 118-րդ հոդվածով:

Անդրադառնալով ամբաստանյալի նկատմամբ նշանակվող պատժի հարցին, դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով և 118-րդ հոդվածով այն չպետք է նշանակվի՝ հետևյալ պատճառաբանությամբ:

(...)

Դատարանում տուժողներ Արփինե Հովհաննիսյանը և Քրիստինա Գալոյանը հայտարարեցին ամբաստանյալի հետ հաշտվելու մասին, սակայն վերջինս նշված դրվագներով իրեն մեղավոր չճանաչեց և հայտնեց, որ նշված հանցագործությունները չի կատարել, տուժողները զրպարտում են, և նրանց հետ չի հաշտվել:

Նման պայմաններում [Առաջին ատյանի] դատարանը գտնում է, որ բացակայում են նշված հոդվածներով ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերը:

[Առաջին ատյանի դատարանը] գտնում է նաև, որ վերոհիշյալ հոդվածներով իրեն մեղավոր չճանաչելով և տուժողների հետ չհաշտվելով ամբաստանյալն օգտագործել է իր իրավունքը, և միայն իր իրավունքից օգտվելու համար ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելն անթույլատրելի է:

Այսպիսով, [Առաջին ատյանի] դատարանը գտնում է, որ ամբաստանյալը ենթակա է պատժի միայն ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով (...) (տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 177-183):

7. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ փաստել է. *«(...) Ուսումնասիրելով քրեական գործում առկա ապացույցները (...)՝ [Վերաքննիչ դատարանը] գտնում է, որ [Առաջին ատյանի] դատարանի (...) հետևությունները, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ և 182-րդ հոդվածներով առաջադրված մեղադրանքների հետ կապված, հիմնավոր չեն հետևյալ պատճառաբանությամբ:*

(...) [Ի]նչպես նախաքննության ընթացքում, այնպես էլ՝ դատաքննությամբ ձեռք բերված ապացույցները հակասական տվյալներ են պարունակում վերը նշված մեղադրանքների ապացուցվածության առումով, որպիսի պայմաններում առաջադրված մեղադրանքների շուրջ հիմնավոր և պատճառաբանված հետևության գալու, ինչպես մեղավորության, այնպես էլ՝ անմեղության մասով, դեռևս հնարավոր չէ:

Այսպես՝ ամբաստանյալ Վազգեն Կարապետյանի ցուցմունքի համաձայն՝ դեպքի օրն իր և տուժողի միջև եղած զրույցը տեղի է ունեցել «ՎԱԶ-2121» մակնիշի (...) ավտոմեքենայից դուրս, և տուժողն իրենց ավտոմեքենան չի նստել, սակայն 2015 թվականի փետրվարի 8-ի խուզարկության արձանագրությամբ տուժողին պատկանող (...) ծխախոտի ծխուկը հայտնաբերվել է նշված ավտոմեքենայի հետևի ճախակողմյան հատվածի ներքևի մասից:

(...) [Տ]ուժող Իգոր Կովալյովի նախաքննական ցուցմունքի համաձայն՝ պատասխանելով քննիչի հարցին՝ «Վազգենի կենսագրական տվյալները նշեք, դեպքի վայրը (...)», հայտնել է՝ «Վազգենի ազգանունը՝ Կարապետյան, հայրանունը Վաչագան, գիտեմ, որ ապրում է Ծերեթելիի խաչմերուկում, օգտագործում է 094600666 բջջային հեռախոսահամարը: Ավելացնեմ, որ ես, նստած լինելով «Նիվա»-ի հետնամասում, ծխել եմ «Վինսթոն» տեսակի ծխախոտ: Ծխուկները լցրել եմ հետևի մոխրամանի մեջ (...)»:

Դատաքննության ժամանակ հայտնել է, որ դեպքի ժամանակ նստած է եղել վարորդի հետևի նստատեղին, ծխել է «Վինսթոն» սիգարետ, վերջանալուց հետո «բիչոկներն» անմիջապես գցել է մեքենայի մեջ: Դատարանի հարցին պատասխանել է, որ մոխիրը լցրել է խալու վրա (կովրիկի) և մոխրամանի մեջ:

Մինչդեռ 2015 թվականի փետրվարի 8-ի խուզարկության արձանագրության համաձայն՝ խուզարկությամբ «Վազ 2121» մակնիշի (...) ավտոմեքենայի հետևի ձախակողմյան հատվածի ներքևի մասից հայտնաբերվել է մեկ հատ «Վինսթոն» տեսակի ծխախոտի ծխուկ:

Բացի այդ, վկա Արթուր Դավթյանը դատաքննության ժամանակ տված ցուցմունքում հայտնել է, որ ողջ ընթացքում Իգորը և Վազգենը զրուցել են իրենց ներկայությամբ, Իգորը կանգնած է եղել «Նիվա» և «Ջիպ» մակնիշի ավտոմեքենաների միջև:

Տվյալ դեպքում Առաջին ատյանի դատարանը հարցադրում չի կատարել՝ պարզելու, թե վկա Արթուր Դավթյանն ինչպես է պատճառաբանում այն հանգամանքը, որ ծխախոտի ծխուկը հայտնաբերվել է նշված ավտոմեքենայի հետևի ձախակողմյան հատվածի ներքևի մասում՝ այն դեպքում, երբ տուժող Իգոր Կովալյովը կանգնած է եղել «Նիվա» և «Ջիպ» մակնիշի ավտոմեքենաների միջև:

Հատկանշական է նաև այն փաստը, որ Արթուր Դավթյանն իր ցուցմունքով հայտնել է, որ Վազգեն Կարապետյանի հետ շփում չի ունեցել, սակայն հեռախոսահամարների վերծանումների ուսումնասիրությունից երևում է, որ Արթուր Դավթյանը և Վազգեն Կարապետյանը 2015 թվականի փետրվարի 8-ից մինչև փետրվարի 12-ն ընկած ժամանակահատվածում պարբերաբար տարբեր տևողությամբ զանգեր են կատարել միմյանց: Ընդ որում, զանգերը կատարվել են ենթադրյալ հանցագործությունների կատարումից հետո, ինչը ողջամտորեն կարող է վկայել այն մասին, որ ամբաստանյալը և վկան հնարավոր է՝ որոշակի պայմանավորվածություն ձեռք բերած լինեն դեպքի հանգամանքներն ամբաստանյալի «շահերից» ներկայացնելու վերաբերյալ: Այլապես տրամաբանական չէ, որ նախկինում միմյանց հետ շփում չունեցող անձինք այդ հաճախականությամբ միմյանց հետ զանգեր կատարեն:

Առաջին ատյանի դատարանը որևէ գնահատական չի տվել այն հանգամանքին, որ ըստ «դեպքի վայրի զննության» արձանագրության՝ ենթադրյալ դեպքի վայրից հայտնաբերված և իրեղեն ապացույց ճանաչված դանակի վրա անճի նույնացման համար պիտանի մատնահետքեր չեն հայտնաբերվել, առավել ևս՝ կատարված «մատնադրոշմային և սառը զենքի համալիր» փորձաքննությամբ ամբաստանյալ Վ.Կարապետյանի մատնահետքերը չեն հայտնաբերվել իրեղեն ապացույց դանակի վրա՝ չնայած այն հանգամանքին, որ, ըստ տուժող Իգոր Կովալյովի՝ Վազգեն Կարապետյանն այն անմիջապես դուրս է նետել ավտոմեքենայի պատուհանից, իսկ վկա Արթուր Դավթյանն իր դատաքննական ցուցմունքում հայտնել է, որ հանդիպելու պահին նկատել է, որ Վազգենի ձեռքերը կեղտոտ են եղել, երբ վերանորոգել է իր հորը պատկանող ավտոմեքենան: Այսինքն՝ ուշադրություն չի դարձվել այն հանգամանքին, թե ինչպես է ստացվում, որ դանակի վրա ամբաստանյալի հետ կապված հետքեր չեն հայտնաբերվում, և դա այն դեպքում, երբ ամբաստանյալի ձեռքերը կեղտոտ են եղել, որի պայմաններում այդպիսի հետքերի առկայությունը մեծացնում է դանակի վրա դրանք հայտնաբերելու հավանականությունը:

Բացի այդ, տուժողն իր ցուցմունքով հայտնել է, որ ամբաստանյալի մոտ եղել է նաև սև ատրճանակ, ինչը նույնպես մեքենայից դուրս է նետել: Սակայն այս դեպքում ևս հարկ է նկատել, որ ինչպես դեպքի վայրի զննությամբ, այնպես էլ վկաների ցուցմունքներով ձեռք չի բերվել որևէ ապացույց Վազգեն Կարապետյանի մոտ ատրճանակ լինելու վերաբերյալ: Այսինքն՝ տվյալ դեպքում նույնպես անհասկանալի է, թե ինչպես է դեպքի վայրից հայտնաբերվել ենթադրյալ հանցագործության առարկա դանակը, իսկ մյուս առարկան չի հայտնաբերվել, քանի որ ըստ տուժողի՝ երկու առարկաներն էլ միևնույն ժամանակ մեքենայից դուրս են նետվել:

Հաղորդում ընդունելու մասին արձանագրության համաձայն, ինչպես նաև որպես տուժող հարցաքննվելիս Իգոր Կովալյովը տվյալներ է հայտնել իր հետ վիճաբանության ընթացքում Վազգեն Կարապետյանի կողմից իրեն մի քանի՝ մոտ չորս-հինգ ապտակ հասցնելու, մի քանի անգամ իրեն խփելու, դանակը պարանոցի մոտ պահելու և մաշկին սեղմելու, ցավ զգալու հանգամանքների մասին: Սակայն նույն օրը՝ 2015 թվականի փետրվարի 8-ին կատարված դատաբժշկական փորձաքննության թիվ 255 եզրակացության համաձայն՝ Ի.Կովալյովի մոտ, այդ թվում՝ նաև պարանոցի շրջանում, փորձաքննության պահին, վաղեմությամբ՝ դեպքին համապատասխանող մարմնական վնասվածքների օբյեկտիվ հատկանիշներ չեն հայտնաբերվել: Բացի այդ, այդպիսի մարմնական վնասվածքների մասին իր ցուցմունքներում չի հայտնել նաև վկա Ա.Դավթյանը, ում հետ Ի.Կովալյովը, ցուցմունքների համաձայն, այդ միջադեպից անմիջապես հետո հեռացել է դեպքի վայրից:

Բացի այդ, գործի քննության ժամանակ անհրաժեշտ միջոցներ չեն ձեռնարկվել «Նիվա» մակնիշի ավտոմեքենայի վարորդ, դեպքին ականատես վկա Հարությունն Սարգսյանին դատաքննության ընթացքում հարցաքննելու ուղղությամբ, այդ թվում նաև վերջինի կողմից իր հայտնած տվյալներն օբյեկտիվորեն ճիշտ գիտակցելու, ընկալելու, ինչպես նաև՝ վերարտադրելու ունակությունը պարզելու առնչությամբ (համապատասխան փորձաքննություն նշանակելու միջոցով), ինչը ևս հանգեցրել է դատավարության իրավունքի այնպիսի խախտման, որը կարող է ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

Վերաքննիչ դատարանի համար անհասկանալի է նաև Առաջին ատյանի դատարանի այն մոտեցումը, որ տուժող Ի.Կովալյովի՝ գործի քննության ընթացքում տված ցուցմունքները բավարար են ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով մեղսագրվող արարքն ապացուցված համարելու, իսկ մյուս դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով՝ ոչ, քանի որ ենթադրյալ արարքները կատարվել են գրեթե նույն ժամանակահատվածում և միևնույն վկաների ներկայությամբ: Այսինքն՝ վերը նշված դեպքերով ապացուցման առարկան և զանգվածը նույնանում են:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ և 182-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ են նաև շահադիտական շարժառիթը, նպատակը: Շահադիտական նպատակը հանցավորի ձգտումն է՝ նյութական օգուտ ստանալ հափշտակված գույքի հաշվին՝ այն վերցնելով, իրենը դարձնելով և այլն: Իսկ եթե շահադիտական նպատակը բացակայում է, և անձն ապօրինի, անհատույց տիրանում է ուրիշի գույքին այլ շարժառիթով և նպատակով, հափշտակության հանցակազմը բացակայում է: Օրինակ, անձը գույքը վերցնում, տիրանում է՝ հետագայում ոչնչացնելու կամ վնասելու համար, գույքի տիրոջը մերկացնելու, վրեժ լուծելու և այլ նպատակով:

Տվյալ դեպքում տուժողի ցուցմունքից պարզ է դառնում, որ ամբաստանյալ Վազգեն Կարապետյանի և տուժող Իգոր Կովալյովի խոսակցությունը պայմանավորված է եղել տուժողի և ամբաստանյալի նախկին ընկերուհի Քրիստինա Գալոյանի միջև եղած հարաբերությունների հետ կապված: Այսինքն՝ Վազգեն Կարապետյանի խոսակցության սկզբնական նպատակը տուժողի և Քրիստինայի միջև ձևավորված հարաբերությունների մասին տեղեկություններ ստանալն է եղել: Ավելին՝ ամբաստանյալն ի սկզբանե դանակով սպառնացել է տուժողին ոչ թե նրանից գումար կամ այլ գույք պահանջելով, այլ սպառնացել է, որպեսզի տուժողը զանգի Քրիստինային: Այնուհետև, երբ Քրիստինան հեռախոսով հայհոյանք է տվել ամբաստանյալի հասցեին, վերջինը զայրացել է և դանակի սպառնալիքով պահանջել, որ

տուժողը դատարկի իր գրպանները, սակայն տեսնելով, որ տուժողի մոտ գումար չկա, փակել է դանակը: Դրանից հետո ատրճանակի սպառնալիքով գումար է պահանջել, որպեսզի տուժողը հետագայում վճարի:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ եթե նույնիսկ վերը նկարագրված գործողություններն իրականությանը համապատասխանում են, ապա միանշանակ չի կարող հաստատվել, որ ամբաստանյալի մոտ առկա է եղել շահադիտական նպատակով հափշտակություն կատարելու ցանկություն, քանի որ հնարավոր է, որ վերջինի՝ նման գործողություններն իրականացվել են տուժողից վրեժ լուծելու՝ պայմանավորված նախկին ընկերուհու հետ ունեցած հարաբերություններով, ինչպես նաև Քրիստինա Գալոյանի կողմից ամբաստանյալի հասցեին հնչեցրած հայհոյանքներով:

Հետևաբար Վերաքննիչ դատարանը գտնում է, որ գործի նոր քննության ընթացքում պետք է ամբաստանյալի շարժառիթի մասով կրկին քննություն իրականացնել: Այսինքն՝ նոր քննությամբ պետք է պարզել, թե ինչպես է ստացվել, որ ամբաստանյալի սկզբնական գործողությունները, ենթադրյալ սպառնալիքը եղել են անձնական հարաբերություններով պայմանավորված, սակայն հետագայում վերածել են շահադիտական նպատակի (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթեր 124-149):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի համոզմամբ՝ ստորադաս դատարանները կայացրել են անհիմն ու անօրինական դատական ակտեր՝ թույլ տալով նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա: Ընդ որում, բողոքի հեղինակն արձանագրել է, որ թեև Վերաքննիչ դատարանը բեկանել է Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և գործն ուղարկել նոր քննության, սակայն իր որոշմամբ ակնհայտորեն կասկածի տակ է դրել մի շարք ապացույցների արժանահավատությունը՝ գրեթե կանխորոշելով գործի ելքը:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը, վերլուծելով ապացույցների գնահատման և դրանց բավարարության վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԱՐԴ/0632/01/08, թիվ ԵԷԴ/0058/01/10 և թիվ ԵԿԴ/0252/01/13 գործերով որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, համադրել է դրանք սույն գործի փաստական հանգամանքների հետ և եզրահանգել, որ ապացույցների գնահատման ընթացքում չեն պահպանվել ինչպես քրեադատավարական օրենսդրությամբ, այնպես էլ հիշյալ նախադեպային որոշումներով սահմանված չափանիշները, ինչի արդյունքում դատարանը հաստատված չի համարել ամբաստանյալ Վ.Կարապետյանին առաջադրված մեղադրանքը:

8.1. Մասնավորապես՝ բողոքի հեղինակն անհիմն է համարել այն դատողությունը, որ Վ.Կարապետյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված արարք կատարելու հանգամանքը հաստատվում է միայն մեկ ապացույցով՝ տուժող Ի.Կովալյովի ցուցմունքով: Ըստ բողոքաբերի՝ շորթման դրվագն արհեստականորեն տարանջատվել է գործով ձեռք բերված մյուս ապացույցներից՝ առանց հաշվի առնելու այն, որ ավազակությունն ու շորթումը կատարվել են շատ կարճ ժամանակային խզումով: Բողոք բերած անձը փաստել է նաև, որ տուժող Ի.Կովալյովի ցուցմունքին Առաջին ատյանի դատարանի կողմից տրված գնահատականն ինքնահակասող է, քանի որ կարճ ժամանակահատվածում տեղի ունեցած դեպքերի մասին վերջինիս հայտնած տվյալների մի մասը դիտվել է որպես արժանահավատ, իսկ մի մասը՝ ոչ: Թեև դատարանն այդ մասով շեշտադրել է այդ ապացույցի ոչ թե արժանահավատությունը, այլ անբավարարությունը, սակայն այն արժանահավատ համարելու դեպքում, նկատի ունենալով, որ տուժողի ցուցմունքները մնացած մասերով հաստատված են գործով ձեռք բերված այլ ապացույցներով, այն ոչ բավարար համարվել չէր կարող:

9. Բողոքաբերն անդրադարձել է նաև ստորադաս դատարանների կողմից ամբաստանյալ Վ.Կարապետյանին ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով և 118-րդ հոդվածով պատիժ չնշանակելու հարցին՝ նշելով, որ վերջիններս համապատասխան դրվագներով մեղադրական դատավճիռ են կայացրել առանց պատիժ նշանակելու, դրա իրավական հիմքերի բացակայության պայմաններում, հետևաբար այդ դատական ակտերն օրինական և հիմնավոր համարվել չեն կարող: Մասնավորապես՝ բողոքի հեղինակը, հիմնվելով *Ա.Քաբայանի* գործով Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված այն դիրքորոշման վրա, որ հաշտությունը ենթադրում է տուժողի և ենթադրյալ հանցագործի կամավոր և փոխադարձ համաձայնություն միմյանց հետ հաշտվելու վերաբերյալ, նշել է, որ ի տարբերություն վաղեմության ժամկետների անցած լինելու կամ համաներման ակտ ընդունված լինելու դեպքերի, երբ քրեական հետապնդումը բացառող այդ հանգամանքները որպես այդպիսիք կան, սակայն ամբաստանյալը համաձայն չէ այդ հիմքերի գործադրմանը, սույն դեպքում քրեական հետապնդումը բացառող հանգամանքը՝ հաշտությունը, չի ամբողջանում: Այլ կերպ ասած՝ այս դեպքում ոչ թե առկա է քրեական հետապնդումը բացառող հանգամանք, որի կիրառման հետ ամբաստանյալը համաձայն չէ, այլ նման հանգամանք որպես այդպիսին առկա չէ:

10. Վերոշարադրյալի հիման վրա ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և այն մասնակի բեկանելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումն ու գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության՝ նոր պատճառաբանություններով:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

I. Ավազակության և շորթման դրվագներով ստորադաս դատարանների դատական ակտերի օրինականությունը և հիմնավորվածությունը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ են արդյոք ամբաստանյալ Վ.Կարապետյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանելու և այդ մասով գործը նոր քննության ուղարկելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 3. Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:*

4. Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի (…)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:*

2. Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի համաձայն՝ «*1. Դատարանի դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված:*

(…)

3. Դատարանի դատավճիռը հիմնավորված է, եթե՝

դրա հետևությունները հիմնված են միայն դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա.

այդ ապացույցները բավարար են մեղադրանքը գնահատելու համար.

դատարանի կողմից հաստատված ճանաչված հանգամանքները համապատասխանում են դատարանում հետազոտված ապացույցներին:

4. Դատարանի դատավճիռը պետք է լինի պատճառաբանված: Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները»:

13. «Ապացույցների բավարարություն» բնորոշմանը, այն որոշելու չափանիշներին, չափանիշներից յուրաքանչյուրի էությանն ու նշանակությանը

Վճռաբեկ դատարանն անդրադարձել է իր կողմից նախկինում ընդունված որոշումներում: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ապացույցների բավարարությունը ենթադրում է կոնկրետ գործով ապացուցման շրջանակների այնպիսի որոշումը, հավաքված ապացույցները որակական կողմից ապահովեն ապացուցման առարկայի յուրաքանչյուր տարրի պարզումը, իսկ քանակական կողմից՝ այդ հանգամանքների բացահայտման արժանահավատությունը և դատավարական որոշումների հիմնավորվածությունն ու պատճառաբանվածությունը: Ինչ վերաբերում է ապացույցների բավարարությունը որոշելու չափանիշներին, ապա Վճռաբեկ դատարանը նշել է, որ դրանք են՝ 1) անմեղության կանխավարկածը, 2) վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունքը, 3) դատավարական որոշումների հիմնավորվածությունը և պատճառաբանվածությունը (տե՛ս *Միրակ Սաքանյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0058/01/10 որոշման 15-րդ կետը):

Անդրադառնալով ապացույցների բավարարությունը որոշելու չափանիշներից անմեղության կանխավարկածին՝ Վճռաբեկ դատարանը փաստել է. *«[Ք]րեական դատավարությունում կանխավարկածն օրենքով կամ նախադեպային իրավունքով հաստատված այն կանոնն է, որի համաձայն՝ որոշակի հանգամանք համարվում է հաստատված, քանի դեռ օրենքով սահմանված կարգով չի ապացուցվել հակառակը: Մարդու անմեղությունը քրեական դատավարության կարևորագույն կանխավարկածներից է (…): Հանցանք կատարելու մեջ անձի մեղավորությունը հաստատված համարելը ոչ այլ ինչ է, քան անմեղության կանխավարկածի հաղթահարում: Միևնույն ժամանակ անձին դատապարտելու համար համարժեք ապացույցների բավարար համակցության բացակայությունը նշանակում է, որ անձի անմեղության կանխավարկածը հաղթահարված չէ: Այլ խոսքով՝ քրեական դատավարության ընթացքում չապացուցված մեղավորությունը հավասարազոր է ապացուցված անմեղության:*

(…) [Ա]նմեղության կանխավարկածի սկզբունքը ենթադրում է ապացույցների այնպիսի ամբողջության առկայություն, որն անհրաժեշտ է անձի մեղավորությունը ողջամիտ (հիմնավոր) կասկածից վեր ապացուցված համարելու, այլ ոչ թե անձի մեղավորության մասին ենթադրություններ անելու համար:

(…)

*(…) «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշ ասելով՝ պետք է հասկանալ փաստական տվյալների (ապացույցների) այնպիսի համակցություն, որը **բացառում է հակառակի ողջամիտ հավանականությունը**: Վերոգրյալը չի նշանակում, որ հանցանք գործելու մեջ անձի մեղավորությունն ընդհանրապես չի կարող առաջացնել որևէ կասկած, սակայն այդպիսի կասկածի հավանականության դեպքում դրա աստիճանը պետք է լինի*

*անձնշան (խիստ ցածր): Այլ խոսքով՝ մեղադրանքը կազմող յուրաքանչյուր փաստական հանգամանք պետք է հիմնավորվի ապացույցների այնպիսի ծավալով, որը կբացառի դրա ապացուցվածության վերաբերյալ **ցանկացած ողջամիտ կասկած»*** (տե՛ս *Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 30-րդ և 33-րդ կետերը):

13.1. Անդրադառնալով ապացույցների բավարարությունը որոշելու չափանիշներից մյուսին՝ դատավարական որոշումների հիմնավորվածությանը և պատճառաբանվածությանը՝ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում մշտապես ընդգծել է, որ դատական ակտի պատճառաբանվածությունը կոչված է պարզաբանելու, թե ինչու է դատարանը եկել այս կամ այն հետևության, որ իրավանորմերով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս և միևնույն ժամանակ հնարավորություն է ստեղծում վերադաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման համար: Ընդ որում, հաշվի առնելով արդարադատության իրականացման ընթացքում կայացված դատական ակտերի իրավական նշանակությունը՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ քրեական դատավարության ցանկացած փուլում դատարանի կողմից չհիմնավորված, չպատճառաբանված (կամ ոչ պատշաճ պատճառաբանված) որոշումների կայացումն անընդունելի է (տե՛ս *Ֆ.Գալստյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09 որոշման 18-19-րդ կետերը, *Գ.Խնուսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԷԴ/0030/01/12 որոշման 14-րդ կետը):

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վ.Կարապետյանին ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով և 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2015 թվականի փետրվարի 8-ին՝ ժամը 04:30-ի սահմաններում, իր ազգական Հարություն Սարգսյանի վարած ավտոմեքենայով երթևեկելով, նկատել է լուսացույցի ներքո կայանված տաքսի ավտոմեքենայում գտնվող իր ծանոթ Իգոր Կովալյովին, պահանջել է վերջինիս նստել իրենց ավտոմեքենան: Ի.Կովալյովը նստել է նշված ավտոմեքենայի հետևամասում, և միասին գնացել են «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնի տարածք, որտեղ Հ.Սարգսյանն իջել է ավտոմեքենայից, իսկ Վ.Կարապետյանն ավտոմեքենայի սրահում ավազակությամբ ուրիշի գույքը հափշտակելու նպատակով՝ հարձակման եղանակով, այն է՝ դիտավորությամբ որպես զենք օգտագործվող դանակը պահելով Ի.Կովալյովի պարանոցին և սպանության սպառնալիք տալով՝ պահանջել է նրա մոտ եղած գումարը, սակայն վերջինիս մոտ գումար չի եղել: Բացի այդ, Վազգեն Կարապետյանը, նույն օրը՝ ժամը 04:45-ի սահմաններում, «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնի տարածքում կայանված ավտոմեքենայի սրահում այդ ավտոմեքենայի սրահի գրպանիկից վերցնելով ատրճանա-

կին նմանվող չպարզված առարկան և փողն ուղղելով Ի.Կովալյովի ուղղությամբ, իրեն խաբելու՝ իր նախկին ընկերուհի Ք.Գալոյանի հետ ունեցած շփման փաստը թաքցնելու համար սպանության սպառնալիք տալով, Ի.Կովալյովից պահանջել է առանձնապես խոշոր չափերի՝ 4.774.600 ՀՀ դրամին համարժեք 10.000 ԱՄՆ դոլար: Ի.Կովալյովը, հասկանալով, որ սպառնալիքն իրական է, համաձայնել է մինչև 2015 թվականի փետրվար ամսվա երրորդ տասնօրյակը Վ.Կարապետյանին հանձնել 300.000 ՀՀ դրամ գումար (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանն իր դատավճռով անդրադարձել է ամբաստանյալ Վազգեն Կարապետյանի և վկա Արթուր Դավթյանի դատաքննական ցուցմունքներին՝ գտնելով, որ դրանք արժանահավատ չեն: Մասնավորապես՝ ստորադաս ատյանը գտել է, որ ամբաստանյալի ցուցմունքի անարժանահավատության մասին է վկայում այն փաստը, որ ըստ Վ.Կարապետյանի՝ դեպքի օրը և ժամին իր և տուժողի միջև եղած զրույցը տեղի է ունեցել «ՎԱԶ-2121» մակնիշի ավտոմեքենայից դուրս, և տուժողն իրենց ավտոմեքենան չի նստել այն դեպքում, երբ խուզարկությամբ տուժողին պատկանող «Winston» տեսակի ծխախոտի ծխուկը հայտնաբերվել է նշված ավտոմեքենայի հետևի ձախակողմյան հատվածի ներքևի մասից: Իսկ վկա Ա.Դավթյանի ցուցմունքի անարժանահավատության մասին է վկայում այն փաստը, որ ըստ վկայի՝ նա Վազգեն Կարապետյանի հետ շփում չի ունեցել՝ այն դեպքում, երբ հեռախոսահամարների վերծանումների համաձայն՝ նրա հեռախոսահամարից 2015 թվականի փետրվարի 8-ից մինչև նույն ամսվա 12-ն ընկած ժամանակահատվածում պարբերաբար ամբաստանյալի հեռախոսահամարին տարբեր տևողությամբ զանգեր են կատարվել և ընդունվել: Վերոգրյալի և դատաքննությամբ հետազոտված մյուս ապացույցների գնահատման արդյունքում Առաջին ատյանի դատարանը հաստատված է համարել Վ.Կարապետյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հանցագործության կատարումը: Միևնույն ժամանակ Առաջին ատյանի դատարանը գտել է, որ հետազոտված ապացույցներով չի հիմնավորվում ամբաստանյալ Վ.Կարապետյանի մեղավորությունը ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցանքում: Մասնավորապես՝ ստորադաս ատյանը նշել է, որ ամբաստանյալը քննարկվող հոդվածով առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել, բոլոր ցուցմունքներում հերքել է շորթում կատարելու հանգամանքը, և նշված դրվագով նրան մեղադրանք է առաջադրվել բացառապես տուժող Իգոր Կովալյովի ցուցմունքների հիման վրա: Ըստ Առաջին ատյանի դատարանի՝ միայն տուժողի ցուցմունքը բավարար չէ ամբաստանյալի մեղքը ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով ապացուցված համարելու համար (տե՛ս սույն որոշման 6.1-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն անհիմն է համարել Առաջին ատյանի դատարանի հետևությունները և գտել, որ գործով ձեռք բերված ապացույցները հակասական տվյալներ են պարունակում ամբաստանյալ Վ.Կարապետյանին առաջադրված մեղադրանքների ապացուցվածության առումով, որպիսի պայմաններում դեռևս հնարավոր չէ ինչպես մեղավորության, այնպես էլ անմեղության մասով այդ մեղադրանքների շուրջ հիմնավոր և պատճառաբանված հետևության գալու: Արդյունքում Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի դատավճիռը շորթման և ավազակության դրվագներով բեկանել և այդ մասով գործն ուղարկել է նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության (տե՛ս սույն որոշման 3-րդ և 7-րդ կետերը):

15. Սույն որոշման 5-7-րդ, ինչպես նաև 14-րդ կետերում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-13.1-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, անհիմն համարելով ամբաստանյալ Վ.Կարապետյանին առաջադրված մեղադրանքների վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի հետևությունները, պատշաճ վերլուծության ու գնահատականի չի արժանացրել սույն գործում առկա տվյալները և կայացրել է հիմնազուրկ դատական ակտ:

Այսպես՝ Վճռաբեկ դատարանը հաստատված է համարում այն հանգամանքը, որ գործի նյութերում, բացի տուժող Ի.Կովալյովի ցուցմունքներից, առկա չէ որևէ այլ փաստական տվյալ ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով Վ.Կարապետյանին առաջադրված մեղադրանքը հիմնավորելու համար: Այսինքն՝ սույն գործով ձեռք բերված ապացույցների համակցությունը բավարար չէ հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատված համարելու, որ Վ.Կարապետյանի կողմից շորթում է կատարվել: Ուստի Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Վ.Կարապետյանին ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքում արդարացնելու վերաբերյալ եկել է իրավաչափ եզրահանգման:

Անդրադառնալով ամբաստանյալ Վ.Կարապետյանին ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով առաջադրված մեղադրանքին՝ Վճռաբեկ դատարանը հաստատված է համարում հետևյալը.

- այն, որ տուժող Ի.Կովալյովը նստած է եղել ավտոմեքենայի հետևի նստատեղին, իսկ ամբաստանյալ Վ.Կարապետյանը՝ առջևի, հիմնավորվում է խուզարկությամբ ավտոմեքենայի սրահի հետևի հատվածից հայտնաբերված ծխախոտի ծխուկի դատագենետիկական փորձաքննությամբ և տուժող Ի.Կովալյովի ցուցմունքներով,

- այն, որ ամբաստանյալի և տուժողի միջև վիճաբանությունը պայմանավորված է եղել Վ.Կարապետյանի նախկին ընկերուհու հեռախոսահամա-

րին ընդհատված զանգ կատարելու հանգամանքով, հիմնավորվում է տուժող Ի.Կովալյովի բջջային հեռախոսի և նրա հեռախոսահամարի վերծանումների զննության արձանագրություններով,

- այն, որ ամբաստանյալի կողմից դանակ է գործադրվել, և որ վերջինս տուժողից գումար է պահանջել, հիմնավորվում է զննությամբ հայտնաբերված իրեղեն ապացույց դանակի առկայությամբ, տուժող Ի.Կովալյովից առգրավված բաճկոնի վրա դատահետքաբանական ու միկրոմասնիկների համալիր փորձաքննությամբ արձանագրված վնասվածքով և Ի.Կովալյովի ցուցմունքներով (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով ամբաստանյալ Վ.Կարապետյանի մեղավորությունը հաստատված է Առաջին ատյանի դատարանում պատշաճ իրավական ընթացակարգով հետազոտված՝ թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ բավարար ապացույցների ամբողջությամբ:

15.1. Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններին, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանը, փաստելով, որ գործով ձեռք բերված ապացույցները հակասական տվյալներ են պարունակում ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ և 182-րդ հոդվածներով առաջադրված մեղադրանքների ապացուցվածության առումով, իր այդ դատողության հիմքում դրել է անհիմն փաստարկներ:

Այսպես՝

1) Վերաքննիչ դատարանը նշել է. *«Ամբաստանյալ Վազգեն Կարապետյանի ցուցմունքի համաձայն՝ դեպքի օրն իր և տուժողի միջև եղած զրույցը տեղի է ունեցել «ՎԱԶ-2121» մակնիշի (...) ավտոմեքենայից դուրս, և տուժողն իրենց ավտոմեքենան չի նստել, սակայն 2015 թվականի փետրվարի 8-ի՝ խուզարկության արձանագրությամբ տուժողին պատկանող (...) ծխախոտի ծխուկը հայտնաբերվել է նշված ավտոմեքենայի հետևի ճախակողմյան հատվածի ներքևի մասից»*: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալների հակասականության վերաբերյալ սույն փաստարկը ներկայացվել է այն պայմաններում, երբ ելնելով հենց այդ հանգամանքներից՝ Առաջին ատյանի դատարանն անարժանահավատ է համարել ամբաստանյալ Վ.Կարապետյանի ցուցմունքը: Այլ կերպ՝ Առաջին ատյանի դատարանն արդեն իսկ գնահատական էր տվել փաստական տվյալներում առկա վերոհիշյալ հակասությանը՝ արդյունքում արժանահավատ չհամարելով ամբաստանյալի ցուցմունքները:

2) Վերաքննիչ դատարանը, մեջբերելով տուժող Ի.Կովալյովի նախաքննական և դատաքննական ցուցմունքների այն հատվածը, ըստ որի՝ վերջինս նստել է ավտոմեքենայի հետնամասում, ծխել է «Վինսթոն» տեսակի ծխախոտ, ծխուկները լցրել է ավտոմեքենայի մեջ, արդյունքում փաստել

է. «*Մինչդեռ 2015 թվականի փետրվարի 8-ի խուզարկության արձանագրության համաձայն՝ խուզարկությամբ «Վազ 2121» մակնիշի (...) ավտոմեքենայի հետևի ճախակողմյան հատվածի ներքևի մասից հայտնաբերվել է մեկ հատ «Վինսթոն» տեսակի ծխախոտի ծխուկ*»: Նշյալի առնչությամբ Վճռաբեկ դատարանը նախ արձանագրում է, որ համապատասխան ապացույցների վերլուծության արդյունքում Վերաքննիչ դատարանը չի ներկայացրել որևէ հստակ եզրահանգում, թե այդ պայմաններում փաստական տվյալների հակասությունն ինչի՞ն է վերաբերում: Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ եթե անգամ այդպիսի հակասությունն, ըստ դատարանի, վերաբերել է ծխուկների քանակին կամ ծխուկի հայտնաբերման կոնկրետ վայրին, ապա այդ հանգամանքները չունեն որևէ նշանակություն ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ և 182-րդ հոդվածներով առաջադրված մեղադրանքներում ամբաստանյալի մեղքի հարցի լուծման տեսանկյունից,

3) Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն դատողությանը, որ «*Առաջին ատյանի դատարանը հարցադրում չի կատարել՝ պարզելու, թե վկա Արթուր Դավթյանն ինչպես է պատճառաբանում այն հանգամանքը, որ ծխախոտի ծխուկը հայտնաբերվել է նշված ավտոմեքենայի հետևի ճախակողմյան հատվածի ներքևի մասում՝ այն դեպքում, երբ [ըստ վերջինիս ցուցմունքի] տուժող Իգոր Կովալյովը կանգնած է եղել «Նիվա» և «Ջիպ» մակնիշի ավտոմեքենաների միջև*», Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդպիսի հարցադրում արված չլինելը որևէ կերպ չի ազդում սույն քրեական գործի ելքի վրա, քանի որ այդ տվյալների համատեքստում առանցքայինը տուժող Ի.Կովալյովի՝ ավտոմեքենայում նստած լինելու փաստի հարցն էր, ինչը հաստատվել է խուզարկությամբ ավտոմեքենայի սրահի հետևի հատվածից հայտնաբերված ծխախոտի ծխուկի դատագենետիկական փորձաքննությամբ,

4) Վերաքննիչ դատարանը, վերլուծություն կատարելով վկա Ա.Դավթյանի՝ Վ.Կարապետյանի հետ շփում ունեցած չլինելու վերաբերյալ ցուցմունքի և համապատասխան հեռախոսահամարների վերծանումների առնչությամբ, արդյունքում դատողություններ է արել նշյալ փաստական տվյալներում առկա հակասության մասին այն պայմաններում, երբ Առաջին ատյանի դատարանն անդրադարձել է դրանց և հենց այդ հանգամանքները հաշվի առնելով՝ անարժանահավատ համարել վկա Ա.Դավթյանի ցուցմունքները: Այլ խոսքով՝ համապատասխան ապացույցներում առկա փաստական տվյալների միջև հակասությանն Առաջին ատյանի դատարանն արդեն իսկ տվել էր համարժեք իրավական գնահատական:

5) Վերաքննիչ դատարանն արձանագրել է. «*Առաջին ատյանի դատարանը որևէ գնահատական չի տվել այն հանգամանքին, որ, ըստ «դեպքի վայրի զննության» արձանագրության՝ ենթադրյալ դեպքի վայրից հայտնաբերված և իրեղեն ապացույց ճանաչված դանակի վրա անձի նույնացման համար պիտանի մատնահետքեր չեն հայտնաբերվել*»: Սույն դատողության

կապակցությամբ Վճռաբեկ դատարանը նախ փաստում է, որ որոշակի առարկայի (տվյալ դեպքում՝ դանակի) վրա մատնահետքերի բացակայությունը դեռևս չի բացառում այդ առարկայի գործադրման հնարավորությունը: Բացի այդ, Առաջին ատյանի դատարանի դատական ակտի ուսումնասիրությունը վկայում է, որ վերջինս փաստացի եկել է իրավաչափ այն եզրահանգման, որ հետազոտված այլ ապացույցների համատեքստում միայն քննարկվող հանգամանքը բավարար չէ Վ.Կարապետյանի կողմից դանակի գործադրման փաստը հերքելու համար: Իսկ ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի՝ բացառապես վկա Ա.Դավթյանի ցուցմունքների վրա հիմնված այն պատճառաբանություններին, որ ամբաստանյալի ձեռքերի կեղտոտված լինելու հանգամանքը մեծացնում է դանակի վրա հետքեր հայտնաբերելու հավանականությունը, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանը նման դատողություններ անելիս անտեսել է այն, որ վկա Ա.Դավթյանի ցուցմունքներն անարժանահավատ են ճանաչվել Առաջին ատյանի դատարանի կողմից: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, չվիճարկելով վկա Ա.Դավթյանի ցուցմունքներն անարժանահավատ ճանաչելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի փաստարկները, իրավասու չէր հետևություններ անելու այնպիսի հանգամանքների շուրջ, որոնք բխում էին միայն այդ ցուցմունքներից:

6) Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն դատողություններին, որ հակառակ տուժող Ի.Կովալյովի ցուցմունքների՝ որևէ ապացույց ձեռք չի բերվել ամբաստանյալ Վ.Կարապետյանի մոտ եղած և դանակի հետ միաժամանակ ավտոմեքենայից դուրս նետված ատրճանակի վերաբերյալ (ընդ որում, ըստ Վերաքննիչ դատարանի՝ վերջինիս համար անհասկանալի է, որ նշված դանակը զննությամբ հայտնաբերվել է, իսկ ատրճանակը՝ ոչ)՝ Վճռաբեկ դատարանը ոչ տեղին է համարում այդպիսի պատճառաբանությամբ Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելը՝ այն դեպքում, երբ ատրճանակի հետ կապված փաստն ամբաստանյալին մեղսագրվել է միայն շորթման դրվագով, իսկ Առաջին ատյանի դատարանն այդ դրվագով առաջադրված մեղադրանքում Վ.Կարապետյանին ճանաչել է անպարտ և արդարացրել է,

7) Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի փաստարկներին առ այն, որ տուժող Ի.Կովալյովը հայտնել է Վ.Կարապետյանի կողմից իրեն ապտակելու, հարվածելու, դանակը պարանոցի մոտ պահելու և մաշկին սեղմելու մասին, սակայն դատաբժշկական փորձաքննությամբ տուժողի մոտ մարմնական վնասվածքների օբյեկտիվ հատկանիշներ չեն հայտնաբերվել, ապա Վճռաբեկ դատարանը նախ արձանագրում է, որ տուժողի հայտնած տվյալներից դանակի առնչությամբ տված ցուցմունքն է, որ ամբաստանյալ Վ.Կարապետյանին առաջադրված մեղադրանքի տեսանկյունից (մասնավորապես՝ ամբաստանյալին մեղսագրված արարքը նշվածներից ներառում է

միայն տուժողի պարանոցին դանակը պահելու հանգամանքը) սույն գործի համար ունի էական նշանակություն: Իսկ այդ պայմաններում Վերաքննիչ դատարանի մատնանշած փաստական տվյալները չեն կարող կասկածի տակ դնել դանակի գործադրման փաստի առնչությամբ տուժողի ցուցմունքների արժանահավատությունը, եթե հատկապես հաշվի առնենք տուժողի ցուցմունքն առ այն, որ «*երբ ավտոմեքենայի մեջ Վազգենն իր առջև բախտահարել է դանակը, այն դիպել է իր հագին եղած բաճկոնի ձախ թևին և վնասել*» (ընդ որում, տուժողի նմանաբովանդակ հայտարարությունը զետեղվել է նաև վերջինիս բաճկոնի առգրավումը և զննումը կատարելու մասին 2015 թվականի փետրվարի 8-ի արձանագրության մեջ) և փորձագետի եզրակացությունը, ըստ որի՝ *կուրտկայի վրա առկա են մեխանիկական ճգվածքությունների հետևանքով առաջացած պատռվածքներ և սահմանափակ մակերեսով, համեմատաբար սուր ծայր ունեցող, այդ թվում նաև ցանկացած դանակի ծայրի դինամիկ, շոշափող ազդեցության հետևանքով առաջացած վնասվածք:* Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, *որ համապատասխան մարմնական վնասվածքների մասին իր ցուցմունքներում չի հայտնել նաև վկա Ա.Դավթյանը, ում հետ Ի.Կովալյովը, ցուցմունքների համաձայն, այդ միջադեպից անմիջապես հետո հեռացել է դեպքի վայրից,* ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վկա Ա.Դավթյանի ցուցմունքներն Առաջին ատյանի դատարանի կողմից անարժանահավատ ճանաչելու փաստը Վերաքննիչ դատարանի կողմից չվիճարկվելու պայմաններում նրա՝ համապատասխան հանգամանքի մասին չհայտնելը սույն գործի համար չի կարող ունենալ էական նշանակություն,

8) Վկա Հարությունյան Սարգսյանին դատաքննությամբ հարցաքննելու ուղղությամբ անհրաժեշտ քայլեր չձեռնարկելու՝ Վերաքննիչ դատարանի դատողության կապակցությամբ հարկ է նշել, որ Առաջին ատյանի դատարանը 2015 թվականի դեկտեմբերի 1-ի դատական նիստում պաշտպանության կողմին թույլ է տվել որպես վկա հրավիրելու և հարցաքննելու Հ.Սարգսյանին, սակայն հաջորդող դատական նիստերին նշված կողմը տարբեր պատճառաբանություններով չի օգտվել իր իրավունքից (տե՛ս 2015 թվականի դեկտեմբերի 1-ի, 14-ի, 23-ի և 2016 թվականի հունվարի 22-ի դատական նիստերի արձանագրման համառոտագրումներ, հատոր 6-րդ, թերթեր 72-73, 87-90, 96-97 և 103): Վերոգրյալի համատեքստում հաշվի առնելով նաև այն, որ ըստ սույն գործի նյութերի՝ Վ.Կարապետյանին մեղսագրվող արարքի կատարման ժամանակ Հ.Սարգսյանը «Նիվա» մակնիշի ավտոմեքենայում չի եղել, այսինքն՝ նրա հավանական ցուցմունքները, ըստ էության, չէին կարող էական ազդեցություն ունենալ գործի ելքի վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վկա Հ.Սարգսյանին հարցաքննած չլինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի փաստարկը չի կարող բավարար հիմք համարվել Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելու համար,

9) Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում նաև Վերաքննիչ դատարանի հետևյալ դիրքորոշումը. *«(...) [Դ]ատարանի համար անհասկանալի է նաև Առաջին ատյանի դատարանի այն մոտեցումը, որ տուժող Ի.Կովալյովի՝ գործի քննության ընթացքում տված ցուցմունքները բավարար են ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով մեղսագրվող արարքն ապացուցված համարելու, իսկ մյուս դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով՝ ոչ, քանի որ ենթադրյալ արարքները կատարվել են գրեթե նույն ժամանակահատվածում և միևնույն վկաների ներկայությամբ: Այսինքն՝ վերը նշված դեպքերով ապացուցման առարկան և զանգվածը նույնանում են»*: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ եթե շորթման դրվագով Վ.Կարապետյանի մեղավորությունը հիմնավորող առանցքային ապացույցը՝ տուժող Ի.Կովալյովի ցուցմունքը, հաստատող բավարար տվյալներ սույն քրեական գործով ձեռք չեն բերվել, ապա ավազակության դրվագով՝ տուժողի ցուցմունքը հաստատվում է, ի թիվս այլոց, դեպքի վայրի զննությամբ հայտնաբերված և իրեղեն ապացույց ճանաչված դանակով, առգրավում և զննում կատարելու մասին 2015 թվականի փետրվարի 8-ի արձանագրությամբ, ըստ որի՝ առգրավվել և զննության է ենթարկվել դեպքի պահին Ի.Կովալյովի հագին եղած, ի թիվս այլոց, բաճկոնը (ընդ որում, ըստ զննության արդյունքների՝ դրա վրա առկա է եղել պատռվածք), փորձագետի՝ 2015 թվականի ապրիլի 18-ի եզրակացությամբ, ըստ որի՝ *կուրտկայի վրա առկա են մեխանիկական ձգվածություններով առաջացած պատռվածքներ և սահմանափակ մակերեսով, համեմատաբար սուր ծայր ունեցող, այդ թվում նաև ցանկացած դանակի ծայրի դինամիկ, շոշափող ազդեցության հետևանքով առաջացած վնասվածք:* Այլ կերպ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատողությունն առ այն, որ ավազակության և շորթման դրվագներով ապացուցման առարկան և զանգվածը սույն քրեական գործով նույնանում են, ավազակության դրվագով մեղքը հիմնավորող ապացույցների բավարարության պայմաններում չէր կարող շորթման դրվագով արձանագրվել դրանց անբավարարությունը, իրավաչափ չէ:

10) Ինչ վերաբերում է ամբաստանյալ Վ.Կարապետյանին մեղսագրվող արարքի՝ ավազակության շարժառիթի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումներին, ինչպես նաև այդ մասով կրկին քննություն իրականացնելու անհրաժեշտության մասին դատողությանը, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի նյութերով հիմնավորվում է, որ ամբաստանյալի և տուժողի միջև անձնական բնույթի փոխհարաբերությունները պարզելիս տեղի է ունեցել վիճաբանություն, որն այնուհետև վերաճել է հափշտակության: Մասնավորապես, նշված նյութերից հետևում է, որ Վ.Կարապետյանի մոտ առկա տարատեսակ շարժառիթները փոխակերպվել են շահադիտականի՝ սկսած այն պահից, երբ վերջինս դանակի գործադրմամբ

Ի.Կովալյովից *պահանջել է դատարկել գրպաններն ու իրեն տալ ողջ գումարը:* Ասվածը վկայում է ամբաստանյալի մոտ շահադիտական նպատակի առկայության մասին, իսկ հակառակի վերաբերյալ պնդումներն առարկայազուրկ են և չեն բխում գործի նյութերից: Այս պայմաններում Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Վերաքննիչ դատարանի հետևյալ դիրքորոշումը. *«(...) Նոր քննությամբ պետք է պարզել, թե ինչպես է ստացվել, որ ամբաստանյալի սկզբնական գործողությունները, ենթադրյալ սպառնալիքը եղել են անձնական հարաբերություններով պայմանավորված, սակայն հետագայում վերաճել են շահադիտական նպատակի»:*

15.2. Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով սույն որոշման 15-րդ կետում, ինչպես նաև 15.1.-րդ կետի հատկապես 9-րդ ենթակետում արտահայտված իրավական դիրքորոշումները, անհիմն է համարում նաև բողոքաբերի՝ սույն որոշման 8.1.-րդ կետում բարձրացրած փաստարկը:

16. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Վ.Կարապետյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանելու և այդ մասով գործը նոր քննության ուղարկելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված չեն:

17. Ամփոփելով ասվածը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ, 35-րդ, 127-րդ հոդվածների խախտում, որը հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտ կայացնելուն և ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք է:

Սինհնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը, պատշաճ իրավական ընթացակարգով հետազոտելով գործում առկա ապացույցները, եկել է հիմնավոր եզրահանգման ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված արարքում ամբաստանյալի անմեղության և նույն օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված արարքում նրա մեղավորության հարցում: Այլ կերպ՝ Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ: Ուստի այդ մասով անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 12-ի դատավճռին:

II. Ծեծի և գույքը դիտավորությամբ վնասելու դրվագներով քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները.

18. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք ամբաստանյալ Վ.Կարապետյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով և 185-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

19. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝

«*1. Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝*

(...)

6) անցել են վաղեմության ժամկետները.

(...)»:

Նույն օրենսգրքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Դատարանը, հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, լուծում է ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը»:*

Վերոգրյալ հոդվածի վերլուծությունից երևում է, որ դրանում թվարկված են օրենքով սահմանված այն հանգամանքները, որոնք բացառում են ինչպես քրեական հետապնդման հնարավորությունը, այնպես էլ քրեական գործի վարույթը: Նշված հանգամանքներից յուրաքանչյուրի բացահայտման դեպքում քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, իսկ քրեական հետապնդումը՝ դադարեցման:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված հիմքերի կիրառմանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Ա.Սարգսյանի* գործով որոշման մեջ և արձանագրել, որ *«(...) [Թ]ևև [ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված] հիմքերն իրենց բովանդակությամբ, կիրառման իրավական հետևանքներով տարբեր են, այնուամենայնիվ, բոլորն էլ կրում են իմպերատիվ բնույթ, և դրանցից գեթ մեկի առկայությունն արդեն իսկ բացառում է քրեական գործի վարույթը քրեական դատավարության ցանկացած փուլում: Այլ կերպ, եթե վարույթ իրականացնող մարմինը հայտնաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված հանգամանքներից որևէ մեկը, ապա գործի վարույթը ենթակա է կարճման»* (տե՛ս *Արամ Սարգսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0503/06/10 որոշման 20-րդ կետը):

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը կրկնում է իր՝ նախկինում արտահայտված դիրքորոշումն առ այն, որ վճռաբեկ վերանայման սահմանափակումները չունեն բացարձակ բնույթ, և դրանք պետք է դիտարկվեն, ի թիվս

այլոց, քրեական գործով վարույթի կարճման հիմքերը սահմանող հոդվածի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մաս) համատեքստում (տե՛ս, mutatis mutandis, *Մխիթար Էղոյանի և այլոց* վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշման 14-րդ կետը):

20. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով ամբաստանյալ Վ.Կարապետյանին ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով և 185-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրվող արարքներով քրեական պատասխանատվությունից ազատելու հարցին:

Այսպես՝

ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի համաձայն՝ «*Ծեծելը կամ այլ բռնի գործողություններ կատարելը, որը չի առաջացրել սույն օրենսգրքի 117-րդ հոդվածով նախատեսված հետևանքներ (...) պատժվում է տուգանքով նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով*»:

ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Ուրիշի գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որը զգալի չափերի վնաս է պատճառել՝ (...) պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով*»:

ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «*Ոչ մեծ ծանրության հանցագործություններ են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում երկու տարի ժամկետով ազատազրկումը, կամ որոնց համար նախատեսված է ազատազրկման հետ կապ չունեցող պատիժ (...)*»:

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն՝

«*1. Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են հետևյալ ժամկետները.*

(...)

1) երկու տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

(...)

2. Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը (...):

3. Վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է, եթե մինչև նշված ժամկետներն անցնելն անձը կատարում է միջին ծանրության, ծանր կամ

առանձնապես ծանր նոր հանցանք: Այս դեպքում վաղեմության ժամկետի հաշվարկն սկսվում է նոր հանցանքն ավարտված համարելու պահից:

(…)»:

Վերոնշյալ քրեաիրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածում և 185-րդ հոդվածի 1-ին մասում նկարագրված արարքները դիտավորյալ հանցագործություններ են, իսկ դրանց սանկցիայով մի դեպքում նախատեսվում է ազատազրկման հետ կապ չունեցող պատիժ, մյուս դեպքում՝ ազատազրկման ձևով պատժի ժամկետը չի գերազանցում 2 տարին, ուստի քննարկվող հանցավոր արարքները դասվում են ոչ մեծ ծանրության հանցագործությունների թվին: Հետևաբար՝ անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե այդ հանցանքներն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի՝ օրինական ուժի մեջ մտնելու պահն անցել է երկու տարի:

ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով և 185-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված նորմերի վերլուծությունից հետևում է, որ դրանցով նախատեսված հանցակազմերը նյութական են. այդ հանցագործությունները համարվում են ավարտված, երբ առաջանում են նշված հոդվածների դիսպոզիցիայով նախատեսված հանրորեն վտանգավոր հետևանքները:

Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցագործությունն ավարտված համարելու պահից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Սինևույն ժամանակ օրենքով նախատեսված են վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատման դեպքերը: Վճռաբեկ դատարանը վերահաստատում է իր նախադեպային իրավունքում ձևավորած դիրքորոշումն առ այն, որ *«(…) նոր կատարված հանցագործությունն ընդհատում է նախկին հանցագործության վաղեմության ժամկետի ընթացքը հետևյալ պայմանների առկայության դեպքում՝*

1. նախկին հանցագործությունն ավարտվել է և օրենքով դրա համար սահմանված վաղեմության ժամկետը դեռևս չի անցել,

2. նոր կատարվածը միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն է:

Վաղեմության ժամկետի ընդհատվելու դեպքում նախորդ հանցանքի համար ընթացող ժամկետը չեղյալ է համարվում, և հաշվարկը վերսկսվում է նոր հանցագործության ավարտման պահից: Այլ կերպ ասած՝ նոր հանցանքի կատարմամբ նախկին հանցագործության համար նախատեսված վաղեմության ժամկետը չի վերանում, իսկ ինչպես նոր հանցանքի, այնպես էլ նախկին հանցանքի համար օրենքով սահմանված վաղեմության ժամկետները սկսում են հաշվարկվել նոր հանցանքի ավարտման պահից՝ ***յուրաքանչյուր հանցագործության համար ինքնուրույն****:*

(…) Եթե անձը միաժամանակ կատարում է երկու կամ ավելի հանցագործություն, դրանցից յուրաքանչյուրի համար վաղեմության ժամկետը պետք է հաշվարկվի առանձին: Հետևաբար, հանցագործություններից մեկի

համար վաղեմության ժամկետի ավարտի դեպքում անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից այդ հանցագործության համար, սակայն մյուսների համար, որոնց վաղեմության ժամկետները չեն անցել, անձը պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության ընդհանուր կարգով» (տե՛ս Սիրաժ Ղամբարյանի և այլոց գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԴ/0055/01/11որոշման 21-րդ կետը):

21. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ *«Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *«Սույն հոդվածի առաջին մասի 6-րդ և 13-րդ կետերում նշված հիմքերով գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Այս դեպքում գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով»:*

Մեջբերված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը վաղեմության ժամկետն անցնելը դիտում է որպես քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանք՝ սահմանելով, որ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները: Միևնույն ժամանակ քրեադատավարական օրենքը վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու պարտադիր նախապայման է դիտում մեղադրյալի համաձայնությունը, որի բացակայությունը ենթադրում է վարույթի շարունակում ընդհանուր կարգով: Այսինքն՝ այն դեպքում, երբ անձը համաձայն չէ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու, իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և գործի վարույթը կարճելու հետ, նրան պետք է հնարավորություն ընձեռվի դատական քննության միջոցով հասնելու իր անմեղության ապացուցման:

Այն դեպքում, երբ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը լրանում է գործի դատական քննության փուլում, այդ հիմքով նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու ընթացակարգի իրականացման պարտականությունը կրում է դատարանը: Ընդ որում, դատական քննությունը ենթադրում է վարույթն ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ ու վճռաբեկ դատարաններում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 6-րդ մասի մանրամասն վերլուծությունը, *mutatis mutandis*, տե՛ս *Անահիտ Սաղաթելյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ/0022/01/10 որոշումը, *Սիրաժ Ղամբարյանի և այլոց* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԴ/0055/01/11

որոշումը, *Հրանտ Մազմանյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի մարտի 27-ի թիվ ԵԿԴ/0121/11/14 որոշումը):

22. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Վ.Կարապետյանը 2014 թվականի սեպտեմբերի 9-ին՝ ժամը 20-ի սահմաններում, Երևան քաղաքի Արտաշիսյան փողոցի 46/1 հասցեում գտնվող «Փոքր Մայամի» կոչվող հյուրանոցային համալիրի հետնամասում վիճաբանել է Արփինե Հովհաննիսյանի հետ, որի ընթացքում ձեռքին եղած դանակի հետնամասով, այնուհետև ոտքով և ձեռքերով բազմաթիվ հարվածներ է հասցրել Ա.Հովհաննիսյանի դեմքին և մարմնի տարբեր մասերին՝ վերջինիս առողջությանը դիտավորությամբ պատճառելով որովայնի շրջանի քերծվածքների ձևով թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ:

Բացի այդ, Վ.Կարապետյանը 2014 թվականի դեկտեմբերի 23-ին՝ ժամը 23-ի սահմաններում, Երևան քաղաքի Արտաշիսյան փողոցի 46 շենքի մոտ, ուրիշի գույքը վնասելու դիտավորությամբ, քարով դիտավորյալ հարվածել է Քրիստինե Գալոյանին պատկանող «Մազդա» մակնիշի ավտոմեքենայի հետնամասի ապակուն, կոտրել այն, այնուհետև դիտավորությամբ ոտքով հարվածել է նշված ավտոմեքենայի հետին ճախ անվաթևին և վնասել այն՝ Ք.Գալոյանին պատճառելով զգալի չափերի՝ 140.000 ՀՀ դրամի գույքային վնաս (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Վ.Կարապետյանն իրեն մեղսագրված՝ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով և 185-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքների կատարումից հետո՝ 2015 թվականի փետրվարի 8-ին, կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված արարք (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը), որը ծանր հանցագործություն է (ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 4-րդ մաս):

Առաջին ատյանի դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով և 185-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված հանցագործությունները կատարելու մեջ Վ.Կարապետյանի մեղքը հաստատող մեղադրական դատավճիռ է կայացրել 2016 թվականի ապրիլի 12-ին, որը բողոքարկվել է Վերաքննիչ դատարան (տե՛ս սույն որոշման 2-3-րդ կետերը), իսկ Վերաքննիչ դատարանը բողոքի քննության արդյունքում 2016 թվականի դեկտեմբերի 5-ին կայացրել է որոշում Առաջին ատյանի դատարանի դատավճիռը ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով և 185-րդ հոդվածի 1-ին մասով անփոփոխ թողնելու մասին (տե՛ս սույն որոշման 3-րդ կետը): Վերջինիս դեմ պաշտպանության կողմը վճռաբեկ բողոք չի ներկայացրել: Վերաքննիչ դատարանի համապատասխան դատական ակտը Վճռաբեկ դատարան է բողոքարկվել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի կողմից, ում բողոքը Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 28-ի որոշմամբ ընդունվել է վարույթ (տե՛ս սույն որոշման 4-րդ կետը): Այսինքն՝ Վ.Կարապետյանի վերաբերյալ դեռևս առկա չէ օրինական ուժի մեջ մտած դատական ակտ:

23. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 19-21-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ՝

ա) ամբաստանյալ Վ.Կարապետյանին ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով և 185-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված արարքներն ավարտվել են համապատասխանաբար 2014 թվականի սեպտեմբերի 9-ին և նույն թվականի դեկտեմբերի 23-ին: Այնուհետև՝ 2015 թվականի փետրվարի 8-ին՝ նախորդ հանցագործություններն ավարտվելու պահից երկու տարի չանցած, Վ.Կարապետյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված ծանր նոր հանցանք: Այսինքն՝ նախկին հանցագործությունների (ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով և 185-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված) վաղեմության ժամկետների ընթացքն ընդհատվել է նոր հանցագործության կատարմամբ: Հետևաբար նախորդ հանցագործությունների վաղեմության ժամկետների ընթացքի հաշվարկը սկսվել է նոր հանցագործության ավարտման պահից՝ 2015 թվականի փետրվարի 8-ից,

բ) ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով և 185-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված հանցագործություն կատարելու մեջ Վ.Կարապետյանի մեղքը հաստատող մեղադրական դատավճիռը կայացվել է 2016 թվականի ապրիլի 12-ին, որը, սակայն, օրինական ուժի մեջ չի մտել վերաքննիչ և վճռաբեկ բողոքարկման արդյունքում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 383-րդ հոդվածի 1-ին մաս),

գ) Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով և 185-րդ հոդվածի 1-ին մասով անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը Վճռաբեկ դատարան է բողոքարկել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը, իսկ պաշտպանության կողմը Վերաքննիչ դատարանի նույն որոշման դեմ վճռաբեկ բողոք չի բերել:

24. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վ.Կարապետյանին ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով և 185-րդ հոդվածի 1-ին մասով քրեական պատասխանատվության ենթարկելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված վաղեմության ժամկետներն անցել են:

Ուստի սույն գործով ամբաստանյալ Վ.Կարապետյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով և 185-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

Հիշյալ հիմքով ամբաստանյալ Վ.Կարապետյանի նկատմամբ քրեական հետապնդումը առանց վերջինիս համաձայնությունը լրացուցիչ ճշտելու դադարեցնելիս Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում այն հանգամանքը, որ Վ.Կարապետյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով և

185-րդ հոդվածի 1-ին մասով Առաջին ատյանի դատարանի մեղադրական դատավճիռը անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը Վճռաբեկ դատարան է բողոքարկել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը, իսկ պաշտպանության կողմը Վերաքննիչ դատարանի նույն որոշման դեմ վճռաբեկ բողոք չի բերել: Այլ կերպ՝ նշյալ հոդվածներով Վ.Կարապետյանի մեղքի հարցը լուծվել է ստորադաս դատարաններում, և այդ մասով վճռաբեկ բողոք չի ներկայացվել, հետևաբար Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ չի համարում լրացուցիչ ճշտել անձից, թե նա չի՞ առարկում արդյոք, որ իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվի քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

24.1. Սույն որոշման նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումներից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում բողոքաբերի՝ սույն որոշման 9-րդ կետում բարձրացրած փաստարկին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն:

2. Ամբաստանյալ Վազգեն Վաչագանի Կարապետյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 5-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 12-ի դատավճռին: Վազգեն Կարապետյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նշանակված պատժի՝ առանց գույքի բռնագրավման 6 տարի 6 ամիս ժամկետով ազատազրկման կրման սկիզբը հաշվել նրան արգելանքի վերցնելու պահից՝ հաշվակցելով 2015 թվականի փետրվարի 12-ից մինչև գրավի կիրառմամբ ազատ արձակվելն ամբաստանյալ Վ.Կարապետյանի՝ անազատության մեջ գտնվելու ժամկետը:

3. Ամբաստանյալ Վազգեն Վաչագանի Կարապետյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով, 185-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 12-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016

թվականի դեկտեմբերի 5-ի որոշումը բեկանել և փոփոխել: Վազգեն Կարապետյանի նկատմամբ նշված հոդվածներով քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ:

4. Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 12-ի դատավճիռը մնացած մասով թողնել անփոփոխ:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

ԵՇԴ/0120/01/15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Դատավորներ՝ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆ
Ս.ՕՀԱՆՅԱՆ

2017 թվականի օգոստոսի 30-ին ք. Երևանում

Ամբաստանյալ Վազգեն Վաչագանի Կարապետյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)՝ 2017 թվականի օգոստոսի 30-ի որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2014 թվականի մարտի 20-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի վարչության Շենգավիթի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի հատկանիշներով հարուցվել է թիվ 11123014 քրեական գործը:

2014 թվականի սեպտեմբերի 18-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի վարչության Շենգավիթի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է թիվ 11821814 քրեական գործը:

2015 թվականի հունվարի 5-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի և 185-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 11100515 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հունվարի 15-ի որոշմամբ թիվ 11821814 և թիվ 11100515 քրեական գործերը միացվել են, և քննությունը շարունակվել է մեկ վարույթում՝ 11100515 համարով:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հունվարի 28-ի որոշմամբ Վազգեն Կարապետյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով և 2 դրվագով՝ 118-րդ հոդվածով:

2015 թվականի փետրվարի 8-ին ՀՀ քննչական կոմիտեի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ

հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի, 235-րդ հոդվածի 1-ին մասի և 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 11106015 քրեական գործը:

2015 թվականի փետրվարի 15-ին Վազգեն Կարապետյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, 235-րդ հոդվածի 1-ին մասով և 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի փետրվարի 20-ի և 23-ի որոշումներով թիվ 11100515 և թիվ 11123014 քրեական գործերը միացվել են թիվ 11106015 քրեական գործին:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի օգոստոսի 3-ի որոշմամբ Վ.Կարապետյանին ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով, 235-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքի մասը վերացվել է, քրեական հետապնդումը՝ դադարեցվել, և նրան մեղադրանք է առաջադրվել 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 118-րդ հոդվածով և 185-րդ հոդվածի 1-ին մասով:

2015 թվականի օգոստոսի 20-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 12-ի դատավճռով Վ.Կարապետյանը ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով ճանաչվել է անպարտ և արդարացվել: Նույն դատավճռով Վ.Կարապետյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով և 118-րդ հոդվածով՝ առանց պատիժ նշանակելու, իսկ նույն օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով՝ դատապարտվել ազատազրկման 6 տարի 6 ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

3. Ամբաստանյալ Վ.Կարապետյանի պաշտպան Ս.Ոսկանյանի և մեղադրող Կ.Ադամյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի դեկտեմբերի 5-ին որոշում է կայացրել բողոքները մասնակիորեն բավարարելու, ամբաստանյալ Վ.Կարապետյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 12-ի դատավճիռը բեկանելու, և այդ մասով գործը նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության ուղարկելու մասին: Նույն որոշմամբ Վ.Կարապետյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը փոփոխվել է, կիրառվել է կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավ, և գրավի գումարի չափ է սահմանվել 2.000.000 ՀՀ դրամ գումա-

րը: Որոշվել է նաև Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով և 185-րդ հոդվածի 1-ին մասով, թողնել անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի՝ վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 28-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 30-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը բավարարվել է մասնակիորեն, ամբաստանյալ Վ.Կարապետյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 5-ի որոշումը բեկանվել է, և օրինական ուժ է տրվել Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 12-ի դատավճռին: Վ.Կարապետյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նշանակված պատժի՝ առանց գույքի բռնագրավման 6 տարի 6 ամիս ժամկետով ազատազրկման կրման սկիզբը հաշվվել է նրան արգելանքի վերցնելու պահից՝ հաշվակցելով 2015 թվականի փետրվարի 12-ից մինչև գրավի կիրառմամբ ազատ արձակվելն ամբաստանյալ Վ.Կարապետյանի՝ անազատության մեջ գտնվելու ժամկետը:

Վճռվել է նաև ամբաստանյալ Վ.Կարապետյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով, 185-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 12-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 5-ի որոշումը բեկանել և փոփոխել: Վ.Կարապետյանի նկատմամբ նշված հոդվածներով քրեական հետապնդումը դադարեցվել է քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ:

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 12-ի դատավճիռը մնացած մասով թողնվել է անփոփոխ:

2. Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Վ.Կարապետյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«(...) նա 2014 թվականի սեպտեմբերի 9-ին՝ ժամը 20:00-ի սահմաններում, Երևան քաղաքի Արտաշիսյան փողոցի 46/1 հասցեում գտնվող «Փոքր Մայամի» կոչվող հյուրանոցային համալիրի հետնամասում, իր հեռախոսը չվերադարձնելու հարցի շուրջ վիճաբանել է Երևան քաղաքի բնակչուհի Ար-*

փինե Սամվելի Հովհաննիսյանի հետ, որի ընթացքում ձեռքին եղած դանակի հետևամասով, այնուհետև ոտքով և ձեռքերով բազմաթիվ հարվածներ է հասցրել Ա.Հովհաննիսյանի դեմքին և մարմնի տարբեր մասերին՝ վերջինիս առողջությանը դիտավորությամբ պատճառելով որովայնի շրջանի քերծվածքների ձևով, թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ:

Բացի այդ, Վազգեն Վաչագանի Կարապետյանը 2014 թվականի դեկտեմբերի 23-ին՝ ժամը 23:00-ի սահմաններում, Երևան քաղաքի Արտաշիսյան փողոցի 46 շենքի մոտ, ուրիշի գույքը վնասելու դիտավորությամբ, քարով դիտավորյալ հարվածել է Քրիստինե Գալոյանին պատկանող «Մազդա» մակնիշի 27OO216 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի հետևամասի ապակուն, կոտրել այն, այնուհետև դիտավորությամբ ոտքով հարվածել է նշված ավտոմեքենայի հետին ձախ անվաթևին՝ վնասելով այն՝ Ք.Գալոյանին պատճառելով զգալի չափի՝ 140.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

Բացի այդ, նա 2015 թվականի փետրվարի 8-ին՝ ժամը 04:30-ի սահմաններում, իր ազգական Հարությունն Սարգսյանի վարած՝ «ՎԱԶ 21214» մակնիշի, 75LR777 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով երթևեկելով Երևան քաղաքի Բագրատունյաց և Արտաշիսյան փողոցների խաչմերուկում և նկատելով լուսացույցի ներքո կայանված «Օպել Աստրա» մակնիշի 60AR101 հաշվառման համարանիշի տաքսի ավտոմեքենայում գտնվող իր ծանոթ, ուղևոր Իգոր Կովալյովին, պահանջել է վերջինիս նստել «ՎԱԶ 21214» մակնիշի, 75LR777 հաշվառման համարանիշի ավտոմեքենան: Ի.Կովալյովը, նստելով նշված ավտոմեքենայի հետևամասում, գնացել են Երևան քաղաքի Արտաշիսյան փողոցի 46/1 հասցեում գտնվող «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնի տարածք, որտեղ Հ.Սարգսյանը իջել է ավտոմեքենայից, իսկ Վ.Կարապետյանը «ՎԱԶ 21214» մակնիշի, 75LR777 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի սրահում ավազակությամբ ուրիշի գույքը հափշտակելու նպատակով՝ հարձակման եղանակով, այն է՝ դիտավորությամբ որպես զենք օգտագործվող դանակը պահելով Երևան քաղաքի բնակիչ Իգոր Կովալյովի պարանոցին և սպանության սպառնալիք տալով՝ պահանջել է նրա մոտ եղած գումարը, սակայն Ի.Կովալյովի մոտ գումար չի եղել:

Բացի այդ, Վազգեն Կարապետյանը նույն օրը՝ ժամը 04:45-ի սահմաններում, Երևան քաղաքի Արտաշիսյան փողոցի 46/1 հասցեում գտնվող «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնի տարածքում կայանված «ՎԱԶ 21214» մակնիշի 75LR777 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի սրահում ավտոմեքենայի սրահի գրպանիկից վերցնելով ատրճանակին նմանվող չպարզված առարկան և փողն ուղղելով Ի.Կովալյովի ուղղությամբ, իրեն խաբելու՝ իր նախկին ընկերուհի Քրիստինե Սամվելի Գալոյանի հետ ունեցած շփման փաստը թաքցնելու համար սպանության սպառնալիք տա-

լով՝ Ի.Կովալյովից պահանջել է առանձնապես խոշոր չափերի՝ 4.774.600 ՀՀ դրամին համարժեք 10.000 ԱՄՆ դոլար: Ի.Կովալյովը, հասկանալով, որ սպառնալիքն իրական է, համաձայնել է մինչև 2015 թվականի փետրվար ամսվա երրորդ տասնօրյակը Վ.Կարապետյանին հանձնել 300.000 ՀՀ դրամ գումար, որից հետո հեռացել են (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթեր 104-118):

6. Առաջին ատյանի դատարանը, գնահատելով գործով ձեռք բերված և դատաքննությամբ հետազոտված ապացույցները, եզրահանգել է. *«(...) [Առաջին ատյանի դատարանը] հաստատված է համարում (...) Վազգեն Կարապետյանի կողմից 2015թ. փետրվարի 8-ին՝ ժամը 04:30-ի սահմաններում, Երևան քաղաքի Արտաշիսյան փողոցի թիվ 46/1 հասցեում գտնվող «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնի հարևանությամբ, «ՎԱԶ-21214» մակնիշի 75 LR 777 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի սրահում որպես զենք օգտագործվող դանակի գործադրմամբ Իգոր Կովալյովի նկատմամբ ավազակային հարձակում կատարելու փաստը, այսինքն՝ դատարանը հաստատված է համարում Վազգեն Կարապետյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հանցանք կատարելը:*

Միևնույն ժամանակ [Առաջին ատյանի] դատարանը հանգեց հետևության, որ հետազոտված ապացույցներով չի հիմնավորվում ամբաստանյալ Վազգեն Կարապետյանի մեղավորությունը ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցանքում (...):

(...)

[Առաջին ատյանի] դատարանը գտնում է, որ Վազգեն Կարապետյանը պետք է արդարացվի ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, և նա ենթակա է քրեական պատասխանատվության միայն ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, 185-րդ հոդվածի 1-ին մասով և 118-րդ հոդվածով:

Անդրադառնալով ամբաստանյալի նկատմամբ նշանակվող պատժի հարցին՝ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով և 118-րդ հոդվածով այն չպետք է նշանակվի (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 177-183):

7. Վերաքննիչ դատարանը, մասնակիորեն բավարարելով ամբաստանյալ Վ.Կարապետյանի պաշտպան Ս.Ոսկանյանի և մեղադրող Կ.Ադամյանի վերաքննիչ բողոքները, բեկանել է Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 12-ի դատավճիռը՝ գործն ուղարկելով նոր քննության այն հիմնավորումներով, որ *«(...) [Առաջին ատյանի] դատարանի (...) հետևությունները, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ և 182-րդ հոդվածներով առաջադրված մեղադրանքների հետ կապված, հիմնավոր չեն հետևյալ պատճառաբանությամբ.*

(...) [Ի]նչպես նախաքննության ընթացքում, այնպես էլ դատաքննությամբ ձեռք բերված ապացույցները հակասական տվյալներ են պարունակում վերը նշված մեղադրանքների ապացուցվածության առումով, որպիսի պայմաններում առաջադրված մեղադրանքների շուրջ հիմնավոր և պատճառաբանված հետևության գալու, ինչպես մեղավորության, այնպես էլ անմեղության մասով, դեռևս հնարավոր չէ:

(...)

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ գործի նոր քննության ընթացքում պետք է ամբաստանյալի շարժառիթի մասով կրկին քննություն իրականացնել: Այսինքն՝ նոր քննությամբ պետք է պարզել, թե ինչպես է ստացվել, որ ամբաստանյալի սկզբնական գործողությունները, ենթադրյալ սպառնալիքը եղել են անձնական հարաբերություններով պայմանավորված, սակայն հետագայում վերածել են շահադիտական նպատակի (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթեր 124-149):

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվել է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի համոզմամբ՝ ստորադաս դատարանները կայացրել են անհիմն ու անօրինական դատական ակտեր՝ թույլ տալով նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա: Ընդ որում, բողոքի հեղինակն արձանագրել է, որ թեև Վերաքննիչ դատարանը բեկանել է Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և գործն ուղարկել նոր քննության, սակայն իր որոշմամբ ակնհայտորեն կասկածի տակ է դրել մի շարք ապացույցների արժանահավատությունը՝ գրեթե կանխորոշելով գործի ելքը:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը, վերլուծելով ապացույցների գնահատման և դրանց բավարարության վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵՔԴԴ/0632/01/08, թիվ ԵԷԴ/0058/01/10 և թիվ ԵԿԴ/0252/01/13 գործերով որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, համադրել է դրանք սույն գործի փաստական հանգամանքների հետ և եզրահանգել, որ ապացույցների գնահատման ընթացքում չեն պահպանվել ինչպես քրեադատավարական օրենսդրությամբ, այնպես էլ հիշյալ նախադեպային որոշումներով սահմանված չափանիշները, ինչի արդյունքում դատարանը հաստատված չի համարել ամբաստանյալ Վ.Կարապետյանին առաջադրված մեղադրանքը:

Մասնավորապես՝ բողոքի հեղինակն անհիմն է համարել այն դատողությունը, որ Վ.Կարապետյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված արարք կատարելու հանգամանքը հաստատվում է միայն մեկ ապացույցով՝ տուժող Ի.Կովալյովի

ցուցմունքով: Ըստ բողոքաբերի՝ շորթման դրվագն արհեստականորեն տարանջատվել է գործով ձեռք բերված մյուս ապացույցներից՝ առանց հաշվի առնելու այն, որ ավազակությունն ու շորթումը կատարվել են շատ կարճ ժամանակային խզումով: Բողոք բերած անձը փաստել է նաև, որ տուժող Ի.Կովալյովի ցուցմունքին Առաջին ատյանի դատարանի կողմից տրված գնահատականն ինքնահակասող է, քանի որ կարճ ժամանակահատվածում տեղի ունեցած դեպքերի մասին վերջինիս հայտնած տվյալների մի մասը դիտվել է որպես արժանահավատ, իսկ մի մասը՝ ոչ: Թեև դատարանն այդ մասով շեշտադրել է այդ ապացույցի ոչ թե արժանահավատությունը, այլ անբավարարությունը, սակայն այն արժանահավատ համարելու դեպքում, նկատի ունենալով, որ տուժողի ցուցմունքները մնացած մասերով հաստատված են գործով ձեռք բերված այլ ապացույցներով, այն ոչ բավարար համարվել չէր կարող:

8.1. Բողոքաբերն անդրադարձել է նաև ստորադաս դատարանների կողմից ամբաստանյալ Վ.Կարապետյանին ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով և 118-րդ հոդվածով պատիժ չնշանակելու հարցին՝ նշելով, որ վերջիններս համապատասխան դրվագներով մեղադրական դատավճիռ են կայացրել առանց պատիժ նշանակելու, դրա իրավական հիմքերի բացակայության պայմաններում, հետևաբար այդ դատական ակտերն օրինական և հիմնավոր համարվել չեն կարող: Մասնավորապես՝ բողոքի հեղինակը, հիմնվելով *Ա.Բաբայանի* գործով Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված այն դիրքորոշման վրա, որ հաշտությունը ենթադրում է տուժողի և ենթադրյալ հանցագործի կամավոր և փոխադարձ համաձայնություն միմյանց հետ հաշտվելու վերաբերյալ, նշել է, որ, ի տարբերություն վաղեմության ժամկետներն անցած լինելու կամ համաներման ակտ ընդունված լինելու դեպքերի, երբ քրեական հետապնդումը բացառող այդ հանգամանքները որպես այդպիսիք կան, սակայն ամբաստանյալը համաձայն չէ այդ հիմքերի գործադրմանը, սույն դեպքում քրեական հետապնդումը բացառող հանգամանքը՝ հաշտությունը, չի ամբողջանում: Այլ կերպ ասած՝ այս դեպքում ոչ թե առկա է քրեական հետապնդումը բացառող հանգամանք, որի կիրառման հետ ամբաստանյալը համաձայն չէ, այլ նման հանգամանք որպես այդպիսին առկա չէ:

9. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և այն մասնակի բեկանելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումն ու գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության՝ նոր պատճառաբանություններով:

4. Դատավորներ Ե.Դանիելյանի և Ս.Օհանյանի իրավական դիրքորոշումը.

10. Ուսումնասիրելով Վերաքննիչ դատարանի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը, ծանոթանալով քրեական գործի նյութերին և վճռաբեկ բողոքը մասնակիորեն բավարարելու վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշման մեջ տեղ գտած փաստարկներին և հիմնավորումներին՝ համաձայն չենք Վ.Կարապետյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 30-ի որոշման (այսուհետ՝ Որոշում) պատճառաբանական մասի առանձին դրույթների և եզրափակիչ մասի հետ ներքոշարադրյալ պատճառաբանություններով:

11. Վճռաբեկ դատարանը Որոշմամբ արձանագրել է, որ Վերաքննիչ դատարանը, անհիմն համարելով ամբաստանյալ Վ.Կարապետյանին ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքների վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի հետևությունները, պատշաճ վերլուծության ու գնահատականի չի արժանացրել գործում առկա տվյալները և կայացրել է հիմնազուրկ դատական ակտ:

Մասնավորապես արձանագրվել է, որ գործի նյութերում, բացի տուժող Ի.Կովալյովի ցուցմունքներից, առկա չէ որևէ այլ փաստական տվյալ ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով Վ.Կարապետյանին առաջադրված մեղադրանքը հիմնավորելու համար: Այսինքն՝ սույն գործով ձեռք բերված ապացույցների համակցությունը բավարար չէ հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատված համարելու, որ Վ.Կարապետյանի կողմից շորթում է կատարվել: Վճռաբեկ դատարանը փաստել է, որ Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Վ.Կարապետյանին ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքում արդարացնելու վերաբերյալ եկել է իրավաչափ եզրահանգման:

Անդրադառնալով ամբաստանյալ Վ.Կարապետյանին ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով առաջադրված մեղադրանքին՝ Վճռաբեկ դատարանը հաստատված է համարել հետևյալը.

- այն, որ տուժող Ի.Կովալյովը նստած է եղել ավտոմեքենայի հետևի նստատեղին, իսկ ամբաստանյալ Վ.Կարապետյանը՝ առջևի, հիմնավորվում է խուզարկությամբ ավտոմեքենայի սրահի հետևի հատվածից հայտնաբերված ծխախոտի ծխուկի դատագենետիկական փորձաքննությամբ և տուժող Ի.Կովալյովի ցուցմունքներով,

- այն, որ ամբաստանյալի և տուժողի միջև վիճաբանությունը պայմանավորված է եղել Վ.Կարապետյանի նախկին ընկերուհու հեռախոսահամարին ընդհատված զանգ կատարելու հանգամանքով, հիմնավորվում է տուժող

Ի.Կովալյովի բջջային հեռախոսի և նրա հեռախոսահամարի վերծանումների զննության արձանագրություններով,

- այն, որ ամբաստանյալի կողմից դանակ է գործադրվել, և որ վերջինս տուժողից գումար է պահանջել, հիմնավորվում է զննությամբ հայտնաբերված իրեղեն ապացույց դանակի առկայությամբ, տուժող Ի.Կովալյովից առգրավված բաճկոնի վրա՝ դատահետքաբանական ու միկրոմասնիկների համալիր փորձաքննությամբ արձանագրված վնասվածքով և Ի.Կովալյովի ցուցմունքներով:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով ամբաստանյալ Վ.Կարապետյանի մեղավորությունը հաստատված է Առաջին ատյանի դատարանում պատշաճ իրավական ընթացակարգով հետազոտված՝ թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ բավարար ապացույցների ամբողջությամբ:

Վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանի դատողությունները, ըստ որոնց՝ գործով ձեռք բերված ապացույցները հակասական տվյալներ են պարունակում ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ և 182-րդ հոդվածներով ամբաստանյալ Վ.Կարապետյանին առաջադրված մեղադրանքների ապացուցվածության առումով, անհիմն են:

11.1. Ամփոփելով նշվածը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ամբաստանյալ Վ.Կարապետյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանելու և այդ մասով գործը նոր քննության ուղարկելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված չեն:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտել է, որ Առաջին ատյանի դատարանը, պատշաճ իրավական ընթացակարգով հետազոտելով գործում առկա ապացույցները, եկել է հիմնավոր եզրահանգման ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված արարքում ամբաստանյալի անմեղության և նույն օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված արարքում նրա մեղավորության հարցում: Այլ կերպ՝ Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ:

12. Ընդհանրացնելով մեջբերված իրավական դիրքորոշումները և եզրահանգումները՝ նախևառաջ հարկ ենք համարում նշել, որ ամբողջությամբ համաձայն ենք Վճռաբեկ դատարանի մեծամասնության այն դիրքորոշման հետ, որ սույն գործով ձեռք բերված ապացույցների համակցությունը բավարար չէ հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան՝ հաղթահարելով անմեղության կանխավարկածը, հաստատված

համարել, որ Վ.Կարապետյանի կողմից շորթում է կատարվել: Վճռաբեկ դատարանի մեծամասնությունն իրավացիորեն փաստել է, որ Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Վ.Կարապետյանին ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքում արդարացնելու վերաբերյալ եկել է իրավաչափ եզրահանգման: Բացի այդ, համաձայն ենք նաև, որ ամբաստանյալ Վ.Կարապետյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով, 185-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ:

12.1. Անդրադառնալով Վճռաբեկ դատարանի մեծամասնության դիրքորոշմանն առ այն, որ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն, իսկ Վերաքննիչ դատարանի որոշումը՝ բեկանել և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի դատավճռին, հարկ ենք համարում նշել, որ դրա վերաբերյալ ունենք վերապահումներ:

Այսպես՝ սույն գործի փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում կարելի է եզրահանգել, որ Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ բերված պաշտպանի և դատախազի բողոքների քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել բողոքները մասնակիորեն բավարարելու, ամբաստանյալ Վ.Կարապետյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 12-ի դատավճիռը բեկանելու, և այդ մասով գործը նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության ուղարկելու մասին: Վերաքննիչ դատարանի հիշյալ որոշումը մասամբ բարենպաստ է պաշտպանական կողմի համար, քանի որ բեկանելով դատական ակտը՝ Վերաքննիչ դատարանը սահմանել է նոր քննության ծավալ, այդ թվում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով առաջադրված մեղադրանքի կապակցությամբ:

Այսինքն՝ ամբաստանյալ Վ.Կարապետյանն Առաջին ատյանի դատարանում գործի նոր քննության արդյունքում կարող էր իրավաչափորեն ակնկալել իր համար ավելի բարենպաստ դատական ակտի կայացում՝ ի համեմատ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 12-ի դատավճռի: Բացի այդ, եթե գործի նոր քննության ընթացքում կայացված որոշումը չբավարարեր պաշտպանական կողմի պահանջներին, ապա վերջինս, իրացնելով օրենսդրությամբ վերապահված իր իրավունքները, կարող էր վերաքննության կարգով բողոքարկել Առաջին ատյանի դատարանի դատական ակտը:

Հետևաբար՝ Վճռաբեկ դատարանի կողմից ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի բողոքը բավարարելու, Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և Առաջին ատյանի դատարանի դատավճռին ուժ տալու պայմաններում մեղադրյալ Վ.Կարապետյանը հայտվել է ակնհայտ անբարենպաստ վիճակում և զրկվել է իր օրինական շահերը դատական կարգով պաշտպանելու հնարավորությունից:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, մեկնաբանելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածով ամրագրված՝ քրեական գործերով բողոքարկման իրավունքը, *Կրոմբախն ընդդեմ Ֆրանսիայի* վճռում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) *Պայմանավորվող կողմից կարգավիճակը սկզբունքորեն ենթադրում է գնահատման լայն շրջանակ՝ որոշելու համար, թե ինչպես են Կոնվենցիայի 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածով նախատեսված իրավունքներն իրականացվելու: (...) Սակայն վերանայման իրավունքի կապակցությամբ ներպետական օրենսդրության մեջ առկա ցանկացած սահմանափակում, որը նշվել է այդ դրույթում, պետք է, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ դատարան դիմելու իրավունքի համեմատությամբ, օրինական նպատակ հետապնդի և չխախտի այդ իրավունքի բուն էությունը* (...)» (տե՛ս *Կրոմբախն ընդդեմ Ֆրանսիայի գործով 2001 թվականի փետրվարի 13-ի վճիռը, գանգատ 27931/96)*

Ուստի կարծում ենք, որ իրավաչափ չէ Վճռաբեկ դատարանի մեծամասնության այն դիրքորոշումը, որ պետք է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի դատավճռին: Տվյալ դեպքում գտնում ենք, որ իրավաչափ կլիներ վճռաբեկ բողոքը մասնակիորեն բավարարելու և գործը Վերաքննիչ դատարան՝ նոր քննության ուղարկելու տարբերակը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ): Մասնավորապես գտնում ենք, որ տվյալ պարագայում ստացվում է մի իրավիճակ, երբ պաշտպանական կողմը Վճռաբեկ դատարանի որոշման հիման վրա զրկվում է մեղադրական դատավճիռը բողոքարկելու իրավունքից, քանի որ Վճռաբեկ դատարանի որոշումը, որով օրինական ուժ է տրվում Առաջին ատյանի դատական ակտին, բողոքարկման ենթակա դատավարական ակտ չէ:

13. Բացի այդ, հարկ ենք համարում նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վճռաբեկ դատարանը վերանայում է վերաքննիչ դատարանի՝ (...) դատական ակտերը՝ վճռաբեկ բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում»:

Նշված հոդվածի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը *Մ.Էղոյանի և այլոց* վերաբերյալ գործով ձևավորել է իրավական դիրքորոշում այն մասին, որ *«(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրելով «բոլոր դեպքերում» ձևակերպումը՝ օրենսդիրը արտա-*

հայտել է այդ կանոնն իմպերատիվ դարձնելու կամք՝ անկախ վերադաս դատարաններում վարույթի սահմանները որոշող իրավանորմերից (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 2-րդ մաս և 415-րդ հոդվածի 1-ին մաս): Այլ կերպ, եթե վերադաս դատարանը հայտնաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված հանգամանքներից որևէ մեկը, ապա իրավասու է ուղղել այդ դատական սխալը՝ կաշկանդված չլինելով դատական վերանայման սահմանների վերաբերյալ կանոններով:

Նույնը վերաբերում է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում ամրագրված հիմքերին, որոնցով «հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման». նշված ձևակերպումը ևս վկայում է նշված հիմքերն իմպերատիվ դարձնելու օրենսդրի կամքի մասին:

(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ և 415-րդ հոդվածներով նախատեսված սահմանափակումները չեն կրում և չեն կարող կրել բացարձակ բնույթ, քանի որ կողմերի իրավական հետևողականության ապահովման իրավական շահին հակակշիռ իրավական շահը՝ դատական սխալների ուղղումը, որոշակի պայմաններում կարող է էապես մեծարժեք լինել, որպես գերակա հանրային շահ: Ուստի, հիմնարար բնույթ կրող դատական սխալների հայտնաբերման պարագայում Վճռաբեկ դատարանն իրավասու է դուրս գալ բողոքարկման սահմաններից և վերացնել այդ դատական սխալները» (տե՛ս Սխիթար Էլոյանի և մյուսների վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշման 13-14-րդ կետերը):

Այսինքն՝ Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքով նախատեսված է, որ դատարանը կարող է դուրս գալ Վճռաբեկ բողոքի սահմաններից այն դեպքերում, երբ առկա են օրենքով նախատեսված քրեական վարույթը բացառող հանգամանքները, կամ նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել այնպիսի հիմնարար դատական սխալներ, որոնց ուղղումը բխում է քրեական դատավարության նպատակներից և հետապնդում է գերակա հանրային շահ:

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը բողոքի եզրափակիչ մասում խնդրել է *բեկանել Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և այն մասնակի բեկանելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումն ու գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության՝ նոր պատճառաբանություններով:*

Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը տվյալ պարագայում, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի բողոքի հիման վրա, օրինական ուժ տալով Առաջին ատյանի դատարանի դատավճռին, ի վնաս ամբաստանյալի դուրս է եկել վճռաբեկ բողոքի սահմաններից՝ պահանջի մասից (ultra petita)՝ խախտելով

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:

14. Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 40-րդ, 361[1]-րդ, 415-րդ, 419-րդ և 422-րդ հոդվածներով, չհամաձայնելով դատավորների մեծամասնության հետ՝ մնում ենք

հատուկ կարծիքի՝

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը պետք է բավարարվեր մասնակիորեն: Ամբաստանյալ Վազգեն Վաչագանի Կարապետյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 5-ի որոշումը պետք է բեկանվեր և գործն ուղարկվեր նույն դատարան՝ նոր քննության:

Դատավորներ՝ *Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆ*

Ս.ՕՀԱՆՅԱՆ

8.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱԴԴ/0027/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝
դատավորներ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝
դատախազ Մ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
պաշտպան Վ.ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
ամբաստանյալ Հ.ՍԻՄՈՆՅԱՆԻ

2017 թվականի օգոստոսի 30-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Հայկ Մինասի Սիմոնյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 20-ի որոշման դեմ պաշտպան Վ.Վարդանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2014 թվականի նոյեմբերի 10-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ 10804114 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի նոյեմբերի 26-ի որոշմամբ Հայկ Սիմոնյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2014 թվականի դեկտեմբերի 3-ի որոշմամբ Հ.Սիմոնյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի ապրիլի 30-ի որոշմամբ Հ.Սիմոնյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով:

2015 թվականի մայիսի 5-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 29-ի դատավճռով ամբաստանյալ Հ.Սիմոնյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել տուգանք՝ 900.000 (ինը հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով:

3. Մեղադրողի և պաշտպանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2016 թվականի հոկտեմբերի 20-ի որոշմամբ պաշտպանի վերաքննիչ բողոքը մերժել է, իսկ մեղադրողի վերաքննիչ բողոքը՝ բավարարել, Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 29-ի դատավճիռը պատժի մասով փոփոխել է և Հ.Սիմոնյանին դատապարտել ազատազրկման՝ 2 (երկու) տարի ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Հ.Սիմոնյանի պաշտպան Վ.Վարդանյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 21-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Նախաքննության մարմնի կողմից Հ.Սիմոնյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ. *«(...) [Ն]ա ուրիշի խոշոր չափի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորության շուրջ նախնական համաձայնության գալով գործով դեռևս ինքնությունները չպարզված ան-*

ծանց հետո, 2014 թվականի նոյեմբերի 10-ին՝ ժամը 11:00-ից 15:00-ն ընկած ժամանակահատվածում, Երևան քաղաքի Մելքումով փողոցի 2-րդ հասցեում գտնվող, Արշավիր Սկրտչյանին պատկանող տան մոտից գաղտնի հափշտակել է վերջինիս կողմից պահպանվող, «Արգառ» ՍՊԸ-ին պատկանող 2.200.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ թվով 4 հատ բարձր ճնշման գլանանոթներ, դրանք, նախապես պատվիրված, Հայկազ Մերուժանի Սարգսյանին պատկանող «Մերսեդես-բենց» մակնիշի 79 SS 009 հաշվառման համարանիշի կողավոր մոնիպուլյատոր տեսակի բեռնատար ավտոմեքենայի միջոցով տեղափոխել Երևան քաղաքի Միլիկյան թաղամասի հարևանությամբ գտնվող դաշտավայր, որտեղից էլ նախապես պատվիրված, Հրաչյա Ավագի Մխիկյանի կողմից շահագործվող «Կամազ» մակնիշի 836 SU 67 հաշվառման համարանիշի ավտոկռունկի միջոցով գլանանոթները փորձել են բեռնել գործով չպարզված բեռնատար ավտոմեքենայի մեջ: Արշավիր Սկրտչյանը, տեղեկանալով հանցագործության մասին, մեկնել է նշված վայր և փորձել կանխել, որից հետո Հայկ Սիմոնյանը իր հետ գտնվող երկու անձանց հետ գլանանոթները թողնելով՝ դիմել է փախուստի (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 270):

6. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռով Հ.Սիմոնյանին մեղավոր է ճանաչել վերջինիս առաջադրված մեղադրանքում և միևնույն ժամանակ անդրադառնալով նրա նկատմամբ պատիժ նշանակելու հարցին՝ փաստել է. *«(...) [Ա]մբաստանյալ Հայկ Մինասի Սիմոնյանի նկատմամբ, նրա կատարած հանցագործության համար պատիժ նշանակելիս՝ դատարանը հաշվի է առնում հանցագործության բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, հանցավորի անձը, այն, որ նա նախկինում դատված չի եղել, նրա մոտ ախտորոշվել է «Վարքի և էմոցիաների խառը խանգարում պրիմիտիվ անձի մոտ» ախտորոշումը, տուժողի ներկայացուցիչ Ա.Գասպարյանը հայտնել է, որ ամբաստանյալի նկատմամբ բողոք և պահանջ չունի:*

(...)

(...) [Հ]աշվի առնելով ամբաստանյալ Հ.Սիմոնյանի կատարած հանցագործության բնույթը և հանրության համար վտանգավորության աստիճանը, դրա կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցագործությունը կատարելուց հետո նրա դրսևորած դրական վարքագիծը, մասնավորապես այն, որ զերծ է մնացել այլ հանցավոր արարքներ կատարելուց և լինելով ազատության մեջ՝ չի խուսափել քննությունից ու դատից, նրա արարքի սոցիալական հետևանքները, ինչպես նաև հանցագործության անմիջական օբյեկտի՝ սեփականության դեմ ուղղված ոտնձգության բնույթը և այդ ոլորտում պետության քրեական քաղաքականության ուղղվածությունը, դրանք համադրելով նրա անձը բնութագրող տվյալների հետ, հաշվի առնելով նաև ամբաստանյալի պատասխանատ-

վությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների բացակայությունը՝ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Հայկ Սիմոնյանին իր կատարած՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հանցագործության համար ենթակա է պատժի այդ հանցագործության համար նախատեսված պատիժներից առավել մեղմ պատժի՝ տուգանքի ձևով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով, որը համաչափ է կատարված արարքին, ինչպես նաև անհրաժեշտ և բավարար է սոցիալական արդարությունը վերականգնելու, Հ.Սիմոնյանին ուղղելու և նրա կողմից նոր հանցանքի կատարումը կանխելու համար:

Դատարանը գտնում է, որ նշանակված պատիժն ամբաստանյալ Հայկ Սիմոնյանը պետք է կրի, քանի որ դրան խոչընդոտող հանգամանքներ առկա չեն (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 157,159):

7. Վերաքննիչ դատարանը, պատժի մասով փոփոխելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, նշել է. *«(...) Քննության առնելով Հայկ Սիմոնյանի նկատմամբ նշանակված պատիժը խստացնելու վերաբերյալ մեղադրող Մ.Գրիգորյանի վերաքննիչ բողոքում բերված պատճառաբանությունները, հաշվի առնելով կատարված հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, հանցագործության կատարման եղանակը, **դեպքից հետո ամբաստանյալի կողմից դրսևորած վարքագիծը, ինչը մասնավորապես արտահայտվել է նաև իր մեղքը չընդունելով, հանցանքի համար իրեն մեղավոր չճանաչելով, որն ըստ էության չի վկայում նրա զղջանքի մասին և նրա անձը բնութագրող կարևոր հանգամանք է,** վերոնշյալ, ինչպես նաև պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների բացակայության պայմաններում վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասով [Ա]ռաջին ատյանի դատարանը Հայկ Սիմոնյանի նկատմամբ նշանակել է հոդվածի սանկցիայով նախատեսված նվազ խիստ պատժատեսակ տուգանքի ձևով, որը չի համապատասխանում նրա կողմից կատարված հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին և ամբաստանյալի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար չէ նրան ուղղելու և հանցագործությունները կանխելու համար:*

Առաջին ատյանի դատարանն ըստ էության թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների խախտում, որի պայմաններում չեն կարող իրագործվել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակները:

(...)

(...) [Ա]ռաջին ատյանի դատարանը ամբաստանյալի նկատմամբ նշանակել է մեղմ պատիժ, հետևաբար մեղադրողի վերաքննիչ բողոքը պետք է բավարարել և Հայկ Սիմոնյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով [Առաջին ատյանի] դատարանի 2016 թվականի ապրիլի 29-ի դատավճիռը պատժի մասով փոփոխել՝ նրան դատապարտելով ազատազրկման 2 տարի ժամանակով (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 95-96):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը, փոփոխելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, թույլ է տվել դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա:

Ի հիմնավորումն վերոհիշյալ փաստարկի՝ բողոքաբերը փաստել է, որ Վերաքննիչ դատարանը, ճշելով ամբաստանյալի կողմից մեղքը չխոստովանելու հանգամանքը, ինչպես նաև մեղադրյալի պաշտպանության իրավունքը մեկնաբանելով իբրև պատիժն ու պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք, եկել է այն հետևության, որ ամբաստանյալի նկատմամբ նշանակվել է մեղմ պատիժ: Բացի այդ, ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել ամբաստանյալ Հ.Սիմոնյանի՝ դատվածություն չունենալու, դեպքից հետո երկու տարի շարունակ որևէ հակահասարակական արարք չկատարելու և դրական վարքագիծ դրսևորելու հանգամանքները:

8.1. Բողոքաբերը նշել է նաև, որ սույն գործով արարքը որակվել և մեղադրական բնույթի դատական ակտ է կայացվել նյութական իրավունքի ու քրեադատավարական օրենքի ակնհայտ էական խախտումներով, անձի անմեղության կանխավարկածի, պաշտպանության կողմի իրավունքների բացահայտ ոտնահարմամբ, գործով վարույթի կարճման և քրեական հետապնդման դադարեցման հիմքերի առկայության ու դրա վերաբերյալ պաշտպանության կողմի միջնորդությունների բովանդակությանը գործն ըստ էության լուծող դատական ակտում չանդրադառնալու կամ խեղաթյուրելու, մեղադրանքը հերքող հետազոտված թույլատրելի ապացույցներն այդ ակտում չհիշատակելով՝ կամայականորեն քննության չառնելու և ամբաստանյալի մեղավորության վերաբերյալ առկա չփարատված կասկածներն ընդդեմ ամբաստանյալի մեկնաբանելու միջոցով:

9. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 20-ի որոշումը և կարճել գործի վարույթը: Ամբաստանյալ Հ.Սիմոնյանի նկատմամբ հանցակազմի բացակայության հիմքով դադարեցնել քրեական հետապնդումը՝ վերացնելով խափանման միջոցը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այդ առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրանքը չընդունելն ու մեղավոր չճանաչելը պատիժ նշանակելիս որպես հանցավորի անձը բացասականորեն բնութագրող հանգամանք հաշվի առնելու թույլատրելիության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր են արդյոք ամբաստանյալ Հ.Սիմոնյանի նկատմամբ նշանակված պատժատեսակը փոփոխելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

12. ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածը սահմանում է. *«Մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով»:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ «*Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.*

(…)

գ) պաշտպանելու իրեն անձամբ (…),

(…)»:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննության ժամանակ ունի առնվազն հետևյալ երաշխիքների իրավունքը՝ լիակատար հավասարության հիման վրա.*

(…)

է) չպարտադրվի իր դեմ ցուցմունքներ տալու կամ իրեն մեղավոր ճանաչելու»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Կասկածյալը և մեղադրյալն ունեն պաշտպանության իրավունք:*

2. Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին բացատրել նրանց իրավունքները և ապահովել օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից նրանց պաշտպանվելու փաստացի հնարավորությունը:

(...)

5. Կասկածյալին և մեղադրյալին չի կարելի հարկադրել ցուցմունքներ տալ, նյութեր ներկայացնել քրեական վարույթն իրականացնող մարմնին կամ նրան որևէ աջակցություն ցույց տալ:

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածը սահմանում է. «*1.Մեղադրյալն ունի պաշտպանության իրավունք: Քրեական վարույթն իրականացնող մարմինը մեղադրյալին հնարավորություն է ընձեռում օրենքով չարգելված բոլոր միջոցներով իրականացնել պաշտպանության իր իրավունքը:*

2. Մեղադրյալը, սույն օրենսգրքով սահմանված կարգով, իրավունք ունի՝

(...)

13) հայտարարել իր մեղավորության կամ անմեղության մասին.

(...)»:

3. Մեղադրյալի կողմից իր իրավունքներից օգտվելը կամ դրանցից օգտվելուց հրաժարվելը չպետք է մեկնաբանվի ի վնաս նրա և նրա համար առաջացնի որևէ անբարենպաստ հետևանք (...)»:

13. Մեջբերված նորմերի առնչությամբ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ մեղադրյալի (կասկածյալի) պաշտպանության իրավունքը քրեական դատավարության հիմնարար սկզբունքներից մեկն է. այն հանդիսանում է նաև Կոնվենցիայով երաշխավորված «զենքերի հավասարության» և ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ ամրագրված մրցակցության սկզբունքների ապահովման կարևորագույն երաշխիք: Մեղադրյալի (կասկածյալի) պաշտպանության իրավունքը նրան վերապահված դատավարական իրավունքների ամբողջությունն է, որը նրան հնարավորություն է տալիս հանդես գալ որպես դատավարության ինքնուրույն սուբյեկտ, լրիվ կամ մասնակիորեն հերքել իրեն վերագրվող հանցանքը կատարած լինելու պնդումը, ինչպես նաև պաշտպանել իր իրավունքներն ու օրինական շահերը: Պաշտպանության իրավունքն անձի համար գործուն «զենք» է դիմակայելու իշխանական լիազորություններով օժտված պետական մարմինների գործողություններին: Այս առումով պաշտպանության իրավունքը քրեական դատավարության խնդիրների, մասնավորապես՝ հանցավոր արարքի հետ կապված պետական իշխանության ինքնիրավ գործողություններից և չարաշահումներից անձի պաշտպանության, ինչպես նաև անօրինական կամ առանց անհրաժեշտության դատավարական հարկադրանքի միջոցների, պատժի, իրավունքների և ազատությունների այլ սահմանափակման չենթարկվելու (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ, 2-րդ մասի 3-րդ կետ) իրացման միջոցներից է: Սակայն միևնույն ժամանակ իրեն առաջադրված մեղադրանքից պաշտպանվելու անձի իրավունքը բացարձակ իրավունք չէ, և

դրա շրջանակները սահմանափակված են «օրենքով չարգելված բոլոր միջոցներով» (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ, 65-րդ հոդվածներ) ու «չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին» (ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդված) չափորոշիչներով (տե՛ս, mutatis mutandis, Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի մարտի 26-ի՝ *Նորիկ Պողոսյանի* գործով թիվ ՀՅՔԴ-2/0153/01/08 որոշման 25-րդ կետը, 2015 թվականի հունիսի 5-ի՝ *Հեղինե Գալստյանի* գործով թիվ ԼԴ/0051/01/14 որոշման 29-րդ կետը):

13.1. Վերոգրյալի լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրյալի կողմից իր մեղավորության կամ անմեղության մասին հայտարարելը վերջինիս օրենքով վերապահված իրավունքն է (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետ), իսկ իր իրավունքից օգտվելը կամ դրանցից օգտվելուց հրաժարվելը **չի կարող մեկնաբանվել ի վնաս նրա և նրա համար առաջացնել որևէ անբարենպաստ հետևանք** (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի 3-րդ մաս): Այդ համատեքստում Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ առաջադրված մեղադրանքը չընդունելով և իրեն մեղավոր չճանաչելով՝ մեղադրյալը չի խախտում այլոց իրավունքները, չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին, այլ օգտվում է օրենքով իրեն վերապահված իրավունքից, ուստիև այդ իրավունքի իրացումն ի վնաս նրան մեկնաբանելը, այդ թվում՝ պատիժ նշանակելիս այն որպես անձը բացասականորեն բնութագրող հանգամանք դիտելն անթույլատրելի է և հանգեցնում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ վավերացված միջազգային պայմանագրերով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով երաշխավորված մեղադրյալի պաշտպանության իրավունքի խախտմանը:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար*»:

Նույն օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «*Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները*»:

Նույն օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն՝ «*1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:*

2. Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է. *«Դատարանի դատավճիռը պետք է լինի պատճառաբանված: Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 399-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Գտնելով, որ դատավճռում նշանակված պատիժն անարդարացի է ակնհայտ խիստ կամ ակնհայտ մեղմ լինելու պատճառով, չի համապատասխանում հանցագործության ծանրությանը և ամբաստանյալի անձին, վերաքննիչ դատարանը մեղմացնում կամ խստացնում է պատիժը՝ ղեկավարվելով պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով»:*

15. ՀՀ քրեական օրենսգրքի մեջբերված նորմերի (պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների վերլուծությանը Վճռաբեկ դատարանը մանրամասն անդրադարձել է *Նարեկ Սարգսյանի* գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0042/01/11 որոշման 14-23-րդ կետերում) լույսի ներքո մեկնաբանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 399-րդ հոդվածի 1-ին մասը՝ Վճռաբեկ դատարանը կրկնում է. *«[Վ]երաքննիչ դատարանն իրավասու է պատժի մասով փոփոխել առաջին ատյանի դատարանի դատական ակտը հետևյալ դեպքերում.*

1) Առաջին ատյանի դատարանի կողմից պատիժ նշանակելիս չեն պահպանվել պատժի նշանակման ընդհանուր սկզբունքները,

2) Առաջին ատյանի դատարանի կողմից պատիժ նշանակելիս հաշվի չեն առնվել հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, հանցավորի անձը բնութագրող, ինչպես նաև պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները,

3) Առաջին ատյանի դատարանի կողմից վերոնշյալ հանգամանք(ներ)ը հաշվի չառնելը հանգեցրել է անհամաչափ և պատժի նպատակների տեսանկյունից բավարարության չափանիշին չհամապատասխանող պատժի նշանակման:

(...) [Ա]ռաջին ատյանի դատարանի կողմից պատիժ նշանակելիս վերոնշյալ պահանջների չպահպանման վերաբերյալ վերաքննիչ դատարանի հետևությունները պետք է լինեն պատճառաբանված: Այլ կերպ ասած՝ պատիժն ակնհայտ խիստ կամ ակնհայտ մեղմ լինելու հիմքով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը փոփոխելիս Վերաքննիչ դատարանը պարտավոր է պատճառաբանել, թե պատժի նշանակման հատկապես որ սկզբունքը կամ սկզբունքները չեն պահպանվել, հանցագործության՝ հան-

րության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, հանցավորի անձը բնութագրող, ինչպես նաև պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող որ հանգամանքները հաշվի չեն առնվել, և արդյոք այդ հանգամանքները հաշվի չառնելն է հանգեցրել անհամաչափ և պատժի նպատակների տեսանկյունից բավարարության չափանիշին չհամապատասխանող պատժի նշանակման: Այսինքն՝ եթե Վերաքննիչ դատարանը, գտնելով, որ դատավճռում նշանակված պատիժն անարդարացի է ակնհայտ խիստ կամ ակնհայտ մեղմ լինելու պատճառով, պետք է պատճառաբանի, թե ինչում է արտահայտվել պատժի խստության կամ մեղմության ակնհայտությունը» (տե՛ս *Նարեկ Սարգսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0042/01/11 որոշման 24-րդ կետը):

15.1. Միևնույն ժամանակ, վերահաստատելով դատական ակտի պատճառաբանված լինելու հատկանիշի առնչությամբ նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ դատական ակտի պատճառաբանությունների հիմքում չեն կարող դրվել վերացական, ընդհանուր բնույթի դատողություններ: Պատճառաբանությունը պետք է կառուցվի տրամաբանորեն կապված և գործի փաստական հանգամանքներից բխող հստակ, որոշակի և համոզիչ հետևությունների վրա, ուստիև դատական ակտի պատճառաբանությունների հիմքում վերացական, ընդհանրական դատողությունների առկայությունն անմիջականորեն վկայում է այդպիսի պատճառաբանության ոչ պատշաճ լինելու մասին (տե՛ս *Անդրեյ Պինչուկի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ՏԴ-1/0043/01/16 որոշման 12.1-րդ կետը):

16. Սույն գործի նյութերից երևում է, որ Հ.Սիմոնյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, ուրիշի խոշոր չափի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորության շուրջ նախնական համաձայնության գալով գործով դեռևս ինքնությունները չպարզված անձանց հետ, 2014 թվականի նոյեմբերի 10-ին՝ ժամը 11:00-ից 15:00-ն ընկած ժամանակահատվածում, Երևան քաղաքի Մելքումով փողոցի 2-րդ հասցեում գտնվող, Ա.Մկրտչյանին պատկանող տան մոտից գաղտնի հափշտակել է վերջինիս կողմից պահպանվող, «Արզառ» ՍՊԸ-ին պատկանող 2.200.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ թվով 4 բարձր ճնշման գլանանոթներ, դրանք տեղափոխել Երևան քաղաքի Սիլիկյան թաղամասի հարևանությամբ գտնվող դաշտավայր, որտեղից էլ գլանանոթները փորձել է բեռնել գործով չպարզված բեռնատար ավտոմեքենայի մեջ: Ա.Մկրտչյանը, տեղեկանալով հանցագործության մասին, մեկնել է նշված վայր և փորձել կանխել, որից հետո Հ.Սիմոնյանն իր հետ գտնվող երկու անձանց հետ գլանանոթները թողնելով՝ դիմել է փախուստի (տե՛ս սույն որոշման 5-րդ կետ):

Ամբաստանյալ Հ.Սիմոնյանին առաջադրված մեղադրանքում մեղավոր ճանաչելով և մեղսագրված հանցավոր արարքի համար դատապարտելով տուգանքի՝ 900.000 (ինը հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով՝ Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ հաշվի է առնում հանցագործության բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, դրա կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքների բացակայությունը, հանցագործությունը կատարելուց հետո նրա դրսևորած դրական վարքագիծը, մասնավորապես այն, որ զերծ է մնացել այլ հանցավոր արարքներ կատարելուց և լինելով ազատության մեջ՝ չի խուսափել քննությունից ու դատից, նրա արարքի սոցիալական հետևանքները, ինչպես նաև այն հանգամանքը, որ ամբաստանյալի մոտ արձանագրվել է «Վարքի և էմոցիաների խառը խանգարում պրիմիտիվ անձի մոտ» ախտորոշումը (տե՛ս սույն որոշման 2-րդ և 6-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը, պատժի մասով փոփոխելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, մասնավորապես՝ տուգանքի ձևով նշանակված պատիժը փոխարինելով երկու տարի ժամկետով ազատազրկման ձևով պատժի, փաստել է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների խախտում, որի պայմաններում չեն կարող իրագործվել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակները: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ հաշվի է առնում Հ.Սիմոնյանի կատարած հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, հանցագործության կատարման եղանակը, ինչպես նաև ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքների բացակայությունը, դեպքից հետո նրա ***դրսևորած վարքագիծը, ինչը մասնավորապես արտահայտվել է նաև մեղքը չընդունելով, հանցանքի համար մեղավոր չճանաչելով, որը չի վկայում ամբաստանյալի զղջանքի մասին և նրա անձը բնութագրող կարևոր հանգամանք է,*** եկել է այն եզրահանգման, որ Առաջին ատյանի դատարանի կողմից տուգանքի ձևով նշանակված պատիժը չի համապատասխանում Հ.Սիմոնյանի կատարած հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին և ամբաստանյալի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար չէ նրան ուղղելու և հանցագործությունները կանխելու համար (տե՛ս սույն որոշման 3-րդ և 7-րդ կետերը):

17. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները դիտարկելով սույն որոշման 12-15.1.-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վե-

րաքննիչ դատարանը, պատժի մասով բեկանելով և փոփոխելով ստորադաս դատարանի դատական ակտը, թույլ է տվել դատական սխալ:

Այսպես՝ Վճռաբեկ դատարանը նախ փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, իր կողմից կայացված դատական ակտի հիմքում որպես պատճառանություն դնելով Հ.Սիմոնյանի կատարած հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, բնույթը և հանցագործության կատարման եղանակը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը), չի հիմնվել փաստական որևէ կոնկրետ տվյալի վրա, չի ներկայացրել որևէ հստակ, որոշակի և համոզիչ փաստարկ, այլ հանդես է եկել միայն ընդհանրական բնույթի դատողությամբ, ինչը չի կարող իրավաչափ համարվել (այդ առումով տե՛ս սույն որոշման 14-15.1.-րդ կետերը):

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, պատժի մասով բեկանելով և փոփոխելով ստորադաս դատարանի դատական ակտը, փաստել է, որ հաշվի է առնում *դեպքից հետո ամբաստանյալի դրսևորած վարքագիծը, ինչը մասնավորապես արտահայտվել է նաև իր մեղքը չընդունելով, հանցանքի համար իրեն մեղավոր չճանաչելով, որն ըստ էության չի վկայում նրա զղջանքի մասին և նրա անձը բնութագրող կարևոր հանգամանք է:* Այդ առնչությամբ Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով սույն որոշման 12-13.1.-րդ կետերում շարադրված վերլուծությունը, արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, անտեսելով ամբաստանյալի պաշտպանության իրավունքը, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նրան տրված երաշխիքները, ամբաստանյալի կողմից իր դատավարական իրավունքից օգտվելը՝ անմեղության մասին հայտարարելը, ինչը տվյալ դեպքում դրսևորվել է մեղադրանքը չընդունելով և իրեն մեղավոր չճանաչելով, փաստացի գնահատել է որպես ամբաստանյալի անձը բացասականորեն բնութագրող հանգամանք՝ խախտելով ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ վավերացված միջազգային պայմանագրերով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով երաշխավորված ամբաստանյալի պաշտպանության իրավունքը: Այլ կերպ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Հ.Սիմոնյանի նկատմամբ նշանակված պատիժը փոփոխելիս Վերաքննիչ դատարանը փաստացի որպես հանցավորի անձը բացասականորեն բնութագրող հանգամանք է դիտել այնպիսի փաստական տվյալ, որը որպես այդպիսին գնահատելն անթույլատրելի է:

18. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, եզրահանգելով, որ Առաջին ատյանի դատարանի դատավճռով նշանակված պատիժն անարդարացի է՝ մեղմ լինելու պատճառով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ չի պատճառաբանել, թե ինչում է արտահայտվել դրա մեղմության ակնհայտությունը: Ուստին Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաս-

տանյալ Հ.Սիմոնյանի նկատմամբ նշանակված պատժատեսակը փոփոխելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր չեն:

Ինչ վերաբերում է բողոքաբերի՝ սույն որոշման 8.1-րդ կետում բարձրացրած փաստարկներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանց կապակցությամբ ստորադաս դատարանները թույլ չեն տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող որևէ դատական սխալ, որը կարող էր բավարար համարվել հիշյալ դատարանների դատական ակտերը նշված հիմքով բեկանելու և գործի վարույթը կարճելու համար, հետևաբար բողոքաբերի փաստարկներն այդ մասով հիմնավոր չեն:

19. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ, 65-րդ, 399-րդ հոդվածների պահանջների խախտում, ինչի արդյունքում ոչ ճիշտ են կիրառվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ հոդվածները: Նշված խախտումները, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ, 406-րդ հոդվածների, հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը, պահպանելով պատժի նշանակման ընդհանուր սկզբունքները, հաշվի առնելով հանցավորի անձը բնութագրող հանգամանքները, կատարված հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների բացակայությունը, ամբաստանյալի նկատմամբ նշանակել է համաչափ պատիժ: Այլ կերպ՝ Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ: Ուստի արդարադատության արդյունավետության շահերից ելնելով՝ անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 29-ի դատավճռին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Հայկ Սինասի Սիմոնյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 20-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 29-ի դատավճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

9.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱՔԴ/0190/11/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ	Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝	
դիմողի ներկայացուցիչ	Դ.ԳՅՈՒՐՋՅԱՆԻ
դատախազ	Վ.ԴՈԼՄԱԶՅԱՆԻ

2017 թվականի օգոստոսի 30-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով դիմող Վարտգեզ Լիվանի Գասպարիի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի մարտի 9-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաղորդման հիման վրա ՀՀ հատուկ քննչական ծառայությունում 2016 թվականի մարտի 5-ին ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 62204416 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի հունիսի 2-ի որոշմամբ Վարտգեզ Լիվանի Գասպարին ճանաչվել է տուժող:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի սեպտեմբերի 5-ի որոշմամբ քրեական գործի վարույթը կարճվել է՝ հանցակազմի բացակայության հիմքով, Սարգիս Գրիգորյանի, Սամվել Դարբինյանի և Մխիթար Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով քրեական հետապնդում չի իրականացվել՝ նրանց արարքներում հանցակազմի բացակայության հիմքով, Արթուր Այվազյանի, Վարդան Հովհաննիսյանի ու Արթուր Հարությունյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածով քրեական հետապնդում չի իրականացվել՝ նրանց արարքներում հանցակազմի բացակայության հիմքով, Վարանցով Ղազարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածով քրեական հետապնդում չի իրականացվել՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով, Վարտգեզ Գասպարիի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածով չի իրականացվել քրեական հետապնդում՝ նրա արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

Հիշյալ որոշման դեմ Վարտգեզ Գասպարին բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազություն, որը ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի՝ 2016 թվականի սեպտեմբերի 26-ի որոշմամբ մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

2. Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի սեպտեմբերի 5-ի որոշման և դրա դեմ ներկայացված բողոքը մերժելու մասին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի՝ 2016 թվականի սեպտեմբերի 26-ի որոշման դեմ Վ.Գասպարիի ներկայացուցիչ Դավիթ Գյուրջյանը բողոք է ներկայացրել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով որոշում կայացնել Վ.Գասպարիի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին:

Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 20-ի որոշմամբ Վ.Գասպարիի ներկայացուցիչ Դ.Գյուրջյանի բողոքը մերժվել է:

3. Առաջին ատյանի դատարանի վերոհիշյալ որոշման դեմ Վ.Գասպարիի ներկայացուցիչ Դ.Գյուրջյանը ներկայացրել է վերաքննիչ բողոք:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2017 թվականի մարտի 9-ին որոշում է կայացրել դիմող Վ.Գասպարիի ներկայացուցիչ Դ.Գյուրջյանի վերաքննիչ բողոքը բավարարելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 20-ի որոշումը բեկանելու և Վ.Գասպարիի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի մարտի 9-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 29-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 2016 թվականի փետրվարի 25-ի՝ ՀՀ գլխավոր դատախազին ուղղված գրության համաձայն. *«(…) ս.թ. փետրվարի 24-ին Վ.Գասպարիի փաստաբանը Մարդու իրավունքների պաշտպանի աննձնակազմ ահազանգ է ներկայացրել այն մասին, որ Վարտգեզ Գասպարին ՀՀ Արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում ենթարկվել է խոշտանգման: (…)*

Ահազանգի հիման վրա ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի արագ արձագանքման ծառայության աշխատակիցները նույն օրն այցելել և տեսակցել են Վ. Գասպարիին:

Վարտգեզ Գասպարին հայտնել է, որ սկսել է հացադուլ, քանի որ խցում ենթարկվել է վատ վերաբերմունքի, այդ թվում՝ բռնության: Մասնավորապես, Վ.Գասպարին պնդել է, որ կարանտինային խցում իրեն հայհոյել են, ոտքերով և պոլիէթիլենային շշով հարվածել, ջուր լցրել իր վրա, ինչի կապակցությամբ քրեակատարողական հիմնարկի աշխատակիցները միջոցներ չեն ձեռնարկել: (…)» (տե՛ս թիվ 62204416 նյութեր, հատոր 1, թերթ 7):

5.1. «Նուբարաշեն» ՔԿՀ-ի բժշկական սպասարկման բաժնի աշխատակցի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ *«ս.թ. փետրվարի 24-ին ժ. 00:30-ի սահմաններում թիվ 9 կարանտինային խցի կալանավոր Վարդգես Լիվանի Գասպարիին ենթարկել եմ մարմնական զննության, ոչ մի մարմնական վնասվածքի հետք չի հայտնաբերվել, վերջինս աջ ազդրի շրջանում նշում է մկանային ցավեր, որի հիման վրա յոդի լուծույթով նշված հատվածում կատարել եմ ցանցավորում»* (տե՛ս թիվ 62204416 նյութեր, հատոր 1, թերթ 35):

6. Վ.Գասպարիին ենթադարաբար բռնության ենթարկելու վերաբերյալ նյութերի նախապատրաստման ընթացքում բացատրություններ են վերցվել մի շարք անձանցից, այդ թվում՝ Սխիթար Սարգսյանից, նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն, սակայն Վ.Գասպարին հրաժարվել է փորձաքննության ենթարկվել, ինչպես նաև բացատրություններ տալ, նախնական քննության ընթացքում հարցաքննվել են տուժող Վ.Գասպարին, վկաներ Սարգիս Գրիգորյանը, Սամվել Դարբինյանը, Դավիթ Անանյանը, «Նուբարաշեն» ՔԿՀ-ի աշխատակիցներ Գաբրիել Ահարոնյանը, Մանվել Սեղրակյանը, Վարդան Հովհաննիսյանը, Արթուր Հարությունյանը, Արտուշ

Չոբանյանը, Արթուր Այվազյանը, Գևորգ Հակոբյանը, Նարեկ Բալղրյանը, Արթուր Ֆրանգուլյանը, Արմեն Մովսիսյանը, իրականացվել են առերես հարցաքննություններ Վ.Գասպարիի և Ս.Գրիգորյանի, ինչպես նաև Արթուր Այվազյանի միջև, Ս.Դրաբինյանը հրաժարվել է Վ.Գասպարիի հետ առերես հարցաքննվել, Վ.Գասպարին կրկին հրաժարվել է փորձաքննության ենթարկվել, նշանակվել և իրականացվել է դատաճեռագրաբանական-դատափաստաթղթաբանական փորձաքննություն, «Նուբարաշեն» ՔԿՀ-ից ձեռք են բերվել մի շարք տեղեկություններ և փաստաթղթեր, հանձնարարվել է իրականացնել համապատասխան օպերատիվ միջոցառումներ դեպքի հանգամանքների վերաբերյալ տեղեկություններ ձեռք բերելու նպատակով (տե՛ս թիվ 62204416 նյութեր, հատոր 1 և 2):

7. Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի սեպտեմբերի 5-ի որոշման համաձայն՝ *«Սույն քրեական գործով նախաքննության ընթացքում, բացի Վարտգեզ Գասպարիի ցուցմունքներից, ձեռք չի բերվել որևէ փաստական տվյալ, որ ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում Վարտգեզ Գասպարին ենթարկվել է բռնության և ճնշումների: «Հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշի տիրույթում ձեռք բերված փաստական տվյալները չեն ապահովում ապացույցների այնպիսի բավարար համակցություն, որը թույլ կտար հիմնավորված համարել, որ 2016թ. փետրվարի լույս 24-ին «Նուբարաշեն» ՔԿՀ կարանտինային բաժանմունքի թիվ 9 խցում Վարտգեզ Գասպարին ենթարկվել է բռնության կամ այլ դաժան, անմարդկային վերաբերմունքի, իսկ նույն հիմնարկի աշխատակից պաշտոնատար անձինք ծառայության նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով չեն կատարել կամ ոչ պատշաճ են կատարել իրենց պաշտոնեական պարտականությունները:*

Այսպիսով՝ քրեական գործով կատարված նախաքննությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված քննչական գործողությունների կատարմամբ հավաքված ապացույցների վերլուծությամբ, յուրաքանչյուր ապացույցն այլ ապացույցների հետ համադրելով, դրանք՝ թույլատրելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցության մեջ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից գնահատելով, չի հիմնավորվել 2016թ. փետրվարի 23-ի երեկոյան և լույս 24-ին «Նուբարաշեն» ՔԿՀ կարանտինային թիվ 9 խցում Վարտգեզ Գասպարիի խցակիցներ Սարգիս Գրիգորյանի, Սամվել Դարբինյանի և Մխիթար Սարգսյանի կողմից Վարտգեզ Գասպարիին դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, ինչպես նաև մշտապես իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձանց՝ ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ (...) հերթապահ խմբի ծառայողներ Արթուր Այվազյանի, Վարդան Հովհաննիսյանի ու Արթուր Հարությունյանի կողմից ծառայության նկատմամբ անբարեխիղճ կամ

անփույթ վերաբերմունքի հետևանքով իրենց պաշտոնեական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը:

Ինչ վերաբերում է «Նուբարաշեն» ՔԿՀ հետաքննիչ Վարանցով Ղազարյանի կողմից պաշտոնեական կեղծիք կատարելուն, ապա նախաքննությամբ հիմնավորվել է, որ վերջինիս կողմից 25.02.2016թ. և «կալանավորից բացատրություն վերցնելու վերաբերյալ» 26.02.2016թ. կազմված արձանագրությունները բնօրինակ են, դրանցում բոլոր գրառումները կատարվել են միևնույն խմբային պատկանելություն ունեցող գրիչներով, դրանցում առկա տեքստերը և ստորագրությունները /բացառությամբ հետաքննիչի կողմից կատարվածների/ կատարվել են Վ.Գասպարիի կողմից, հետևաբար բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածով նախատեսված՝ պաշտոնեական կեղծիքի հանցագործության դեպքը: (...)» (տե՛ս թիվ ԵԱՔԴ/0190/11/16 գործի նյութեր, հատոր 1, թերթեր 5-9):

8. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի՝ «Քողոքը մերժելու մասին» 2016 թվականի սեպտեմբերի 26-ի որոշման համաձայն է. *«(...) Վարդգես Գասպարին 3-րդ խուց տեղափոխվել է 20-րդ խցից դուրս գալուց և այլևս հետ վերադառնալուց հրաժարվելու պատճառով՝ 2016 թվականի լույս 24-ի գիշերը, որտեղ մնացել է շատ կարճ ժամանակ և, ինչպես ինքն է նշել իր ցուցմունքում, դա եղել է պատժախուց և ոչ թե հացադուլ հայտարարած անձանց խուց, որտեղից էլ կրկին տեղափոխվել է 9-րդ կարանտինային խուց: Կատարված նախաքննությամբ ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ 2016 թվականի փետրվարի 23-ից 24-ն ընկած ժամանակահատվածում, երբ Վարդգես Գասպարին գտնվել է 9-րդ խցում, այնտեղ, բացի վերջինից, եղել են երեք և ոչ թե չորս անձ՝ ինչպես հայտարարել է Վարդգես Գասպարին: Վերջինիս հայտնած տեղեկությունը օբյեկտիվ որևէ փաստական տվյալով չի հաստատվել, ուստի բողոքաբերի մոտ առաջացած կասկածը, թե իրեն 3-րդ խցից տեղափոխել են 9-րդ խուց՝ իր նկատմամբ բռնություն իրականացնելու համար, ենթադրություն է, ինչի վերաբերյալ, բացի բողոքաբերի հայտնած կասկածից, որևէ այլ տեղեկություն քրեական գործի նախաքննությամբ չի ստացվել:*

Նախաքննությամբ հաստատվել է, որ Վարդգես Գասպարին «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկի աշխատակից Վարանցով Ղազարյանի կողմից նյութեր նախապատրաստելու ժամանակ հրաժարվել է բացատրություն տալուց և դատաբժշկական փորձաքննության ենթարկվելուց: Վարդգես Գասպարիի պնդումը, որ իրեն դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին որոշում չի ներկայացվել, փորձաքննության ենթարկվելու առաջարկ չի եղել, հակառակ դեպքում փորձաքննության ենթարկվելուց հրաժարվելու մասին անձամբ գրառում կկատարեր, անհիմն է, քանզի դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին 2016 թվականի փետրվարի 24-ին կայացված որոշման հիման վրա՝ բողոքաբերի վերաբերյալ կազմված բժշկական

փաստաթղթերով կատարվել է դատաբժշկական փորձաքննություն և տրվել եզրակացություն: Վարդգես Գասպարին հրաժարվել է ենթարկվել դատաբժշկական փորձաքննության նաև նախաքննության ընթացքում՝ այդ մասին գրառում կատարելով փորձաքննություն նշանակելու մասին որոշումը ծանոթացնելու դատավարական գործողության ժամանակ կազմված արձանագրությունում:

Անհիմն է նաև բողոքաբերի այն փաստարկը, թե քննիչը շրջանցել է իր այն պնդումը, որ ՔԿՀ ծառայողներն իրեն 9-րդ խուց վերադարձնելու փորձելու ժամանակ հայտարարել են, որ ինքն այլևս բռնությունների չի ենթարկվի, քանզի այդ մասին միայն բողոքաբերն է նշել իր ցուցմունքում և հանգել է անհիմն հետևության, որ ըստ էության քրեակատարողական հիմնարկի ծառայողները ընդունել են, հաստատել են, որ ինքը ենթարկվել է բռնություններին: Բողոքաբերի այդ ենթադրությունը նախաքննությամբ չի հաստատվել:

(...)» (տե՛ս թիվ ԵԱՔԴ/0190/11/16 գործի նյութեր, հատոր 1, թերթեր 10-12):

9. Առաջին ատյանի դատարանը 2016 թվականի դեկտեմբերի 20-ի որոշմամբ արձանագրել է, որ *«(...) Ըստ նախաքննության տվյալների՝ Վ.Գասպարիի հաղորդման հիման վրա հարուցվել է քրեական գործ, նա ճանաչվել է տուժող, իսկ Դ.Գյուրջյանը՝ տուժողի ներկայացուցիչ, հարուցված քրեական գործի շրջանակներում հարցաքննվել են գործի հետ առնչություն ունեցող անձինք՝ այդ թվում՝ Վ.Գասպարիի խցակիցները, կատարվել են առերես հարցաքննություններ, նշանակվել են դատաբժշկական, դատաճեռագրաբանական, դատափաստաթղթաբանական փորձաքննություններ, կատարվել է Վ.Գասպարիի մարմնի զննում, Վ.Գասպարին հրաժարվել է դատաբժշկական փորձաքննության ենթարկվելուց: Ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա 05.09.2016թ. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով [քննիչի] կողմից կայացվել է քրեական հետապնդում չհրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշում:*

(...) [Քննիչի] կողմից օրենքով սահմանված ընթացակարգով իրականացվել է արդյունավետ և մանրակրկիտ քննություն՝ Վ.Գասպարիի նկատմամբ ենթադրյալ բռնության և խոշտանգման հանգամանքների վերաբերյալ, քրեական գործի նախաքննության ընթացքում ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա վարույթն իրականացնող մարմինը, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում կատարելով անհրաժեշտ քննչական և դատավարական գործողությունները՝ եկել է այն եզրահանգման, որ 2016թ. փետրվարի 23-ի երեկոյան և լույս 24-ին «Նուբարաշեն» ՔԿՀ կարանտինային թիվ 9 խցում Վարտգեզ Գասպարիի խցակիցներ Սարգիս Գրիգորյանի, Սամվել Դարբինյանի և Մխիթար Սարգսյանի կողմից Վարտգեզ Գասպարիին դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան

ուժեղ տառապանք պատճառելը, ինչպես նաև իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձանց՝ ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ հերթապահ խմբի ծառայողներ Արթուր Այվազյանի, Վարդան Հովհաննիսյանի ու Արթուր Հարությունյանի կողմից ծառայության նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով իրենց պաշտոնեական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը չի հիմնավորվել:

(...)

ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Հ.Հովհաննիսյանի՝ «Քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին» 05.09.2016թ. և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի «Բողոքը մերժելու մասին» 26.09.2016թ. որոշումներն օրինական են և հիմնավորված, դրանցով չեն խախտվել Վ.Գասպարիի իրավունքները, իսկ բողոքում բերված փաստարկները հիմնավոր չեն, ուստի բողոքը ենթակա է մերժման: (...)» (տե՛ս թիվ ԵԱՔԴ/0190/11/16 գործի նյութեր, հատոր 1, թերթեր 301-311):

10. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի մարտի 9-ի որոշմամբ արձանագրվել է. *«Վերաքննիչ դատարանը քրեական գործի տվյալների հիման վրա հիմնավորված է համարում, որ նախաքննական մարմինը (քննիչը) ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում չի ձեռնարկել բոլոր անհրաժեշտ, հնարավոր միջոցառումները քրեական գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ, օբյեկտիվ հետազոտման համար, ինչը պատշաճ իրավական գնահատականի չի արժանացել ոչ նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազության և ոչ էլ ընդհանուր իրավասության դատարանի կողմից:*

Գործի արդարացի քննության՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջից նախաքննության մարմնի թույլ տված շեղումները, մասնավորապես, արտահայտվել են նրանում, որ նախաքննական մարմինը չի ձեռնարկել օրենքով իրեն վերապահված ողջ լիազորությունները, չի կատարել քննչական գործողություններ, որոնց արդյունքներով ձեռք բերված փաստական տվյալները կարող էին էական նշանակություն ունենալ քրեական գործով կատարվող վերջնական եզրահանգումների վրա, համապատասխան գործողություններ կատարելու միջնորդությամբ չի դիմել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին, միջոցներ չի ձեռնարկել՝ պատշաճ իրավական կարգով ստուգելու տուժող Վ.Գասպարիի ցուցմունքները՝ իր հետ ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի թիվ 9 կարանտինային խցում 4-րդ անձի գտնվելու հետ կապված, այնինչ՝ ըստ Վ.Գասպարիի՝ թիվ 9 կարանտինային խցում իր նկատմամբ առավել ակտիվ բռնություն կիրառողներն են եղել հենց այդ 4-րդ

անձը, ով, ըստ Վ.Գասպարիի՝ 24.02.2016թ. դրությամբ ոչ շատ առաջ արտաքսված էր ԱՄՆ-ից և ՀՀ ՄՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի թիվ 65 խցում ինքնասպան եղած Մխիթար Սարգսյանը, չի ստուգել, թե ովքեր են եղել այն անձինք, որոնց հետ հեռախոսով խոսել են Վ.Գասպարիի նկատմամբ առերևույթ բռնություն իրականացնողները:

Այսպես.

Նախաքննական մարմինը կարող էր՝

1) Դիմել դատարան՝ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի աշխատակիցներ Արթուր Այվազյանի, Վարդան Հովհաննիսյանի և Արթուր Հարությունյանի հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման թույլտվություն ստանալու միջնորդությամբ, որը չի արել.

2) Դավիթ Անանյանի, Սարգիս Գրիգորյանի և Սամվել Դարբինյանի պահման խցերում գաղտնալսող սարքերի տեղադրման միջոցով ներքին դիտում իրականացնելու և/կամ օպերատիվ ներդրման հանձնարարականներ տալ համապատասխան դեպքերի կապակցությամբ տեղեկատվություն հավաքելու, ինչպես նաև Դավիթ Անանյանի, Սարգիս Գրիգորյանի և Սամվել Դարբինյանի, նախկինում նաև՝ Մխիթար Սարգսյանի կողմից հնարավոր օգտագործվող հեռախոսահամարները պարզելու նպատակով, այդուհանդերձ, հեռախոսային օպերատորներից այդ հեռախոսահամարների 23-24.2016թ. զանգերի վերծանումներ պահանջել, ինչը նույնպես չի արել.

3) Դավիթ Անանյանի, Սարգիս Գրիգորյանի և Սամվել Դարբինյանի կողմից հնարավոր օգտագործվող հեռախոսահամարների բացահայտմանն ուղղված այլ օպերատիվ-հետախուզական միջոցառումների հանձնարարականներ տալ համապատասխան մարմիններին և դիմել դատարան այդ հեռախոսահամարների գաղտնալսման թույլտվություն ստանալու միջնորդությամբ, ինչը չի կատարել.

4) Ձեռնարկել Վարդգես Գասպարիի 4-րդ խցակցին հայտնաբերելու և հարցաքննելու նպատակով բավարար միջոցներ, հատկապես՝ ստուգել «ԱՄՆ-ից արտաքսված» կենսագրական հատկանիշով անձանց առկայությունը «Նուբարաշեն» ՔԿՀ, ինչի ուղղությամբ անհրաժեշտ էր առգրավել և զննել ՔԿՀ-ի համապատասխան մատյանները, որոնց մեջ պետք է արտացոլված լինեին յուրաքանչյուր ժամանակահատվածում գտնված անձանց տվյալները, որը նույնպես չի կատարվել.

5) Առերես հարցաքննել Վարդգես Գասպարիին և Դավիթ Անանյանին՝ հաշվի առնելով, որ վերջիններս հակասական ցուցմունքներ են տվել Դավիթ Անանյանի կողմից Գասպարիին ճանաչելու փաստի կապակցությամբ, որը նույնպես չի կատարվել:

(...)

Նման պայմաններում նախաքննական մարմնի որոշման (...) պատճառաբանությունները (...) հիմնավորված և օբյեկտիվ չեն, նման եզրահան-

գումները կատարված են քերի նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցների վրա:

Վերաքննիչ դատարանը նախորդ պարբերության մեջ արված եզրահանգումը կատարելիս նկատի է առնում այն հանգամանքը, որ 2016թ. փետրվարի 23-ի երեկոյան և լույս 24-ին «Նուբարաշեն» ՔԿՀ կարանտինային թիվ 9 խցում Վարդգես Գասպարիի խցակիցներ Սարգիս Գրիգորյանը, Սամվել Դարբինյանը և Մխիթար Սարգսյանը /վերջինս ինքնասպան է եղել «Նուբարաշեն» ՔԿՀ-ի թիվ 65 խցում/, ինչպես նաև՝ ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ հերթապահ խմբի ծառայողներ Արթուր Այվազյանը, Վարդան Հովհաննիսյանը ու Արթուր Հարությունյանը, «Նուբարաշեն» ՔԿՀ հետաքննիչ Վարուժանով Ղազարյանը, գործի ելքով շահագրգիռ անձինք են, որոնց գործողությունները բողոքարկվում էին, դրա արդյունքում հարուցված էր քրեական գործ, այսինքն՝ հասկանում էին, որ քեկուզ տեսականորեն նախաքննության զարգացման որոշակի ընթացքի դեպքում իրենք կարող էին հայտնվել կասկածյալի դատավարական կարգավիճակում, նրանք գիտակցում էին, որ որոշակի հանգամանքներում իրենցից ստացված ցուցմունքը կարող է հիմք հանդիսանալ իրենց կամ մյուսներին մեղադրանք առաջադրելու համար:

[Վերաքննիչ դատարանը, վկայակոչելով Մամմադովը ընդդեմ Ադրբեջանի գործով որոշման իրավական դիրքորոշումները, գտել է, որ] Վարդգես Գասպարիի նկատմամբ կիրառված առերևույթ բռնությունների վերաբերյալ «Քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին» 05.09.2016թ. որոշումը գրեթե ամբողջությամբ հիմնված է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի կալանավորների և աշխատակիցների ցուցմունքների վրա, մարդիկ, որոնք զգալիորեն շահագրգիռ են սույն գործի ելքի նկատմամբ, մարդիկ, որոնց համար քրեական գործի նախաքննության որոշակի ընթացքը կարող է ունենալ շատ կոնկրետ հետևանքներ:

Նման պայմաններում նախաքննական մարմինը պետք է միջոցներ ձեռնարկեր իր լիազորությունների սահմաններում այլ քննչական և դատավարական գործողություններ կատարելու միջոցով, օպերատիվ-հետախուզական մարմիններին համապատասխան հանձնարարականներ տալու միջոցով ստացված ապացույցների համակցությամբ ապահովել վերը նշված անձանց ցուցմունքների ստուգումը: Նման միջոցներ կարող էին հանդիսանալ վերը նշված գործողությունները, եթե դրանք կատարվեին:

(...) Վ.Գասպարին իր ցուցմունքներով նաև հայտնել է, որ իրեն բռնության ենթարկելու ժամանակ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի աշխատակիցներից մեկը, ով իրականացնում էր ծառայություն միջանցքում, բռնություն կիրառողներից տեղեկանալով՝ արդյո՞ք արտոնված է Վ.Գասպարիի նկատմամբ բռնությունը, անտեսել է այն, իսկ համապատասխան աշխատակիցները, որոնց Վ.Գասպարին դիմել էր իր նկատմամբ կիրառված բռնությունների կապակցությամբ այլ խուց տեղափոխելու խնդրանքով, անտեսել են իր

նկատմամբ կիրառված բռնությունների մասին հայտարարությունը և փորձել են վերջինիս վերադարձնել նույն խուց:

ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի անվտանգության ապահովման բաժնի 3-րդ կարգի մասնագետ Ա.Ֆրանգուլյանը և նույն բաժնի 2-րդ կարգի մասնագետ Ա.Մովսիսյանը 01.03.2016թ. գրեթե նույնաբովանդակ բացատրություններ են տվել (...):

(...)

Իր ցուցմունքներով Վարդգես Գասպարին նաև հայտնել է, որ իր նկատմամբ առավել ակտիվ բռնություն են կիրառել Մխիթար Մարգսյանը և այդ 4-րդ անձը, որը 24.02.2016թ. դրությամբ ոչ շատ առաջ ԱՄՆ-ից էր արտաքսված:

Վերաքննիչ դատարանը փաստում է, որ հարուցված քրեական գործով բավարար գործողություններ չեն կատարվել ԱՄՆ-ից «դեպորտ եղած» 4-րդ անձին հայտնաբերելու համար:

Մասնավորապես նախաքննական մարմինը վերջինիս հայտնաբերելու նպատակով պետք է հարցաքններ 19.02.2016թ.-22.02.2016թ. ընկած ժամանակահատվածում Վ.Գասպարիի հետ 09 խցում եղած կալանավորներին, ինչը չի արել:

(...)

[Վկայակոչելով Ա.Ֆանասյանը ընդդեմ Ուկրաինայի գործով Եվրոպական դատարանի, ինչպես նաև, Ա.Գոյանի վերաբերյալ գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 12.02.2010թ. թիվ ԵԱՔԴ/0049/01/09 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վերաքննիչ դատարանը գտել է, որ] կատարված նախաքննությունը չի համապատասխանում «Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի Կոնվենցիայի 12-րդ և 13-րդ հոդվածների, նշված հոդվածներին տրված Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներով տրված իրավական մեկնաբանություններին առ այն, որ խոշտանգման փաստերի վերաբերյալ հավաստի տեղեկատվություն ստանալիս մասնակից պետությունները պետք է սեփական նախաձեռնությամբ անցկացնեն անաչառ հետաքննություն, այնպիսի հետաքննություն, որի արդյունքում հնարավոր կլինի բացահայտել և իրավական պատասխանատվության առաջ կանգնեցնել մեղավորներին, ձերբակալված և կալանավորված անձանց վերաբերյալ ՀՀ ներպետական և միջազգային իրավական ակտերի պահանջներին:

(...)» (տե՛ս թիվ ԵԱՔԴ/0190/11/16 գործի նյութեր, հատոր 2, թերթեր 41-52):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Վճռաբեկ բողոք բերած անձը գտնում է, որ Վարտգեզ Գասպարիի հայտարարության առթիվ հարուցված քրեական գործով կատարվել է արդյունավետ և պատշաճ քննություն, իսկ Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի մարտի 9-ի որոշումն օրինական, հիմնավորված և պատճառաբանված չէ, այդ դատական ակտում դատարանի կողմից արված հետևությունները չեն բխում գործի հանգամանքներից և գործով ձեռք բերված փաստական տվյալներից:

12. Բողոքի հեղինակը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն անթաքույց արտահայտելով բողոքաբերի շահը՝ կանխակալ մոտեցում է ցուցաբերել Վ.Գասպարիի հակասական ցուցմունքներին և առանց պատշաճ գնահատելու գործում առկա բոլոր ապացույցներն իրենց համակցության մեջ, այդ ցուցմունքներին մյուս ապացույցների համեմատ տվել է առավել նշանակություն:

Բողոքաբերն ընդգծել է, որ Վ.Գասպարիի ցուցմունքները շահագրգիռ անձի ցուցմունքներ են, նրա մարմնի վրա որևէ մարմնական վնասվածք չի հայտնաբերվել, թեև նա իր կողմից նկարագրած իրադարձությունից անմիջապես հետո «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի բուժաշխատողի կողմից ենթարկվել է մարմնական զննման: Մարմնական որևէ վնասվածք չի արձանագրվել նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի արագ արձագանքման ծառայության աշխատակիցների կողմից, ովքեր Վ.Գասպարիի պաշտպանի կողմից 2016 թվականի փետրվարի 24-ին կատարված ահազանգի հիման վրա նույն օրն այցելել և տեսակցել են Վ.Գասպարիին:

13. Բողոքաբերը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից վկայակոչված: Մամմադովն ընդդեմ Ադրբեջանի գործով Եվրոպական դատարանի որոշման իրավական դիրքորոշումները չեն կարող կիրառելի լինել սույն գործով առնվազն այն պատճառով, որ վկայակոչված գործով՝ տուժողի հայտնած տեղեկությունները հաստատված են եղել դատաբժշկական փարձաքննության եզրակացությամբ:

Բողոքի հեղինակը գտնում է նաև, որ Վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտում Աֆանասևն ընդդեմ Ուկրաինայի գործով Եվրոպական դատարանի որոշման վկայակոչումը ևս անհիմն է, քանզի այն իր փաստական հանգամանքներով նույնանման չէ սույն գործի հանգամանքների հետ այն պատճառով, որ Վ.Գասպարին «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկից դուրս գալիս վնասվածքներ չի ունեցել: Նույն պատճառաբանությամբ սույն գործի փաստական հանգամանքների հետ որևէ կերպ նույնանման չեն Արայիկ Գզոյանի վերաբերյալ գործի փաստական հանգամանքները, քանզի նրա կողմից արված հայտարարություններն իրեն խոշտանգման ենթարկելու վերաբերյալ եղել են վստահելի, իսկ Վ.Գասպարիի հայտարարությունը՝ ոչ, ուստի լոկ հայտարարությունը չի կարող հիմք հան-

դիսանալ՝ անձին խոշտանգման ենթարկած լինելու մասին հետևություններ կատարելու համար: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանի կողմից Ա.Գզոյանի վերաբերյալ թիվ ԵԱՔԴ/0049/01/09 գործով Վճռաբեկ դատարանի որոշման վկայակոչումն անհիմն է, չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներից:

14. Բողոքի հեղինակը օրենքից չբխող է համարում Վերաքննիչ դատարանի այն փաստարկը, որ վարույթն իրականացնող մարմինը պետք է պարզեր կալանավորներ Դավիթ Անանյանի, Սարգիս Գրիգորյանի և Սամվել Դարբինյանի հեռախոսահամարները և դիմեր դատարան՝ այդ հեռախոսահամարների գաղտնալսման թույլտվություն ստանալու միջնորդությամբ: Բողոքաբերը կարծիք է հայտնել, որ Վերաքննիչ դատարանի տրամաբանությամբ նման տեղեկություն ստանալու դեպքում իրավասու պաշտոնատար անձինք չպետք է կատարեին իրենց պարտականությունները՝ թույլ տալով, որ նշված անձանց մոտ մնան արգելված առարկաներ, իսկ վարույթն իրականացնող քննիչն էլ դա համարելով օրինական, պետք է համապատասխան միջնորդություն ներկայացներ դատարան:

Բողոքաբերը համոզմունք է հայտնել, որ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի աշխատակիցներ Արթուր Այվազյանի, Վարդան Հարությունյանի և Արթուր Հարությունյանի հեռախոսային ապագա խոսակցությունների գաղտնալսմամբ չէին կարող անցյալում ինքնությունը չպարզված անձանց կողմից ենթադրյալ հանցագործություն կատարելու մասին տեղեկություններ ստացվել: Ըստ բողոքաբերի՝ նման տեղեկություններ չէին կարող ստացվել նաև ներքին դիտման կամ օպերատիվ ներդրման եղանակով, քանզի պարզ չէ, թե ում նկատմամբ պետք է կատարվեր ներքին դիտումը կամ որտեղ պետք է կատարվեր օպերատիվ ներդրումը այն պայմաններում, երբ քրեական գործի քննության ընթացքում Վ.Գասպարին չի գտնվել քրեակատարողական հիմնարկում, բացի այդ, քրեակատարողական հիմնարկներում պահվող անձինք մշտապես չեն գտնվում նույն խցում, այլ նրանք տարբեր պատճառներով կարող են տեղափոխվել այլ խցեր:

Բողոքաբերն արժանահավատ չի համարում Վ.Գասպարիի ցուցմունքը, թե խցում եղել է նաև 4-րդ անձ՝ ԱՄՆ-ից արտաքսվածը: Բողոքաբերը գտնում է, որ Վ.Գասպարին քաջատեղյակ լինելով, որ Մխիթար Սարգսյանն ինքասպան է եղել, իսկ 4-րդ անձ չկա, մտացածին ցուցմունք է տվել, թե նրանք են առավել ակտիվ եղել իր նկատմամբ բռնություն գործադրելիս: Հարկ է նշել, որ նույն խցում գտնված Սարգիս Գրիգորյանը առերեսվել է Վարտգեզ Գասպարիի հետ և ժխտել վերջինիս նկատմամբ բռնության կիրառման մասին նրա հայտարարությունները, ուստի անհիմն է Վերաքննիչ դատարանի դատական ակտում արձանագրված այն հետևությունը, թե հա-

րուցված գործով բավարար գործողություններ չեն կատարվել ԱՄՆ-ից արտաքսված վերը հիշատակված 4-րդ անձին հայտնաբերելու համար:

Բողոքաբերը կարծում է, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ գործի հանգամանքների պարզման համար, բացի Սամվել Դարբինյանից և Սարգիս Գրիգորյանից, հարցաքննվել են ևս 15 անձինք, ովքեր 2016 թվականի փետրվարի 22-ից 26-ն ընկած ժամանակահատվածում որոշակի ժամանակով Վ.Գասպարիի հետ գտնվել են միևնույն խցում, սակայն որևէ տեղեկություն չեն հայտնել Վ.Գասպարիի նկատմամբ բռնություն կիրառված լինելու մասին:

15. Արդյունքում՝ բողոքաբերը եզրահանգել է, որ վերաքննիչ բողոքը բավարարելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված և պատճառաբանված չեն, Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 20-ի օրինական, հիմնավորված և պատճառաբանված որոշումը բեկանելով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, որն ազդել է գործի ելքի վրա:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի մարտի 9-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 20-ի որոշմանը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

16. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 3-րդ հոդվածով նախատեսված՝ արդյունավետ քննություն կատարելու պետության պոզիտիվ պարտականության ծագման հիմքերի, ինչպես նաև հիշյալ քննության արդյունավետության չափանիշների կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի անհրաժեշտ է արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

I. Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված՝ արդյունավետ քննություն կատարելու պետության պոզիտիվ պարտականության ծագման հիմքերը.

17. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. արդյոք Վ.Գասպարիին քրեակատարողական հիմնարկում ենթադրյալ բռնության ենթարկելու կապակցությամբ իրականացված քննության նկատմամբ կիրառելի են Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված՝ խոշտանգման վերաբերյալ գործերի քննությանը առաջադրվող չափանիշները:

18. Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ *«Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:*

Կոնվենցիայի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Այս դրույթը չի կարող հիմք ծառայել՝ շեղվելու 2-րդ հոդվածից, բացառությամբ պատերազմական օրինական գործողությունների հետևանքով մարդկային զոհերի կապակցությամբ կամ 3-րդ հոդվածի, 4-րդ հոդվածի 1-ին կետի և 7-րդ հոդվածի դրույթներից»:*

ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, անօրինական ֆիզիկական կամ հոգեկան բռնության, այդ թվում՝ բժշկական դեղամիջոցների օգտագործմամբ, սովի, ուժասպառման, հիպնոսի, բժշկական օգնությունից զրկվելու, ինչպես նաև այլ դաժան վերաբերմունքի: (...)»:

19. Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը բացարձակ բնույթ է կրում *(տե՛ս Արայիկ Գզոյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԱՔԴ/0049/01/09 որոշման 22-րդ կետը):*

Նշված հանգամանքը բազմիցս շեշտադրվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան)՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի վերաբերյալ կայացված նախադեպային որոշումներում: Մասնավորապես, *Զելիլոֆն ընդդեմ Հունաստանի* գործով վճռում դատարանն արձանագրել է, որ 3-րդ հոդվածը պաշտպանում է ժողովրդավարական հասարակության ամենահիմնարար արժեքներից մեկը: Անգամ այնպիսի բարդ իրավիճակներում, ինչպիսիք են ահաբեկչության և կազմակերպված հանցավորության դեմ պայքարը, Կոնվենցիան բացարձակ արտահայտություններով արգելում է խոշտանգումը և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը: Ի տարբերություն Կոնվենցիայի և դրան կից 1-ին և 4-րդ արձանագրությունների շատ նյութաիրավական դրույթների, 3-րդ հոդվածը չի նախատեսում բացառության վերաբերյալ որևէ կանոն, դրանից շեղում թույլատրելի չէ նաև 15-րդ հոդվածի 2-րդ մասով՝ անգամ ազգի գոյությանը վտանգ սպառնացող արտակարգ դրության դեպքում (տե՛ս *Zelilof v. Greece*, 2004 թվականի մայիսի 24-ի վճիռը, գանգատ թիվ 17060/03, կետ 42):

Խոշտանգումների արգելքի բացարձակ բնույթը ենթադրում է ոչ միայն խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կիրառումից ձեռնպահ մնալու, այլ նաև որոշակի պոզիտիվ գործողություններ կատարելու պետության պարտականությունը: Եվրոպական դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ եթե անձը անում է վստահելի հայտարարություն այն մասին, որ ի խախտումն 3-րդ հոդվածի ենթարկվել է խոշտանգման ոստիկանի կամ այլ պաշտոնատար անձի կողմից, ապա այդ դրույթը Կոնվենցիայի 1-ին հոդվածով ամրագրված՝ «իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար Կոնվենցիայով սահմանված իրավունքների և ազատությունների ապահովման» պետությունների ընդհանուր պարտականության հետ միասին ենթադրում է արդյունավետ պաշտոնական քննության առկայություն: Նման քննությունը պետք է ունակ լինի բացահայտելու և պատասխանատվության ենթարկելու պատասխանատու անձանց: Հակառակ պարագայում, խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ընդհանուր իրավական արգելքը, չնայած իր հիմնարար կարևորության, գործնականում ոչ արդյունավետ կլինի, և որոշ դեպքերում հնարավոր կլինի պետական մարմինների կողմից խախտել իրենց տրամադրության տակ գտնվող անձանց իրավունքները և փաստացի մնալ անպատիժ (ի թիվս այլ աղբյուրների տե՛ս *Assenov and Others v. Bulgaria* գործով 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 24760/94, կետ 102, *Labita v. Italy* գործով Մեծ պալատի 2000 թվականի ապրիլի 6-ի վճիռը, գանգատ թիվ 26772/95, կետ 131, *Bekos and Koutropoulos* v. *Greece* գործով 2005 թվականի դեկտեմբերի 13-ի վճիռը, գանգատ թիվ 15250/02, կետ 53):

Ընդ որում Եվրոպական դատարանը նշել է, որ պետության պոզիտիվ պարտականության ծագման հիմք են հանդիսանում «վիճելի բողոքի» կամ «վստահելի հայտարարության» չափանիշին համապատասխանող անձի դիմումը, ինչպես նաև խոշտանգման կամ վատ վերաբերմունքի դրսևորման վերաբերյալ այլ՝ բավարար չափով որոշակի նշանները (տե՛ս 97 *Members of the Gldani Congregation of Jehovah's Witnesses and Others v. Georgia* գործով 2007 թվականի մայիսի 3-ի վճիռը, գանգատ թիվ 71156/01, կետ 97):

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունից հետևում է, որ որպես կանոն վստահելի են գնահատվում այն հայտարարությունները, որոնք ուղեկցվում են համապատասխան բժշկական փաստաթղթերով, վկայի ցուցմունքով կամ այլ օբյեկտիվ ապացույցներով (տե՛ս *Lyapin v. Russia* գործով 2014 թվականի հոկտեմբերի 24-ի վճիռը, գանգատ թիվ 46956/09, կետ 116-117, *Afanasyev v. Ukraine* գործով 2005 թվականի ապրիլի 5-ի վճիռը, գանգատ թիվ 38722/02, կետ 76 և այլն): Իսկ այն դեպքերում, երբ անձի հայտարարությունը չի ուղեկցվում ապացույցներով, սակայն նա մանրամասն, ինչպես նաև անհակասական եղանակով

նկարագրում է վատ վերաբերմունքի դրսևորումները, ապա նրա հայտարարությունը, որպես կանոն, գնահատվում է որպես վիճելի բողոք (տե՛ս *Lopata v. Russia* գործով 2010 թվականի հուլիսի 13-ի վճիռը, գանգատ թիվ 72250/01, կետ 111, *J.L. v. Latvia* գործով 2012 թվականի ապրիլի 17-ի վճիռը, գանգատ թիվ 23893/06, կետ 73 և 75 և այլն):

Միևնույն ժամանակ Եվրոպական դատարանը նշել է, որ անձի կողմից ձևական հաղորդում ներկայացնելը որոշիչ նշանակություն չունի, քանի որ իրավասու մարմինների գիտությանը ներկայացված վատ վերաբերմունքի վերաբերյալ տեղեկատվությունը ipso facto առաջացնում է 3-րդ հոդվածով նախատեսված՝ արդյունավետ քննություն իրականացնելու պարտականություն (տե՛ս *El Masri v. "the former Yugoslav Republic of Macedonia"* գործով Մեծ պալատի՝ 2012 թվականի դեկտեմբերի 13-ի վճիռը, գանգատ թիվ 39630/09, կետ 182, *mutatis mutandis, Gorgiev v. the former Yugoslav Republic of Macedonia* գործով 2012 թվականի ապրիլի 19-ի վճիռը, գանգատ թիվ 26984/05, կետ 64): Այսինքն՝ անգամ որևէ բողոքի բացակայության պայմաններում պետք է քննություն իրականացվի, երբ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի վերաբերյալ առկա են բավարար չափով որոշակի նշաններ (տե՛ս, ի թիվս այլնի, *Ozbey v. Turkey* գործով 2001 թվականի մարտի 8-ի որոշումը, գանգատ թիվ 31883/96, *97 members of the Gldani Congregation of Jehovah's Witnesses and 4 Others v. Georgia* գործով 2007 թվականի մայիսի 3-ի վճիռը, գանգատ թիվ 71156/01, կետ 97): Այս համատեքստում Եվրոպական դատարանը բազմաթիվ անգամ վերահաստատել է իր դիրքորոշումն առ այն, որ իրավասու մարմինները պարտավոր են իրենց նախաձեռնությամբ քննություն իրականացնել այն պահից, երբ համապատասխան հարցը հայտնվել է իրենց տրամադրության տակ: Նրանք չեն կարող դա թողնել անձի նախաձեռնությանը՝ ձևական բողոք ներկայացնելու կամ ցանկացած քննչական գործողություն իրականացնելու պատասխանատվությունը ստանձնելու միջոցով (տե՛ս, mutatis mutandis, *McKerr v. the United Kingdom* գործով 2001 թվականի մայիսի 4-ի վճիռը, գանգատ թիվ 28883/95, կետ 111):

Իրավասու մարմինները պետք է հաշվի առնեն խոշտանգման զոհերի որոշակի խոցելի վիճակը և այն փաստը, որ լուրջ խոշտանգման ենթարկված անձինք հաճախ ցանկություն չեն ունենում կամ պատրաստակամ չեն լինում բողոք ներկայացնել (տե՛ս *Aksoy v. Turkey* գործով 1996 թվականի դեկտեմբերի 18-ի վճիռ, գանգատ թիվ 21987/93, կետ 97, *Bati and Others v. Turkey* գործով 2004 թվականի հունիսի 3-ի վճիռ, գանգատ թիվ 33097/96 և 57834/00, կետ 133): Ավելին՝ առանձին գործերով Եվրոպական դատարանը հատկապես ընդգծել է, որ քննություն իրականացնելու պարտականությունն ավելի ակնհայտ է դառնում այն փաստի հաշվառմամբ, որ անձը տվյալ ժամանակահատվածում գտնվել է բանտում, հետևաբար պետության խնամքի

և պատասխանատվության ներքո (տե՛ս, mutatis mutandis, *Pankov v. Bulgaria* գործով 2010 թվականի հոկտեմբեր 7-ի վճիռը, գանգատ թիվ 12773/03, կետ 50, *Gorgiev v. the former Yugoslav Republic of Macedonia* գործով 2012 թվականի ապրիլի 19-ի վճիռը, գանգատ թիվ 26984/05, կետ 64):

Ամփոփելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված՝ արդունավետ քննություն իրականացնելու պետության պարտականությունը ծագում է ինչպես անձի կողմից վստահելի հայտարարություն կամ վիճելի բողոք ներկայացնելու, այնպես էլ խոշտանգման վերաբերյալ բավարար չափով հստակ նշանների առկայության դեպքում:

20. Սույն գործի փաստերի համաձայն՝ Վ.Գասպարիի նկատմամբ ենթադրյալ բռնությունների կիրառման փաստի առթիվ քրեական գործ է հարուցվել ՀՀ Մարզու իրավունքների պաշտպանի հաղորդման հիման վրա (տե՛ս սույն որոշման 1-ին կետը): Ենթադրյալ դեպքի օրը՝ փետրվարի 24-ին, վերջինիս դիմել է Վ.Գասպարիի պաշտպանը՝ հայտնելով, որ Վարտգեզ Գասպարին ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում ենթարկվել է խոշտանգման: Ահազանգի հիման վրա ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի արագ արձագանքման ծառայության աշխատակիցները նույն օրն այցելել և տեսակցել են Վ. Գասպարիին, ով հայտնել է, որ սկսել է հացադուլ, քանի որ խցում ենթարկվել է վատ վերաբերմունքի, այդ թվում՝ բռնության (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը): Նյութերում առկա է նաև «Նուբարաշեն» ՔԿՀ-ի բժշկական սպասարկման բաժնի աշխատակցի կողմից կազմված տեղեկանք, որի համաձայն՝ ենթադրյալ դեպքից անմիջապես հետո Վ.Գասպարին գանգատվել է աջ ազդրի մկանային ցավից, որի կապակցությամբ նրան ցուցաբերվել է անհրաժեշտ օգնություն (տե՛ս սույն որոշման 5.1-րդ կետը): Գործի նյութերում առկա են նաև Վ.Գասպարիի կողմից տարբեր ժամանակահատվածներում տրված ցուցմունքներ, որտեղ վերջինս մանրամասն նկարագրել է իր նկատմամբ բռնություններ գործադրողներին, դրա դրսևորումներն ու ընթացքը:

21. Հիշյալ փաստերը գնահատելով սույն որոշման 17-19-րդ կետերում արտահայտված դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վ.Գասպարիին խոշտանգելու փաստի առթիվ առկա տվյալների համակցությունը վկայում է առնվազն երկու՝ վիճելի բողոքի (Վ. Գասպարիի կողմից մանրամասն և անհակասական տվյալներ հաղորդելը, ենթադրյալ դեպքից անմիջապես հետո ցավերի մասին հայտնելը և նրան բժշկական օգնություն ցույց տրված լինելը, նրա՝ քրեակատարողական հիմնարկում գտնվելը), ինչպես նաև խոշտանգման վերաբերյալ բավարար չափով որոշակի նշանների առկայության հիմքերով Կոնվենցիայի 3-րդ հոդվա-

ծին համապատասխան քննություն իրականացնելու պարտականության մասին:

Այլ խոսքով՝ Վ.Գասպարիին քրեակատարողական հիմնարկում ենթադրյալ բռնության ենթարկելու կապակցությամբ իրականացված քննության նկատմամբ կիրառելի են Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված՝ խոշտանգման վերաբերյալ գործերի քննությանն առաջադրվող չափանիշները:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը հիմնավորված չի համարում բողոքաբերի փաստարկներն այն մասին, որ Վերաքննիչ դատարանի կողմից վկայակոչված՝ Մամմադովն ընդդեմ Աղրբեջանի, Աֆանասևն ընդդեմ Ուկրաինայի գործերով Եվրոպական դատարանի վճիռները, ինչպես նաև Արայիկ Գզոյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կիրառելի չեն սույն գործով: Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ բողոքաբերի կողմից վկայակոչված փաստական տարբերությունները, որոնք ընդհանուր առմամբ հանգում են նրան, որ տվյալ գործերով տուժողը ներկայացրել է վստահելի հայտարարություն (մի դեպքում առկա է եղել բժշկական փաստաթուղթ, մյուս դեպքերում տուժողի մոտ առկա են եղել մարմնական վնասվածքներ (տե՛ս սույն որոշման 13-րդ կետը)), իսկ սույն գործով Վ.Գասպարիի հայտարարությունը վստահելի չէ, այնքան էական չէ, որպեսզի հանգեցնի դրանցով քննարկված՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածից բխող արդյունավետ քննություն կատարելու չափանիշների վերաբերյալ համապատասխան դատական ակտերի դիրքորոշումները չկիրառելուն:

II. Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված՝ արդյունավետ քննություն կատարելու չափանիշները.

22. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հաջորդ իրավական հարցը հետևյալն է՝ հիմնավորվա՞ծ է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Վ.Գասպարիին ենթադրյալ բռնության ենթարկելու վերաբերյալ իրականացված քննությունը չի համապատասխանում արդյունավետ քննության չափանիշին:

23. Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված՝ խոշտանգումների վերաբերյալ գործերով արդյունավետ քննություն կատարելու չափանիշներն են.

ա) քննություն իրականացնող մարմինների անկախությունը և անաչառությունը (տե՛ս *Ogur v. Turkey* գործով Մեծ պալատի 1999 թվականի մայիսի 20-ի վճիռը, գանգատ թիվ 21594/93, կետեր 91-92, *Mehmet Emin Yuksel v. Turkey* գործով 2004 թվականի հուլիսի 20-ի վճիռը, գանգատ թիվ 40154/98, կետ 37, *Ergi v. Turkey* գործով 1998 թվականի հուլիսի 28-ի վճիռը, կետեր 83-84),

բ) իրավասու մարմինները պետք է գործեն պատշաճ արագությամբ (տե՛ս *Mikheev v. Russia* գործով 2006 թվականի հունվարի 26-ի վճիռը, գանգատ թիվ 77617/01, կետ 109),

գ) քննություն իրականացնող մարմինները պետք է օժտված լինեն համապատասխան փաստերը հաստատելու, մեղավոր անձանց բացահայտելու և պատասխանատվության ենթարկելու լիարժեք իրավասությամբ (տե՛ս *Hugh Jordan v. the UK* գործով 2001 թվականի մայիսի 4-ի վճիռը, գանգատ թիվ 24746/94, կետեր 125-130, *Bati and Others v. Turkey* գործով 2004 թվականի հունիսի 3-ի վճիռը, գանգատ թիվ 33097/96 և 57834/00, կետ 136, *Amine Guzel v. Turkey* գործով 2013 թվականի սեպտեմբերի 17-ի վճիռը, գանգատ թիվ 41844/09, կետ 39),

դ) պետք է կատարվի մանրամասն քննություն, որն անհրաժեշտ է գործով ապացույցներն ապահովելու համար (տե՛ս *Bati and Others v. Turkey* գործով 2004 թվականի հունիսի 3-ի վճիռը, գանգատ թիվ 33097/96 և 57834/00, կետ 134),

ե) պետք է ապահովվի քննության նկատմամբ հասարակական հսկողությունը և տուժողի արդյունավետ ներգրավվածությունը քննությանը (տե՛ս *Bati and Others v. Turkey* գործով 2004 թվականի հունիսի 3-ի վճիռը, գանգատ թիվ 33097/96 և 57834/00, կետ 137, mutatis mutandis, *Ogur v. Turkey* գործով Մեծ պալատի 1999 թվականի մայիսի 20-ի վճիռը, գանգատ թիվ 21594/93, կետ 92, *Ognyanova and Choban v. Bulgaria* գործով 2006 թվականի փետրվարի 23-ի վճիռը, գանգատ թիվ 46317/99, կետ 107, *Khadzhialiyev and Others v. Russia* գործով 2008 թվականի նոյեմբերի 6-ի վճիռը, գանգատ թիվ 3013/04, կետ 106):

24. Քննություն կատարելու պետության պոզիտիվ պարտականությունը ենթադրում է, որ քննությունը պետք է լինի արագ և մանրամասն: Դա նշանակում է, որ տեղի ունեցածը բացահայտելու նպատակով իրավասու մարմինները պետք է իրականացնեն լուրջ ջանքեր և քննությունն ավարտելիս կամ իրենց որոշումները պատճառաբանելիս չհենվեն շտապողական կամ թույլ պատճառաբանված եզրահանգումների վրա (տե՛ս Assenov and Others v. Bulgaria գործով 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 24760/94, կետ 103, Bati and Others v. Turkey գործով 2004 թվականի հունիսի 3-ի վճիռը, գանգատ թիվ 33097/96 և 57834/00, կետ 136): Նրանք պետք է կատարեն **իրենց համար հասու բոլոր ողջամիտ քայլերը**, որպեսզի ապահովեն դեպքի հետ կապված ապացույցները, ներառյալ, ի թիվս այլոց, ականատեսների հարցաքննությունը և բժշկական ապացույցները (տե՛ս *Tanrıkulu v. Turkey* գործով Մեծ պալատի 1999 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 23763/94, կետ 104, *Gul v. Turkey* գործով 2000 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ 22676/93, կետ 89): **Քննության ցանկացած թերություն, որը հարցականի տակ է դնում վնասվածքների պատճառները կամ պատասխանատու անձանց պարզելու կարողությունը, վտանգում**

է այս չափանիշի իրագործումը (տե՛ս *Boicenco v. Moldova* գործով 2006 թվականի հուլիսի 11-ի վճիռը, գանգատ թիվ 41088/05, կետ 123):

25. Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ, հաշվի առնելով քննության մանրամասն լինելու չափանիշին համապատասխանելու համար անհրաժեշտ դատավարական գործողությունների սպառիչ սահմանման անհնարինությունը, որպես այդպիսի քննության չափանիշներ են հանդիսանում *«ողջ ջանքեր գործադրելը»* կամ *«բոլոր ողջամիտ քայլերը իրականացնելը»*: Ընդ որում, քննություն կատարելու պարտականությունը վերաբերում է ոչ թե «արդյունքին», այլ «միջոցներին». ոչ բոլոր քննությունները կարող են հաջողության հասնել կամ հանգեցնել այնպիսի եզրակացության, որը համապատասխանում է տուժողի հաղորդած փաստերին, այնուամենայնիվ դրանք պետք է սկզբունքորեն ունակ լինեն գործի հանգամանքները հաստատելուն, իսկ խոշտանգման վերաբերյալ ենթադրությունները հաստատվելու դեպքում՝ պատասխանատու անձանց բացահայտելուն և պատժելուն հանգեցնելու առումով (տե՛ս *Barabanshchikov v. Russia* գործով 2009 թվականի հունվարի 8-ի վճիռը, գանգատ 36220/02, կետ 54):

26. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

ա) Վ.Գասպարիին ենթադրաբար բռնության ենթարկելու վերաբերյալ նյութերի նախապատրաստման ընթացքում բացատրություններ են վերցվել մի շարք անձանցից, այդ թվում՝ Մխիթար Սարգսյանից, նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն, սակայն Վ.Գասպարին հրաժարվել է փորձաքննության ենթարկվել, ինչպես նաև բացատրություններ տալ, նախնական քննության ընթացքում հարցաքննվել են տուժող Վ.Գասպարին, վկաներ Սարգիս Գրիգորյանը, Սամվել Դարբինյանը, Դավիթ Անանյանը, «Նուբարաշեն» ՔԿՀ աշխատակիցներ Գաբրիել Ահարոնյանը, Մանվել Սեդրակյանը, Վարդան Հովհաննիսյանը, Արթուր Հարությունյանը, Արտուշ Չոբանյանը, Արթուր Այվազյանը, Գևորգ Հակոբյանը, Նարեկ Բալդրյանը, Արթուր Ֆրանգուլյանը, Արմեն Մովսիսյանը, իրականացվել են առերես հարցաքննություններ Վ.Գասպարիի և Ս.Գրիգորյանի, ինչպես նաև Արթուր Այվազյանի միջև, Ս.Դարբինյանը հրաժարվել է Վ.Գասպարիի հետ առերես հարցաքննվել, Վ.Գասպարին կրկին հրաժարվել է փորձաքննության ենթարկվել, նշանակվել և իրականացվել է դատաճեռագրաբանական-դատափաստաթղթաբանական փորձաքննություն, «Նուբարաշեն» ՔԿՀ-ից ձեռք են բերվել մի շարք տեղեկություններ և փաստաթղթեր, հանձնարարվել է իրականացնել համապատասխան օպերատիվ միջոցառումներ դեպքի հանգամանքների վերաբերյալ տեղեկություններ ձեռք բերելու նպատակով (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

բ) Քննիչի՝ 2016 թվականի սեպտեմբերի 5-ի որոշմամբ քրեական գործով վարույթը կարճվել է, մասնավորապես այն պատճառաբանությամբ, որ քրեական գործով նախաքննության ընթացքում, բացի Վարտգեզ Գասպա-

րիի ցուցմունքներից, ձեռք չի բերվել որևէ փաստական տվյալ, որ ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում Վարտգեզ Գասպարիի ենթարկվել է բռնության և ճնշումների, իսկ նույն հիմնարկի աշխատակից պաշտոնատար անձինք ծառայության նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով չեն կատարել կամ ոչ պատշաճ են կատարել իրենց պաշտոնեական պարտականությունները (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

գ) Հիշյալ որոշման դեմ տուժող Վ.Գասպարիի բողոքը ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի՝ 2016 թվականի սեպտեմբերի 26-ի որոշմամբ մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

դ) Առաջին ատյանի դատարանը, քննարկելով Վ.Գասպարիի ներկայացուցիչ Դ.Գյուրջյանի բողոքը, արդյունքում այն մերժել է մասնավորապես այն պատճառաբանությամբ, որ հարուցված քրեական գործի շրջանակներում հարցաքննվել են գործի հետ առնչություն ունեցող անձինք՝ այդ թվում՝ Վ.Գասպարիի խցակիցները, կատարվել են առերես հարցաքննություններ, նշանակվել են դատաբժշկական, դատաճեռագրաբանական, դատափաստաթղթաբանական փորձաքննություններ, կատարվել է Վ.Գասպարիի մարմնի զննում, Վ.Գասպարին հրաժարվել է դատաբժշկական փորձաքննության ենթարկվել, և ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա քննիչի կողմից կայացվել է քրեական հետապնդում չհրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշում (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

ե) Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելու վերաբերյալ որոշման մեջ նշել է, որ նախաքննության մարմինը ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում չի ձեռնարկել բոլոր անհրաժեշտ, հնարավոր միջոցառումները քրեական գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ, օբյեկտիվ հետազոտման համար, ինչը պատշաճ իրավական գնահատականի չի արժանացել ոչ դատախազության, և ոչ էլ Առաջին ատյանի դատարանի կողմից: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը գտել է, որ նախաքննական մարմինը կարող էր՝ 1) դիմել դատարան՝ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի աշխատակիցներ Արթուր Այվազյանի, Վարդան Հովհաննիսյանի և Արթուր Հարությունյանի հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման թույլտվություն ստանալու միջնորդությամբ, 2) Դավիթ Անանյանի, Սարգիս Գրիգորյանի և Սամվել Դարբինյանի պահման խցերում գաղտնալսող սարքերի տեղադրման միջոցով ներքին դիտում իրականացնել և/կամ օպերատիվ ներդրման հանձնարարականներ տալ համապատասխան դեպքերի կապակցությամբ տեղեկատվություն հավաքելու, ինչպես նաև Դավիթ Անանյանի, Սարգիս Գրիգորյանի և Սամվել Դարբինյանի, նախկինում նաև՝ Մխիթար Սարգսյանի կողմից հնարավոր օգտագործվող հեռախոսահամարները պարզելու նպատակով, հեռախոսային օպերատորներից այդ հեռախոսահամարների զանգերի վերծա-

ճումներ պահանջել, 3) Դավիթ Անանյանի, Սարգիս Գրիգորյանի և Սամվել Դարբինյանի կողմից հնարավոր օգտագործվող հեռախոսահամարների բացահայտմանն ուղղված այլ օպերատիվ-հետախուզական միջոցառումների հանձնարարականներ տալ համապատասխան մարմիններին և դիմել դատարան՝ այդ հեռախոսահամարների գաղտնալսման թույլտվություն ստանալու միջնորդությամբ, 4) ձեռնարկել Վ.Գասպարիի 4-րդ խցակցին հայտնաբերելու և հարցաքննելու կապակցությամբ բավարար միջոցներ, հատկապես՝ ստուգել «ԱՄՆ-ից արտաքսված» կենսագրական հատկանիշով անձանց առկայությունը «Նուբարաշեն» ՔԿՀ-ում, ինչի ուղղությամբ անհրաժեշտ էր առգրավել և զննել ՔԿՀ-ի համապատասխան մատյանները, որոնց մեջ պետք է արտացոլված լինեին յուրաքանչյուր ժամանակահատվածում գտնված անձանց տվյալները, 5) առերես հարցաքննել Վարտգեզ Գասպարիին և Դավիթ Անանյանին՝ հաշվի առնելով, որ վերջիններս հակասական ցուցմունքներ են տվել Դավիթ Անանյանի կողմից Գասպարիին ճանաչելու փաստի կապակցությամբ (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

27. Նախորդ կետում շարադրված փաստերի նկատմամբ կիրառելով 23-25-րդ կետերում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վ.Գասպարիին բռնության ենթարկելու դեպքի կապակցությամբ իրականացված քննության շրջանակներում վարույթն իրականացնող մարմինների կողմից պատշաճ արագությամբ իրականացվել են անհրաժեշտ դատավարական գործողություններ, մասնավորապես միջոցներ են ձեռնարկվել վկաների ցուցմունքների ձեռքբերմանն ուղղված՝ հարցաքննվել են բազմաթիվ անձինք, կատարվել առերես հարցաքննություններ, ենթադրյալ դեպքից անմիջապես հետո բժշկի կողմից Վ.Գասպարիին զննության է ենթարկվել, նշանակվել են դատաբժշկական, դատաճեռագրաբանական, դատափաստաթղթաբանական փորձաքննություններ: Ընդ որում՝ Վ.Գասպարիին հրաժարվել է դատաբժշկական փորձաքննության ենթարկվելուց, իսկ հարցաքննությունների ընթացքում ըստ էության չի պատասխանել քննիչի կողմից տրված հարցերին՝ զրկելով վերջինիս դեպքի կապակցությամբ, ինչպես նաև տրված ցուցմունքների և գործում առկա այլ ապացույցների արժանահավատությունը գնահատելու համար անհրաժեշտ լրացուցիչ տեղեկություններ ձեռք բերելու հնարավորությունից: Արդյունքում՝ չեն հաստատվել Վ.Գասպարիի հայտարարություններում տեղ գտած պնդումներն իր նկատմամբ վատ վերաբերմունքի մասին, մասնավորապես նրա մարմնի վրա վնասվածքներ չեն հայտնաբերվել, գործով հարցաքննված բազմաթիվ անձանցից և ոչ ոք չի նշել Վ.Գասպարիին քրեակատարողական հիմնարկում բռնության և ճնշումների ենթարկելու վերաբերյալ որևէ տվյալ: Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննիչի կողմից օրենքով սահմանված ընթացակարգով իրականացվել է արդյունավետ քննություն՝ Վ.Գասպարիի նկատմամբ ենթադրյալ բռնության և խոշտանգման հանգամանքների վերաբերյալ,

քրեական գործի նախաքննության ընթացքում ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա վարույթն իրականացնող մարմինը, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում կատարելով ***հնարավոր և անհրաժեշտ*** քննչական և դատավարական գործողությունները՝ իրավացիորեն եկել է այն եզրահանգման, որ 2016 թվականի փետրվարի 23-ի երեկոյան և լույս 24-ին «Նուբարաշեն» ՔԿՀ կարանտինային թիվ 9 խցում Վարտգեզ Գասպարիի խցակիցներ Սարգիս Գրիգորյանի, Սամվել Դարբինյանի և Մխիթար Սարգսյանի կողմից Վարտգեզ Գասպարիին դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, ինչպես նաև իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձանց՝ ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ հերթապահ խմբի ծառայողներ Արթուր Այվազյանի, Վարդան Հովհաննիսյանի, Արթուր Հարությունյանի կողմից ծառայության նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով իրենց պաշտոնեական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը չի հիմնավորվել:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանություններին, որ նախաքննության մարմինը չի կատարել հնարավոր բոլոր գործողությունները դեպքի հանգամանքների բացահայտման կապակցությամբ՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ.

- Դավիթ Անանյանի, Սարգիս Գրիգորյանի և Սամվել Դարբինյանի պահման խցերում գաղտնալսող սարքերի տեղադրման միջոցով ներքին դիտում իրականացնելու լիազորություն վարույթն իրականացնող մարմիններին վերապահված չէ, քանի որ «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով ներքին դիտում թույլատրվում է իրականացնել միայն ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ գործերով (31-րդ հոդվածի 4-րդ մաս), մինչդեռ սույն գործը հարուցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածով, որի 1-ին մասով նախատեսված է ոչ մեծ ծանրության, իսկ 2-րդ մասով՝ միջին ծանրության հանցակազմեր:

- գործում առկա նյութերից երևում է, որ իրավասու մարմիններին հանձնարարվել է իրականացնել համապատասխան օպերատիվ-հետախուզական միջոցառումներ դեպքի կապակցությամբ տեղեկություններ ձեռք բերելու նպատակով, որի արդյունքում որևէ տեղեկություն ձեռք չի բերվել:

- Վ.Գասպարիի ենթադրյալ 4-րդ խցակցին հայտնաբերելու ուղղությամբ հարցաքննվել են բազմաթիվ անձինք, արդյունքում որևէ տվյալ, թեկուզ հավանական, չի ստացվել քննարկվող հանգամանքի կապակցությամբ:

- «Նուբարաշեն» ՔԿՀ-ի աշխատակիցներ Արթուր Այվազյանի, Վարդան Հովհաննիսյանի և Արթուր Հարությունյանի հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման թույլտվություն ստանալու, ինչպես նաև Վարտգեզ Գասպարիին և Դավիթ Անանյանին առերես հարցաքննելու գործողությունները չիրականացնելը չեն կարող գնահատվել որպես քննության այնպիսի

թերություն, որոնք կասկածի տակ են դրել դրա արդյունավետությունը, քանի որ տվյալ դեպքում հավանականությունը ցածր է, որ դրանց արդյունքում կստացվեին գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ:

Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված՝ քննություն կատարելու արդյունավետության չափանիշները վերաբերում են ոչ թե բոլոր հնարավոր, այլ նաև անհրաժեշտ ևողջամիտ գործողություններն իրականացնելուն:

28. Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Վ.Գասպարիին ենթադրյալ բռնության ենթարկելու առթիվ իրականացված քննությունը չի համապատասխանում արդյունավետ քննության չափանիշին՝ հիմնավորված չէ:

Արդյունքում Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել Կոնվենցիայի 3-րդ հոդվածը՝ թույլ տալով քրեադատավարական օրենքի էական խախտում, որն ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք է հանդիսանում: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով դատական ակտ կայացնելիս Առաջին ատյանի դատարանը դատական սխալ թույլ չի տվել, կայացված որոշումն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, ուստի պետք է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի որոշմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող Վարտգեզ Լիվանի Գասպարիի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի մարտի 9-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 20-ի որոշմանը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

10.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԴ/0012/11/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2017 թվականի օգոստոսի 30-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հունվարի 18-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչությունում 2015 թվականի մարտի 23-ին Սասուն Սամվելի Ավետիսյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 38102215 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հոկտեմբերի 31-ի որոշմամբ քրեական գործի վարույթը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով՝ Հերմինե Գալստյանի արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ, կարճվել է:

Վերոնշյալ որոշման դեմ դիմող Ս.Ավետիսյանի բողոքը Տավուշի մարզի դատախազի՝ 2015 թվականի նոյեմբերի 20-ի որոշմամբ մերժվել է:

2. 2015 թվականի դեկտեմբերի 25-ին դիմող Ս.Ավետիսյանը բողոք է ներկայացրել Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնել վերացնելու նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հոկտեմբերի 31-ի որոշմամբ թույլ տրված իր իրավունքների խախտումները:

Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մարտի 10-ի որոշմամբ դիմող Ս.Ավետիսյանի բողոքը մերժվել է՝ բողոքարկման արտադատարանական ընթացակարգը չսպահպանելու պատճառաբանությամբ:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2016 թվականի հունիսի 16-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

4. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 5-ի որոշմամբ Ս.Ավետիսյանի բողոքը ճանաչվել է հիմնավոր, և որոշվել է վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնել վերացնելու թիվ 38102215 քրեական գործով վարույթը կարճելու մասին 2015 թվականի հոկտեմբերի 31-ի որոշմամբ բողոքաբեր Ս.Ավետիսյանի իրավունքների խախտումը:

4.1. Դատախազի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2017 թվականի հունվարի 18-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 5-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

5. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հունվարի 18-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը: Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի մայիսի 5-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Թիվ 38102215 քրեական գործի վարույթը կարճելու մասին 2015 թվականի հոկտեմբերի 31-ի որոշման դեմ դիմող Ս.Ավետիսյանի բողոքը Տավուշի մարզի դատախազի որոշմամբ մերժվել է՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(...) Սասուն Ավետիսյանը ճանաչվել է որպես տուժող և ցուցմունք է տվել այն մասին, որ ավտոմեքենա վաճառելու առիթով ծանոթացել է Կոտայքի մարզի Ջրվեժ գյուղի բնակչուհի Հերմինե Գալստյանի հետ: Ծանոթանալուց հետո վերջինս իրեն ներկայացրել է փաստաթղթեր և հայտնել,*

որ հանգուցյալ ամուսնու կողմից նշված բանկում ժառանգություն ունի թողված՝ մոտ 6.800.000 ֆունտ ստեռլինգ գումարի չափով: 2012թ. Հերմինե Գալստյանը Երևան քաղաքի Մասիվ թաղամասում հողամաս գնելու նպատակով իրենից 3000 ԱՄՆ դոլար է խնդրել, և 2012թ. հոկտեմբերի 5-ին ինքը «ԱԿԲԱ» բանկի Իջևանի մասնաճյուղից Հերմինե Գալստյանի անվամբ 2300 եվրո է փոխանցել, որը վերջինս ստացել է «ԱԿԲԱ» բանկի Երևանի գլխամասից: Դրանից հետո, նույն ամսին Դուբայ մեկնելու համար 3000 ԱՄՆ դոլար է փոխանցել «ԱԿԲԱ» բանկում Հերմինե Գալստյանի անվամբ բացված հաշվեհամարին: Բացի այդ, 2013թ. մայիս ամսին Հերմինե Գալստյանն անձնական հարցեր կարգավորելու համար իրենից 500.000 ՀՀ դրամ է խնդրել: Սասուն Ավետիսյանն իր ցուցմունքներում նաև նշել է, որ Հերմինե Գալստյանի հետ հանդիպումների և խոսակցությունների ընթացքում քննարկվել են նաև համատեղ բիզնես հիմնադրելու կամ իր գումարներն արդեն իսկ գոյություն ունեցող բիզնեսներում ներդնելու հարցերը:

Հերմինե Գալստյանը որպես վկա ցուցմունք է տվել այն մասին, որ 2008թ. էլեկտրոնային կայքով հաղորդագրություն է ստացել այն մասին, որ ինքը Անգլիայում շուրջ 9.000.000 ԱՄՆ դոլար ժառանգություն ունի և այն ստանալու համար պետք է որոշակի գումարներ վճարի: Իրավաբանական օգնություն ստանալու համար ինքն անձամբ անձանց մոտ 40.000 ԱՄՆ դոլար է փոխանցել: 2012թ. մեքենա գնելու առիթով ծանոթացել է Սասուն Ավետիսյանի հետ, ով բանկային համակարգում է աշխատել, և ժամանակի ընթացքում մտերիմ, ընկերական փոխհարաբերություններ են ստեղծվել: Ինքը Սասունին պատմել է Անգլիայում իր ժառանգություն ունենալու մասին ստացած տեղեկությունների մասին, վերջինս այդ հարցում օգնություն ցուցաբերելու պատրաստակամություն է հայտնել: Բիզնես ստեղծելու համար ինքը Սասունից մի քանի անգամ պարտքով գումար է խնդրել, և վերջինս տարբեր ժամանակահատվածներում իրեն տվել է 5900 ԱՄՆ դոլար և 2300 եվրո: Ֆինանսական խնդիրների պատճառով ինքը չի կարողացել ժամանակին վերադարձնել Սասունի պարտքը, իսկ մեկ տարի անց՝ 2013թ., երբ Սասունը պահանջել է պարտքը, ինքը Երևան քաղաքի Աբովյան փողոցում գտնվող «Ֆաստ Կրեդիտ» գրավատանը իրեն պատկանող ոսկեղենը գրավադրել է, որի դիմաց 1.700.000 ՀՀ դրամ է վերցրել և դրանից, որպես պարտքի մարում, 1.500.000 ՀՀ դրամը տվել է Սասուն Ավետիսյանին: Ինքը Սասունին խաբելու նպատակ չի ունեցել, վերջինս գումարը պարտքով է իրեն տվել:

(...)

(…) Սասուն Ավետիսյանի և Հերմինե Գալստյանի միջև երկար ժամանակ եղել են ընկերական հարաբերություններ, մտերմություն ընտանիքներով, շնորհավորել միմյանց ծննդյան օրերը կամ տոները: Գումարները Հ.Գալստյանին փոխանցելու համար Ս.Ավետիսյանի և Հ.Գալստյանի միջև հստակ պայմանավորվածություն չի եղել դրանց վերադարձման ժամկետնե-

րի վերաբերյալ, ինչը վկայում է նրանց հարաբերությունների աստիճանի և առկա վստահության մասին: Ինչ վերաբերում է Հ.Գալստյանի կողմից Ս.Ավետիսյանին ներկայացված կեղծ փաստաթղթերին, համաձայն որոնց Հ.Գալստյանը հանդիսանում է մոտ 6.800.000 ֆունտ ստեռլինգ գումարի ժառանգորդ, և դրանց միջոցով Ս.Ավետիսյանի մոտ վստահություն ստեղծելուն, ապա վերջինս դրանք իրեն ներկայացնելու և ուսումնասիրելուց հետո հասկացել է, որ դրանք կեղծ են, և այդ մասին ասել է Հ.Գալստյանին: Միևնույն ժամանակ դրանից հետո շարունակել է վերջինիս պարտքով գումարներ տալ, ինչը վկայում է այն մասին, որ նշված փաստաթղթերը Հ.Գալստյանի կողմից ներկայացնելու փաստը չէր կարող Ս.Ավետիսյանի կողմից ընկալվել որպես Հ.Գալստյանի անձի նկատմամբ վստահության առաջացման հիմք: Հ.Գալստյանն իրականում պարբերաբար մեկնել է ՀՀ-ից, այդ թվում՝ ԱՄՆ, աշխատել է «Հրաշք» հյուրանոցում, ինչի մասին տեղյակ է եղել նաև Ս.Ավետիսյանը, քանի որ պարբերաբար այնտեղ հանդիպել են (…)»:

(…) [Ք]րեական գործի նախաքննության ընթացքում բավարար ապացույցների համակցություն ձեռք չի բերվել Հերմինե Գալստյանի կողմից Սասուն Ավետիսյանի վստահությունը չարաշահելու, խաբեության եղանակով առանձնապես խոշոր չափերի՝ 5900 ԱՄՆ դոլար և 2300 եվրո գումար հափշտակելու, այսինքն՝ խարդախություն կատարելու փաստը, իսկ Սասուն Ավետիսյանի և Հերմինե Գալստյանի միջև գումարի հետ վերադարձման հետ կապված հարցերը կրում են քաղաքացիաիրավական բնույթ (…)» (տե՛ս նյութեր, հատոր 2, թերթ 9-11):

7. Առաջին ատյանի դատարանը 2016 թվականի հոկտեմբերի 5-ի որոշմամբ Ս.Ավետիսյանի բողոքը ճանաչել է հիմնավոր և որոշել է վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնել վերացնել թիվ 38102215 քրեական գործի վարույթը կարճելու մասին 2015 թվականի հոկտեմբերի 31-ի որոշմամբ բողոքաբեր Ս.Ավետիսյանի իրավունքների խախտումը՝ արձանագրելով հետևյալը. *«(…) [Դ]ատարանը ուսումնասիրելով թիվ 38102215 քրեական գործի նյութերը, փաստում է, որ քրեական գործով նախաքննությունը կատարվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների խախտմամբ: Մասնավորապես, նշված հոդվածը սահմանում է գործի արդարացի քննության սկզբունքը (…).*

(…)

[Ն]ախաքննության մարմինը չի պարզել, թե իրականում Հերմինե Գալստյանը Սասուն Ավետիսյանի կողմից իրեն տրված գումարները ներդրե՞լ է որևէ գործարար գործունեության մեջ, թե՞ ոչ, եթե ոչ, ապա՝ ինչո՞ւ, ինչպես նաև ի՞նչ նպատակով է օգտագործել նշված գումարները, այն դեպքում, երբ Հերմինե Գալստյանը հավաստիացրել է, որ Սասուն Ավետիսյանից վերցրած գումարները ներդնելու է այդպիսի գործունեության մեջ: Նշված

հանգամանքի բացահայտումը կարևոր նշանակություն կունենար Հերմինե Գալստյանի դիտավորության բացահայտման ուղղությամբ:

Նախաքննության մարմինը միջոցներ չի ձեռնարկել պարզելու համար, թե կա՞ն արդյոք վկաներ, որոնց կողմից հայտնած տեղեկությունները կապացուցեն կամ կհերքեն գործի համար նշանակություն ունեցող որևէ հանգամանք, մասնավորապես՝ Հերմինե Գալստյանի վարքագծի վերաբերյալ՝ բացահայտելու նրա դիտավորությունը:

Նման պայմաններում դատարանն արձանագրում է, որ ՀՀ ՔԿ Տավուշի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Վ.Սարգսյանի՝ քրեական գործով վարույթը կարճելու մասին 31.10.2015թ. որոշում կայացնելիս մինչդատական վարույթն իրականացնող մարմնի կողմից չեն պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի կանոնները, որով խախտվել են տուժող Սասուն Ավետիսյանի իրավունքները. մասնավորապես՝ նման որոշման կայացման արդյունքում չեն իրագործվել տուժող Սասուն Սամվելի Ավետիսյանին պատճառված վնասի վերականգնումը, վնաս պատճառած արարքի հանգամանքների ամբողջական բացահայտումը և դրա ճիշտ քրեաիրավական որակումը (…)» (տե՛ս նյութեր, հատոր 3, թերթ 91-94):

8. Վերաքննիչ դատարանը 2017 թվականի հունվարի 18-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 5-ի որոշման դեմ դատախազի ներկայացրած վերաքննիչ բողոքը մերժել է՝ արձանագրելով, որ Առաջին ատյանի դատարանի եզրահանգումները հիմնավոր են, բխում են ինչպես գործող օրենսդրության պահանջներից, այնպես էլ գործի փաստական հանգամանքներից (տե՛ս նյութեր, հատոր 5, թերթ 56-68):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը</u>.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակի կարծիքով՝ Հ.Գալստյանի կողմից խարդախություն կատարելու վերաբերյալ բավարար փաստական տվյալների համակցություն ձեռք չի բերել, ավելին՝ հիմնավորվել է, որ Ս.Ավետիսյանի և Հ.Գալստյանի միջև տևական ժամանակ առկա են եղել ընկերական հարաբերություններ, մտերմություն ընտանիքներով: Հ.Գալստյանին գումար փոխանցելու ժամանակ Ս.Ավետիսյանի և Հ.Գալստյանի միջև դրանց վերադարձման ժամկետների վերաբերյալ հստակ պայմանավորվածություն չի եղել, ինչը, ըստ բողոքաբերի, վկայում է նրանց միջև առկա փոխադարձ վստահության մասին: Ինչ վերաբերում է Հ.Գալստյանի կողմից Ս.Ավետիսյանին ներկայացված կեղծ փաստաթղթերին, որոնց համաձայն՝ Հ.Գալստյանը հանդիսանում է մոտ 6.800.000 ֆունտ ստեռլինգի ժառանգորդ, և դրանց միջոցով Ս.Ավետիսյանի մոտ վստահություն ստեղծելուն, ապա վեր-

ջինս ուսումնասիրել ու դրանց կեղծ լինելու մասին տեղեկացրել է Հ.Գալստյանին, ուստի դա չէր կարող նրա վստահությունը չարաշահելու միջոց լինել, քանի որ դրանից հետո նույնպես շարունակել է վերջինիս պարտքով գումարներ տալ:

9.1. Բողոքաբերն ընդգծել է նաև, որ Առաջին ատյանի դատարանն ու Վերաքննիչ դատարանը Ս.Ավետիսյանի իրավունքների և ազատությունների խախտումը պայմանավորել են քրեական գործի նախաքննության ընթացքում որոշակի հանգամանքներ պարզված չլինելու հետ, ինչը հակասում է Վճռաբեկ դատարանի՝ Լ.Զարյանի վերաբերյալ գործով արտահայտված դիրքորոշումներին: Բողոք բերած անձը փաստարկել է նաև, որ նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցները սխալ են գնահատվել, ինչի արդյունքում կայացվել են չպատճառաբանված դատական ակտեր:

10. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումները և կայացնել նոր դատական ակտ, այն է՝ մերժել Ս.Ավետիսյանի բողոքը՝ թիվ 38102215 քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը համարելով օրինական:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչա՞փ են արդյոք դիմողի բողոքը հիմնավոր համարելու և նրա իրավունքների խախտումը վերացնելու պարտականություն սահմանելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Խարդախությունը՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակությ[ունն է] կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելը»:*

Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքի շրջանակներում բազմիցս անդրադարձել է խարդախության հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների մեկնաբանությանը, ինչպես նաև խարդախությունը քաղաքացիաիրավական պարտավորությունների խախտման դեպքերից սահմանազատելու հիմնահարցին:

Մասնավորապես, *Լիա Ավետիսյանի* վերաբերյալ որոշմամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ *«(...) [Օ]բյեկտիվ կողմից խարդախությունը կատարվում է խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով, ինչի արդյունքում մոլորության մեջ ընկած սեփականատերը կամ իրավասու այլ անձը կամավոր կերպով գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները հանձնում է հանցագործին կամ այլ անձի կամ անձանց կամ չի խոչընդոտում վերջիններիս կողմից այդ գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները վերցնելուն:*

(...) Խարդախությունը կատարվում է միայն ուղղակի դիտավորության մեղքի ձևով. հանցավորը պետք է գիտակցի, որ խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով հափշտակում է ուրիշի գույքը, ինչպես նաև պետք է նախատեսի և ցանկանա դա:

(...) Խարդախության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է նաև շահադիտական նպատակի առկայությամբ, այսինքն՝ մինչև գույքը վերցնելը կամ գույքին տիրանալը հանցավորն ի սկզբանե նպատակ է ունենում հափշտակելու այն, չվերադարձնելու գույքը, չկատարելու խոստումը կամ պայմանագրային պարտավորությունները:

Հակառակ դեպքում, երբ գույքը չվերադարձնելու, խոստումը կամ պարտավորությունները չկատարելու դիտավորությունն առաջանում է գույքը վերցնելուց հետո (անկախ շարժառիթից), խարդախության հանցակազմը բացակայում է:

(...) խարդախությունը քաղաքացիաիրավական պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերից տարանջատելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հանգամանքները.

ա) խարդախության դեպքում տուժողին խաբելու կամ նրա վստահությունը չարաշահելու մտադրությունն անձի մոտ ծագում է նախքան գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքներ ձեռք բերելը.

բ) խարդախության դեպքում անձի մոտ քաղաքացիաիրավական պայմանագրով ստանձնած պարտավորությունները (գույքը փոխանցել, կատարել վարկային պարտավորությունը, պարտքը վերադարձնել և այլն) չկատարելու դիտավորությունը ծագում է նախքան գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքներ ձեռք բերելը:

(...) Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե քաղաքացիաիրավական հարաբերության հենքը վերաբերում է կարգավորիչ գործառույթ իրականացնող իրավունքի ճյուղին, ապա քրեական իրավունքը և դատավարությունը, մարմնավորելով իրավունքի պահպանիչ գործառույթը, իրենց բնույթով ածանցյալ են իրավունքի տվյալ ճյուղերից, մասնավորապես քաղաքացիական իրավունքից և դատավարությունից: Այլ կերպ՝ ներգործության քրեաիրավական և քրեադատավարական միջոցները չպետք է այնպիսին լինեն, որ խաթարեն քաղաքացիաիրավական ու քաղաքացիադատավարական հարաբերությունների ներքին տրամաբանությունը, անորոշություն ու անկանխատեսելիություն ստեղծեն քաղաքացիաիրավական շրջանառության մեջ:

(...) Այս առումով անթույլատրելի է գործող քաղաքացիական օրենսդրության պահանջների անտեսմամբ բնականոն գույքային շրջանառությունը խաթարող գործարքներ կնքելու պրակտիկան: Այդ փաստերը կարող են խեղաթյուրել քաղաքացիաիրավական հարաբերությունները, սպառնալ իրավական անվտանգությանը, պայմաններ ստեղծել, որ անձինք խուսափեն

հարկային պարտավորությունների կատարումից, ինչպես նաև այլ եղանակներով վնասել իրավաչափ հանրային շահերը:

Նման դեպքերում պետությունը պարտավոր չէ գործող քաղաքացիական օրենսդրության պահանջների անտեսմամբ գործարքներ կնքած քաղաքացիների գույքային և այլ իրավունքների վերականգնումը դիտել հանրային շահի տիրույթում և հանրային միջոցներ ծախսելով՝ իրականացնել նշված մասնավոր շահերի քրեաիրավական պաշտպանություն:

Այդ մասնավոր շահերի պաշտպանությունը, որպես ընդհանուր կանոն, պետք է կատարվի մասնավոր իրավունքի տիրույթում՝ քաղաքացիաիրավական և քաղաքացիադատավարական միջոցներով» (տե՛ս Լիա Ավետիսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0176/01/09 որոշման 22-31-րդ կետերը):

12.1. *Վարդան Մաթևոսյանի* վերաբերյալ որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է. *«(...) [Խ]արդախությունը և քաղաքացիաիրավական պարտավորությունների խախտումն օբյեկտիվ կողմի հատկանիշներով հաճախ համընկնում են: Հետևաբար, այստեղ պետք է նկատի ունենալ, որ խարդախությունը՝ որպես հանցագործություն, քաղաքացիաիրավական պարտավորությունների խախտման դեպքերից տարբերվում է սուբյեկտիվ կողմով: Մասնավորապես՝ խարդախությունը սուբյեկտիվ կողմից բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ, ինչը ենթադրում է, որ հանցավորը գիտակցում է, որ խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով հափշտակում է ուրիշի գույքը, ինչպես նաև նախատեսում և ցանկանում է դա:*

Միևնույն ժամանակ խարդախության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է շահադիտական նպատակի առկայությամբ, այսինքն՝ մինչև գույքին կամ գույքային իրավունքին տիրանալը հանցավորը նպատակ է ունենում հափշտակել այն, չվերադարձնել գույքը, չկատարել խոստումը կամ պայմանագրային պարտավորությունները: Մինչդեռ քաղաքացիաիրավական պարտավորությունների խախտման դեպքում անձը նման նպատակ չի ունենում:

(...) Անձի կողմից խարդախություն կատարելու դիտավորության առկայության մասին, մասնավորապես, կարող են վկայել պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ֆինանսական կամ տեխնիկական միջոցների, համապատասխան արտոնագրերի բացակայությունը, հանցավորի կողմից կեղծ փաստաթղթերի, երաշխավորագրերի օգտագործումը, ունեցած ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկությունները թաքցնելը, կեղծ ձեռնարկություն ստեղծելը, որը հանդես է եկել որպես պայմանագրի կողմ և այլն:

(...) վերը նշված փաստական հանգամանքների հետ մեկտեղ յուրաքանչյուր դեպքում, գործով ձեռք բերված ապացույցների ամբողջ զանգվածի գնահատմամբ, պետք է հիմնավորվի, որ անձը նպատակադրված չի եղել

իրականացնելու իր վրա վերցված քաղաքացիաիրավական պարտավորությունները և ցանկացել է խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակել ուրիշին պատկանող գույքը:

Ընդ որում, եթե ապացույցների բավարար համակցությամբ և հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով չի հաստատվում վերոգրյալը, ապա անձի արարքում բացակայում է խարդախության հանցակազմը, հետևաբար նրան պատասխանատվության ենթարկելու հարցը պետք է լուծվի մասնավոր իրավունքի տիրույթում՝ քաղաքացիաիրավական և քաղաքացիադատավարական միջոցներով» (տե՛ս Վարդան Մաթևոսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵՇԴ/0037/01/11 որոշման 25-րդ և 27-րդ կետերը):

12.2. Զարգացնելով *Լ.Ավետիսյանի* և *Վ.Մաթևոսյանի* վերաբերյալ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը *Ռուդիկ Բալասանյանի* գործով որոշմամբ արձանագրել է. *«(…) [Ք]րեական գործերի քննության շրջանակներում դատարանն իրավասու չէ քրեական դատավարության կարգով քննություն իրականացնել քաղաքացիական բնույթի իրավահարաբերությունները (վեճը) պարզելու ուղղությամբ և հաստատել այդպիսի վեճի առարկան կազմող իրավաբանական փաստեր: Վճռաբեկ դատարանի վերջին դիրքորոշումը հիմնավորվում է համապատասխան փաստերը հաստատելու քաղաքացիադատավարական կանոնների՝ քրեադատավարական կանոններից սկզբունքային տարբերությամբ և դրանք մեկը մյուսով փոխարինելու անթույլատրելիությամբ: Հակառակ դեպքում քրեական վարույթ իրականացնող դատարանը դուրս կգա իր իրավասության սահմաններից, արդյունքում կխաթարվի քաղաքացիաիրավական ու քաղաքացիադատավարական հարաբերությունների ներքին տրամաբանությունը* (տե՛ս Ռուդիկ Բալասանյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵԿԴ/0199/01/13 որոշման 17-րդ կետը):

13. Հիմք ընդունելով մեջբերված որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ խարդախությունը հափշտակության ինքնուրույն ձևերից մեկն է, որը բնութագրվում է օբյեկտիվ կողմի իրականացման առանձնահատուկ եղանակներով, այն է՝ խաբեության միջոցով կամ վստահությունը չարաշահելով: Հետևաբար յուրաքանչյուր գործով խարդախության օբյեկտիվ կողմի առկայությունը հավաստելու համար անհրաժեշտ է գործի փաստական տվյալների ամբողջությամբ հիմնավորել՝ ինչումն է դրսևորվել հանցավորի կողմից գործադրված խաբեությունը կամ վստահությունը չարաշահելը, որի արդյունքում մոլորության մեջ ընկած սեփականատերը կամ իրավասու այլ անձը կամավոր կերպով գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները հանձնել է հանցագործին

կամ այլ անձի կամ անձանց, կամ չի խոչընդոտել վերջիններիս կողմից այդ գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները վերցնելուն:

Ինչ վերաբերում է խարդախության սուբյեկտիվ կողմին, ապա յուրաքանչյուր դեպքում, գործով ձեռք բերված ապացույցների ամբողջ զանգվածի գնահատմամբ, պետք է հիմնավորվի, որ հանցավորը մինչև գույքը վերցնելը կամ գույքին տիրանալն ի սկզբանե նպատակ է ունեցել հափշտակելու այն կամ ի սկզբանե նպատակադրված է եղել չկատարելու իր վրա վերցված քաղաքացիաիրավական պարտավորությունը:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ 2015 թվականի հոկտեմբերի 31-ի որոշմամբ թիվ 38102215 քրեական գործի վարույթը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով՝ Հ.Գալստյանի արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ, կարճվել է (տե՛ս սույն որոշման 1-ին կետը):

Նախաքննության մարմինն արձանագրել է, որ Ս.Ավետիսյանի և Հ. Գալստյանի միջև երկար ժամանակ ընկերական հարաբերություններ են եղել, գումարները վերջինիս փոխանցելու պահին նրանց միջև հստակ պայմանավորվածություն չի եղել դրանց վերադարձման ժամկետների վերաբերյալ, ինչը վկայում է Ս.Ավետիսյանի և Հ.Գալստյանի միջև առկա վստահության մասին: Ինչ վերաբերում է Հ.Գալստյանի կողմից Ս.Ավետիսյանին ներկայացված կեղծ փաստաթղթերին, որոնց համաձայն՝ Հ.Գալստյանը հանդիսանում է մոտ 6.800.000 ֆունտ ստեռլինգ գումարի ժառանգորդ, ապա Ս.Ավետիսյանը դրանք ուսումնասիրելուց հետո հասկացել է, որ այդ փաստաթղթերը կեղծ են, ինչի մասին հայտնել է Հ.Գալստյանին: Միևնույն ժամանակ նա շարունակել է վերջինիս պարտքով գումար տալ, ուստի նշված փաստաթղթերը չէին կարող Ս.Ավետիսյանի կողմից ընկալվել որպես Հ.Գալստյանի անձի նկատմամբ վստահության առաջացման հիմք: Արդյունքում նախաքննական մարմինն արձանագրել է, որ Հ.Գալստյանի կողմից Ս.Ավետիսյանի վստահությունը չարաշահելու, խաբեության եղանակով առանձնապես խոշոր չափերի գումար հափշտակելու փաստը չի հաստատվել, իսկ Ս.Ավետիսյանի և Հ.Գալստյանի միջև գումարի վերադարձման հետ կապված հարցերը կրում են քաղաքացիաիրավական բնույթ (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը 2016 թվականի հոկտեմբերի 5-ի որոշմամբ Ս.Ավետիսյանի բողոքը ճանաչել է հիմնավոր՝ վարույթն իրականացնող մարմնին պարտավորցնելով վերացնել թիվ 38102215 քրեական գործով վարույթը կարճելու մասին 2015 թվականի հոկտեմբերի 31-ի որոշմամբ բողոքաբեր Ս.Ավետիսյանի իրավունքների խախտումը՝ արձանագրելով, որ նախաքննության մարմինը չի պարզել՝ իրականում Հ.Գալստյանը Ս.Ավետիսյանի կողմից իրեն տված գումարները ներդրե՞լ է արդյոք որևէ գործարար գործունեության մեջ, թե ոչ, եթե ոչ, ապա՝ ինչ նպատակով է օգտագործել այդ գումարները: Առաջին ատյանի դատարանն ընդգծել է նաև, որ նա-

խաբննության մարմինը միջոցներ չի ձեռնարկել պարզելու՝ կա՞ն արդյոք վկաներ, որոնց կողմից հայտնած տեղեկությունները կապացուցեն կամ կհերքեն գործի համար նշանակություն ունեցող որևէ հանգամանք, մասնավորապես՝ կբացահայտեն Հ.Գալստյանի դիտավորությունը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր հերթին արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանի եզրահանգումները հիմնավոր են, քանի որ բխում են ինչպես գործող օրենսդրության պահանջներից, այնպես էլ գործի փաստական հանգամանքներից (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

15. Գործում առկա տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ Հ.Գալստյանի խնդրանքով Ս.Ավետիսյանը նրան է տրամադրել 2300 եվրո՝ Երևան քաղաքի Մասիվ թաղամասում հողամաս գնելու նպատակով, այնուհետև Դուբայ մեկնելու համար փոխանցել է 3000 ԱՄՆ դոլար, իսկ 2013 թվականի մայիսին Հ.Գալստյանն անձնական հարցեր կարգավորելու համար Ս.Ավետիսյանից խնդրել է 500.000 ՀՀ դրամ: Ս.Ավետիսյանն իր ցուցմունքներում նշել է, որ Հ.Գալստյանի հետ հանդիպումների ընթացքում քննարկել են նաև համատեղ բիզնես հիմնադրելու կամ իր գումարներն արդեն իսկ գոյություն ունեցող բիզնեսներում ներդնելու հարցերը (տե՛ս նյութեր, հատոր 4, թերթեր 24-26):

Հ.Գալստյանը ցուցմունք է տվել այն մասին, որ ինքը Ս.Ավետիսյանից մի քանի անգամ պարտքով գումար է խնդրել, և վերջինս տարբեր ժամանակահատվածներում իրեն է տվել 5900 ԱՄՆ դոլար և 2300 եվրո: Ֆինանսական խնդիրների պատճառով ինքը չի կարողացել ժամանակին վերադարձնել Ս.Ավետիսյանի պարտքը, սակայն նրան խաբելու նպատակ չի ունեցել (տե՛ս նյութեր, հատոր 4, թերթեր 27-32):

16. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ փաստական տվյալներից չի հետևում՝ Հ.Գալստյանի կոնկրետ որ գործողություններն են Ս.Ավետիսյանին գցել մոլորության մեջ, ինչի արդյունքում վերջինս կամավոր կերպով իրեն պատկանող գույքը հանձնել է Հ.Գալստյանին: Ընդհակառակը, գործի փաստերից բխում է, որ նրանց միջև եղել են ընկերական հարաբերություններ, իսկ գումարները Հ.Գալստյանին փոխանցելիս դրանց վերադարձման ժամկետների վերաբերյալ Հ.Գալստյանի և Ս.Ավետիսյանի միջև անգամ հստակ պայմանավորվածություն չի եղել: Ինչ վերաբերում է Հ.Գալստյանի կողմից Ս.Ավետիսյանին ներկայացված կեղծ փաստաթղթերին, ապա ըստ գործի նյութերի՝ Ս.Ավետիսյանը ուսումնասիրել և դրանց կեղծ լինելու մասին տեղեկացրել է Հ.Գալստյանին, որպիսի հանգամանքը ողջամտորեն չէր կարող ազդեցություն ունենալ Ս.Ավետիսյանի գիտակցության ու կամքի վրա և նրան մոլորության մեջ գցել, հատկապես հաշվի առնելով այն, որ դրանից հետո նա շարունակել է գումար տալ Հ.Գալստյանին:

Ուստի Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հ.Գալստյանի արարքում բացակայում է խարդախության հանցակազմի օբյեկտիվ կողմը, այն է՝ վստահությունը չարաշահելու միջոցով ուրիշի գույքին տիրանալը: Հանցակազմի օբյեկտիվ կողմի բացակայությունն արդեն իսկ հիմք է եզրահանգելու, որ Հ.Գալստյանի արարքում հանցագործության հատկանիշները բացակայում են:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով Հ. Գալստյանի արարքում խարդախության հանցակազմի սուբյեկտիվ կողմի առկայությանը, ընդգծում է, որ գործի նյութերում առկա չէ որևէ տվյալ առ այն, որ Հ.Գալստյանը նախքան գույքը վերցնելն ի սկզբանե այն հափշտակելու, իր ստանձնած պարտավորությունը չկատարելու նպատակ է հետապնդել: Ավելին՝ վերջինիս տված ցուցմունքներից երևում է, որ նա ֆինանսական խնդիրների պատճառով չի կարողացել ժամանակին վերադարձնել Ս.Ավետիսյանի պարտքը և նրան խաբելու նպատակ չի հետապնդել: Հետևաբար Հ.Գալստյանի արարքում խարդախության հանցակազմի սուբյեկտիվ կողմը նույնպես բացակայում է:

17. Ինչ վերաբերում է Առաջին ատյանի դատարանի այն փաստարկին, որ նախաքննության մարմինը չի պարզել՝ իրականում Հ.Գալստյանը Ս.Ավետիսյանի կողմից իրեն տված գումարները ներդրե՞լ է արդյոք որևէ գործարար գործունեության մեջ, թե ոչ, ինչպես նաև միջոցներ չեն ձեռնարկվել պարզելու՝ կա՞ն արդյոք վկաներ, որոնց կողմից հայտնած տեղեկությունները կապացուցեն կամ կհերքեն գործի համար նշանակություն ունեցող որևէ հանգամանք, ինչի արդյունքում չի իրագործվել տուժող Ս.Ավետիսյանին պատճառված վնասի վերականգնումը, վնաս պատճառած արարքի հանգամանքների ամբողջական բացահայտումը և դրա ճիշտ քրեաիրավական որակումը, ապա Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ նախաքննության մարմինը կատարել է անհրաժեշտ քննչական և դատավարական գործողություններ, որոնց արդյունքում ձեռք բերված տվյալները վկայում են Հ.Գալստյանի արարքում խարդախության հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների բացակայության մասին, ինչից հետո միայն որոշում է կայացվել Հ.Գալստյանի կողմից խարդախություն կատարելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործի վարույթը կարճելու և նրա նկատմամբ հանցակազմի բացակայության հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու մասին:

18. Հաշվի առնելով սույն որոշման 12-17-րդ կետերում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դիմողի բողոքը հիմնավոր համարելու և նրա իրավունքների խախտումը վերացնելու պարտականություն սահմանելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևություններն իրավաչափ չեն:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ս.Ավետիսյանի և Հ.Գալստյանի միջև առկա է քաղաքացիաիրավական բնույթի վեճ, որը պետք է լուծվի մաս-

նավոր իրավունքի տիրույթում՝ քաղաքացիաիրավական և քաղաքացիադատավարական իրավունքի նորմերին համապատասխան:

19. Հիմք ընդունելով վերոգրյալ դատողությունները՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ստորադաս դատարանների կողմից թույլ տրված խախտումներն իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների համաձայն, հիմք են Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների դատական ակտերը բեկանելու համար: Միաժամանակ հաշվի առնելով սույն որոշման 17-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև ելնելով արդարադատության արդյունավետության շահից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դիմող Ս.Ավետիսյանի բողոքը պետք է մերժել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 397-րդ, 398-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 5-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հունվարի 18-ի որոշումը բեկանել և դիմող Սասուն Ավետիսյանի բողոքը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

11.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱՔԴ/0986/06/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատախազ Ա.ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

2017 թվականի օգոստոսի 30-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով մեղադրյալ Արթուր Կոլյայի Խաչատրյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 2-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2013 թվականի ապրիլի 28-ին ՌԴ քննչական կոմիտեի Կեմերովոյի մարզի քննչական վարչության Կիսելյովսկ քաղաքի քննչական բաժնում ՌԴ քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 13110756 քրեական գործը:

2013 թվականի ապրիլի 29-ին Արթուր Խաչատրյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

2013 թվականի մայիսի 29-ին Ա.Խաչատրյանը ձերբակալվել է ՌԴ Քառնաուլ քաղաքում: Ընդ որում, մեղադրյալը ձերբակալման ժամանակ դիմադրություն է ցույց տվել ոստիկանության աշխատակիցներին:

Կիսելյովսկի քաղաքային դատարանի՝ 2013 թվականի մայիսի 31-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Խաչատրյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2013 թվականի օգոստոսի 19-ին ՌԴ քննչական կոմիտեի Կեմերովոյի մարզի քննչական վարչության Կիսելյովսկ քաղաքի քննչական բաժնում ՌԴ քրեական օրենսգրքի 30-րդ հոդվածի 3-րդ մաս - 105-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 13111491 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2013 թվականի սեպտեմբերի 9-ի որոշմամբ թիվ 13111491 քրեական գործը միացվել է թիվ 13110756 քրեական գործին:

2013 նոյեմբերի 5-ին Ա.Խաչատրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՌԴ քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասի «ե» կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մաս - 105-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» և «ե» կետերով:

2013 թվականի նոյեմբերի 27-ին քրեական գործն ուղարկվել է Կեմերովոյի մարզային դատարան: Նշված դատարանի՝ 2013 թվականի դեկտեմբերի 6-ի որոշմամբ Ա.Խաչատրյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է մինչև 2014 թվականի մայիսի 27-ը:

Երդվյալ ատենակալների կոլեգիայի վերդիկտի հիման վրա Ա.Խաչատրյանը 2014 թվականի մարտի 31-ին ազատ է արձակվել:

Կեմերովոյի մարզային դատարանի՝ 2014 թվականի ապրիլի 2-ի դատավճռով Ա.Խաչատրյանը ճանաչվել է անմեղ և արդարացվել:

ՌԴ գերագույն դատարանի՝ 2014 թվականի հուլիսի 2-ի որոշմամբ Կեմերովոյի մարզային դատարանի վերոնշյալ դատավճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Երդվյալ ատենակալների կոլեգիայի՝ 2014 թվականի դեկտեմբերի 18-ի վերդիկտով Ա.Խաչատրյանը մեղավոր է ճանաչվել իրեն մեղսագրված արարքների կատարման համար:

2014 թվականի դեկտեմբերի 28-ին Ա.Խաչատրյանը լքել է ՌԴ տարածքը և չի ներկայացել Կեմերովոյի մարզային դատարանի՝ վերոնշյալ վերդիկտի հետևանքների քննարկման կապակցությամբ 2015 թվականի հունվարի 13-ին, նույն թվականի հունվարի 27-ին, փետրվարի 11-ին և փետրվարի 27-ին նշանակված դատական նիստերին:

Կեմերովոյի մարզային դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 27-ի որոշմամբ քրեական գործով վարույթը կասեցվել է մինչև Ա.Խաչատրյանի հայտնաբերումը: Նույն որոշմամբ Ա.Խաչատրյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 3 ամիս ժամկետով:

Քննության ընթացքում պարզվել է, որ Ա.Խաչատրյանը ՀՀ քաղաքացի է և գտնվում է Հայաստանում:

1.1. ՌԴ գլխավոր դատախազության միջոցով թիվ 13110756 քրեական գործն ուղարկվել է ՀՀ գլխավոր դատախազություն՝ Ա.Խաչատրյանի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու միջնորդությամբ:

2016 թվականի սեպտեմբերի 22-ին թիվ 13110756 քրեական գործը ՀՀ գլխավոր դատախազությունից ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտե, նույն թվականի հոկտեմբերի 11-ին այն ընդունվել է վարույթ, և գործին շնորհվել է թիվ 69109316 համարը:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի դեկտեմբերի 13-ի որոշմամբ Ա.Խաչատրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով և 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 6-րդ կետերով: Նույն օրը նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

2016 թվականի դեկտեմբերի 20-ին Ա.Խաչատրյանը ձերբակալվել է, և նրան մեղադրանք է առաջադրվել վերը նշված հոդվածներով:

2. Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2016 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Խաչատրյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 ամիս ժամկետով: Նույն որոշմամբ մերժվել է կալանքը գրավով փոխարինելու վերաբերյալ պաշտպան Վ.Բոյաջյանի միջնորդությունը:

3. Պաշտպանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի փետրվարի 2-ին որոշում է կայացրել բողոքը բավարարելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 22-ի որոշումը բեկանելու, մեղադրյալ Ա.Խաչատրյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշումը վերացնելու և նրան անհապաղ ազատ արձակելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի մայիսի 25-ի որոշմամբ ներկայացված բողոքը վարույթ է ընդունվել:

Մեղադրյալ Ա.Խաչատրյանի պաշտպան Պ.Բոյաջյանը ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան՝ խնդրելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի վճռաբեկ բողոքը վարույթ չընդունել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Ա.Խաչատրյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա *«(...) 2013 թվականի ապրիլի 28-ին՝ ժամը 03:00-ից 04:00-ն ընկած ժա-*

մանկահատվածում, գտնվելով Կիսելյովսկ քաղաքի Ստուդենչեսկայա 10 ա հասցեում տեղակայված՝ «Միրաժ» սրճարանի տիրոջ աշխատասենյակում, լինելով սպառազինված ռազմամթերքով լիցքավորված MP-133 մոդելի թիվ 1113313259 որսորդական ողորկափող հրազենով, այն ժամանակ, մինչ Մաքսիմ Դովիդկովը փորձել է զինաթափել Արթուր Խաչատրյանին՝ վերցնելով զենքը, վերջինիս, դիտավորյալ, սպանության նպատակով, այն է՝ Մաքսիմ Դովիդկովին մահ պատճառելու դիտավորությամբ, հանկարծակի առաջացած անձնական անբարյացակամ վերաբերմունքի հողի վրա՝ այն պատճառով, որ Մաքսիմ Դովիդկովը փորձել է վերցնել նրանից զենքը, գիտակցելով իր գործողությունների հասարակական վտանգավորությունը և կանխատեսելով մահվան տեսքով ծանր հետևանքներ առաջանալու հնարավորությունը և անխուսափելիությունը, ակնհայտ իմանալով, որ Մաքսիմ Դովիդկովի սպանության կատարման իր կողմից օգտագործվող եղանակը՝ հրազենից կրակոցներ արձակելը մարդկանց հավաքված վայրում, սահմանափակ տարածության մեջ, հանդիսանում է հանրորեն վտանգավոր, քանի որ տնօրենի աշխատասենյակում Մաքսիմ Դովիդկովի հետ միասին մոտ՝ 25-100 սմ տարածության վրա գտնվել են Վիտալի Կորնևը և Դ.Դովիդկովան, որոնց կյանքի համար առաջացել է վտանգ, վերջիններիս ներկայության մասին Արթուր Խաչատրյանին ստույգ հայտնի է եղել, որսորդական ողորկափող հրազենից կրակոց է արձակել իր առջև կանգնած Մաքսիմ Դովիդկովի վրա, սակայն նա, Վ.Կորնևի կողմից բանավոր կերպով նախազգուշացված լինելով առաջացող վտանգի մասին, Արթուր Խաչատրյանի կողմից արձակված կրակոցի պահին կռացել է, և փամփուշտի մեջ լիցքավորված մանրագնդակն Արթուր Խաչատրյանի կողմից արձակված կրակոցի արդյունքում դիպչել է Վիտալի Կորնևի մեջքին, որի արդյունքում Վիտալի Կորնևին պատճառվել է աջ պլևրալ խոռոչ թափանցող կրծքավանդակի հրազենային թափանցող կոտորակային վնասվածք՝ 3-5-րդ կրծքային ողերի, ողնուղեղի և այդ մակարդակում գտնվող նրա թաղանթի գործնականորեն ամբողջական քայքայմամբ՝ վնասելով աջ թոքի վերին հատվածը, առջևի և հետևի ենթամկանային գծերի միջև աջից 2-3-րդ կողերը, աջ պլևրալ խոռոչում արյունազեղում, որակվում է կյանքի համար վտանգավորության հատկանիշներով որպես առողջության ծանր վնաս և ուղիղ պատճառահետևանքային կապի մեջ է գտնվում տուժող Վ.Կորնևի մահվան հետ:

Վ.Կորնևի մահը վրա է հասել աջ պլևրալ խոռոչ թափանցող կրծքավանդակի հրազենային թափանցող կոտորակային վնասվածքի՝ 3-5-րդ կրծքային ողերի, ողնուղեղի և այդ մակարդակում գտնվող նրա թաղանթի գործնականորեն ամբողջական քայքայման՝ վնասելով աջ թոքի վերին հատվածը, առջևի և հետևի ենթամկանային գծերի միջև աջից 2-3-րդ կողերը, աջ պլևրալ խոռոչում արյունազեղման արդյունքում, որը պատճառվել է Արթուր Խաչատրյանի կողմից, ով դրանով սպանել է վերջինիս:

Բացի այդ, Արթուր Խաչատրյանը, գտնվելով Կիսելյովսկ քաղաքի Ստուդենչեսկայա 10 ա հասցեում տեղակայված՝ «Միրաժ» սրճարանի տիրոջ աշխատասենյակում, լինելով սպառազինված ռազմամթերքով լիցքավորված MP-133 մոդելի թիվ 1113313259 որսորդական ողորկափող հրազենով, հանկարծակի առաջացած վիճաբանության ընթացքում հետագա կիրառման նպատակով, այն ժամանակ, մինչ Մաքսիմ Դովիդկովը փորձել է զինաթափել Արթուր Խաչատրյանին՝ վերցնելով նրա ձեռքից զենքը, Արթուր Խաչատրյանը դիտավորությամբ, սպանության նպատակով, այն է՝ Մաքսիմ Դովիդկովին մահ պատճառելու դիտավորությամբ, ինչպես նաև երկու և ավելի անձանց՝ նախկինում իրեն անծանոթ Վիտալի Կորնևին և Դ.Դովիդկովային, հանկարծակի առաջացած անձնական անբարյացակամ վերաբերմունքի հողի վրա, այն պատճառով, որ Մաքսիմ Դովիդկովը փորձել է վերցնել նրանից զենքը, գիտակցելով իր գործողությունների հասարակական վտանգավորությունը և կանխատեսելով մահվան տեսքով ծանր հետևանքներ առաջանալու հնարավորությունը և անխուսափելիությունը, ցանկանալով նրանց առաջանալը, ինչպես նաև ստույգ իմանալով, որ Մաքսիմ Դովիդկովի սպանության կատարման՝ իր կողմից օգտագործվող եղանակը՝ հրազենից կրակոցներ արձակելը մարդկանց հավաքված վայրում, սահմանափակ տարածության մեջ, հանդիսանում է հանրորեն վտանգավոր, քանի որ տնօրենի աշխատասենյակում Մաքսիմ Դովիդկովի հետ միասին մոտ՝ 25-100 սմ տարածության վրա գտնվել են Վ.Կորնևը և Դ.Դովիդկովան, այսինքն՝ երկու և ավելի անձինք, որոնց կյանքի համար առաջացել է վտանգ, վերջիններիս ներկայության մասին Արթուր Խաչատրյանին ստույգ հայտնի է եղել, Մ.Դովիդկովին, Վ.Կորնևին և Դ.Դովիդկովային կրակոցով վնասելու համար հնարավոր մոտ տարածությունից որսորդական ողորկափող հրազենից կրակոց է արձակել իր առջև կանգնած Մ.Դովիդկովի վրա, որի հետևում են գտնվել Վ.Կորնևը և Դ.Դովիդկովան, այսինքն՝ Արթուր Խաչատրյանի կողմից արձակված կրակոցի արդյունքում Վիտալի Կորնևին պատճառվել է մահ՝ աջ պլևրալ խոռոչ թափանցող կրծքավանդակի հրազենային թափանցող կոտորակային վնասվածքի՝ 3-5 կրծքային ողերի, ողնուղեղի և այդ մակարդակում գտնվող նրա թաղանթի գործնականորեն ամբողջական քայքայմամբ՝ վնասելով աջ թոքի վերին հատվածը, առջևի և հետևի ենթամկանային գծերի միջև աջից 2-3 կողերը, աջ պլևրալ խոռոչում արյունազեղման տեսքով:

Արթուր Խաչատրյանի գործողությունների արդյունքում Վիտալի Կորնևին պատճառվել է մահ, այն է՝ սպանել է նրան, իսկ Մ.Դովիդկովի և Դ.Դովիդկովայի նկատմամբ Ա.Խաչատրյանը չի կարողացել ավարտին հասցնել իր հանցավոր գործողությունները՝ իրենից անկախ հանգամանքներում, քանի որ Մ.Դովիդկովը կարողացել է շրջվել Ա.Խաչատրյանի կողմից արձակված կրակոցից, որը չի առաջացրել մարմնական վնասվածքներ, իսկ Դ.Դովիդկովային մահ չի պատճառվել, քանի որ կրակոցի ժամանակ փամ-

փուշտի արձակված մասնիկները չեն խոցել կենսական կարևոր օրգանները (...)» (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 59-61):

6. Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ *«(...) [Առաջին ատյանի դատարանը] (...) եկավ այն համոզման, որ հիմնավոր կասկած կա այն մասին, որ մեղադրյալն առնչություն ունի մեղսագրված արարքի կատարման հետ, որը հիմնավորվում է սույն միջնորդությանը կից [Առաջին ատյանի դատարան] ներկայացված վկաներ Մ.Դովիդկովի, Դ.Դովիդկովայի 04.05.2013թ. հարցաքննությունների, տուժող Մ.Դովիդկովի 19.08.2013թ. հարցաքննության, վկա Դ.Դովիդկովայի 04.09.2013թ. լրացուցիչ հարցաքննության արձանագրություններով և այլ նյութերով, ինչպես նաև հաշվի առնելով մեղադրյալին վերագրվող արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, այն, որ վերջինիս վերագրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով և 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 6-րդ կետերով նախատեսված արարք, և նշված հանցագործության համար նախատեսվում է պատիժ ազատազրկում՝ տասներկուսից քսան տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկում, իսկ գործի հանգամանքները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ մեղադրյալը, մնալով ազատության մեջ, կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, կարող է քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը, գտավ, որ առկա են Ա.Խաչատրյանի նկատմամբ խափանման միջոց կալանք ընտրելու հիմքերը, հետևաբար պետք է բավարարել միջնորդությունը:*

Անդրադառնալով մեղադրյալի և վերջինիս պաշտպանի առարկությունների փաստարկներին, այդ թվում՝ հիմնավոր կասկածի և կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հիմքերի բացակայության հետ, [Առաջին ատյանի դատարանը] գտնում է, որ դրանք անհիմն են և հերքվում են (...) վերոշարադրյալ պատճառաբանություններով, նկատի ունենալով, որ [Առաջին ատյանի դատարանը] վերը նշված հիմնավորմամբ եկել է այն եզրահանգման, որ միջնորդությանը կից ներկայացված նյութերից բխում է, որ առկա են հիմնավոր կասկածներ առ այն, որ մեղադրյալը հնարավոր է կատարած լինի իրեն վերագրվող արարքը, ինչպես նաև [Առաջին ատյանի դատարանը] գտել է, որ նման պայմաններում բարձր են հավանական ռիսկերն առ այն, որ մեղադրյալը, ազատության մեջ մնալով, կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, կարող է քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը:

Միաժամանակ, [Առաջին ատյանի դատարանը], քննարկելով մեղադրյալի պաշտպանի միջնորդությունը՝ կալանավորման այլընտրանքային խափանման միջոց հանդիսացող գրավով ազատելու հնարավորության

հարցը, գտնում է, որ այն քրեական գործի տվյալ փուլում անթույլատրելի է (...):

(...) [Առաջին ատյանի դատարանը] հաշվի է առնում մեղադրյալի պաշտպանի կողմից ներկայացված տեղեկությունները՝ կապված մեղադրյալի անձը բնութագրող հատկանիշների և ընտանեկան դրության հետ, սակայն արձանագրում է, որ ներկա պահին խափանման միջոց կալանքի փոխարեն այլընտրանքային խափանման միջոց՝ գրավ կիրառելու բավարար հիմքեր առկա չեն, քանի որ մեծ է հավանականությունը, որ մեղադրյալը, ազատության մեջ մնալով, հնարավոր է ձեռնարկի այնպիսի քայլեր, որով կխոչընդոտի մեղադրանքի կողմի գործողությունները, այդ թվում՝ կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, կարող է քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը, իսկ նման ենթադրություններ կատարելու համար [Առաջին ատյանի դատարանը] հիմնվում է ներկայացված փաստերի, տեղեկությունների, ինչպես նաև կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերի առկայության վերաբերյալ վերևում ներկայացված հանգամանքների վրա (...)» (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 85-90):

7. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ *«(...) [Ն]երկայացված նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ.*

- 2014 թվականի մարտի 31-ին երդվյալ ատենակալների կողմից տրված եզրակացության հիման վրա ՌԴ Կեմերովոյի մարզային դատարանը 2014 թվականի ապրիլի 2-ին կայացրել է արդարացման դատական ակտ և փոխել Արթուր Խաչատրյանի նկատմամբ ընտրված խափանման [միջոց] կալանավորումը՝ ազատելով նրան դատական նիստերի դահլիճում,

- դրանից հետո՝ 2014 թվականին, Արթուր Խաչատրյանը վերադարձել է Հայաստան, դուրս է գրվել իր հաշվառման վայրի՝ Երևան քաղաքի Գրիբոյեդովի 2/1 շենքի 57 հասցեից և հաշվառվել ու փաստացի բնակվել է Իջևան քաղաքի Մայիսի 28-ի փողոցի 29-րդ տանը,

- տեղեկանալով, որ ՌԴ Կեմերովոյի մարզային դատարանի 2014 թվականի ապրիլի 2-ի դատավճիռը բողոքարկվել, բեկանվել, և նոր դատաքննություն է նշանակվել, Արթուր Խաչատրյանը մեկնել է ՌԴ և մասնակցել նոր դատաքննությանը,

- 2014 թվականի դեկտեմբերի 18-ին երդվյալ ատենակալները կրկին եզրակացություն են տվել այն մասին, որ ապացուցված չէ Արթուր Խաչատրյանի առնչությունը մեղսագրվող արարքի կատարմանը և այդ մասին հայտարարել են դատարանում, որից հետո նախագահող դատավորը նրանց առաջարկել է մեկ անգամ ևս քննարկել տվյալ հարցը (...),

- այնուհետև երդվյալ ատենակալները, փոխելով իրենց կարծիքը, նշել են, որ Արթուր Խաչատրյանի կատարած հանցանքն ապացուցված է, սա-

կայն նրանք վերապահում են կատարել, որ նա չի ցանկացել Մաքսիմ Դովիդկովին կյանքից զրկել,

- դրանից հետո Արթուր Խաչատրյանը վերադարձել է Հայաստան,

- 2015 թվականի փետրվարի 27-ին ՌԴ Կեմերովոյի մարզային դատարանն Արթուր Խաչատրյանի նկատմամբ հայտարարել է հետախուզում և որոշում կայացրել նրա նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորում ընտրելու մասին,

- Արթուր Խաչատրյանը, տեղեկանալով իր նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին, 2015 թվականի ապրիլի 27-ին կամովին ներկայացել է ՀՀ ոստիկանության Իջևանի բաժին և հայտնել, որ ինքը ՌԴ Կեմերովոյի մարզի ոստիկանության կողմից գտնվում է հետախուզման մեջ (նշված հանգամանքը հաստատվում է ներկայացված նյութերում առկա ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 30-ի որոշմամբ),

- 2015 թվականի ապրիլի 30-ին ՀՀ Տավուշի մարզի դատախազի տեղակալ Ն.Չիլինգարյանը միջնորդություն է ներկայացրել ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ Արթուր Խաչատրյանի նկատմամբ 40 օր ժամկետով կալանավորում կիրառելու համար, որն էլ դատարանի կողմից մերժվել է,

- դրանից հետո, նկատի ունենալով, որ Արթուր Խաչատրյանը հանդիսանում է ՀՀ քաղաքացի և գտնվում է ՀՀ-ում, թիվ 13110756 քրեական գործը ՌԴ գլխավոր դատախազության միջոցով ուղարկվել է ՀՀ գլխավոր դատախազություն՝ Արթուր Խաչատրյանի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու համար,

- 2016 թվականի հոկտեմբերի 11-ին ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ա.Կարապետյանի որոշմամբ ՌԴ քննչական կոմիտեի Կեմերովոյի մարզի քննչական վարչության Կիսելյովսկ քաղաքի քննչական բաժնում՝ ՌԴ քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված թիվ 13110756 քրեական գործն ընդունվել է վարույթ, որին շնորհվել է 69109316 համարը,

- Արթուր Խաչատրյանին հայտնաբերելու համար 2016 թվականի հոկտեմբերի 27-ին վարույթն իրականացնող մարմնի կողմից գրություն է ուղարկվել ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժին, որտեղից պատասխան է ստացվել, որ Արթուր Խաչատրյանը Երևան քաղաքի Գրիբոյեդովի 2/1 շենքի 57-րդ բնակարանում չի բնակվում, և նրա գտնվելու վայրի վերաբերյալ որևէ տեղեկություն չի ստացվել,

- 2016 թվականի դեկտեմբերի 13-ին Արթուր Խաչատրյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում,

- 2016 թվականի դեկտեմբերի 20-ին Արթուր Խաչատրյանը հայտնաբերվել է Իջևան քաղաքի Մայիսի 28-ի փողոցի 29-րդ տանը և ներկայացվել վարույթը իրականացնող մարմին:

Վերոգրյալ փաստական հանգամանքների առկայության պայմաններում Վերաքննիչ դատարանի համար անհասկանալի է վարույթը իրականացնող մարմնի կողմից Առաջին ատյանի դատարան ներկայացված միջնորդության մեջ նշված այն եզրահանգումը, որ Արթուր Խաչատրյանը չի ներկայացել քննությանը, և երկու անգամ նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում, ուստի մեծ է նրա կողմից վարույթը իրականացնող մարմնից թաքնվելու հավանականությունը, քանի որ ներկայացված նյութերում առկա տվյալների համաձայն՝ 2014 թվականին Արթուր Խաչատրյանը, վերադառնալով Հայաստան, դուրս է գրվել իր հաշվառման վայրի՝ Երևան քաղաքի Գրիբոյեդովի 2/1 շենքի 57 հասցեից և հաշվառվել ու փաստացի բնակվել է Իջևան քաղաքի Մայիսի 28-ի փողոցի 29-րդ տանը, որից հետո՝ 2015 թվականի ապրիլի 27-ին, Արթուր Խաչատրյանը, տեղեկանալով իր նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին, կամովին ներկայացել է ՀՀ ոստիկանության Իջևանի բաժին և հայտնել, որ ինքը ՌԴ Կեմերովոյի մարզի ոստիկանության կողմից գտնվում է հետախուզման մեջ: Ավելին՝ վերոգրյալ փաստական հանգամանքների առկայության պայմաններում Վերաքննիչ դատարանի համար անհասկանալի է նաև, թե ինչու է վարույթը իրականացնող մարմինն Արթուր Խաչատրյանին հայտնաբերելու համար գրություն ուղարկել ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժին, այն դեպքում, երբ դեռևս 2014 թվականին Արթուր Խաչատրյանը դուրս է գրվել իր հաշվառման վայրի՝ Երևան քաղաքի Գրիբոյեդովի 2/1 շենքի 57 հասցեից և հաշվառվել ու փաստացի բնակվել է Իջևան քաղաքի Մայիսի 28-ի փողոցի 29-րդ տանը, իսկ վարույթը իրականացնող մարմնի կողմից գրությունն ուղարկվել է 2016 թվականի հոկտեմբերի 27-ին:

Այսպիսով՝ Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նկատել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով նախատեսված՝ մեղադրյալի հավանական գործողությունների մասին Առաջին ատյանի դատարանի հետևությունները հիմնված չեն գործի նյութերից բխող ողջամիտ ենթադրությունների վրա, ուստի Առաջին ատյանի դատարանի հիմնավորումներն ամենևին բավարար չեն մեղադրյալ Արթուր Խաչատրյանի ազատության կանխավարկածը հաղթահարելու և նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու համար, իսկ նման պայմաններում մեղադրյալ Արթուր Խաչատրյանին ազատությունից զրկելը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի հիման վրա ճևավորված նախադեպային իրավունքի իմաստով կդիտվի կամայականություն: Վերաքննիչ դատարանը միաժամանակ հարկ է համարում նկատել, որ սույն գործով չեն ներկայացվել բավարար փաստական տվյալներ առ այն, որ

խափանման մյուս միջոցները քրեական գործով վարույթի ընթացքում չեն կարող ապահովել մեղադրյալ Արթուր Խաչատրյանի պատշաճ վարքագիծը: Ավելին՝ Արթուր Խաչատրյանին մեղադրանք է առաջադրված 2013 թվականի ապրիլի 28-ին կատարված ենթադրյալ հանցագործությունների համար և սույն գործով ձեռք չի բերվել որևէ օբյեկտիվ տվյալ, որ Արթուր Խաչատրյանը, ենթադրյալ հանցագործության կատարումից հետո գտնվելով ազատության մեջ, կատարել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով նախատեսված գործողություններից որևէ մեկը (տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 42-51):

7.1. Վերաքննիչ դատարանը փաստել է նաև, որ *«(...) որոշում կայացնելիս հաշվի է առնում մեղադրյալ Արթուր Խաչատրյանի անձը՝ այն, որ նա ունի մշտական բնակության վայր, կամովին ներկայացել է ոստիկանություն, նախկինում դատապարտված չի եղել, բնութագրվում է դրականորեն, ունի բարձրագույն կրթություն (...)»* (տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 42-51):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի համոզմամբ Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական, հիմնավորված և պատճառաբանված չէ, դրանով թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

Բողոքաբերը, վերլուծելով մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելու վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՎԲ-132/07, թիվ ԱՎԴ/0022/06/08 և թիվ ԵԿԴ/0678/06/10 գործերով որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, եզրահանգել է, որ Վերաքննիչ դատարանը քննության առարկա չի դարձրել մեղադրյալ Ա.Խաչատրյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքում դրված մի շարք փաստական հանգամանքներ:

Մասնավորապես Վերաքննիչ դատարանը, չվիճարկելով մեղադրյալ Ա.Խաչատրյանի կողմից առերևույթ հանցանք կատարելու մասին հիմնավոր կասկածի առկայությունը, միևնույն ժամանակ գտել է, որ բացակայում են նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերը՝ անտեսելով, սակայն, Ա.Խաչատրյանի կողմից Ռուսաստանի Դաշնությունում առանց հարգելի պատճառների դատական նիստերին չներկայանալու և քրեական պատասխանատվությունից խուսափելու նպատակով վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու, այն է՝ ՀՀ վերադառնալու հանգամանքները:

Ըստ բողոքի հեղինակի՝ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածը, պատշաճ չի

գնահատել սույն գործի փաստական հանգամանքները, հաշվի չի առել Ա.Խաչատրյանին մեղսագրվող հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը, ինչի արդյունքում անհիմն վերացվել է մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը:

9. Վերոշարադրյալի հիման վրա ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի որոշմանը:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր են արդյոք Ա.Խաչատրյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշումը բեկանելու և նրան անհապաղ ազատ արձակելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

11. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝

«*Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով*՝

(...)

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած (...):

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

(…)

գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար.

(…)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր անձ ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք:

2. Ոչ ոք չի կարող արգելանքի վերցվել և պահվել անազատության մեջ այլ կերպ, քան սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով (…)»:

Նույն օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Դատարանը (…) խափանման միջոց կարող [է] կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝*

1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2) խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4) խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց.

5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը»:

Վերոշարադրյալ դրույթների կապակցությամբ Վճռաբեկ դատարանը դիրքորոշում է արտահայտել *Ա.Ավետիսյանի* գործով որոշմամբ՝ արձանագրելով, որ *«(...) [անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի] սահմանափակման իրավաչափության երաշխիքները կանոնակարգող իրավադրույթները մեկնաբանելիս անհրաժեշտ է ելնել մարդու իրավունքները հարգելու, մարդու իրավունքների սահմանափակման միջոցով հիմնական իրավունքը բովանդակազրկելու անթույլատրելիության սկզբունքներից»* (տե՛ս *Ա.Ավետիսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԴ/0022/06/08 որոշման 18-րդ կետը):

Մեկ այլ՝ *Ա.Ճուղուրյանի* գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ *«(….) ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունը սահմանել է կալանավորման կիրառման օրինականությունն ու հիմնավորվածությունն ապահովող մի շարք երաշխիքներ, որոնց մեջ առաջին հերթին կարևորվում ու առանձնանում են կալանավորման հիմքերը: Դրանք օրենքով նախատեսված այն հանգամանքներն են, որոնք հաստատվում են ապացույցների որոշակի ամբողջությամբ և հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել այն մասին, որ անձը, կալանքի տակ չգտնվելով, կարող է դրսևորել ոչ պատշաճ վարքագիծ և խոչընդոտել քրեական դատավարության խնդիրների իրականացմանը:*

(…) [Կ]ալանավորման կիրառման հիմքերն ունեն կանխատեսական, մոտավոր բնույթ, քանի որ ենթադրում են ապագային վերաբերող իրադարձություններ: Ընդ որում, այդ կանխատեսող գործողություններն անհրաժեշտ է հիմնավորել քրեական գործով ձեռք բերված որոշակի նյութերով, որով էլ վերջին հաշվով որոշվում է կալանավորման կիրառման հիմնավորվածությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված՝ մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ կասկածների կամ ենթադրությունների վրա: Դա նշանակում է, որ կալանավորման կիրառման հիմքում բոլոր դեպքերում պետք է դրվեն որոշ փաստական տվյալներ» (տե՛ս *Արամ Ճուղուրյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2007 թվականի օգոստոսի 30-ի թիվ ՎԲ-132/07 որոշումը):

11.1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *«Խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի [է] առնվում վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը»:*

Մեջբերված քրեադատավարական դրույթը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Վ.Պողոսյանի* գործով որոշման մեջ և իրավական դիրքորոշում ձևավորել այն մասին, որ *«(…) մեղադրյալին վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը թեև չեն կարող գնահատվել որպես կալանավորման հիմնավորվածությունը հաստատելու ինքնուրույն հիմք, այնուամենայնիվ դրանք էական նշանակություն ունեն խափանման միջոցի տեսակն ընտրելիս (…): Մեղսագրվող հանցանքի ծանրությունը և հետևաբար նաև ակնկալվող պատժի խստությունը հանդիսանում են քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կամ գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը գնահատելու կարևոր տարրեր և գործի նյութերից բխող մյուս հանգամանքների հետ միասին հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել անձի ազատության հիմնարար իրավունքը սահմանափակելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նույնանման իրավական դիրքորոշում բազմիցս իր նախադեպային նշանակության վճիռներում հայտնել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ի թիվս այլոց՝ տե՛ս Mamedova v. Russia, 2006 թվականի հունիսի 1-ի վճիռը, գանգատ թիվ 7064/05, կետ 74, Panchenko v. Russia 2005 թվականի փետրվարի 8-ի վճիռը, գանգատ թիվ 45100/98, կետ 102, Ilijkov v. Bulgaria, 2001 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 33977/96, կետ 81) (…)»* (տե՛ս *Վահագն Պողոսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԿԴ1/0062/06/12 որոշման 13-րդ կետը):

12. Սույն գործի նյութերից երևում է, որ Ա.Խաչատրյանին մեղադրանք է առաջադրվել շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով Վ.Կորնևին սպանելու, ինչպես նաև երկու անձանց՝ Մ.Դովիդկովի և Դ.Դովիդկովայի նկատմամբ նույն եղանակով սպանության փորձ կատարելու համար (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով արարքի բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը և հիմք ընդունելով սույն գործի փաստական հանգամանքները, գտել է, որ Ա.Խաչատրյանը, մնալով ազատության մեջ, կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալ կամ այլ ճանապարհով խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, վերլուծելով գործի փաստական հանգամանքները, գտել է, որ Առաջին ատյանի դատարանի հետևությունները հիմնված չեն գործի նյութերից բխող ողջամիտ ենթադրություններ վրա, և դրանք բավարար չեն մեղադրյալ Ա.Խաչատրյանի ազատության կանխավարկածը հաղթահարելու ու նրա նկատմամբ կալանավորում կիրառելու համար: Մասնավորապես գործով ձեռք չի բերվել որևէ օբյեկտիվ տվյալ առ այն, որ մեղադրյալը, ենթադրյալ հանցագործության կատարումից հետո գտնվելով ազատության մեջ, կատարել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով նախատեսված գործողություններից որևէ մեկը: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս հաշվի է առել մեղադրյալ Ա.Խաչատրյանի անձը, այն, որ նա ունի մշտական բնակության վայր, կամովին ներկայացել է ոստիկանություն, նախկինում դատապարտված չի եղել, բնութագրվում է դրականորեն, և ունի բարձրագույն կրթություն (տե՛ս սույն որոշման 7-րդ և 7.1-րդ կետերը):

13. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-11.1-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելիս հաշվի չի առել մեղադրյալի ոչ իրավաչափ վարքագծի մասին վկայող գործում առկա փաստական հանգամանքները՝ սխալ եզրահանգման գալով մեղադրյալ Ա.Խաչատրյանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գործողությունները կատարելու հավանականության վերաբերյալ: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելիս Առաջին ատյանի դատարանը, մատնանշելով քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և մինչդատական վարույթում գործի քննությանը վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով խոչընդոտելու հանգամանքները, թերի է պատճառաբանել դրանց հավանականությունը:

Այսպես՝ գործի փաստերից հետևում է, որ մեղադրյալ Ա.Խաչատրյանը ենթադրյալ հանցագործության կատարումից հետո՝ 2013 թվականի ապրիլի 28-ին, դիմել է փախուստի և հայտնաբերվել ու ձերբակալվել է մեկ ամիս անց՝ նույն թվականի մայիսի 29-ին, ավելին՝ Ա.Խաչատրյանը ձերբակալման ընթացքում դիմադրություն է ցույց տվել ոստիկանության աշխատակիցներին (տե՛ս սույն որոշման 1-ին կետը): Բացի այդ, մեղադրյալը, երդվյալ ատենակալների կոլեգիայի՝ 2014 թվականի դեկտեմբերի 18-ի վերդիկտով մեղավոր ճանաչվելով, նույն թվականի դեկտեմբերի 28-ին վերադարձել է Հայաստան՝ խուսափելով մասնակցել նշված վերդիկտի հետևանքների քննարկման կապակցությամբ նշանակված դատական նիստերին (տե՛ս նույն կետը):

13.1. Վճռաբեկ դատարանն ընդգծում է նաև, որ Վերաքննիչ դատարանը պատշաճ վերլուծության չի ենթարկել Ա.Խաչատրյանին մեղսագրվող արարքի բնույթը և հանրային վտանգավորության աստիճանը, ինչը գործի նյութերից բխող փաստական հանգամանքների համատեքստում հանդիսանում է քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կամ գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը գնահատելու կարևոր տարր: Մասնավորապես, գնահատման չեն ենթարկվել՝

ա) վերագրվող արարքի կատարման՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակը՝ այն, որ Ա.Խաչատրյանը հրազենից կրակոց է արձակել սահմանափակ տարածության մեջ՝ մի քանի անձանց ներկայությամբ,

բ) հանցավոր մտադրության իրականացման աստիճանը՝ այն, որ Ա.Խաչատրյանի ենթադրյալ գործողությունների արդյունքում Վ.Կորնևին պատճառվել է մահ, իսկ Մ.Դովիդկովը և Դ.Դովիդկովան չեն զրկվել կյանքից՝ մեղադրյալի կամքից անկախ հանգամանքներով (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Վերը նշված հանգամանքները պատշաճ գնահատման չենթարկելու հետևանքով Վերաքննիչ դատարանը չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի պահանջն այն մասին, որ խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս պետք է հաշվի առնվեն վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը:

14. Հիմք ընդունելով սույն որոշման 13-13.1-րդ կետերում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի եզրահանգումներն առ այն, որ մեղադրյալը, մնալով ազատության մեջ, կթաքնվի քրեական վարույթն իրականացնող մարմնից և կխոչընդոտի մինչդատական վարույթում գործի քննությանը՝ վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով, իրական են և բխում են դատարան ներկայացված ու գործի նյութերում առկա փաստական տվյալներից: Նման պայմաններում

անհիմն են Վերաքննիչ դատարանի այն պնդումները, որ *«սույն գործով ձեռք չի բերվել որևէ օբյեկտիվ տվյալ, որ Արթուր Խաչատրյանը, ենթադրյալ հանցագործության կատարումից հետո գտնվելով ազատության մեջ, կատարել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով նախատեսված գործողություններից որևէ մեկը»*:

14.1. Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից մատնանշված՝ Ա.Խաչատրյանի անձը բնութագրող հանգամանքներին և նրա վարքագծին (տե՛ս սույն որոշման 7.1-րդ կետը), ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք սույն որոշման 13-րդ կետում մեջբերված՝ կալանավորման հիմքերի առկայության մասին վկայող փաստական տվյալների առկայության պայմաններում չեն կարող բավարար լինել մեղադրյալի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը վերացնելու համար:

15. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Խաչատրյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշումը բեկանելու և նրան անհապաղ ազատ արձակելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր չեն:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի պահանջների խախտում, որն իր բնույթով էական է և, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրյալ Ա.Խաչատրյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը բավարարելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշումը գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ է, և դրանով թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ: Ուստի արդարադատության արդյունավետության շահերից ելնելով՝ անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմանը՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ Առաջին ատյանի դատարանի որոշմամբ սահմանված՝ կալանավորման 2 ամիս ժամկետին պետք է հաշվակցել Ա.Խաչատրյանին փաստացի արգելանքի վերցնելու պահից՝ 2016 թվականի դեկտեմբերի 20-ից, մինչև ազատ արձակվելը նրա՝ անազատության մեջ գտնվելու ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով (2005 թվականի փոփոխություններով), Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածնե-

րով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Մեղադրյալ Արթուր Կոլյայի Խաչատրյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 2-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմանը՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշմամբ սահմանված՝ կալանավորման 2 ամիս ժամկետին հաշվակցել 2016 թվականի դեկտեմբերի 20-ից մինչև ազատ արձակվելը մեղադրյալ Ա.Խաչատրյանի՝ անազատության մեջ գտնվելու ժամկետը:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

12.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱԴԴ/0076/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2017 թվականի օգոստոսի 30-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Տիգրան Բորիսի Թամրազյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 7-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2015 թվականի մարտի 31-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 10116215 քրեական գործը:

Նախաքննության մարմինը 2015 թվականի ապրիլի 7-ին որոշում է կայացրել Տիգրան Բորիսի Թամրազյանին որպես մեղադրյալ ներգրավելու և նրան ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով մեղա-

դրանք առաջադրելու մասին: Նախաքննության մարմնի նույն օրվա մեկ այլ որոշմամբ Տ.Թամրազյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Նախաքննության մարմինը 2015 թվականի ապրիլի 8-ին որոշում է կայացրել Տ.Թամրազյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք առաջադրելու մասին:

Հետախուզման մեջ գտնվող Տ.Թամրազյանը 2015 թվականի սեպտեմբերի 15-ին ոստիկանության աշխատակիցների կողմից բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մաշտոցի բաժին:

Նախաքննության մարմինը 2015 թվականի սեպտեմբերի 19-ին որոշում է կայացրել առաջադրված մեղադրանքը լրացնելու մասին, և նույն օրվա մեկ այլ որոշմամբ Տ.Թամրազյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով:

2015 թվականի հոկտեմբերի 26-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 17-ի դատավճռով Տ.Թամրազյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ ութ տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկում մեկ տարի վեց ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա Տ.Թամրազյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ ութ տարի վեց ամիս ժամկետով:

3. Վերոհիշյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել ամբաստանյալ Տ.Թամրազյանի պաշտպան Է.Խաչատրյանը:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2017 թվականի փետրվարի 7-ի որոշմամբ պաշտպանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն, Տ.Թամրազյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 17-ի դատավճիռը ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով բեկանվել և փոփոխվել է, Տ.Թամրազյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ամբաստանյալը դատապարտվել է ազատազրկման՝ հինգ տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման՝ մեկ տարի վեց ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդ-

վածի կանոններով՝ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Տ.Թամրազյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ հինգ տարի վեց ամիս ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 7-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 27-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի սեպտեմբերի 19-ի որոշմամբ Տ.Թամրազյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ *«[Ն]ա 2015 թվականի մարտի 31-ին՝ ժամը 03.30-ի սահմաններում, Երևան քաղաքի Մարգարյան 8/1 հասցեում գործող «Պենտհաուս» գիշերային ակումբի մուտքի մոտ՝ ապօրինաբար, դիտավորությամբ կյանքից զրկելու նպատակով իր մոտ ապօրինի պահվող, հրազեն հանդիսացող ատրճանակից կրակել է Էդգար Աշոտի Ջաբուրյանի որովայնին, պատճառելով վերջինիս առողջությանը ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող, որն արտահայտվել է՝ որովայնի ճախ կեսի շրջանի հրազենային, գնդակային, թափանցող, բարակ աղիների վնասմամբ՝ կույր վիրավորման ձևով, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով չի կարողացել ավարտին հասցնել հանցագործությունը և դիմել է փախուստի»* (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 156-158):

5.1. Գործի նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դեպքից անմիջապես հետո երեք անձինք փորձել են Տ.Թամրազյանի ձեռքից վերցնել ատրճանակը, ինչը նրանց չի հաջողվել: Հրազենը ամբաստանյալի ձեռքից վերցնել չի հաջողվել նաև ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մաշտոցի բաժնի պահպանության ստորաբաժանման ոստիկան Վան Սիմոնյանին, ով այդ օրը նշանակված է եղել ծառայության հիշյալ ակումբում: Մասնավորապես վերջինիս ցուցմունքների համաձայն՝ նա միջամտել է, փորձել վերցնել ատրճանակը, բայց չի ստացվել: Միմյանց հրմշտելով հասել են Ֆուչիկի փողոց, ատրճանակը վայր է ընկել, որը վերցրել է Տ.Թամրազյանի ընկերներից մեկը, և նրանք նստել են ավտոմեքենաներն ու հեռացել (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 42-48, 54-55, 113, 219-220, հատոր 3, թերթեր 145-148, 170-171, 174, հատոր 4, թերթեր 91-92, հատոր 5, թերթ 32):

6. Առաջին ատյանի դատարանը 2016 թվականի հոկտեմբերի 17-ի դատավճռում արձանագրել է՝ *«(...) Վերլուծելով և գնահատելով դատական*

քննության ժամանակ հետազոտված ապացույցներն իրենց համակցության մեջ, դատարանը ճեռք բերված ապացույցները բավարար է գտնում և գործի փաստական հանգամանքներով հաստատված է համարում, որ ամբաստանյալ Տիգրան Թամրազյանը կատարել է հանցավոր արարքներ, որոնք համապատասխանում են ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներին, որոնցով էլ նա ենթակա է քրեական պատասխանատվության: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթեր 86-91):

7. Վերաքննիչ դատարանը 2017 թվականի փետրվարի 7-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(...) [Ք]ննության առնելով քրեական գործով ճեռք բերված ապացույցների համակցությունը, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ գործի փաստական հանգամանքները չեն համապատասխանում դատական ակտում շարադրված հետևություններին, ամբաստանյալ Տ.Թամրազյանի կողմից՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով կատարված արարքին տրվել է սխալ քրեաիրավական գնահատական, նրա արարքն ըստ գործով ճեռք բերված փաստական հանգամանքների՝ համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմին:*

(...)

Նախ՝ Վերաքննիչ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վերոնշյալ արարքի կատարման շարժառիթներին, նպատակին, եղանակին և օգտագործվող գործիքներին, մարմնական վնասվածքների քանակին, բնույթին և տեղակայմանը, ինչպես նաև հանցավորի և տուժողի վարքագծին հանցագործությանը նախորդող և հաջորդող պահերին, նրանց փոխհարաբերություններին, հանցավորի կողմից հանցավոր գործողությունների դադարեցման պատճառներին, հանցավորի կողմից հանցավոր գործողությունների և այլ հանգամանքներին, որոնք հնարավորություն կտան բացահայտելու ամբաստանյալ Տիգրան Թամրազյանի դիտավորության ուղղվածությունը, ինչն էլ իր հերթին կհանգեցնի կատարված արարքին քրեաիրավական ճիշտ գնահատական տալուն և սպանության փորձը՝ տուժողի առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելուց սահմանազատելուն:

1) Գործով հաստատվել է, որ ամբաստանյալ Տ.Թամրազյանը նախկինում ճանաչել է տուժող Է.Ջաբուրյանին, վերջիններս հանցագործությանը նախորդող և հաջորդող պահերին գտնվել են նորմալ հարաբերությունների մեջ, այլ կերպ, միմյանց հետ որևէ բշնամություն չեն ունեցել:

2) Անդրադառնալով տուժողին հասցված մարմնական վնասվածքների բնույթին, տեղակայմանը, ծանրության աստիճանին՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է հետևյալը.

Դատաբժշկական փորձաքննության թիվ 579 եզրակացությամբ հաստատվել է, որ տուժող Է.Ջաբուրյանը մարմնական վնասվածքը ստացել է

ձախ գոտկային հրազենային, գնդակային, որովայնի խոռոչ թափանցող, բարակ աղիների վնասմամբ՝ կույր վիրավորման ճնշով, պատճառվել է՝ գնդակով լիցքավորված հրազենից արձակված կրակոցով, որն առաջացրել է առողջությանը ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող:

3) Այս տեսանկյունից անհրաժեշտ է նաև պարզել, թե արդյո՞ք ամբաստանյալը տվյալ իրադրությունում ունեցել է նոր վնասվածք պատճառելու իրական հնարավորություն, թե՞ ոչ:

Գործով առկա տվյալներով հիմնավորվել է, որ ամբաստանյալ Տիգրան Թամրազյանն իր մոտ ապօրինի պահվող հրազեն հանդիսացող ատրճանակից մեկ անգամ տուժող Է.Ջաբուրյանի որովայնին կրակելուց հետո, տուժողին կյանքից զրկելու ուղղությամբ որևէ այլ գործողություններ չի կատարել՝ ողջամտորեն հնարավորություն ունենալով շարունակելու իր հանցավոր գործունեությունը, այն է՝ այլ հրազենային վնասվածքներ հասցնելու միջոցով տուժողին զրկել կյանքից, այլ դիմել է փախուստի:

Այլ կերպ, դեպքի իրադրության ժամանակ ամբաստանյալն ունեցել է անհրաժեշտ ու բավարար միջոցներ և հնարավորություն տուժողին կյանքից զրկելու համար, սակայն չի արել այդ, ինչն էլ գործով առկա մյուս հանգամանքների հետ միասին վկայում է վերջինիս առողջությանը ծանր մարմնական վնասվածք պատճառելու դիտավորության ուղղվածության մասին:

4) Ինչ վերաբերում է հանցագործության գործիք հանդիսացած ատրճանակին, ապա այդ հանգամանքը պետք է գնահատվի գործով առկա մյուս հանգամանքների համակցության մեջ, և այս տեսանկյունից, որքան էլ այն իր բնույթով համարվի վտանգավոր գործիք, տուժողին կյանքից զրկելու դիտավորության բացակայության դեպքում նման հանգամանքը ի չիք է դարձվում:

Այլ կերպ՝ ատրճանակի առկայությունը և դրա գործադրումը ինքնին չի կարող վկայել ամբաստանյալի մոտ առկա տուժողին կյանքից զրկելու դիտավորության մասին, քանի որ գործով առկա մյուս հանգամանքները հնարավորություն չեն տալիս հանգելու նման հետևության:

Վերաքննիչ դատարանը անհրաժեշտ է համարում ևս մեկ անգամ փաստել, որ տուժողի որովայնի շրջանում արձակված մեկ կրակոցը՝ վերջինիս մահ պատճառելու դիտավորություն ունենալու մասին բացակայող այլ հանգամանքների պայմաններում, որը փաստացի վրա չի էլ հասել, չի կարող որակվել որպես սպանության փորձ: Բացի այդ, ատրճանակից մեկ անգամ կրակելուց հետո Տ.Թամրազյանը՝ տեսնելով, որ տուժողը կենդանի է, նրան կյանքից զրկելուն ուղղված որևէ այլ գործողություն չի նախաձեռնել, թեև ունեցել է դրա իրական հնարավորությունը:

Ելնելով վերը շարադրվածից՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Տ.Թամրազյանը 2015 թվականի մարտի 31-ին՝ ժամը 03:30-ի սահմաններում, Երևան քաղաքի Մարգարյան 8/1 հասցեում գործող

«Պենտհաուս» գիշերային ակումբի մուտքի մոտ տուժող Է.Ջաբուրյանի առողջությանը ծանր մարմնական վնաս պատճառելու նպատակով իր մոտ ապօրինի պահվող, հրազեն հանդիսացող ատրճանակից կրակել է տուժողի որովայնին՝ պատճառելով վերջինիս առողջությանը ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող, որն արտահայտվել է որովայնի ճախ կեսի շրջանի հրազենային, գնդակային, թափանցող, բարակ աղիների վնասմամբ՝ կույր վիրավորման ձևով:

(...)

Վերաքննիչ դատարանն ամբաստանյալ Տ.Թամրազյանին առաջադրված մեղադրանքը ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասից ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով փոփոխելը հնարավոր է համարում, քանի որ մեղադրանքի նման փոփոխությունով ամբաստանյալի վիճակը չի վատթարանում, ավելին՝ բարելավվում է: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 6, թերթեր 62-79):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

8. Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքաբերի կարծիքով Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական, հիմնավորված և պատճառաբանված չէ: Մասնավորապես ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով վերաորակելով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի նորմերի սխալ կիրառում, որի արդյունքում առանձնապես ծանր հանցագործություն կատարած անձը քրեական պատասխանատվության է ենթարկվել ծանր հանցագործություն կատարելու համար:

Բողոքաբերն ընդգծել է, որ Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ կրակոց արձակելուց հետո Տ.Թամրազյանը տուժողին կյանքից զրկելուն ուղղված ակտիվ գործողություններ չի ձեռնարկել, չի բխում գործի փաստական հանգամանքներից: Այսպես՝ ամբաստանյալն առավելագույնը 1 մետր հեռավորությունից հրազենից տուժողի որովայնի ուղղությամբ կրակոց արձակելու պայմաններում, ըստ էության, իրենից կախված ամեն ինչ արել է հանցագործությունն ավարտելու համար, իսկ հանցագործությունն ավարտին չի հասել նրա կամքից անկախ հանգամանքներով՝ տուժողին հնարավոր է եղել փրկել միայն ցույց տրված բուժօգնության շնորհիվ:

Բողոք բերած անձը նշել է, որ գործում առկա ապացույցների համակցությամբ հիմնավորվել է, որ Տ.Թամրազյանը հրազենից տուժողի ուղղությամբ կրակել է մոտ տարածությունից, որից հետո երեք տղա փորձել են նրա ձեռքից խլել ատրճանակը, ինչը չի հաջողվել: Այսինքն՝ հրազենից մեկ անգամ տուժողի որովայնի ուղղությամբ կրակոց արձակելուց հետո ամբաս-

տանյալը չի դադարեցրել հանրորեն վտանգավոր գործողությունները, այլ դրանք կանխվել են դեպքին վրա հասած անձանց կողմից, Տ.Թամրազյանը ընդդիմացել է իրեն խոչընդոտելու, ձեռքից զենքը վերցնելու, հանրորեն վտանգավոր գործողությունները դադարեցնելու ներկաների փորձերին և դեպքի վայրից հեռացել է միայն ոստիկանության ծառայող Վան Սիմոնյանի գալուց հետո:

9. Բողոքի հեղինակը ընդգծել է նաև, որ Վերաքննիչ դատարանի որոշումը հակասում է ապացույցների գնահատման մասին Վճռաբեկ դատարանի՝ Մ.Հովհաննիսյանի և Ա.Մարտիրոսյանի, Ա.Ավագյանի և Վ.Սահակյանի, Մ.Հակոբյանի վերաբերյալ, ինչպես նաև հանրորեն վտանգավոր արարքը սպանության փորձ որակելու մասին Ս.Հունիկյանի, Ա.Բաղդասարյանի, Գ.Մանուկյանի վերաբերյալ գործերով Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներին:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 7-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 17-ի դատավճռին:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Տ.Թամրազյանի արարքում սպանության փորձի բացակայության և դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու հանցակազմի առկայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը:

ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ հոդվածի համաձայն՝ *«Հանցափորձ է համարվում ուղղակի դիտավորությամբ կատարված այն գործողությունը (անգործությունը), որն անմիջականորեն ուղղված է հանցանք կատարելուն, եթե հանցագործությունն ավարտին չի հասցվել անձի կամքից անկախ հանգամանքներով»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկել[ն է]»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Դիտավորությամբ մեկ ուրիշին մարմնական վնասվածք պատճառելը կամ առողջությանն այլ ծանր վնաս պատճառելը, որը վտանգավոր է կյանքի համար կամ առաջացրել է տեսողության, խոսքի, լսողության կամ որևէ օրգանի կամ օրգանի ֆունկցիայի կորուստ կամ արտահայտվել է դեմքի անջնջելի այլանդակմամբ, ինչպես նաև կյանքի համար վտանգավոր այլ վնաս է պատճառել առողջությանը կամ առաջացրել է դրա քայքայում՝ զուգորդված ընդհանուր աշխատունակության ոչ պակաս, քան մեկ երրորդի կայուն կորստով կամ հանցավորի համար ակնհայտ մասնագիտական աշխատունա-*

կության լրիվ կորստով կամ առաջացրել է հղիության ընդհատում, հոգեկան հիվանդություն, թմրամոլությամբ կամ թունամոլությամբ հիվանդացում»:

Հանցագործության փորձը մեկ այլ ավարտված հանցագործության հատկանիշներից տարբերակելու, անձի դիտավորության ուղղվածությունը որոշելու և կատարված արարքին ճիշտ քրեաիրավական գնահատական տալու հիմնահարցերը Վճռաբեկ դատարանը համակարգված վերլուծության է ենթարկել *Գ.Մանուկյանի* վերաբերյալ գործով որոշման շրջանակներում՝ արձանագրելով հետևյալը՝ *«(...) [Հ]անցափորձ են ճնավորում միայն ուղղակի դիտավորությամբ կատարվող այն գործողությունները (անգործությունը), որոնք անմիջականորեն ուղղված են հանցանքի կատարմանը: «Անմիջականությունը» ենթադրում է, որ հանցավորը ձեռնամուխ է լինում հանցագործության օբյեկտիվ կողմի իրականացմանը, սակայն այն ավարտին չի հասցնում իր կամքից անկախ այնպիսի օբյեկտիվ կամ սուբյեկտիվ հանգամանքներով, որոնք նա չէր նախատեսել կամ չէր կարողացել հաղթահարել: Այլ կերպ ասած՝ հանցափորձի դեպքում հանցագործությունը չի ավարտվում, քանի որ կա՛մ հանցավոր արարքն ամբողջությամբ չի իրականացվում, կա՛մ արարքն իրականացվում է, սակայն չի առաջանում հանցավորի դիտավորության մեջ ընդգրկված և նրա համար ցանկալի հանրորեն վտանգավոր հետևանքը (նյութական հանցակազմերի դեպքում):*

Վերոշարադրյալից բխում է, որ նյութական հանցակազմերի դեպքում ավարտված հանցագործության և հանցափորձի տարանջատման հիմնական չափանիշն անձի դիտավորության ուղղվածությունն է: Մասնավորապես, եթե կատարվածի արդյունքում առաջանում են անձի դիտավորության մեջ չընդգրկված, սակայն ավարտված մեկ այլ հանցագործության հատկանիշներ, ապա արարքը պետք է որակել ոչ թե ըստ փաստացի վրա հասած հետևանքի, այլ ըստ անձի սուբյեկտիվ ընկալման՝ որպես իր դիտավորության մեջ ընդգրկված հանցագործության փորձ: Այսինքն՝ արարքը փորձ կամ ավարտված հանցագործություն որակելու հարցում էական նշանակություն ունի անձի դիտավորության ուղղվածության բացահայտումը, ինչը հնարավոր է գործի փաստական հանգամանքների համադրման և ամբողջական վերլուծության արդյունքում (...)» (տե՛ս Գրիգոր Վոլոդյայի Մանուկյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԱՆԴ/0110/01/12 որոշման 16-րդ կետը):

10.1. Հանցափորձի ավարտված և չավարտված տեսակների վերլուծության համատեքստում անդրադառնալով սպանության ավարտված հանցափորձի առանձնահատկություններին և դրա շրջանակներից դուրս գտնվող, հանցագործությունից կամովին հրաժարում չհամարվող անձի հետ հանցավոր դրական վարքագծի նշանակությանը, Վճռաբեկ դատարանը *Գ.Մանուկյանի* վերաբերյալ որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը՝ *«(...) [Կ]ատարվածը սպանության փորձ որակելու հա-*

մար անհրաժեշտ է, որ հանցավորն ունենա անձին կյանքից զրկելու պարզ կոնկրետացված (նախապես կամ հանկարծակի առաջացած) դիտավորություն, ինչը հնարավոր է պարզել գործի հանգամանքների համակողմանի վերլուծության արդյունքում՝ հատկապես ուշադրություն դարձնելով հանցավորի՝ նախքան հանցագործությունը, հանցանքի ընթացքում և դրանից հետո դրսևորած վարքագծին:

Հանցագործությունն ավարտին հասցնելուն ուղղված անհրաժեշտ բոլոր գործողությունները կատարելուց հետո (ավարտված հանցափորձ) հանցագործությունից կամովին հրաժարում չհամարվող անձի հետ հանցավոր դրական վարքագիծը կարևոր նշանակություն ունի վերջինիս դիտավորության ուղղվածությունը ճիշտ որոշելու համար: Սակայն այն ինքնին, գործի մյուս փաստական հանգամանքներից անջատ, չի կարող արարքի որակման հարցում ունենալ որոշիչ նշանակություն և պետք է գնահատման ենթարկվի նախքան հանցագործությունը և դրա ընթացքում անձի դրսևորած վարքագծի շրջանակներում, որոնք, որպես կանոն, վկայում են հանցանքը կատարելու պահին անձի ունեցած իրական դիտավորության մասին:

Մասնավորապես, եթե գործի փաստական հանգամանքների համակցության վերլուծությունը ցույց է տալիս, որ հանցանքը կատարելու պահին հանցավորի դիտավորությունն ուղղված է եղել տուժողին կյանքից զրկելուն (օրինակ՝ դրա մասին կարող են վկայել հանցագործության գործիքները կամ միջոցները՝ հրազեն, սառը զենք, սուր ծակող-կտրող գործիքներ և այլն, հարվածների քանակն ու ուժգնությունը, պատճառված մարմնական վնասվածքների քանակը, բնույթը և տեղակայումը (օրինակ՝ մարդու կենսականորեն կարևոր օրգանների վնասումը), հանցագործության եղանակը, մեխանիզմը, նպատակը, շարժառիթը, իրադրությունը և այլ հանգամանքներ), ապա համապատասխան արարքն իրականացնելուց հետո անձի դրսևորած դրական վարքագիծը (օրինակ՝ հետագա գործողություններ կատարելուց ձեռնպահ մնալը, տուժողին օգնություն ցույց տալը, շտապօգնություն կանչելը և այլն) դուրս է սպանության ավարտված հանցափորձի շրջանակներից, վկայում է ոչ թե սպանելու ուղղակի դիտավորության բացակայության, այլ պարզապես կատարածի համար զղջալու մասին, ինչը դատարանի կողմից կարող է հաշվի առնվել պատիժ նշանակելիս: Նման գործողությունները չեն կարող ազդեցություն ունենալ և փոխել արարքի քրեաիրավական որակումը (...)» (տե՛ս Գրիգոր Վոլոդյայի Մանուկյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԱՆԴ/0110/01/12 որոշման 17-17.1-րդ կետերը):

11. Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը կրկին արձանագրում է, որ սպանության փորձը դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելուց սահմանազատելու համար առաջնային նշանակություն ունի վնասվածքներ հասցնելու պահին հանցավորի դիտավորության ուղղվածության բացահայտումը: Մասնավորապես, եթե սպանության

փորձի ժամանակ հանցավորի դիտավորությունն ուղղված է տուժողին կյանքից զրկելուն, ապա ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանցանք կատարելիս դիտավորությունն ուղղված է տուժողի առողջությանը ծանր վնաս պատճառելուն, կամ հանցավորը հետևանքների նկատմամբ դրսևորում է չկոնկրետացված դիտավորություն:

Հանցավորի դիտավորության ուղղվածության հարցը լուծելիս անհրաժեշտ է ելնել հանցագործության բոլոր հանգամանքների համակցությունից և հաշվի առնել, մասնավորապես, հանցավոր արարքի կատարման եղանակը, վնասվածքներ հասցնելիս օգտագործվող գործիքները, մարմնական վնասվածքների քանակը, բնույթը և տեղակայումը (օրինակ՝ մարդու կենսականորեն կարևոր օրգանների վնասումը), շարժառիթն ու նպատակը, ինչպես նաև հանցավորի և տուժողի վարքագիծը հանցագործությանը նախորդող և հաջորդող պահերին, նրանց փոխհարաբերությունները, հանցավորի կողմից հանցավոր գործողությունների դադարեցման պատճառները և այլն *(տե՛ս, mutatis mutandis, Վճռաբեկ դատարանի՝ Ս.Հունիկյանի գործով 2008 թվականի փետրվարի 29-ին կայացված թիվ ՎԲ-11/08, Ա.Բաղդասարյանի գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ին կայացված թիվ ԵԷԴ/0168/01/10, Գ.Մանուկյանի գործով 2015 թվականի օգոստոսի 28-ին կայացված թիվ ԵԱՆԴ/0110/01/12 որոշումները):* Միայն վերոնշյալ հանգամանքների համադրման և վերլուծության հիման վրա է հնարավոր բացահայտել դիտավորության ուղղվածությունը և դրա տեսակները, ինչն էլ իր հերթին կհանգեցնի կատարված արարքին քրեաիրավական ճիշտ գնահատական տալուն:

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Տ.Թամրազյանը 2015 թվականի մարտի 31-ին՝ ժամը 03.30-ի սահմաններում, Երևան քաղաքի Մարգարյան 8/1 հասցեում գործող «Պենտհաուս» գիշերային ակումբի մուտքի մոտ, Էդգար Ջաբուրյանին կյանքից զրկելու դիտավորությամբ, իր մոտ ապօրինի պահվող, հրազեն հանդիսացող ատրճանակից կրակել է վերջինիս որովայնին՝ նրա առողջությանը պատճառելով կյանքին վտանգ սպառնացող ծանր մարմնական վնաս:

Դեպքից անմիջապես հետո երեք անձինք փորձել են Տ.Թամրազյանի ձեռքից վերցնել ատրճանակը, ինչը նրանց չի հաջողվել: Հրազենը ամբաստանյալի ձեռքից վերցնել չի հաջողվել նաև ոստիկան Վան Սիմոնյանին: Միմյանց հրմշտելով հասել են Ֆուչիկի փողոց, ատրճանակը վայր ընկնելուց հետո այն վերցրել է Տ.Թամրազյանի ընկերներից մեկը, և նրանք նստել են ավտոմեքենաներն ու հեռացել (տե՛ս սույն որոշման 5-5.1-րդ կետերը):

Առաջին ատյանի դատարանը հաստատված է համարել, որ ամբաստանյալը կատարել է հանցավոր արարքներ, որոնք համապատասխանում են ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներին (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ գործի փաստական հանգամանքները չեն համապատասխանում ստորադաս դատարանի դատական ակտում շարադրված հետևություններին և Տ.Թամրազյանին մեղսագրված արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասից վերաորակել է ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով: Մասնավորապես Վերաքննիչ դատարանն ընդգծել է, որ ամբաստանյալ Տ.Թամրազյանը նախկինում ճանաչել է տուժող Է.Ջաբուրյանին, վերջիններս հանցագործությանը նախորդող և հաջորդող պահերին գտնվել են նորմալ հարաբերությունների մեջ, միմյանց հետ որևէ թշնամություն չեն ունեցել, ամբաստանյալն իր մոտ ապօրինի պահվող հրազեն հանդիսացող ատրճանակից մեկ անգամ Է.Ջաբուրյանի որովայնին կրակելուց հետո նրան կյանքից զրկելու ուղղությամբ որևէ այլ գործողություններ չի կատարել՝ ունենալով անհրաժեշտ ու բավարար միջոցներ և հնարավորություն տուժողին կյանքից զրկելու համար: Արդյունքում Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ տուժողի որովայնի շրջանում արձակված մեկ կրակոցը՝ վերջինիս մահ պատճառելու դիտավորության մասին վկայող այլ հանգամանքների բացակայության պայմաններում, չի կարող որակվել որպես սպանության փորձ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

13. Սույն որոշման նախորդ կետում հիշատակված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-11-րդ կետերում մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման չի ենթարկել գործում առկա փաստական տվյալների համակցությունը, արդյունքում սխալ եզրահանգման է եկել անձի դիտավորության ուղղվածության, հետևաբար նաև՝ արարքի քրեաիրավական որակման հարցում: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ամբաստանյալ Տ.Թամրազյանի դիտավորության ուղղվածությունը և բովանդակությունը բացահայտելիս անհրաժեշտ էր մանրամասն վերլուծության ենթարկել գործի այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք էին հանցագործության գործիքը, մարմնական վնասվածքի բնույթն ու տեղակայումը, հանցավորի դրսևորած վարքագիծը: Այսպես՝ Տ.Թամրազյանը հրազեն հանդիսացող ատրճանակից մոտ տարածությունից կրակել է տուժողի կենսականորեն կարևոր օրգանի՝ որովայնի շրջանում՝ պատճառելով կյանքին վտանգ սպառնացող ծանր մարմնական վնասվածք, ինչից հետո չի ցանկացել դադարեցնել վտանգավոր գործողությունները, զենքը չի հանձնել, խոչընդոտել է ներկաների, ինչպես նաև ոստիկանության աշխատակցի կողմից զենքը վերցնելու փորձերին: Վերոնշյալ հանգամանքները վկայում են հանցավորի մոտ տուժողին կյանքից զրկելու ուղղակի դիտավորության առկայության մասին, ինչը սակայն վրա չի հասել նրա կամքից անկախ հանգամանքներում, այն է՝ տուժողին հիվանդանոց տեղափոխելու և ցուցաբերված բժշկական օգնության շնորհիվ:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն փաստարկին, որ ամբաստանյալն ունեցել է անհրաժեշտ ու բավարար միջոցներ տուժողին կյանքից զրկելու համար, սակայն այդ ուղղությամբ որևէ այլ գործողություններ չի կատարել՝ ողջամտորեն հնարավորություն ունենալով շարունակելու իր հանցավոր գործունեությունը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն հիմնավոր չէ, քանի որ նախ՝ հրազենից մեկ անգամ տուժողի որովայնի ուղղությամբ կրակոց արձակելուց հետո ամբաստանյալի վտանգավոր գործողությունները կանխվել են դեպքին վրա հասած անձանց կողմից, ովքեր փորձել են վերցնել հրազենը, երկրորդ՝ գործի փաստական հանգամանքների համակցության վերլուծությունը ցույց է տալիս, որ հանցանքը կատարելու պահին հանցավորի դիտավորությունն ուղղված է եղել տուժողին կյանքից զրկելուն (հաշվի առնելով, մասնավորապես, օգտագործված գործիքը, մարմնական վնասվածքի բնույթն ու տեղակայումը), իսկ համապատասխան արարքն իրականացնելուց հետո անձի կողմից տուժողին կյանքից զրկելուն ուղղված հետագա գործողություններ չկատարելը դուրս է սպանության ավարտված հանցափորձի շրջանակներից: Նման վարքագիծը չի կարող ազդեցություն ունենալ և փոխել արարքի քրեաիրավական որակումը:

14. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Տ.Թամրազյանի արարքում սպանության փորձի բացակայության և դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու հանցակազմի առկայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավոր չէ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, չկիրառելով ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածը և կիրառելով ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածը՝ թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում, ինչը հիմք է ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու համար:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը, իրավաչափորեն հաստատված է համարել, որ Տ.Թամրազյանի արարքներում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հանցակազմերը: Այլ կերպ՝ Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, ուստի անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիման վրա բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի դատավճռին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ

հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Տիգրան Բորիսի Թամրազյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 7-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 17-ի դատավճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

13.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼԴ2/0055/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2017 թվականի նոյեմբերի 15-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 28-ի որոշման դեմ ամբաստանյալ Արթուր Գուրգենի Մամաջանյանի պաշտպան Ռուբեն Հակոբյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2015 թվականի սեպտեմբերի 1-ին Արթուր Մամաջանյանը հանցանք կատարած լինելու կասկածանքով բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Ապարանի բաժին, ենթարկվել անձնական խուզարկության, այնուհետև հաղորդում տվել այն մասին, որ 2015 թվականի օգոստոս ամսվա ընթացքում «Հայաստառ» ՊՈԱԿ-ի «Դսեղի անտառտնտեսություն» մասնաճյուղի «Մարցի» անտառապետության անտառապետ, պաշտոնատար անձ հանդիսացող Փաշիկ Խառատյանին անձամբ, որպես կաշառք, յուրաքանչյուր անգամ տվել է 50.000 ՀՀ դրամ, ընդհանուրը՝ 350.000 ՀՀ դրամ՝ իր օգ-

տին վերջինիս կողմից նրա լիազորությունների շրջանակում ծառայության գծով թողտվության՝ առանց համապատասխան թույլտվության ծառահատումներ կատարելու, դրանք չարձանագրելու և փայտանյութն իր հորը պատկանող «Զիլ 130» մակնիշի 15 LU 041 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով տեղափոխելու համար:

Արթուր Մամաջանյանի հաղորդման հիման վրա ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Թումանյանի քննչական բաժնում 2015 թվականի սեպտեմբերի 11-ին ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և 312-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ 55104815 քրեական գործը:

2015 թվականի նոյեմբերի 17-ին Արթուր Մամաջանյանը որպես մեղադրյալ է ներգրավվել ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 2-րդ մասով:

2015 թվականի նոյեմբերի 20-ին Փաշիկ Խառատյանը որպես մեղադրյալ է ներգրավվել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով:

1.1 Նախաքննական մարմնի՝ 2015 թվականի դեկտեմբերի 21-ի որոշմամբ մեղադրյալ Արթուր Մամաջանյանի կողմից սուտ մատնություն կատարելու դեպքի առթիվ թիվ 55104815 քրեական գործի նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 55106115 քրեական գործը:

2015 թվականի դեկտեմբերի 22-ին Արթուր Մամաջանյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել ստորագրությունը չհեռանալու մասին, և նա հարցաքննվել է որպես կասկածյալ:

Նախաքննական մարմնի՝ 2015 թվականի դեկտեմբերի 28-ի որոշմամբ կաշառք տալու հոդվածով հարուցված թիվ 55104815 քրեական գործով վարույթը կարճվել է, Փաշիկ Խառատյանի և Արթուր Մամաջանյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Նույն օրվա մեկ այլ որոշմամբ Արթուր Մամաջանյանը որպես մեղադրյալ է ներգրավել ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

2015 թվականի դեկտեմբերի 30-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունվարի 14-ի որոշմամբ քրեական գործն ըստ տարածքային ընդդատության ուղարկվել է Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մարտի 29-ի դատավճռով ճանաչվել և հռչակվել է Արթուր Մամաջանյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցանքի կատարման մեջ՝ ապացույցների անբավարարության հիմքով:

3. Լոռու մարզի դատախազի տեղակալ Մ.Մովսիսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի նոյեմբերի 28-ի որոշմամբ բողոքը մասնակի բավարարել է՝ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանել և գործն ուղարկել է նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

4. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 28-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Արթուր Մամաջանյանի պաշտպան Ռ.Հակոբյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի մայիսի 5-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները</u>.

5. Արթուր Մամաջանյանին մեղադրանք է առաջադրվել այն արարքի համար, որ *«նա, նախազգուշացված լինելով հանցագործության մասին ստուտ մատնություն կատարելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին ու գիտակցելով, որ իր տրամադրած տեղեկատվությունը կեղծ է, 2015 թվականի սեպտեմբերի 1-ին ՀՀ ոստիկանության Ապարանի բաժնում գրավոր հաղորդում է տվել, որ նույն թվականի օգոստոս ամսվա ընթացքում «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Դսեղի անտառտնտեսություն» մասնաճյուղի «Մարցի» անտառապետության անտառապետ, պաշտոնատար անձ հանդիսացող Փաշիկ Խառատյանին իր օգտին վերջինիս կողմից նրա լիազորությունների շրջանակում, պաշտոնեական դիրքն օգտագործելով, ծառայության գծով բողոտվության՝ առանց համապատասխան թույլտվության ծառահատումներ կատարելու, դրանք չարձանագրելու և փայտանյութն իր հորը պատկանող «Զիլ 130» մակնիշի 15 LU 041 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով յոթ անգամ Լոռու մարզից Շիրակի մարզ տեղափոխելու և այնտեղ վերավաճառելու համար անձամբ՝ որպես կաշառք, յուրաքանչյուր անգամ տվել է 50.000 ՀՀ դրամ, ընդհանուրը՝ 350.000 ՀՀ դրամ, ինչը զուգորդվել է ծանր հանցագործության մեջ մեղադրելով»* (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 99):

5.1 ՀՀ ոստիկանության Ապարանի բաժնի պետ Ա.Հայրապետյանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 1-ին կազմված թիվ 24-15-0137 օպերատիվ հաղորդագրության քարտի համաձայն՝ *«Սեպտեմբերի 1-ին ժ. 11.00-ին ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ կոռուպցիայի և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչության և ՀՀ ոստիկանության Արագածոտնի ՄՎ Ապարանի բաժնի աշխատակիցների կողմից համատեղ ձեռնարկված միջոցառումների և բացատրական աշխատանքների արդյունքում քաղ. Արթուր Գուրգենի Մամաջանյանը ՀՀ ոստիկանության Ապարանի բաժնում հաղորդում է տվել (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 2):

5.2 Նախաքննական մարմնի՝ 2015 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 55104815 քրեական գործով վարույթը կարճելու, Փաշիկ Խառատյանի և Արթուր Մամաջանյանի նկատմամբ քրեական հետապնդումը հանցագործության դեպքի բացակայության հիմքով դադարեցնելու մասին որոշման համաձայն՝ *«(...) 2015 թվականի դեկտեմբերի 21-ին Արթուր Մամաջանյանի կողմից ծանր հանցագործության մեջ մեղադրելով զուգորդված սուտ մատնություն կատարելու դեպքի առթիվ թիվ 55104815 քրեական գործի նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 5106115 քրեական գործը և առանձնացվել առանձին վարույթում, որի նախաքննության ընթացքում կասկածյալի կարգավիճակով հարցաքննվել է Արթուր Մամաջանյանը և [2015 թվականի դեկտեմբերի 22-ին] ցուցմունք տվել այն մասին, որ անտառապետ Փաշիկ Խառատյանին երբևէ կաշառք չի տվել, իսկ ոստիկանության Ապարանի բաժնում Փաշիկ Խառատյանին կաշառք տալու վերաբերյալ հաղորդում տալիս գտնվել է հոգեպես անհավասարակշիռ վիճակում: (...) [Ն]կատի ունենալով, որ թիվ 55104815 քրեական գործով կատարվել են հնարավոր բոլոր քննչական գործողությունները, սակայն Փաշիկ Խառատյանի կողմից խոշոր չափերով կաշառք ստանալու և Արթուր Մամաջանյանի կողմից պաշտոնատար անձին խոշոր չափերով կաշառք տալու վերաբերյալ բավարար ապացույցներ ձեռք չեն բերվել և սպառվել են նոր ապացույցներ ձեռք բերելու հնարավորությունները, ուստի ելնելով վերոգրյալից (...) որոշեցի թիվ 55104815 քրեական գործով վարույթը կարճել, Փաշիկ Խառատյանի և Արթուր Մամաջանյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 186-188):

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ *«(...) ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Թումանյանի բաժնի ավագ քննիչ Դ.Դավթյանի թիվ 55104815 քրեական գործով 21.12.2015 թվականի՝ «Քրեական գործի նյութերով նոր քրեական գործ հարուցելու և այն առանձին վարույթում առանձնացնելու մասին» որոշումն*

անօրինական է, քանի որ այն կայացվել է առանց օրինական հիմքերի և առիթի: (...) [Այդ հանգամանքը] որպես հետևանք հանգեցնում է նաև այդ գործի շրջանակներում իրականացված քննչական և դատավարական գործողությունների և դրանց արդյունքում ձեռք բերված տվյալների անօրինականության և անթույլատրելիության՝ թունավոր ծառի պտուղները ևս թունավոր են հայեցակարգի [հիման] վրա:

(...) [Ք]ննիչը նախևառաջ պետք է օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-3 կետերով նախատեսված արդարացնող որևէ հիմքով կարճեր կաշառք տալու և ստանալու դեպքի առթիվ հարուցված թիվ 55104815 քրեական գործի վարույթը և Ա.Մամաջանյանի ու Փ.Խառատյանի նկատմամբ դադարեցներ քրեական հետապնդումը, այսինքն՝ վերջնական որոշմամբ հերքեր Ա.Մամաջանյանի կողմից տրված հաղորդման մեջ նշված փաստական հանգամանքները, որպեսզի դրանից հետո ի հայտ գար ինչպես քրեական գործ հարուցելու օրինական առիթը (տվյալ դեպքում՝ քննիչի կողմից իր լիազորություններն իրականացնելիս նոր հանցագործության հատկանիշների հայտնաբերումը), այնպես էլ օրինական հիմքը՝ առերևույթ սուտ մատնության հանցակազմի օբյեկտի և օբյեկտիվ կողմի հատկանիշներ պարունակող դեպքի մասին բավարար տվյալները:

(...) [Հակառակ պարագայում] անձը նախ՝ զրկվում է իր հայտնած տվյալների ստուգման արդյունքում կայացված դատական ակտը վիճարկելու իրավունքից, որը կարող է իրեն պաշտպանել սուտ մատնության կասկածանքից, երկրորդ՝ անձը կարող է արդարացված մտավախություն ունենալ առ այն, որ դա իր հանդեպ հոգեբանական ճնշում է՝ մեղադրանքի հիմնավորման համար ցանկալի ցուցմունքներ ստանալու նպատակով, որպիսին, դատարանի գնահատմամբ, առկա է եղել սույն գործով: (...) Դատարանը չփարատված կասկած ունի առ այն, որ քննիչը սուտ մատնության փաստով քրեական գործ է հարուցել, որպեսզի քրեական պատասխանատվության «սպառնալիքի» տակ Ա.Մամաջանյանին «հարկադրի» կաշառքի գործով մեղադրանքների վերաբերյալ այլ ցուցմունք տալուն, քանի որ նա որպես կասկածյալ, այնուհետև որպես մեղադրյալ ցուցմունք տալուց հայտնել է, որ սուտ է ասել հաղորդում տալուց:

(...)

Դատարանը գտնում է, որ սույն քրեական գործով բացակայում է Ա.Մամաջանյանի արարքում 333-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները, քանի որ չի հիմնավորվել սուբյեկտիվ կողմը:

Բանն այն է, որ Ա.Մամաջանյանն իր կամքով և ցանկությամբ չի ներկայացել ոստիկանության Ապարանի բաժին, ընդ որում՝ իր կողմից կաշառք տալու և Փ.Խառատյանի կողմից կաշառք ստանալու դեպքի առթիվ հաղորդում տալու նպատակով: Քրեական գործի նյութերի հետազոտությունից պարզ է դառնում, որ նա հանցանքի կատարման մեջ կասկածանքի

հիմքով բերման է ենթարկվել ոստիկանության Ապարանի բաժին, ենթարկվել է անձնական խուզարկության և իրավունքների այլ սահմանափակումների, իսկ հաղորդումը տվել է ոստիկանության աշխատակիցների կողմից ձեռնարկված միջոցառումների և բացատրական աշխատանքների շնորհիվ (...) Այս ամենը վկայում է այն մասին, որ իրականում անձը ո՛չ դիտավորություն, ո՛չ էլ նպատակ է ունեցել կատարելու սուտ մատնություն՝ հաղորդում տալը հետևանք է ոստիկանության ակտիվ գործողությունների՝ առանց անձին պարզաբանելու նրա լռելու, իր վերաբերյալ որևէ տեղեկություն չհայտնելու մասին իրավունքները՝ ինչպես սահմանված է ՀՀ վճռաբեկ դատարանի Գ.Միքայելյանի վերաբերյալ 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԴԴ/0085/06/09 որոշման մեջ: Միայն այս հանգամանքը բավարար է դատարանին գնահատելու, որ սուտ մատնության սուբյեկտիվ կողմը հաստատված չէ, անձի կամքը որոշակիորեն ճնշված է եղել հաղորդում տալուց և ինքը, փաստորեն, իրեն մերկացնող հաղորդում է տվել:

Այս ենթատեքստում դատարանը հաշվի է առնում նաև այն հանգամանքը, որ թիվ 55104815 քրեական գործով «Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին» 2015 թվականի դեկտեմբերի 28-ի որոշմամբ, նախաքննական մարմինը նշել է, որ Փաշիկ Խառատյանի կողմից խոշոր չափերով կաշառք ստանալու և Արթուր Մամաջանյանի կողմից պաշտոնատար անձին խոշոր չափերով կաշառք տալու վերաբերյալ բավարար ապացույցներ ձեռք չեն բերվել և սպառվել են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները: Ընդ որում՝ այդ որոշումը չի վերացվել և ուժի մեջ է: Հիշյալ ձևակերպումը հաստատում է, որ մեղադրանքի կողմը ոչ թե հերքել է նշված ենթադրյալ հանցագործությունը, այլ՝ չի կարողացել դա ապացուցել, իսկ նման չփարատված կասկածների պարագայում անձին չի կարող մեսագրվել ուղղակի դիտավորությամբ սուտ մատնություն կատարելը:

Թեև որոշման եզրափակիչ մասում քննիչը նշել է հանցադեպի բացակայությունը, որպես քրեական վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք, սակայն դատարանն արձանագրում է, որ որոշման պատճառաբանական մասում քննիչը նշել է, որ ապացույցները բավարար չեն եղել, իսկ նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորություններն սպառվել են:

Ուշագրավն այն է, որ այս որոշումը նախաքննական մարմինը կայացրել է այն ժամանակ, երբ նոր հարուցված և մաս անջատած գործով Ա.Մամաջանյանը եղել է կասկածյալի և մեղադրյալի կարգավիճակում և այդ կարգավիճակում տված ցուցմունքը ևս հիմք է հանդիսացել հիշյալ որոշումը կայացնելու համար» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 212-226):

7. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ *«(...) [Տվյալ դեպքում առկա է եղել ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի*

176-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված՝ քրեական գործ հարուցելու առիթը, այնպես էլ՝ քրեական գործ հարուցելու հիմքերը: Մասնավորապես, թիվ 55104815 քրեական գործի շրջանակներում իր լիազորություններն իրականացնելիս նախաքննական մարմինը ձեռք է բերել այնպիսի տվյալներ (...), որպիսիք վարույթն իրականացնող մարմինը ողջամտորեն կարող էր բավարար համարել ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված ենթադրյալ հանցագործության կատարման փաստի (հանցակազմի օբյեկտիվ կողմի և օբյեկտի) առկայությունը հաստատված համարելու համար:

Հետևապես, Առաջին ատյանի դատարանի դատողությունն առ այն, որ տվյալ դեպքում բացակայել են քրեական գործ հարուցելու օրինական հիմքերն ու առիթը, չի բխում գործի փաստական տվյալներից և հիմնազուրկ է:

Վերաքննիչ դատարանի համար ընդունելի չէ նաև Առաջին ատյանի դատարանի այն դատողությունը, ըստ որի՝ սույն քրեական գործը չէր կարող հարուցվել, քանի դեռ թիվ 55104815 քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշմամբ չէր հերքվել Ա.Մամաջանյանի հաղորդման մեջ նշված՝ կաշառք տալու և ստանալու հանգամանքները, կամ չէր հաստատվել դրանց անհիմն լինելն ու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով նախատեսված արդարացման որևէ հիմքով անձը չէր ազատվել քրեական պատասխանատվությունից:

(...)

[Թ]իվ 55104815 քրեական գործի նյութերով սույն քրեական գործը հարուցելով և առանձնացնելով՝ նախաքննության մարմինը թույլ չի տվել քրեադատավարական օրենքի այնպիսի խախտում, որը «Թունավոր ծառի պտուղները ևս թունավոր են» սկզբունքի համատեքստում կարող էր հանգեցնել սույն քրեական գործի շրջանակներում կատարված քննչական և այլ դատավարական գործողությունների ու դրանց արդյունքում ձեռք բերված ապացույցների՝ Ա.Մամաջանյանի մեղադրանքի հիմքում օգտագործելու անթույլատրելիության:

(...)

Անդրադառնալով Ա.Մամաջանյանի արարքում սուտ մատնության հանցակազմի սուբյեկտիվ կողմի բացակայության վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի մեկնաբանություններին՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ դրանք հիմնազուրկ են, քանի որ անձի՝ հանցանք կատարելու կասկածանքով ոստիկանություն բերվելը, անձնական խուզարկության կամ այլ իրավահափ (հակառակը հիմնավորող փաստական տվյալներ գործում չկան) սահմանափակումների ենթարկվելը, ինչպես նաև բերման ենթարկվելու առիթով բացատրություն վերցնել կամ չվերցնելը, այդ անձի կողմից սուտ մատնության հանցակազմի օբյեկտիվ կողմն իրականացնելու դեպ-

քում, ինքնին չի կարող վկայել նրա արարքում սուտ մատնության հանցակազմի սուբյեկտիվ կողմի բացակայության մասին: Ինչ վերաբերում է Ա.Մամաջանյանի կողմից հաղորդում տալը ոստիկանության աշխատակիցների գործողություններով պայմանավորելու՝ Առաջին ատյանի դատարանի դատողությանը, ապա այն հիմնավորված կլիներ այն դեպքում, երբ կմատնանշվեր ոստիկանության աշխատակիցների կողմից ապօրինի միջամտության կամ հաղորդում տալուն որևէ այլ կերպ նպաստած անիրավաչափ գործողության դրսևորման կոնկրետ փաստ, ինչը տվյալ դեպքում բացակայում է (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 78-93):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակի կարծիքով Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 28-ի որոշումն օրինական և հիմնավոր չէ, դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա, որոնց պարագայում կայացված դատական ակտը ենթակա է բեկանման:

8.1 Մասնավորապես բողոքաբերը նշել է, որ նախաքննական մարմնի՝ 2015 թվականի դեկտեմբերի 21-ի՝ թիվ 55104815 քրեական գործի նյութերով նոր քրեական գործ հարուցելու և այն առանձին վարույթում առանձնացնելու մասին որոշմամբ չեն պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ, 28-րդ և 184-րդ հոդվածներով ամրագրված պահանջները: Մասնավորապես, բողոքի հեղինակը հայտնել է, որ այն պայմաններում, երբ թիվ 55104815 քրեական գործով բացակայել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-3-րդ կետերով նախատեսված արդարացնող հիմքով կայացված վերջնական որոշում, ապա սուտ մատնության հանցակազմով քրեական գործ չէր կարող հարուցվել՝ օրինական առիթի և հիմքերի բացակայության պատճառով:

8.2 Բացի այդ, բողոք բերած անձի համոզմամբ նախաքննական մարմնի նոր քրեական գործ հարուցելիս թույլ տրված քրեադատավարական օրենքի խախտումները «թունավոր ծառի պտուղները ևս թունավոր են» սկզբունքի համատեքստում հանգեցրել են այդ քրեական գործի շրջանակներում կատարված քննչական և այլ դատավարական գործողությունների ու դրանց արդյունքում ձեռք բերված ապացույցների անթույլատրելիությանը:

8.3. Բացի այդ, բողոքի հեղինակը նշել է, որ թիվ 55104815 քրեական գործով քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին չվերացված որոշման առկայության պայմաններում սուտ մատնության հանցակազմով քրեական գործի հարուցումը հանգեցրել է իր պաշտպանյալի լռելու, իր դեմ ցուցմունք չտալու իրավունքների,

անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտման՝ հաշվի առնելով, որ նոր քրեական գործի հարուցումը կարող է դիտարկվել որպես հոգեբանական ճնշում՝ մեղադրանքի հիմնավորման համար ցանկալի ցուցմունքներ տալու նպատակով:

9. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 28-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մարտի 29-ի դատավճռին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածով նախատեսված՝ սուտ մատնության հանցակազմով քրեական գործի հարուցման հիմքերի բավարարության և ապացույցների բավարարության գնահատման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործերով միատեսակ իրավակիրառ պրակտիկայի ձևավորման համար:

I. Սուտ մատնության հանցակազմով քրեական գործ հարուցելու հիմքերի բավարարությունը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. իրավասու էր արդյոք նախաքննական մարմինը Ա.Մամաջանյանի կողմից ենթադրյալ սուտ մատնություն կատարելու փաստի առթիվ հարուցել քրեական գործ այն պայմաններում, երբ Ա.Մամաջանյանի հաղորդման հիման վրա հարուցված քրեական գործով առկա չէր համապատասխան վերջնական որոշում:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Հանցագործության մասին սուտ մատնությունը, եթե անձը գործել է՝ գիտակցելով, որ իր տրամադրած տեղեկատվությունը կեղծ է՝*

[պատժվում է համապատասխան պատժով]:

2. Նույն արարքը, որը՝

1) զուգորդվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մեջ մեղադրելով,

(...)

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով»:

12. Սուտ մատնության հանցակազմի մեկնաբանությանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Հ.Գալստյանի* վերաբերյալ որոշմամբ, որով

դիրքորոշում է արտահայտել առ այն, որ. *«Մեջբերված հոդվածը ներառված է ՀՀ քրեական օրենսգրքի «Արդարադատության դեմ ուղղված հանցագործությունները» վերնագրված գլուխ 21-ում: Քննարկվող հոդվածով նախատեսված հանցագործությունը արդարադատության դեմ ուղղված հանցագործություն է, որը խաթարում է իրավապահ մարմինների բնականոն գործունեությունը, որոնք հարկադրված են լինում ուժեր ու միջոցներ վատնել չկատարված հանցագործության բացահայտման համար կամ կատարված հանցագործությունը քննելիս ընթանալ սխալ ուղիով: Վերջինս կարող է հանգեցնել անմեղ անձանց ներգրավում քրեական հետապնդում իրականացնելուն, նրանց իրավունքների անհիմն սահմանափակումների: Այսպիսով, սուտ մատնության հիմնական անմիջական օբյեկտը արդարադատության բնականոն իրականացմանն ուղղված հասարակական հարաբերություններն են, իսկ լրացուցիչ անմիջական օբյեկտը՝ անձանց իրավունքներն ու օրինական շահերը:*

Հանցագործության օբյեկտիվ կողմը կարող է դրսևորվել երկու ձևով: Առաջին դեպքում հանցավորը հայտնում է տեղի չունեցած հանցագործության մասին: Այս դեպքում արարքը քննարկվող հոդվածով որակելու համար էական չէ հանցանքի կատարման մեջ որոշակի անձի մատնանշելու հանգամանքը: Երկրորդ դեպքում հանցավորը հայտնում է իրականում տեղի ունեցած հանցագործության մասին՝ մատնանշելով այնպիսի անձի, ով չի կատարել այն:

Սուտ մատնությունը կարող է իրականացվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր: Քննարկվող հանցակազմն առկա է այն դեպքում, երբ երևակայական հանցագործության կամ հանցագործի մասին տեղեկությունները հաղորդվում են այն պետական մարմիններին, որոնք քրեական գործ հարուցելու իրավունք ունեն: Այլ մարմիններին նույնաբովանդակ տեղեկություններ հաղորդելը քննարկվող հանցակազմը չի առաջացնում:

Քննարկվող հանցակազմը ձևական է. հանցագործությունը համարվում է ավարտված այն պահից, երբ հասցեատերը ստանում է հանցագործության կամ հանցավորի մասին կեղծ տեղեկությունները: (...)» (տե՛ս Հեղինե Գալստյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԼԴ/0051/01/14 որոշման 23-րդ կետը):

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 175-րդ հոդվածի համաձայն՝ *«Քրեական գործ հարուցելու՝ սույն օրենսգրքով նախատեսված առիթների և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը, իրենց իրավասության շրջանակներում, պարտավոր են քրեական գործ հարուցել»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի համաձայն՝ *«Քրեական գործ հարուցելու առիթներն են՝*

1) հանցագործությունների մասին ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները՝ ուղղված հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին.

2) հանցագործությունների մասին լրատվության միջոցների հաղորդումները.

3) հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի, դատավորի կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը՝ իրենց լիազորություններն իրականացնելիս»:

Մեջբերված քրեադատավարական դրույթները Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Ս.Գևորգյանի* գործով որոշման մեջ՝ իրավական դիրքորոշում ձևավորելով այն մասին, որ *«(...) քրեական գործի հարուցման փուլի իրավական նշանակությունն այնպիսի դատավարական կարգի ապահովման մեջ է, որի պայմաններում կբացառվի քրեադատավարական գործիքակազմի անհիմն և աննպատակահարմար կիրառումը, հետևաբար նաև՝ ոչ հանցավոր իրադարձությունների կապակցությամբ անձանց իրավունքների ու օրինական շահերի սահմանափակումները և հանրային ռեսուրսների վատնումը: Դրանով պայմանավորված՝ քննարկվող փուլի առաջնային խնդիրներից է քրեական գործ հարուցելու առիթի օրինականության, ինչպես նաև հիմքերի բավարարության պարզումը:*

Քրեական գործ հարուցելու առիթը պայման է, որի առկայության դեպքում օրենքը լիազորում է իրավասու մարմիններին և պաշտոնատար անձանց մտնել իրավահարաբերությունների մեջ, կատարել գործողություններ, որոնք իրենց միասնությամբ ներկայացնում են քրեական դատավարության սկզբնական փուլի գործունեություն (...): Առիթն օրենքով սահմանված այն աղբյուրն է, որտեղից իրավասու պաշտոնատար անձը տեղեկություններ է ստանում նախապատրաստվող, կատարվող կամ կատարված հանցագործությունների մասին (...): Ընդ որում, քրեական գործ հարուցելու առիթը պետք է բավարարի օրենքով նախատեսված և՛ ձևական (...), և՛ բովանդակային պահանջներին (...):

Քրեական գործ հարուցելու հիմքը հանցագործության հատկանիշների առկայության մասին վկայող տվյալներն են: Ընդ որում, քրեական գործ կարող է հարուցվել միայն հանցագործության հատկանիշների վերաբերյալ տվյալների բավարարության դեպքում: Դրանց բավարարության գնահատման կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ քրեական գործ հարուցելու համար անհրաժեշտ է ոչ թե հանցակազմի բոլոր տարրերի, այլ սոսկ հանցագործության արտաքին հատկանիշների առկայության հավաստումը: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցագործության հատկանիշների առկայության վերաբերյալ ենթադրությունն օբյեկտիվորեն կրում է հավանական բնույթ, քանի որ դրա

վերջնական հաստատումը գործի քննության հետագա փուլերի խնդիրն է: Քրեական գործ հարուցելու հիմքերի բավարարությունը ենթադրում է հանցագործության հատկանիշների վերաբերյալ տվյալների այնպիսի համակցություն, որն օբյեկտիվ դիտորդին հնարավորություն կտա ենթադրություն կատարել հանցագործության հավանական առկայության վերաբերյալ: Հանցագործության հատկանիշների առկայության վերաբերյալ ողջամիտ կասկածների դեպքում պետք է հարուցվի քրեական գործ (քրեական վարույթը բացառող հանգամանքների բացակայության դեպքում) (...)» (տե՛ս Սիրվարդ Գևորգյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԼԴ/0018/11/16 որոշման 12-րդ կետը):

14. Սույն որոշման 12-րդ և 13-րդ կետերում մեջբերված իրավական դիրքորոշումների համադրման արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցագործության կատարման մասին իրավապահ մարմիններին իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն տրամադրող անձանց սուտ մատնության համար քրեական պատասխանատվության ենթարկելը պետության արձագանքն է այդ տեղեկատվության ստուգման, հանցագործության բացահայտման, քրեական օրենքով արգելված ենթադրյալ հանցանք կատարած անձանց հայտնաբերման ուղղությամբ վատնված մարդկային և նյութական ռեսուրսներին, ինչպես նաև այլ անձանց քրեական օրենքով արգելված արարքի կատարման վերաբերյալ սուտ տեղեկություն հաղորդելու արդյունքում վերջիններիս իրավունքների ու օրինական շահերի խախտմանը, պատվի ու արժանապատվության նվաստացմանը: Հիշյալի հաշվառմամբ թեև սուտ մատնությունն ավարտված է համարվում իրավասու մարմնի կողմից հանցագործության կամ հանցավորի մասին կեղծ տեղեկությունները ստանալու պահից, սակայն այդ կապակցությամբ քրեական գործ հարուցելու հիմքերը ձևավորվում են այն ժամանակ, երբ օրենքով սահմանված կարգով հաստատվում է հանցագործության մասին հաղորդման բովանդակության սուտ լինելը: Հակառակ պարագայում կստեղծվի այնպիսի իրավիճակ, երբ ենթադրյալ սուտ մատնություն պարունակող հաղորդման առիթով իրականացվող քննությանը զուգահեռ քրեական հետապնդում կիրականացվի դրան ուղղակիորեն հակադրվող, այն բացառող քրեական վարույթի շրջանակներում: Վերջինս ոչ միայն կհմաստազրկի անձի իրավունքների պաշտպանության հիմնարար երաշխիքները, այլ նաև լուրջ սպառնալիք կստեղծի քրեական հետապնդում իրականացնող մարմինների կողմից իրենց լիազորությունները կամայական գործադրելու տեսանկյունից:

15. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ սուտ մատնության փաստի առթիվ քրեական գործ հարուցելու հիմքերի բավարարությունը ստուգելիս վարույթն իրականացնող մարմինը պետք է պարզի ենթադրյալ սուտ մատնություն պարունակող հաղորդման կապակ-

ցությամբ օրենքով սահմանված կարգով վերջնական որոշման առկայությունը:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Արթուր Մամաջանյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով այն արարքի համար, որ նա, նախապզուշացված լինելով հանցագործության մասին սուտ մատնություն կատարելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին ու **գիտակցելով**, որ իր տրամադրած տեղեկատվությունը կեղծ է, 2015 թվականի սեպտեմբերի 1-ին ՀՀ ոստիկանության Ապարանի բաժնում գրավոր հաղորդում է տվել, որ նույն թվականի օգոստոս ամսվա ընթացքում «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Դսեղի անտառտնտեսություն» մասնաճյուղի «Մարցի» անտառպետության անտառապետ, պաշտոնատար անձ հանդիսացող Փաշիկ Խառատյանին իր օգտին վերջինիս կողմից նրա լիազորությունների շրջանակում, պաշտոնեական դիրքն օգտագործելով, ծառայության գծով թողտվության՝ առանց համապատասխան թույլտվության ծառահատումներ կատարելու, դրանք չարձանագրելու և փայտանյութն իր հորը պատկանող «Զիլ 130» մակնիշի 15 LU 041 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով յոթ անգամ Լոռու մարզից Շիրակի մարզ տեղափոխելու և այնտեղ վերավաճառելու համար անձամբ, որպես կաշառք, յուրաքանչյուր անգամ տվել է 50.000 ՀՀ դրամ, ընդհանուրը՝ 350.000 ՀՀ դրամ, ինչը զուգորդվել է ծանր հանցագործության մեջ մեղադրելով (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը ճանաչել և հռչակել է Արթուր Մամաջանյանի անմեղությունն իրեն առաջադրված մեղադրանքում՝ գտնելով, որ նախաքննական մարմնի՝ «քրեական գործի նյութերով նոր քրեական գործ հարուցելու և այն առանձին վարույթում առանձնացնելու մասին» որոշումը կայացվել է օրինական առիթի և հանցագործության հիմքերի բացակայության պայմաններում, ինչը հանգեցրել է այդ գործի շրջանակներում իրականացված քննչական և դատավարական գործողությունների և դրանց արդյունքում ձեռք բերված տվյալների անթույլատրելիության՝ «թունավոր ծառի պտուղները ևս թունավոր են» հայեցակարգի հիման վրա: Դատարանը նշել է, որ նախաքննական մարմինը նախևառաջ պետք է հերքեր Ա.Մամաջանյանի կողմից տրված հաղորդման մեջ նշված փաստական հանգամանքները, որպեսզի դրանից հետո ծագեր քրեական գործի հարուցման օրինական առիթը և հիմք (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Սինչդեռ Վերաքննիչ դատարանը, չհամաձայնելով Առաջին ատյանի դատարանի այն դիրքորոշման հետ, որ Ա.Մամաջանյանի հաղորդման մեջ նշված փաստական հանգամանքները հերքելուց հետո միայն կարող էր հարուցվել քրեական գործ, բեկանել է կայացված դատավճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության՝ հայտնելով, որ Արթուր Մամաջանյանի նկատմամբ սուտ մատնությամբ քրեական գործ

հարուցելիս առկա են եղել քրեական գործ հարուցելու օրինական առիթ և հիմքեր: Վերաքննիչ դատարանը գտել է, որ նախաքննական մարմինը կաշառք տալու հաղորդման հիման վրա հարուցված քրեական գործով ձեռք է բերել այնպիսի տվյալներ, որպիսիք ողջամտորեն կարող էին բավարար համարվել ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված ենթադրյալ հանցագործության կատարման փաստի առկայությունը հաստատված համարելու համար: Ուստի դատարանը գտել է, որ նախաքննական մարմինը թույլ չի տվել քրեադատավարական օրենքի այնպիսի խախտում, որը «թունավոր ծառի պտուղները ևս թունավոր են» հայեցակարգի համատեքստում կարող էր հանգեցնել ձեռքբերված ապացույցների անթույլատրելիությանը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

17. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 15-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշման լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, հաստատված համարելով սուտ մատնությամբ քրեական գործ հարուցելու հիմքերի առկայությունը, պատշաճ գնահատման և վերլուծության չի ենթարկել ներկայացված ենթադրյալ սուտ մատնություն պարունակող հաղորդման հիման վրա իրականացված քրեական վարույթը եզրափակող վերջնական որոշման և սուտ մատնությամբ քրեական գործ հարուցելու մասին որոշման ժամանակագրական հաջորդականությունը:

Մասնավորապես, Փ.Խառատյանին կաշառք տալու վերաբերյալ Ա.Մամաջանյանի հաղորդումը ստանալու պահից քրեական հետապնդում իրականացնող մարմնի կողմից կատարված դատավարական գործողությունների ժամանակագրական հաջորդականությունից հետևում է, որ՝

- **2015 թվականի սեպտեմբերի 11-ին** հարուցվել է թիվ **55104815** քրեական գործը, որի նախաքննության ընթացքում Ա.Մամաջանյանին՝ խոշոր չափով կաշառք տալու, իսկ Փ.Խառատյանին՝ խոշոր չափով կաշառք ստանալու հոդվածներով առաջադրվել են մեղադրանքներ,

- **2015 թվականի դեկտեմբերի 21-ին** վերոնշյալ քրեական գործի նյութերով հարուցվել է թիվ **55106115** քրեական գործը մեղադրյալ Ա.Մամաջանյանի կողմից սուտ մատնություն կատարելու փաստի առթիվ,

- **2015 թվականի դեկտեմբերի 22-ին** Ա.Մամաջանյանը թիվ **55106115** քրեական գործով հարցաքննվել է որպես կասկածյալ, և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել ստորագրությունը չհեռանալու մասին,

- **2015 թվականի դեկտեմբերի 28-ին** որոշում է կայացվել կաշառք տալու հոդվածով հարուցված թիվ **55104815** քրեական գործով վարույթը կարճելու, հանցագործության դեպքի բացակայության հիմքով Փաշիկ Խառատյանի և Արթուր Մամաջանյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին, այն պատճառաբանությամբ, որ քրեական գործով կատարվել են հնարավոր բոլոր քննչական գործողությունները, սակայն

Փաշիկ Խառատյանի կողմից խոշոր չափերով կաշառք ստանալու և Արթուր Մամաջանյանի կողմից պաշտոնատար անձին խոշոր չափերով կաշառք տալու վերաբերյալ բավարար ապացույցներ ձեռք չեն բերվել և սպառվել են նոր ապացույցներ ձեռք բերելու հնարավորությունները:

Վերոնշյալ դատավարական գործողությունների կատարման ժամանակագրական հաջորդականությունից երևում է, որ առանց վերջնական իրավական գնահատականի արժանացնելու և հերքելու Ա.Մամաջանյանի հաղորդմամբ ներկայացված տեղեկատվությունը, այդ փաստով քրեական հետապնդում իրականացնելուն զուգահեռ նախաքննական մարմինը որոշում է կայացրել սուտ մատնության հանցակազմի հատկանիշներով քրեական գործ հարուցելու մասին: Արդյունքում, Ա.Մամաջանյանի նկատմամբ իրարամերժ վարույթներով զուգահեռաբար իրականացվել է քրեական հետապնդում, Ա.Մամաջանյանն իր կողմից կաշառք տալու վերաբերյալ սուտ մատնություն կատարելու շուրջ հարցաքննվել է որպես կասկածյալ այն դեպքում, երբ ընթացքի մեջ է եղել կաշառք տալու փաստով իրականացվող նախաքննությունը, որի շրջանակներում նա ունեցել է մեղադրյալի դատավարական կարգավիճակ: Ընդ որում կաշառք տալու փաստի առթիվ իրականացվող վարույթն ավարտվել է 2015 թվականի դեկտեմբերի 28-ին, որից ընդամենը երկու օր անց՝ 2015 թվականի դեկտեմբերի 30-ին սուտ մատնության մեղադրանքով քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: Ավելին, Փ.Խառատյանի կողմից կաշառք ստանալու մասին սուտ մատնություն կատարելու համար նախատեսված քրեական պատասխանատվությունն ըստ էության ավելի խիստ է, քան կաշառք տալու համար նախատեսված պատասխանատվությունը: Նման պայմաններում ողջամտորեն կարող է առաջանալ մտավախություն առ այն, որ իրարամերժ վարույթներով քրեական հետապնդման իրականացումը կարող է օգտագործվել որպես վարույթն իրականացնող մարմնի համար ցանկալի տեղեկություններ ստանալու միջոց *(mutatis mutandis տե՛ս Կարեն Սարուխանյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԼԴ/0301/01/09 որոշման 23-րդ կետը):*

17.1 Հետևաբար Վերաքննիչ դատարանի դիրքորոշումն այն մասին, որ նախաքննական մարմինը կաշառք տալու հաղորդման հիման վրա հարուցված քրեական գործով ձեռք էր բերել այնպիսի տվյալներ, որպիսիք ողջամտորեն կարող էին բավարար համարվել ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված ենթադրյալ հանցագործության կատարման փաստի առկայությունը հաստատված համարելու համար, հիմնավոր չէ, քանի որ սուտ մատնությամբ քրեական գործ հարուցելու պահին դեռևս հերքված չի եղել կաշառք ստանալու վերաբերյալ տեղեկատվությունը:

Վերոգրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է հայտնում Առաջին ատյանի դատարանի այն պատճառաբանության, որ սույն դեպքում բացակայում է նաև քրեական գործ հարուցելու օրինական առիթը, քանի որ առիթի օրինականությունը պայմանավորված է դրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ձևական և բովանդակային պահանջներին բավարարելու հանգամանքով, մինչդեռ սույն գործի հարուցման առիթը բավարարում է հիշյալ հատկանիշներին: Սակայն Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է արտահայտում Առաջին ատյանի այն դատողության հետ, որ սույն դեպքում բացակայել են քրեական գործ հարուցելու բավարար հիմքերը:

18. Ամփոփելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախաքննական մարմինն իրավասու չէր Ա.Մամաջանյանի կողմից ենթադրյալ սուտ մատնություն կատարելու փաստի առթիվ հարուցել քրեական գործ այն պայմաններում, երբ Ա.Մամաջանյանի հաղորդման հիման վրա հարուցված քրեական գործով առկա չէր համապատասխան վերջնական որոշում:

II. Ապացույցների բավարարությունը.

19. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. Ա.Մամաջանյանի նկատմամբ միմյանց բացառող քրեական վարույթներ զուգահեռաբար իրականացնելով՝ նախաքննության մարմինն արդյոք թույլ չի տվել քրեադատավարական օրենքի այնպիսի խախտում, որը հանգեցրել է սույն քրեական գործի շրջանակներում ձեռքբերված ապացույցների՝ Ա.Մամաջանյանի մեղադրանքի հիմքում դնելու և օգտագործելու անթույլատրելիության:

20. ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ *«(...)*

2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:

3. Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:*

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննության ժա-*

մանակ ունի առնվազն հետևյալ երաշխիքների իրավունքը՝ լիակատար հավասարության հիման վրա.

(…)

է) չպարտադրվի իր դեմ ցուցմունքներ տալու կամ իրեն մեղավոր ճանաչելու»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. *«Կասկածյալին և մեղադրյալին չի կարելի հարկադրել ցուցմունքներ տալ, նյութեր ներկայացնել քրեական վարույթն իրականացնող մարմնին կամ նրան որևէ աջակցություն ցույց տալ»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի համաձայն՝ *«Մեղադրյալը, սույն օրենսգրքով սահմանված կարգով, իրավունք ունի՝ հայտարարել իր մեղավորության կամ անմեղության մասին»:*

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Մեղադրյալի կողմից իր իրավունքներից օգտվելը կամ դրանցից օգտվելուց հրաժարվելը չպետք է մեկնաբանվի ի վնաս նրա և նրա համար առաջացնի որևէ անբարենպաստ հետևանք: Մեղադրյալի վրա չի կարող որևէ պատասխանատվություն դրվել իր տված ցուցմունքների և բացատրությունների համար, բացի այն դեպքերից, երբ նա հայտարարել է հանցագործությանն ակնհայտորեն առնչություն չունեցող անձի կողմից հանցանք կատարելու մասին»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի համաձայն՝

«Քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել՝

(…)

2) կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի (…)՝ սույն օրենսգրքով նախատեսված լրացուցիչ երաշխիքների էական խախտմամբ.

(…)

2. Ապացույցներ ձեռք բերելիս էական են քննչական կամ դատավարական գործողությունների կատարման կարգի այն խախտումները, որոնք դրսևորվել են քրեական դատավարության մասնակիցների հիմնական իրավունքների և ազատությունների կամ քրեական դատավարության սկզբունքների խախտմամբ»:

21. Մեջբերված նորմերի առնչությամբ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ մեղադրյալի (կասկածյալի) պաշտպանության իրավունքը քրեական դատավարության հիմնարար սկզբունքներից մեկն է. այն նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված «զենքերի հավասարության» և ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ ամրագրված մրցակցության

սկզբունքների ապահովման կարևորագույն երաշխիք է: Մեղադրյալի (կասկածյալի) պաշտպանության իրավունքը նրան վերապահված դատավարական իրավունքների ամբողջությունն է, որը նրան հնարավորություն է տալիս հանդես գալու որպես դատավարության ինքնուրույն սուբյեկտ, լրիվ կամ մասնակիորեն հերքելու իրեն վերագրվող հանցանքը կատարած լինելու պնդումը, ինչպես նաև պաշտպանելու իր իրավունքներն ու օրինական շահերը: Պաշտպանության իրավունքն անձի համար գործում «զենք» է՝ դիմակայելու իշխանական լիազորություններով օժտված պետական մարմինների գործողություններին: Այս առումով պաշտպանության իրավունքը քրեական դատավարության խնդիրների, մասնավորապես՝ հանցավոր արարքի հետ կապված պետական իշխանության ինքնիրավ գործողություններից և չարաշահումներից անձի պաշտպանության, ինչպես նաև անօրինական կամ առանց անհրաժեշտության դատավարական հարկադրանքի միջոցների, պատժի, իրավունքների և ազատությունների այլ սահմանափակման չենթարկվելու (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ, 2-րդ մասի 3-րդ կետ) իրացման միջոցներից է *(տե՛ս, mutatis mutandis, Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի մարտի 26-ի՝ Նորիկ Պողոսյանի գործով թիվ ՀՅՔԴ2/0153/01/08 որոշման 25-րդ կետը, 2015 թվականի հունիսի 5-ի՝ Հեղինե Գալստյանի գործով թիվ ԼԴ/0051/01/14 որոշման 29-րդ կետը):*

Անձի պաշտպանության իրավունքը սերտորեն փոխկապակցված է լռելու իրավունքի հետ, և որպես վերջիններիս ապահովման երաշխիք է նախատեսված կասկածյալին և մեղադրյալին ցուցմունք տալուն կամ վարույթն իրականացնող մարմնին որևէ այլ աջակցություն ցուցաբերելուն հարկադրելու արգելքը:

Լռություն պահպանելու իրավունքը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում հստակ հիշատակված չէ, սակայն այն հանրաճանաչ միջազգային նորմ է, որն ընկած է արդարացի դատաքննության հասկացության հիմքում, որի մասին խոսվում է 6-րդ հոդվածում: Դրա իմաստը, inter alia, իշխանությունների ոչ պատշաճ հարկադրանքից մեղադրյալին պաշտպանելն է, ինչն օգնում է խուսափել դատական սխալներից և հասնել 6-րդ հոդվածով նախատեսված նպատակներին: Մասնավորապես այդ իրավունքը նպաստում է, որ մեղադրանքը չհիմնվի այնպիսի ապացույցների վրա, որոնք ձեռք են բերվել մեղադրյալի կամքին հակառակ՝ հարկադրանքի կամ ճնշման միջոցով: Այս իմաստով նշված իրավունքը սերտորեն կապված է անմեղության կանխավարկածի հետ, որը նախատեսված է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասում: Ընդ որում ցուցմունք տալու կամահայտնության պարագայում իր լռելու իրավունքից հրաժարվելիս պետք է բացառված լինի կամքի ճնշման կամ այլ եղանակով հարկադրանքի կիրառման հնարավոր

մտավախությունը *(mutatis mutandis տե՛ս Sanunders v. The United Kingdom գործով Եվրոպական դատարանի՝ 1996 թվականի դեկտեմբերի 17-ի վճիռը, գանգատ թիվ 19187/91, կետ 68-69, John Murray v. The United Kingdom գործով Եվրոպական դատարանի՝ 1996 թվականի փետրվարի 8-ի վճիռը, գանգատ թիվ 18731/91, կետ 45, J.B. v. Switzerland գործով Եվրոպական դատարանի՝ 2001 թվականի մայիսի 3-ի վճիռը, գանգատ թիվ 31827/96, կետ 64)*:

Սինեույն ժամանակ, լռելու իրավունքի հետ սերտորեն փոխկապակցված է իր անմեղության մասին հայտարարելու անձի իրավունքը: Մասնավորապես, այդ իրավունքի իրացմամբ ենթադրյալ հանցանք կատարած անձը նախաքննական մարմնին է ներկայացնում իր դիրքորոշումը մեղսագրվող քրեական օրենքով արգելված արարքի վերաբերյալ և ըստ այդմ՝ կառուցում իր պաշտպանական մարտավարությունը: Այսինքն անձի՝ իր անմեղության մասին հայտարարելու իրավունքը հիմնարար երաշխիք է իր պաշտպանությունն արդյունավետ կազմակերպելու իրավական կառուցակարգերի համակարգում:

Վերոգրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանը կարևոր է համարում ընդգծել, որ առաջադրված մեղադրանքից պաշտպանվելու նպատակով լռելու կամ անմեղության մասին հայտարարելու իրավունքներից օգտվելը չի կարող մեկնաբանվել ի վնաս նրա և նրա համար առաջացնել որևէ անբարենպաստ հետևանք: Վերջինս նույնպես հիմնարար նշանակություն ունի անձի պաշտպանական իրավունքի համատեքստում, որի շնորհիվ երաշխավորվում է առանց որևէ բացասական իրավական հետևանքների առաջացման մտավախության անձի կողմից իր իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Հակառակ պարագայում անձի պաշտպանության իրավունքը չի լինի կոնկրետ և իրական, այլ կլինի վերացական և պատրանքային *(տե՛ս Artico v. Italy գործով 1980 թվականի մայիսի 13-ի վճիռը, գանգատ թիվ 6694/74, կետ 33)*:

Նշվածի համատեքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նաև փաստել, որ անձի՝ պաշտպանության իրավունքից օգտվելու հնարավորությունը բացարձակ չէ և սահմանափակված է «չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին» չափորոշիչով (*տե՛ս 2015 թվականի դեկտեմբերի 6-ի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածը*): Այլ կերպ պաշտպանվելու իրավունքը չի կարող ենթադրել անօրինական, այլոց իրավունքներն ու ազատությունները խախտող, այդ թվում՝ հանցավոր միջոցներով պաշտպանություն իրականացնելու իրավունք: Հետևաբար պաշտպանությունն արդյունավետ կազմակերպելու անհրաժեշտությունից ելնելով՝ իր իրավունքներից օգտվելը չի կարող առաջացնել բացասական իրավական հետևանքներ, բացառությամբ այն դեպքերի, երբ անձը հայտարարում է հանցագործությանն ակնհայտորեն առնչություն չունեցող անձի կողմից հանցանք կատարելու մասին՝ այդ

կերպ փորձելով հիմնավորել իր անմեղությունը *(տե՛ս mutatis mutandis Հեղինե Գալստյանի գործով 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԼԴ/0051/01/14 որոշման 29-րդ կետը)*:

22. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Մամաջանյանը 2015 թվականի սեպտեմբերի 1-ին կաշառք տալու մասին հաղորդում է տվել ՀՀ ոստիկանության Ապարանի բաժնում *(տե՛ս սույն որոշման 5.1 կետը)*:

2015 թվականի դեկտեմբերի 22-ին Ա.Մամաջանյանը՝ որպես կասկածյալ, ցուցմունք է տվել այն մասին, որ անտառապետ Փաշիկ Խառատյանին երբևէ կաշառք չի տվել, իսկ կաշառք տալու վերաբերյալ ոստիկանության Ապարանի բաժնում հաղորդում տալիս գտնվել է հոգեպես անհավասարակշիռ վիճակում *(տե՛ս սույն որոշման 5.2 կետը)*:

Առաջին ատյանի դատարանը գտել է, որ Ա.Մամաջանյանը ո՛չ դիտավորություն, ո՛չ էլ նպատակ է ունեցել կատարելու սուտ մատնություն. հաղորդում տալը հետևանք է ոստիկանության ակտիվ գործողությունների՝ առանց անձին պարզաբանելու նրա լռելու, իր վերաբերյալ որևէ տեղեկություն չհայտնելու մասին իրավունքները, որի արդյունքում անձն ինքնամերկացնող հաղորդում է տվել: Այդ համատեքստում դատարանը նաև նշել է, որ թիվ 55104815 «Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին» 2015 թվականի դեկտեմբերի 28-ի որոշումը կայացվել է հենց այն ժամանակ, երբ նոր հարուցված և մաս անջատված գործով Ա.Մամաջանյանն ունեցել է կասկածյալի, ապա մեղադրյալի կարգավիճակ, և կասկածյալի կարգավիճակում տված ցուցմունքը նա հիմք է հանդիսացել հիշյալ որոշումը կայացնելու համար *(տե՛ս սույն որոշման 6 կետը)*:

Սինչդեռ Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը հայտնել է, որ հանցանք կատարելու կասկածանքով ոստիկանություն բերվելը, անձնական խուզարկության կամ այլ իրավաչափ սահմանափակումների ենթարկվելը, ինչպես նաև բերման ենթարկվելու առիթով բացատրություն վերցնել կամ չվերցնելը, այդ անձի կողմից սուտ մատնության հանցակազմի օբյեկտիվ կողմն իրականացնելու դեպքում, ինքնին չի կարող վկայել նրա արարքում սուտ մատնության հանցակազմի սուբյեկտիվ կողմի բացակայության մասին: Անդրադառնալով Ա.Մամաջանյանի կողմից հաղորդում տալը ոստիկանության աշխատակիցների գործողություններով պայմանավորելու՝ Առաջին ատյանի դատարանի դատողությանը՝ Վերաքննիչ դատարանը նշել է, որ այն հիմնավորված կլիներ այդ հանգամանքը հիմնավորող կոնկրետ փաստական տվյալների առկայության պայմաններում, որպիսիք բացակայում են սույն քրեական գործով *(տե՛ս սույն որոշման 7-րդ կետը)*:

23. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 20-21-րդ կետերում վկայակոչված իրա-

վաղրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատականի չի արժանացրել այն հանգամանքը, որ թեև Ա.Մամաջանյանը 2015 թվականի սեպտեմբերի 1-ին ՀՀ ոստիկանության Ապարանի բաժնում ներկայացված հաղորդմամբ տեղեկություններ է հայտնել քրեական օրենքով արգելված արարքի կատարման մասին, սակայն հետագայում հայտարարել է իր անմեղության մասին: Այնինչ, իր անմեղության մասին հայտարարելու իրավունքից օգտվելը չէր կարող մեկնաբանվել ի վնաս Ա.Մամաջանյանի և նրա համար առաջացնել անբարենպաստ հետևանքներ, բացառությամբ, եթե կպարզվեր, որ նա հայտարարել է հանցագործությանն ակնհայտորեն առնչություն չունեցող անձի կողմից հանցանք կատարելու մասին՝ այդ կերպ փորձելով հիմնավորել իր անմեղությունը: Արդյունքում Ա.Մամաջանյանի պաշտպանության իրավունքը խախտվել է և կրել վերացական ու պատրանքային բնույթ:

24. Սույն որոշման 17-րդ և 23-րդ կետերում նշված հանգամանքներն իրենց համակցությամբ Վճռաբեկ դատարանին հիմք են տալիս եզրահանգելու, որ նախաքննության մարմինը սույն գործով թույլ է տվել քրեադատավարական օրենքի էական խախտումներ, որոնք հանգեցրել են ձեռքբերված ապացույցների՝ մեղադրանքի հիմքում դնելու և օգտագործելու անթույլատրելիության:

25. Ա.Մամաջանյանի արարքում սուտ մատնություն կատարելու սուբյեկտիվ կողմի առկայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի դատողությունների *(տե՛ս սույն որոշման 7-րդ կետը)* կապակցությամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ սուտ մատնության դեպքում հանցավորը գիտակցում է, որ իր գործողություններով քրեական օրենքով արգելված հանցագործության կատարման մասին իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն է տրամադրում իրավապահ մարմիններին, զրպարտում է այլ անձանց հանցագործության կատարման մեջ, նվաստացնում վերջիններիս պատիվն ու արժանավատվությունը: Բացի այդ, հանցավորը նաև նախատեսում է և ցանկանում, որ իր գործողությունների արդյունքում գործադրվեն մարդկային և նյութական ռեսուրսներ իր կողմից նկարագրված հանցագործության դեպքը բացահայտելու, այն կատարած անհայտ կամ իր կողմից մատնանշված անձին հայտնաբերելու ուղղությամբ:

Վերոգրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանը կարևոր է համարում ընդգծել, որ քրեական հետապնդման մարմիններին հանցագործության կատարման մասին սուտ հաղորդում ներկայացնելիս հանցավորը գործում է իր ազատ կամահայտնությամբ, որպես կանոն՝ սեփական նախաձեռնությամբ: Այլ կերպ՝ սուտ մատնության սուբյեկտիվ կողմի առանձնահատկություններից ելնելով՝ հաղորդումն իրավապահ մարմիններին հասցեագրվում է և

հայտնի դառնում հանցավորի կամխամտածված գործողությունների արդյունքում, որոնք կարող են նաև ոտնձգել այլ անձանց իրավունքների և օրինական շահերի, պատվի և արժանապատվության դեմ: Այսինքն՝ սուտ մատնության հանցակազմի դեպքում էական նշանակություն ունի հաղորդումը ներկայացնող անձի՝ քրեական հետապնդման մարմիններին հանցագործության մասին սուտ տեղեկություններ հայտնելու ուղղակի դիտավորության բացահայտումը, որպիսի պայմաններում պետք է բացառված լինի անձի նկատմամբ հոգեբանական ճնշում գործադրված լինելու մտավախությունը, որը ողջամտորեն կարող է սահմանափակել անձի ազատ կամահայտնությունը:

26. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանը, Ա.Մամաջանյանի արարքում հաստատված համարելով սուտ մատնության սուբյեկտիվ կողմի առկայությունը, համակցության մեջ պատշաճ իրավական գնահատականի չի ենթարկել քրեական օրենքով արգելված արարքի կատարման մասին հաղորդում ներկայացնելու իրադրությունը բնութագրող հանգամանքները: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը չի գնահատել հաղորդում ներկայացնելու հանգամանքները, դրդապատճառները, այն ներկայացնելու պահին Ա.Մամաջանյանի հոգեֆիզիոլոգիական վիճակը, քրեական հետապնդման մարմինների գործողությունները, ինչպես նաև հանցագործության կատարման մասին սուտ հաղորդումն իրավապահ մարմիններին հասցեագրելու ազատ կամահայտնության մասին վկայող այլ գործոնների ամբողջությունը, որոնք ողջամտորեն կասկածներ են առաջացնում Ա.Մամաջանյանի կողմից սուտ մատնություն կատարելու ուղղակի դիտավորության առկայության վերաբերյալ *(տե՛ս սույն որոշման 5.1-ին և 6-րդ կետերը)*:

27. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում ամբաստանյալ Արթուր Մամաջանյանի անմեղությունը ճանաչելու և հոչակելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի դատավճռի օրինականության և հիմնավորվածության ստուգման ընթացքում Վերաքննիչ դատարանի կողմից թույլ են տրվել քրեադատավարական օրենքի խախտումներ, որոնք էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի հիման վրա, Վերաքննիչ դատարանի 2016 թվականի նոյեմբերի 28-ի որոշումը բեկանելու հիմք է:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով դատական ակտ կայացնելիս Առաջին ատյանի դատարանը դատական սխալ թույլ չի տվել, կայացված դատավճիռն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, ուստի պետք է օրինական ուժ տալ Արագածոտնի մար-

զի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մարտի 29-ի դատավճռին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 397-րդ, 398-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Արթուր Գուրգենի Մամաջանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 28-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մարտի 29-ի դատավճռին՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

14.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0235/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
	Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝	Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ՝	
ամբաստանյալ	Մ.ԱՎԵՏՅԱՆԻ
պաշտպան	Ի.ԳԱԶԱՐՈՎԱՅԻ
դատախազ	Հ.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

2017 թվականի նոյեմբերի 15-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի մայիսի 5-ի որոշման դեմ ամբաստանյալ Մարիե Բաբկենի Ավետյանի պաշտպան Իրինա Գազարովայի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2016 թվականի հունիսի 21-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում հարուցվել է թիվ 15121516 քրեական գործը:

Նախաքննության մարմինը 2016 թվականի օգոստոսի 24-ին որոշում է կայացրել Մարիե Բաբկենի Ավետյանին որպես մեղադրյալ ներգրավելու և

նրան ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք առաջադրելու մասին:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Հ.Խաչատրյանը 2016 թվականի սեպտեմբերի 13-ին որոշում է կայացրել մեղադրական եզրակացությունը հաստատելու և քրեական գործը դատարան ուղարկելու մասին:

2016 թվականի սեպտեմբերի 14-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ մուտքագրվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 29-ի դատավճռով Մարինե Բաբկենի Ավետյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել տուգանք՝ 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: Մ.Ավետյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, թողնվել է անփոփոխ մինչև դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը:

Վերոհիշյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել ամբաստանյալ Մ.Ավետյանի պաշտպան Ի.Գազարովան:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի մայիսի 5-ին որոշում է կայացրել վերոնշյալ դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու, իսկ պաշտպանի վերաքննիչ բողոքը մերժելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի մայիսի 5-ի որոշման դեմ ամբաստանյալ Մ.Ավետյանի պաշտպան Ի.Գազարովան բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 1-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Մեղադրող Հ.Խաչատրյանը ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան՝ խնդրելով Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի մայիսի 5-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ, իսկ պաշտպան Ի.Գազարովայի վճռաբեկ բողոքը՝ մերժել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի օգոստոսի 24-ի որոշմամբ Մ.Ավետյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով այն բանի համար, որ *«նա 2016թ. հունիսի 07-ին, ժամը 17:00-ի սահմաններում Երևան քաղաքի Մոսկովյան փողոցի 31-րդ շենքի 1-ին հարկում գործող Երևանի թիվ 12 մանկապարտեզի դիմաց շուրջ 5 րոպե տևողությամբ դիտավորյալ կոպիտ կերպով խախտելով հասարարական կարգը,*

բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով թիվ 12 մանկապարտեզի աշխատակիցների և Երևան քաղաքի Մոսկովյան փողոցի 31-րդ բնակելի շենքի բնակիչների նկատմամբ, այդ ընթացքում վիճաբանել է Նարինե Յողուրջյանի և Աննա Խաչատուրյանի հետ՝ իր գործողությունները զուգորդելով Ն.Յողուրջյանի նկատմամբ բռնություն գործադրելով:

Այսպես.

Մարինե Բաբկենի Ավետյանը հանդիսանալով Երևան քաղաքի Մոսկովյան փողոցի 31-րդ շենքում գործող «ՖԻԼ» ՍՊ ընկերության փոխտնօրենը՝ իրեն պատկանող «Տոյոտա Մատրիքս» մակնիշի 29 SS 531 հաշվառման համարանիշի ավտոմեքենան 2016 թվականի հունիսի 07-ին կայանել է նույն շենքի բակային հատվածում և գնացել աշխատանքի: Աշխատանքային օրվա ավարտին, ժամը 17:00-ի սահմաններում մոտեցել է իր մեքենային և նկատել, որ մեքենայի հետևում կայանված Նարինե Յողուրջյանին պատկանող «Նիսսան Տիդա» մակնիշի 04 UU 282 հաշվառման համարանիշի ավտոմեքենան արգելափակել է իր մեքենայի ելքի ճանապարհը: Որոշ ժամանակ անց, երբ Նարինե Յողուրջյանը, մանկապարտեզից վերցնելով իր երեխային, մոտեցել է մեքենային, որպեսզի հեռանա, վերջինս իրեն հակադրելով հասարակությունում ընդունված նորմերին, շուրջ 5 րոպե տևողությամբ դրսևորելով անզուսպ եսամոլություն, փորձելով ընդգծել սեփական անձի առավելությունը, չնչին առիթով կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, վիճաբանել է Ն.Յողուրջյանի հետ, այնուհետև թիվ 12 մանկապարտեզի տնօրեն Աննա Խաչատուրյանի կողմից վիճաբանությունը հարթելու առիթով արված դիտողությունից վրդովված՝ նախ վիճաբանել է վերջինիս հետ հիշյալ շենքի բակում, այնուհետև մուտք է գործել մանկապարտեզի տարածք, որտեղ շարունակել է իր խուլիգանական գործողությունները մանկապարտեզի տարածքում՝ բացահայտ դրսևորված անհարգալից վերաբերմունքով անհանգստություն պատճառելով մանկապարտեզում գտնվող երեխաներին և աշխատակիցներին, վիճաբանել է նաև Աննա Խաչատուրյանի հետ՝ խաթարելով Երևանի թիվ 12 մանկապարտեզի բնականոն աշխատանքը: Այնուհետև, շարունակելով իր հակահասարակական վարքագիծը, դուրս գալով մանկապարտեզից և նկատելով, որ Ն.Յողուրջյանի ավտոմեքենան դեռ կայանված է իր ավտոմեքենայի հետնամասում՝ շարունակել է վիճաբանությունը Ն.Յողուրջյանի հետ՝ այդ ընթացքում ձեռքերով շուրջ 7 անգամ հարվածներ հասցնելով վերջինիս մարմնի տարբեր մասերին՝ պատճառել է առողջությանը թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ՝ գլխի աջ գագաթծոծրակային, ճախ ուսհոդի, աջ բազկի, աջ նախաբազկի, ճախ ազդրի շրջանների արյունազեղումների, ճախ նախաբազկի շրջանի քերծվածքների ձևերով» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 67-68):

5.1. Առաջադրված մեղադրանքի կապակցությամբ Մ.Ավետյանը ցուցմունքներ է տվել այն մասին, որ 2016 թվականի հունիսի 7-ին ժամը 16:30-ի

սահմաններում դուրս է եկել աշխատավայրից, խանութում գնումներ է կատարել և մոտեցել իր ավտոմեքենային, որը կայանված է եղել գրասենյակի բակում: Այնտեղից պետք է մեկներ իր երեխային մանկապարտեզից վերցնելու նպատակով, սակայն մոտենալով մեքենային՝ տեսել է, որ մեքենայի հետևի մասում կայանված է մեկ այլ ավտոմեքենա, որն արգելափակել է իր մեքենայի ճանապարհը: Մոտ տասը րոպե սպասելուց հետո այդ մեքենային է մոտեցել մի աղջիկ (Ն.Յողուրջյանը), որն իր հարցին պատասխանել է, որ այո, մեքենան պատկանում է իրեն: Իր հարցին, թե ինչու է այդպես կայանել մեքենան, և որ ինքը տևական ժամանակ է սպասում է նրան՝ այդ աղջիկը պատասխանել է՝ «մի քիչ որ սպասես, ոչինչ չի լինի»: Այնուհետև, Ն.Յողուրջյանը նստել է ավտոմեքենան և միացրել շարժիչը: Ինքը նույնպես նստել է իր ավտոմեքենան և երբ ցանկացել է հեռանալ, լսել է, որ շենքի պատուհանից ինչ-որ անծանոթ կին (մանկապարտեզի տնօրեն, զործով վկա Աննա Խաչատուրյանը) իրեն հարցնում է, թե ի՞նչ է պատահել: Ինքը պատասխանել է, որ չէր կարողանում դուրս բերել մեքենան, իսկ այդ կինը ագրեսիվ տոնով ասել է՝ «սպասեիր մի 5 րոպե, սա մանկապարտեզի տարածքն է, ով որտեղ կցանկանա, այնտեղ կկանգնի, դու չպետք է ասես, թե մեքենան ոնց պետք է կանգնեցնել»: Հարցրել է, թե ով է նա, ինչու է միջամտում իրենց խոսակցությանը, սակայն վերջինս շարունակել է ագրեսիվ տոնով բղավել իր վրա: Դրանից հետո ինքը բարձրացել է մանկապարտեզ, որպեսզի ասի, որ նման կերպ մեքենան չկայանեն: Բարձրանալով մանկապարտեզ՝ միջանցքում հանդիպել է Ա.Խաչատուրյանին, ով կրկին պնդել է, որ դա մանկապարտեզի տարածքն է, և ով որտեղ ցանկանա՝ այնտեղ էլ կկայանի ավտոմեքենան: Այդ ժամանակ ինքը Ա.Խաչատուրյանին ասել է, որ նրա նմանները իրավունք չունեն աշխատել մանկապարտեզում՝ երեխաների հետ: Երբ ցանկացել է հեռանալ, Ա.Խաչատուրյանն ասել է՝ «էս լիրբը մտել է»: Դրանից ինքը բարկացել է և, ի պատասխան, նրա հասցեին ասել է՝ «թրջված հավ»: Դուրս գալով շենքից՝ տեսել է, որ Ն.Յողուրջյանը, ով արդեն մի կողմ էր վարել մեքենան, կրկին դիտավորյալ կերպով մեքենայով դարձյալ արգելափակել է իր մեքենայի ճանապարհը և իրեն ասել՝ «դե հիմա դուրս արի»: Ինքը պահանջել է դուրս բերել մեքենան, ապա մոտեցել է Ն.Յողուրջյանին և բարձրացրել ձեռքը՝ ցույց տալու համար, որ կարող է հարվածել նրան, եթե նա դուրս չբերի մեքենան: Այդ ժամանակ Ն.Յողուրջյանը ճանկռոել է իր ձեռքը: Այնուհետև միջամտել են մեկ տղամարդ և մանկապարտեզի երկու աշխատակիցները՝ հորդորելով Ն.Յողուրջյանին հանել մեքենան իր մեքենայի հետևից: Հետո Ն.Յողուրջյանը մեքենան վարելով հեռացել է, հեռացել է նաև ինքը: Մ.Ավետյանը ցուցմունքներում նշել է, որ իրավիճակը սրվել-լարվել է այն ժամանակ, երբ Ա.Խաչատուրյանը միջամտել է, քանի որ մինչ այդ ինքը և Ն.Յողուրջյանը նստել էին ավտոմեքենաները և ցանկանում էին հեռանալ: Պնդել է, որ ինքը Ն.Յողուրջյանին չի հարվածել, թեև եղել է շատ բարկացած և բորբոքված այն պատճառով, որ վերջինս չէր

հանում մեքենան իր մեքենայի հետևից (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 47-48, 72-73, հատոր 2, թերթեր 56-57, 60):

5.2. Տուժող Ն.Յողուրջյանը ցուցմունքներ է տվել այն մասին, որ դեպքի օրը գնացել է Երևանի թիվ 12 մանկապարտեզ՝ իր երեխային վերցնելու նպատակով: Իրեն պատկանող ավտոմեքենան կայանելու համար վայր չի գտել, ուստի այն կայանել է բակում կայանված մի ավտոմեքենայի հետնամասում: Մտել է մանկապարտեզ և 5 րոպե անց երեխայի հետ վերադառնալով մեքենայի մոտ՝ տեսել է Մ.Ավետյանին, ով ագրեսիվ տոնով սպառնացել է այդուհետ մեքենան այդպես կայանելու դեպքում ջարդել այն: Լսելով Մ.Ավետյանի սպառնալիքները՝ միջամտել է մանկապարտեզի տնօրեն Ա.Խաչատուրյանը, վերջինիս և Մ.Ավետյանի միջև ծագել է վիճաբանություն: Այն ժամանակ, երբ ինքը գտնվել է ավտոմեքենայի մեջ, Մ.Ավետյանը ավտոմեքենայի պատուհանից հարձակվել է իր վրա և սկսել հարվածել իրեն: Հարվածների հետևանքով ստացել է մարմնական վնասվածքներ՝ քերծվածքներ: Մ.Ավետյանին հանդարտեցնելու համար միջամտել են մանկապարտեզի երկու աշխատակիցները, ինչպես նաև Մոսկովյան 31-րդ շենքի բնակիչը, որին չի ճանաչում: Դրանից հետո ինքը մեքենայով հեռացել է այդ վայրից (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 21-23, 54-55, հատոր 2, թերթեր 35-38, 40):

5.3. Վկաներ Աննա Խաչատուրյանը, Ջուլիետտա Գալստյանը, Նաիրա Սիմոնյանը, Հրանտ Մովսիսյանը ցուցմունքներ են տվել այն մասին, որ Մ.Ավետյանի և Ն.Յողուրջյանի միջև միջադեպը տեղի է ունեցել այն պատճառով, որ վերջինս իր ավտոմեքենան կայանել է Մ.Ավետյանի ավտոմեքենայի հետևում՝ արգելափակելով դուրս գալու ճանապարհը: Մ.Ավետյանը պահանջել է Ն.Յողուրջյանից՝ դուրս հանել իր մեքենայի հետևում կայանած և ճանապարհը արգելափակած մեքենան:

Վկա Ա.Խաչատուրյանն իր ցուցմունքում նշել է, որ Մ.Ավետյանը դրսևորել է ագրեսիվ վարքագիծ, իրեն անվանել է «քրջված հավ», նաև ասել, որ իր նմանները չպետք է աշխատեն մանկապարտեզի տնօրեն, իսկ երբ Ն.Յողուրջյանը հեռացել է դեպքի վայրից, Մ.Ավետյանն իրեն մեղադրել է Ն.Յողուրջյանի հետ կապված միջադեպն իր պատճառով տեղի ունենալու համար:

Վկաներ Ջ.Գալստյանը և Ն.Սիմոնյանը իրենց ցուցմունքներում նշել են, որ Մ.Ավետյանը եղել է բորբոքված, մանկապարտեզի տնօրենին անվանել է «քրջված հավ» և սպառնացել ազատել տալ աշխատանքից:

Վկա Հ.Մովսիսյանը ցուցմունքում նշել է, որ միջադեպի մասնակից կանանցից մեկը, բղավելով մյուս կնոջ վրա, նրանից պահանջում էր դուրս հանել ավտոմեքենան և բացել իր ավտոմեքենայի ճանապարհը (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 28-29, 64-65, 37-38, 62-63, 35-36, 60-61, 30-31, հատոր 2, թերթեր 40, 60, 64):

6. Առաջին ատյանի դատարանը 2016 թվականի դեկտեմբերի 29-ի դատավճռում արձանագրել է. *«(...) [Ա]մբաստանյալ Մարիննե Ավետյանի*

դատաքննական ցուցմունքն անարժանահավատ է և այն հետապնդում է քրեական պատասխանատվությունից և պատժից խուսափելու նպատակ, քանի որ ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը հիմնավորվեց դատաքննության՝ իրավական պատշաճ ընթացակարգի պահպանմամբ հետազոտված վերը շարադրված ապացույցների՝ մասնավորապես՝ տուժողի, գործով անցնող բոլոր վկաների, ինչպես նաև դատարան ներկայացված տեսագրության բավարար ամբողջությամբ:

(...)

Սույն գործի դատաքննության ընթացքում, դատարանի կողմից տրված հարցերին ի պատասխան՝ ամբաստանյալը հայտնել է, որ տվյալ օրը, որոշակի անհրաժեշտությամբ պայմանավորված, տեղյակ է պահել իր դստեր մանկապարտեզի տնօրինությանը, որ երեխային վերցնելու է սահմանված ժամից՝ 19.00-ից, ավելի շուտ՝ ժամը 17.00-ի սահմաններում:

Այդուամենայնիվ, ամբաստանյալը չկարողացավ պատճառաբանել և դատարանին տալ արժանահավատ ու տրամաբանական պատասխաններ առ այն, թե ինչով էր պայմանավորված իր անհարկի շտապողականությունն այն դեպքում, երբ իր իսկ պնդմամբ երեխան, վիճաբանությանը նախորդած և բուն վիճաբանության ժամանակահատվածում, այնուամենայնիվ, գտնվել է մանկապարտեզում, հսկողության ներքո և (...) նրան այնտեղ վերցնելը կարող էր լինել, ոչ թե անպայման ժամը 17.00-ին, այլ նաև դրանից որոշակի ժամանակ՝ րոպեներ անց: Այստեղից հետևում է, որ տուժողի նկատմամբ նման վարքագիծ դրսևորելու, առավել ևս նրան հարվածներ հասցնելու, քաշքշելու և ճանկռելու որևէ լուրջ ու հիմնավոր պատճառ կամ առիթ ամբաստանյալը չի ունեցել, վերջինս գործել է անհարկի ագրեսիվությամբ, սեփական «ես»-ը տուժողի և վիճաբանության հետևանքով դեպքի վայրում հավաքված հասարակության մյուս ներկայացուցիչների նկատմամբ վեր դասելով ու նրանց նկատմամբ ակնհայտ արհամարհանք դրսևորելով: Հետևաբար, հիմնավորված է, որ վերջինս գործել է խուլիգանական մղումներով:

Այլ խոսքով, գործի քննությամբ դատարանը հաստատված համարեց, որ ամբաստանյալը, առանց որևէ հիմնավոր առիթի կամ պատճառի, վիճաբանել է տուժողի հետ, վերջինիս նկատմամբ գործադրել բռնություն:

Այսպիսով, քննվող քրեական գործով դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի դրույթներին համապատասխան, հետազոտելով և գնահատելով գործով ձեռք բերված ապացույցներն իրենց համակցությամբ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված ներքին համոզմամբ, ապացուցված է համարում այն, որ ամբաստանյալ Մարինե Բաբկենի Ավետյանը (...) կատարել է հանցավոր արարք՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով, ուստի վերջինս կատարած հանցավոր արարքի համար ենթակա է պատժի (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 75-90):

7. Վերաքննիչ դատարանն իր՝ 2017 թվականի մայիսի 5-ի որոշման շրջանակներում փաստել է. *«(...) [Վ]երաքննիչ դատարանը գտնում է, որ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Մարինե Բաբկենի Ավետյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով մեղսագրված արարքի քրեաիրավական որակման հարցում հանգել է վերջնական ճիշտ հետևության (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 52-72):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը</u>.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Վճռաբեկ բողոք բերած անձը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 29-ի դատավճիռը և Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի մայիսի 5-ի որոշումը օրինական, հիմնավորված և պատճառաբանված չեն, Մ.Ավետյանն իրեն մեղսագրված արարքը չի կատարել, իսկ վերոնշյալ դատական ակտերը կայացվել են գործի ելքի վրա ազդած նյութական և դատավարական իրավունքի խախտումներով:

Բողոք բերած անձը նշել է, որ սույն գործով դատարաններն ապացուցված են համարել, որ վիճաբանությունն առաջացել է այն պատճառով, որ տուժող Ն.Յողուրջյանն իր ավտոմեքենայով արգելափակել է Մ.Ավետյանի՝ կայանված ավտոմեքենայի ճանապարհը, միևնույն ժամանակ դատարաններն անտեսել են տուժող Ն.Յողուրջյանի ցուցաբերած ոչ իրավաչափ վարքագիծը (վերջինս խախտել է «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը) և մանկապարտեզի տնօրենի անհարկի, անհամարժեք և արհամարհական տոնով միջամտությունը, որի արդյունքում լարվել է մթնոլորտը: Բողոքի հեղինակն ընդգծել է, որ ավտոմեքենան սխալ կայանելու և դրա արդյունքում իր ավտոմեքենայի ճանապարհը փակելու համար Ն.Յողուրջյանին դիտողություն անելով՝ Մ.Ավետյանը ցուցաբերել է բնական և համարժեք ռեակցիա, ինչին Ն.Յողուրջյանն հակադարձել է ոչ համարժեք՝ արհամարհական տոնով ասելով՝ «Մի քանի րոպե որ սպասես, ոչինչ չի լինի»: Այնուհանդերձ, Ն.Յողուրջյանի և Մ.Ավետյանի վիճաբանությունը տևել է շատ կարճ, նրանք նստել են մեքենաները՝ հեռանալու նպատակով, սակայն այդ պահին անտեղի միջամտել է մանկապարտեզի տնօրեն Ա.Խաչատուրյանը, ով իր գործողություններով բորբոքել է իրավիճակը: Ա.Խաչատուրյանի այդ վարքագիծն ավելի է ոգևորել Ն.Յողուրջյանին՝ ցուցաբերելու էլ ավելի հանդուգն վարքագիծ, այն է՝ Ն.Յողուրջյանը հետ է կայանել իր ավտոմեքենան՝ կրկին փակելով Մ.Ավետյանի մեքենայի ճանապարհը: Եվ երբ Մ.Ավետյանը դուրս է եկել մանկապարտեզից, Ն.Յողուրջյանը նրան կոպիտ ու վիրավորական տոնով ասել է. «Դե հիմա դուրս արի»: Ն.Յողուրջյանն իր մեքենան

տեղաշարժել է միայն այն բանից հետո, երբ միջամտել է այդ թաղամասի բնակիչ, գործով վկա Հ.Մովսիսյանը:

Բողոքաբերն ընդգծել է, որ Մ.Ավետյանի արարքի հետևանքով հասարակությանը լուրջ անհանգստություն չի պատճառվել, նրա գործողությունները (բորբոքվելը, ձայնը բարձրացնելը) պայմանավորված են եղել տուժողի հակաօրինական (ոչ իրավաչափ) վարքագծով և ուղղված են եղել Ն.Յողուրջյանի, այլ ոչ թե հասարակության դեմ: Այսինքն՝ Մ.Ավետյանի արարքում բացակայել են խուլիգանական դրդումները, իսկ գործողությունները պայմանավորված են եղել բացառապես նրա հուզական վիճակով:

9. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ բեկանել և փոփոխել Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 29-ի դատավճիռը և Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի մայիսի 5-ի որոշումը, Մ.Ավետյանի վերաբերյալ կայացնել արդարացնող դատական ակտ կամ քրեական գործն ուղարկել Վերաքննիչ դատարան՝ նոր քննության:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր են արդյոք ստորադաս դատարանների հետևությունները այն մասին, որ ամբաստանյալ Մ.Ավետյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարք:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **խուլիգանությունը՝ դիտավորությամբ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելն է, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով:** Իսկ այդ հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է սահմանում **նույն արարքի համար, որը զուգորդվել է անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, ինչպես նաև ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով:**

12. Վճռաբեկ դատարանը *Արման Խաչատրյանի* վերաբերյալ որոշմամբ վերլուծության է ենթարկել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածը՝ ձշյալ հանցակազմի սուբյեկտիվ կողմի վերաբերյալ արտահայտելով հետևյալ իրավական դիրքորոշումները. *«Խուլիգանությունը կարող է կատարվել միայն ուղղակի դիտավորությամբ: Դա նշանակում է, որ մեղավոր անձը ոչ միայն գիտակցում է, որ իր գործողություններով խախտում է հասարակական կարգն ու բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորում հանրության հանդեպ, այլև ցանկանում է կատարել այդ գործողությունները:*

Խուլիգանական արարքը կարող է կատարվել միայն խուլիգանական մղումներից ելնելով: Իսկ արարքը համարվում է խուլիգանական մղումներով կատարված, եթե այն կատարվում է հասարակության և բարոյականության նորմերի նկատմամբ անթաքույց արհամարհանքի հողի վրա, երբ մեղավոր անձի վարքը հանդիսանում է բացահայտ մարտահրավեր՝ ուղղված հասա-

րական կարգի դեմ, և թելադրված է լինում շրջապատին հակադրվելու, վերջինիս հանդեպ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելու ցանկությամբ: Հետևաբար, եթե մեղավոր անձի գործողությունները կատարվել են ոչ խուլիգանական մղումներով և չեն զուգորդվել հասարակական կարգի կոպիտ խախտմամբ, դրանք չեն կարող որակվել որպես խուլիգանություն:

Մեղադրյալի կողմից տուժողին վիրավորանքներ, մարմնական վնասվածքներ հասցվելու կամ նման այլ բռնարարքների կատարման դեպքում խուլիգանական մղումները և խուլիգանության հանցակազմը կարող են բացակայել, եթե նշված գործողությունները կատարվել են կենցաղային հողի վրա առաջացած վիճաբանության, քիչ թե շատ երկարատև ժամանակահատվածի ընթացքում ձևավորված հակակրանքի արդյունքում:

Խուլիգանական մղումների առկայությունը գնահատելու համար էական նշանակություն կարող է ունենալ նաև տուժողի վարքագիծը» (տե՛ս Արման Խաչատրյանի վերաբերյալ գործով 2006 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ ՎՔ-223/06 որոշումը):

13. Վերահաստատելով և զարգացնելով վերը մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը *Շահեն Հախվերդյանի* գործով որոշման շրջանակներում փաստել է. *«(...) [Խ]ուլիգանություն կատարող անձը ոչ միայն գիտակցում է, որ իր գործողություններով խախտում է հասարակական կարգն ու բացահայտ անհարգալից վերաբերմունք է դրսևորում հասարակության նկատմամբ, այլև ցանկանում է դա: Այլ խոսքով՝ խուլիգանության օբյեկտիվ կողմը կազմող արարքները կատարող անձը ցանկանում է կոպիտ կերպով խախտել հասարակական կարգը և հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորել, այլ ոչ թե գիտակցաբար թույլ է տալիս վերոնշյալ հետևանքների՝ հասարակական կարգի խախտման և բացահայտ անհարգալից վերաբերմունքի դրսևորման հնարավորությունը:*

(...) Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ոչ բոլոր դեպքերում է, որ այլ հանցակազմի հատկանիշներ պարունակող արարք կատարելը, որն իրենում բովանդակում է նաև հասարակական կարգի կոպիտ խախտման և հասարակության նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորման տարրեր (օրինակ՝ կենցաղային հողի վրա, անձնական դրդապատճառներով հասարակական վայրերում առաջացած ծեծկռտուքն ու վիճաբանությունը, որոնք արտաքնապես ընկալվում են որպես հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք) կարող է որակվել խուլիգանություն:

(...) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արարքը խուլիգանություն որակելու համար էական նշանակություն ունեն դրա բնույթն ու կատարման շարժառիթը:

(...)

(...) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ խուլիգանությունը կարող է կատարվել խուլիգանական դրդումներով, որը դրսևորվում է հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելու, հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելու ճգտմամբ: Խուլիգանական դրդումների հիմքում ընկած են նաև անձի անզուսպ եսամոլությունը, սեփական անձի առավելությունն ընդգծելու միջոցով ներքին բավականություն ստանալու, զվարճանալու ճգտումը:

Խուլիգանություն կատարող անձն ինքնահաստատվում է, ճգտում հակահասարակական վարքագծով ապացուցել իր անկախությունը հասարակության մեջ ընդունված վարքագծի կանոններից, իր անձը հակադրելով հասարակությանը՝ ցույց տալ իր գերակայությունը և այլն:

(...)

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ խուլիգանական դրդումներն անհրաժեշտ է սահմանազատել արարքը կատարելու պահին անձի մոտ առկա հուզական վիճակից, որն անձի մոտ առաջացնում է լարվածություն, էմոցիոնալ բռնկվածություն և այլն: Մասնավորապես, եթե արարքն սկսվել է կենցաղային հողի վրա առաջացած վեճի կամ տուժողի հակաօրինական կամ հակաբարոյական վարքագծի հետևանքով, ապա անհրաժեշտ է պարզել՝ արդյոք անձի արարքը (հայհոյանքներ տալը կամ այլ վարքագիծը) ստեղծված իրավիճակին համարժեք հուզական դրսևորո՞ւմ է, թե՞ ուղղված է դիտավորությամբ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելուն, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ հանցավորի վարքագիծն ուղղված է կոնկրետ անձի, պայմանավորված է նրա հակաօրինական կամ հակաբարոյական վարքագծով և հանդիսանում է հանցավորի հուզական վիճակի արտահայտություն, խուլիգանության հանցակազմը բացակայում է:

(...) Վճռաբեկ դատարանը գտնում է, որ արարքը խուլիգանություն կարող է որակվել այն դեպքում, երբ անձի մոտ առկա են խուլիգանական դրդումներ: Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ արարքը խուլիգանություն կարող է որակվել նաև այն դեպքերում, երբ անձի մոտ առկա են հանցանքի կատարման այլ դրդումներ, սակայն հանցանքի կատարման ընթացքում ձևավորվում են խուլիգանական դրդումներ, այլ խոսքով՝ արարքը կվերածի խուլիգանության՝ հասարակական կարգի կոպիտ խախտման, որը դրսևորվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով:

(...) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ խուլիգանական գործողությունները կատարվել են կենցաղային հողի վրա առաջացած վեճի արդյունքում, ապա նախ անհրաժեշտ է պարզել, թե ով է հան-

դիսացել վեճը նախաձեռնողը: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արարքը չի կարող որակվել որպես խուլիգանություն, եթե վիճաբանությունն առաջանում է տուժողի ոչ իրավաչափ վարքագծի հետևանքով, և, հետևաբար, հանցանք կատարած անձի մոտ բացակայում են խուլիգանական դրդումները: Նման պարագայում արարքը կարող է խուլիգանություն որակվել միայն այն դեպքում, երբ խուլիգանական դրդումներն առաջանան հետագայում և արարքը վերածի խուլիգանության (տե՛ս *Շահենն Հախվերդյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԱՎԴ/0014/01/11 որոշման 23-28-րդ կետերը):

13.1. Խուլիգանության հանցակազմի հատկանիշների ամբողջական վերլուծության հիման վրա *Շահենն Հախվերդյանի* գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանի կողմից ընդգծվել է, որ *«[Ա]րարքը չի կարող որակվել որպես խուլիգանություն (ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդված) այն դեպքերում, երբ՝*

ա) արարքը կատարվում է ոչ հասարակական վայրում և (կամ) հասարակության անդամների բացակայությամբ,

բ) արարքի հետևանքով հասարակությանը լուրջ անհանգստություն չի պատճառվել,

գ) հանցավորի գործողությունները պայմանավորված են տուժողի հակաօրինական, հակաբարոյական վարքագծով և ուղղված են նրա, այլ ոչ թե հասարակության դեմ,

դ) բացակայում են խուլիգանական դրդումները, իսկ անձի արարքները պայմանավորված են նրա հուզական վիճակով,

ե) հասարակական կարգի կոպիտ խախտման նկատմամբ դրսևորվել է անզգուշություն,

զ) հասարակական կարգը կոպիտ կերպով խախտող արարքը համընկնում է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված այլ հանցակազմի հատկանիշների հետ, սակայն դրա կատարմամբ հանցավորը հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելու և հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելու նպատակ չունի,

է) այլ դրդումներով կատարված հանցանքը չի վերածել հասարակական կարգի կոպիտ խախտման, որը դրսևորվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով (տե՛ս *Շահենն Հախվերդյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԱՎԴ/0014/01/11 որոշման 29-րդ կետը):

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Մ.Ավետյանի և Ն.Յողուրջյանի, իսկ հետո նաև Մ.Ավետյանի և Ա.Խաչատուրյանի միջև տեղի է ունեցել վիճաբանություն՝ *պայմանավորված Ն.Յողուրջյանի կողմից իր ավտոմեքենայով Մ.Ավետյանի կայանած ավտոմեքենայի ճանապարհը փակելու և նրան մեկնելու հնարավորությունից զրկելու հանգաման-*

քով: Այս հանգամանքը իրենց ցուցմունքներով հաստատել են թե՛ ամբաստանյալ Մ.Ավետյանը, թե՛ տուժող Ն.Յողուրջյանը, ինչպես նաև ականատես վկաներ Ա.Խաչատուրյանը, Ջ.Գալստյանը, Ն.Սիմոնյանը, Հ.Մովսիսյանը (տե՛ս սույն որոշման 5.1.-5.3.-րդ կետերը): Ընդ որում, վկա Ա.Խաչատուրյանի կողմից նախաքննության մարմնին ներկայացված և գործով ապացույց ճանաչված տեսագրություններից ակնհայտ է, որ Մ.Ավետյանի և Ն.Յողուրջյանի միջև վիճաբանությունը թեժացել է այն պատճառով, որ *Ն.Յողուրջյանը չէր տեղաշարժում իր ավտոմեքենան և այդպիսով չէր բացում Մ.Ավետյանի ավտոմեքենայի ճանապարհը:* Տեսագրությունից երևում է, որ Մ.Ավետյանը նստում է իր ավտոմեքենան և միացնում ավտոմեքենայի շարժիչը, իսկ Ն.Յողուրջյանը, որը նստած էր իր ավտոմեքենայի մեջ, *չի հեռացնում Մ.Ավետյանի ավտոմեքենայի հետևում կայանած իր ավտոմեքենան նաև այն բանից հետո, երբ նրան «գնացեք, գնացեք» հորդորով դիմում է մի տղամարդ* (մոտակա շենքի բնակիչ, գործով վկա Հ.Մովսիսյանը): Մյուս տեսագրությունից երևում է, որ Ն.Յողուրջյանի կողմից մեքենան չհեռացնելու պատճառով Մ.Ավետյանը վրդովված դուրս է եկել իր ավտոմեքենայից, իսկ Հ.Մովսիսյանը հանգստացնում է նրան: Այնուհետև, գրեթե միաժամանակ մոտենում են մանկապարտեզի երկու աշխատակիցները (գործով վկաներ Ջ.Գալստյանը և Ն.Սիմոնյանը), և երևում է, որ *նրանք նույնպես հորդորում են Ն.Յողուրջյանին իր ավտոմեքենան հանել Մ.Ավետյանի ավտոմեքենայի հետևից:* Մանկապարտեզի աշխատակիցը հորդորում է Մ.Ավետյանին նստել մեքենան, իսկ այդ ընթացքում Ն.Յողուրջյանը Մ.Ավետյանին անվանում է «քոշա»: Երևում է, որ Հ.Մովսիսյանը ավտոմեքենայի մեջ նստած Ն.Յողուրջյանին *դարձյալ հորդորում է բացել Մ.Ավետյանի ճանապարհը:* Մ.Ավետյանը նստում է իր ավտոմեքենան, իսկ ներկաները *շարունակում են հորդորել Ն.Յողուրջյանին բացել ճանապարհը:* Այնուհետև Ն.Յողուրջյանը հեռացնում է իր ավտոմեքենան Մ.Ավետյանի ավտոմեքենայի հետևից (տե՛ս քրեական գործի 1-ին հատորի կազմին փակցված ծրարում առկա լազերային սկավառակը):

15. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված և վերլուծված, ինչպես նաև սույն որոշման 5-7-րդ կետերում մատնանշված փաստական տվյալների նկատմամբ կիրառելով սույն որոշման 11-13.1-րդ կետերում շարադրված իրավանորմերը և մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների հետևությունները այն մասին, որ ամբաստանյալ Մ.Ավետյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարք, հիմնավոր չեն:

15.1. Վճռաբեկ դատարանը փաստում է, որ քրեական գործի փաստական հանգամանքներից չեն բխում ստորադաս դատարանների եզրահանգումները այն մասին, որ Մ.Ավետյանը չնչին առիթով կոպիտ կերպով խախտել է հասարակական կարգը և բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորել հասարակության նկատմամբ:

Այսպես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստական հանգամանքներից հետևում է, որ՝

1) ամբաստանյալ Մ.Ավետյանի և տուժող Ն.Յողուրջյանի միջև վիճաբանություն առաջացել է այն պատճառով, որ վերջինս իր ավտոմեքենայով ոչ իրավաչափորեն արգելափակել էր Մ.Ավետյանի մեքենայի ճանապարհը՝ զրկելով նրան մեկնելու հնարավորությունից (տե՛ս սույն որոշման 14-րդ կետը): Այլ կերպ՝ վիճաբանության առաջացման պատճառը եղել է տուժողի ոչ իրավաչափ վարքագիծը, այն է՝ վերջինս զրկել է Մ.Ավետյանին ճանապարհով ազատ և անարգել տեղաշարժվելու հնարավորությունից՝ չպահպանելով «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված պահանջները,

2) ոչ միայն Մ.Ավետյանի և տուժող Ն.Յողուրջյանի, այլև Մ.Ավետյանի և Ա.Խաչատուրյանի միջև վիճաբանությունն ի սկզբանե պայմանավորված է եղել տուժողի ոչ իրավաչափ վարքագծով (տե՛ս նախորդ ենթակետը), և վերջիններիս միջև այն բորբոքվել է որոշակի ժամանակահատվածի ընթացքում ձևավորված հակակրանքի արդյունքում,

3) Մ.Ավետյանի վարքագիծը եղել է տուժողի ոչ իրավաչափ վարքագծի արդյունք: Մասնավորապես՝ սույն գործի նյութերից երևում է, որ տուժողը գտնվելով ավտոմեքենայի մեջ, դիտավորյալ կերպով շարունակել է փակ պահել ճանապարհը՝ անտեսելով անգամ հասարակության անդամների կողմից մի քանի անգամ արված հորդորները ճանապարհը բացելու շուրջ (տե՛ս սույն որոշման 14-րդ կետը):

Վերոգրյալի պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Մ.Ավետյանի գործողությունները պայմանավորված են եղել տուժողի ոչ իրավաչափ վարքագծով և ուղղված են եղել նրա, այլ ոչ թե հասարակության դեմ:

Այդ համատեքստում Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Առաջին ատյանի դատարանի այն հետևությունը, որ *«ամբաստանյալը, առանց որևէ հիմնավոր առիթի կամ պատճառի, վիճաբանել է տուժողի հետ»* (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Նույն պատճառաբանություններով Վճռաբեկ դատարանն ընդունելի չի համարում Առաջին ատյանի դատարանի նաև այն դատողությունը, որ ամբաստանյալը չկարողացավ դատարանին տալ արժանահավատ ու տրամաբանական պատասխաններ առ այն, թե ինչով էր պայմանավորված *իր անհարկի շտապողականությունն* այն դեպքում, երբ իր երեխան գտնվել է մանկապարտեզում, և նրան այնտեղ վերցնելը կարող էր լինել ոչ թե անպայման ժամը 17.00-ին, այլ նաև դրանից որոշակի ժամանակ անց (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

16. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Մ.Ավետյանի արարքում բացակայում են խուլիգանական դրդումները, իսկ նրա գործողությունները պայմանավորված են եղել տուժող Ն.Յողուրջյանի ոչ իրավա-

չափ վարքագծով, այլ կերպ՝ դրանք եղել են հուզական վիճակի արդյունք և նպատակ չեն ունեցել խախտել հասարակական կարգը, ինչպես նաև բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորել հասարակության նկատմամբ: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Մ.Ավետյանի գործողություններում բացակայում է խուլիգանության հանցակազմը:

17. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Մ.Ավետյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրական դատավճիռ կայացնելիս Առաջին ատյանի դատարանը, իսկ նշված դատական ակտն անփոփոխ թողնելիս նաև Վերաքննիչ դատարանը պատշաճ չեն գնահատել սույն գործի փաստական հանգամանքները և դրանց չեն տվել համարժեք իրավական գնահատական: Արդյունքում դատարանները թույլ են տվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի ոչ ճիշտ կիրառում, ինչը հանգեցրել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի խախտումներ:

18. Նախորդ կետում նշված խախտումները, որոնք ազդել են ամբաստանյալ Մ.Ավետյանի մեղավորության հարցը որոշելու վրա, Վճռաբեկ դատարանին հիմք են տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիման վրա բեկանելու ստորադաս դատարանների դատական ակտերը, ճանաչելու և հռչակելու Մ.Ավետյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքում, նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ, և քրեական գործի վարույթը կարճելու:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ ամբաստանյալ Մ.Ավետյանի նկատմամբ կիրառված՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը հարկավոր է վերացնել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361^1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Մարինե Բաբկենի Ավետյանի վերաբերյալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 29-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի մայիսի 5-ի որոշումը բեկանել, ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքում ամբաստանյալ Մարինե Բաբկենի Ավետյանին ճանաչել անմեղ և արդարացնել, նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել և քրեական գործի վարույթը կարճել հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

2. Ամբաստանյալ Մարինե Բաբկենի Ավետյանի նկատմամբ ընտրված՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը վերացնել:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

15.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԷԴ/0079/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
	Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝	Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ՝	
մեղադրող	Տ.ՈՒԶՈՅԱՆԻ
պաշտպան	Գ.ՄԵԼԻՔՅԱՆԻ

2017 թվականի նոյեմբերի 15-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Աբրահամ Միքայելի Միքայելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 6-ի որոշման դեմ ամբաստանյալ Ա.Միքայելյանի պաշտպան Գ.Մելիքյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2016 թվականի փետրվարի 23-ին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 12108516 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի հունիսի 21-ի որոշմամբ Աբրահամ Միքայելի Միքայելյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան

մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2016 թվականի հուլիսի 4-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2016 թվականի դեկտեմբերի 28-ի դատավճռով Ա.Միքայելյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և նրա նկատմամբ պատիժ նշանակել ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի հիման վրա նշանակված պատժի ժամկետին հաշվակցվել է ամբաստանյալ Ա.Միքայելյանի՝ 2016 թվականի հունիսի 23-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 28-ը կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածը՝ 6 (վեց) ամիս 5 (հինգ) օր ժամկետը, և նրան վերջնական թողնվել է կրելու ազատազրկում՝ 3 (երեք) տարի 5 (հինգ) ամիս 25 (քսանհինգ) օր ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա ամբաստանյալ Ա.Միքայելյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 2 (երկու) տարի ժամկետով: Ամբաստանյալ Ա.Միքայելյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերացվել է, և նա անհապաղ ազատվել է կալանքից:

3. Դատախազ Տ.Ուզոյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի ապրիլի 6-ի որոշմամբ բողոքը բավարարել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 28-ի դատավճիռը պատժի մասով փոփոխել է, ամբաստանյալ Ա.Միքայելյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և նրա նկատմամբ պատիժ նշանակել ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի հիման վրա նշանակված պատժի ժամկետին հաշվակցել է ամբաստանյալ Ա.Միքայելյանի՝ 2016 թվականի հունիսի 23-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 28-ը կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածը՝ 6 (վեց) ամիս 5 (հինգ) օր ժամկետը և նրան վերջնական թողել է կրելու ազատազրկում՝ 3 (երեք) տարի 5 (հինգ) ամիս 25 (քսանհինգ) օր ժամկետով: Ամբաստանյալ Ա.Միքայելյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը: Դատավճիռը մնացած մասով թողնվել է անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 6-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ա.Միքայելյանի պաշտպան Գ.Մելիքյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 6-ի որոշմամբ ամբաստանյալ Ա.Միքայելյանի պաշտպան Գ.Մելիքյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ամբաստանյալ Ա.Միքայելյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա *«(…) [Խ]արդախությամբ ուրիշի առանձնապես խոշոր չափերի գույքին տիրանալու նախնական դիտավորությամբ 2015թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին իր ծանոթ Մահմուդ Ալիի Բրոյանից խաբեությամբ, միասնական դիտավորությամբ հափշտակել է առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր 44.345.000 ՀՀ դրամ, որը դրսևորվել է հետևյալում:*

2015թ. նոյեմբերին Մահմուդ Բրոյանն իրեն պատկանող «BMW 325 IX» մակնիշի, 84 SL 888 հաշվառման համարանիշի, 4.165.000 ՀՀ դրամ արժողության ավտոմեքենան վաճառելու խնդրանքով դիմել է իր ծանոթ Աբրահամ Միքայելյանին, ով հանձն է առել և 2015թ. նոյեբերի 20-ին կնքված տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրով հիշյալ ավտոմեքենան վաճառել է Գևորգ Եղիկյանին՝ պարտավորվելով վաճառքից գոյացած գումարը Մ.Բրոյանին վերադարձնել մի քանի օրից:

Դրանից հետո Մահմուդ Բրոյանի հերթական խնդրանքով Աբրահամ Միքայելյանը 2015թ. դեկտեմբերի 11-ին կնքված տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրով Արմինե Մարգարյանին է օտարել Մ.Բրոյանին պատկանող «NISSAN PATROL» մակնիշի, 45 ZA 555 հաշվառման համարանիշի, 40.180.000 ՀՀ դրամ արժողության ավտոմեքենան և կրկին գումարը վերադարձնելու սուտ խոստումով, միևնույն միասնական դիտավորությամբ կրկին չի տրամադրել ավտոմեքենայի վաճառքից գոյացած գումարը ու Մ.Բրոյանից խաբեությամբ հափշտակել է ընդհանուր առանձնապես խոշոր չափերի՝ 44.345.000 ՀՀ դրամ գումարները (…)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 173):

6. Առաջին ատյանի դատարանն արձանագրել է՝ *«ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասի դրույթների համաձայն՝ որպես Աբրահամ Միքայելյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ դատարանը դիտում է այն, որ նրա խնամքին առկա են մինչև տասնչորս տարեկան երեք երեխա՝ Գոռ Աբրահամի Միքայելյանը, ծնված 05.07.2006թ. (ծննդյան վկայական ԱԱ N 131419),Հովհաննես Աբրահամի Միքայելյանը՝ ծնված 01.11.2007թ., (ծննդյան վկայական ԱԱ N 177778), Միքայել Աբրահամի Միքայելյանը՝ ծնված 18.04.2015թ.(ծննդյան վկայական ԱԲ N*

438411) և երկրորդ խմբի հաշմանդամ մայրը՝ Գայանե Արմենակի Միքայելյանը (հիմք՝ ՀՀ ԲՄՓԳ թիվ 622403 տեղեկանք), ինչպես նաև ամբաստանյալի հետհանցավոր դրական վարքագիծը՝ մեղքն ընդունելը, կատարած հանցանքի համար զղջալը, տուժողի հետ հաշտվելը և վերջինիս պատճառած գույքային վնասի հատուցման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելը:

Դատարանն արձանագրում է, որ Աբրահամ Միքայելյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ գործում առկա չեն:

(…)

[Ք]ննարկելով ազատազրկման ձևով պատիժը Աբրահամ Միքայելյանի կողմից կրելու նպատակահարմարության հարցը, վերլուծելով և գնահատելով վերջինիս սոցիալական առանձնահատկությունների, խնամքին այլ անձանց առկայության վերաբերյալ փաստական տվյալները (դատվածություն չունենալը, խնամքին մինչև տասնչորս տարեկան երեք երեխայի և երկրորդ խմբի հաշմանդամ մոր առկայությունը), ինչպես նաև հետհանցավոր դրական վարքագիծը (մեղքն ընդունելը, կատարած հանցանքի համար զղջալը, տուժողի հետ հաշտվելը և վերջինիս պատճառած գույքային վնասի հատուցման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելը), որը վկայում է այն մասին, որ նա գիտակցել է իր արարքի հանրային վտանգավորությունը և զղջացել դրա համար, որպիսի պարագայում քրեական պատժի նպատակների իրացումը, այդ թվում՝ հանցանք կատարած անձին ուղղելու, նրա կողմից նոր հանցանք կատարելուց զերծ մնալու հավանականությունը զգալիորեն բարձրանում է, դատարանը հանգում է հետևության, որ տվյալ դեպքում պատժի նպատակներին հնարավոր է հասնել առանց պատիժը փաստացի կրելու: Այսպիսով, ամբաստանյալ Աբրահամ Միքայելյանի կատարած հանցավոր արարքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանի և բնույթի, նրա անձը բնութագրող տվյալների, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքների համակցության, ինչպես նաև պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայության հաշվառմամբ դատարանը գտնում է, որ Աբրահամ Միքայելյանի նկատմամբ նշանակվող ազատազրկման ձևով պատիժը պետք է պայմանականորեն չկիրառել (…):

Հաշվի առնելով, որ թեև նախաքննության ընթացքում տուժող Մահմուդ Բրոյանը ճանաչվել է քաղաքացիական հայցվոր, սակայն քրեական գործով վարույթի ընթացքում վերջինիս, ինչպես նաև այլ անձանց կողմից քաղաքացիական հայց չի հարուցվել, դատարանն այդ հարցին չի անդրադառնում (…)» (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթ 78-80):

6.1. Առաջին ատյանի դատարանը նշել է նաև՝ *«Տուժող Մ.Բրոյանը դատական նիստում դիմում է ներկայացրել դատարան՝ հայտնելով, որ Աբրահամ Միքայելյանի նկատմամբ բողոք չունի, հրաժարվում է քաղաքացիական հայց ներկայացնելուց, հաշտվել է ամբաստանյալի հետ, չի ցանկանում, որ նա ենթարկվի քրեական պատասխանատվության և խնդրել է նրան*

ազատ արձակել: Պնդելով իր դիրքորոշումը, նշել է, որ ներկա դրությամբ իր և ամբաստանյալի միջև ձեռք է բերված պայմանավորվածություն իրեն պատճառված գույքային վնասի հատուցման վերաբերյալ, Աբրահամ Միքայելյանի կողմից այդ ուղղությամբ ձեռնարկվում են համապատասխան միջոցներ, վնասի հատուցման գործընթացն իրականացվում է: Ամբաստանյալի նկատմամբ որևէ պահանջ չունի և չի առարկում դատական քննության արագացված կարգ կիրառելու դեմ: Խնդրել է, որ ամբաստանյալի նկատմամբ նշանակվի ազատազրկման հետ կապ չունեցող պատիժ» (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթ 78):

7. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է. *«(...) Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Աբրահամ Միքայելյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չկիրառելիս թեև դատարանը փաստել է, որ հաշվի է առնում վերջինիս կողմից կատարած հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, անձը բնութագրող տվյալները, այդ թվում՝ պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները, սակայն իր իսկ կողմից մատնանշված հանգամանքներն օբյեկտիվ ու բազմակողմանի քննության ու գնահատության չի ենթարկել:*

Դատարանն արձանագրել է, որ ամբաստանյալը տուժողին պատճառած գույքային վնասի հատուցման ուղղությամբ միջոցներ է ձեռնարկել՝ այն դիտելով որպես ամբաստանյալ Ա.Միքայելյանի դրսևորած հետհանցավոր դրական վարքագիծ:

Վերաքննիչ դատարանն անհիմն է համարում դատարանի վերը նշված պատճառաբանությունները՝ նկատի ունենալով, որ մատնանշված հանգամանքի կապակցությամբ քրեական գործի նյութերում առկա չէ որևէ ապացույց:

Քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից ակնհայտ երևում է, որ ամբաստանյալ Ա.Միքայելյանը թեև Առաջին ատյանի դատարանում ընդունել է մեղքը և խնդրել է կիրառել արագացված դատական քննության կարգ, սակայն հանցանքը կատարելուց հետո մինչ այսօր՝ շուրջ մեկ տարի չորս ամսվա ընթացքում, տուժող Մ.Բրոյանին հանցագործության հետևանքով պատճառած առանձնապես խոշոր չափերի՝ 44.345.000 ՀՀ դրամի գույքային վնասը՝ թեկուզև մասնակի հատուցելու ուղղությամբ, ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննությունների ընթացքում որևէ միջոց չի ձեռնարկել, ինչն էական նշանակություն ունի ամբաստանյալ Ա.Միքայելյանի կողմից կատարված հանցագործության՝ հանրային վտանգավորության աստիճանի նվազեցման համար:

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Ա.Միքայելյանի կողմից տուժող Մ.Բրոյանին տրված բոլոր խոստումներն ու ստանձնած պարտավորությունները՝ հանցագործության հետևանքով պատճառած առանձնապես խոշոր չափերի գույքային վնասը հատուցելու

ուղղությամբ, հեռու են իրականությունից, կրում են սոսկ վերացական բնույթ, և արձանագրում է, որ ամբաստանյալի կողմից մեղքն ընդունելը, կատարած հանցանքի համար զղջալը, տուժողի հետ հաշտվելը չեն վկայում վերջինիս կողմից դրսևորած հետհանցավոր դրական վարքագծի մասին:

Վերոգրյալ հիմքերի առկայության պայմաններում Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ ամբաստանյալ Ա.Միքայելյանի անձը բնութագրող, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող Դատարանի կողմից մատնանշված հանգամանքներն իրենց համակցությամբ չեն ևնվազեցնում վերջինիս կողմից կատարված հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, և արձանագրում է, որ տույն գործի շրջանակներում առկա են ամբաստանյալ Ա.Միքայելյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չկիրառելը վերացնելու անհրաժեշտ ու բավարար հիմքեր, որի պայմաններում հնարավոր է հասնել արդարության վերականգնմանը, պատժի ենթարկված անձի ուղղմանը և հանցագործությունների կանխմանը, այն բխում է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված արդարության, պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթ 149):

7.1. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի մարտի 31-ի դատական նիստի ձայնային արձանագրության համաձայն՝

Նախագահող դատավոր. - *առաջին ատյանի դատարանում հատակ տուժող Բրոյանը դատական նիստում դիմում է ներկայացրել՝ հայտարարելով, որ ինքը բողոք չունի, հրաժարվում է քաղաքացիական հայց ներկայացնելուց, հաշտվել է ամբաստանյալի հետ, չի ցանկանում, որ նա ենթարկվի քրեական պատասխանատվության, խնդրել է ազատ արձակել՝ պնդելով իր դիրքորոշումը, նշել է, որ պարտք-պահանջ չունի, չի առարկում դատական քննության արագացված կարգի դեմ: Խնդրել է ամբաստանյալին նշանակել անազատության հետ կապ չունեցող պատիժ: Հիմա դուք իրավասու՞ եք հայտարարել ճիշտ հակառակը:*

Տուժողի ներկայացուցիչ. – *ոչ, ես ճիշտ հակառակը չեմ ասել, հարգելի դատարան:*

Նախագահող դատավոր. - *այսինքն պնդո՞ւմ եք այս [հայտարարությունը]*

Տուժողի ներկայացուցիչ. – *ըստ էության այո (...) գտնում եմ, որ պետք է առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողնել օրինական ուժի մեջ* (տե՛ս դատական նիստի ձայնային արձանագրության լազերային կրիչը, քրեական գործ, հատոր 4-րդ, թերթ 143):

8. Ամբաստանյալ Ա.Միքայելյանի պաշտպան Գ.Մելիքյանը Վճռաբեկ դատարան է ներկայացրել գործով տուժող Մ.Բրոյանի նոտարական կարգով վավերացված հայտարարությունը, ըստ որի՝ *«Սույնով հայտնում եմ, որ*

Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի թիվ ԵԷԴ/0079/01/16 քրեական գործի շրջանակներում ինձ պատճառված 44.345.000 (...) Հայաստանի Հանրապետության դրամն ամբողջությամբ ստացել եմ Աբրահամ Միքայելի Միքայելյանից (...) որպես պատճառված վնասի գումար, և վերջինիս նկատմամբ որևէ պարտք և պահանջ չունեմ» (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթ 38-39):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը, անքույլատրելի ճանաչելով ամբաստանյալ Ա.Միքայելյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը, խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ և 70-րդ հոդվածների պահանջները, այսինքն՝ թույլ է տրվել դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա:

Ըստ բողոքի հեղինակի՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ տուժող Մ.Բրոյանը Առաջին ատյանի դատարան ներկայացրած դիմումով հայտնել է, որ ամբաստանյալ Ա.Միքայելյանի նկատմամբ որևէ բողոք և պահանջ չունի, հրաժարվել է քաղաքացիական հայց ներկայացնելուց: Բողոքաբերի կարծիքով՝ վնասի հատուցման վերաբերյալ տուժողի բողոքի կամ քաղաքացիական հայցի բացակայության պայմաններում դատարանն իրավունք չուներ քննարկման առարկա դարձնելու պատճառված վնասի հատուցման հարցը: Բացի այդ, ստորադաս դատարանը, վերացնելով ամբաստանյալի նկատմամբ Առաջին ատյանի դատարանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառումը, դատական ակտում չի նշել որևէ հանգամանք, որի պայմաններում ամբաստանյալի ուղղվելը հնարավոր չէ առանց նշանակված պատիժը կրելու:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 6-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 28-ի դատավճռին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

11. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ է արդյոք ամբաստանյալ Ա.Միքայելյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պատիժը պայմանականորեն չկիրառելու անքույլատրելիության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Եթե դատարանը, կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դա-*

տապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները (...)»:

Սույն քրեաիրավական նորմերը Վճռաբեկ դատարանի կողմից բազմիցս վերլուծության են ենթարկվել մի շարք գործերով կայացված նախադեպային որոշումներում, և մշտապես վերահաստատվել է դիրքորոշումն առ այն, որ դատարանի համոզվածությունը, վստահությունն այն մասին, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց իրական պատիժ կրելու, պետք է հիմնվի օբյեկտիվ գոյություն ունեցող այնպիսի տվյալների համակողմանի վերլուծության վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը բազմիցս փաստել է, որ թեև պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգիրքը ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսում, սակայն դատարանի հետևությունները պետք է, ի թիվս այլոց, հիմնված լինեն նաև հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի ամբողջական գնահատման վրա *(հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ, ի թիվս այլ որոշումների, մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Գարուշ Մադաթյանի գործով 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԴ/0029/01/08, Արմեն Շահբազյանի գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԴ/0143/01/13, Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշումները)*՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթը, մեղքի ձևը և տեսակը, պատճառված վնասի չափը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, հանցագործության հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, նպատակներն ու շարժառիթները և այլն (ԵԱԴԴ/0034/01/12, ԼԴ/0093/01/12, ՏԴ/0018/01/13, ԵԷԴ/0132/01/13, ԵԱՆԴ/0060/01/13, ԵԿԴ/0096/01/13, ԵԿԴ/0252/01/13, ԵՄԴ/0027/01/14, ԳԴ/0014/01/14, ՄԴ/0204/01/13, ՏԴ/0031/01/14, ՍԴ3/0174/01/14, ԵԱԴԴ/0011/01/14, ԵԱՔԴ/0091/01/14, ԵԿԴ/0039/01/15 և այլն):

13. Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ սեփականության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս արարքի հանրային վտանգավորության բնույթի ու աստիճանի համատեքստում, այլ գործոնների հետ մեկտեղ, հատկապես կարևոր է հանցագործությամբ պատճառված վնասի (դրա չափի), այն վերականգնված լինելու կամ չլինելու հանգամանքների գնահատումը: Վճռաբեկ դատարանը փաստել է, որ հան-

ցագործության հանրային վտանգավորության աստիճանի նվազման տեսանկյունից հանցագործությամբ պատճառված նյութական վնասն ամբողջությամբ վերականգնված լինելու հանգամանքն էական նշանակություն ունի *(տե՛ս, mutatis mutandis, Ա.Սարգսյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի հունիսի 2-ի թիվ ՀՅՔԴ/0109/01/08, Գ.Պետրոսյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԵԿԴ/0126/01/10 որոշումները)*:

13.1. *Ա.Հովսեփյանի* վերաբերյալ որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«(…) [Հափշտակությունների և սեփականության դեմ ուղղված այլ հանցագործությունների դեպքում] պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը որոշելիս դատարանը պետք է, ի թիվս այլ հանգամանքների, գնահատման ենթարկի հանցագործությամբ պատճառված վնասը, դրա չափը, ինչպես նաև՝ որքանով է այն մոտ կոնկրետ հանցակազմի հասարակ կամ որակյալ տեսակի առավելագույն կամ նվազագույն չափին, վնասը վերականգնված լինելու կամ չլինելու կամ մասնակի վերականգնված լինելու հանգամանքը և այլն:*

(…)

Վերոնշյալ դիրքորոշումը նաև պայմանավորված է ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պատժի նպատակների իրացումն ապահովելու անհրաժեշտությամբ: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ գույքային բնույթի հանցագործություններում սոցիալական արդարության վերականգնումը հնարավոր է ապահովել պատճառված վնասի համարժեք հատուցմամբ և նախքան հանցագործությունը եղած իրադրության հնարավորինս վերականգնմամբ, իսկ քանի դեռ հանցագործությամբ տուժողին պատճառված վնասը չի հատուցվել, խոսք չի կարող լինել սոցիալական արդարությունը վերականգնված լինելու մասին (…)» (տե՛ս Ս.Հովսեփյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 12-ին կայացված թիվ ԼԴ/0193/01/10 որոշման 21.1-րդ կետը):

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Առաջին ատյանի դատարանը որպես ամբաստանյալ Ա.Միքայելյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ և անձը բնութագրող տվյալներ հաշվի է առել նրա դատվածություն չունենալը, խնամքին մինչև տասնչորս տարեկան երեք երեխայի և երկրորդ խմբի հաշմանդամ մոր առկայությունը, հետահանցավոր դրական վարքագիծը (մեղքն ընդունելը, կատարած հանցանքի համար զղջալը, տուժողի հետ հաշտվելը և վերջինիս պատճառած գույքային վնասի հատուցման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելը), ինչպես նաև պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը: Առաջին ատյանի դատարանն արձանագրել է նաև, որ տուժող Մ.Բրոյանն ամբաստանյալ Ա.Միքայելյանի նկատմամբ որևէ պահանջ չունի, հաշտվել է վերջինիս հետ և հրաժարվում է քաղա-

քացիական հայց ներկայացնելուց՝ արդյունքում եզրահանգելով, որ պատժի նպատակներին հնարավոր է հասնել առանց նշանակված պատիժը փաստացի կրելու (տե՛ս սույն որոշման 6-րդ և 6.1-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից որպես ամբաստանյալի հետհանցավոր դրական վարքագիծ գնահատված՝ տուժողին պատճառած գույքային վնասի հատուցման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու հանգամանքը չի բխում գործում եղած ապացույցներից, հետևաբար Ա.Միքայելյանի կողմից տուժող Մ.Բրոյանին տրված բոլոր խոստումներն ու ստանձնած պարտավորությունները հեռու են իրականությունից և կրում են սոսկ վերացական բնույթ: Արդյունքում Վերաքննիչ դատարանը փաստել է, որ ամբաստանյալի կողմից մեղքն ընդունելը, կատարած հանցանքի համար զղջալը, տուժողի հետ հաշտվելը չեն վկայում վերջինիս հետհանցավոր դրական վարքագծի մասին, ուստի սույն գործի շրջանակներում առկա են ամբաստանյալի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու անհրաժեշտ ու բավարար հիմքեր (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները համադրելով սույն որոշման 12-13.1-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, վերացնելով ամբաստանյալ Ա.Միքայելյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, պատշաճ իրավական գնահատականի չի արժանացրել գործում առկա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող, ինչպես նաև ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները: Այսպես՝ Առաջին ատյանի դատարանը նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս հաշվի էր առել ամբաստանյալի խնամքին մինչև տասնչորս տարեկան երեք երեխայի և երկրորդ խմբի հաշմանդամ մոր առկայությունը, ամբաստանյալի դրական հետհանցավոր վարքագիծը, մասնավորապես այն, որ վերջինս ընդունել է մեղքը, զղջացել է կատարած հանցանքի համար և հաշտվել է տուժողի հետ, ինչպես նաև պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը:

Ինչ վերաբերում է հանցագործությամբ պատճառված գույքային վնասին, ապա Առաջին ատյանի դատարանում տուժողը դիմում է ներկայացրել՝ հայտնելով, որ Ա.Միքայելյանի նկատմամբ բողոք չունի, հրաժարվում է քաղաքացիական հայց ներկայացնելուց, հաշտվել է ամբաստանյալի հետ իրենց միջև ձեռք է բերվել պայմանավորվածություն պատճառված գույքային վնասը հատուցելու վերաբերյալ, և ամբաստանյալն այդ ուղղությամբ ձեռնարկում է համապատասխան միջոցներ (տե՛ս սույն որոշման 6.1-րդ կետը): Վերաքննիչ դատարանում տուժողի ներկայացուցիչը պնդել է Առաջին ատյանի դատարանում տուժողի կողմից արված հայտարարությունը (տե՛ս

սույն որոշման 7.1-րդ կետը), իսկ ամբաստանյալի պաշտպանը Վճռաբեկ դատարան է ներկայացրել տուժող Մ.Բրոյանի նոտարական կարգով վավերացված հայտարարությունը, որի համաձայն՝ վերջինս Ա.Միքայելյանից ամբողջությամբ ստացել է հանցագործության արդյունքում իրեն պատճառված վնասը՝ 44.345.000 ՀՀ դրամ գումարը (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

15.1. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելն այն պատճառաբանությամբ, որ ամբաստանյալի կողմից տուժողին տրված խոստումներն ու ստանձնած պարտավորությունները՝ հանցագործության հետևանքով պատճառած առանձնապես խոշոր չափերի գույքային վնասը հատուցելու ուղղությամբ, հեռու են իրականությունից, և որ ամբաստանյալի կողմից մեղքն ընդունելը, կատարած հանցանքի համար զղջալը, տուժողի հետ հաշտվելը չեն վկայում վերջինիս հետհանցավոր դրական վարքագծի մասին, չեն բխում գործի նյութերից:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ Վերաքննիչ դատարանը, հանցագործությամբ պատճառված վնասը հատուցելու ուղղությամբ ամբաստանյալի կողմից որևէ միջոցներ չձեռնարկելու պատճառաբանությամբ Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելով, որևէ իրավական գնահատականի չի արժանացրել այն, որ ստորադաս դատարաններում տուժող կողմն ամբաստանյալի նկատմամբ որևէ գույքային պահանջ չի ներկայացրել և հրաժարվել է քաղաքացիական հայց հարուցելուց: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերոնշյալ հանգամանքն արարքի հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի գնահատման համատեքստում չի կարող նույն հարթությունում դիտարկվել այն իրավիճակի հետ, երբ առկա է պատճառված վնաս և այդ վնասը հատուցելու գույքային պահանջ:

16. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով արձանագրված՝ ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, ծանրացնող հանգամանքների բացակայությունը, արարքի հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, այդ թվում՝ ամբաստանյալի և տուժողի միջև գույքային վեճի բացակայությունը, ինչպես նաև հանցագործությամբ պատճառված վնասն արդեն իսկ հատուցված լինելու հանգամանքը, հիմք են տալիս եզրահանգելու, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու:

Հետևաբար ամբաստանյալ Ա.Միքայելյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պատիժը պայմանականորեն չկիրառելու անթույլատրելիության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավորված չէ:

17. Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, Ա.Միքայելյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելով, թույլ է տվել ՀՀ քրեական

օրենսգրքի 5-րդ, 10-րդ, 48-րդ, 61-րդ, 70-րդ հոդվածների պահանջների խախտումներ, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի իմաստով, քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է և հանգեցրել է նույն օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու հիմք են:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ: Ուստի արդարադատության արդյունավետության շահերից ելնելով՝ անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 28-ի դատավճռին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով (2005 թվականի փոփոխություններով), Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Աբրահամ Միքայելի Միքայելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2017 թվականի ապրիլի 6-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 28-ի դատավճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

16.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԴ2/0005/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ՝
դատախազ Վ.ՊՈՂՈՍՅԱՆԻ
պաշտպան Ս.ՋԱՂԻՆՅԱՆԻ

2017 թվականի նոյեմբերի 15-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Հրաչյա Նարիմանի Ներսիսյանի և Էդգար Սերոժի Ամիրյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի որոշման դեմ ամբաստանյալներ Հ.Ներսիսյանի և Է.Ամիրյանի պաշտպան Ս.Ջաղինյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2015 թվականի հունվարի 31-ին ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության հատկապես կարևոր գործերով (այսուհետ՝ ՀՀ ՔԿ Տավուշի մարզային ՔՎ ՀԿԳ) ավագ քննիչ Մ.Թամազյանի (այսուհետ՝ նաև քննիչ Մ.Թամազյան) կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 179-

րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով հարուցվել է թիվ 38100815 քրեական գործը:

Քննիչ Մ.Թամազյանի 2015 թվականի հունիսի 10-ի որոշմամբ թիվ 38100815 քրեական գործի նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 332-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով նոր քրեական գործ է հարուցվել և առանձնացվել առանձին վարույթում՝ թիվ 38104915 համարով: Նույն օրը ՀՀ ՔԿ Տավուշի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Վ.Սարգսյանը որոշում է կայացրել թիվ 38104915 քրեական գործը վարույթ ընդունելու և նախաքննություն կատարելու մասին:

Թիվ 38104915 քրեական գործով նախաքննության մարմնի 2015 թվականի հունիսի 13-ի որոշումներով Հրաչյա Նարիմանի Ներսիսյանը և Էդգար Սերոժի Ամիրյանը ներգրավվել են որպես մեղադրյալ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 332-րդ հոդվածի 2-րդ և 344-րդ հոդվածի 1-ին մասերով:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հունիսի 13-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 332-րդ հոդվածի 2-րդ մասով որպես մեղադրյալ են ներգրավվել նաև Ռաֆայել Ներսիսյանը, Մարտին Ներսիսյանը, Նարեկ Ներսիսյանը, իսկ նույն թվականի հունիսի 16-ի որոշմամբ՝ Հայկ Ներսիսյանը:

Թիվ 38100815 քրեական գործով նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հունիսի 16-ի որոշմամբ Հրաչյա Ներսիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով:

2015 թվականի հունիսի 17-ի որոշմամբ թիվ 38100815 քրեական գործը ընդունվել է քննիչ Վ.Սարգսյանի վարույթ: Նույն օրվա մեկ այլ որոշմամբ թիվ 38104915 և թիվ 38100815 քրեական գործերը միացվել են, և նախաքննությունը շարունակվել է թիվ 38100815 համարով:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հուլիսի 5-ի որոշմամբ քննիչ Մ.Թամազյանը ճանաչվել է տուժող:

1.1. 2015 թվականի հուլիսի 4-ին քննիչ Վ.Սարգսյանը որոշում է կայացրել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով թիվ 38105615 քրեական գործը հարուցելու և այն վարույթ ընդունելու մասին:

Նույն մարմնի՝ 2015 թվականի օգոստոսի 26-ի որոշմամբ թիվ 38105615 քրեական գործով Էդգար Ամիրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով:

2015 թվականի օգոստոսի 26-ին քննիչ Վ.Սարգսյանը որոշում է կայացրել թիվ 38105615 և թիվ 38100815 քրեական գործերը միացնելու և թիվ 38100815 համարով նախաքննությունը շարունակելու մասին:

Նույն օրվա մեկ այլ որոշմամբ Էդգար Ամիրյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական

օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին, 332-րդ հոդվածի 2-րդ և 344-րդ հոդվածի 1-ին մասերով:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի օգոստոսի 28-ի որոշմամբ Հրաչյա Ներսիսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 332-րդ հոդվածի 2-րդ մասով և 344-րդ հոդվածի 1-ին մասով:

2. 2015 թվականի սեպտեմբերի 11-ին ՀՀ ՔԿ ՀԿԳ քննության գլխավոր վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ա.Մկրտչյանը որոշում է կայացրել թիվ 38100815 քրեական գործը վարույթ ընդունելու և նախաքննությունը շարունակելու մասին:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի դեկտեմբերի 15-ի որոշմամբ Հրաչյա Ներսիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով առաջադրված մեղադրանքի մասը վերացվել է, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասը փոփոխվել է 344-րդ հոդվածի 3-րդ մասով: Հ.Ներսիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրեսգրքի 332-րդ հոդվածի 2-րդ մասով և 344-րդ հոդվածի 3-րդ մասով:

Նույն օրը նախաքննության մարմնի մեկ այլ որոշմամբ Էդգար Ամիրյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքի մասը վերացվել է, Է.Ամիրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրեսգրքի 332-րդ հոդվածի 2-րդ մասով և 344-րդ հոդվածի 1-ին մասով:

2016 թվականի հունվարի 8-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

3. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 22-ի դատավճռով ճանաչվել և հոչակվել է ամբաստանյալ Հ.Ներսիսյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 332-րդ հոդվածի 2-րդ և 344-րդ հոդվածի 3-րդ մասերով առաջադրված մեղադրանքում, ամբաստանյալ Է.Ամիրյանի անմեղությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 332-րդ հոդվածի 2-րդ և 344-րդ հոդվածի 1-ին մասերով առաջադրված մեղադրանքում՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Նույն դատավճռով արդարացվել են նաև ամբաստանյալներ Մարտին Վրեժի Ներսիսյանը, Նարեկ Վրեժի Ներսիսյանը, Ռաֆայել Վրեժի Ներսիսյանը և Հայկ Հրաչյայի Ներսիսյանը:

Մեղադրող Վ.Պողոսյանի և տուժող Մ.Թամազյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի փետրվարի 14-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները բավարարել է մասնակիորեն, Հրաչյա Նարիմանի Ներսիսյանի և Էդգար Սերոժի Ամիրյանի մասով բեկանել ու փոփոխել է Տավուշի

մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 22-ի դատավճիռը, Հ.Ներսիսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 332-րդ հոդվածի 2-րդ մասով և նրա նկատմամբ պատիժ նշանակել տուգանք՝ 300.000 ՀՀ դրամի չափով, իսկ Է.Ամիրյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 332-րդ հոդվածի 2-րդ մասով և նրա նկատմամբ պատիժ նշանակել տուգանք՝ 200.000 ՀՀ դրամի չափով:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի որոշման դեմ Վճռաբեկ բողոքներ են բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղեկալ Հ.Ասլանյանը, տուժող Մ.Թամազյանը, ամբաստանյալներ Հ.Ներսիսյանի և Է.Ամիրյանի պաշտպան Ս.Ջաղինյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 26-ի որոշումներով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի և տուժող Մ.Թամազյանի բողոքները վարույթ ընդունելը մերժվել է, իսկ ամբաստանյալներ Հ.Ներսիսյանի և Է.Ամիրյանի պաշտպան Ս.Ջաղինյանի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Ամբաստանյալ Հ.Ներսիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 332-րդ հոդվածի 2-րդ և 344-րդ հոդվածի 3-րդ մասերով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա «*2015թ. հունիսի 9-ին՝ ժամը 20:00-ի սահմաններում, (…) քննիչ Մ.Թամազյանի կողմից Իջևան քաղաքի Անկախության փողոցի 4-րդ շենքի 12-րդ բնակարանում և բնակարանին կից օժանդակ շինություններում ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի «Բնակարանում խուզարկություն կատարելու թույլտվության մասին» թիվ ՏԴ/0019/07/15 որոշման հիման վրա խուզարկություն կատարելու ընթացքում ներս է մտել իր վերոնշյալ բնակարան, գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությանը խոչընդոտելու նպատակով միջամտել է քննիչի գործունեությանը՝ այն է՝ քննիչի կողմից օրենքով սահմանված կարգով կողմնակի անձանց քննչական գործողության կատարման վայրից դուրս հրավիրելուց հետո պարբերաբար արգելել է նրանց ենթարկվել քննիչի պահանջին՝ հրաժարվելով ծանոթանալ դատարանի վերոնշյալ որոշմանը, մասնակցել կատարվող քննչական գործողությանը, քննիչին մեղադրել է տուն ապօրինի մուտք գործելու մեջ, հրապարակավ հայտարարել է, որ իր տանը 1.000.000 դոլար գումար է եղել, միաժամանակ սպառնալով, որ եթե գումարը չլինի, ապա բոլորի քթից կբերի, քննիչի կողմից կողմնակի անձանց դուրս հրավիրելու երկրորդ կոչին պատասխանել է, որ եթե նրանց ներկայությունը խանգարում է քննիչին, ապա հենց քննիչն էլ կարող է դուրս գալ, քննիչի նկատմամբ ցուցաբերել է անհարգալից վերաբերմունք և նրան վիրավորել է, պարբերաբար վիճաբանությունների մեջ մտնելով քննիչ Մ.Թամազ-*

յանի հետ, նրան անվանել է «այ տղա», քննիչին պարբերաբար դուրս է հրավիրել իր տնից, միաժամանակ ճեղքը գցել է սեղանին դրված պաշտոնական փաստաթղթին՝ խուզարկության վերաբերյալ արձանագրությանը, վերցնելով դրանք և տալով քննիչին՝ վերջինիս պարտադրել է դուրս գալ իր բնակարանից, այնուհետև հրապարակավ քննիչին մեղադրել է սեղանին եղած 1.000.000 դրամ գումարի գողության մեջ՝ նրան անվանելով «գող», հրելով քննիչի ճեղքը, հերթական անգամ խոչընդոտել է դատարանի որոշման հրապարակմանը՝ պահանջելով չկատարել այն, ընդունել է իրենց կողմից քննիչի գործողություններին խոչընդոտելու փաստը, միաժամանակ հրապարակավ ողջունել է խուզարկության կատարմանը խոչընդոտող Հայկ, Մարտին, Նարեկ, Ռաֆայել Ներսիսյանների և Էդգար Ամիրյանի գործողությունները, զրպարտել, վիրավորել, սպառնացել է քննիչ Մ. Թամազյանին և ճնշում է գործադրել վերջինիս նկատմամբ» (տե՛ս քրեական գործ, հատոր 11-րդ, թերթ 24-25):

5.1. Ամբաստանյալ Է.Ամիրյանին ՀՀ քրեական օրենսգրքի 332-րդ հոդվածի 2-րդ և 344-րդ հոդվածի 1-ին մասերով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա *«2015թ. հունիսի 9-ին՝ ժամը 20:30-ի սահմաններում, (…) քննիչ Մ. Թամազյանի կողմից Իջևան քաղաքի Անկախության փողոցի 4-րդ շենքի 12-րդ բնակարանում և բնակարանին կից օժանդակ շինություններում ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի «Բնակարանում խուզարկություն կատարելու թույլտվության մասին» թիվ ՏԴ/0019/07/15 որոշման հիման վրա խուզարկություն կատարելու ընթացքում առանց թույլտվության ներս է մտել վերոնշյալ բնակարան և Հրաչյա Ներսիսյանի կազմակերպմամբ ու հորդորներով գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությանը խոչընդոտելու նպատակով միջամտել է քննիչի գործունեությանը՝ այն է՝ չի ենթարկվել բնակարանից դուրս գալու քննիչի օրինական պահանջին, բնակարանում հավաքված անձանց՝ Ռաֆայել, Նարեկ, Մարտին, Հայկ և Հրաչյա Ներսիսյանների հետ միասին քննիչի հետ վիճաբանել է, գոռգոռացել վերջինիս վրա, հավաքված անձանց կոչ է արել ներկայանալ քննիչի կողմից կազմվող արձանագրությունը, դրանով իսկ ճնշում գործադրել քննիչի նկատմամբ:*

Բացի այդ, ՀԿԳ ավագ քննիչ Մ.Թամազյանին զրպարտել է՝ անհիմն մեղադրելով նախնական քննության վարելու և այլ դատական ակտի կատարման՝ այն է խուզարկության ընթացքում Հրաչյա Ներսիսյանի տանը գտնվող և իրեն պատկանող 1.000.000 դրամ գողանալու մեջ, պահանջելով հետ վերադարձնել գողացված գումարը» (տե՛ս քրեական գործ, հատոր 11-րդ, թերթ 38-39):

6. Թիվ 38100815 քրեական գործի նութերով նոր քրեական գործ հարուցելու և առանձին վարույթում առանձնացնելու մասին քննիչ Մ.Թամազյանի՝ 2015 թվականի հունիսի 10-ի որոշման համաձայն. *«(…) թիվ 38100815 քրեական գործի նախաքննությամբ պարզվել է, որ Հրաչյա Ներսիսյանի*

կազմակերպմամբ վերջինս և քննությամբ չպարզված մի խումբ անձինք գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությանը խոչընդոտելու նպատակով միջամտել են [քննիչ Մ.Թամազյանի] գործունեությանը:

Նկատի ունենալով, որ նշված փաստում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 332-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներ, այսինքն թիվ 38100815 քրեական գործով ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված առերևույթ հանցագործության դեպքից բացի բացահայտվել է դրա հետ չկապված այլ հանցագործություն, որը կատարվել է Հրաչյա Ներսիսյանի կազմակերպմամբ նրա և մի խումբ անձանց կողմից, և որ նշված փաստի կապակցությամբ նոր քրեական գործ հարուցելն ու այն առանձին վարույթում առանձնացնելը չի կարող անդրադառնալ թիվ 38100815 քրեական գործի վարույթի լրիվության և օբյեկտիվության վրա (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթ 1-5):

7. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 22-ի դատավճռի համաձայն՝ *«[Բնակարանում խուզարկությունը կատարելուց] հետո քննիչ Թամազյանը չէր կարող պատշաճ քննիչ լինել Հրաչյա Ներսիսյանին վերաբերող որևէ գործով: Ուստի նա նշված պահից ոչ քրեական գործ հարուցելու, ոչ նախաքննությունը շարունակելու, ոչ էլ ամբաստանյալին մեղադրանք առաջադրելու իրավունք չպետք է ունենա: (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 13-րդ, թերթ 200):

8. Վերաքննիչ դատարանը, չհամաձայնելով Առաջին ատյանի դատարանի մեջբերված դատողության հետ, նշել է. *«(...) Վերաքննիչ դատարանը նախ արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանում քննված մեղադրանքների մասով քրեական գործը թեև հարուցվել է քննիչ Մ.Թամազյանի կողմից, սակայն նախաքննությունը նրա կողմից չի կատարվել: Իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերի հատկանիշներով հարուցված քրեական գործով նախաքննությունը շարունակելու և մեղադրանք առաջադրելու վերաբերյալ փաստարկներն առարկայազուրկ են, քանի որ գործի քննությունը դատարանում կատարվում է միայն այն մեղադրանքի սահմաններում, որով ամբաստանյալին մեղադրանք է առաջադրվել (տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասը):*

Ինչ վերաբերում է քննիչ Ա.Թամազյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 332-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով քրեական գործի հարուցման իրավաչափությանը, ապա Առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ քննիչ Ա.Թամազյանը ոչ թե իրավունք է ունեցել, այլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝ պարտավոր է եղել հարուցելու քրեական գործ (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 15-րդ, թերթ 49-50):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանը սույն գործով թույլ է տվել դատավարական իրավունքի նորմերի այնպիսի էական խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

Ի հիմնավորում իր վերոհիշյալ փաստարկին՝ բողոքի հեղինակը նշել է, որ քննիչ Ա.Թամազյանի կողմից քրեական գործի հարուցումն անօրինական է, որովհետև տվյալ գործով վերջինս հանդիսացել է հանցագործության ոտնձգության օբյեկտ, իսկ հետագայում ճանաչվել որպես տուժող, այսինքն՝ հանդիսացել է գործով շահագրգիռ անձ:

Բողոք բերող անձը փաստարկել է նաև, որ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել գործի քննության ծավալից, մասնավորապես, ղեկավարվելով Վճռաբեկ դատարանում գործերի քննության համար սահմանված կանոններով, բեկանել է ստորադաս դատարանի արդարացման դատավճիռն ու կայացրել մեղադրական դատավճիռ՝ առանց վերաքննության կարգին վերադառնալու:

Բողոքաբերը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել մեղադրանքի ծավալից և փոփոխել է գործում առկա փաստերը, մասնավորապես՝ Հ.Ներսիսյանին և Է.Ամիրյանին առաջադրված մեղադրանքներում առկա ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով նկարագրված արարքներն ընդգրկել է ՀՀ քրեական օրենսգրքի 332-րդ հոդվածի 2-րդ մասի մեջ:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է Հրաչյա Նարիմանի Ներսիսյանի և Էդգար Սերոժի Ամիրյանի մասով բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 22-ի դատավճռին կամ գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կողմից իրենց լիազորություններն իրականացնելիս հանցավոր ոտնձգությունից տուժելու դեպքում դրա առթիվ քրեական գործ հարուցելու իրավասություն ունեցող սուբյեկտի, ինչպես նաև դրա քննությունն իրականացնելու իրավազորություն ունեցող մարմնի պատշաճության հարցի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. իրավաչա՞փ է արդյոք քննիչ Մ.Թամազյա-

ևի կողմից իր վարույթում գտնվող գործի քննությանը խոչընդոտելու փաստի առթիվ նոր քրեական գործի հարուցումը:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ «*Քրեական գործ հարուցելու առիթներ[ից է]՝ (…) հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի, դատավորի կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը՝ իրենց լիազորություններն իրականացնելիս*»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 175-րդ հոդվածի համաձայն՝

«*Քրեական գործ հարուցելու՝ սույն օրենսգրքով նախատեսված առիթների և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը, իրենց իրավասության շրջանակներում, պարտավոր են քրեական գործ հարուցել*»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝

«*Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը պարտավոր են իրենց իրավասության սահմաններում քրեական գործ հարուցել հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում, օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկել հանցագործություն կատարած անձանց և հանցագործության, ինչպես նաև դրա կատարման հանգամանքները բացահայտելու համար:*

Նույն քրեական գործի նախաքննության ընթացքում նույն անձի կողմից այլ հանցագործություններ կատարելու փաստերի հայտնաբերման դեպքում կարող է նոր քրեական գործ չհարուցվել, եթե արդեն իսկ հարուցված քրեական գործի շրջանակներում հնարավոր է գործի նախաքննությունն իրականացնել ամբողջ ծավալով (…)»:

Նույն օրենսգրքի 184-րդ հոդվածի համաձայն՝ «*Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը իրենց վարույթում գտնվող քրեական գործի նյութերով կայացնում են որոշում նոր գործ հարուցելու և այն առանձին վարույթում առանձնացնելու մասին, (…) եթե մեղադրյալին վերագրվող հանցագործություններից բացի բացահայտված է առաջինի հետ չկապված այլ հանցագործություն, որը կատարել է այլ անձ՝ առանց մեղադրյալի մասնակցության* (…)»:

Մեջբերված նորմերի վերլուծությունից հետևում է, որ հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, լինելով դատավարության հանրային սուբյեկտներ, ի պաշտոնե պարտավորված են քրեական գործ հարուցել դրա օրինական առիթների և բավարար հիմքերի առկայության դեպքում: Քրեական գործ հարուցելու առիթների շարքում օրենսդիրը նախատեսել է, ի թիվս այլոց, վերոհիշյալ սուբյեկտների կողմից իրենց լիազորություններն իրականացնելիս հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը: Այսինքն՝ հետաքննության մարմինը, քննիչը, դատախազն իրենց լիազորություններն իրականաց-

ելիս հանցագործության մասին տվյալներ, հանցագործության նյութական հետքեր և հետևանքներ հայտնաբերելու դեպքում, որպես կանոն, պարտավոր են հարուցել քրեական գործ:

14. Սինհնույն ժամանակ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 88-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ. *«[Դ]ատախազը, քննիչը, հետաքննության մարմնի աշխատակիցը, (…) որոնց հայտնի են քրեական դատավարությանն իրենց մասնակցությունը բացառող հանգամանքներ, պարտավոր են դրանց մասին հայտնել դատավարության շահագրգռված մասնակիցներին, քրեական վարույթն իրականացնող մարմնին, իսկ այն դեպքում, երբ նրանք կասկածում են իրենց մասնակցությամբ գործի նորմալ քննության հնարավորությանը՝ հայտարարել ինքնաբացարկ (…)»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 92-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված է, որ, համապատասխանաբար, դատախազը և քննիչը կամ հետաքննության մարմնի աշխատակիցը չեն կարող մասնակցել քրեական գործով վարույթին, եթե առկա է նույն օրենսգրքի 90-րդ հոդվածով նախատեսված հանգամանքներից որևէ մեկը:

Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով որպես այդպիսի հիմք է նախատեսված, ի թիվս այլոց, համապատասխան սուբյեկտի՝ գործին մասնակցող անձ ողջամտորեն հանդիսանալու (հիմքեր ունի կարծելու, որ նա կհանդիսանա) հավանականությունը:

Գործի արդարացի քննության սկզբունքից ելնելով՝ հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը չեն կարող մասնակցել քրեական գործով վարույթին, եթե ուղղակի կամ անուղղակի շահագրգռված են գործի ելքով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մաս): Հիշյալ օրենսդրական արգելքը միտված է արդարադատության բնագավառում երաշխավորելու օբյեկտիվ և անաչառ որոշումների կայացումը՝ ինչպես ընթացակարգային (դատավարական), այնպես էլ նյութական իրավահարաբերություններ կարգավորելիս: Այն անձի արդար դատաքննության, իր իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի, ինչպես նաև իրավունքի գերակայության ապահովման կարևորագույն երաշխիք է:

15. Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ հիշյալ երաշխիքը գործում է քրեական գործով վարույթի ամբողջ ընթացքում՝ ներառելով նաև քրեական գործի հարուցման փուլը: Այլ խոսքով՝ որպես հանցագործության դեպքով քրեական գործ հարուցելու պարտականության ընդհանուր կանոնից բացառություն, այն դեպքում, երբ հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, կամ դատախազը ուղղակի կամ անուղղակի շահագրգռված են գործի ելքով, այդ թվում՝ ողջամտորեն կարող են հանդիսանալ գործին մասնակցող անձ, մասնավորապես, հանցավոր ոտնձգությունից տուժած անձ, իրավասու չեն լուծելու քրեական գործի հարուցման հարցը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բոլոր այն դեպքերում, երբ հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը կամ դատախազը ողջամտորեն կարող են հանդիսանալ ենթադրյալ հանցագործությունից տուժած անձ, անկախ այն հանգամանքից՝ դա տեղի է ունեցել իրենց լիազորություններն իրականացնելիս, թե դրանից դուրս, որպես քրեական գործ հարուցելու առիթ չի կարող դիտարկվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի իմաստով՝ հանցագործության հայտնաբերումը: Տվյալ դեպքում հանցագործության օրինական առիթ կարող է լինել նույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ ֆիզիկական անձի հաղորդումը *(հանցագործության մասին հաղորդման որպես քրեական գործ հարուցելու առիթի մեկնաբանությանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Էմմա Կարապետյանի վերաբերյալ 2007 թվականի հուլիսի 13-ի թիվ ՎԲ-133/07 և Ռուզաննա Նիազյանի վերաբերյալ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԿԴ/0118/11/13 որոշումներում):* Հիշյալ դեպքերում քրեական գործ պետք է հարուցի և վարույթ իրականացնի քրեական գործ հարուցելու լիազորությամբ օժտված անկողմնակալ հանրային սուբյեկտը:

16. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ ՔԿ Տավուշի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Մ.Թամազյանը 2015 թվականի հունիսի 10-ի որոշմամբ իր վարույթում գտնվող թիվ 38100815 քրեական գործի նյութերով, Հ.Ներսիսյանի կազմակերպմամբ, նրա և մի խումբ անձանց կողմից գործի քննությանը խոչընդոտելու նպատակով, իր՝ որպես քննիչի գործունեությանը միջամտելու փաստի կապակցությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 332-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով նոր քրեական գործ է հարուցել և այն առանձնացրել առանձին վարույթում (տե՛ս սույն որոշման 1-ին կետը):

Նույն օրը ՀՀ ՔԿ Տավուշի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Վ.Սարգսյանը որոշում է կայացրել հիշյալ քրեական գործը վարույթ ընդունելու և նախաքննություն կատարելու մասին (տե՛ս սույն որոշման 1-ին կետը), իսկ 2015 թվականի սեպտեմբերի 11-ին այն իր վարույթ է ընդունել ՀՀ ՔԿ ՀԿԳ քննության գլխավոր վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ա.Սկրտչյանը (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հուլիսի 5-ի որոշմամբ քննիչ Մ.Թամազյանը ճանաչվել է տուժող (տե՛ս սույն որոշման 1-ին կետը):

Առաջին ատյանի դատարանը, արդարացնելով ամբաստանյալներին, ի թիվս այլոց, անդրադարձել է քննիչ Մ.Թամազյանի գործողությունների իրավաչափությանը՝ գտնելով, որ բնակարանում խուզարկությունը կատարելուց հետո քննիչ Թամազյանը չէր կարող պատշաճ քննիչ լինել Հրաչյա Ներսիսյանին վերաբերող որևէ գործով: Ուստի նա նշված պահից ո՛չ քրեական գործ հարուցելու, ո՛չ նախաքննությունը շարունակելու, ո՛չ էլ ամբաս-

տանյալին մեղադրանք առաջադրելու իրավունք չպետք է ունենար (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, չհամաձայնելով Առաջին ատյանի դատարանի վերոհիշյալ պատճառաբանության հետ, նշել է, որ Առաջին ատյանի դատարանում քննված մեղադրանքների մասով քրեական գործը թեև հարուցվել է քննիչ Մ.Թամազյանի կողմից, սակայն նախաքննությունը նրա կողմից չի կատարվել, բացի այդ, քննիչ Ա.Թամազյանը ոչ թե իրավունք է ունեցել, այլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝ պարտավոր է եղել հարուցել քրեական գործ (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

17. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-15-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշման լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քննիչ Մ.Թամազյանը, քրեական գործին մասնակցող՝ հանցավոր ոտնձգությունից տուժած անձ, հանդիսանալու ողջամիտ հավանականության մասին քաջատեղյակ լինելով, հարուցել է քրեական գործ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննիչ Մ.Թամազյանի կողմից իր վարույթում գտնվող գործի քննությանը խոչընդոտելու փաստի առթիվ նոր քրեական գործի հարուցումն իրավաչափ չէ:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն իրավաչափ չի համարում Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն առ այն, որ քննիչ Ա.Թամազյանը ոչ թե իրավունք է ունեցել, այլ պարտավոր է եղել հարուցել քրեական գործ, քանի որ Վերաքննիչ դատարանն անտեսել է քրեական վարույթին քննիչ Ա.Թամազյանի մասնակցությունը բացառող հանգամանքի առկայությունը:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քննիչ Մ.Թամազյանի՝ որպես շահագրգիռ անձի կողմից քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելու հանգամանքն ինքնին հիմք չէ դրանից հետո կատարված քննությունն ամբողջությամբ անօրինական գնահատելու և ամբաստանյալներին արդարացնելու համար: Այսպես՝ ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը բացարկման ենթակա լինելու հիմքով ոչ պատշաճ սուբյեկտի կողմից դատավարական գործողության իրականացման իրավական հետևանքները, որպես կանոն, կապում է դրա հիման վրա ձեռք բերված տվյալները որպես ապացույց օգտագործելու անթույլատրելիության հետ: Հիշյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իր մասնակցությունը գործով վարույթին բացառող հանգամանքի մասին տեղյակ լինելու հետևանքով ոչ պատշաճ հանրային սուբյեկտի կողմից քրեական գործ հարուցելը պետք է հանգեցնի տվյալ սուբյեկտի գործողությունների արդյունքում ձեռք բերված ապացույցների, ինչպես նաև դրանց հետ «թունավոր ծառի պտուղների» կանոնով փոխկապակցված ապացույցների անթույլատրելիության, այլ ոչ թե ինքնաբերաբար ենթադրյալ հանցանք կատարած անձի

արդարացման *(«թունավոր ծառի պտուղների» կանոնի վերլուծության Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Ա.Սարգսյանի վերաբերյալ 2009 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ ԵՔԴ/0295/01/08 և Ժ.Մեֆիլյանի վերաբերյալ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13 որոշումներում)*:

18. Վերոհիշյալի համատեքստում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում քննարկման առարկա դարձնել նաև այն իրավական հարցը՝ իրավաչափ է արդյոք Վերաքննիչ դատարանի կողմից ամբաստանյալներ Հ.Ներսիսյանի և Է.Ամիրյանի դատապարտումը նախաքննությունը ՀՀ ՔԿ Տավուշի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Վ.Սարգսյանի և ՀՀ ՔԿ ՀԿԳ քննության գլխավոր վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ա.Սկրտչյանի կողմից իրականացված լինելու պայմաններում:

19. Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ գործի արդարացի քննության սկզբունքը նախատեսող 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, պարզել ինչպես կասկածյալի և մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող, ինչպես նաև նրանց պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները»*:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի համաձայն՝

«1. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի [332-րդ և 344-րդ] հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են քննչական կոմիտեի քննիչները:

(…)

6. (…)

Անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը կարող է քննչական այլ մարմինների քննիչների վարույթից վերցնել և հատուկ քննչական ծառայության քննիչների վարույթին հանձնել քրեական գործեր, որոնք առնչվում են [պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց] հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործություններին, կամ որոնցով այդ անձինք ճանաչված են որպես տուժող, ինչպես նաև ցանկացած այլ քրեական գործ, եթե դրա փաստական հանգամանքներով պայմանավորված՝ առկա է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունը երաշխավորելու անհրաժեշտություն»:

Նույն օրենսգրքի 6-րդ հոդվածի 26.2-րդ կետի համաձայն՝ պետական հատուկ ծառայություն իրականացնող անձինք են, ի թիվս այլոց, քննչական կոմիտեի ծառայողները:

20. Վերը մեջբերված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, քրեական հետապնդման մարմնի համար սահմանելով լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն կատարելու պարտականություն, որպես դրա ապահով-

ման երաշխիք քննչական ենթակայության կանոնները սահմանելիս, ի թիվս այլնի, լիազորել է ՀՀ գլխավոր դատախազին առանձին դեպքերում քրեական գործեր վերցնել քննչական այլ մարմինների քննիչների վարույթից և հանձնել հատուկ քննչական ծառայության քննիչների վարույթին: Հիշյալ առանձին դեպքերի շրջանակում են նաև այն քրեական գործերը, որոնցով այլ քննչական մարմինների քննիչները կարող են հանդիսանալ հանցավոր ոտնձգությունից տուժած անձ: Ընդ որում, գլխավոր դատախազի հիշյալ լիազորությունը հայեցողական բնույթ է կրում, իսկ դրա իրականացումը պայմանավորված է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն երաշխավորելու անհրաժեշտությամբ:

Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օբյեկտիվ քննություն կատարելու պահանջը վերացական բնույթ կկրի, եթե չապահովվի քրեական գործի քննությունն իրականացնող մարմնի՝ տվյալ գործի նկատմամբ գերատեսչական հետաքրքրության բացակայությունը, կողմերից մեկի և գործը քննող կառույցի շահերի համընկնման անթույլատրելիությունը: Հիշյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքերում, երբ քրեական գործով որպես տուժող է ճանաչված քննչական մարմնի ծառայողը, կամ վերջինս հանդիսանում է հանցավոր ոտնձգությունից տուժած անձ, անթույլատրելի է տվյալ գործի քննության իրականացումը այդ քննչական մարմնի կողմից, հակառակ դեպքում չի երաշխավորվի գործի անաչառ քննության իրականացումը՝ կասկածի տակ դնելով ձեռք բերված ապացույցների թույլատրելիությունը:

21. Անդրադառնալով սույն գործի հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործը ոչ պատշաճ սուբյեկտի՝ տվյալ գործով հետագայում տուժող ճանաչված ՀՀ ՔԿ Տավուշի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Մ.Թամազյանի կողմից հարուցվելուց հետո դրա նախաքննությունն իրականացվել է նույն վարչության մեկ այլ քննիչ Վ.Սարգսյանի կողմից, ապա՝ ՀՀ ՔԿ ՀԿԳ քննության գլխավոր վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ա.Սկրտչյանի: Այսինքն՝ սույն գործով քննչական կոմիտեի քննիչ Մ.Թամազյանի՝ տուժող ճանաչված լինելու պայմաններում տվյալ գործի քննությունն իրականացվել է նույն մարմնի կողմից: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի քննությունը չի իրականացվել օբյեկտիվ մարմնի կողմից՝ հանգեցնելով դրա շրջանակներում ձեռք բերված ապացույցների անթույլատրելիության:

22. Հիշյալ փաստերը համադրելով սույն որոշման 20-րդ կետում շարադրված իրավական դիրքորոշման լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նախաքննությունը ՀՀ ՔԿ Տավուշի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Վ.Սարգսյանի և ՀՀ ՔԿ ՀԿԳ քննության գլխավոր վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ա.Սկրտչյանի կողմից իրականացված լինելու պայմաններում Վերաքննիչ դատարանի կողմից ամբաստանյալներ Հ.Ներսիսյանի և Է.Ամիրյանի դատապարտումն իրավաչափ չէ:

23. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, պատշաճ իրավական գնահատական չտալով վերոհիշյալ հանգամանքներին, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածով նախատեսված գործի արդարացի քննության սկզբունքի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների, հիմք է վերջինիս կողմից կայացված դատական ակտը բեկանելու համար:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, և ամբաստանյալներ Հ.Ներսիսյանի և Է.Ամիրյանի անմեղությունը կասկած չի հարուցում: Ուստի անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 22-ի արդարացման դատավճռին՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ այս պարագայում նպատակազուրկ է անդրադառնալ բողոքաբերների բարձրացրած մյուս փաստարկներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալներ Հրաչյա Նարիմանի Ներսիսյանի և Էդգար Սերոժի Ամիրյանի մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 22-ի արդարացման դատավճռին՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

17.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0084/06/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
	Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
քարտուղարությամբ՝	Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ՝	
դատախազ՝	Կ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ
պաշտպան	Ա.ԾԱՀԲԱԶՅԱՆԻ
մեղադրյալ	Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2017 թվականի նոյեմբերի 15-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի մարտի 1-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. 2014 թվականի մայիսի 15-ին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման վարչության հետաքննության բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով

հարուցվել է թիվ 83161414 քրեական գործը և ուղարկվել ըստ ենթակայության՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչություն՝ նախաքննություն կատարելու համար:

2016 թվականի մարտի 18-ին որոշում է կայացվել Տիգրան Հարությունի Պետրոսյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2016 թվականի ապրիլի 7-ին որոշում է կայացվել Տ.Պետրոսյանի նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին:

Նախաքննական մարմնի միջնորդության հիման վրա Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 8-ի որոշմամբ Տ.Պետրոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

2016 թվականի դեկտեմբերի 8-ին որոշում է կայացվել քրեական գործի վարույթը կասեցնելու մասին:

1.1 2017 թվականի հունվարի 23-ին հետախուզման մեջ գտնվող Տիգրան Պետրոսյանը հայտնաբերվել և բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Վանաձոր քաղաքի Տարոնի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր:

2017 թվականի հունվարի 24-ին որոշում է կայացվել քրեական գործի վարույթը վերսկսելու մասին:

Նախաքննական մարմնի միջնորդության հիման վրա Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2017 թվականի հունվարի 24-ի որոշմամբ վերահաստատվել է մեղադրյալ Տ.Պետրոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը կիրառելու մասին 2016 թվականի ապրիլի 8-ի որոշումը:

2. Մեղադրյալ Տ.Պետրոսյանի պաշտպան Ի.Ավագյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2017 թվականի մարտի 1-ի որոշմամբ բողոքը բավարարվել է. այն է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունվարի 24-ի որոշումը բեկանվել և Տ.Պետրոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը վերացվել է:

3. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի մարտի 1-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 2-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

4. Տ.Պետրոսյանին մեղադրանք է առաջադրվել այն արարքի համար, որ «նա, «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ կետի, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի և 19-րդ հոդվածի 14-րդ կետի 14.3.5 ենթակետի, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի պահանջների խախտմամբ, առանց պետական գրանցման և առանց հատուկ թույլտվության (լիցենզիա) իրականացրել է ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն: Մասնավորապես՝ Տ.Պետրոսյանը 2014թ. մարտի 11-ին՝ Լոռու մարզի Շահումյան համայնքի 12-րդ փողոցի 1-ին նրբանցքի թիվ 1/1 հասցեում, «Վան-Խաղ» ՍՊ ընկերության գործունեության նախկին տարածքում, տվյալ կազմակերպության խաղային ապարատների միջոցով իրականացրել է լիցենզավորման ենթակա՝ շահումով խաղերի գործունեություն, որի արդյունքում Հայաստանի Հանրապետությանը պատճառել է առանձնապես խոշոր չափերի՝ 4.500.003.000 դրամ գումարի վնաս» (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 88):

5. 2014 թվականի ապրիլի 2-ի՝ Տ.Պետրոսյանի բացատրության արձանագրության համաձայն՝ «(...) [Ե]ս ունեի խնդիրներ և գտնվում [էի] ծանր սոցիալական վիճակում, որոշեցի աշխատացնել ապարատները, սակայն իմ մտածածի մասին որևէ մեկին չտեղեկացրի, քանի որ գիտեի ընկերության ղեկավարությունը իմանար այդ մասին, չէր թույլատրի, որ ես նման բան անեմ (...)» (տե՛ս նյութեր, թերթ 11):

Նախաքննական մարմնի ուղարկած ծանուցագրերով Տ.Պետրոսյանը 2014 թվականի մայիսի 31-ին, օգոստոսի 8-ին հրավիրվել է հարցաքննության ՀՀ ֆինանսների նախարարության քննչական վարչություն (տե՛ս նյութեր, թերթեր 17, 43):

Նախաքննական մարմնի ուղարկած ծանուցագրերով Տ.Պետրոսյանը նաև 2015 թվականի հոկտեմբերի 1-ին և 2016 թվականի մարտի 24-ին հրավիրվել է հարցաքննության ՀՀ ֆինանսների նախարարության քննչական վարչություն, որոնք հետ են վերադարձվել «ՀՀ-ից դուրս» գրառմամբ (տե՛ս նյութեր, թերթեր 57, 60, 71-72):

Նախաքննական մարմնի կողմից 2014 թվականի մայիսի 31-ին, օգոստոսի 25-ին, 2015 թվականի հոկտեմբերի 13-ին որոշումներ են կայացվել Տ.Պետրոսյանին բերման ենթարկելու մասին, իսկ 2014 թվականի հունիսի 10-ին, հունիսի 11-ին գրություններ են ուղարկվել ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչություն՝ Տ.Պետրոսյանին ՀՀ ֆինանսների նախարարության քննչական վարչություն ներկայացնելու վերաբերյալ (տե՛ս նյութեր, թերթեր 17, 33, 36, 44, 61):

ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի Բազումի բաժնի տեսուչ Է.Սարգսյանի՝ «Քնակարան այցելելու մասին»

2014 թվականի հունիսի 10-ի արձանագրության համաձայն՝ *«(...) Այցելության ժամանակ Տիգրան Պետրոսյանը տանը չէր և ըստ եղբոր՝ Արմեն Պետրոսյանի բանավոր հայտարարության՝ գտնվում է Երևան քաղաքում և երբ է վերադառնալու Վանաձոր քաղաք, կոնկրետ տեղեկություններ չունի»* (տե՛ս նյութեր, թերթ 35):

ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի Բազումի բաժնի տեսուչ Է.Սարգսյանի՝ «Բնակարան այցելելու մասին» 2014 թվականի հունիսի 11-ի արձանագրության համաձայն՝ «*(...) Այցելության ժամանակ բնակարանի դուռը փակ էր և Նարեկ Սարգսյանը (...) պատասխանեց, որ Տիգրան Պետրոսյանի հետ ունի հարազատական կապ և եկել է տեսակցության: Հարցրեցի, թե տվյալ բնակարանի բնակիչները որտե՞ղ են, պատասխանեց, որ տեղեկացված չէ այդ մասին և չունի նրանց հետ կապ հաստատելու միջոցներ*» (տե՛ս նյութեր, թերթ 37):

ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի Բազումի բաժնի տեսուչ Է.Անտոնյանի՝ «բնակարան այցելելու մասին» 2014 թվականի հունիսի 20-ի արձանագրության համաձայն՝ «*(...) Այցելության ժամանակ բնակարանի դուռը փակ էր և ըստ հարևանուհի Էմմա Անտոնյանի բանավոր հայտարարության՝ Տիգրան Պետրոսյանի գտնվելու վայրի մասին կոնկրետ տեղեկություններ չունի*» (տե՛ս նյութեր, թերթ 39):

Նախաքննական մարմնի կողմից 2014 թվականի հուլիսի 1-ին, հուլիսի 29-ին, օգոստոսի 26-ին, 2015 թվականի մարտի 18-ին հանձնարարություններ են ուղարկվել ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչություն՝ Տ.Պետրոսյանին հայտնաբերելու ուղղությամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու համար (տե՛ս նյութեր, թերթեր 45, 54):

ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի Բազումի բաժնի պետի՝ 2014 թվականի սեպտեմբերի 12-ի գրության համաձայն՝ *«(...) [Կ]ատարված ստուգումներով և ձեռնարկված միջոցառումներով պարզվել է, որ Վանաձոր քաղաքի Ներսիսյան թաղամասի 6 շենքի 28 բնակարանի բնակիչ Տիգրան Հարությունի Պետրոսյանը և նրա ընտանիքի անդամները (...) բացակայում են բնակության վայրից, և նրանց ներկայիս գտնվելու վայրը հայտնի չէ»* (տե՛ս նյութեր, թերթ 50)*:*

ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի Բազումի բաժնի տեսուչ Դ.Ամիրխանյանի՝ «Բնակարան այցելելու մասին» 2014 թվականի սեպտեմբերի 8-ի արձանագրության համաձայն՝ *«(...) Այցելության ժամանակ բնակարանի դուռը փակ էր, և ըստ հարևան Ա.Նազարեթյանի բանավոր հայտարարության՝ Տ.Պետրոսյանը ս/թ հուլիս ամսից բացակայում է բնակության վայրից և նրա գտնվելու մասին տեղեկություններ չկան»* (տե՛ս նյութեր, թերթ 51)*:*

ՀՀ ԱԱԾ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգում առկա տվյալների համաձայն՝ Տ.Պետրոսյանը 2014

թվականի հունվարի 16-ին, սեպտեմբերի 6-ին, դեկտեմբերի 21-ին, 2015 թվականի փետրվարի 28-ին, մարտի 4-ին, ապրիլի 21-ին, մայիսի 21-ին, հունիսի 7-ին, հոկտեմբերի 4-ին դուրս է եկել ՀՀ-ից և 2014 թվականի հունվարի 16-ին, սեպտեմբերի 7-ին, դեկտեմբերի 27-ին, 2015 թվականի մարտի 1-ին, մարտի 4-ին, ապրիլի 21-ին, մայիսի 22-ին, սեպտեմբերի 26-ին մուտք է գործել ՀՀ տարածք (տե՛ս նյութեր, թերթեր 19, 41, 56, 59):

6. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունվարի 24-ի որոշման համաձայն՝ «(…) Մեղադրյալ Տ.Պետրոսյանն առարկեց միջնորդությանը՝ պատճառաբանելով, որ չի կատարել իրեն վերագրվող արարքը, խուսափել է քննությունից, քանի որ չի վստահել վարույթն իրականացնող մարմնին, և ազատության մեջ գտնվելու դեպքում չի խոչընդոտի քննությանն ու չի թաքնվի վարույթն իրականացնող մարմնից:

(…) [Ս]ույն միջնորդությանը կից ներկայացված նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ մեղադրյալն առնչվում է իրեն վերագրվող արարքին, այսինքն՝ ներկայացված տեղեկություններն ու ապացույցներն ուղղակիորեն մատնանշում են նրա առնչությունն իրեն մեղսագրվող ենթադրյալ արարքին, ինչպես նաև հիմնավորվում է, որ դեպքը, որի կատարման մեջ նա կասկածվում է, համընկնում է նրան վերագրվող արարքին:

Ինչ վերաբերվում է մեղադրյալի պատճառաբանություններին, ապա դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են և չեն կարող հարուցված միջնորդությունը մերժելու հիմք հանդիսանալ:

Այսպիսով, դատարանը հանգում է այն հետևության, որ վարույթն իրականացնող մարմնի ներկայացրած նյութերը բավարար են արձանագրելու, որ առկա են մեղադրյալի կողմից նրան մեղսագրվող արարքը կատարած լինելու հիմնավոր կասկածն ու կալանավորման՝ դատարանի կողմից նշված չարժառիթներն ու հիմքերը (…)» (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 96-98):

7. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի մարտի 1-ի որոշման համաձայն՝ «(…) [Ք]ննության ընթացքում մեղադրյալ Տիգրան Պետրոսյանի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու հանգամանքը հիմնավորող նյութ քրեական վարույթն իրականացնող մարմինը չի ներկայացրել և նման փաստական հանգամանք դատարանի որոշման մեջ չի արտացոլվել, իսկ հետախուզման մեջ գտնվելու հանգամանքն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ մեղադրյալին ազատությունից զրկելու համար:

Բացի այդ, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով ներկայանալու անհրաժեշտության մասին պատշաճ կերպով ծանուցելու վերաբերյալ տվյալներ վարույթն իրականացնող մարմնի կողմից չեն ներկայացվել:

(…) Տիգրան Պետրոսյանը վարույթն իրականացնող մարմնին ներկայանալու մասին պատշաճ կերպով ծանուցված չի եղել, Հայաստանի Հանրապետությունը լքելու ժամանակ կասկածյալի կամ մեղադրյալի կարգավի-

ճակ չի ունեցել, նրա նկատմամբ խափանման միջոց ընտրված չի եղել, հետևաբար ՀՀ-ից նրա հեռանալը չի կարող դիտարկվել վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու հանգամանք:

(…) [Վ]երաքննիչ դատարանը գտնում է, որ տվյալ պայմաններում առկա չեն մեղադրյալ Տիգրան Պետրոսյանի նկատմամբ խափանման միջոց կալանավորում կիրառելու հիմքերը, ուստի Առաջին ատյանի դատարանի 2017 թվականի հունվարի 24-ի որոշումը պետք է բեկանել, և Տիգրան Պետրոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը վերացնել (…)» (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 168-172):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը</u>.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի մարտի 1-ի որոշումն օրինական և հիմնավոր չէ, դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, որն ազդել է գործի ելքի վրա, որի պարագայում կայացված դատական ակտը ենթակա է բեկանման:

Մասնավորապես՝ բողոքի հեղինակը, հղում կատարելով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կալանավորման պայմանների և հիմքերի վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումներին, նշել է, որ նախաքննական մարմնի կողմից ձեռք բերված և միջնորդության կից ներկայացված փաստական տվյալների համակցությունը դատավարության տվյալ փուլում բավարար է եղել արձանագրելու կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու համար անհրաժեշտ՝ ինչպես մեղսագրվող արարքին առնչվելու վերաբերյալ հիմնավոր կասկածի, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով նախատեսված հիմքերի առկայությունը:

Բողոք բերած անձը նշել է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Առաջին ատյանի դատարանն իր որոշմամբ Տ.Պետրոսյանի նկատմամբ կալանավորման կիրառումը հիմնավորել է ոչ միայն հաշվի առնելով նախկինում ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու փաստը, այլև գնահատելով ներկայում առկա՝ վարույթն իրականացնող մարմնից մեղադրյալի թաքնվելու և պատժից խուսափելու հավանականությունը:

9. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ մեղադրյալ Տ.Պետրոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառելով կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր են արդյոք Վերաքննիչ դատարանի հետևություններն այն մասին, որ հետախուզման մեջ գտնված մեղադրյալ Տ.Պետրոսյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերը բացակայում են:

11. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝*

(...)

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով.

(...)»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 5-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.*

(…)

գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար.

(…)

«Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք (...) ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝*«1. Յուրաքանչյուր անձ ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք:*

2. Ոչ ոք չի կարող արգելանքի վերցվել և պահվել անազատության մեջ այլ կերպ, քան սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով:

(…)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Դատարանը (...) խափանման միջոց կարող [է] կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝*

1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2) խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4) խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց.

5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը»:

12. Մեջբերված նորմերի վերլուծության շրջանակներում Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի հիմնարար ու անօտարելի բնույթը և հետևողականորեն ամրապնդել ու զարգացրել քրեական դատավարության ընթացքում կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս անձի ազատության իրավունքի կամայական կամ անհիմն սահմանափակումը բացառելուն ուղղված երաշխիքները: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ կալանավորման օրինականության և հիմնավորվածության ապահովման տեսանկյունից կարևոր է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված կալանավորման հիմքերից որևէ մեկի կամ մի քանիսի և կալանավորման պայմանների (հիմնավոր կասկած, քրեական գործի առկայություն, որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման առկայություն և այլն) վերաբերյալ դատական ակտում ողջամիտ հետևությունների առկայությունը՝ հիմնավորված վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվող տեղեկություններով, փաստերով կամ ապացույցներով (ՎԲ-132/07, ԱՎԴ/0022/06/08, ԼԴ/0197/06/08, ԵԿԴ/0580/06/09, ԵԿԴ/0678/06/10, ՏԴ/0052/06/14, ԵԱՔԴ/0386/06/15 և այլն):

12.1. Ավելին՝ հարկ է նկատել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, զարգացնելով իր նախադեպային իրավունքը, *Բուզաջին ընդդեմ Մոլդովայի Հանրապետության* գործով իրավական դիրքորոշում արտահայտեց այն մասին, որ բացի ողջամիտ կասկածի առկայությունից, դատական իշխանություն իրականացնող պաշտոնատար անձի կողմից կալանավորման համար «հիմնավոր» և «բավարար» պատճառներ ներկայացնելու պահանջն արդեն իսկ պետք է կիրառվի նախնական կալանք կիրառելու վերաբերյալ **առաջին որոշումը կայացնելու ժամանակ**, այսինքն՝ **ձերբակալելուց «անմի-**

ջապես» հետո (*տե՛ս, mutatis mutandis, Buzadji v. the Republic of Moldova [GC], գանգատ թիվ 23755/07, 2016 թվականի հուլիսի 5-ի վճիռ, կետեր 87 և 102*): Այլ կերպ՝ սկսած այդ պահից անձի կալանավորման հիմքերի առկայությունը վկայող հիմնավորումները պետք է լինեն փաստարկված, այն է՝ հիմնված կոնկրետ փաստերի, ինչպես նաև անձը բնութագրող հատկանիշների վրա՝ զերծ ընդհանուր և վերացական բնույթից *(տե՛ս, mutatis mutandis, Aleksanyan v. Russia, գանգատ թիվ 46468/06, 2008 թվականի դեկտեմբերի 22-ի վճիռ, կետ 179, Boicenco v. Moldova, գանգատ թիվ, 41088/05, 2006 թվականի հուլիսի 11-ի վճիռ, կետ 142, Khoudoiorov v. Russia, գանգատ թիվ 6847/02, 2005 թվականի նոյեմբերի 8-ի վճիռ, կետ 173, Piruzyan v. Armenia, գանգատ թիվ 33376/07, 2012 թվականի հունիսի 26-ի վճիռ, կետ 92)*:

13. Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները բոլոր դեպքերում պետք է պայմանավորված լինեն գործի նյութերից բխող որոշ փաստական տվյալներով: Սակայն միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կալանավորման հիմք(եր)ի առկայության կամ բացակայության մասին դատարանի հետևությունները պետք է հիմնված լինեն ոչ թե այդ փաստական տվյալները մեկը մյուսից անջատ, ինքնավար հետազոտման ենթարկելու, այլ դրանք իրենց համակցության մեջ գնահատման ենթարկելու արդյունքում ձևավորվող փաստարկված դատողությունների վրա: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ համապատասխան փաստական տվյալներն իրենց ամբողջության մեջ չվերլուծելը, դրանք իրարից անջատ գնահատելը կարող է հանգեցնել կալանավորման հիմքի առկայության կամ բացակայության մասին չհիմնավորված եզրահանգման գալուն: Հետևաբար խնդրո առարկա հարցը լուծելիս դատարանի հետևությունները յուրաքանչյուր դեպքում պետք է հիմնված լինեն գործի նյութերում առկա ապացույցների, փաստերի կամ այլ տեղեկությունների, այդ թվում՝ քրեական օրենքով արգելված ենթաղրյալ հանցանքի կատարման պահից ի վեր մեղադրյալի դրսևորած վարքագծի և նրա անձը բնութագրող այլ հատկանիշների՝ *իրենց ամբողջության մեջ* գնահատման վրա:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրահանգումը պետք է հիմնված լինի վերը նշված հանգամանքների փոխազդեցության, հարաբերակցության բացահայտման, այդ հանգամանքների համակցված գնահատման արդյունքում ձևավորված համոզմունքի վրա, ինչն իր հերթին պետք է արտացոլվի դատարանի կողմից կայացվող դատական ակտում:

14. Սույն գործի նյութերից հետևում է, որ Առաջին ատյանի դատարանը, քննարկելով մեղադրյալ Տ.Պետրոսյանի նկատմամբ կալանավորումը որ-

պես խափանման միջոց վերահաստատելու վերաբերյալ նախաքննական մարմնի միջնորդությունը, փաստել է, որ այն ենթակա է բավարարման, քանի որ ներկայացված նյութերը բավարար են արձանագրելու ինչպես մեղսագրվող արարքին առնչվելու վերաբերյալ հիմնավոր կասկածի, այնպես էլ կալանավորման հիմքերի առկայությունը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, ստուգելով Առաջին ատյանի դատարանի որոշման իրավաչափությունը, արձանագրել է, որ ստորադաս դատարանի դատական ակտը պետք է բեկանել և Տ.Պետրոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը վերացնել, քանի որ մեղադրյալի հետախուզման մեջ գտնվելն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ մեղադրյալին ազատությունից զրկելու համար, իսկ քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալու մասին պատշաճ կերպով ծանուցելու վերաբերյալ տվյալներ վարույթն իրականացնող մարմնի կողմից չեն ներկայացվել: Այդ համատեքստում Վերաքննիչ դատարանը փաստել է նաև, որ Տ.Պետրոսյանը վարույթ իրականացնող մարմին ներկայանալու մասին պատշաճ կերպով ծանուցված չի եղել, Հայաստանի Հանրապետությունը լքելու ժամանակ կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ չի ունեցել, նրա նկատմամբ խափանման միջոց ընտրված չի եղել, հետևաբար ՀՀ-ից նրա հեռանալը չի կարող դիտարկվել որպես վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու հանգամանք (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

15. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-13-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, առանց համակցված գնահատման ենթարկելու Տ.Պետրոսյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերի առկայությունը վկայող՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված նյութերում առկա փաստական տվյալները, ոչ իրավաչափորեն եզրահանգել է, որ վերջինիս նկատմամբ համապատասխան խափանման միջոցը կիրառելու հիմքերը բացակայում են:

Այսպես՝ անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշմանը, որ Տ.Պետրոսյանը վարույթ իրականացնող մարմին ներկայանալու մասին պատշաճ կերպով ծանուցված չի եղել՝ Վճռաբեկ դատարանը նախևառաջ հարկ է համարում նշել, որ ծանուցման պատշաճ լինելը չպետք է պայմանավորել բացառապես նրանով, որ առկա է հենց հասցեատիրոջ, մասնավորապես՝ ենթադրյալ հանցանք կատարած անձի կողմից ծանուցագիրը ստանալու փաստը հաստատող տվյալ: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ծանուցագիրը ստանալու փաստը հաստատող այդպիսի տվյալի բացակայության դեպքում ծանուցման պատշաճ լինելու հարցը լուծելիս անհրաժեշտ է բազմակողմանի վերլուծության ենթարկել այդ ուղղությամբ համա-

պատասխան մարմինների կողմից ձեռնարկված գործողությունների քանակական և որակական կազմը, ծանուցվող անձի դրսևորած վարքագիծը, ինչպես նաև այլ հանգամանքներ, որոնք կարող են առանցքային նշանակություն ունենալ խնդրո առարկա հարցի լուծման համար: Վճռաբեկ դատարանի սույն դիրքորոշումը հիմնավորվում է նաև նրանով, որ հակառակ մեկնաբանության դեպքում, երբ վարույթ իրականացնող մարմին ներկայանալու վերաբերյալ ծանուցումները ենթադրյալ հանցանք կատարած անձի՝ օրինակ՝ ՀՀ-ից դուրս գտնվելու հանգամանքով պայմանավորված չստանալու դեպքում մեխանիկորեն համարվեն ոչ պատշաճ, ապա կարող է արհեստականորեն խոչընդոտվել նրանց հայտնաբերմանն ուղղված դատավարական հարկադրանքի միջոցների գործադրումը և անհնարին դառնալ պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի կենսագործումը:

Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, գալով այն եզրահանգման, որ Տ.Պետրոսյանը վարույթ իրականացնող մարմին ներկայանալու մասին պատշաճ կերպով ծանուցված չի եղել, անտեսել է՝

- մեղադրյալ Տ.Պետրոսյանին հայտնաբերելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների որակական և քանակական կազմը, մասնավորապես՝ հարցաքննության համար վարույթ իրականացնող մարմին ներկայանալու վերաբերյալ չորս ծանուցագրեր են ուղարկվել, կազմվել են բերման ենթարկելու մասին որոշումներ, մեղադրյալի բնակության հասցեով երեքից ավելի այցելություններ են կատարվել, ընդ որում, մի դեպքում՝ մեղադրյալի եղբայրը, մյուս դեպքում՝ նրա հետ հարազատական կապ ունեցող անձը, այլ դեպքերում՝ Տ.Պետրոսյանի հարևանները վերջինիս գտնվելու վայրի վերաբերյալ կոնկրետ տեղեկություններ չեն հայտնել (մանրամասն տե՛ս սույն որոշման 5-րդ կետը),

- մեղադրյալին առնչվող հանգամանքները, մասնավորապես՝ սկսված դատավարական գործընթացի մասին տեղեկացված լինելը, հետախուզման ընթացքում ձեռնարկված օպերատիվ հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերված լինելը (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը), մեղադրյալի՝ Առաջին ատյանի դատարանում հայտնած այն դիրքորոշումը, որ *խուսափել է քննությունից, քանի որ չի վստահել վարույթ իրականացնող մարմնին* (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշմանը, որ Հայաստանի Հանրապետությունը լքելու ժամանակ Տ.Պետրոսյանը կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ չի ունեցել, նրա նկատմամբ խափանման միջոց ընտրված չի եղել, ապա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերոգրյալի պայմաններում նշյալ հանգամանքները չեն կարող չեզոքացնել կալանավորման համապատասխան հիմքի՝ մասնավորապես վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու հավանականությունը: Ավելին՝ Վճռա-

բեկ դատարանը գտնում է, որ հակառակ մեկնաբանությունը կարող է բացառել կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հնարավորությունն այն անձանց նկատմամբ, ովքեր ենթաղրյալ հանցանքը կատարելուց անմիջապես հետո կամ մինչև քրեական գործ հարուցելը վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու նպատակով բացակայում են մշտական բնակության վայրից կամ լքել են ՀՀ տարածքը:

15.1. Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրյալ Տ.Պետրոսյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերի բացակայության մասին Վերաքննիչ դատարանի եզրահանգումը հիմնված է ոչ թե գործի նյութերում առկա փաստական տվյալների, տեղեկությունների՝ իրենց համակցության մեջ գնահատման ենթարկելու, այլ դրանք մեկը մյուսից անջատ, ինքնավար հետազոտման ենթարկելու արդյունքում ձևավորված դատողությունների վրա: Ուստիև Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի հետևություններն այն մասին, որ հետախուզման մեջ գտնված մեղադրյալ Տ.Պետրոսյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերը բացակայում են, հիմնավոր չեն:

16. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ մեղադրյալ Տ.Պետրոսյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգման ընթացքում Վերաքննիչ դատարանի կողմից թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ, 288-րդ հոդվածների խախտումներ, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և հանգեցրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք է:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով դատական ակտ կայացնելիս Առաջին ատյանի դատարանը թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, ուստիև ելնելով արդարադատության արդյունավետության շահերից՝ պետք է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի որոշմանը՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Վճռաբեկ դատարանը փաստում է նաև, որ Առաջին ատյանի դատարանի որոշմամբ սահմանված՝ կալանավորման 2 ամիս ժամկետին պետք է հաշվակցել մեղադրյալ Տ.Պետրոսյանի՝ 2017 թվականի հունվարի 23-ից մինչև մարտի 1-ն անազատության մեջ գտնվելու ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Մեղադրյալ Տիգրան Հարությունի Պետրոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի մարտի 1-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունվարի 24-ի որոշմանը՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշմամբ սահմանված՝ կալանավորման 2 ամիս ժամկետին հաշվակցել մեղադրյալ Տիգրան Հարությունի Պետրոսյանի՝ 2017 թվականի հունվարի 23-ից մինչև մարտի 1-ն անազատության մեջ գտնվելու ժամկետը:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

18.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԴ3/0001/06/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
	Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝	Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ՝ պաշտպան	Մ.ԹՈՎՄԱՍՅԱՆԻ

2017 թվականի նոյեմբերի 15-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2017 թվականի ապրիլի 13-ի որոշման դեմ մեղադրյալ Արտակ Վրեժի Մացակյանի պաշտպան Մ.Թովմասյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. 2017 թվականի մարտի 12-ին Հասմիկ Սարգսյանը ՀՀ ոստիկանության Նաիրիի բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ նույն օրը՝ ժամը 14:45-ի սահմաններում, անհայտ անձն Արգել գյուղի գերեզմանատանը կայանված, որդուն պատկանող «Միտսուբիշի» մակնիշի ավտոմեքենայի սրահից գողացել է իրեն և Կարինե Բաղալյանին պատկանող կանացի կաշվե

պայուսակները, որոնց մեջ եղել են ոսկյա զարդեր, բջջային հեռախոս և տարբեր տեսակի իրեր:

2017 թվականի մարտի 13-ին ՀՀ ոստիկանության Նաիրիի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ 46153617 քրեական գործը, որն ըստ քննչական ենթակայության ուղարկվել է ՀՀ ՔԿ Կոտայքի մարզային քննչական վարչություն:

2017 թվականի մարտի 13-ին հանցագործություն կատարած լինելու կասկածանքով ձերբակալվել է Արտակ Մացակյանը:

2017 թվականի մարտի 16-ին որոշում է կայացվել Ա.Մացակյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

2. Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2017 թվականի մարտի 16-ի որոշմամբ Ա.Մացակյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

3. Մեղադրյալ Ա.Մացակյանի պաշտպան Մ.Թովմասյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի ապրիլի 13-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 16-ի որոշումը թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 13-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել մեղադրյալ Ա.Մացակյանի պաշտպան Մ.Թովմասյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 8-ի որոշմամբ մեղադրյալի պաշտպանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Կոտայքի մարզի դատախազի տեղակալ Ա.Սարգսյանը և խնդրել մերժել ներկայացված վճռաբեկ բողոքը՝ հայտնելով, որ Ա.Մացակյանը բերման ենթարկվելուց և անհրաժեշտ գործողություններին մասնակցելուց հետո ազատ է արձակվել, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ, որ բերման ենթարկված անձին երեք ժամը լրանալուց հետո ազատ արձակելիս ոստիկանության աշխատակիցը պետք է կազմի որևէ փաստաթուղթ:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

5. Ա.Մացակյանին մեղադրանք է առաջադրվել այն արարքի համար, որ *«(…) [Ն]ա, ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, 2017 թվականի մարտի 12-ին, ժամը 14:30-ի սահմաններում Կո-*

տայքի մարզի Արգել գյուղի գերեզմանատան մոտ նկատելով «Միտսուբիշի Գոլդ» մակնիշի 34 LZ 430 պ/հ ավտոմեքենան, աննկատ մոտեցել ու բացել է ավտոմեքենայի ճախակողմյան դուռն ու սրահից գաղտնի հափշտակել Հասմիկ Ռուբիկի Սարգսյանին և Կարինե Արտավազդի Բաղալյանին պատկանող ընդհանուր խոշոր չափերի՝ 2.270.500 ՀՀ դրամ արժողության գույքը՝ կանացի երկու պայուսակներ ու դրանց մեջ գտնվող տարատեսակ ոսկյա զարդեր, պճնանքի պարագաներ, դրանց համար նախատեսված փոքրիկ պայուսակ, թվով երեք օպտիկական և մեկ արևային ակնոցներ, «Սամսունգ J-120F» մոդելի բջջային հեռախոս՝ իր սնուցման սարքով ու ականջակալով, կանացի դրամապանակ, ինչպես նաև 49.572 ՀՀ դրամին համարժեք 102 ԱՄՆ դոլար ու 2.600 ՀՀ դրամ կանխիկ գումար» (տե՛ս նյութեր, թերթ 45):

5.1. «Անձին ոստիկանության բաժին բերման ենթարկելու մասին» 2017 թվականի մարտի 13-ի արձանագրության համաձայն՝ *«(...) Ոստիկանության Նաիրիի բաժնի ՀՈԲ տեսուչ ոստ. լ-նտ Ս.Մխիթարյանս (...) ս/թ մարտի 13-ին, ժամը 06:45-ին Կոտայքի մ. գ. Նոր-Գեղի Քանավան քաղաքամասից ՀՀ ոստիկանության Նաիրիի բաժին բերման ենթարկեցի քաղաքացի Արտակ Վրեժի Մացակյանին (...): Ա.Մացակյանը բերման է ենթարկվել գործություն կատարելու կասկածանքով: (...)»* (տե՛ս նյութեր, թերթ 6):

5.2. «Անձին անձնական զննության ենթարկելու մասին» 2017 թվականի մարտի 13-ի արձանագրության համաձայն՝ *«(...) Ես՝ ՀՀՈ Նաիրիի բաժնի ՀՈԲ տեսուչ ոստ. լ-նտ Ս.Մխիթարյանս (...) կազմեցի սույն արձանագրությունն այն մասին, որ ս/թ մարտի 13-ին, ժամը 06:45-ին (...) ՀՀ ոստիկանության Նաիրիի բաժնում անձնական զննության ենթարկեցի քաղաքացի Արտակ Վրեժի Մացակյանին (...)»* (տե՛ս նյութեր, թերթ 7):

5.3. «Բացատրություն վերցնելու մասին» 2017 թվականի մարտի 13-ի արձանագրության համաձայն՝ Ա.Մացակյանից բացատրություն վերցնելը սկսվել է ժամը 07:05-ին և ավարտվել 08:00-ին (տե՛ս նյութեր, թերթ 9):

5.4. 2017 թվականի մարտի 13-ի՝ ձերբակալման արձանագրության համաձայն՝ *«ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ս.Քոլայանս, (...) թիվ 46153617 քրեական գործով այսօր ժամը 21:45-ին Նաիրիի քննչական բաժնում ձերբակալեցի Արտակ Վրեժի Մացակյանին (...): Ձերբակալված Ա.Մացակյանը կասկածվում է ՀՀ քր. օր.-ի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցանքի կատարման մեջ (...)»* (տե՛ս նյութեր, թերթ 23):

5.5. *«Անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին» 2017 թվականի մարտի 16-ի որոշման եզրափակիչ մասից հետո նշված է՝ «Որոշումը հայտարարված է ինձ 16.03.2017թ., ժամը 10:40-ին: Մեղադրանքի էությունը պարզաբանված է (...)»* (տե՛ս նյութեր, թերթ 46):

5.6. Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 16-ի դատական նիստի պարզ թղթային արձանագրության համաձայն՝ Ա.Մացակյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ նախաքննական մարմնի միջնորդության քննությունը սկսվել է ժամը 14:50-ին և ավարտվել 15:35-ին: Նույն արձանագրության համաձայն՝

Քննիչ. «(...) Քրեական գործը վարույթ ընդունելուց անմիջապես հետո հանել եմ ինֆորմացիոն կենտրոնի տեղեկանքը, այնուհետև հանճնարարել եմ, որպեսզի հայտնաբերեն մեղադրյալին, որից հետո մեղադրյալը հայտնաբերվել է և 10 րոպե հետո ձերբակալվել»:

Մեղադրյալի շահերի պաշտպան Մ.Թովմասյան. «(...) Իմ պաշտպանյալը բերման է ենթարկվել 13.03.2017թ. ժ.06:45-ին, ձերբակալվել է 13.03.2017թ. ժ.21:45-ին, մեղադրանքը առաջադրվել է 16.03.2017թ. [ժ.10:40-ին], այսինքն ստացվում է, որ անձին փաստացի արգելանքի վերցնելու պահից 72 ժամվա ընթացքում մեղադրանք չի առաջադրվել, իսկ ներկայումս առաջադրված մեղադրանքը և դրանից բխող բոլոր գործողություններն ապօրինի են» (տե՛ս նյութեր, թերթեր 51-54):

6. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 16-ի որոշման համաձայն՝ *«(...) Ուսումնասիրելով ներկայացված գործի նյութերը, դատարանն արձանագրում է, որ կան հիմնավոր կասկածներ [ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված]՝ հանցանքի կատարմանը մեղադրյալ Արտակ Մացակյանի առնչության վերաբերյալ:*

Միջնորդությունը բավարարելիս, Դատարանը հաշվի է առնում այն հանգամանքը, որ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ մեղադրյալ Արտակ Մացակյանը մնալով ազատության մեջ կարող է կատարել քրեական օրենքով արգելված այլ արարքներ, քննությունից թաքնվել, խուսափել, դատավարության մասնակիցների վրա անօրինական ազդեցություն գործադրել:

(...)

Նման եզրահանգման գալիս դատարանը հաշվի է առնում գործի հանգամանքները, մասնավորապես նրան վերագրվող արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, այն որ մեղադրյալին մեղսագրվում է միջին ծանրության հանցագործության կատարում, որի համար նախատեսված է պատիժ նաև ազատազրկման ձևով, որի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, ինչը, դատարանի համոզմամբ, էականորեն բարձրացնում է մեղադրյալի կողմից քրեական պատասխանատվությունից խուսափելու հավանականությունը:

Ավելին, դատարանն արձանագրում է, որ Արտակ Մացակյանը մնալով ազատության մեջ կարող է կատարել քրեական օրենքով արգելված այլ

արարքներ, որպիսի եզրահանգման գալիս հաշվի է առնում նաև մեղադրյալի՝ նախկինում քրեական օրենսգրքով նախատեսված արարք կատարելու հանգամանքը (հիմք՝ ՀՀ ոստիկանության հնֆորմացիոն կենտրոնի՝ 2017թ. մարտի 13-ի պահանջագիր): (...)» (տե՛ս նյութեր, թերթեր 73-77):

7. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 13–ի որոշման համաձայն՝ *«(…) [Ա]նդրադառնալով պաշտպան Մ.Թովմասյանի վերաքննիչ բողոքի փաստարկին՝ կապված Արտակ Մացակյանին բերման ենթարկելու և ազատությունից ապօրինի 12 (չհաշվարկած 3 ժամը) [ժամ] պահելու հետ, Վերաքննիչ դատարանը հարկ է համարում փաստել, որ վերաքննության սահմանների սահմանափակ բնույթ կրելու հանգամանքով պայմանավորված, վերաքննության առարկա կարող են լինել միայն Առաջին ատյանի դատարանի համապատասխան որոշումների օրինականության և հիմնավորվածության ստուգումը՝ տվյալ դեպքում Առաջին ատյանի դատարանի՝ մեղադրյալ Արտակ Մացակյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին 2017 թվականի մարտի 16-ի որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգումը, ուստի պաշտպանի վերաքննիչ բողոքի փաստարկը՝ մեղադրյալին ազատությունից ապօրինի զրկելու վերաբերյալ տվյալ պահին քննության չի կարող ենթարկվել Վերաքննիչ դատարանի կողմից, հակառակ պարագայում Վերաքննիչ դատարանը դուրս գալով իր լիազորությունների շրջանակից հանդես կգա որպես Առաջին ատյանի դատարան՝ յուրացնելով վերջինիս լիազորությունները:*

(…)

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նաև փաստել, որ այս պարագայում թե՛ մեղադրյալը և թե՛ վերջինիս պաշտպանը զրկված չեն Առաջին ատյանի դատարան դիմելու և ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով վիճարկելու մեղադրյալին ազատությունից զրկելու իրավաչափության հարցը:

Անդրադառնալով պաշտպանի Վերաքննիչ բողոքի երկրորդ փաստարկին՝ կապված իր պաշտպանյալին մեղադրանք առաջադրելու օրինականության հետ, Վերաքննիչ դատարանը [հղում կատարելով Վ.Ավետիսյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ԵԿԴ/0060/11/10 որոշմանը] գտնում է, որ քննարկվող հարցը, նույնպես, տվյալ պահին դուրս է վերաքննության սահմաններից,

(…):

Վերաքննիչ դատարանը նպատակահարմար է համարում նշել, որ այդ հարցի քննարկումը հնարավոր կլինի միայն Առաջին ատյանի դատարանում գործն ըստ էության քննության ընթացքում:

(…)

Վերաքննիչ դատարանն անդրադառնալով Առաջին ատյանի դատարանի որոշման մեջ տեղ գտած հիմնավորումներին, գտնում է, որ մեղադրյալ Արտակ Մացակյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի եզրահանգումները հիմնված են գործի նյութերում առկա փաստական տվյալների վրա, Առաջին ատյանի դատարանն իր որոշման մեջ ծանրակշիռ, գործի նյութերից բխող փաստարկների վկայակոչմամբ հիմնավորել է մեղադրյալի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գործողությունները կատարելու հավանականությունը (...)» (տե՛ս նյութեր, թերթեր 92-101):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը</u>.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակի կարծիքով Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական և հիմնավոր չէ, դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, որն ազդել է գործի ելքի վրա, հետևաբար կայացված դատական ակտը ենթակա է բեկանման:

Մասնավորապես, բողոքի հեղինակը, վկայակոչելով Վճռաբեկ դատարանի՝ Գ.Միքայելյանի գործով 2009 թվականի թիվ ԵԱԴԴ/0085/06/09 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, նշել է, որ Ա.Մացակյանի ազատության իրավունքը սահմանափակելիս այդ դիրքորոշումներին համապատասխան երաշխիքներն ապահովված չեն եղել: Այսպես՝ նա բերման է ենթարկվել ոստիկանության բաժին 2017 թվականի մարտի 13-ին՝ ժամը 06:45-ին, իր բնակության վայրից, նույն օրը՝ ժամը 21:45-ին, ձերբակալվել է, այսինքն՝ փաստացի արգելանքի վերցվելու պահից մինչև ձերբակալվելը 12 ժամ ապօրինի պահվել է բաժնում: Փաստացի արգելանքի վերցվելու պահից մինչև Առաջին ատյանի դատարանի կողմից կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին որոշում կայացնելն ազատ չի արձակվել, այսինքն՝ անազատության մեջ է պահվել 72 ժամից ավելի:

Բողոքի հեղինակը նաև նշել է, որ իր պաշտպանյալին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղադրանք է առաջադրվել 2016 թվականի մարտի 16-ին՝ ժամը 10:00-10:30-ի սահմաններում, այսինքն՝ փաստացի արգելանքի վերցվելու պահից սկսած 72 ժամվա ընթացքում Ա.Մացակյանին մեղադրանք չի առաջադրվել:

Բողոք բերած անձը հայտնել է, որ նշված փաստական հանգամանքների առկայության պարագայում ստորադաս դատարանները չեն արձանագրել Ա.Մացակյանի ազատության իրավունքի խախտման փաստը, չեն

կայացրել լրացուցիչ որոշում, չեն պարզաբանել ապօրինի անազատության մեջ գտնվելու համար քաղաքացիական դատավարության կարգով հատուցում ստանալու իրավունքը:

8.1. Անդրադառնալով իր պաշտպանյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերին՝ բողոքաբերը հայտնել է, որ գործի նյութերում առկա չէ Ա.Մացակյանին վարույթն իրականացնող մարմին կանչելու, քննությանը խոչընդոտելու կամ վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու տվյալ:

9. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ մերժելով քննիչի միջնորդությունը:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

10. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ձերբակալման օրինականության նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելու կարգի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք ստորադաս դատարանների կողմից Ա.Մացակյանի ձերբակալման իրավաչափությունը դատական վերահսկողության չենթարկելը:

12. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը, որի վերաբերյալ դատարանը սեղմ ժամկետում որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե ազատությունից զրկելը ոչ իրավաչափ է»:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.*

(...)

գ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն

դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը, կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,

(...)

3. Սույն հոդվածի 1-ին կետի գ) ենթակետի դրույթներին համապատասխան՝ ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն: (...)

5. Յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն սույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման զոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության (...) իրավունք:*

2. Ոչ ոք չի կարող արգելանքի վերցվել և պահվել անազատության մեջ այլ կերպ, քան սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով եւ կարգով:

3. (...) Մինչև դատարանի համապատասխան որոշումն ստանալն անձը չի կարող ձերբակալման հետևանքով անազատության մեջ պահվել 72 ժամից ավելի:

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հանցանքը կատարելու մեջ կասկածվող անձին հետաքննության մարմին, քննիչի կամ դատախազի մոտ բերելուց հետո՝ երեք ժամվա ընթացքում, կազմվում է կասկածյալին ձերբակալելու մասին արձանագրություն (...)»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ նախադասության համաձայն՝ *«Ձերբակալման տակ պահելու ժամկետն սկսվում է արգելանքի վերցնելու պահից»:*

13. Հանցանք կատարելու մեջ կասկածով քրեական հետապնդման մարմին բերված անձի կարգավիճակի և նրան ազատությունից զրկելու օրինականության նկատմամբ հետագա դատական վերահսկողություն իրականացնելու ընթացակարգի վերաբերյալ Վճռաբեկ դատարանը Գ.Միքայելյանի գործով արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«(...) [Հ]անցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի հիմքով անձին ազատությունից զրկելու քրեադատավարական կառուցակարգերը չեն սահմանափակվում «ձերբակալման» և «կալանավորման» ինստիտուտներով, այլ ներառում են նաև արգելանքի վերցվելու և վարույթն իրականացնող մարմին բերվելու կառուցակարգը: Համապատասխանաբար, մինչդատական վարույթում «ձերբակալվածի» և «կալանավորվածի» կարգավիճակների հետ*

մեկտեղ ազատությունից զրկված անձը կարող է ունենալ նաև նախնական իրավական վիճակ, որը պայմանականորեն կարելի է անվանել «բերվածի» կարգավիճակ:

(...)

[Ա]յն բանից հետո, երբ անձին քրեական հետապնդման մարմին բերելու պահից երեք ժամվա ընթացքում վարույթն իրականացնող մարմինը կկազմի կասկածյալին ձերբակալելու մասին արձանագրություն, այդ մարմինը պարտավոր է անհապաղ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ առավելագույնը մեկ ժամվա ընթացքում դրա մասին հայտարարել ազատությունից զրկված անձին: Նման ժամկետային սահմանափակումը ողջամիտ է և բխում է ազատությունից զրկված անձի սահմանադրական իրավունքների ապահովման անհրաժեշտությունից: Նշված ժամկետային սահմանափակումից միակ իրավաչափ բացառությունը կարող է վերաբերել այն դեպքերին, երբ բերվածի ֆիզիոլոգիական վիճակը՝ ալկոհոլի, թմրամիջոցների կամ այլ թմրեցնող նյութերի ազդեցության տակ լինելը կամ այլ համարժեք վիճակը, քրեական հետապնդման մարմնին օբյեկտիվորեն զրկում է ձերբակալման արձանագրությունը բերվածին հայտարարելու հնարավորությունից:

Այսպիսով, եթե քրեական հետապնդման մարմին բերելուց չորս ժամ հետո ազատությունից զրկված անձին ձերբակալման արձանագրությունը չի հայտարարվի, ապա անձն օրենքի ուժով պետք է համարվի ձերբակալված և իրավունք ունենա օգտվել ձերբակալվածի համար օրենքով սահմանված երաշխիքներից, այդ թվում՝ ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածով ամրագրված՝ 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չկալանավորվելու դեպքում անհապաղ ազատ արձակվելու իրավունքից:

(...)

[Ձ]երբակալման օրինականությունը չի կարող դուրս մնալ դատական վերահսկողության շրջանակից, և հարկադրանքի այդ միջոցի կիրառման ընթացքում թույլ տրված խախտումները պետք է արժանանան համարժեք իրավական գնահատականի և հանգեցնեն համարժեք իրավական հետևանքների: Հակառակ դեպքում կխախտվի ձերբակալվածի՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը:

Ուստի կալանավորման միջնորդությունը քննելիս ձերբակալման ընթացակարգի խախտման փաստ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է ձեռնարկել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան միջոցներ: Ձերբակալման առավելագույն ժամկետի խախտման պարագայում այդ միջոցները պետք է հանգեն հետևյալին.

ա) 72-ժամյա ժամկետի խախտման փաստի արձանագրում,

բ) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360.1 հոդվածի հիման վրա լրացուցիչ որոշման կայացում, կամ, խախտումն ակնհայտ և կոպիտ լինելու դեպքում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դատախազին դիմում,

գ) անօրինական ձերբակալման համար փոխհատուցում ստանալու պահանջով ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան դիմելու ընթացակարգի պարզաբանում» (տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Գագիկ Սիքայելյանի վերաբերյալ գործով 2009 թվականի դեկտեմբերի 18-ին կայացված թիվ ԵԱԴԴ/0085/06/09 որոշման 20-րդ, 28-րդ և 34-րդ կետերը):

14. Վերահաստատելով և զարգացնելով նախորդ կետում վկայակոչված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ազատությունից զրկվելուց հետո դատարանի առջև կանգնելու և ազատությունից զրկվելու իրավաչափությունը վիճարկելու երաշխիքը կրում է բացառիկ նշանակություն անձի ազատության իրավունքի պաշտպանության համակարգում՝ ապահովելով ազատությունից զրկված անձի լսված լինելու իրավունքն անկախության երաշխիքով օժտված այնպիսի մարմնի առջև, որն ունի վերջինիս անհապաղ ազատ արձակելու կարգադրություն տալու իրավասություն:

Վերոնշյալի կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ ազատությունից զրկվելուց հետո դատարանի առջև կանգնելու և ազատությունից զրկվելու իրավաչափությունը վիճարկելու հնարավորությունն ապահովում է քրեական հանցանք կատարելու կասկածով ձերբակալված անձանց համար երաշխիքներ կամայական կամ չհիմնավորված ազատությունից զրկվելու դեմ *(տե՛ս Aquilina v. Malta գործով 1999 թվականի ապրիլի 29-ի վճիռը, գանգատ թիվ 25642/94, 47-րդ կետ, Stephens v. Malta (թիվ 2) գործով 2009 թվականի ապրիլի 21-ի վճիռը, գանգատ թիվ 33740/06, 52-րդ կետ):* Ավելին՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդգծել է, որ ազատությունից զրկվելու սկզբնական փուլում դատական վերահսկողությունը երաշխիք է՝ ա) վատ վերաբերմունքի ենթարկվելու վտանգի դեմ, որի դրսևորման հնարավորությունն ազատությունից զրկվելու նախնական փուլում առավել բարձր է, բ) ոստիկանության ծառայողների կամ մեկ այլ մարմնի կողմից իրենց վերապահված այն լիազորությունների չարաշահման դեմ, որոնք պետք է իրականացվեն սահմանափակ նպատակներով և սահմանված ընթացակարգերի հետ խիստ համապատասխանության պայմաններում *(տե՛ս Ladent v. Poland գործով 2008 թվականի մարտի 18-ի վճիռը, գանգատ թիվ 11036/03, 72-րդ կետ):*

15. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ազատությունից զրկվելուց հետո դատարանի առջև կանգնելու և ազատությունից զրկվելու իրավաչափությունը վիճարկելու իրավունքն օժտված է անհետաձգելի բնույթով, ենթակա է կենսագործման անհապաղ՝ ազատությունից զրկվելու սկզբնական փուլում ձերբակալվածի կողմից հայցվող իրավական պաշտպանության արդյունավետությունն ապահովելու նպատակով: Այդ կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ ձերբակալված անձին առաջին անգամ դատարան ներկայացնելու ժամանակ իրականացվող դատական վերահսկողությունը պետք է նախևառաջ լինի արագ, որպեսզի հնարավոր լինի բացահայտել վատ վերաբերմունքի ցանկացած դրսևորում և առավելագույնս նվազեցնել անձի ազատության իրավունքի նկատմամբ ցանկացած չհիմնավորված միջամտություն: Այդ պահանջով ամրագրված ժամանակային խիստ սահմանափակումը բացառում է Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի ճկուն մեկնաբանման հնարավորությունը, այլապես, ի վնաս անհատի, հարվածի տակ կդրվի տվյալ հոդվածով ամրագրված ընթացակարգային երաշխիքը՝ հանգեցնելով նույն հոդվածով պաշտպանվող իրավունքի էության հակառակ հետևանքների *(տե՛ս McKay v. The United Kingdom գործով 2006 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 543/03, 33-րդ կետ):*

15.1. Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ փաստացի արգելանքի վերցվելու պահից ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու արդյունավետությունը պայմանավորված է ոստիկանության ծառայողների կամ իրավապահ մարմինների այլ աշխատակիցների կողմից հնարավոր ոչ իրավաչափ վարքագծին օպերատիվ արձագանքելու հնարավորության ապահովմամբ:

Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ ազատությունից զրկված անձն առաջին անգամ դատարանի առջև բարձրացնում է իր ձերբակալման իրավաչափության հարցը, կամ դատարանը սեփական նախաձեռնությամբ (proprio motu) հայտնաբերում է անձին ազատությունից զրկելու ընթացակարգի խախտում՝ անկախ ձերբակալված անձի բողոքի առկայության հանգամանքից *(mutatis mutandis տե՛ս McKay v. The United Kingdom գործով 2006 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 543/03, 34-րդ կետ, Varga v. Romaniaգործով 2008 թվականի ապրիլի 1-ի վճիռը, գանգատ թիվ 73957/01, 52-րդ կետ, Viorel Burzo v. Romania գործով 2009 թվականի հունիսի 30-ի վճիռը, գանգատներ թիվ 75109/01 և 12639/02, 107-րդ կետ)*, ապա դատարանը պետք է քննարկման առարկա դարձնի անձին ազատությունից զրկելու իրավաչափության հարցը: Անձի ազատության իրավունքի խախտում հայտնաբերելու դեպքում դատարանը պետք է կարգադրի ազատ ար-

ձակել այդ պահի դրությամբ դեռևս ձերբակալվածի կարգավիճակում գտնվող անձին, ինչպես նաև Գ.Միքայելյանի վերաբերյալ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին համապատասխան՝ դատական ակտում պետք է արձանագրի ազատությունից զրկվելու առավելագույն ժամկետի խախտման փաստը, կայացնի լրացուցիչ որոշում կամ ակնհայտ և կոպիտ խախտման դեպքում դիմի դատախազին քրեական գործ հարուցելու միջնորդությամբ, պարզաբանի անօրինական ձերբակալման համար փոխհատուցում ստանալու պահանջով դատարան դիմելու ընթացակարգը:

15.2 Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ ձերբակալման օրինականությունը դատական վերահսկողության ենթարկելիս դատարանի առաջնային խնդիրներից է՝ պարզել անձին անազատության մեջ պահելու ժամկետային սահմանափակումների համապատասխանությունը ներպետական օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

Վերոնշյալի կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ցանկացած դեպքում անձին ազատությունից զրկելու ընթացակարգը պետք է համապատասխանի ներպետական օրենսդրության պահանջներին *(տե՛ս Mooren v. Germany [GC] գործով 2009 թվականի հուլիսի 9-ի վճիռը, գանգատ թիվ 11364/03, 72-րդ կետ)*, իսկ անձին ազատությունից զրկելու օրինականության ապացուցման բեռը կրում են քրեական հետապնդման մարմինները, եթե արգելանքի վերցվելու պահից անձը գտնվել է նրանց իրավասության ներքո և բացակայում է հակառակը հիմնավորող համոզիչ, օբյեկտիվ բնույթ կրող փաստական տվյալ *(mutatis mutandis տե՛ս Zalyan and others v. Armenia գործով Եվրոպական դատարանի՝ 2016 թվականի մարտի 17-ի վճիռը, գանգատներ թիվ 36894/04 և 3521/07, 302-312-րդ կետերը)*:

Ելնելով վերոնշյալից՝ ձերբակալման իրավաչափությունը դատական վերահսկողության ենթարկելիս քրեական հետապնդման մարմնի ներկայացուցիչները պետք է փաստարկված հիմնավորումներ ներկայացնեն առ այն, որ իրենց իրավասության ներքո գտնվելու ընթացքում ձերբակալվածին անազատության մեջ պահելու ժամանակահատվածը համապատասխանել է ներպետական օրենսդրությամբ սահմանված ժամկետային սահմանափակումներին:

Հետևաբար Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ձերբակալման օրինականությունը հիմնավորելու և համապատասխան փաստական տվյալներ ներկայացնելու համար քրեական հետապնդման մարմինների կողմից ոչ միայն պետք է արձանագրվի անձին փաստացի արգելանքի վերցնելու, այլ նաև ազատ արձակելու պահը: Վերջինս իր հերթին կապահովի ազատությունից զրկելու օրինականության նկատմամբ պատշաճ վերահս-

կողության իրականացումը: Հակառակ պարագայում անհնարին կդառնա բերվածի կարգավիճակում՝ առավելագույնը 4 ժամ (վարույթն իրականացնող մարմին բերվելուց հետո հաշվառվող 3 ժամը և անհրաժեշտության դեպքում՝ ձերբակալման արձանագրությունը կազմելու 1 ժամը, *տե՛ս Գագիկ Միքայելյանի գործով 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵՄԴԴ/0085/06/09 որոշման 28-րդ կետը*), իսկ ձերբակալվածի կարգավիճակում՝ առավելագույնը 72 ժամ անազատության մեջ պահվելու ժամանակահատվածը հաշվարկելու, ինչպես նաև ազատության իրավունքի սահմանափակումը քրեական հետապնդման մարմինների կամայական միջամտությունից արդյունավետ պաշտպանելու իրավունքի իրացումը:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Մացակյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու նախաքննական մարմնի միջնորդության քննության ընթացքում Ա.Մացակյանի պաշտպան Մ.Թովմասյանը նշել է, որ իր պաշտպանյալը բերման է ենթարկվել 2017 թվականի մարտի 13-ին՝ ժամը 06:45-ին, ձերբակալվել նույն օրը՝ ժամը 21:45-ին, իսկ մեղադրանքն առաջադրվել է 2017 թվականի մարտի 16-ին՝ ժամը 10:40-ին: Պաշտպանը հայտնել է, որ իր պաշտպանյալին փաստացի արգելանքի վերցնելու պահից 72 ժամվա ընթացքում մեղադրանք չի առաջադրվել, իսկ ներկայումս առաջադրված մեղադրանքը և դրանից բխող բոլոր գործողություններն ապօրինի են (տե՛ս սույն որոշման 5.6-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը, բավարարելով նախաքննական մարմնի միջնորդությունը, նշել է, որ առկա է Ա.Մացակյանի կողմից իրեն մեղսագրվող հանցանքի կատարմանն առնչվելու վերաբերյալ հիմնավոր կասկած, ինչպես նաև բավարար հիմքեր՝ ենթադրելու, որ, մնալով ազատության մեջ, նա կարող է կատարել քրեական օրենքով արգելված այլ արարք, թաքնվել, խուսափել քննությունից և անօրինական ազդեցություն գործադրել դատավարության մասնակիցների վրա: Միևնույն ժամանակ Առաջին ատյանի դատարանը նշել է, որ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելիս հաշվի է առնում գործի հանգամանքները, մեղադրյալին վերագրվող արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, այն, որ մեղադրյալին մեղսագրվում է միջին ծանրության հանցագործության կատարում, որի համար նախատեսված է պատիժ նաև ազատազրկման ձևով, որի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, ինչն էականորեն բարձրացնում է մեղադրյալի կողմից քրեական պատասխանատվությունից խուսափելու հավանականությունը: Բացի այդ, դատարանը նշել է, որ մեղադրյալը ազատության մեջ մնալով կարող է կատարել քրեական օրենքով արգելված այլ արարքներ՝ հաշվի առնելով մեղադրյալի՝ նախկինում քրեական օրենսգրքով

նախատեսված արարք կատարելու հանգամանքը (հիմք՝ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի՝ 2017թ. մարտի 13-ի պահանջագիր) (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, քննարկելով վերոնշյալ որոշման դեմ Ա.Մացակյանի պաշտպան Մ.Թովմասյանի վերաքննիչ բողոքը, մերժել է այն՝ պատճառաբանելով, որ վերաքննության առարկա կարող են լինել միայն առաջին ատյանի դատարանի որոշումների օրինականության և հիմնավորվածության ստուգումը, տվյալ դեպքում՝ Առաջին ատյանի դատարանի՝ մեղադրյալ Ա.Մացակյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին 2017 թվականի մարտի 16-ի որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգումը, ուստի պաշտպանի վերաքննիչ բողոքի փաստարկը մեղադրյալին ազատությունից ապօրինի զրկելու վերաբերյալ քննության չի կարող ենթարկվել Վերաքննիչ դատարանի կողմից, հակառակ պարագայում Վերաքննիչ դատարանը, դուրս գալով իր լիազորությունների շրջանակից, հանդես կգա որպես Առաջին ատյանի դատարան՝ յուրացնելով վերջինիս լիազորությունները:

Միևնույն ժամանակ Վերաքննիչ դատարանը նշել է, որ թե՛ մեղադրյալը, թե՛ վերջինիս պաշտպանը զրկված չեն Առաջին ատյանի դատարան դիմելու և ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով մեղադրյալին ազատությունից զրկելու իրավաչափության հարցը վիճարկելու հնարավորությունից (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

17. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-15.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրյալ Ա.Մացակյանի ձերբակալման օրինականության վերաբերյալ պաշտպանական կողմի փաստարկները դուրս են մնացել դատական վերահսկողության շրջանակից, ինչը հանգեցրել է Ա.Մացակյանի՝ ազատությունից զրկվելու իրավաչափությունը վիճարկելու կապակցությամբ արդյունավետ իրավական պաշտպանություն հայցելու իրավունքի խախտման:

Մասնավորապես, ստորադաս դատարանների կողմից քննարկման առարկա չեն դարձվել Ա.Մացակյանին 72 ժամից ավելի անազատության մեջ պահելու վերաբերյալ առկա փաստական տվյալները: Այսպես՝ պատշաճ իրավական գնահատականի չի ենթարկվել այն, որ՝

- Ա.Մացակյանը բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Նաիրիի բաժին 2017 թվականի մարտի 13-ին՝ ժամը 06:45-ին (տե՛ս սույն որոշման 5.1-րդ կետը), որից հետո ենթարկվել է անձնական զննության (տե՛ս սույն

որոշման 5.2-րդ կետը) և բացատրություն տվել ժամը 07:05-ից մինչև 08:00 (տե՛ս սույն որոշման 5.3-րդ կետը),

- Ա.Մացակյանը ձերբակալվել է 2017 թվականի մարտի 13-ին՝ ժամը 21:45-ին (տե՛ս սույն որոշման 5.4-րդ կետը),

- Ա.Մացակյանին մեղադրանք է առաջադրվել 2017 թվականի մարտի 16-ին՝ ժամը 10:40-ին (տե՛ս սույն որոշման 5.5-րդ կետը),

- Ա.Մացակյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին նախաքննական մարմնի միջնորդության քննությունն Առաջին ատյանի դատարանում սկսվել է 2017 թվականի մարտի 16-ին՝ ժամը 14:50-ին, և ավարտվել՝ ժամը 15:35-ին (տե՛ս սույն որոշման 5.6-րդ կետը):

Նշված հանգամանքների ժամանակագրական հաջորդականությունից հետևում է, որ Ա.Մացակյանին ձերբակալելու արձանագրությունը պետք է կազմվեր ոչ ուշ, քան 2017 թվականի մարտի 13-ի ժամը 09:45-ը: Մինչդեռ այն կազմվել է նույն օրը՝ ժամը 21:45-ին՝ օրենքով սահմանված ժամկետից շուրջ 12 ժամ ուշ: Այնուամենայնիվ, քրեական հետապնդման մարմին բերվելուց չորս ժամ հետո Ա.Մացակյանն օրենքի ուժով համարվել է ձերբակալված և իրավունք ունեցել օգտվելու ձերբակալվածի համար օրենքով սահմանված երաշխիքներից, այդ թվում՝ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով ամրագրված՝ 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ անազատության մեջ հետագա պահվելու թույլտվության բացակայության դեպքում անհապաղ ազատ արձակվելու իրավունքից: Սակայն Ա.Մացակյանը 2017 թվականի մարտի 13-ին՝ ժամը 06:45-ին, բերման ենթարկվելու պահից ավելի քան 72 ժամ մնացել է անազատության մեջ, այն է՝ այդ պահից արգելանքի տակ պահվելու առավելագույն ժամկետին՝ 2017 թվականի մարտի 16-ի ժամը 06:45-ին, հաջորդող ժամանակահատվածում շուրջ 8 ժամ Ա.Մացակյանն ապօրինի գտնվել է անազատության մեջ:

18. Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է հայտնում Կոտայքի մարզի դատախազի տեղակալի՝ վճռաբեկ բողոքի պատասխանում նշված այն փաստարկին, թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ, որ բերման ենթարկված անձին երեք ժամը լրանալուց հետո ազատ արձակելիս ոստիկանության աշխատակիցը պետք է կազմի որևէ փաստաթուղթ, որպիսի պայմաններում Ա.Մացակյանը բերման ենթարկվելուց և անհրաժեշտ գործողություններին մասնակցելուց հետո ազատ է արձակվել:

Նախ՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, անձի ձերբակալումը կազմված է միմյանց հաջորդող հետևյալ չորս գործողություններից՝ անձին ազատությունից փաստացի զրկելուց, նրան

իրավասու մարմին բերելուց, ձերբակալման արձանագրություն կազմելուց և այդ մասին նրան հայտարարելուց *(տե՛ս Գագիկ Միքայելյանի գործով 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵՄԴԴ/0085/06/09 որոշման 18-րդ կետը)*: Ուստի, եթե նույնիսկ Ա.Մացակյանը բերման ենթարկվելուց և անհրաժեշտ գործողություններին մասնակցելուց հետո ազատ է արձակվել, ապա հետագայում՝ մինչ Ա.Մացակյանին ձերբակալելու արձանագրություն կազմելը և այդ մասին նրան հայտարարելը, քրեական հետապնդման մարմինը համապատասխան դատավարական փաստաթղթի կազմմամբ պետք է նրան նորից փաստացի արգելանքի վերցներ և բերեր իրավասու մարմին: Ընդ որում, կազմվող դատավարական փաստաթղթում պետք է կրկին արձանագրվեր Ա.Մացակյանին արգելանքի վերցնելու պահը՝ անազատության մեջ գտնվելու առավելագույն 72 ժամը հաշվարկելու համար: Վերոնշյալը պայմանավորված է անձին ազատությունից զրկելիս օրինականության սկզբունքը երաշխավորելու անհրաժեշտությամբ, որը պահանջում է ազատության իրավունքի սահմանափակումը պաշտպանել պետության կամայական միջամտությունից *(տե՛ս Creanga v. Romania գործով Եվրոպական դատարանի 2012 թվականի փետրվարի 23-ի վճիռը, գանգատ թիվ 29226/03, 84-րդ կետը)*:

Բացի այդ, հիմք ընդունելով սույն որոշման 15.2-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ քրեական հետապնդման մարմինները կրելով անձի ձերբակալման օրինականության ապացուցման բեռը, պետք է ներկայացնեին համոզիչ, օբյեկտիվ բնույթ կրող փաստական տվյալներ այն մասին, որ Ա.Մացակյանին ազատությունից զրկելու ժամանակահատվածը համապատասխանել է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ժամկետային սահմանափակումներին: Մինչդեռ Ա.Մացակյանին 2017 թվականի մարտի 13-ին՝ ժամը 06:45-ին, բերման ենթարկելուց հետո վերջինիս ինչպես ազատ արձակելու, այնպես էլ հետագայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով կրկին արգելանքի վերցնելու փաստը հիմնավորող այդպիսի տվյալներ քրեական հետապնդման մարմինների կողմից չեն ներկայացվել: Հետևաբար Ա.Մացակյանին արգելանքի տակ պահելու ժամկետի ընդհատման վերաբերյալ վճռաբեկ բողոքի պատասխանում նշված փաստարկը չի կարող հիմնավոր համարվել:

19. Նախորդ կետում վկայակոչված հանգամանքների առկայության պարագայում Առաջին ատյանի դատարանն իր կայացրած դատական ակտով անդրադարձ չի կատարել Ա.Մացակյանին ոչ իրավաչափ անազատության մեջ պահելու վերաբերյալ պաշտպան Մ.Թովմասյանի կողմից վկայակոչված փաստարկներին: Հետևաբար, դատական ակտն այդ առումով չի համապատասխանում հիմնավորվածության և պատճառաբանվա-

ծության չափանիշներին, քանի որ նախաքննական մարմնի միջնորդության քննության ընթացքում անձի ձերբակալման իրավաչափության վերաբերյալ դատական քննության շրջանակներում պաշտպանական կողմի ներկայացրած փաստարկները պետք է կանխորոշեին այն հարցերի շրջանակը, որոնց կապակցությամբ դատարանի եզրահանգումները, ի թիվս այլոց, արտացոլվելու էին կայացվող դատական ակտում *(mutatis mutandis տե՛ս Էդուարդ Մուրադյանի գործով 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԼԴ/0166/06/12 որոշման 14-րդ կետը, Սկրտիչ Պողոսյանի և այլոց գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԾԴ/0034/01/15 որոշման 14-րդ կետը):*

Վերաքննիչ դատարանն իր հերթին քննության չի առել Ա.Մացակյանին ապօրինի անազատության մեջ պահելու վերաբերյալ պաշտպան Մ.Թովմասյանի կողմից վկայակոչված փաստարկները՝ ընդգծելով վերաքննության սահմանափակ բնույթը, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասով Առաջին ատյանի դատարան դիմելու և ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու հնարավորությանը: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը նշված պատճառաբանությունները հիմնավոր չի համարում, քանի որ ազատությունից ոչ իրավաչափորեն զրկվելու վերաբերյալ փաստարկները մեղադրյալ Ա.Մացակյանի պաշտպան Մ.Թովմասյանի կողմից բարձրացված են եղել ինչպես Առաջին ատյանի դատարանում, այնպես էլ վերաքննիչ բողոքում, իսկ դատարանի առջև կանգնելու և ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու իրավունքը, իր ունեցած բացառիկ կարևորությունից ելնելով, ենթակա է կենսագործման հնարավորինս սեղմ ժամկետում (տե՛ս սույն որոշման 15-րդ կետը):

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների կողմից Ա.Մացակյանի ձերբակալման իրավաչափությունը դատական վերահսկողության չենթարկելը հիմնավոր չէ:

20. Միևնույն ժամանակ, անդրադառնալով փաստացի արգելանքի վերցվելու պահից 72 ժամից ուշ Ա.Մացակյանին մեղադրանք առաջադրելու վերաբերյալ բողոք բերած անձի փաստարկին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրանքի առաջադրման գործողությունն ունի ինքնուրույն բովանդակություն և նպատակ: Մասնավորապես, այն կենսագործում է ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի 1-ին կետում և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետում նախատեսված երաշխիքը, որի համաձայն՝ հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի անհապաղ և հանգամանալից տեղեկացվելու ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին: Մեղադրանքի առաջադրմամբ անձին տեղեկատվություն է տրամադրվում մեղսագրվող արարքի

փաստական և իրավական հիմքերի մասին (*տե՛ս Penev v. Bulgaria գործով Եվրոպական դատարանի 2010 թվականի հունվարի 7-ի վճիռը, գանգատ թիվ 20494/04, 33-րդ և 42-րդ կետերը, Hermi v. Italy գործով Եվրոպական դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 18-ի վճիռը, գանգատ թիվ 18114/02, 68-րդ կետը)*, ինչն իր հերթին արդյունավետ է դարձնում նրա պաշտպանության իրավունքը: Այսինքն՝ մեղադրանքի առաջադրման գործողությունն ունի ինքնավար բնույթ և ինքնուրույնաբար է կատարվում, ուստի անազատության մեջ 72 ժամից ավելի պահվելու հանգամանքն ինքնին չի կարող փոխպայմանավորվել մեղադրանքի առաջադրման գործողության հետ:

Ինչ վերաբերում է կալանավորման հիմքերի բացակայության մասին բողոքաբերի փաստարկին (տե՛ս սույն որոշման 8.1-րդ կետը)՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում գնահատման ենթարկելով նախաքննական մարմնի կողմից միջնորդությանը կից ներկայացված նյութերը՝ ստորադաս դատարանները հանգել են իրավաչափ հետևության Ա.Մացակյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերի առկայության վերաբերյալ:

Հետևաբար վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

21. Այսպիսով, հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները. Վճռաբեկ դատարանը (ա) ճանաչում է Ա.Մացակյանի անձնական ազատության իրավունքի խախտման փաստը՝ նրան, առանց իրավական հիմքի, 72 ժամից 8 ժամ ավելի երկար անազատության մեջ պահելու մասով (տե՛ս սույն որոշման 17-րդ կետը), (բ) նշված խախտման փաստով կայացնում է լրացուցիչ որոշում՝ այն ուղարկելով իրավասու մարմիններին, ինչպես նաև (գ) արձանագրում է, որ Ա.Մացակյանն ունի ձերբակալման ընթացակարգի խախտման համար քաղաքացիական դատավարության կարգով հատուցում ստանալու իրավունք՝ հաշվի առնելով սույն որոշմամբ շարադրված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Մեղադրյալ Արտակ Վրեժի Մացակյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերա-

բերյալ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 16-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 13-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

ԿԴ3/0001/06/17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՈՐՈՇՈՒՄ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

2017 թվականի նոյեմբերի 15-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2017 թվականի ապրիլի 13-ի որոշման դեմ մեղադրյալ Արտակ Վրեժի Մացակյանի պաշտպան Մ.Թովմասյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. 2017 թվականի մարտի 13-ին ՀՀ ոստիկանության Նաիրիի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ 46153617 քրեական գործը, որն ըստ քննչական ենթակայության ուղարկվել է ՀՀ ՔԿ Կոտայքի մարզային քննչական վարչություն:

2017 թվականի մարտի 13-ին՝ ժամը 06:45-ին, Արտակ Մացակյանը հանցագործություն կատարած լինելու կասկածով բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Նաիրիի բաժին:

2017 թվականի մարտի 13-ին՝ ժամը 21:45-ին, Արտակ Մացակյանը ձերբակալվել է:

2017 թվականի մարտի 16-ին՝ ժամը 10:40-ին, Արտակ Մացակյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2017 թվականի մարտի 16-ին Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) ժամը 14:50-ին սկսվել և ժամը 15:35-ին ավարտվել է Ա.Մացակյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ նախաքննական մարմնի միջնորդության քննությունը:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հանցանքը կատարելու մեջ կասկածվող անձին հետաքննության մարմնի, քննիչի կամ դատախազի մոտ բերելուց հետո՝ երեք ժամվա ընթացքում, կազմվում է կասկածյալին ձերբակալելու մասին արձանագրություն, (…)»:*

Վերոնշյալ իրավադրույթից բխում է, որ Ա.Մացակյանին ձերբակալելու արձանագրությունը պետք է կազմվեր ոչ ուշ, քան 2017 թվականի մարտի 13-ի ժամը 09:45-ը: Մինչդեռ այն կազմվել է նույն օրը՝ ժամը 21:45-ին՝ օրենքով սահմանված ժամկետից շուրջ 12 ժամ ուշ:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝*

(...)

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով.

(...)

4. Եթե սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով ազատությունից զրկված անձի վերաբերյալ ազատությունից զրկվելու պահից ողջամիտ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան յոթանասուներկու ժամվա ընթացքում դատարանը որոշում չի կայացնում անազատության մեջ նրան հետագա պահելը թույլատրելու մասին, ապա նա անհապաղ ազատ է արձակվում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ *«3. (...) Մինչև դատարանի համապատասխան որոշումն ստանալն անձը չի կարող ձերբակալման հետևանքով անազատության մեջ պահվել 72 ժամից ավելի (...)»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ նախադասության համաձայն՝ *«Ձերբակալման տակ պահելու ժամկետն սկսվում է արգելանքի վերցնելու պահից»:*

Վերոնշյալ իրավադրույթներից բխում է, որ ոչ ուշ, քան 2017 թվականի մարտի 16-ի ժամը 06:45-ը Ա.Մացակյանը կա՛մ պետք է ազատ արձակվեր, կա՛մ մեղադրանքի առաջադրումից հետո ներկայացվեր իրավասու դատարան՝ նրան կալանավորելու միջնորդությամբ: Մինչդեռ 2017 թվականի մարտի 16-ի ժամը 06:45-ից հետո Ա.Մացակյանը շարունակել է պահվել անազատության մեջ: Ավելին՝ նույնիսկ մեղադրանքը նրան առաջադրվել է անազատության մեջ պահվելու առավելագույն՝ 72 ժամին հաջորդող ժամանակահատվածում, այն է՝ 2017 թվականի մարտի 16-ին՝ ժամը 10:40-ին: Արդյունքում՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը նախաքննական մարմնի կողմից Առաջին ատյանի դատարան ուշ ներկայացնելու հետևանքով Ա.Մացակյանը շարունակել է մնալ անազատության մեջ առնվազն մինչև 2017 թվականի մարտի 16-ի ժամը 14:50-ը, այսինքն՝ 72 ժամից շուրջ 8 ժամով ավելի երկար:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը ճանաչել է Ա.Մացակյանի անձնական ազատության իրավունքի խախտման փաստը, ինչպես նաև Ա.Մացակյանին պարզաբանել ձերբակալման ընթացակարգի խախտման համար քաղաքացիական դատավարության կարգով հատուցում ստանալու իրավունքը:

4. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360^1-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Դատարանը դատավճռի կամ որոշման հետ միաժամանակ համապատասխան հիմքերի առկայության դեպքում պարտավոր է կայացնել լրացուցիչ որոշում, որով պետական մարմնի համապատասխան պաշտոնատար անձանց ուշադրությունն է հրավիրում դատական քննության ժամանակ ի հայտ եկած այն էական խախտումների վրա, որոնք թույլ են տրվել քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքում:*

(...)

3. Լրացուցիչ որոշումն ուղարկվում է խախտում թույլ տված պաշտոնատար անձի վերադասին, իսկ այդպիսինը չլինելու դեպքում՝ խախտում թույլ տված պաշտոնատար անձին: Լրացուցիչ որոշումն ստացած պաշտոնատար անձը պարտավոր է որոշումը ստանալուց հետո՝ ոչ ուշ, քան, մեկամսյա ժամկետում քննարկել այն և ձեռնարկել համապատասխան միջոցներ առկա խախտումները վերացնելու կամ նմանատիպ խախտումները բացառելու ուղղությամբ»:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է կայացնել լրացուցիչ որոշում և ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Նախիրի բաժնի պետի և ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Նախիրի քննչական բաժնի պետի ուշադրությունը հրավիրել սույն քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքում Ա.Մացակյանի ազատության իրավունքի խախտման փաստին՝ արձանագրված սույն որոշման 2-3-րդ կետերում:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360^1-րդ հոդվածով՝ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Նախիրի բաժնի պետի և ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Նախիրի քննչական բաժնի պետի ուշադրությունը հրավիրել իրենց ենթակա պաշտոնատար անձանց կողմից Արտակ Վրեժի Մացակյանի անձնական ազատության իրավունքի խախտման փաստին՝ նմանատիպ խախտումները բացառելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու համար:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

19.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԴ3/0001/06/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
	Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝	Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ՝ պաշտպան	Մ.ԹՈՎՄԱՍՅԱՆԻ

2017 թվականի նոյեմբերի 15-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի մայիսի 29-ի որոշման դեմ մեղադրյալ Արտակ Վրեժի Մացակյանի պաշտպան Մարինե Թովմասյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2017 թվականի մարտի 13-ին ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Նաիրիի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ 46153617 քրեական գործը և ըստ քննչական ենթակայության ուղղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչություն: Նույն օրը վերոնշյալ վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ս.Քոլայանը քրեական գործն ընդունել է վարույթ:

2017 թվականի մարտի 13-ին Արտակ Վրեժի Մացակյանը ձերբակալվել է:

2017 թվականի մարտի 16-ին որոշում է կայացվել Արտակ Մացակյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին և նույն օրը վերջինիս մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2. 2017 թվականի մարտի 16-ին նախաքննության մարմինը մեղադրյալ Ա.Մացակյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդություն է ներկայացրել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 16-ի որոշմամբ Ա.Մացակյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել մեղադրյալ Ա.Մացակյանի պաշտպան Մարինե Թովմասյանը:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2017 թվականի ապրիլի 13-ի որոշմամբ պաշտպան Մ.Թովմասյանի բողոքը մերժվել է, իսկ բողոքարկված որոշումը թողնվել օրինական ուժի մեջ:

3. Նախաքննության մարմինը 2017 թվականի մայիսի 3-ին միջնորդություն է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ Արտակ Մացակյանին կալանքի տակ պահելու ժամկետը 2 (երկու) ամսով երկարացնելու մասին:

Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մայիսի 6-ի որոշմամբ Ա.Մացակյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է 2 (երկու) ամսով:

4. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մայիսի 6-ի որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել մեղադրյալ Ա.Մացակյանի պաշտպան Մ.Թովմասյանը:

Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի մայիսի 29-ի որոշմամբ Մ.Թովմասյանի բողոքը մերժվել է, իսկ բողոքարկված որոշումը թողնվել օրինական ուժի մեջ:

5. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 13-ի և մայիսի 29-ի որոշումների դեմ պաշտպան Մ.Թովմասյանը բերել է վճռաբեկ բողոքներ:

Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 13-ի որոշման դեմ պաշտպան Մ.Թովմասյանի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 8-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի մայիսի 29-ի որոշման դեմ պաշտպան Մ.Թովմասյանի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 14-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Այդ վճռաբեկ բողոքի կապակցությամբ դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

6. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 13-ի որոշման դեմ մեղադրյալ Ա.Մացակյանի պաշտպան Մ.Թովմասյանի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 15-ի որոշմամբ մերժվել է, իսկ բողոքարկված որոշումը՝ թողնվել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները (տե՛ս Արտակ Վրեժի Մացակյանի վերաբերյալ նույն՝ թիվ ԿԴ-3/0001/06/17 գործով Վերաքննիչ դատարանի՝ *2017 թվականի ապրիլի 13-ի որոշման դեմ* բերված բողոքը քննության առնելու արդյունքում Վճռաբեկ դատարանի կողմից 2017 թվականի նոյեմբերի 15-ին կայացված որոշումը):

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

7. Նախաքննության մարմինը Ա.Մացակյանին մեղադրանք է առաջադրել այն բանի համար, որ *«(...) նա, ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, 2017թ. մարտի 12-ին՝ ժամը 14:30-ի սահմաններում, Կոտայքի մարզի Արգել գյուղի գերեզմանատան մոտ նկատելով «Միցուբիշի Գոլդ» մակնիշի 34 LZ 430 պ/հ ավտոմեքենան, աննկատ մոտեցել ու բացել է ավտոմեքենայի ճախակողմյան դուռն ու սրահից գաղտնի հափշտակել Համլիկ Ռուբիկի Սարգսյանին և Կարինե Արտավազդի Բադալյանին պատկանող ընդհանուր, խոշոր չափերի՝ 2.270.500 ՀՀ դրամ արժողության գույքը՝ կանացի երկու պայուսակներ ու դրանց մեջ գտնվող տարատեսակ ոսկյա զարդեր, պճնանքի պարագաներ, դրանց համար նախատեսված փոքրիկ պայուսակ, թվով երեք օպտիկական և մեկ արևային ակնոցներ, «Սամսունգ G-120F» մոդելի բջջային հեռախոս՝ իր սնուցման սարքով ու ականջակալով, կանացի դրամապանակ, ինչպես նաև 49.572 ՀՀ դրամին համարժեք 102 ԱՄՆ դոլար ու 2.600 ՀՀ դրամ կանխիկ գումար»* (տե՛ս նյութեր, թերթ 35):

8. Առաջին ատյանի դատարանը 2017 թվականի մայիսի 6-ի որոշմամբ գտել է, որ Ա.Մացակյանին կալանքի տակ պահելու ժամկետը 2 (երկու) ամսով երկարացնելու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդությունն իրավաչափ է և ենթակա է բավարարման (տե՛ս նյութեր, թերթեր 58-65):

9. Ա.Մացակյանին կալանքի տակ պահելու ժամկետը 2 (երկու) ամսով երկարացնելու վերաբերյալ նյութերը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի

գրասենյակ են մուտքագրվել 2017 թվականի մայիսի 25-ին (տե՛ս նյութեր, թերթ 80):

10. Նույն օրը՝ 2017 թվականի մայիսի 25-ին Վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել «Վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու և կալանքի նյութերը վերաքննիչ դատարանի դատական նիստում քննության նշանակելու մասին»: Այդ դատական ակտով Վերաքննիչ դատարանը որոշել է՝

«Մեղադրյալ Արտակ Մացակյանի շահերի պաշտպան Մարինե Թովմասյանի վերաքննիչ բողոքն ընդունել վարույթ:

*Դատական ստուգումը նշանակել Վերաքննիչ քրեական դատարանի դռնփակ դատական նիստում քննության **2017 թվականի մայիսի 29-ին, ժամը 11:00-ին.** Երևան քաղաքում, վերաքննիչ դատարանի շենքում:*

Դատական նիստում լսել պաշտպանի հիմնավորումները բերված վերաքննիչ բողոքի առթիվ, դատախազի պատասխանը, քննիչի բացատրությունները, որից հետո հետազոտել Վերաքննիչ դատարան ներկայացված համապատասխան նյութերը:

Դատական նիստին կանչել պաշտպանին, դատախազին, քննիչին» (տե՛ս նյութեր, թերթ 81):

11. Գործում առկա են 2017 թվականի մայիսի 25-ով թվագրված գրություններ, համաձայն որոնց՝ դատավորի օգնական Գ.Աբելյանը մեղադրյալ Ա.Մացակյանի պաշտպան Մարինե Թովմասյանին, ինչպես նաև դատախազությանը և նախաքննության մարմնին ծանուցել է պաշտպան Մ.Թովմասյանի ներկայացրած վերաքննիչ բողոքի քննությունը 2017 թվականի մայիսի 29-ին, ժամը 11:00-ին նշանակված լինելու մասին՝ խնդրելով ներկայանալ դատական նիստին (տե՛ս նյութեր, թերթեր 82, 83, 85):

12. Գործում նաև առկա են պաշտպան Մ.Թովմասյանին և նախաքննության մարմնին հասցեագրված վերոնշյալ ծանուցագրերը հանձնելու հանգամանքը հավաստող փաստաթղթեր (հանձնման-ստացման ծանուցագրեր), որոնց ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նամակներն հասցեատերերին են հանձնվել 2017 թվականի մայիսի 30-ին (տե՛ս Նյութեր, թերթեր 84, 86):

13. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի մայիսի 29-ի որոշման մեջ արձանագրված է հետևյալը՝ *«(...)Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ պաշտպան Մ.Թովմասյանը, պատշաճ կերպով ծանուցված լինելով Վերաքննիչ բողոքի քննության կապակցությամբ դատական նիստի տեղի և ժամանակի մասին, չի ներկայացել դատական նիստին, որպիսի հանգամանքն էլ չի կարող արգելք հանդիսանալ Վերաքննիչ դատարանի կողմից ներկայացված բողոքը պաշտպանի բացակայությամբ քննելու համար: Ներկայացվածը հավաստվել է «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից ուղարկված ծանուցումը ստանալու հավաստագրով»* (տե՛ս Նյութեր, թերթ 93):

Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի մայիսի 29-ի որոշման մեջ արձանագրված է նաև հետևյալը՝ *«(...) Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ սույն գործով առկա են մեղադրյալ Արտակ Մացակյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու բավարար հիմքեր ու պայմաններ, իսկ պաշտպան Մ.Թովմասյանի կողմից չեն ներկայացվել մեղադրյալ Արտակ Մացակյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը վերացնելու վերաբերյալ բավարար և ռեալ հիմնավորումներ կամ այնպիսի ապացույցներ, որոնք վկայում են այն մասին, որ մեղադրյալը՝ մնալով ազատության մեջ, որևէ ձևով չի խոչընդոտի քննությանը, չի թաքնվի վարույթն իրականացնող մարմնից և չի խուսափի քրեական պատասխանատվությունից և պատժից, և արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի որոշմամբ պահպանվել են ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական օրենսդրության, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների պահանջները, որի պայմաններում պաշտպանի վերաքննիչ բողոքի փաստարկները չեն կարող բավարար հիմք հանդիսանալ ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2017 թվականի մայիսի 06-ի որոշումը բեկանելու կամ փոփոխելու համար»* (տե՛ս նյութեր, թերթեր 91-96):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

14. Բողոքաբերի կարծիքով Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի մայիսի 29-ի որոշումն օրինական և հիմնավոր չէ, դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, որն ազդել է գործի ելքի վրա:

Բողոքի հեղինակը գտնում է, որ ստորադաս դատարաններն անտեսել են Վճռաբեկ դատարանի՝ *Գ.Միքայելյանի* վերաբերյալ թիվ ԵԱԴԴ/0085/06/09 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները և արդյունքում կայացրել են ոչ իրավաչափ դատական ակտեր:

15. Բողոքաբերը նշել է, որ Ա.Մացակյանը բերման է ենթարկվել ոստիկանության բաժին 2017 թվականի մարտի 13-ին՝ ժամը 06:45-ին և ազատ չի արձակվել: Նա նույն օրը ժամը 21:45-ին ձերբակալվել է, այսինքն՝ փաստացի արգելանքի վերցնելու պահից մինչև ձերբակալվելը 12 ժամ ապօրինի պահվել է բաժնում: Փաստացի արգելանքի վերցնելու պահից մինչև Առաջին ատյանի դատարանի կողմից կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին որոշում կայացնելը՝ մինչև 2017 թվականի մարտի 16-ի ժամը 16:00-ի սահմանները, ազատ չի արձակվել, այսինքն՝ անազատության մեջ է պահվել 72 ժամից ավելի:

16. Բողոքի հեղինակը նաև նշել է, որ իր պաշտպանյալին մեղադրանք է առաջադրվել 2016 թվականի մարտի 16-ին, ժամը 10:00-10:30-ի սահմաններում, այսինքն՝ սկսած փաստացի արգելանքի վերցնելու պահից 72 ժամվա ընթացքում Ա.Մացակյանին մեղադրանք չի առաջադրվել:

Բողոք բերած անձը նշել է, որ դատարանները չեն ճանաչել Ա.Մացակյանի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի խախտման փաստը, մեղադրանքը սահմանված ժամկետում չառաջադրելու փաստով չեն կայացրել լրացուցիչ որոշում՝ այն ուղարկելով իրավասու մարմիններին, ինչպես նաև չեն արձանագրել, որ Ա.Մացակյանն ունի ձերբակալման ընթացակարգի խախտման համար քաղաքացիական դատավարության կարգով հատուցում ստանալու իրավունք:

17. Վճռաբեկ բողոք բերած անձը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի մայիսի 29-ի որոշումը կայացվել է դատավարական իրավունքի խախտմամբ նաև այն առումով, որ Վերաքննիչ դատարանը նշանակված դատական նիստի մասին պաշտպանական կողմին պատշաճ չի ծանուցել, դրանով իսկ զրկելով կողմին բողոքի քննարկմանը մասնակցելու և դիրքորոշում հայտնելու հնարավորությունից:

18. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի մայիսի 29-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ մերժելով քննիչի միջնորդությունը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

19. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցերն ըստ էության երեքն են. առաջին երկուսը վերաբերում են Ա.Մացակյանին արգելանքի վերցնելու և մեղադրանք առաջադրելու իրավաչափությանը, իսկ երրորդը՝ մեղադրյալ Ա.Մացակյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի քննության տեղի և ժամանակի մասին պաշտպանության կողմին պատշաճ չծանուցելու, դրանով իսկ կողմին բողոքի քննարկմանը մասնակցելու և դիրքորոշում հայտնելու հնարավորությունից զրկելու հանգամանքին:

20. Ա.Մացակյանին արգելանքի վերցնելու և մեղադրանք առաջադրելու իրավաչափությանը Վճռաբեկ դատարանն արդեն անդրադարձել է սույն որոշման կայացման օրը նույն գործով կայացված մեկ այլ որոշմամբ՝ արձանագրելով, որ *ազատությունից զրկվելուց հետո դատարանի առջև կանգնելու և ազատությունից զրկվելու իրավաչափությունը վիճարկելու երաշխիքը կրում է բացառիկ նշանակություն անձի ազատության իրավունքի պաշտպանության համակարգում՝ ապահովելով ազատությունից զրկված անձի լսված լինելու իրավունքն անկախության երաշխիքով օժտված այնպիսի մարմնի առջև, որն ունի վերջինիս անհապաղ ազատ արձակելու կարգա-*

դրություն տալու իրավասություն: Վճռաբեկ դատարանը հիշյալ որոշմամբ փաստել է, որ ազատությունից զրկվելուց հետո դատարանի առջև կանգնելու և ազատությունից զրկվելու իրավաչափությունը վիճարկելու իրավունքն օժտված է անհետաձգելի բնույթով, ենթակա է կենսագործման անհապաղ՝ ազատությունից զրկվելու սկզբնական փուլում ձերբակալվածի կողմից հայցվող իրավական պաշտպանության արդյունավետությունն ապահովելու նպատակով: Վերոնշյալ որոշման մեջ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ մեղադրյալ Ա.Մացակյանի ձերբակալման օրինականության վերաբերյալ պաշտպանական կողմի փաստարկները դուրս են մնացել դատական վերահսկողության շրջանակից, ինչը հանգեցրել է Ա.Մացակյանի՝ ազատությունից զրկվելու իրավաչափությունը վիճարկելու կապակցությամբ արդյունավետ իրավական պաշտպանություն հայցելու իրավունքի խախտման: Վճռաբեկ դատարանը փաստել է, որ Ա.Մացակյանը շուրջ 8 ժամ ապօրինի գտնվել է անազատության մեջ: Միևնույն ժամանակ, անդրադառնալով փաստացի արգելանքի վերցվելու պահից 72 ժամից ուշ Ա.Մացակյանին մեղադրանք առաջադրելու վերաբերյալ բողոք բերած անձի փաստարկին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ մեղադրանքի առաջադրման գործողությունն ունի ինքնավար բնույթ և ինքնուրույնաբար է կատարվում, ուստի անազատության մեջ 72 ժամից ավելի պահվելու հանգամանքն ինքնին չի կարող փոխպայմանավորվել մեղադրանքի առաջադրման գործողության հետ: Ինչ վերաբերում է կալանավորման հիմքերի բացակայության մասին բողոքաբերի փաստարկին՝ Վճռաբեկ դատարանը վերոնշյալ որոշմամբ արձանագրել է, որ պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում գնահատման ենթարկելով նախաքննական մարմնի կողմից միջնորդությանը կից ներկայացված նյութերը՝ ստորադաս դատարանները հանգել են իրավաչափ հետևության Ա.Մացակյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերի առկայության վերաբերյալ (տե՛ս Արտակ Վրեժի Մացակյանի վերաբերյալ նույն՝ թիվ ԿԴ3/0001/06/17 գործով Վերաքննիչ դատարանի՝ *2017 թվականի ապրիլի 13-ի որոշման դեմ* բերված բողոքը քննության առնելու արդյունքում Վճռաբեկ դատարանի կողմից 2017 թվականի նոյեմբերի 15-ին կայացված որոշումը):

21. Անդրադառնալով մեղադրյալ Ա.Մացակյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի քննության օրվա և ժամանակի մասին պաշտպանության կողմին պատշաճ չծանուցելու, դրանով իսկ կողմին բողոքի քննարկմանը մասնակցելու և դիրքորոշում հայտնելու հնարավորությունից զրկելու վերաբերյալ բողոքաբերի փաստարկներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջների պահ-*

պանմամբ՝ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական դատավարությունն իրականացվում է մրցակցության սկզբունքի հիման վրա:

2. Քրեական հետապնդումը, պաշտպանությունը և գործի լուծումը տարանջատված են. դրանք իրականացնում են տարբեր մարմիններ և անձինք:

(…)

4. Քրեական գործը քննող դատարանը, պահպանելով օբյեկտիվությունը և անկողմնակալությունը, մեղադրանքի և պաշտպանության կողմերի համար ստեղծում է գործի հանգամանքների բազմակողմանի և լրիվ հետազոտման անհրաժեշտ պայմաններ (…):

5. Քրեական դատավարությանը մասնակցող կողմերը քրեական դատավարական օրենսդրությամբ օժտված են իրենց դիրքորոշումը պաշտպանելու հավասար հնարավորություններով (…):

(…)

7. Դատարանն ապահովում է Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարաններում գործի քննությանը կողմերի մասնակցության իրավունքը (…)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Մեղադրյալն ունի պաշտպանության իրավունք: (…)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ *պաշտպանն իրավունք ունի մասնակցելու Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի նիստերին և գործի նյութերի հետազոտմանը:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի համաձայն՝

« 1. Որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը կատարվում է Վերաքննիչ դատարանի կողմից:

2. Կալանավորելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու օրինականությունը և հիմնավորվածությունը դատարանն ստուգում է ընտրված խափանման միջոցի օրինականությունը և հիմնավորվածությունը հաստատող նյութերն ստանալու օրվանից՝ երեք օրվա ընթացքում:

3. Դատական ստուգումը կատարվում է դռնփակ դատական նիստում՝ դատախազի և պաշտպանի մասնակցությամբ: Բողոքը քննելու օրվա մասին նախապես իրազեկ կողմի չներկայանալը չի խոչընդոտում դատական ստուգումն իրականացնելուն: (…):

4. Նիստի սկզբում նախագահող դատավորը հայտարարում է, թե ինչպիսի բողոք է քննվելու, ներկայացնում է դատարան ներկայացած անձանց և նրանց պարզաբանում է իրենց իրավունքները և պարտականությունները: Այնուհետև դիմողը, եթե նա մասնակցում է բողոքի քննությանը, հիմնավորում է բողոքը, որից հետո լսում են նիստին ներկա գտնվող այլ անձանց:

(…)»:

Վերաքննիչ դատարանում գործի քննության կարգը սահմանող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Գործի քննության տեղի և ժամանակի մասին կողմերը ծանուցվում են»:*

Մեջբերված նորմերի առնչությամբ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ մրցակցության սկզբունքն արդար դատաքննության հիմնարար իրավունքի բաղկացուցիչ տարր է. այդ սկզբունքի իմաստով դատաքննության ժամանակ և՛ մեղադրանքի, և՛ պաշտպանության կողմերի համար պետք է հավասարապես երաշխավորվի ողջամիտ հնարավորություն՝ իր գործը ներկայացնելու այնպիսի պայմաններում, որը նվազ բարենպաստ չի լինի, քան այն հնարավորությունը, որը տրամադրվում է մրցակից կողմին: Այսինքն՝ մրցակցության սկզբունքն անհրաժեշտ է դիտարկել կողմերի հավասարության հիմնարար պահանջի հետ միասնության մեջ, ինչը, ի թիվս այլոց, ենթադրում է, որ կողմը պետք է հնարավորություն ունենա պաշտպանելու իր իրավունքներն ու օրինական շահերը, ծանոթանալու մյուս կողմի ներկայացրած փաստարկներին և ապացույցներին: Նշվածն արդար դատական քննության իրավունքի ապահովման կարևորագույն նախապայման է, քանի որ քննության իրականացումն առանց կողմերի հավասար տեղեկացվածության նշանակում է մրցակցության և կողմերի հավասարության հիմնարար դրույթների անհամապատասխան ձևականացում և առարկայազրկում:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ արդար դատական քննություն իրականացնելու պահանջը հավասարապես վերաբերելի է նաև միևչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում անցկացվող դատական քննություններին: Մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կալանավորման կիրառման, կալանքի ժամկետի երկարացման հարցերի քննարկման, ինչպես նաև վերաքննության կարգով դրանց օրինականության դատական ստուգման ընթացքում դատարանը համապատասխան որոշում է կայացնում քրեական հետապնդման մարմնի ներկայացրած տեղեկությունների, փաստերի կամ ապացույցների հետազոտման արդյունքում: Հետևաբար՝ ինչպես Առաջին ատյանի դատարանը՝ կալանք կիրառելու կամ դրա ժամկետը երկարացնելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը քննելիս, այնպես էլ Վերաքննիչ դատարանը՝ ստորադաս դատարանի որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը դատական ստուգման ենթարկելիս պարտավոր են միջոցներ ձեռնարկել կողմերի հավասարության և մրցակցային դատավարության ապահովման

ուղղությամբ: Այդ նպատակով դատարանները, ի թիվս այլ գործողությունների, պետք է միջոցներ ձեռնարկեն նշանակված դատական նիստի տեղի և ժամանակի մասին կողմերին պատշաճ ձևով ծանուցելու և դատական քննությանը մասնակցելու նրանց իրավունքի անխափան իրացումն ապահովելու համար (տե՛ս, mutatis mutandis, *Ամալյա Ղարիբյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԿԴ/0008/06/11, *Նոյ Մուսայելյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԿԴ-1/0007/06/12, *Հակոբ Մկրտչյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԿԴ/0230/01/14, *Ռաֆայել Քոթանջյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԿԴ-3/0010/06/15 որոշումները):

22. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է հետևյալը.

ա) Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մայիսի 6-ի որոշմամբ Ա.Մացակյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է 2 ամսով:

բ) Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մայիսի 6-ի որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել մեղադրյալ Ա.Մացակյանի պաշտպան Մ.Թովմասյանը:

գ) Ա.Մացակյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ նյութերը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի գրասենյակ են մուտքագրվել 2017 թվականի մայիսի 25-ին (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը): Նույն օրը Վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել «Վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու և կալանքի նյութերը վերաքննիչ դատարանի դատական նիստում քննության նշանակելու մասին», համաձայն որի՝ Վերաքննիչ դատարանը որոշել է դատական ստուգումը նշանակել 2017 թվականի մայիսի 29-ին, ժամը 11:00-ին, դատական նիստին կանչել պաշտպանին, դատախազին, քննիչին, դատական նիստում լսել պաշտպանի հիմնավորումները բերված վերաքննիչ բողոքի առթիվ, դատախազի պատասխանը, քննիչի բացատրությունները, որից հետո հետազոտել Վերաքննիչ դատարան ներկայացված համապատասխան նյութերը (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

դ) գործում առկա են 2017 թվականի մայիսի 25-ով թվագրված գրություններ, համաձայն որոնց՝ դատավորի օգնական Գ.Աբելյանը մեղադրյալ Ա.Մացակյանի պաշտպան Մարիներ Թովմասյանին, ինչպես նաև դատախազությանը և նախաքննության մարմնին ծանուցել է պաշտպան Մ.Թովմասյանի ներկայացրած վերաքննիչ բողոքի քննությունը 2017 թվականի մայիսի 29-ին, ժամը 11:00-ին նշանակված լինելու մասին՝ խնդրելով ներկայանալ դատական նիստին (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը): Ընդ որում, գործում առկա չէ 2017 թվականի մայիսի 25-ով թվագրված վերոնշյալ գրությունները կապի ծառայությանը հանձնելու օրվա մասին վկայող որևէ ապացույց:

ե) գործում առկա են պաշտպան Մ.Թովմասյանին և նախաքննության մարմնին հասցեագրված վերոնշյալ ծանուցագրերը հանձնելու հանգամանքը հավաստող փաստաթղթեր (հանձնման-ստացման ծանուցագրեր), որոնց ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նամակներն հասցեատերերին են հանձնվել 2017 թվականի մայիսի 30-ին (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը):

զ) Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի մայիսի 29-ի որոշման մեջ արձանագրված է հետևյալը՝ *«(...) Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ պաշտպան Մ.Թովմասյանը, պատշաճ կերպով ծանուցված լինելով Վերաքննիչ բողոքի քննության կապակցությամբ դատական նիստի տեղի և ժամանակի մասին, չի ներկայացել դատական նիստին, որպիսի հանգամանքն էլ չի կարող արգելք հանդիսանալ Վերաքննիչ դատարանի կողմից ներկայացված բողոքը պաշտպանի բացակայությամբ քննելու համար: Ներկայացվածը հավաստվել է «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից ուղարկված ծանուցումը ստանալու հավաստագրով»* (տե՛ս սույն որոշման 13-րդ կետը):

է) Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի մայիսի 29-ի որոշմամբ Մ.Թովմասյանի բողոքը մերժվել է, իսկ բողոքարկված որոշումը թողնվել օրինական ուժի մեջ:

ը) գործի նյութերում առկա չէ որևէ փաստաթուղթ, *որը կհավաստի (ինչպես նշել է իր որոշման մեջ Վերաքննիչ դատարանը),* որ պաշտպան Մ.Թովմասյանը պատշաճ կերպով ծանուցված է եղել դատական նիստի տեղի և ժամանակի մասին: Ընդհակառակը, առկա է ծանուցագիրը հանձնելու հանգամանքը հավաստող փաստաթուղթ (հանձնման-ստացման ծանուցագիր), որի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նամակը Մ.Թովմասյանին է հանձնվել 2017 թվականի մայիսի 30-ին, այսինքն՝ վերաքննիչ բողոքը քննելու և այն մերժելու մասին որոշումը կայացնելու հաջորդ օրը (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը):

23. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով սույն որոշման 21-րդ կետում վկայակոչված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերը նկարագրված իրազեկումը, որի արդյունքում մեղադրյալ Ա.Մացակյանի պաշտպան Մ.Թովմասյանը դատական նիստի տեղի և ժամանակի մասին *տեղեկացվել է այդ նիստի օրվան հաջորդող օրը*՝ չի կարող համարվել պատշաճ ձևով ծանուցում: Արդյունքում վերջինս զրկվել է գործի դատական քննությանը մասնակցելու հնարավորությունից, հետևաբար նաև հնարավորություն չի ունեցել պաշտպանելու մեղադրյալ Ա.Մացակյանի իրավունքներն ու օրինական շահերը, տեղեկանալու և մեկնաբանելու մյուս կողմի ներկայացրած փաստարկները, այսինքն՝ պաշտպանության կողմը հայտնվել է խիստ անբարենպաստ վիճակում մյուս կողմի համեմատությամբ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը չի կատարել բողոքը քննելու օրվա և ժամանակի մա-

սին կողմին նախապես իրազեկելու պարտականությունը: Վերաքննիչ դատարանը պաշտպան Մ.Թովմասյանին պատշաճ կերպով չծանուցելով նշանակված դատական նիստի տեղի և ժամանակի մասին, թույլ է տվել մրցակցության սկզբունքի խախտում, ինչն էլ իր հերթին հանգեցրել է ՀՀ Սահմանադրությամբ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի խախտմանը: Այլ կերպ՝ մեղադրյալ Ա.Մացակյանի պաշտպան Մ.Թովմասյանին պատշաճ ձևով չծանուցելով նշանակված դատական նիստի տեղի և ժամանակի մասին՝ Վերաքննիչ դատարանը չի ապահովել անձի արդար դատաքննության իրավունքը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 23-րդ, 288-րդ, 390-րդ հոդվածների խախտումներ, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների իմաստով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք է: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ բողոքարկված դատական ակտը եղել է ժամանակավոր, այն կորցրել է իր իրավական նշանակությունը և սույն որոշումը կայացնելու պահին դադարել է իրավաբանորեն գոյություն ունենալուց, հետևաբար այն չի կարող բեկանվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Մեղադրյալ Արտակ Վրեժի Մացակյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի մայիսի 29-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

20.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱԴԴ/0074/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ	Հ.ԱՍԱՏՐՅԱՆ
	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
	Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝	Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ՝	
դատախազ	Հ.ՉԱԽՈՅԱՆԻ
ամբաստանյալ	Ռ.ՄԿՐՏՉՅԱՆԻ
պաշտպաններ	Ա.ՖԵՐՈՅԱՆԻ
	Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

2017 թվականի նոյեմբերի 15-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Բախշի Հովհաննեսի Երիցյանի, Էլմիրա Բախշիի Երիցյանի և Ռաֆիկ Բագրատի Մկրտչյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2015 թվականի հունվարի 31-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում հարուցվել է թիվ 10104915 քրեական գործը՝ ՀՀ

քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի փետրվարի 2-ի որոշմամբ Բախշի Հովհաննեսի Երիցյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով: Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի փետրվարի 3-ի որոշմամբ Էլմիրա Բախշիի Երիցյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով: Նույն մարմնի՝ 2015 թվականի փետրվարի 3-ի որոշմամբ Ռաֆիկ Բագրատի Սկրտչյանը նույնպես ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի սեպտեմբերի 30-ի որոշմամբ Բ.Երիցյանին առաջադրված մեղադրանքը լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հոկտեմբերի 2-ի որոշմամբ Է.Երիցյանին առաջադրված մեղադրանքը լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով:

2015 թվականի հոկտեմբերի 14-ին Բ.Երիցյանի, Է.Երիցյանի և Ռ.Սկրտչյանի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 29-ի դատավճռով ամբաստանյալ Բ.Երիցյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 97-րդ հոդվածի հիման վրա ամբաստանյալ Բ.Երիցյանի նկատմամբ նշանակվել է նաև հարկադիր բուժում՝ նյարդահոգեբույժի հսկողությամբ:

Ճանաչվել և հռչակվել է ամբաստանյալներ Է.Երիցյանի, Ռ.Սկրտչյանի անմեղությունը՝ համապատասխանաբար ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 334-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում՝ կատարված հանցագործությանը նրանց մասնակցությունն ապացուցված չլինելու պատճառաբանությամբ:

3. Մեղադրող Հ.Չախոյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի փետրվարի 14-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մեր-

ժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 29-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 6-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Ամբաստանյալ Ռ.Սկրտչյանի պաշտպան Ա.Ֆերոյանը ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխանը՝ խնդրելով մերժել վճռաբեկ բողոքը և բողոքարկվող դատական ակտը թողնել անփոփոխ:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Բ.Երիցյանին ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա *«(...) [Մեղադրյալ Էլմիրա Բախշիի Երիցյանի հետ, նախնական համաձայնությամբ, խմբի կազմում ապօրինաբար դիտավորությամբ կյանքից զրկել է Արշավիր Արմենակի Բարսամյանին:*

Այսպես.

Բախշի Հովհաննեսի Երիցյանը 2015 թվականի հունվարի 31-ին՝ ժամը 10:00-ին, կնոջ՝ Էլմիրա Երիցյանի հետ, Հրազդան քաղաքից նստելով Ռաֆիկ Բագրատի Սկրտչյանի կողմից շահագործվող Գազ 31-105 մակնիշի 77SO677 հաշվառման համարանիշի ավտոմեքենան, վերջինիս հետ միասին գնացել են Երևան քաղաքի Մարգարյան փողոց, ավտոմեքենան կայանել 10-րդ շենքի մոտ և, իրենց բջջային հեռախոսները թողնելով ավտոմեքենայի մեջ, երեքով շուրջ 800 մետր ոտքով քայլել են դեպի Ֆուչիկի փողոցի 24-րդ շենքի 30-րդ բնակարան՝ նույն բնակարանի բնակիչ Արշավիր Արմենակի Բարսամյանի և իր միջև հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 120-րդ շենքի 21-րդ բնակարանի պատկանելիության հարցի շուրջ զրուցելու և տվյալ բնակարանում գտնվող չհրկիզվող պահարանից իրեն պատկանող ոսկյա զարդերը վերցնելու համար՝ տան մուտքի բանալիները պահանջելու նպատակով: Ստանալով մերժում՝ Բախշի Երիցյանն ապօրինաբար Արշավիր Բարսամյանին կյանքից զրկելու դիտավորությամբ մուրճի երկաթյա հատվածով հարվածներ է հասցրել Արշավիր Բարսամյանի դեմքին, ինչի հետևանքով վերջինս ընկել է հյուրասենյակի մահճակալին և օգնություն կանչելու նպատակով սկսել բղավել: Այնուհետև, Արշավիր Բարսամյանի կողմից դիմադրությունը կանխելու նպատակով Էլմիրա Երիցյանը գետնից վերցրել է պլաստմասե շշեր, մի քանի հարված հասցրել Արշավիր Բարսամյանի գլխին, ապա մարմնով ընկել է վերջինիս վրա, բռնել նրա ձեռքերը, իսկ

Բախշի Երիցյանը, թղթյա կտորներով փակելով Արշավիր Բարսամյանի շնչառական ուղիները, շարունակել է մուրճով բազմաթիվ հարվածներ հասցնել Արշավիր Բարսամյանի դեմքի շրջանին՝ պատճառելով կյանքի հետ անհամատեղելի բաց, բութ գանգուղեղային և պարանոցի՝ փակ, բութ վնասվածքներ ու սպանել նրան:

Այնուհետև, հանցագործության հետքերը թաքցնելու նպատակով դիակը բնակարանի նկուղ տեղափոխելու համար Բախշի Երիցյանը բռնել է Արշավիր Բարսամյանի դիակի ձախ ձեռքից, Ռաֆիկ Մկրտչյանը՝ աջ ձեռքից, իսկ Էլմիրա Երիցյանը՝ ոտքերից, միասին տարել են խոհանոց, սակայն չեն հասցրել թաքցնել, քանի որ հանցանքի կատարման պահին նկատվել և բռնվել են ոստիկանության աշխատակիցների կողմից» (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթեր 152-153):

5.1. Էլմիրա Բախշիի Երիցյանին ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն արարքի համար, որ նա *«(...) [Մ]եղադրյալ Բախշի Հովհաննեսի Երիցյանի հետ, նախնական համաձայնությամբ, խմբի կազմում ապօրինաբար դիտավորությամբ կյանքից զրկել է Արշավիր Արմենակի Բարսամյանին:*

Այսպես.

Էլմիրա Բախշիի Երիցյանը 2015 թվականի հունվարի 31-ին՝ ժամը 10:00-ին, ամուսնու՝ Բախշի Երիցյանի հետ, Հրազդան քաղաքից նստելով Ռաֆիկ Բագրատի Մկրտչյանի կողմից շահագործվող Գազ 31-105 մակնիշի 77SO677 հաշվառման համարանիշի ավտոմեքենան, վերջինիս հետ միասին գնացել է Երևան քաղաքի Մարգարյան փողոց, ավտոմեքենան կայանել 10-րդ շենքի մոտ և, իրենց բջջային հեռախոսները թողնելքով ավտոմեքենայի մեջ, երեքով շուրջ 800 մետր ոտքով քայլել են դեպի ֆուչիկի փողոցի 24-րդ շենքի 30-րդ բնակարան՝ նույն բնակարանի բնակիչ Արշավիր Արմենակի Բարսամյանի և ամուսնու միջև Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 120-րդ շենքի 21-րդ բնակարանի պատկանելիության հարցի շուրջ զրուցելու և տվյալ բնակարանում գտնվող չհրկիզվող պահարանից Բախշի Երիցյանին պատկանող ոսկյա զարդերը վերցնելու համար տան մուտքի բանալիները պահանջելու նպատակով:

Ստանալով մերժում՝ Բախշի Երիցյանն ապօրինաբար Արշավիր Բարսամյանին կյանքից զրկելու դիտավորությամբ մուրճի երկաթյա հատվածով հարվածներ է հասցրել Արշավիր Բարսամյանի դեմքին, ինչի հետևանքով վերջինս ընկել է հյուրասենյակի մահճակալին և օգնություն կանչելու նպատակով սկսել բղավել: Այնուհետև, Արշավիր Բարսամյանի կողմից դիմադրությունը կանխելու և ամուսնու հանցավոր մտադրությունն ավարտին հասցնելու նպատակով, Էլմիրա Երիցյանը գետնից վերցրել է շշեր, մի քանի հարված հասցրել Արշավիր Բարսամյանի գլխին, ապա մարմնով ընկել է վերջինիս վրա, բռնել նրա ձեռքերը, իսկ Բախշի Երիցյանը,

բղթյա կտորներով փակելով Արշավիր Բարսամյանի շնչառական ուղիները, շարունակել է մուրճով բազմաթիվ հարվածներ հասցնել Արշավիր Բարսամյանի դեմքի շրջանին՝ պատճառելով կյանքի հետ անհամատեղելի բաց, բութ գանգուղեղային և պարանոցի՝ փակ, բութ վնասվածքներ ու սպանել նրան:

Այնուհետև, հանցագործության հետքերը թաքցնելու նպատակով դիակը բնակարանի նկուղ տեղափոխելու համար Բախշի Երիցյանը բռնել է Արշավիր Բարսամյանի դիակի ձախ ձեռքից, Ռաֆիկ Սկրտչյանը՝ աջ ձեռքից, իսկ Էլմիրա Երիցյանը՝ ոտքերից, միասին տարել են խոհանոց, սակայն չեն հաջողել թաքցնել, քանի որ հանցանքի կատարման պահին նկատվել և բռնվել են ոստիկանության աշխատակիցների կողմից» (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթեր 173-174):

5.2. Ռաֆիկ Բագրատի Սկրտչյանին ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն արարքի համար, որ նա *«(…) Հրազդան քաղաքի բնակիչներ՝ Բախշի Երիցյանին և վերջինիս կնոջը՝ Էլմիրա Բախշիի Երիցյանին մատուցելով տաքսի ծառայության պատվեր, 2015 թվականի հունվարի 31-ին՝ ժամը 10:00-ին, իր կողմից օգտագործվող 31-105 մակնիշի 77SO677 համարանիշի ավտոմեքենայով վերջիններիս տարել է Երևան քաղաք և նրանց հետ միասին գնացել Ֆուչիկի փողոցի 24-րդ շենքի 30-րդ բնակարան, որտեղ նույն բնակարանի բնակիչ Արշավիր Արմենակի Բարսամյանի և Բախշի Հովհաննեսի Երիցյանի միջև զրույցի ժամանակ վիճաբանություն է սկսվել, որի արդյունքում Բախշի Երիցյանը սպանության դիտավորությամբ մուրճով հարվածներ է հասցրել Արշավիր Բարսամյանի գլխի և դեմքի տարբեր մասերին, ինչի հետևանքով վերջինս ընկել է մահճակալին և օգնություն կանչելու նպատակով սկսել է բղավել, որի ժամանակ Արշավիր Բարսամյանի կողմից հնարավոր դիմադրությունը կանխելու նպատակով Էլմիրա Երիցյանը մարմնով ընկել է վերջինիս վրա, բռնել նրան, իսկ Բախշի Երիցյանը, շարունակելով մուրճով հարվածներ հասցնել՝ ապօրինաբար Արշավիր Բարսամյանին դիտավորությամբ զրկել է կյանքից:*

Այնուհետև Ռաֆիկ Սկրտչյանը կատարել է հանցագործության հետքերի նախապես չխոստացված պարտակում, օգնել է Բախշի և Էլմիրա Երիցյաններին, բռնել է դիակի աջ ձեռքը՝ այն բնակարանի նկուղում թաքցնելու նպատակով, և վերջիններիս հետ դիակը տեղափոխել է խոհանոց, սակայն իրենց կամքից անկախ հանգամանքներում հանցագործության հետքերը չեն կարողացել թաքցնել, քանի որ հանցանքի կատարման պահին բռնվել են ոստիկանության աշխատակիցների կողմից» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 183-184):

6. Առաջին ատյանի դատարանը դատավճռում փաստել է. *«[Դ]ատարանը գտնում է, որ արժանահավատ են ամբաստանյալ Բ.Երիցյանի դատաքննական ցուցմունքները, մասնավորապես այն, որ մուրճով Արշավիր Բարսամյանի դեմքին և գլխին հարվածողը եղել է ինքը, որ իր ձեռքի թղթերը*

մտցրել է նրա բերանը, որպեսզի արյունը բերանից չհոսի, այնուհետև, երբ փորձել է նրա դիակը տեղափոխել խոհանոց, իրեն այդ հարցում Է.Երիցյանը և Ռ.Մկրտչյանը չեն օգնել, բացի այդ, ինքն իր այդ գործողությունները չի կարող պատճառաբանել, քանի որ չի հասկացել, թե ինչ է կատարել, ինչպես նաև չի հասկացել իր գործողությունները: Դատարանի սույն հետևությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Էլմիրա Երիցյանը նույնպես իր դատաքննական ցուցմունքներով հաստատել է այն տեղեկությունը, որ ինքը Բախշի Երիցյանին չի օգնել դիակը տեղափոխելու հարցում, այլ Բախշի Երիցյանը միայնակ գրկել է դիակը՝ փորձելով այն տեղափոխել խոհանոց, ավելին՝ նա փորձել է անգամ Բախշի Երիցյանին թույլ չտալ այդ անել: Բացի այդ, վերը նշված հանգամանքների արժանահավատության վերաբերյալ դատարանի հետևությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ Բախշի Երիցյանը քննչական փորձարարության ժամանակ նույնպես հայտնել է, որ Արշավիր Բարսամյանի դիակը խոհանոց միայնակ է տեղափոխել, առանց որևէ մեկի օգնության:

Ինչ վերաբերում է Է.Երիցյանի դատաքննական ցուցմունքներին, ապա դրանք նույնպես արժանահավատ են, քանի որ ի սկզբանե Է.Երիցյանը իրեն առաջադրված մեղադրանքում մեղավոր չճանաչելով տվել է իրականությանը համապատասխանող ցուցմունքներ, մասնավորապես, որ ինքը, մինչ Արշավիր Բարսամյանի բնակարան հասնելը, որևէ խոսակցություն չի ունեցել Բախշի Երիցյանի հետ, որ ինքը, երբ Արշավիր Բարսամյանի հարվածից հետո Բախշի Երիցյանն ընկել է, փորձել է նրան օգնել բարձրանալ գետնից, ինքը Բախշի Երիցյանին չի օգնել դիակը խոհանոց տեղափոխելու հարցում: Վերոնշյալի վերաբերյալ դատարանի ներքին համոզմունքը պայմանավորված է այն հանգամանքով, որ դեպքին անմիջապես մասնակցություն ունեցած Բախշի Երիցյանն իր ցուցմունքներով նույնպես հաստատել է Էլմիրա Երիցյանի հայտնած վերոնշյալ հանգամանքները, փաստերը, բացի այդ, դատարանը, Էլմիրա Երիցյանի ցուցմունքները համադրելով քրեական գործում առկա մյուս ապացույցների հետ, դրանց վերլուծության և գնահատման արդյունքում ներքին համոզմամբ եկել է եզրահանգման, որ Էլմիրա Երիցյանի ցուցմունքներն արժանահավատ են և համապատասխանում են իրականությանը: Ավելին՝ դատարանի նման հետևությունը, բացի վերոգրյալից, պայմանավորված է այն հանգամանքով, որ քրեական գործով ձեռք չի բերվել որևէ ապացույց, որը կարող է հերքել Է.Երիցյանի ցուցմունքերի արժանահավատությունը:

(...)

Դատարանը վերլուծության է ենթարկել Ռ.Մկրտչյանի նախաքննական և դատաքննական ցուցմունքները (...) դրանք համադրելով քրեական գործի փաստական հանգամանքների հետ (...) գտնում է, որ Ռ.Մկրտչյանի ինչպես նախաքննական, այնպես էլ դատաքննական ցուցմունքներն արժա-

նահավատ չեն, հավատ չեն ներշնչում, իսկ դատարանի նման հետևությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Ռ.Մկրտչյանը բազմաթիվ անգամներ նախաքննության ընթացքում տվել է միմյանց հակասական ցուցմունքներ, ավելին՝ հենց Ռ.Մկրտչյանի կողմից դատաքննության ընթացքում ցուցմունք տալու ժամանակ հերքվել է այն փաստը, որ ինքը հայտնել է, թե իբր Է.Երիցյանն օգնել է Բ.Երիցյանին Արշավիր Բարսամյանի սպանության հարցում՝ պատճառաբանելով, որ ինքն ի նկատի է ունեցել օգնել ասելով, որ Է.Երիցյանն օգնել է Բ.Երիցյանին բարձրանալ գետնից՝ բռնելով նրա ձեռքերից, իսկ ցուցմունքների միջև առկա հակասությունն էլ պատճառաբանել է շփոթված լինելով: (...) դատարանը հարկ է համարում նշել, որ նրա ցուցմունքներն անարժանահավատ համարելու համար հիմք են հանդիսացել, (...) նաև այն, որ վերջինս տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը մասնավորապես դրսևորվում է ուղեղի արյան շրջանառության քրոնիկ խանգարումներով (...): Հետևաբար Ռ.Մկրտչյանի մոտ առկա հիվանդությունն իր հերթին զրկել է նրան նախաքննության ընթացքում բազմիցս, իսկ հետագայում դատաքննության ընթացքում ցուցմունքներ տալու ժամանակ հանգամանքները վերլուծել և վերարտադրել ըստ արժանվույնս:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ Գ.Պողոսյանը, Ա.Այվազյանը և Ա.Հակոբյանը հայտնել են, որ իրենք նկատել են պատուհանից, թե ինչպես Է.Երիցյանը, Բ.Երիցյանը և Ռ.Մկրտչյանն Արշավիր Բարսամյանի դիակը բռնած տեղափոխել են խոհանոց, դատարանը գտնում է, որ վկաների ցուցմունքներն այս մասով հավատ չեն ներշնչում, իսկ դատարանի այս հետևությունը պայմանավորված է նրանց ցուցմունքների միջև առկա հակասություններով, այսինքն՝ վկաները, միաժամանակ լինելով դեպքի վայրում, նայելով պատուհանից ներս, իբր տեսել են Բ.Երիցյանին, Է.Երիցյանին, Ռ.Մկրտչյանին ինչ-որ գործողություններ կատարելիս, իսկ հետագայում, որպես վկա հարցաքննվելիս, դեպքի հանգամանքները նկարագրելու ընթացքում տվել են միմյանց հակասող ցուցմունքներ, մասնավորապես վկա Գ.Պողոսյանը հայտնել է, որ Արշավիր Բարսամյանի պատուհանը կիսով չափ թերթերով փակված է եղել, չի կարող հիշել՝ դիակը գետնին դրված է եղել թե ոչ, նախաքննության ժամանակ հայտնել է, որ դիակի դեմքը շորով ծածկել է Բ.Երիցյանը, իսկ դատաքննության ժամանակ հայտնել է, որ այդ գործողությունը կատարել է Է.Երիցյանը, սակայն ավելի ուշ ավելացրեց, որ ներկայումս որոշ հանգամանքեր չի հիշում, Է.Երիցյանի և Ռ.Մկրտչյանի վրա արյան հետքեր չի նկատել, վկա Ա.Այվազյանը չի տեսել, որ դիակը քարշ տան, քանի որ գետնին փռված թերթերը կկուտակվեին, ինչպես նաև հատկանշական է այն, որ ինքը խոհանոցում նկուղ չի նկատել պատուհանից նայելիս, Է.Երիցյանի և Ռ.Մկրտչյանի վրա արյան հետքեր չի նկատել, իսկ Ա.Հակոբյանը հայտնել է, որ պատուհանից նայելիս նկուղ նկատել է, այն էլ դուռը բաց վիճակում, ինչպես նաև Է.Երիցյանի և Ռ.Մկրտչյանի վրա արյան

հետքեր չի նկատել: Դատարանը հարկ է համարում նշել նաև, որ վկաները դատաքննության ընթացքում հայտնել են, որ Է.Երիցյանի, Ռ.Մկրտչյանի վրա արյան հետքեր չեն նկատել, այնինչ, նախաքննության ընթացքում իրենց իսկ կողմից տրված զեկուցագրերում մանրամասն նկարագրելով դեպքը, հայտնել են նաև, որ Է.Երիցյանի, Ռ.Մկրտչյանի վրա նկատել են արյան հետքեր: Սույն հակասությունը, այսինքն՝ Է.Երիցյանի և Ռ.Մկրտչյանի վրա արյան հետքեր դեպքից հենց անմիջապես հետո նկատելը, սակայն ավելի ուշ՝ դեպքից որոշ ժամանակ անց, արդեն որպես վկա հարցաքննվելիս, այդ փաստը հերքելն իրենց իսկ ցուցմունքներով, դատարանին ևս հիմք են տալիս ներքին համոզմամբ գալու եզրահանգման, որ վերոնշյալ վկաների ցուցմունքները՝ Բ.Երիցյանի, Է.Երիցյանի և Ռ.Մկրտչյանի կողմից Արշավիր Բարսամյանի դիակը խոհանոց տեղափոխելու մասով, հավատ չեն ներշնչում: Բացի այդ, դատարանը հարկ է համարում նշել, որ պատուհանները թերթերով կիսով չափ փակված լինելու հանգամանքն իր հերթին ևս խոչընդոտ կարող էր հանդիսանալ վկաներ Գ.Պողոսյանի, Ա.Այվազյանի, Ա.Հակոբյանի կողմից բնակարանի ներսը պարզ նկատելի աստիճանի տեսնելու և հետագայում Բ.Երիցյանի, Է.Երիցյանի և Ռ.Մկրտչյանի գործողությունները մանրամասն նկարագրելու համար: (...) Հետևաբար վերոնշյալ բոլոր էական հակասություններն իրենց համակցությամբ դատարանին հիմք են տալիս ներքին համոզմամբ գալու հետևության, որ վկաներ Գ.Պողոսյանի, Ա.Այվազյանի և Ա.Հակոբյանի ցուցմունքները, որ նկատել են Բ.Երիցյանին, Է.Երիցյանին, Ռ.Մկրտչյանին Արշավիր Բարսամյանի դիակը խոհանոց տեղափոխելիս՝ նկարագրելով նրանցից յուրաքանչյուրի գործողությունները, անարժանահավատ են» (տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 7-րդ, թերթեր 164-165):

6.1. Դատավճռի՝ դատարանի իրավական վերլուծությունների հատվածում Առաջին ատյանի դատարանը եզրահանգել է. *«(...) [Ս]ույն գործով ձեռք չի բերվել վերաբերելի, թույլատրելի և հավաստի ապացույցների այնպիսի բավարար համակցություն, որոնց հիման վրա հնարավոր կլինի հիմնավոր համարել սույն գործի ճիշտ լուծման համար առանցքային նշանակություն ունեցող հանգամանքները, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով նախատեսված հանցանքի կատարմանն Է.Երիցյանի մասնակցությունը: Այսինքն՝ սույն գործով ձեռք չի բերվել ապացույցների անհրաժեշտ և բավարար համակցություն, որպեսզի ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով նախատեսված հանցանքին Է.Երիցյանի մասնակցության վերաբերյալ յուրաքանչյուր փաստական հանգամանք դատարանը հաստատված համարի այն խորությամբ և աստիճանի, որ կասկած չմնա դրանց ապացուցվածության վերաբերյալ և հերքի պաշտպանական կողմի՝ Է.Երիցյանի պաշտպանության համար բերվող փաստարկները, հետևաբար Է.Երիցյանի մեղադրանքի հիմ-*

քում դրված փաստական հանգամանքների ապացուցվածությունը խիստ կասկած է հարուցում:

Հետևաբար առկա է չփարատված կասկած Է.Երիցյանի կողմից իրեն մեղսագրված արարքը կատարելու հանգամանքների, մասնավորապես, որ նախնական համաձայնության գալով Բ.Երիցյանի հետ, օգնել է նրան սպանել Արշավիր Բարսամյանին, ինչը դրսևորվել է Է.Երիցյանի կողմից Արշավիր Բարսամյանի վրա ընկնելով, նրա ձեռքերը պահելով՝ դիմադրությունը կոտրելու համար, այնուհետև օգնել է Բ.Երիցյանին Արշավիր Բարսամյանի դիակը խոհանոց տեղափոխելու համար, որոնք պետք է մեկնաբանվեն հօգուտ նրա:

(...) Բացի այդ, դատարանը հարկ է համարում նշել, որ նախաքննական մարմնի կողմից, բացի Ռ.Մկրտչյանի նախաքննական ցուցմունքներից, ձեռք չեն բերվել այլ ապացույցներ, որոնք կարող են փաստել Է.Երիցյանի կողմից իրեն մեղսագրված արարքը կատարելու հանգամանքը և հնարավորություն տան դատարանին դրա վերաբերյալ գալու արժանահավատ և հավաստի հետևության: Ավելին՝ նրան առաջադրված մեղադրանքի զանգվածում առկա ապացույցների, մասնավորապես՝ դատակենսաբանական-դատահետքաբանական համալիր փորձաքննության թիվ 15-0328 եզրակացության համաձայն՝ էլմիրա Երիցյանի աջ և ձախ ձեռքերի եղունգների կտրվածքների տակ, ինչպես նաև Արշավիր Բարսամյանի վարտիքից կտրված կասկածելի հետքերում «հեմոֆան» ախտորոշիչ ժապավենի փորձով արյան առկայություն չի հայտնաբերվել, էլմիրա Երիցյանի հագուստների մանրակրիտ զննությամբ արյան կասկածելի հետքեր չեն հայտնաբերվել, փորձաքննության ներկայացված էլմիրա Երիցյանից ստացված եղունգների նմուշներում որևէ գործվածքի մանրաթելեր չկան, փորձաքննության ներկայացված էլմիրա Երիցյանի հագուստների հետազոտությամբ վնասվածքներ չեն հայտնաբերվել, փորձագետի թիվ 169 Ք-15 եզրակացության համաձայն՝ փորձաքննությանը տրամադրված Արշավիր Բարսամյանի հագուստների վրա հետագա համեմատական հետազոտության համար պիտանի, ինչպես նաև էլմիրա Երիցյանի հագուստների գործվածքների կազմի մեջ մտնող միկրոմանրաթելեր չեն հայտնաբերվել, փորձաքննությանը տրամադրված էլմիրա Երիցյանի հագուստների վրա հետագա համեմատական հետազոտության համար պիտանի, ինչպես նաև Արշավիր Բարսամյանի հագուստների գործվածքի կազմի մեջ մտնող միկրոմանրաթելեր չեն հայտնաբերվել, առկայությունը ոչ միայն չեն հաստատում, այլ նաև հերքում են էլմիրա Երիցյանի մասնակցությունը կատարված հանցագործությանը, ուստի դրանց վերլուծության, գնահատման և դրանք սույն գործի փաստական հանգամանքերի հետ համադրման արդյունքում դատարանը գալիս է արժանահավատ և հիմնավոր հետևության, որ սույն քրեական գործով ձեռք չի բերվել

որևէ ապացույց, որը կարող է հիմնավորել Էլմիրա Երիցյանի մեղավորությունը կատարված հանցագործությանը:

Հետևաբար Դատարանը գտնում է, որ Է.Երիցյանի մեղքը ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով նախատեսված արարքում ապացուցված չէ, ինչպես նաև սպառվել են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները, ուստի Է.Երիցյանի նկատմամբ քրեական հետապնդումը պետք է դադարեցնել և նրան պետք է արդարացնել՝ կատարված հանցագործությանը նրա մասնակցությունն ապացուցված չլինելու պատճառաբանությամբ:

(...)

Բացի այդ, սույն գործով ձեռք չի բերվել վերաբերելի, թույլատրելի և հավաստի ապացույցների այնպիսի բավարար համակցություն, որոնց հիման վրա հնարավոր կլինի հիմնավոր համարել սույն գործի ճիշտ լուծման համար առանցքային նշանակություն ունեցող հանգամանքները, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի կատարմանը Ռ.Մկրտչյանի մասնակցությունը: Այսինքն՝ սույն գործով ձեռք չի բերվել ապացույցների անհրաժեշտ և բավարար համակցություն, որպեսզի ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքին Ռ.Մկրտչյանի մասնակցության վերաբերյալ յուրաքանչյուր փաստական հանգամանք դատարանը հաստատված համարի այն խորությամբ և աստիճանի, որ կասկած չմնա դրանց ապացուցվածության վերաբերյալ և հերքի պաշտպանական կողմի՝ Ռ.Մկրտչյանի պաշտպանության համար բերվող փաստարկները, հետևաբար Ռ.Մկրտչյանի մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքերի ապացուցվածությունը խիստ կասկած է հարուցում:

Հետևաբար առկա է չփարատված կասկած Ռ.Մկրտչյանի կողմից իրեն մեղսագրված արարքը կատարելու հանգամանքների, մասնավորապես, որ օգնել է Բ.Երիցյանին Արշավիր Բարսամյանի դիակը խոհանոց տեղափոխելու համար, որոնք պետք է մեկնաբանվեն հօգուտ նրա:

Դատարանի վերոնշյալ հետևությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Ռ.Մկրտչյանի մեղադրանքի հիմքում դրված առանցքային ապացույցը վկաներ Գ.Պողոսյանի, Ա.Այվազյանի և Ա.Հակոբյանի ցուցմունքներն են, իսկ ինչպես արդեն դատարանն իր վերոնշյալ հիմնավորմամբ նշել է՝ հաշվի առնելով դրանցում առկա էական հակասությունները, դրանք չեն կարող հիմք ընդունվել և դրվել Ռ.Մկրտչյանին առաջադրված մեղադրանքի հիմքում, ավելին՝ նրանց ցուցմունքների միջև էական հակասությունները դատարանին թույլ չեն տալիս ներքին համոզմամբ գալու արժանահավատ հետևության, որ այդ ցուցմունքներն արժանահավատ են և հավաստի:

Բացի այդ, դատարանը հարկ է համարում նշել, որ նախաքննական մարմնի կողմից, բացի Գ.Պողոսյանի, Ա.Այվազյանի և Ա.Հակոբյանի ցուց-

մունքներից, ձեռք չեն բերվել այլ ապացույցներ, որոնք կարող են փաստել Ռ.Մկրտչյանի կողմից իրեն մեղսագրված արարքը կատարելու հանգամանքը և հնարավորություն տան դատարանին դրա վերաբերյալ գալու արժանահավատ և հավաստի հետևության: Ավելին՝ նրան առաջադրված մեղադրանքի զանգվածում առկա ապացույցների, մասնավորապես՝ դատաբժշկական փորձագետի թիվ 211 եզրակացության, համաձայն՝ Ռաֆիկ Բագրատի Մկրտչյանի մոտ փորձաքննության պահին վաղեմությամբ դեպքին համապատասխանող մարմնական վնասվածքների օբյեկտիվ հատկանիշներ չեն հայտնաբերվել, դատակենսաբանական դատահետաքրքրական համալիր թիվ 15-0328 եզրակացության համաձայն՝ փորձաքննության ներկայացված Ռաֆիկ Մկրտչյանի կապույտ սվիտրի, աջ կոշիկի վրա մանրակրկիտ զննությամբ արյան կասկածելի հետքեր չեն հայտնաբերվել, փորձաքննության ներկայացված Ռաֆիկ Մկրտչյանից ստացված եղունգների ցմուշներում որևէ գործվածքի մանրաթելեր չկան, փորձաքննության ներկայացված Ռաֆիկ Մկրտչյանի բաճկոնի վրա առկա բացակայող կոճակը պոկվել է մեխանիկական ճգվածության հետևանքով քաշել-պոկելու արդյունքում, Ռաֆիկ Մկրտչյանի մյուս հագուստների հետազոտությամբ վնասվածքներ չեն հայտնաբերվել, առկայությունը ոչ միայն չեն հաստատում, այլ նաև հերքում են Ռաֆիկ Մկրտչյանի մասնակցությունը կատարված հանցագործությանը, ուստի դրանց վերլուծության, գնահատման և դրանք սույն գործի փաստական հանգամանքերի հետ համադրման արդյունքում դատարանը գալիս է արժանահավատ և հիմնավոր հետևության, որ սույն քրեական գործով ձեռք չի բերվել որևէ ապացույց, որը կարող է հիմնավորել Ռաֆիկ Մկրտչյանի մեղավորությունը կատարված հանցագործությանը:

Հետևաբար դատարանը գտնում է, որ Ռ.Մկրտչյանի մեղքը ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքում ապացուցված չէ, ինչպես նաև սպառվել են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները, ուստի Ռ.Մկրտչյանի նկատմամբ քրեական հետապնդումը պետք է դադարեցնել, և նրան պետք է արդարացնել՝ կատարված հանցագործությանը նրա մասնակցությունն ապացուցված չլինելու պատճառաբանությամբ» (տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 7-րդ, թերթեր 138-186):

7. Վերաքննիչ դատարանը, մեղադրողի բողոքի հիման վրա ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի դատավճռի օրինականությունը և հիմնավորվածությունը, այն թողել է օրինական ուժի մեջ:

8. 2017 թվականի նոյեմբերի 1-ին Վճռաբեկ դատարանում ստացվել է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի պետի հատուկ հաղորդագրությունն այն մասին, որ 2017 թվականի հոկտեմբերի 27-ին՝ ժամը 16:00-ի սահմաններում, ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկում պահվող Բախշի Երիցյանը խցում կախվելու միջոցով ինքնասպան է եղել:

2017 թվականի նոյեմբերի 8-ին Վճռաբեկ դատարանում ստացվել է ամբաստանյալ Ք.Երիցյանի մահվան վերաբերյալ ակտի գրանցման պատճենը:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները սույն գործով թույլ են տվել նյութական և դատավարական նորմերի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

Ի հիմնավորում վերոհիշյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ ինչպես Առաջին ատյանի դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը կայացրել են չպատճառաբանված դատական ակտեր, ինչի արդյունքում առանձնապես ծանր հանցանք կատարած անձը պատասխանատվության է ենթարկվել միջին ծանրության հանցագործության համար, իսկ առանձնապես ծանր և միջին ծանրության հանցանքներ կատարած անձինք անհիմն կերպով ազատվել են քրեական պատասխանատվությունից: Այսպես՝ ստորադաս դատարանը, ամբաստանյալ Ք.Երիցյանին ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով առաջադրված մեղադրանքը ՀՀ քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասով վերաորակելով, հաշվի չի առել և պատշաճ գնահատման չի ենթարկել գործում առկա ապացուցողական ողջ զանգվածը, բացի այդ, հետազոտված ապացույցներին կամայական և իրարամերժ մեկնաբանություններ է տվել:

Բողոքաբերը վիճարկում է նաև դատարանի կողմից նշանակված կրկնակի դատահոգեբուժական-դատահոգեբանական ստացիոնար փորձաքննության իրավաչափությունը՝ փաստելով, որ այն նշանակվել է առանց դատական նիստ հրավիրելու և խորհրդակցական սենյակից դուրս՝ խախտելով ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 313-րդ հոդվածը, այնպես էլ կողմերի՝ իրենց իրավունքների իրացման հնարավորությունը:

9.1. Բողոքի հեղինակը, վերլուծության ենթարկելով քրեական գործով ձեռք բերված ապացույցները, գտել է, որ ամբաստանյալ Է.Երիցյանին ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և ամբաստանյալ Ռ.Մկրտչյանին ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքներում արդարացնելով՝ ստորադաս դատարանները թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նորմերի խախտումներ: Բացի այդ, Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների մեջբերմամբ բողոք բերած անձը եզրահանգել է, որ սույն գործով կայացված դատական ակտերը պատճառաբանված չեն, ստորադաս դատարանները քրեական գործով հետազոտված ապացույցներին տվել են կամայական գնահատական:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հուլիսի 29-ի դատավճիռը, այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. առկա՞ է արդյոք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով նախատեսված՝ քրեական գործի վարույթը բացառող հանգամանք:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քրեական գործ չի կարող հարուցվել, և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝*

(…)

10) անձը մահացել է, բացառությամբ այն դեպքերի, երբ գործի վարույթն անհրաժեշտ է մահացածի իրավունքների վերականգնման համար կամ ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար.

(…)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. *«Դատարանը, հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, լուծում է ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված հիմքերի կիրառմանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Արամ Սարգսյանի* վերաբերյալ գործով որոշման մեջ՝ արձանագրելով հետևյալը. *«(…) [Թ]եև (…) [ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված] հիմքերն իրենց բովանդակությամբ, կիրառման իրավական հետևանքներով տարբեր են, այնուամենայնիվ, բոլորն էլ կրում են իմպերատիվ բնույթ, և դրանցից գեթ մեկի առկայությունն արդեն իսկ բացառում է քրեական գործի վարույթը քրեական դատավարության ցանկացած փուլում: Այլ կերպ, եթե վարույթ իրականացնող մարմինը հայտնաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված հանգամանքներից որևէ մեկը, ապա գործի վարույթը ենթակա է կարճման»* (տե՛ս Ա.Սարգսյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0503/06/10 որոշման 20-րդ կետը):

13. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն *Օգսեն Մկրտչյանի* վերաբերյալ կայացված որոշման շրջանակներում արձանագրել է. *«(…) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով սահմանված հիմքի՝ քրեական հետապնդման ենթարկվող անձի մահվան դեպքում, այդ անձի նկատմամբ քրեական հետապնդումը պետք է դադարեցվի, իսկ քրեական գործի վարույթը այդ անձի մասով՝ կարճվի:*

Նշվածից բացառություն կարող է լինել միայն այն դեպքերում, երբ տվյալ գործով վարույթի իրականացումն անհրաժեշտ է.

ա) մահացածի իրավունքների վերականգնման համար,

բ) այլ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար:

Հետևաբար, եթե բացառություն կազմող վերոգրյալ անհրաժեշտությունը բացակայում է, ապա անձի մահվան դեպքում նրա նկատմամբ քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, իսկ քրեական գործի վարույթը՝ կարճման, անկախ նրանից, թե գործը քննության որ փուլում է գտնվում» (տե՛ս Օ.Մկրտչյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԱՐԴ/0150/01/12 որոշման 11-րդ կետը):

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը ներկայացրել է վճռաբեկ բողոք՝ փաստարկելով, որ ամբաստանյալ Բ.Երիցյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասով վերաորակելը չի բխում գործում առկա ապացույցներից (տե՛ս սույն որոշման 4-րդ և 9-րդ կետերը): Վճռաբեկ դատարանը 2017 թվականի հուլիսի 6-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ (տե՛ս սույն որոշման 4-րդ կետը):

2017 թվականի նոյեմբերի 1-ին Վճռաբեկ դատարանում ստացվել է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի պետի հատուկ հաղորդագրությունն առ այն, որ 2017 թվականի հոկտեմբերի 27-ին՝ ժամը 16:00-ի սահմաններում, ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկում պահվող Բ.Երիցյանը խցում կախվելու միջոցով ինքնասպան է եղել: 2017 թվականի նոյեմբերի 8-ին Վճռաբեկ դատարանում ստացվել է ամբաստանյալ Բ.Երիցյանի մահվան վերաբերյալ ակտի գրանցման պատճենը (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

15. Սույն որոշման 12-13-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո գնահատելով նախորդ կետերում մեջբերված փաստական հանգամանքները, այն է՝ ամբաստանյալ Բ.Երիցյանի մահվան փաստը, ինչպես նաև այն, որ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի բողոքը բերված չէ ամբաստանյալի իրավունքների վերականգնման նպատակով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով սահման-

ված՝ Բ.Երիցյանի նկատմամբ քրեական հետապնդումը, ինչպես նաև նրա վերաբերյալ քրեական գործի վարույթը բացառող հանգամանք: Վերոգրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բացակայում է մահացածի իրավունքների վերականգնման նպատակով գործի վարույթը շարունակելու անհրաժեշտությունը, ինչպես նաև առկա չէ այլ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու անհրաժեշտություն:

Հետևաբար Բ.Երիցյանի մասով Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի որոշումը պետք է բեկանել, նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել և քրեական գործի վարույթը կարճել ամբաստանյալի մահվան հիմքով:

Վերոնշյալի պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավասու չէ անդրադառնալու բողոքաբերի՝ սույն որոշման 9-րդ կետում մեջբերված փաստարկներին:

16. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված և պատճառաբանվա՞ծ են արդյոք ամբաստանյալ Է.Երիցյանին ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և ամբաստանյալ Ռ.Մկրտչյանին ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքներում արդարացնելու վերաբերյալ ստորադաս դատարանների դատական ակտերը:

17. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործության մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 3. Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:*

4. Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի: (…)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:*

2. Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման (...) կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու արդյունքում, եթե սպառված են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները»:*

Մեջբերված նորմերը Վճռաբեկ դատարանը բազմիցս վերլուծության է ենթարկել իր նախադեպային որոշումների շրջանակներում և իրավական դիրքորոշում ձևավորել առ այն, որ մարդու անմեղությունը քրեական դատավարության կարևորագույն կանխավարկածներից է: Հանցանք կատարելու մեջ անձի մեղավորությունը հաստատված համարելը ոչ այլ ինչ է, քան անմեղության կանխավարկածի հաղթահարում: Միևնույն ժամանակ անձին դատապարտելու համար համարժեք ապացույցների բավարար համակցության բացակայությունը նշանակում է, որ անձի անմեղության կանխավարկածը հաղթահարված չէ: Այլ խոսքով՝ քրեական դատավարության ընթացքում չապացուցված մեղավորությունը հավասարազոր է ապացուցված անմեղության:

Քրեական դատավարությունում մեղքի հարցը լուծելիս որպես ապացույցների բավարարության շեմ պետք է գործի «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշը: Ընդ որում, «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշ ասելով, պետք է հասկանալ փաստական տվյալների (ապացույցների) այնպիսի համակցություն, որը **բացառում է հակառակի ողջամիտ հավանականությունը**: Վերոգրյալը չի նշանակում, որ հանցանք գործելու մեջ անձի մեղավորությունն ընդհանրապես չի կարող առաջացնել որևէ կասկած, սակայն այդպիսի կասկածի հավանականության դեպքում դրա աստիճանը պետք է լինի աննշան (խիստ ցածր): Այլ խոսքով՝ մեղադրանքը կազմող յուրաքանչյուր փաստական հանգամանք պետք է հիմնավորվի ապացույցների այնպիսի ծավալով, որը կբացառի դրա ապացուցվածության վերաբերյալ **ցանկացած ողջամիտ կասկած** *(տե՛ս Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 29-30-րդ և 33-րդ կետերը)*:

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Է.Երիցյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, իսկ ամբաստանյալ Ռ.Մկրտչյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածի 1-ին մասով (տե՛ս սույն որոշման 1-ին, 5.1-5.2-րդ կետերը):

Առաջին ատյանի դատարանը, գնահատելով գործում առկա ապացույցները, եզրահանգել է, որ գործով ձեռք չի բերվել վերաբերելի, թույլատրելի և հավաստի ապացույցների այնպիսի բավարար համակցություն, որոնց հիման վրա հնարավոր կլինի հիմնավոր համարել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով նախատեսված հանցանքի կատարմանը Է.Երիցյանի մասնակցությունը և ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի կատարմանը Ռ.Մկրտչյանի մասնակցությունը: Հետևաբար առկա է չփարատված կասկած Է.Երիցյանին և Ռ.Մկրտչյանին մեղսագրված արարքը կատարելու հանգամանքների վերաբերյալ, ինչն էլ պետք է մեկնաբանվի հօգուտ նրանց: Արդյունքում Առաջին ատյանի դատարանը ճանաչել և հռչակել է Է.Երիցյանի և Ռ.Մկրտչյանի անմեղությունը նրանց առաջադրված մեղադրանքներում (տե՛ս սույն որոշման 6-6.1-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը, դատական ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը, այն թողել է օրինական ուժի մեջ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

19. Սույն գործի փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 17-րդ կետում շարադրված նորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում իրականացնելով ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, յուրաքանչյուր ապացույց գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, մասնավորապես՝ համակարգված վերլուծության ենթարկելով ամբաստանյալներ Բ.Երիցյանի, Է.Երիցյանի և Ռ.Մկրտչյանի, վկաներ Գ.Պողոսյանի, Ա.Այվազյանի և Ա.Հակոբյանի ցուցմունքները, դատակենսաբանական-դատահետքաբանական համալիր փորձաքննության թիվ 15-0328 եզրակացությունը, ամբաստանյալներ Է.Երիցյանի և Ռ.Մկրտչյանի անմեղության վերաբերյալ հանգել է ճիշտ հետևության (տե՛ս սույն որոշման 6-6.1-րդ կետերը):

Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը, չփարատված կասկածները մեկնաբանելով հօգուտ ամբաստանյալներ Է.Երիցյանի և Ռ.Մկրտչյանի, վերջիններիս անմեղության հարցում եկել է հիմնավոր եզրահանգման: Այլ կերպ՝ Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, իսկ Վերաքննիչ դատարանը, ստուգելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը, իրավացիորեն այն թողել է անփոփոխ:

20. Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Է.Երիցյանին ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ

հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և ամբաստանյալ Ռ.Սկրտչյանին ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքներում արդարացնելու վերաբերյալ ստորադաս դատարանների դատական ակտերը հիմնավորված և պատճառաբանված են:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալներ Էլմիրա Բախշիի Երիցյանի և Ռաֆիկ Բագրատի Սկրտչյանի մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Ամբաստանյալ Բախշի Հովհաննեսի Երիցյանի մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի որոշումը բեկանել՝ նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել և քրեական գործի վարույթը կարճել Բախշի Երիցյանի մահվան կապակցությամբ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

21.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴ-1/0006/11/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
	Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
քարտուղարությամբ՝	Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դիմողի ներկայացուցիչ	Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

2017 թվականի նոյեմբերի 15-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 4-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. Հետաքննության մարմնի՝ 2014 թվականի հոկտեմբերի 25-ի որոշմամբ Սամվել Գրիգյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ Ռուբեն Տոնականյանի գործողություններում հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ:

Արմավիրի մարզի դատախազի՝ 2014 թվականի նոյեմբերի 7-ի որոշմամբ հետաքննության մարմնի՝ 2014 թվականի հոկտեմբերի 25-ի որոշման դեմ բերված Ս.Գրիգյանի բողոքը մերժվել է:

Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 29-ի որոշմամբ Ս.Գրիգյանի բողոքը բավարարվել է, իսկ վիճարկվող որոշումը՝ վերացվել, և Արմավիրի մարզի դատախազի՝ 2015 թվականի մարտի 20-ի որոշմամբ հարուցվել է թիվ 57200315 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի սեպտեմբերի 4-ի որոշմամբ Արսեն Գրիգյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 57120715 քրեական գործը և միացվել թիվ 57200315 քրեական գործին:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հոկտեմբերի 26-ի որոշմամբ Գոհար Խաչատրյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 57120715 քրեական գործը և միացվել թիվ 57200315 քրեական գործին:

1.1. 2016 թվականի փետրվարի 20-ին նախաքննության մարմինը որոշում է կայացրել Գոհար Խաչատրյանի հաղորդման դրվագով Ռ.Տոնականյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդում չհրականացնել՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով, Գոհար Խաչատրյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածով քրեական հետապնդում չհրականացնել՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով, Ռ.Տոնականյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով սկսված քրեական հետապնդումը դադարեցնել, որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը վերացնել և քրեական գործով վարույթը կարճել՝ հանցակազմի բացակայության հիմքով, Ռ.Տոնականյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով քրեական հետապնդում չհրականացնել՝ հանցակազմի բացակայության հիմքով:

Արմավիրի մարզի դատախազի՝ 2016 թվականի մարտի 17-ի որոշմամբ նախաքննության մարմնի՝ 2016 թվականի փետրվարի 20-ի որոշման դեմ բերված բողոքն անհիմն լինելու պատճառաբանությամբ մերժվել է:

Նախաքննության մարմնի վերոհիշյալ որոշման դեմ 2016 թվականի ապրիլի 14-ին Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան դիմում-բողոքներ են ներկայացրել Գոհար Խաչատրյանի ներկայացուցիչ Գ.Հովհաննիսյանը, Արսեն Գրիգյանի ներկայացուցիչ Կ.Ղոնյանը և Սամվել Գրիգյանի ներկայացուցիչ Գ.Գրիգորյանը:

2. Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2016 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ բողոքները բավարարվել են, իսկ նախաքննության մարմնի՝ 2016 թվականի փետրվարի 20-ի և Արմավիրի մարզի դատախազի՝ 2016 թվականի մարտի 17-ի որոշումները՝ վերացվել:

3. Դատախազի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի ապրիլի 4-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 26-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 4-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը բերել է վճռաբեկ բողոք, ինչը Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 27-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Առաջին ատյանի դատարանը, վերացնելով նախաքննության մարմնի՝ 2016 թվականի փետրվարի 20-ի և Արմավիրի մարզի դատախազի՝ 2016 թվականի մարտի 17-ի որոշումները, իր կողմից կայացված դատական ակտի շրջանակներում փաստել է.*«(...) Նախաքննության մարմնի կողմից քրեական գործի նախաքննությունն իրականացվել է մի շարք խախտումներով, որոնք հիմք են վիճահարույց որոշումները վերացնելու համար:*

Նախաքննության մարմնի կողմից խախտվել են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 25 հոդվածի 2-րդ կետի, 125, 126, 127 հոդվածների և այլ նորմերի պահանջները:

Բողոքաբեր Սամվել Գրիգյանի ներկայացուցիչ Գուրգեն Գրիգորյանի, Գոհար Խաչատրյանի ներկայացուցիչ Գոհար Հովհաննիսյանի և Արսեն Գրիգյանի ներկայացուցիչ Կարեն Ղոնյանի կողմից ներկայացված դիմում-բողոքների քննությամբ ակնհայտ է անձանց՝ Ս.Գրիգյանի, Ա.Գրիգյանի և Գ.Խաչատրյանի իրավունքների և ազատությունների խախտումը: Քրեական գործով օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննություն չի կատարվել, այդպիսին կատարվել է խիստ քերի, մակերեսային, և կրում է ձևական բնույթ:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի պահանջների պահպանմամբ, անհրաժեշտ է կատարել նախաքննություն, քննչական և դատավարական այլ գործողություններ, և նոր միայն, հանգել հետևությունների: Նման պայմաններում, նախաքննության մարմինն ունի պարտականություն՝ վերացնելու Ս.Գրիգյանի, Ա.Գրիգյանի և

Գ.Խաչատրյանի իրավունքների և ազատությունների խախտումը, կատարել պատշաճ քննություն՝ հիմնավորելու, և կամ բացառելու անձի և կամ անձանց գործողություններում ՀՀ քրեական օրենսգրքի այս կամ այն հոդվածով նախատեսված հանցակազմի առկայությունը կամ բացակայությունը (...)» (տե՛ս նյութեր, հատոր 3, թերթեր 122-123):

6. Անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը՝ Վերաքննիչ դատարանն արձանագրել է. *«(...) [Բ]ազմակողմանի ուսումնասիրության ենթարկելով նախաքննության մարմնի և դատարանի որոշումները, ինչպես նաև գործում առկա մնացած նյութերը, Վերաքննիչ դատարանը գալիս է այն եզրահանգման, որ նախաքննության մարմինը չի կատարել օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննություն, արդյունքում կայացրել է որոշում, որով խախտվում են Ս.Գրիգյանի, Ա.Գրիգյանի և Գ.Խաչատրյանի իրավունքներն ու ազատությունները, և միայն այդ խախտումները վերացնելուց հետո հնարավոր կլինի հանգել ճիշտ հետևության:*

(...) Վերաքննիչ դատարանը հաշվի առնելով վերոշարադրյալ պատճառաբանությունները, հանգում է այն հետևության, որ Դատարանի որոշումն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, բողոքը քննության առնելիս դատարանի կողմից թույլ չեն տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք կհանգեցնեին դատական սխալի և հիմք կհանդիսանային դատարանի որոշումը բեկանելու համար (տե՛ս նյութեր, հատոր 4, թերթեր 59-60):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքի հեղինակը փաստել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, այն է՝ քրեադատավարական օրենքի խախտում, որն ազդել է գործի ելքի վրա:

Ի հիմնավորումն վերոհիշյալ փաստարկի՝ բողոքաբերը, մեջբերելով Վճռաբեկ դատարանի՝ նախկինում կայացված որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, նշել է, որ Վերաքննիչ դատարանը կայացրել է չպատճառաբանված դատական ակտ՝ Առաջին ատյանի դատարանի դատական ակտի հիմնավորվածությունը փորձելով պատճառաբանել բացառապես ընդհանուր բնույթի ձևակերպումներով այն մասին, որ «նախաքննության մարմինը չի կատարել օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննություն»:

Բացի այդ, բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանը եկել է ակնհայտ անհիմն եզրահանգման այն մասին, որ վերացնելով քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը՝ Առաջին ատյանի դատարանը կատարել է իրավաչափ գործողություն: Ըստ բողոքաբերի՝ քննելով քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշման դեմ ներկայացված բողոքը և

գտնելով, որ կայացվել է անհիմն որոշում՝ դատարանն իրավասու է կայացնելու ոչ թե այդ որոշումը վերացնելու, այլ թույլ տրված օրինախախտումը վերացնելու և անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու վերաբերյալ իրավասու մարմնի կամ պաշտոնատար անձի պարտականությունը սահմանելու մասին դատական ակտ: Բողոք բերած անձը փաստել է, որ Վերաքննիչ դատարանի վերոգրյալ եզրահանգումն ուղղակիորեն հակասում է նաև *Լատրա Ջարյանի* վերաբերյալ թիվ ԵԿԴ/0081/11/09 գործով Վճռաբեկ դատարանի նախադեպային դիրքորոշմանը:

7.1. Վերոնշյալի հետ մեկտեղ բողոք բերած անձը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից անտեսվել է նաև այն, որ Առաջին ատյանի դատարանը, Ռ.Տոնականյանի կողմից վաշխառություն և խարդախություն կատարելու մասին եզրահանգման գալով, խախտել է անմեղության կանխավարկածի սկզբունքը և դուրս եկել միևչդատական վարույթի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողության շրջանակներից և խնդիրներից: Սույն հանգամանքը բողոքաբերի կողմից հիմնավորվել է նրանով, որ Առաջին ատյանի դատարանը իր որոշման շրջանակներում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.*«Ս.Գրիգյանի, Ա.Գրիգյանի, Գ.Խաչատրյանի և քրեական գործով անցնող բոլոր վկաների ցուցմունքներով հիմնավորվում է Ռ.Տոնականյանի կողմից վաշխառություն և խարդախություն կատարելու հանգամանքը: Վերջինս խաբեությամբ տուժողների վստահությունը չարաշահելու եղանակով, նրանց սեփականությունը հանդիսացող բնակելի տներն անվանափոխել է իր և իր կնոջ անվամբ: Ս.Գրիգյանից և Ա.Գրիգյանից փոխառությամբ տրված գումարի դիմաց տոկոսներ է ստացել, ընդ որում, Ս.Գրիգյանից ստացել է և՛ մայր գումարը, և՛ տոկոսները, իսկ վերջինիս պատկանող տարածքը հրաժարվում է անվանափոխել վերջինիս անվամբ»:*

8. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է ամբողջությամբ բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 26-ի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 4-ի որոշումներն ու գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. օրինական և հիմնավորվա՞ծ են արդյոք դիմողներ Գոհար Խաչատրյանի ներկայացուցիչ Գ.Հովհաննիսյանի, Արսեն Գրիգյանի ներկայացուցիչ Կ.Ղոնյանի և Սամվել Գրիգյանի ներկայացուցիչ Գ.Գրիգորյանի բողոքները բավարարելու մասին Առաջին ատյանի դատարանի և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումները:

10. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «*Դատարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և*

կարգով, քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները»:

Վճռաբեկ դատարանը վերահաստատում է իր նախադեպային իրավունքում ձևավորած դիրքորոշումն այն մասին, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը դատավարական օրենքով նախատեսված միջոցների համակարգ է, որն ուղղված է դատական իշխանության սահմանադրական գործառույթների իրականացմանը գործի մինչդատական վարույթում՝ նպատակ ունենալով թույլ չտալու անձի իրավունքների և ազատությունների անօրեն ու չհիմնավորված սահմանափակումներ, ինչպես նաև վերականգնելու խախտված իրավունքներն ու ազատությունները: Մինչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշումների և գործողությունների դեմ իրավասու անձի կողմից բողոք բերելու դեպքում (եթե այդ որոշումները կամ գործողությունները ենթակա են դատական բողոքարկման) դատարանը պարտավոր է ստուգել բողոքարկված որոշումների կամ գործողությունների օրինականությունն ու հիմնավորվածությունը, պարզել, թե արդյո՞ք առկա է անձի իրավունքների և ազատությունների խախտում, արդյունքում՝ կայացնել հիմնավորված և պատճառաբանված որոշում՝ թույլ տրված օրինախախտումը վերացնելու և անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու վերաբերյալ իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) պարտականությունը սահմանելու կամ բողոքը մերժելու մասին *(տե՛ս Ն.Միսակյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱՐԴ-1/0003/11/08 որոշման 12-րդ կետը, Վ.Բաղդասարյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԳԴ4/0002/01/11 որոշման 22-րդ կետը)*:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածը սահմանում է.

«*1. Դատարանի դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված:*

(...)

4. Դատարանի դատավճիռը պետք է լինի պատճառաբանված: Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները»:

Դատական ակտի պատճառաբանված լինելու հատկանիշի առնչությամբ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում մշտապես ընդգծել է, որ դատական ակտերի պատճառաբանման պահանջը ոչ միայն արդարացիության կարևոր բաղադրատարր է, այլև անձի արդար դատաքննության իրավունքի արդյունավետ իրացման կարևոր երաշխիք, ինչը դատավարության մասնակիցներին պաշտպանում է կամայականություններից: Դատական ակտի պատճառաբանվածությունը կոչված է պարզաբանելու,

թե ինչու է դատարանը եկել այս կամ այն հետևության, որ իրավաևորմերով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս, և միևնույն ժամանակ հնարավորություն է ստեղծում վերադաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման համար: Քրեական դատավարության ցանկացած փուլում դատարանի կողմից չհիմնավորված, չպատճառաբանված (կամ ոչ պատշաճ պատճառաբանված) որոշումների կայացումն անընդունելի է: Ընդ որում, դատական ակտի պատճառաբանությունների հիմքում չեն կարող դրվել վերացական, ընդհանուր բնույթի դատողություններ: Պատճառաբանությունը պետք է կառուցվի տրամաբանորեն կապված և գործի փաստական հանգամանքներից բխող հստակ, որոշակի և համոզիչ հետևությունների վրա, ուստիև դատական ակտի պատճառաբանությունների հիմքում վերացական, ընդհանրական դատողությունների առկայությունն անմիջականորեն վկայում է այդպիսի պատճառաբանության ոչ պատշաճ լինելու մասին *(տե՛ս, mutatis mutandis, Ֆ.Գալստյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09 որոշման 18-20-րդ կետերը, Գ.Խնուսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԷԴ/0030/01/12 որոշման 14-րդ կետը, Արսեն Մակարյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0016/11/15 որոշման 14-րդ կետը, Արամայիս Հակոբյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0224/01/14 որոշման 17.1-րդ կետը):*

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ դատական ակտի պատճառաբանման պահանջը պետք է դիտարկել հիմնավորվածության համատեքստում՝ որպես դրա բաղկացուցիչ և կենսական մաս: Այս առումով դատական ակտի պատճառաբանության նշանակությունը նրանում է, որ այն այդ ակտերի հիմնավորվածության երաշխիքը և արտաքին արտահայտման ձևն է: Այլ կերպ՝ դատական ակտերի պատճառաբանման պահանջը քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված հիմնավորվածության հատկության բաղադրատարր է, հետևապես չպատճառաբանված կամ ոչ պատշաճ պատճառաբանված դատական ակտն ինքնին չի կարող համարվել հիմնավորված *(տե՛ս Մարտուն Հակոբյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԱՐԴ-1/0005/11/16 որոշման 13-րդ կետը):*

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝ «*1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները*

և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

2. Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել (...) քրեական գործը (...) կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում:

(...)

5. Բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ պարտականությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին (...)»:

Հիմնվելով ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ ՍԴՈ-844 որոշման, Վճռաբեկ դատարանի կողմից նախկինում կայացված՝ *Ներսես Միսակյանի* գործով թիվ ԱՐԴ1/0003/11/08, *Լաուրա Զարյանի* գործով թիվ ԵԿԴ/0081/11/09 դատական ակտերում արտահայտված իրավական դիրքորոշումների վրա՝ Վճռաբեկ դատարանը վերը մեջբերված նորմերի առնչությամբ *Փնջիկ Թերոյանի* և *Մարտուն Հակոբյանի* գործերով որոշումների շրջանակներում վերահաստատել է իր նախադեպային իրավունքում ձևավորած հետևյալ իրավական դիրքորոշումը. «*[Ք]րեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու (քրեական հետապնդում չհրականացնելու) մասին որոշման դատական ստուգման շրջանակներում անձի խախտված իրավունքների վերականգնման ձևի առումով կիրառելի է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի՝ անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) պարտականությունը սահմանելու կարգավորումը*» (*տե՛ս Մարտուն Հակոբյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԱՐԴ1/0005/11/16 որոշման 20-րդ կետը և Փնջիկ Թերոյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի մարտի 30-ի թիվ ԵԱՔԴ/0024/11/15 որոշման 15-րդ կետը*):

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ դիմողներ Գ.Խաչատրյանի ներկայացուցիչ Գ.Հովհաննիսյանի, Ա.Գրիգյանի ներկայացուցիչ Կ.Ղոնյանի և Ս.Գրիգյանի ներկայացուցիչ Գ.Գրիգորյանի կողմից Առաջին ատյանի դատարան են բողոքարկվել նախաքննության մարմնի՝ 2016 թվականի փետրվարի 20-ի և Արմավիրի մարզի դատախազի՝ 2016 թվականի մարտի 17-ի որոշումները: Առաջին ատյանի դատարանը, քննարկելով բողոքը, արդյունքում այն բավարարել է, իսկ վիճարկվող որոշումները՝ վերացրել: Վերջինս իր դատական ակտը հիմնավորել է նրանով, որ բողոքների քննությամբ ակնհայտ է անձանց՝ Ս.Գրիգյանի, Ա.Գրիգյանի և Գ.Խա-

չատրյանի իրավունքների և ազատությունների խախտումը: Բացի այդ, նշվել է, որ քրեական գործով օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննություն չի կատարվել, այն կատարվել է խիստ թերի, մակերեսային և կրում է ձևական բնույթ (տե՛ս սույն որոշման 1.1.-2-րդ և 5-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատական ակտը թողնելով անփոփոխ, իր հերթին փաստել է, որ Առաջին ատյանի դատարանը հիմնավոր կերպով գտել է, որ նախաքննության մարմինը չի կատարել օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննություն, իսկ արդյունքում կայացրել է որոշում, որով խախտվում են Ս.Գրիգյանի, Ա.Գրիգյանի և Գ.Խաչատրյանի իրավունքներն ու ազատությունները, և միայն այդ խախտումները վերացնելուց հետո հնարավոր կլինի հանգել ճիշտ հետևության: Ըստ Վերաքննիչ դատարանի՝ Առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, բողոքը քննության առնելիս Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ չեն տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք կհանգեցնեին դատական սխալի և հիմք կհանդիսանային վիճարկվող որոշումը բեկանելու համար (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-11-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի որոշման պատճառաբանությունների հիմքում ընկած այն դատողությունները, որ բողոքների քննությամբ ակնհայտ է անձանց՝ Ս.Գրիգյանի, Ա.Գրիգյանի և Գ.Խաչատրյանի իրավունքների և ազատությունների խախտումը և այն, որ քրեական գործով օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննություն չի կատարվել, այն կատարվել է խիստ թերի, մակերեսային և կրում է ձևական բնույթ (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը), իրենց բնույթով ընդհանրական, վերացական են, դրանք չեն կարող համարվել հստակ, որոշակի և համոզիչ պատճառաբանություն:

Նույնը վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշմանը, ըստ որի՝ Առաջին ատյանի դատարանը հիմնավոր կերպով գտել է, որ նախաքննության մարմինը չի կատարել օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննություն, արդյունքում կայացրել է որոշում, որով խախտվում են Ս.Գրիգյանի, Ա.Գրիգյանի և Գ.Խաչատրյանի իրավունքներն ու ազատությունները (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների կայացրած դատական ակտերի ոչ պատշաճ պատճառաբանված լինելը հանգեցրել է այդ որոշումների՝ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ հիմնավորվածության հատկության չեզոքացմանը:

14.1. Միևնույն ժամանակ, սույն որոշման 12-րդ կետում շարադրված իրավական նորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատա-

րանը քրեական հետապնդում չիրականացնելու, քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելու շրջանակներում ոչ իրավաչափորեն որոշում է կայացրել նախաքննական մարմնի ու նաև դատախազի որոշումները *վերացնելու*, այլ ոչ թե անձի իրավունքների ու ազատությունների խախտումները վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականություն սահմանելու մասին (տե՛ս սույն որոշման 1.1.-2-րդ, 5-րդ կետերը):

15. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դիմողներ Գոհար Խաչատրյանի ներկայացուցիչ Գ.Հովհաննիսյանի, Արսեն Գրիգյանի ներկայացուցիչ Կ.Ղոնյանի և Սամվել Գրիգյանի ներկայացուցիչ Գ.Գրիգորյանի բողոքները բավարարելու մասին Առաջին ատյանի դատարանի և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումները օրինական և հիմնավորված չեն:

16. Անդրադառնալով բողոքաբերի՝ սույն որոշման 7.1-րդ կետում բարձրացրած փաստարկին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն անհիմն է և չի բխում սույն գործի փաստական տվյալներից: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանի դատական ակտի ուսումնասիրությունից երևում է, որ Ռ.Տոնականյանի կողմից վաշխառություն և խարդախություն կատարելու վերաբերյալ դատական ակտում տեղ գտած և բողոքաբերի կողմից մատնանշված ձևակերպումները բառացիորեն մեջբերվել են դատարան ներկայացված բողոքից՝ իբրև բողոք բերած անձի փաստարկներ: Այլ կերպ՝ Առաջին ատյանի դատարանը համապատասխան ձևակերպումները գործածել է ոչ թե իր անունից, այլ պարզապես կայացված դատական ակտում մեջբերում է կատարել դատարան ներկայացված բողոքից (տե՛ս նյութեր, հատոր 3, թերթեր 6, 13, 20, 117-123):

17. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները սույն գործով դատական ակտեր կայացնելիս թույլ են տվել դատական ակտի բեկանման հիմք հանդիսացող դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտումներ, մասնավորապես՝ խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ, ինչպես նաև 358-րդ հոդվածների պահանջները: Ստորադաս դատարանների կողմից թույլ տրված վերոնշյալ խախտումներն իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների համաձայն, հիմք են Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի դատական ակտերը բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածնե-

րով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 26-ի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 4-ի որոշումները բեկանել և գործն ուղարկել Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

22.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0106/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
	Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝	Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ՝	
ամբաստանյալ	Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մեղադրող	Ա.ՉԱԽՈՅԱՆԻ

2017 թվականի նոյեմբերի 15-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 11-ի որոշման դեմ ամբաստանյալ Արամայիս Արմենի Ավետիսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. 2016 թվականի դեկտեմբերի 1-ին ՀՀ ԱԱԾ քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով հարուցվել է թիվ 58217216 քրեական գործը:

2016 թվականի դեկտեմբերի 6-ին որոշում է կայացվել Արամայիս Ավետիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

Նախաքննական մարմնի միջնորդության հիման վրա Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 6-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Ավետիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով, որը 2017 թվականի հունվարի 30-ի և մարտի 30-ի որոշումներով երկարացվել է ևս երկու ամիս ժամկետով:

2017 թվականի ապրիլի 18-ին որոշում է կայացվել Սուրեն Ղևոնդյանին տուժող ճանաչելու մասին:

Նախաքննական մարմնի՝ նույն օրվա այլ որոշումներով քրեական գործի վարույթի մասը կարճվել է, և քրեական հետապնդում չի իրականացվել Հակոբ Խաչատրյանի, Սուրեն Ղևոնդյանի, Սարգիս Ավետիսյանի, Սարգիս Էլարյանի և Արմեն Խաչատրյանի նկատմամբ՝ հանցակազմի բացակայության հիմքով, իսկ Արամայիս Ավետիսյանի նկատմամբ՝ դիմողի բողոքի բացակայության հիմքով:

Նույն օրվա մեկ այլ որոշմամբ Ա.Ավետիսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2017 թվականի ապրիլի 20-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մայիսի 30-ի դատավճռով Ա.Ավետիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով: Նշանակված պատժի ժամկետին հաշվեկշռվել է արգելանքի տակ գտնվելու ժամանակահատվածը՝ վերջնական պատիժ սահմանելով ազատազրկում՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս 5 (հինգ) օր ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

3. Մեղադրող Ա.Չախոյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի օգոստոսի 11-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանել և փոփոխել՝ վերացնելով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 11-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ա.Ավետիսյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 11-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ա.Ավետիսյանին մեղադրանք է առաջադրվել այն արարքի համար, որ *«(…) [Ն]ա, հանդիսանալով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության տարածքային 4-րդ բաժնի պետը և ի պաշտոնե իրականացնելով Երևանի քաղաքապետի 2015 թվականի հունիսի 4-ի ի.1704-Ա որոշմամբ ամրագրված իր լիազորությունները, մասնավորապես՝ սահմանված կարգով ապահովում է շինարարական ավարտի փաստագրման աշխատանքների նախապատրաստումը և Երևանի քաղաքապետի ստորագրմանն է ներկայացնում շինարարության շահագործման փաստագրման ակտը և գործելով այդ լիազորությունների շրջանակներում, խարդախություն կատարելու դիտավորությամբ, 2016 թվականի հոկտեմբերի 27-ին, ք.Երևան, Ն.Շենգավիթ 6-րդ փողոց, թիվ 28 հասցեի բնակելի տան ավարտման ակտը տրամադրելու համար, օրենքով նախատեսված պարտադիր վճարումները կատարելու պատրվակով, Սուրեն Ռուբիկի Ղևոնդյանից ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ղեկավարի միջոցով պահանջել և վերջինիցս ստացել է 800.000 ՀՀ դրամ, սակայն դրանից միայն 120.000 ՀՀ դրամով կատարել է օրենքով սահմանված պետական վճարումները, իսկ Սուրեն Ղևոնդյանի գույքը հանդիսացող խոշոր չափերով 680.000 ՀՀ դրամը, խարդախությամբ՝ խաբեության եղանակով հափշտակել է»* (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 85):

6. Առաջին ատյանի դատարանը 2017 թվականի մայիսի 30-ի դատավճռով արձանագրել է հետևյալը. *«(…) [Մ]ույն գործով դատարանը, հաշվի առնելով ամբաստանյալ Արամայիս Արմենի Ավետիսյանի կատարած արարքի հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, այդ թվում՝ նրա գործողությունների վտանգավորության աստիճանը, հանցագործությունից հետո նրա դրսևորած վարքագիծը, ինչպես նաև նախկինում դատապարտված կամ որևէ այլ կերպ արատավորված չլինելու հանգամանքը, դրականորեն բնութագրվելու հանգամանքը, երիտասարդ լինելը, Հայաստանի Հանրապետության պաշտպանության համար մղված մարտական գործողություններում զոհված զինծառայողի զավակ հանդիսանալը, խնամքի տակ (…) անժամկետ 3-րդ կարգի հաշմանդամ՝ մոր գտնվելու հանգամանքը, ինչպես նաև այն որ նա առաջին անգամ կատարել է միջին ծանրության հանցագործություն և զղջացել է կատարած արարքի համար, կատարած հանցագործությունից անմիջապես հետո տուժողին հանցագործության հետևանքով պատճառված վնասն ամբողջությամբ հատուցելու հանգամանքը, պատասխանատվությունը ու պատիժը մեղմացնող հանգա-*

մանքի առկայությունը՝ խնամքի տակ մինչև 14 տարեկան երկու երեխաների՝ 2008 թվականի փետրվարի 11-ին ծնված Արմեն Արամայիսի Ավետիսյանի և 2011 թվականի փետրվարի 09-ին ծնված Սոֆի Արամայիսի Ավետիսյանի գտնվելու հանգամանքը և պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, «Գարեգին Նժդեհ» մեդալով պարգևատրվելու հանգամանքը, ստացած թվով հինգ՝ աշխատանքային պարտականությունները պատշաճ և բարեխիղճ կատարելու ու միջոցառումների կազմակերպչական աշխատանքներին մասնակցելու և ներդրած ջանքերի համար շնորհակալագրերի առկայության հանգամանքը, 5 (հինգ) ամիս 25 (քսանհինգ) օր կալանքի տակ գտնվելու հանգամանքը, ինչպես նաև այն, որ կատարած հանցագործությունից հետո զերծ է մնացել այլ հանցավոր արարքներ կատարելուց, հանգում է այն հետևության, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու: (...)

Այսպիսով, դատարանը գտնում է, որ պատժի նպատակներին կարելի է հասնել առանց ամբաստանյալի կողմից ազատազրկման ճնով նշանակված պատիժը կրելու (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթեր 36-46):

7. Վերաքննիչ դատարանը 2017 թվականի օգոստոսի 11-ի որոշմամբ արձանագրել է. *«(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ա.Ավետիսյանի կողմից նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս Առաջին ատյանի դատարանը ճիշտ եզրահանգման չի եկել (...):*

[Դ]ատարանը հաշվի չի առել մի շարք կարևոր հանգամանքներ՝ մասնավորապես այն, որ տվյալ դեպքում խարդախություն է կատարվել մի անձի կողմից, ով, գտնվելով հանրային ծառայության մեջ, հանդիսանալով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության տարածքային 4-րդ բաժնի պետ, կատարել է խարդախություն, որի արդյունքում նյութական վնաս է պատճառել ոչ միայն գործով տուժողին, այլև պետության հեղինակությանը՝ խաթարելով քաղաքացիների վստահությունը պետության նկատմամբ, ինչն էլ էականորեն բարձրացնում է Ա.Ավետիսյանի կատարած արարքի հասարակական վտանգավորությունը:

Դատարանը պատշաճ գնահատման չի արժանացրել նաև այն հանգամանքը, որ, բացի մեղսագրված խարդախության դրվագից, նախաքննության ընթացքում տվյալներ են ձեռք բերվել նաև այն մասին, որ գրեթե նույն ժամանակահատվածում, նույն կերպ՝ Ա.Ավետիսյանը քաղաքացի Արմեն Խաչատրյանից 27.11.2016թ. պահանջել և ստացել է 400.000 դրամ՝ ք-.Երևան, Բաբաջանյան փող. թիվ 87/4 հասցեի հասարակական սննդի օբյեկտի ավարտական ակտը տրամադրելու համար, իսկ 2016թ. նոյեմբերի 1-ին ք.Երևան, Օհանովի 13/1 հասցեում կառուցված առևտրի օբյեկտի ավարտական ակտը տրամադրելու համար պահանջել և ստացել է 380.000 դրամ: Այդ

երկու դեպքով 2017թ. ապրիլի 18-ին ՀՀ ԱԱԾ քննչական վարչության ավագ քննիչ Կ.Հովհաննիսյանի կողմից որոշում է կայացվել թիվ 58217216 քրեական գործով Արամայիս Արմենի Ավետիսյանի վերաբերյալ քրեական գործի վարույթի մասերը կարճելու և նրա նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ դիմողների բողոքի բացակայության՝ այսինքն ոչ արդարացնող հիմքով:

Դատարանը Ա.Ավետիսյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելով, հաշվի չի առել նաև Ա.Ավետիսյանի կողմից կատարված հանցավոր արարքի տարածվածությունը և դրա դեմ տարվող պայքարում պետության վարած քաղաքականությունը՝ արդյունքում ոչ ճիշտ եզրահանգման գալով այն մասին, որ Ա.Ավետիսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով սույն գործով կարելի է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48 հոդվածով սահմանված պատժի նպատակների իրագործմանը:

Վերը նշված պատճառաբանություններով Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Դատախազի կողմից վերաքննիչ բողոքում բերված փաստարկները հիմնավոր են: Դատարանը ճիշտ չի կիրառել քրեական օրենքը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 70 հոդվածը, որը հիմք է, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395 հոդվածի 2-րդ մասի համաձայն, վիճարկվող դատական ակտը մասնակի բեկանելու համար: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթեր 82-94):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը</u>.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակի կարծիքով Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 11-ի որոշումն օրինական և հիմնավոր չէ, դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա, որի պարագայում կայացված դատական ակտը ենթակա է բեկանման:

Մասնավորապես, բողոքի հեղինակը, հղում կատարելով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից մի շարք որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին, նշել է, որ Առաջին ատյանի դատարանը, այդ դիրքորոշումներին համապատասխան գնահատելով իր անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքների առկայությունը, պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, հանցանքի բնույթն ու վտանգավորության աստիճանը և այլ էական նշանակություն ունեցող հանգամանքներ, իրավաչափ

եզրահանգման է եկել իր նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ:

Սինչղեո Վերաքննիչ դատարանի որոշումը հակասում է պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներին, կայացվել է պատիժը պայմանականորեն չկիրառելիս էական նշանակություն ունեցող հանգամանքներն առանց պատշաճ գնահատելու, անտեսվել են պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են խնամքին մինչև 14 տարեկան երկու երեխաների առկայությունը, հանցավոր արարքի կատարումից անմիջապես հետո տուժողին պատճառված վնասն ամբողջությամբ հատուցելը, պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, որոնց ամբողջությունը վկայում է, որ պատժի նպատակներին կարելի է հասնել առանց ազատազրկման ճնով նշանակված պատիժը կրելու:

9. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու մասով բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը՝ օրինական ուժ տալով Առաջին ատյանի դատարանի դատավճռին:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր են արդյոք ամբաստանյալ Ա.Ավետիսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Եթե դատարանը, կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ճնով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:*

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները (...)»:

Վերոնշյալ իրավադրույթը Վճռաբեկ դատարանի կողմից բազմիցս վերլուծության է ենթարկվել մի շարք գործերով կայացված նախադեպային որոշումներում, և մշտապես վերահաստատվել է դիրքորոշումն առ այն, որ դատարանի համոզվածությունը, վստահությունն այն մասին, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց իրական պատիժ կրելու, պետք է հիմնվի օբյեկտիվ գոյություն ունեցող այնպիսի տվյալների համակողմանի վերլուծության վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության

մասին: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը բազմիցս փաստել է, որ թեև պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգիրքն ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսում, սակայն դատարանի հետևությունները պետք է, ի թիվս այլոց, հիմնված լինեն նաև հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի ամբողջական գնահատման վրա (*հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ, ի թիվս այլ որոշումների, մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Գարուշ Մադաթյանի գործով 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԴ/0029/01/08, Արմեն Շահբազյանի գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԴ/0143/01/13, Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշումները*)՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթը, մեղքի ձևը և տեսակը, պատճառված վնասի չափը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, հանցագործության հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, նպատակներն ու շարժառիթները և այլն (*տե՛ս Սամսոն Ամիրխանյանի գործով 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԱԴԴ/0034/01/12, Արսեն Մկրտչյանի գործով 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԼԴ/0093/01/12, Վանյա Բեգլյանի գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ՏԴ/0018/01/13, Արամայիս Հովհաննիսյանի գործով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԳԴ/0014/01/14, Մհեր Հովհաննիսյանի գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0039/01/15 և այլ որոշումները*):

12. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս հաշվի առնվող հանգամանքներից հանցավորի անձը բնութագրող տվյալների վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշումներ է ձևավորել Հ.Հարությունյանի գործով 2007 թվականի մարտի 30-ի թիվ ՎԲ-50/07, Ն.Սարգսյանի գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0042/01/11, Ս.Սարգսյանի գործով 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՍԴ/0109/01/12, Ս.Աղախանյանի գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԱՎԴ/0082/01/12, Ջ.Շիրվանյանի գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱՔԴ/0091/01/14 և այլ որոշումներում:

Այսպես՝ Հ.Հարությունյանի գործով որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանը ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«Պատասխանատվության և պատժի անհատականացման հիմք են ոչ միայն կատարված արարքի հասարակական վտանգավորության աստիճանի, այլև հանցավորի անձը բնութագրող հատկանիշներ հանդիսացող նրա սոցիալ-հոգեբանական, սոցիալ-ժողովրդագրական, քրեաբանական և քրեա-իրավական, ֆիզիկական հատկությունների համակցության ճիշտ գնահատումը (ընտա-*

նեկան դրությունը, վարքագիծը աշխատանքում և կենցաղում, աշխատունակությունը, առողջական վիճակը, տարիքը, դատվածությունը և այլն)» (տե՛ս Հազարապետ Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2007 թվականի մարտի 30-ի թիվ ՎԲ-50/07 որոշումը):

Իսկ Ս.Աղախանյանի գործով որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանը փաստել է. *«(...) [Մ]եծի նկատմամբ պատիժ նշանակելիս և այն փաստացի կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս դատարանը պետք է հաշվի առնի նաև այն հանգամանքը, թե նշանակված պատիժն ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ ամբաստանյալի ընտանիքի կյանքի պայմանների վրա»* (տե՛ս Սեյրան Աղախանյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԱՎԴ/0082/01/12 որոշման 19-րդ կետը):

13. Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը մշտապես նշել է, որ սեփականության դեմ ուղղված հանցագործություններով պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս հանցագործության հանրային վտանգավորության բնույթի ու աստիճանի համատեքստում սույն որոշման 11-12-րդ կետերում մեջբերված այլ գործոնների հետ մեկտեղ հատկապես կարևոր է հանցագործությամբ պատճառված վնասի (դրա չափի), այն վերականգնված լինելու կամ չլինելու հանգամանքների գնահատումը: Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեպքում պատիժը պայմանականորեն չկիրառելու խնդրին, իր որոշումներում ընդգծել է, որ հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի նվազման տեսանկյունից հանցագործությամբ պատճառված նյութական վնասն ամբողջությամբ վերականգնված լինելու հանգամանքն էական նշանակություն ունի (*տե՛ս mutatis mutandis, Ա.Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի հունիսի 2-ի թիվ ՀՅՔՐԴ/0109/01/08, Գ.Պետրոսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԵԿԴ/0126/01/10, Ս.Հովսեփյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԼԴ/0193/01/10 որոշումները*):

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ, հաշվի առնելով ամբաստանյալ Ա.Ավետիսյանի կատարած հանցանքի հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, հանցագործությունից հետո դրսևորած վարքագիծը, նախկինում դատապարտված չլինելը, դրականորեն բնութագրվելը, երիտասարդ լինելը, Հայաստանի Հանրապետության պաշտպանության համար մղված մարտական գործողություններում զոհված զինծառայողի զավակ հանդիսանալը, խնամքին անչափահաս՝ մինչև 14 տարեկան երկու երեխա և 3-րդ կարգի հաշմանդամ մայր ունենալը, առաջին անգամ միջին ծանրության հանցանք կատարելը և դրա համար զղջալը, հանցագործությունից հետո տուժողին պատճառված վնասն ամբող-

ջությամբ հատուցելը, պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, ինչպես նաև ամբաստանյալի՝ 5 ամիս 25 օր կալանքի տակ գտնվելը՝ Առաջին ատյանի դատարանը որոշել է Ա.Ավետիսյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը վերացրել է ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը՝ արձանագրելով, որ Առաջին ատյանի դատարանի կողմից՝ ա) անտեսվել է, որ կատարված հանցանքի արդյունքում վնաս է պատճառվել պետության հեղինակությանը՝ խաթարելով քաղաքացիների վստահությունը պետության նկատմամբ, բ) պատշաճ գնահատման չի արժանացվել ամբաստանյալի կողմից նույն ժամանակահատվածում նույնանման այլ արարքների կատարումը, որոնց կապակցությամբ նախաքննական մարմինը քրեական հետապնդում չիրականացնելու և այդ մասով գործի վարույթը կարճելու մասին որոշում է կայացրել ոչ արդարացնող հիմքով, գ) հաշվի չի առնվել հանցավոր արարքի տարածվածությունը և դրա դեմ տարվող պայքարում պետության որդեգրած քրեական քաղաքականությունը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-13-րդ կետերում վկայակոչված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի կայացրած դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելիս Վերաքննիչ դատարանը համակցության մեջ պատշաճ ստուգման և իրավական գնահատականի չի արժանացրել ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, ծանրացնող հանգամանքների բացակայությունը, արարքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը: Ավելին՝ Վերաքննիչ դատարանը, բեկանելով ստորադաս դատարանի դատական ակտը, կայացված որոշման հիմքում դրել է այնպիսի վերացական դատողություններ, ինչպիսիք են «պետության հեղինակությանը պատճառված վնասը», «քաղաքացիների վստահության խաթարումը», «կատարված հանցավոր արարքի տարածվածությունը և դրա դեմ պայքարում պետության կողմից որդեգրված քրեական քաղաքականությունը»՝ առանց պատշաճ կերպով հիմնավորելու, թե վերոնշյալ հանգամանքներն ինչով են բարձրացրել անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը:

15.1. Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն անընդունելի է համարում Վերաքննիչ դատարանի կողմից որպես պատժի կրման նպատակահարմարությունը հիմնավորող փաստարկ ոչ արդարացնող հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու և գործի մասը կարճելու մասին նախաքննական մարմնի որոշմանը հղում տալն ու դրա նկարագրական-պատ-

ճառաբանական մասում նշված ձևակերպումները որպես հաստատված փաստ և ամբաստանյալի անձը բացասական բնութագրող տվյալ օգտագործելը: Այսպես՝ «ոչ ռեաբիլիտացիոն» հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու և գործի վարույթը կարճելու մասին որոշումը չի կարող նույնացվել անձի մեղավորությունը հաստատող և նրա համար բացասական իրավական հետևանքներ առաջացնող դատավարական փաստաթղթի՝ դատավճռի հետ: Այլ կերպ՝ այն չի կարող կրել մեղադրական դատավճռի կայացմամբ ծագող հետևանքներին բնորոշ հատկանիշներ և պատժի նշանակման ու դրա կրման նպատակահարմարությունը որոշելու փուլում որևէ կերպ վտեքարացնել ամբաստանյալի իրավական վիճակը *(mutatis mutandis տե՛ս Արմեն Բաղդասարյանի վերաբերյալ թիվ ԵԱՔԴ/0009/11/13 գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի որոշումը, 16-րդ կետ):* Հակառակ պարագայում կարող է վտանգվել ՀՀ Սահմանադրության 66-րդ և Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասով երաշխավորված՝ անմեղության կանխավարկածի սկզբունքը, որը պահանջում է անձի մեղավորության փաստի հաստատում և համապատասխանաբար դրանից բխող բացասական հետևանքների կիրառման հնարավորություն ոչ այլ կերպ, քան օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայության պարագայում (*mutatis mutandis տե՛ս Minelli v. Switzerland, կետ 37, Nerattini v. Greece, կետ 23; Didu v. Romania, կետ 41*):

16. Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, գնահատելով ամբաստանյալի անձը դրական բնութագրող հանգամանքները, կատարված հանցանքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքների առկայությունը և ծանրացնող հանգամանքների բացակայությունը, այն է՝ կատարված հանցանքի համար զղջալը, խնամքին մինչև 14 տարեկան երկու երեխաների և 3-րդ կարգի հաշմանդամ մոր առկայությունը, նախկինում դատապարտված չլինելը, տուժողին պատճառված վնասն ամբողջությամբ հատուցելը, իրավաչափորեն եզրահանգել է, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը փաստացի կրելու, և որ պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակներին:

Հետևաբար ամբաստանյալ Ա.Ավետիսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր չեն:

17. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, Ա.Ավետիսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելով, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ, 48-րդ, 61-րդ, 70-րդ հոդվածների պահանջների խախտում-

ներ, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի իմաստով քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է և հանգեցրել է նույն օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու հիմք են:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով դատական ակտ կայացնելիս Առաջին ատյանի դատարանը դատական սխալ թույլ չի տվել, կայացված որոշումն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, ուստի պետք է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի դատավճռին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Արամայիս Արմենի Ավետիսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 11-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մայիսի 30-ի դատավճռին՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

23.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱՔԴ/0024/06/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
	Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝	Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ՝	
պաշտպան	Կ.ՂԱԶԱՐՅԱՆԻ
մեղադրող	Շ.ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻ

2017 թվականի նոյեմբերի 15-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով մեղադրյալ Ֆեռդոր Իվանի Բոլդիրևի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի մարտի 28-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնում 2016 թվականի փետրվարի 17-ին ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերի, 324-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 09101217 քրեական գործը:

2017 թվականի փետրվարի 27-ին Ֆեռդոր Բոլղիրևը բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին և ձերբակալվել:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի մարտի 1-ի որոշմամբ Ֆ.Բոլղիրևը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասով և 175-րդ հոդվածի 1-ին մասով:

2. 2017 թվականի մարտի 2-ին նախաքննության մարմինը միջնորդություն է հարուցել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ մեղադրյալ Ֆ.Բոլղիրևի նկատմամբ որպես խափանման միջոց 2 ամիս ժամկետով կալանավորումը կիրառելու մասին:

Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 2-ի որոշմամբ նախաքննության մարմնի վերոհիշյալ միջնորդությունը բավարարվել է, և մեղադրյալ Ֆ.Բոլղիրևի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել 2 ամիս ժամկետով կալանավորումը: Նույն որոշմամբ մերժվել է մեղադրյալի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ պաշտպանի միջնորդությունը:

3. Պաշտպանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի մարտի 28-ին որոշում է կայացրել բողոքը բավարարելու և Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 2-ի որոշումը բեկանելու մասին: Մեղադրյալ Ֆ.Բոլղիրևի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերացվել է, և նա ազատ է արձակվել:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 27-ի որոշմամբ ներկայացված բողոքը վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Ֆ.Բոլղիրևին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա *«(...) Մարատ Կիրիլյունի կամքին հակառակ ապօրինի մուտք է գործել վերջինիս բնակարան՝ խախտելով բնակարանի անձեռնմխելիությունը, այն է՝ մարմնավաճառությամբ զբաղվող Նազելի Մելիքյանի հետ ունեցած հեռախոսազրույցի ընթացքում վերջինիս հեռախոսահամարից Մ.Կիրիլյունի կողմից իրենց և ծնողների հասցեին հնչած սեռական բնույթի հայհոյանքների շուրջ պարզաբանումներ ստանալու համար, Ն.Մելիքյանի ծառայությունից օգտվե-*

լու հանգամանք, որպես պատրվակ օգտագործելով, 2017 թվականի փետրվարի 16-ին՝ ժամը 23:30-ի սահմաններում, (...) իր ընկերներ Ալեքսանդր Կասմինինի, Ալեքսեյ և Դավիդ Գրինչուկների հետ գնացել է Մ.Կիրիլյուկին պատկանող՝ Երևան քաղաքի Զ.Սարկավագ փողոցի 123/3 շենքի 13 բնակարան, որտեղ իրենց հետ հեռախոսազրույցի ընթացքում հայհոյած երիտասարդին գտնելու նպատակով Ֆ.Բոլդիրևը և Ա.Գրինչուկը մտել են նշված շենքի 13 բնակարան, իսկ Ա.Կասմինինը և Դ.Գրինչուկը սպասել են դրսում: Ֆ.Բոլդիրևի և Ա.Գրինչուկի առջև հիշյալ բնակարանի մուտքի դուռը բացել է Ն.Մելիքյանը, սակայն նրանք առանց հրավերի դուռը հրելով բացել և ապօրինի մուտք են գործել բնակարան, որտեղ, հանդիպելով բնակարանատեր Մ.Կիրիլյուկին և վերջինիս կողմից իր բնակարանից դուրս գալու օրինական պահանջն անտեսելով, դուրս չեն եկել՝ խախտելով բնակարանի անձեռնմխելիությունը:

(...) Այնուհետև Ֆ.Բոլդիրևը, Մ.Կիրիլյուկի բնակարանի անձեռնմխելիության իրավունքը խախտելով և նրա բնակարան ապօրինի մուտք գործելուց հետո, ուրիշի գույքը հափշտակելու նպատակով Ա.Գրինչուկի հետ հարձակվել է Մ.Կիրիլյուկի վրա՝ վերջինիս կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով, այն է՝ ձեռքերով հարվածներ են հասցրել Մ.Կիրիլյուկի մարմնի տարբեր մասերին և գլխին, պահանջել են գումար և ոսկեղեն, որի ընթացքում Ա.Գրինչուկը Մ.Կիրիլյուկին հարվածել է նաև որպես զենք օգտագործվող առարկայով՝ արդուկով, նաև պահարանի դարակով: Մ.Կիրիլյուկը հրաժարվել է գումար և ոսկեղեն տալ: Ա.Գրինչուկը և Ֆ.Բոլդիրևը շարունակել են բռնության գործադրումը և գույք հափշտակելու նպատակով շրջել են հիշյալ բնակարանում, որի ընթացքում Ա.Գրինչուկը հափշտակել է Մ.Կիրիլյուկին պատկանող DVD նվագարկիչը, և հեռացել են (...)» (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 41-43):

5.1. Տուժող Ն.Մելիքյանը 2017 թվականի փետրվարի 17-ի հարցաքննության ժամանակ տվել է հետևյալ բովանդակությամբ ցուցմունքները. *«(...) [Ժ]ամանակ առ ժամանակ 25-30 հազար դրամի դիմաց հանդիպում եմ տղաների հետ և սեռական հարաբերություն եմ ունենում: (...) [Ինձ] զանգահարել են անծանոթ հեռախոսահամարից և առաջարկել հանդիպել, ես [համաձայնել եմ]: Ես, հեռախոսը փոխանցելով [Մարատ Կիրիլյուկին], խնդրեցի նրան, որ բացատրի տան ճանապարհը: (...) Մենք չնկատեցինք, որ նրանց քանակը 4 հոգի է: Նրանք [մոտեցան] դռանը, ես [բացեցի] և անակնկալ կերպով [տեսա] երկու հոգու և, լսելով ներքնից ձայներ, խուճապի մատնվելով, ես [ուզեցի] դուռը փակել իրենց վրա, վտանգ զգալով, սակայն նրանք դուռը [հրեցին] ինձ վրա և միանգամից ներս [մտան]՝ առանց ոչինչ ասելու, լույսը [վառեցին] և [առաջացան] դեպի հյուրասենյակ: Ես, նրանցից առաջ ընկնելով, Մարատին հասկացրեցի, որ վտանգ կա: Մարատը, տեսնելով այդ 4 անծանց, խուճապի [մատնվեց] ինձ հետ միասին և, կանգնելով ոտքի ու շիշը ձեռքը վերցնելով,*

[ասաց]՝ «Ի՞նչ եք անում չորսով իմ բնակարանում, հենց հիմա դուրս եկեք, արա»: Նրանք, գտնվելով ոչ սթափ վիճակում, [ցանկացան] հարվածել Մարատին, [սակայն վերջինս հարվածեց] նրանցից ոմն ռուս երիտասարդի գլխին: (...) [Նրանցից մեկն ինձ ասաց]՝ «Փողերդ տուր, թե չէ՝ Մարատին կսպանեմ ու [ամեն ինչ] կքարդվի քո վրա»: Այդ ընթացքում Մարատից նույնպես [ոսկեղեն են պահանջում]՝ ասելով (...) «Ոսկեղենդ տուր, թե չէ՝ աղջկան կբռնաբարենք քո հետ միասին»: (...) Ինձ քաշքշելով և ինձնից գումար չստանալով՝ ռուսն ինձ պահում էր մահճակալին գցելով, իսկ հայը դարակներն էր քանդում, գումար էր մաև գալիս: Ես նկատեցի, որ դարակից երեք հատ 20.000 դրամ ընկավ, և այդ ռուսը, ինձ ազատ թողնելով, գնաց հայ ընկերոջ մոտ: (...) Ինձ մոտ 20.000 դրամ [կար], ես այդ գումարը [գցեցի] պահարանի տակ, որպեսզի չգտնեն: (...) Ես նկատեցի, որ հայը, չբավարարվելով (...) դարակի գումարից, վերցնում է հեռուստացույցը, պատի ժամացույցը, մեծ վազը և [դրա] միջից 10.000 [դրամ] գումար, սակայն [այդ գումարը և ջարդած հեռուստացույցը] թողեց միջանցքում: (...) Ես նաև նկատեցի, որ (...) իմ պայուսակից դատարկում են իրերը և տանում անձնագիրս և 43.000 դրամ գումար: (...) Ինձ թեթև քաշքշել են ռուս երիտասարդներից [երկուսը], սակայն մարմնական վնասվածքներ չունեմ, և ինձ չեն հարվածել: Չեմ տեսել, սակայն Մարատն ինձ պատմել է, որ [իր գլխին] սեղյակում հարդուկով հարվածում էին (...)» (տե՛ս նյութեր, 1-ին հատոր, թերթեր 8-11):

5.2. Տուժող Մ.Կիրիլյուկը 2017 թվականի փետրվարի 20-ի լրացուցիչ հարցաքննության ժամանակ տվել է հետևյալ բովանդակությամբ ցուցմունքները. *«(...) [Նազելիի] հեռախոսահամարին զանգահարել էր ռուսալեզու անձնավորություն, որի խոսակցությունը չհասկանալու պատճառով, [նա] անջատեց հեռախոսը: Որոշ ժամանակ անց նա ստացավ ուրիշ համարից զանգ, և իրար չհասկանալու պատճառով սեռական բնույթի հայհոյանքներ տվեցին միմյանց և [անջատեցին] հեռախոսը: Որոշ ժամանակ անց կրկին զանգ եկավ նույն հեռախոսահամարից Նազելիի համարին, նա փոխանցեց հեռախոսն ինձ, ես վերցրեցի և լսեցի տարբեր հայհոյանքներ՝ ինչ-որ «ռայոնի» բարբառով: Լսելով նրա հայհոյանքները՝ ես նույնպես հայհոյեցի և կախեցի հեռախոսը: Դրանից որոշ ժամանակ անց Նազելին կրկին զանգ է ստանում, արդեն այլ հեռախոսահամարից, (...) Նազելին ասաց, որ իր ծանոթներից մեկը միգուցե գա մեր տուն: (...) [Դ]ուռը բացելուն պես բնակարան [ներխուժեցին] չորս անհայտ անձինք, որոնք լույսը վառեցին և տեսան, որ ես աղջկա հագուստով եմ, բայց տղայի ձայնով եմ խոսում, զարմանալով հարցրին, թե «Ո՞նց, դու տղա՞ ես» և հարձակվեցին ինձ վրա: Ես գարեջրի շշով խփեցի նրանցից մեկի գլխին: Նրանք սկսեցին ինձ ծեծի ենթարկել, և նրանցից մեկը, խուզարկ[ում էր] բնակարանի իրերը, զգացվում էր, որ գումար է փնտրում, ջարդում էր (...) իրերը, շրջեց գրասեղանը, հեռուստացույցը: Ես, մի կերպ նրանցից ազատվելով, փախա խոհանոց և ասացի Նազելիին, որպեսզի նա զանգահարի 1-02*

ծառայություն: Խոհանոցում ձեռքիս վերցրեցի դանակ, որպեսզի վախեցնեմ նրանց, (...) երկուսը վրա հասան և խլեցին ձեռքիս դանակը՝ ծեծի ենթարկելով ինձ: Այնուհետև նրանցից մեկը փորձում էր մատիցս հանել մատանին՝ ասելով՝ «Որտե՞ղ են գումարն ու ոսկեղենը»: Մի կերպ փախնելով՝ հասել եմ միջանցք, որտեղ նրանցից մեկը, հարձակը ձեռքին վրա եկավ և սկսեց հարվածել գլխիս տարբեր մասերին: (...) Բնակարանից գողացվել է՝ DVD նվագարկիչ (...), պատի փայտե ժամացույց (...), հախճապակե ծաղկաման (...), 320.000 ՀՀ դրամ գումար (...), [երկու հատ] բջջային հեռախոս (...): Նաև նրանք փորձել են տանել հեռուստացույցը, սակայն, [տեսնելով, որ կոտրված է], թողել են միջանցքում: Ինձ պատճառվել է ընդհանուր 945.000 ՀՀ դրամի նյութական վնաս (...)» (տե՛ս նյութեր, 1-ին հատոր, թերթեր 12-16):

5.3. Տուժող Մ.Կիրիլյուկը կասկածյալ Ֆ.Քոլղիրևի հետ 2017 թվականի փետրվարի 28-ի առերես հարցաքննության ժամանակ տվել է հետևյալ բովանդակությամբ ցուցմունքները. *«(...) Ինձ հետ առերես հարցաքննվող Ֆեոդորին առաջին անգամ տեսել եմ փետրվարի 16-ին՝ 23:30-ի սահմաններում, երբ նա 3 անձանց հետ մտավ մեր բնակարան: Նա հանդիսանում է այն անձը, ով Ալեքսեյի հետ առաջինը մտավ հյուրասենյակ և սկսեց հարվածել ինձ: Ես գարեջրի շշով խփել եմ [Ֆեոդորի] գլխին, դրանից հետո [նրանք] շարունակել են ինձ ծեծել: (...) Փախել եմ խոհանոց՝ վերցնելով դանակ, որպեսզի վախեցնեմ, բայց [նրանցից] մեկը խլեց դանակը և շարունակեց[ին] ծեծել ինձ, պահանջել գումար, ոսկի: Այդ ընթացքում Ալեքսեյը փորձում էր հանել մատանիս մատիցս, սակայն երբ ասացի, որ ոսկի չէ, թողեց: Ես, մի կերպ փախնելով, հասա միջանցք, որտեղ [նրանք] շարունակում էի[ն] ծեծել ինձ, իսկ Ալեքսեյը հարձակով մի քանի անգամ հարվածեց գլխիս: (...) Հաջորդ օրը նկատեցի, որ տնից պակասում է DVD նվագարկիչը, կոտրվել էր հեռուստացույցը, պատի ժամացույցը չկար, սեղանի վրայից վազը (ծաղկաման), իմ բջջային հեռախոսները (...), դարակիցս իմ հավաքած 320.000 ՀՀ դրամ գումարը (...)»* (տե՛ս նյութեր, 1-ին հատոր, թերթեր 34-36):

5.4. Տուժող Ն.Մելիքյանը կասկածյալ Ֆ.Քոլղիրևի հետ 2017 թվականի մարտի 1-ի առերես հարցաքննության ժամանակ տվել է հետևյալ բովանդակությամբ ցուցմունքները. *«(...) Ինձ հետ առերես հարցաքննվողին առաջին անգամ տեսել եմ 2017թ. փետրվարի 16-ին՝ 23:30-ի սահմաններում: [Ֆեոդորն] Ալեքսեյի հետ առաջինն է մտել բնակարան, (...) հասնելով հյուրասենյակ՝ տեսա[ն] [Մարատին] կանացի շորերով և, զարմանալով, որ տղան ինքն է, և ինքն է [նրանց] հայհոյել, առաջ գնացի[ն] դեպի Մարատը, նա (...) սեղանից վերցրեց գարեջրի դատարկ շիշը և հարվածեց [Ֆեոդորի] գլխին, և անմիջապես [նրանք] սկսեցին միմյանց հարվածել: Այդ ընթացքում հարվածում էր նաև Ալեքսեյը: [Ֆեոդորն] ինձ ոչ սպառնացել է, ոչ՝ խփել: Ալեքսեյն ինձնից վերցրել էր բջջային հեռախոսս, իսկ հաջորդ օրն առավոտյան տեսել եմ, որ պայուսակիցս անձնագիրս, մազերս ու հեռախոսս, Մարատենց տնից*

նրա հեռախոսները, ժամացույցը, DVD-ին, վազը [չկան]: (...) Մարատը պատմել է, որ խոհանոցում իրենից գումար և ոսկեղեն են պահանջել, նաև հարդուկով և դարակով ծեծել են: Սակայն ես անձամբ [Ֆեոդորի և Ալեքսեյի] կողմից արված արտահայտությունները չեմ ասել և գործողությունները չեմ տեսել (...)» (տե՛ս նյութեր, 1-ին հատոր, թերթեր 44-45):

5.5. Մեղադրյալ Ֆ.Բոլդիրևը 2017 թվականի փետրվարի 27-ի հարցաքննության ժամանակ տվել է հետևյալ բովանդակությամբ ցուցմունքները. *«(...) 2017 թվականի փետրվարի 16-ին՝ ժամը 20:00-ի սահմաններում, ես իմ ընկերներ Ալեքսեյ և Դավիթ Գրինչուկների, Ալեքսանդր Կասմինինի, Իոն Տամիլինի հետ հանդիպել եմ, (...) և որոշել ենք միասին հաց ուտել և խմել: Արդեն ժամը 22:00-ի սահմաններում էր, երբ մենք բավականաչափ օղի էինք խմել, միաժամանակ հաց կերել: Ալեքսեյը հեռախոսով մտել էր (...) կայք, որտեղ տեսել էր մարմնավաճառի հեռախոսահամար՝ 30.000 ՀՀ դրամով: Նա (...) զանգահարեց և սկսեց խոսել այդ աղջկա հետ (...): Ալեքսեյն (...) ասաց, որ խոսակցության ընթացքում աղջկանից ինչ-որ տղա է հեռախոսը վերցրել և (...) անպատիվ շատ հայհոյանքներ է տվել: (...) Պայմանավորվել ենք հանդիպել նրանց տանը՝ Քանաքեռում: (...) [Ե]ս և Ալեքսեյը (...) մտանք շենքի մուտք, աստիճաններով մի քիչ բարձրացանք, և աջ կողմի դուռը բաց էր, և կանգնած դիմավորում էր մի աղջիկ: (...) Մտնելով հյուրասենյակ՝ բազմոցին նստած տեսանք մի տղայի, ով հագնված էր աղջկա ներքնաշորերով, գլխին պարիկ էր դրված և քսված էր: (...) Ալեքսեյը հարցրեց նրան՝ «Դու ես հայհոյել», նա պատասխանեց՝ «Հա, ես եմ», և Ալեքսեյը, առաջ գնալով, (...) բռունցքով հարվածեց այդ տղային, և նա ընկավ բազմոցին: Դրանից հետո կանգնեց բազմոցին, սեղանից վերցրեց դանակ, և երբ ես մոտեցա նրան հարվածելու, այդ ընթացքում փաթաթվեցինք միմյանց, և երկուսով ընկանք բազմոցին, որի ընթացքում նա ինչ-որ սուր բանով հարվածեց իմ գլխի աջ կողմին (...): Ես դրանից ավելի բարկացա և սկսեցի Ալեքսեյի հետ այդ տղային ձեռքերով ծեծել դիվանի վրա: Նա նաև հրելով առաջ եկավ, և միասին ընկանք հեռուստացույցի վրա, և այն շրջվեց և կոտրվեց: Բնակարանի իրերն ամբողջությամբ խառնվեցին քաշքշուկի ընթացքում: (...) Տղան փախավ դեպի ննջասենյակ, իսկ ես և Ալեքսեյը գնացինք նրա հետևից: Այնտեղ նույնպես ձեռքերով և ոտքերով խառը հարվածներ ենք հասցրել այդ տղայի մարմնի տարբեր մասերին (...): Իմ՝ բնակարանում եղած ժամանակ մեզնից որևէ մեկն այդ տղայից կամ աղջկանից գումար չի ուզել, նրանց չի սպառնացել, և ավազակային հարձակում չենք կատարել: Ընդամենը մեզ անձնական վիրավորանք տալու համար գնացել էինք պարզաբանումներ կատարելու: (...) [Մ]պատում էինք Դավիթին, ով մնացել էր այդ բնակարանում: Նա եկավ (...) և (...) Ալեքսեյից պահանջեց աղջկա հեռախոսը: Ալեքսեյը հրաժարվեց տալ (...): Ալեքսեյը բարկանալով ավտոմեքենայի պատուհանից դուրս նետեց այն (...)»* (տե՛ս նյութեր, 1-ին հատոր, թերթեր 26-30):

6. Առաջին ատյանի դատարանն իր որոշման շրջանակներում փաստել է. *«(...) Ուսումնասիրելով միջնորդությանը կից (...) ներկայացված նյութերը, [Առաջին ատյանի դատարանը] գտնում է, որ առկա են ենթադրյալ հանրորեն վտանգավոր արարքների կատարմանը Ֆեոդոր Բոլդիրևի առնչությունը (հիմնավոր կասկածը) հաստատող ապացույցները, մասնավորապես՝ տուժողներ Ն.Մելիքյանի, Մ.Կիրիլյուկի, կասկածյալ Ֆ.Բոլդիրևի ցուցմունքները, տուժողներ Մ.Կիրիլյուկի, Ն.Մելիքյանի և կասկածյալ Ֆ.Բոլդիրևի առերես ցուցմունքները, անձին ճանաչման ներկայացնելու մասին արձանագրությունները, բացի այդ, առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հիմքերից մեկը:*

[Առաջին ատյանի դատարանն] արձանագրում է, որ միջնորդությունը քննարկելու պահին քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից արդեն իսկ կատարվել են տուժողներին վերաբերող քննչական այն հիմնական գործողությունները, որոնք վերաբերելի են մեղադրյալի կողմից նրան մեղսագրվող արարքում վերջինիս առնչությանը (հիմնավոր կասկած):

(...)

[Առաջին ատյանի դատարանը] հաշվի է առնում այն հանգամանքը, որ Ֆեոդոր Բոլդիրևին ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասով և 175-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված ենթադրյալ հանրորեն վտանգավոր արարքները դասվում են ոչ մեծ ծանրության և ծանր հանցանքների շարքին, որոնցից ծանրի համար նախատեսված ազատազրկման ճնով պատժի առավելագույն ժամկետը վեց տարի է, հետևաբար մեղսագրվող հանրորեն վտանգավոր արարքների բնույթն ու վտանգավորության աստիճանը, ինչպես նաև ակնկալվող պատժի խստությունը հանդիսանում են քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու հավանականությունը գնահատելու կարևոր տարրեր՝ գործի նյութերից բխող մյուս հանգամանքների հետ միասին, ուստիև գտնում է, որ նման պայմաններում մեծ է ռիսկայնությունն առ այն, որ Ֆեոդոր Բոլդիրևն, ազատության մեջ մնալով, կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից:

Մեղադրյալի հավանական վարքագծի վերաբերյալ հետևությունը բխում է այն հանգամանքից, որ վերջինիս մեղսագրվող արարքների կապակցությամբ դեպքը, համաձայն միջնորդությանը կից ներկայացված նյութերի, տեղի է ունեցել 2017թ. փետրվարի 16-ին, որի առթիվ հարուցված քրեական գործի շրջանակներում դեպքից տասն օր անց միայն՝ 27.02.2017թ. Ֆ.Բոլդիրևը բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին՝ ավազակային հարձակում կատարելու կասկածանքով, այսինքն՝ ենթադրյալ հանրորեն վտանգավոր արարքները կատարելուց հետո Ֆ.Բոլդիրևը թաքնվել է քրեական վարույթն իրականացնող մարմնից և հայտնաբերվել ու բերման է ենթարկվել բացառապես ձեռնարկված քննչական և օպերատիվ գործողությունների արդյունքում, որպիսի պայմաններում [Առաջին ատյանի դատարա-

ևը] գտնում է, որ միջնորդությունը հիմնավորված է, այն ենթակա է բավարարման և Ֆ.Բոլղիրևի նկատմամբ 2 (երկու) ամիս ժամկետով որպես խափանման միջոց պետք է կիրառել կալանավորումը:

[Առաջին ատյանի դատարանը] նաև փաստում է, որ (սկզբնական կալանքի ժամանակահատվածում) մեղադրյալ Ֆեոդոր Իվանի Բոլղիրևի պատշաճ վարքագիծն ու վարույթն իրականացնող մարմին ներկայանալը հնարավոր է ապահովել վերջինիս նկատմամբ առավել խիստ խափանման միջոց կալանավորում ընտրելու պարագայում:

Ինչ վերաբերում է պաշտպանի միջնորդությանը՝ իր պաշտպանյալի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը գրավով փոխարինելուն, ապա դատարանը հանգում է այն հետևության, որ մեղադրյալ Ֆեոդոր Իվանի Բոլղիրևի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի համարվել չի կարող:

(...)

[Առաջին ատյանի դատարանի] գնահատմամբ, տվյալ դեպքում, անհրաժեշտ է նշել, որ վերագրվող հանցորեն վտանգավոր արարքների բնույթն ու հանրային վտանգավորության աստիճան, գործի մյուս հանգամանքների հետ միասին ունեն էական նշանակություն նրա հետագա վարքագծի հավանականությունը կանխորոշելու հարցում, որ գործի կոնկրետ հանգամանքներից ելնելով՝ այլընտրանքային երաշխիքն ի զորու չէ կանխել մեղադրյալի ոչ իրավաչափ վարքագիծը՝ նրան ազատ արձակելու դեպքում, և առկա է ողջամիտ ենթադրություն, որ ազատության մեջ մնալով՝ մեղադրյալը կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից: Հիմք ընդունելով վերը շարադրված հիմնավորումները և պատճառաբանությունները, [Առաջին ատյանի դատարանը] գտնում է, որ մեղադրյալ Ֆ.Բոլղիրևի նկատմամբ գրավի կիրառումն անթույլատրելի է:

Միջնորդությունը քննարկելիս [Առաջին ատյանի դատարանը] հաշվի է առնում նաև մեղադրյալ Ֆ.Բոլղիրևի անձը բնութագրող տվյալները, մասնավորապես՝ նախկինում դատված չլինելը, մշտական բնակության վայր ունենալը, կնոջ հղիության հանգամանքը, սակայն միևնույն ժամանակ արձանագրում է, որ վերը շարադրվածի պայմաններում դրանք ինքնին չեն կարող որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավը կիրառելու հիմք հանդիսանալ» (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 51-58):

7. Վերաքննիչ դատարանի դատական ակտի համաձայն՝ *«(...) Առաջին ատյանի դատարան ներկայացված վերոգրյալ նյութերի՝ հիմնավոր կասկածի տեսանկյունից կատարված ուսումնասիրությունից երևում է, որ տվյալ դեպքում Առաջին ատյանի դատարանը միջնորդության քննության ժամանակ բավարար տվյալներ ունեցել է մեղադրյալ Ֆեոդոր Բոլղիրևի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասով ենթադրյալ հանցանքը կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության մասին հետևության գալու համար:*

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 1-ին մասով ենթադրյալ հանցանքը կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության կամ բացակայության հարցին, ապա ներկայացված նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2017 թվականի փետրվարի 16-ին՝ ժամը 22:00-ի սահմաններում, Ալեքսեյ Գրինչուկը զանգահարել է Նազելի Մելիքյանի հեռախոսահամարին՝ սեռական հարաբերություն ունենալու նպատակով: Խոսակցության ընթացքում Մարատ Կիրիլյուկը վերցրել է հեռախոսը և վեճի բռնվել Ալեքսեյ Գրինչուկի հետ, որի ընթացքում փոխադարձ հայհոյանքներ են հնչեցվել, որից հետո Ալեքսեյ Գրինչուկը և նրա ընկերները, այդ թվում՝ Ֆեոդոր Բոլդիրևը, գնացել են Մարատ Կիրիլյուկի բնակարան՝ հայհոյանքների կապակցությամբ հարաբերություններ պարզելու համար, որտեղ վիճաբանություն է սկսվել, և Ալեքսեյ Գրինչուկը, Ֆեոդոր Բոլդիրևը և Մարատ Կիրիլյուկը փոխադարձ հարվածներ են հասցրել միմյանց: Ներկայացված նյութերում առկա է նաև հակասական և իրարամերժ փաստական տվյալ, մասնավորապես՝ այն, որ Ֆեոդոր Բոլդիրևը Նազելի Մելիքյանից և/կամ Մարատ Կիրիլյուկից գումար և ոսկեղեն է պահանջել:

Այսինքն՝ նշված տվյալները ողջամտորեն վկայում են այն մասին, որ Ֆեոդոր Բոլդիրևի և Մարատ Կիրիլյուկի վիճաբանությունն առաջացել է վերջինի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու՝ հայհոյանքներ հնչեցնելու հետևանքով: Իսկ այն, որ այդ ծեծկռտուքը վերաճել է մեղադրյալի կողմից ենթադրյալ ավազակությամբ տուժողից գումար, ոսկեղեն և այլ իրեր հափշտակելուն, ապա այդ մասով ներկայացված նյութերը չեն կարող բավարար լինել հիմնավոր կասկածի առկայությունը հաստատված համարելու:

Ընդ որում՝ տուժողներն իրենց սկզբնական ցուցմունքներում նշել են, թե Ֆեոդոր Բոլդիրևն ու նրա ընկերներն իրենցից գումար և ոսկեղեն են պահանջել: Այնուհետև՝ տուժող Նազելի Մելիքյանը Ֆեոդոր Բոլդիրևի հետ առերես հարցաքննության ժամանակ հայտնել է, որ ինքը չի տեսել, թե ովքեր են Մարատին ծեծել և գումար ու ոսկեղեն պահանջել: Այդ մասին իրեն Մարատն է պատմել: Իսկ Ֆեոդոր Բոլդիրևն էլ իր ցուցմունքում նշել է, որ իրենք Մարատ Կիրիլյուկից գումար և ոսկի չեն պահանջել: Իրենք գնացել են այնտեղ հարաբերություններ պարզելու համար և նրան ծեծել են:

Վերը նշվածի համատեքստում Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նկատել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է նաև շահադիտական շարժառիթը, նպատակը: Շահադիտական նպատակը հանցավորի ձգտումն է նյութական օգուտ ստանալ հափշտակված գույքի հաշվին՝ այն վերցնելով, իրենը դարձնելով և այլն: Իսկ եթե շահադիտական նպատակը բացակայում է, և անձն ապօրինի, անհատույց տիրանում է ուրիշի գույքին այլ շարժառիթով, մասնավորապես՝ գույքի տիրոջը մերկացնելու, վրեժ լուծելու և այլ նպատակով, հափշտակության հանցակազմը բացակայում է:

Վերոգրյալ վերլուծությունների լույսի ներքո Վերաքննիչ դատարանը գալիս է այն եզրահանգման, որ Ֆեոդոր Բոլդիրևի գործողություններում շահադիտական դրդումների առկայությունը քիչ հավանական է, որպիսի պայմաններում ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 1-ին մասով նրան մեղսագրվող արարքում հիմնավոր կասկածի առկայությունը հաստատված չի կարող համարվել: Միաժամանակ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Ֆեոդոր Բոլդիրևի ենթադրյալ գործողություններն առերևույթ կարող են պարունակել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված այլ հանցակազմի, մասնավորապես՝ 118-րդ հոդվածի կամ 322-րդ հոդվածի 2-րդ մասի (եթե տուժողին էական վնաս է պատճառվել) հատկանիշներ:

Այսպիսով՝ Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ ներկայացված նյութերում առկա են միայն մեղադրյալ Ֆեոդոր Բոլդիրևի կողմից 147-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև 118-րդ հոդվածով կամ 322-րդ - հոդվածի 2-րդ մասով ենթադրյալ հանցանքները կատարած լինելու հիմնավոր կասկածը հավաստող տվյալներ, հարկ է համարում անդրադառնալ կալանավորման հիմքերի առկայության կամ բացակայության հարցին:

(...)

Տվյալ դեպքում Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով մեղսագրվող հանրորեն վտանգավոր արարքների բնույթն ու վտանգավորության աստիճանը, եկել է այն եզրահանգման, որ մեծ է ռիսկայնությունն առ այն, որ Ֆեոդոր Բոլդիրևը, ազատության մեջ մնալով, կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, որպիսի մոտեցումը Վերաքննիչ դատարանի համար անընդունելի է:

Վերաքննիչ դատարանի վերոգրյալ եզրահանգումը պայմանավորված է հատկապես այն հանգամանքով, որ վերը նշված եզրահանգումների պայմաններում մեղադրյալ Ֆեոդոր Բոլդիրևի ենթադրյալ գործողությունների արդյունքում հիմնավոր կասկածն առկա է ոչ մեծ և/կամ միջին ծանրության հանցագործությունների կատարման համար:

Նման եզրահանգումներով պայմանավորված՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով նախատեսված՝ մեղադրյալի հավանական գործողությունների մասին Առաջին ատյանի դատարանի հետևությունները հիմնված չեն գործի նյութերից բխող ողջամիտ ենթադրությունների վրա, ուստի Առաջին ատյանի դատարանի հիմնավորումներն ամենևին բավարար չեն մեղադրյալ Ֆեոդոր Բոլդիրևի ազատության կանխավարկածը հաղթահարելու և նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու համար, իսկ նման պայմաններում մեղադրյալ Ֆեոդոր Բոլդիրևին ազատությունից զրկելը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի հիման վրա ճնավորված նախադեպային իրավունքի իմաստով կդիտվի կամայականություն: Վերաքննիչ դատարանը միաժամանակ հարկ է համարում նկա-

տել, որ սույն գործով չեն ներկայացվել բավարար փաստական տվյալներ առ այն, որ խափանման մյուս միջոցները քրեական գործով վարույթի ընթացքում չեն կարող ապահովել մեղադրյալ Ֆեոդոր Բոլղիրևի պատշաճ վարքագիծը: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս հաշվի է առնում նաև մեղադրյալ Ֆեոդոր Բոլղիրևի անձը՝ այն, որ նա ունի մշտական բնակության վայր, նախկինում դատապարտված չի եղել և բնութագրվում է դրականորեն» (տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 26-38):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը</u>.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի համոզմամբ՝ Վերաքննիչ դատարանի որոշմամբ խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ, 135-րդ և 288-րդ հոդվածների պահանջները, ինչն ազդել է գործի ելքի վրա:

Բողոքաբերը, վերլուծելով անձի նկատմամբ խափանման միջոց կիրառելու հիմքերի, ինչպես նաև գրավի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՏԴ-2/0009/06/11, թիվ ԿԴ-1/0062/06/12, թիվ ԱՎԴ-/0022/06/08, թիվ ԱՐԴ-/0121/01/11 որոշումները, եզրահանգել է, որ Վերաքննիչ դատարանը, Ֆ.Բոլղիրևին առաջադրված մեղադրանքը «վերաորակելով» և կալանավորումը վերացնելով, դուրս է եկել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներից՝ կայացնելով անհիմն ու ապօրինի դատական ակտ:

Մասնավորապես, բողոքի հեղինակը գտել է, որ Վերաքննիչ դատարանը Ֆ.Բոլղիրևին առաջադրված մեղադրանքի ծանրությունն անհիմն կերպով նվազեցրել է՝ արդյունքում կալանքի նպատակահարմարության հարցը դիտարկելով ոչ թե ծանր, այլ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործությունների տեսանկյունից: Նման պայմաններում, ըստ բողոքաբերի, անտեսվել են կալանավորման անհրաժեշտության հիմքում ընկած հանցանքի որակական բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը:

8.1. Բողոք բերած անձը նշել է նաև, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը սխալ եզրահանգման է եկել նաև այն առումով, որ տուժողների և մեղադրյալների կողմից տրված ցուցմունքների միջև հակասությունը մեկնաբանել է որպես հիմնավոր կասկածը հերքող հանգամանք: Ըստ բողոքաբերի՝ քրեական գործի քննության տվյալ փուլում, հատկապես, երբ առկա են վիճարկման ենթակա հանգամանքներ, հարցաքննված անձանց ցուցմունքների միջև կարող են առաջանալ հակասություններ, որոնց պատճառները և յուրաքանչյուր ցուցմունքի արժանահավատությունը, վերաբերելիությունը, հաստատումը կամ հերքումը, ապացուցողական տեսակարար կշիռն արդեն վերլուծության և քննարկման ենթակա են նախաքննության հետագա ընթացքում կամ դատարանում, բայց ոչ կալանավորման օրինականության և հիմնավորվածության վերաբերյալ դատական քննության սահմաններում:

8.2. Վերոնշյալի համատեքստում բողոքաբերը, մատնանշելով նաև Ֆ.Բոլղիրևին մեղսագրվող հանցանքների բնույթն ու վտանգավորության աստիճանը, քննչական որոշակի գործողություններ կատարելու անհրաժեշտությունը, դրանց օբյեկտիվության վրա մեղադրյալի ազդելու հնարավորությունը, Ֆ.Բոլղիրևի կողմից քրեական պատասխանատվությունից առերևույթ խուսափելու հանգամանքը՝ այն, որ նա թաքնվել է վարույթն իրականացնող մարմնից և բերման է ենթարկվել դեպքից շուրջ տասն օր անց, գտել է, որ նշված հանգամանքները մեծացնում են հավանականությունը, որ մեղադրյալը, մնալով ազատության մեջ, կարող է թաքնվել վարույթն իրականացնող մարմնից և խոչընդոտել գործի քննությանը:

9. Վերոշարադրյալի հիման վրա ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի որոշմանը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն առ այն, որ Ֆ.Բոլղիրևի կողմից՝ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության առերևույթ կատարման վերաբերյալ հիմնավոր կասկածը բացակայում է:

11. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝*

(…)

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով.

(…)»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.*

(…)

գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից

հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար.

(…)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք:

2. Ոչ ոք չի կարող արգելանքի վերցվել և պահվել անազատության մեջ այլ կերպ, քան սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով:

(…)»:

12. Կալանավորման պայմաններից մեկի՝ «հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի» էության և դրա ստուգման սահմանների վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում ձևավորել է մի շարք իրավական դիրքորոշումներ: Այդ համատեքստում Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ *Էդգար Եղիազարյանի* գործով որոշման շրջանակներում վերջինս, հիմնվելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած նախադեպային իրավունքի վրա, ինչպես նաև վերահաստատելով և զարգացնելով իր կողմից նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները, ընդգծել է հետևյալ հանգամանքները՝

- հիմնավոր կասկածի բացակայության դեպքում անձի ազատության իրավունքը սահմանափակելն ինքնին ապօրինի է,

- հիմնավոր կասկածը չի պահանջում կատարված արարքի մեջ մեղադրյալի մեղավորությունն ապացուցող՝ հիմնավոր կասկածից վեր ապացուցման չափանիշին համապատասխան բավարար փաստերի առկայություն, այնուամենայնիվ, «կասկածը» պետք է լինի ողջամիտ, այն պետք է հիմնված լինի օրենքով սահմանված կարգով ձեռք բերված որոշակի փաստական տվյալների վրա (որոնք կվկայեն կատարված արարքին անձի առնչությունը և դեպքի, իրադարձության համընկնումն այն հանցանքին, որի առերևույթ կատարման մեջ անձը կասկածվում (մեղադրվում) է, իսկ դրա առկայության կամ բացակայության վերաբերյալ դատարանի հետևությունները *պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված,*

- կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելիս պետք է ցույց տրվի, որ հանցանք կատարած լինելու կասկածը պահպանվել է և շարունակում է մնալ «հիմնավոր»: Ազատությունից զրկելու տևողությունը կարող է լինել կարևոր գործոն կասկածի՝ պահանջվող աստիճանի համար,

- մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս, մասնավորապես՝ կալանավորման վերաբերյալ միջնորդությունը քննելիս դատարանն իրավասու չէ քննարկման առարկա դարձնելու այնպիսի հարցեր, որոնք դուրս են այդ պահին իր առջև դրված խնդիրների շրջանակից (տե՛ս, mutatis mutandis, *Ներսես Միսակյանի* գործով Վճռաբեկ

դատարանի՝ 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱՐԴ-1/0003/11/08 որոշումը), ուստիև հիմնավոր կասկածի առկայությունը ստուգելիս դատարանն *իրավասու չէ կանխորոշելու մեղքի հարցը, իրավական գնահատական տալու անձի մեղավորությանը կամ անմեղությանը, անմիջականորեն փաստելու անձի արարքում հանցակազմի առկայությունը կամ բացակայությունը:* Միևնույն ժամանակ դատարանը, վերոգրյալ հարցերի շուրջ իրավական գնահատականներ չտալով, իրավասու է որոշում կայացնելու կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ ժամկետը երկարացնելու կամ վերահաստատելու վերաբերյալ քրեական հետապնդման մարմնի ներկայացրած միջնորդությունը մերժելու մասին այն դեպքում, երբ հավաստում է քրեական գործով վարույթը բացառող հանգամանքի *առերևույթ* առկայությունը և դրա *հնարավոր* կիրառելիությունը: Ընդ որում, քրեական գործով վարույթը բացառող այդ հանգամանքի առերևույթ առկայության մասին վկայությունը պետք է լինի ոչ թե ներկայացված նյութերի, այդ թվում՝ ապացույցների՝ գործը ըստ էության քննելու և լուծելու ժամանակ *պահանջվող աստիճանի չափ բազմակողմանի և խորը վերլուծության արդյունք*, այլ այդպիսի վկայությունը պետք է հիմնված լինի *ներկայացված նյութերից բխող համեմատաբար ակնհայտ փաստերի վրա* (օրինակ՝ արարքը, որի կատարման մեջ մեղադրվում է անձը, դրա կատարման պահին հանցագործություն չի համարվել (այդ առումով մանրամասն տե՛ս, օրինակ, *Խաչատրյանը և այլք ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 23978/06), կամ որպես մեղադրյալ է ներգրավվել քրեական պատասխանատվության ենթարկվելու տարիքի չհասած անձը, կամ անցել են վաղեմության ժամկետները, ընդունվել է համաներման ակտ և այլն),

- հիմնավոր կասկածի հարցը գնահատման ենթարկելիս վճռորոշ նշանակություն կարող են ունենալ այն իրավիճակները, երբ արարքին տրված իրավական որակումն *ակնհայտորեն* չհամապատասխանի արարքի փաստական նկարագրությանը (կամ անձին վերագրված փաստերը հաստատող՝ միջնորդությանը կից ներկայացված նյութերին), իսկ արարքի փաստական կողմն *առերևույթ* վկայի արարքին տրված իրավական որակման համեմատությամբ իր բնույթով առավել նվազ ծանրության ենթադրյալ հանցագործության կատարման մասին (օրինակ՝ անձին մեղսագրվել է խոշոր չափերով գողություն կատարելու հանցակազմը (ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ), ինչը, սակայն, ակնհայտորեն չի համապատասխանում արարքի փաստական նկարագրությանը, իսկ վերջինը առերևույթ վկայում է անձի արարքում գողության հասարակ հանցակազմի հատկանիշների առկայության մասին, կամ, օրինակ, անձին մեղսագրվել է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ զենքի գործադրմամբ խուլիգանություն կատարելու հանցակազմը, սակայն արարքի փաստական նկարագրությունը *ակնհայտորեն* վկայում է զենքի գործադրման բացակայության, բայց միևնույն

ժամանակ առերևույթ փաստում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված որակյալ հանցակազմի առկայության մասին), (տե՛ս *Էդգար Եղիազարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԱՆԴ/0017/06/16 որոշման 15-րդ կետը):

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

ա) Տուժող Ն.Մելիքյանը 2017 թվականի փետրվարի 17-ի հարցաքննության ժամանակ հայտնել է, որ Մ.Կիրիլյուկի բնակարան եկած չորս անձանցից մեկն իրենից փող է պահանջել՝ հակառակ դեպքում սպառնալով սպանել Մ.Կիրիլյուկին և ամեն ինչ իր վրա բարդել: Այդ ընթացքում Մ.Կիրիլյուկից ոսկեղեն են պահանջել՝ սպառնալով իրենց երկուսին էլ բռնաբարել: Այնուհետև այդ անձանցից մեկը սկսել է քանդել դարակները և գումար փնտրել: Ինքը նկատել է, որ դարակից երեք 20.000 ՀՀ դրամ արժողությամբ թղթադրամ է ընկել: Տուժողը նկատել է նաև, որ մեկը վերցնում է հեռուստացույցը, պատի ժամացույցը, ծաղկամանը, դրա միջի 10.000 ՀՀ դրամը, այնուհետև նշված գումարն ու հեռուստացույցը թողնում միջանցքում: Ն.Մելիքյանը տեսել է, որ իր պայուսակից դատարկում են իրերը, ապա վերցնում անձնագիրն ու 43.000 ՀՀ դրամ (տե՛ս սույն որոշման 5.1-րդ կետը):

Ֆ.Բոլղիրևի հետ 2017 թվականի մարտի 1-ի առերես հարցաքննության ժամանակ տուժող Ն.Մելիքյանը հայտնել է, որ դեպքի հաջորդ օրը տեսել է, որ իր պայուսակից բացակայում են անձնագիրը, մազերը, հեռախոսը, իսկ Մ.Կիրիլյուկի տնից՝ վերջինիս հեռախոսները, ժամացույցը, DVD-ն, ծաղկամանը: Տուժողը նշել է նաև, որ Ֆ.Բոլղիրևն իրեն ոչ սպառնացել է, ոչ էլ խփել: Ըստ տուժողի՝ Մ.Կիրիլյուկը պատմել է իրենից գումար և ոսկեղեն պահաջելու վերաբերյալ, սակայն ինքն անձամբ նման արտահայտություններ չի լսել (տե՛ս սույն որոշման 5.4.-րդ կետը):

Տուժող Մ.Կիրիլյուկը 2017 թվականի փետրվարի 20-ի հարցաքննության ժամանակ հայտնել է, որ իր բնակարան են ներխուժել չորս անհայտ անձինք և հարձակվել իր վրա: Նշված անձանցից մեկը խուզարկել է բնակարանի իրերը և գումար փնտրել: Այդ անձանցից մեկ ուրիշը փորձել է հանել իր մատի մատանին՝ հարցնելով գումարի և ոսկեղենի տեղը: Ըստ տուժող Մ.Կիրիլյուկի՝ իր բնակարանից գողացել են DVD նվագարկիչ, պատի ժամացույց, ծաղկաման, 320.000 ՀՀ դրամ գումար և երկու բջջային հեռախոս (տե՛ս սույն որոշման 5.2-րդ կետը):

Ֆ.Բոլղիրևի հետ 2017 թվականի փետրվարի 28-ի առերես հարցաքննության ժամանակ տուժող Մ.Կիրիլյուկը տվել է, ըստ էության, նույնաբովանդակ ցուցմունքներ (տե՛ս սույն որոշման 5.3-րդ կետը):

բ) Առաջին ատյանի դատարանը նշել է, որ առկա են ենթադրյալ հանրորեն վտանգավոր արարքների կատարմանը Ֆ.Բոլղիրևի առնչությունը (հիմնավոր կասկածը) հաստատող ապացույցներ, մասնավորապես՝ տուժողներ Ն.Մելիքյանի, Մ.Կիրիլյուկի, կասկածյալ Ֆ.Բոլղիրևի ցուցմունքնե-

րը, տուժողների և կասկածյալի առերես հարցաքննությունների ցուցմունքները և անձին ճանաչման ներկայացնելու արձանագրությունները: Բացի այդ, Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով Ֆ.Բոլղիրևին մեղսագրվող արարքների հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը, ակնկալվող պատժի խստությունը, ինչպես նաև այն, որ մեղադրյալը դեպքի կատարումից հետո տասն օր անց է բերման ենթարկվել ոստիկանություն, այսինքն՝ թաքնվել է վարույթն իրականացնող մարմնից և հայտնաբերվել է միայն ձեռնարկված քննչական ու օպերատիվ գործողությունների արդյունքում, եզրահանգել է, որ մեծ է հավանականությունն առ այն, որ Ֆ.Բոլղիրևը, մնալով ազատության մեջ, կարող է թաքնվել վարույթն իրականացնող մարմնից (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

գ) Վերաքննիչ դատարանի համոզմամբ՝ ներկայացված նյութերը բավարար չեն հիմնավոր կասկածի առումով հաստատված համարելու, որ Ֆ.Բոլղիրևի և Մ.Կիրիլյուկի միջև ծեծկռտուքը վերաճել է մեղադրյալի կողմից ավազակությամբ տուժողից գումար, ոսկեղեն և այլ իրեր հափշտակելուն: Բացի այդ, ստորադաս դատարանն արձանագրել է, որ *ներկայացված նյութերում առկա է նաև հակասական և իրարամերժ փաստական տվյալ, մասնավորապես՝ այն, որ Ֆ.Բոլղիրևը Ն.Մելիքյանից և/կամ Մ.Կիրիլյուկից գումար և ոսկեղեն է պահանջել:* Վերաքննիչ դատարանը փաստել է, որ տուժողներ Ն.Մելիքյանն ու Մ.Կիրիլյուկն իրենց սկզբնական ցուցմունքներում նշել են Ֆ.Բոլղիրևի և նրա ընկերների կողմից գումար և ոսկեղեն պահանջելու մասին, սակայն հետագայում Ն.Մելիքյանը նշել է, որ Մ.Կիրիլյուկին ծեծելու ու նրանից գումար և ոսկեղեն պահանջելու գործողություններին ինքն ականատես չի եղել, և այդ մասին իրեն պատմել է Մ.Կիրիլյուկը: Ասվածի, ինչպես նաև մեղադրյալ Ֆ.Բոլղիրևի՝ Մ.Կիրիլյուկից գումար և ոսկեղեն պահանջելու հանգամանքը հերքող ցուցմունքների հաշվառմամբ Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ *Ֆ.Բոլղիրևի գործողություններում շահադիտական դրդումների առկայությունը քիչ հավանական է, որպիսի պայմաններում ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 1-ին մասով նրան մեղսագրվող արարքում հիմնավոր կասկածի առկայությունը հաստատված չի կարող համարվել:* Միևնույն ժամանակ Վերաքննիչ դատարանը գտել է, որ Ֆ.Բոլղիրևի ենթադրյալ գործողություններն առերևույթ կարող են պարունակել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված այլ հանցակազմի, մասնավորապես՝ 118-րդ հոդվածի կամ 322-րդ հոդվածի 2-րդ մասի (եթե տուժողին էական վնաս է պատճառվել) հատկանիշներ: Անդրադառնալով կալանավորման հիմքերին՝ Վերաքննիչ դատարանն անընդունելի է համարել Առաջին ատյանի դատարանի դատողություններն այն մասին, որ Ֆ.Բոլղիրևը, մնալով ազատության մեջ, կարող է թաքնվել վարույթն իրականացնող մարմնից, քանի որ, ըստ Վերաքննիչ դատարանի, մեղադրյալի ենթադրյալ գործողությունների արդյունքում հիմնավոր կասկածն առկա է ոչ մեծ և/կամ

միջին ծանրության հանցագործությունների կատարման համար: Արդյունքում Վերաքննիչ դատարանը փաստել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով նախատեսված՝ մեղադրյալի հավանական գործողությունների մասին Առաջին ատյանի դատարանի հետևությունները հիմնված չեն գործի նյութերից բխող ողջամիտ ենթադրությունների վրա և բավարար չեն մեղադրյալ Ֆ.Բոլղիրևի ազատության կանխավարկածը հաղթահարելու և նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու համար (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

14. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 11-12-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ֆ.Բոլղիրևի կողմից՝ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածով նախատեսված հանցագործության առերևույթ կատարման վերաբերյալ հիմնավոր կասկածի բացակայության մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր չեն:

Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով տուժողներ Ն.Մելիքյանի և Մ.Կիրիլյուկի սկզբնական, ինչպես նաև վերջիններիս մեղադրյալ Ֆ.Բոլղիրևի հետ առերես հարցաքննության ժամանակ տված ցուցմունքները (տե՛ս սույն որոշման 5.1-5.4-րդ կետերը), դրանք համադրելով գործում առկա այլ նյութերի հետ, արձանագրում է, որ նշված փաստական տվյալների առկայությունն արդեն իսկ բավարար է՝ դատավարության տվյալ փուլում ողջամիտ ենթադրություն անելու, որ մեղադրյալ Ֆ.Բոլղիրևին վերագրված արարքն առերևույթ բովանդակում է ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշները: Այլ կերպ՝ ըստ Վճռաբեկ դատարանի՝ սույն գործով առկա են բավարար հիմքեր՝ եզրակացնելու, որ Ֆ.Բոլղիրևն առնչություն ունի իրեն վերագրվող ենթադրյալ հանցագործությանը, և դեպքը, իրադարձությունը համընկնում են այն առերևույթ հանցանքին, որի կատարման մեջ վերջինս մեղադրվում է:

14.1. Ինչ վերաբերում է գումար և ոսկեղեն պահանջելու մասով տուժողների և մեղադրյալ Ֆ.Բոլղիրևի կողմից տրված ցուցմունքներում առկա հակասության հիման վրա Վերաքննիչ դատարանի կողմից արված այն հետևություններին (*տե՛ս սույն որոշման 7-րդ, 13-րդ կետերը*), որ Ֆ.Բոլղիրևին վերագրված արարքում ավազակության հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշի՝ շահադիտական շարժառիթի առկայության վերաբերյալ հիմնավոր կասկածը չի հաստատվում, ապա Վճռաբեկ դատարանը, հիմնվելով սույն որոշման 12-րդ կետի հատկապես վերջին երկու պարբերություններում արտահայտված իրավական դիրքորոշումների վրա, գտնում է, որ այդպիսի դատողությունն իրավաչափ չի կարող համարվել: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ հիմնավոր կասկածի հարցը գնահատման ենթարկելիս՝

- դատարանն իրավասու չէ քննարկման առարկա դարձնելու այնպիսի հարցեր, որոնք դուրս են այդ պահին իր առջև դրված խնդիրների շրջանակից,

- քրեական գործով վարույթը բացառող հանգամանքի առերևույթ առկայության մասին դատարանի վկայությունը պետք է լինի ոչ թե ներկայացված նյութերի, այդ թվում՝ ապացույցների՝ գործն ըստ էության քննելու և լուծելու ժամանակ *պահանջվող աստիճանի չափ բազմակողմանի և խորը վերլուծության արդյունք*, այլ այդպիսի վկայությունը պետք է հիմնված լինի *ներկայացված նյութերից բխող համեմատաբար ակնհայտ փաստերի վրա,*

- վճռորոշ նշանակություն կարող են ունենալ այն իրավիճակները, երբ արարքին տրված իրավական որակումն *ակնհայտորեն* չհամապատասխանի արարքի փաստական նկարագրությանը (կամ անձին վերագրված փաստերը հաստատող՝ միջնորդությանը կից ներկայացված նյութերին), իսկ արարքի փաստական կողմն *առերևույթ* վկայի արարքին տրված իրավական որակման համեմատությամբ իր բնույթով առավել նվազ ծանրության ենթաղրյալ հանցագործության կատարման մասին (տե՛ս *Էդգար Եղիազարյանի* գործով թիվ ԵԱՆԴ/0017/06/16 որոշման 15-րդ կետը):

Այլ կերպ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տուժողների և մեղադրյալ Ֆ.Բոլղիրևի կողմից տրված ցուցմունքներում առկա վերոհիշյալ հակասությունը չի կարող դիտվել որպես Ֆ.Բոլղիրևին վերագրված արարքում շահադիտական շարժառիթի առերևույթ բացակայության մասին վկայող համեմատաբար ակնհայտ փաստ: Ավելին՝ նշյալ հանգամանքն ամենևին չի փաստում այն մասին, որ Ֆ.Բոլղիրևին մեղսագրված արարքին տրված իրավական որակումն *ակնհայտորեն* չի համապատասխանում արարքի փաստական նկարագրությանը կամ Ֆ.Բոլղիրևին վերագրված փաստերը հաստատող՝ միջնորդությանը կից ներկայացված նյութերին: Վերոգրյալի առնչությամբ Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է հայտնում նաև բողոքաբերի հետևյալ փաստարկին. «*Քրեական գործի քննության տվյալ փուլում, հատկապես, երբ առկա են վիճարկման ենթակա հանգամանքներ, հարցաքննված անձանց ցուցմունքների միջև կարող են առաջանալ հակասություններ, որոնց պատճառները և յուրաքանչյուր ցուցմունքի արժանահավատությունը, վերաբերելիությունը, հաստատումը կամ հերքումը, ապացուցողական տեսակարար կշիռն արդեն վերլուծության և քննարկման ենթակա են նախաքննության հետագա ընթացքում կամ դատարանում, բայց ոչ կալանավորման օրինականության և հիմնավորվածության վերաբերյալ դատական քննության սահմաններում*» (տե՛ս սույն որոշման 8.1-րդ կետը):

15. Նախորդ կետում արված դատողությունները Վճռաբեկ դատարանին հիմք են տալիս եզրակացնելու, որ Ֆ.Բոլղիրևի արարքում ավազակության հանցակազմի հիմնավոր կասկածի առկայությունը համապատասխան պատճառաբանություններով հերքելով՝ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմաններից:

16. Ինչ վերաբերում է մեղադրյալին կալանավորելու հիմքերին, ապա Ֆ.Բոլդիրևին ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասով և 175-րդ հոդվածի 1-ին մասով վերագրված հանցագործությունների հանրային վտանգավորության բնույթի, ծանրության աստիճանի (մասնավորապես՝ մեղսագրված արարքներից ավազակությունը դասվում է ծանր հանցանքների շարքին) գնահատման համատեքստում, հաշվի առնելով նաև այն, որ մեղադրյալը դեպքից հետո թաքնվել է վարույթն իրականացնող մարմնից և ձեռնարկված քննչական և օպերատիվ գործողությունների արդյունքում է միայն դեպքից տասն օր անց հայտնաբերվել ու բերման ենթարկվել՝ Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում Առաջին ատյանի դատարանի դատողությունն այն մասին, որ նման պայմաններում մեծ է ռիսկայնությունը, որ մեղադրյալը, ազատության մեջ մնալով, կարող է թաքնվել վարույթն իրականացնող մարմնից:

17. Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանն իրավաչափ է համարում նաև կալանքը գրավով փոխարինելու հարցի առնչությամբ Առաջին ատյանի դատարանի արտահայտած հետևյալ դիրքորոշումները. *«(...)[Գ]ործի կոնկրետ հանգամանքներից ելնելով այլընտրանքային երաշխիքն ի զորու չէ կանխել մեղադրյալի ոչ իրավաչափ վարքագիծը՝ նրան ազատ արձակելու դեպքում, և առկա է ողջամիտ ենթադրություն, որ ազատության մեջ մնալով մեղադրյալը կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից: (...)*

(...) [Առաջին ատյանի դատարանը] հաշվի է առնում նաև մեղադրյալ Ֆ.Բոլդիրևի անձը բնութագրող տվյալները, մասնավորապես՝ նախկինում դատված չլինելը, մշտական բնակության վայր ունենալը, կնոջ հղիության հանգամանքը, սակայն միևնույն ժամանակ արձանագրում է, որ վերը շարադրվածի պայմաններում դրանք ինքնին չեն կարող որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավը կիրառելու հիմք հանդիսանալ» (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

18. Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ, 288-րդ, 358-րդ հոդվածների պահանջների խախտում, ինչն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների, հիմք է ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու համար: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրյալ Ֆ.Բոլդիրևի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդության հարցը լուծելիս Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ: Ուստի արդարադատության

արդյունավետության շահերից ելնելով՝ անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 2-ի որոշմանը՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Վճռաբեկ դատարանը փաստում է նաև, որ Առաջին ատյանի դատարանի որոշմամբ սահմանված՝ կալանավորման 2 ամիս ժամկետին պետք է հաշվակցել Ֆ.Բոլղիրևին փաստացի արգելանքի վերցնելու պահից՝ 2017 թվականի փետրվարի 27-ից մինչև ազատ արձակվելը նրա՝ անազատության մեջ գտնվելու ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Մեղադրյալ Ֆեոդոր Իվանի Բոլղիրևի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի մարտի 28-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 2-ի որոշմանը՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշմամբ սահմանված՝ կալանավորման 2 ամիս ժամկետին հաշվակցել 2017 թվականի փետրվարի 27-ից մինչև ազատ արձակվելը մեղադրյալ Ֆ.Բոլղիրևի՝ անազատության մեջ գտնվելու ժամկետը:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

24.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱՔԴ/0025/06/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
	Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝	Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ՝	
պաշտպան	Կ.ՂԱԶԱՐՅԱՆԻ
մեղադրող	Շ.ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻ

2017 թվականի նոյեմբերի 15-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով մեղադրյալ Ալեքսեյ Անդրեյի Գրիգուկի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի մարտի 28-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնում 2016 թվականի փետրվարի 17-ին ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերի, 324-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 09101217 քրեական գործը:

2017 թվականի փետրվարի 27-ին Ալեքսեյ Գրինչուկը ներկայացել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Քանաքեռ-Զեյթունի բաժին և ձերբակալվել:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի մարտի 2-ի որոշմամբ Ա.Գրինչուկը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասով, 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով և 185-րդ հոդվածի 1-ին մասով:

2. 2017 թվականի մարտի 2-ին նախաքննության մարմինը միջնորդություն է հարուցել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ մեղադրյալ Ա.Գրինչուկի նկատմամբ որպես խափանման միջոց 2 ամիս ժամկետով կալանավորում կիրառելու մասին:

Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 2-ի որոշմամբ նախաքննության մարմնի վերոհիշյալ միջնորդությունը բավարարվել է, և մեղադրյալ Ա.Գրինչուկի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել 2 ամիս ժամկետով կալանավորումը: Նույն որոշմամբ մերժվել է մեղադրյալի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ պաշտպանի միջնորդությունը:

3. Պաշտպանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի մարտի 28-ին որոշում է կայացրել բողոքը մասնակիորեն բավարարելու և Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 2-ի որոշումը բեկանելու մասին: Մեղադրյալ Ա.Գրինչուկի նկատմամբ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց է կիրառվել գրավը՝ 1.000.000 ՀՀ դրամի չափով:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 27-ի որոշմամբ ներկայացված բողոքը վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Ա.Գրինչուկին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա *«(...) Մարատ Կիրիլյուկի կամքին հակառակ՝ ապօրինի մուտք է գործել Երևան քաղաքի Զ.Սարկավագ փողոցի 123/3 շենքի [թիվ] 13 բնակարան, խախտելով բնակարանի անձեռնմխելիությունը, այն է՝ մարմնավաճառությամբ զբաղվող Նազելի Մելիքյանի հետ ունեցած հեռախոսազրույցի ընթաց-*

քում վերջինիս հեռախոսահամարից Մ.Կիրիլյուկի կողմից իր և ծնողների հասցեին հնչած սեռական բնույթի հայհոյանքների շուրջ պարզաբանումներ ստանալու համար, Ն.Մելիքյանի ծառայությունից օգտվելու հանգամանքը որպես պատրվակ օգտագործելով, 2017 թվականի փետրվարի 16-ին՝ ժամը 23:30-ի սահմաններում, (...) իր ընկերներ՝ Ֆեոդոր Բոլդիրևի, Ալեքսանդր Կասմինինի և Դավիդ Գրինչուկի հետ գնացել է Մ.Կիրիլյուկին պատկանող նշված բնակարան, որտեղ իրենց հետ հեռախոսազրույցի ընթացքում հայհոյած երիտասարդին գտնելու նպատակով Ա.Գրինչուկը և Ֆ.Բոլդիրևը մտել են նշված շենքի [թիվ] 13 բնակարան, իսկ Ա.Կասմինինը և Դ.Գրինչուկը սպասել են դրսում: Ա.Գրինչուկի և Ֆ.Բոլդիրևի առջև հիշյալ բնակարանի մուտքի դուռը բացել է Ն.Մելիքյանը, սակայն նրանք առանց իրավերի դուռը հրելով բացել և ապօրինի մուտք են գործել բնակարան, որտեղ հանդիպելով բնակարանատեր Մ.Կիրիլյուկին և, վերջինիս կողմից իր բնակարանից դուրս գալու օրինական պահանջն անտեսելով, դուրս չեն եկել՝ խախտելով բնակարանի անձեռնմխելիությունը:

Այնուհետև Ա.Գրինչուկը, արդեն իսկ գտնվելով Մ.Կիրիլյուկի բնակարանում, ուրիշի գույքը հափշտակելու նպատակով հարձակվել է նրա վրա՝ կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով՝ ձեռքերով, որպես զենք օգտագործվող առարկայով՝ արդուկով և պահարանի դարակով, հարվածներ է հասցրել Մ.Կիրիլյուկի մարմնի տարբեր մասերին և գլխին, պահանջել է գումար և ոսկեղեն, սակայն Մ.Կիրիլյուկը հրաժարվել է գումար և ոսկեղեն տալ: Ա.Գրինչուկն այդ ընթացքում դիտավորությամբ վնասել է Մ.Կիրիլյուկին պատկանող զգալի չափերի՝ 400.000 ՀՀ դրամ արժողության «Սամսունգ» ֆիրմայի հեռուստացույցը՝ դիտավորությամբ հարվածելով այն հյուրասենյակի բազկաթոռին և կոտրել այն: Հյուրասենյակի հեռուստացույցի տակդիրի վրայից հափշտակել է Մ.Կիրիլյուկին պատկանող 40.000 ՀՀ դրամ արժողության DVD նվագարկիչը և հեռացել (...)» (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 46-48):

5.1. Վկա Է.Մանուկյանը 2017 թվականի փետրվարի 27-ի հարցաքննության ժամանակ տվել է հետևյալ բովանդակությամբ ցուցմունքները. *«(...) Ունեմ (...) ավտոմեքենա, (...) [որը] գրանցել եմ տաքսի ծառայությունում և վարում եմ միայն ես: 2017 թվականի փետրվարի 16-ին՝ ժամը 22-ից 23-ն ընկած ժամանակահատվածում, գտնվում էի Նոր Նորքի 8-րդ զանգվածում, և իմ հեռախոսին զանգեց Ալեքսեյը (...) և ասաց՝ քշեմ Քանաքեռի ուղղությամբ: Ալեքսեյը նստել էր իմ կողքը, իսկ հետևում՝ չորս այլ երիտասարդներ: (...) [Շենքի] մուտքի դիմաց կանգնել եմ, իմ ավտոմեքենայից իջել են Ալեքսեյը և հետևի նստած տղաներից մեկը: (...) [Ա]նցել էր մոտ 20 րոպե, երբ եկավ Ալեքսեյը, նրա ձեռքին կար արծաթագույն DVD նվագարկիչ և ասաց, որ [բեռնախցիկը] բացեմ՝ դնենք, դրանից մի քանի րոպե անց երիտասարդներից մեկն էլ հետ եկավ, որի ձեռքին կար փայտե մոտ 60 սանտիմետրանոց*

ժամացույց, դա նույնպես դրեցինք բեռնախցիկում: (...) Ալեքսեյը նստած ժամանակ պատմում էր, որ երբ մտել են ներս, դուռը աղջիկ է բացել, փորձել են տղա գտնել, և, այնտեղ աղջկա շորերով և պարիկով տղա [տեսնելով], հասկացել են, որ նա է իրենց հայհոյել և նրան ծեծել են, և ասաց, որ դուրս գալուց իրերը վերցրել են իրենց հետ: Մոտ 5 րոպե անց եկավ Դավիթը և նստեց Ալեքսեյի հետևի նստատեղին և ասում էր, որ հեռախոսը տա: Նրանք սկսեցին վիճել, զգացվում էր, որ Ալեքսեյը շատ խմած ու բարկացած էր և ասում էր, որ չեմ տալիս, նստի, գնում ենք: Մոտ 2 րոպե նրանք վիճեցին, և Ալեքսեյը հեռախոսն իր կողքի պատուհանից դուրս նետեց: (...) [Փ]որձել ենք գտնել հեռախոսը, գտանք իրարից անջատված մասեր և վերցրեցինք: (...) [Ա]լեքսեյը վերցրեց, և գնացինք: [Ես] նրանց (...) իջեցրել եմ, բեռնախցիկից վերցրել են ժամացույցը, իսկ Ալեքսեյն ասաց՝ DVD-ն պետք չի, թող մնա քեզ մոտ (...)» (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 8-11):

5.2. Տուժող Մ.Կիրիլյուկը 2017 թվականի փետրվարի 20-ի լրացուցիչ հարցաքննության ժամանակ տվել է հետևյալ բովանդակությամբ ցուցմունքները. *«(...) [Նազելիի] հեռախոսահամարին զանգահարել էր ռուսալեզու անծանոթություն, որի խոսակցությունը չհասկանալու պատճառով, [նա] անջատեց հեռախոսը: Որոշ ժամանակ անց նա ստացավ ուրիշ համարից զանգ, և իրար չհասկանալու պատճառով սեռական բնույթի հայհոյանքներ տվեցին միմյանց և [անջատեցին] հեռախոսը: Որոշ ժամանակ անց կրկին զանգ եկավ նույն հեռախոսահամարից Նազելիի համարին, նա փոխանցեց հեռախոսն ինձ, ես վերցրեցի և լսեցի տարբեր հայհոյանքներ՝ ինչ-որ «ձայնի» բարբառով: Լսելով նրա հայհոյանքները՝ ես նույնպես հայհոյեցի և կախեցի հեռախոսը: Դրանից որոշ ժամանակ անց Նազելիի կրկին զանգ է ստանում, արդեն այլ հեռախոսահամարից, (...) Նազելին ասաց, որ իր ծանոթներից մեկը միգուցե գա մեր տուն: (...) [Դ]ուռը բացելուն պես բնակարան [մտան] չորս անհայտ անձինք, որոնք լույսը վառեցին և տեսան, որ ես աղջկա հագուստով եմ, բայց տղայի ձայնով եմ խոսում, զարմանալով հարցրին, թե «Ո՞նց, դու տղա՞ ես», և հարձակվեցին ինձ վրա: Ես գարեջրի շշով խփեցի նրանցից մեկի գլխին: Նրանք սկսեցին ինձ ծեծի ենթարկել, և նրանցից մեկը խուզարկ[ում էր] բնակարանի իրերը, զգացվում էր, որ գումար է փնտրում, ջարդում էր (...) իրերը, շրջեց գրասեղանը, հեռուստացույցը: Ես, մի կերպ նրանցից ազատվելով, փախա խոհանոց և ասացի Նազելիին, [որ] նա զանգահարի 1-02 ծառայություն: Խոհանոցում ձեռքիս վերցրեցի դանակ, որպեսզի վախեցնեմ նրանց, (...) երկուսը վրա հասան և խլեցին ձեռքիս դանակը՝ ծեծի ենթարկելով ինձ: Այնուհետև նրանցից մեկը փորձում էր մատիցս հանել մատանին՝ ասելով՝ «Որտե՞ղ են գումարն ու ոսկեղենը»: Մի կերպ փախնելով՝ հասել եմ միջանցք, որտեղ նրանցից մեկը, հարդուկը ձեռքին վրա եկավ և սկսեց հարվածել գլխիս տարբեր մասերին: (...) Բնակարանից գողացվել է՝ DVD նվագարկիչ (...), պատի փայտե ժամացույց (...),*

հախճապակե ծաղկաման (...), 320.000 ՀՀ դրամ գումար (...), [երկու հատ] բջջային հեռախոս (...): Նաև նրանք փորձել են տանել հեռուստացույցը, սակայն, [տեսնելով, որ կոտրված է], թողել են միջանցքում: Ինձ պատճառվել է ընդհանուր 945.000 ՀՀ դրամի նյութական վնաս (...)» (տե՛ս նյութեր, 1-ին հատոր, թերթեր 36-40):

5.3. Տուժող Ն.Մելիքյանը 2017 թվականի փետրվարի 20-ի լրացուցիչ հարցաքննության ժամանակ տվել է հետևյալ բովանդակությամբ ցուցմունքները. *«(...) [Բնակարան մտած անձանցից մեկն] ասաց՝ «Տուր փողերդ» և միաժամանակ ինձ քաշքշեց (...), հայն ասաց՝ «Ընկերոջդ կսպանեմ՝ կթողնեմ [քեզ վրա]»: (...) Ես և Մարատը պահանջել ենք մեր հեռախոսները (...): Մարատը պատմում էր, որ իրենց հարվածել են հարդուկով և տնից տարել են ժամացույց, վազ, DVD, հեռուստացույցն ուզել են տանել, բայց քանի որ ջարդված է եղել, թողել են (...): Ինձնից գողացել են անձնագիր, 100.000 ՀՀ դրամ արժողությամբ բնական սև մազեր (...) և հեռախոսս (...)»* (տե՛ս նյութեր, 1-ին հատոր, թերթեր 28-35):

5.4. Տուժող Մ.Կիրիլյուկը կասկածյալ Ա.Գրինչուկի հետ 2017 թվականի փետրվարի 28-ի առերես հարցաքննության ժամանակ տվել է հետևյալ բովանդակությամբ ցուցմունքները. *«(...) Ինձ հետ առերես հարցաքննվողին առաջին անգամ տեսել եմ փետրվարի 16-ին՝ 23:30-ի սահմաններում, երբ նա 3 անձանց հետ մտավ մեր բնակարան: (...) [Ալեքսեյը] և [իր] ընկերն ինձ ծեծել են, ինձնից գումար և ոսկի պահանջել: [Ալեքսեյը] դուրս քաշելով փորձում էր հանել մատիս մատանին (...): [Ալեքսեյը] հարդուկով մի քանի անգամ հարվածել է գլխիս՝ հայհոյելով և գումար պահանջելով (...): Այնուհետև նկատեցի, որ հեռուստացույցը միջանցքում կոտրված դրված էր, իսկ առավոտյան տեսա՝ տանից պակասում էր պատի ժամացույցը, DVD նվագարկիչը, դարակից իմ պահած 320.000 ՀՀ դրամ գումարը, վազը (ծաղկաման) և բջջային հեռախոսս (...)»* (տե՛ս նյութեր, 1-ին հատոր, թերթեր 17-19):

5.5. Տուժող Ն.Մելիքյանը կասկածյալ Ա.Գրինչուկի հետ 2017 թվականի փետրվարի 28-ի առերես հարցաքննության ժամանակ տվել է հետևյալ բովանդակությամբ ցուցմունքները. *«(...) [Երբ Ալեքսեյը] տեղեկացավ, որ զանգում եմ ոստիկանություն, (...) հեռախոսս ձեռքիցս [վերցրեց]: Հյուրասենյակ գնալուց [Ալեքսեյը] ջղայնացած շրջվեց՝ ասելով՝ «Ընկերոջդ կսպանեմ՝ կթողնեմ վրադ»: Հետո նորից վերադարձավ սենյակ, սկսեց ինձ քաշքշել՝ (...) ասելով՝ «Նորմալ գումար ես աշխատում, գումար կունենաս տունը», ես ասացի՝ «Չունեմ», և [Ալեքսեյը] գնաց քանդեց պատի տակ դրված դարակը, սակայն չեմ տեսել, որ այնտեղից գումար [վերցնի]: (...) Չեմ տեսել, թե Մարատին ովքեր են ծեծել և գումար, ոսկեղեն պահանջել: (...) Իմ հեռախոսը մնացել է [Ալեքսեյի] մոտ: (...) Առավոտյան (...) տեսանք, որ անձնագիրս, մազերս՝ 4 շերտ բնական, և հեռախոսս չկան: Մարատի ասելով և միասին նկատեցինք, որ պատի (...) ժամացույցը չկար, [Մարատի] երկու հեռախոս-*

ները, սեղանին դրված վազը և DVD-ին: (...) Ալեքսեյն ինձնից սպառնալիքով գումար [չի] պահանջել (...)» (տե՛ս նյութեր, 1-ին հատոր, թերթեր 20-22):

5.6. Մեղադրյալ Ալեքսեյ Գրինչուկը 2017 թվականի մարտի 2-ի հարցաքննության ժամանակ տվել է հետևյալ բովանդակությամբ ցուցմունքները. *«(...) Ես ինձ մեղավոր եմ ճանաչում մասնակի, քանի որ (...) մենք Մ.Կիրիլյուկից գումար և ոսկի չենք պահանջել: Մենք գնացել ենք այնտեղ հարաբերություններ պարզելու, սակայն կռվի վերածվեց, և մենք նրան ծեծեցինք: (...) [Ն.Մելիքյանի հետախոսը] չենքի բակում դուրս եմ նետել ավտոմեքենայից, և այն կոտրվել է (...)»* (տե՛ս նյութեր, 1-ին հատոր, թերթեր 23-24):

6. Առաջին ատյանի դատարանն իր որոշման շրջանակներում փաստել է. *«(...) Ուսումնասիրելով միջնորդության կից (...) ներկայացված նյութերը, [Առաջին ատյանի դատարանը] գտնում է, որ առկա են ենթադրյալ հանցորեն վտանգավոր արարքների կատարմանն Ալեքսանդր Գրինչուկի առնչությունը (հիմնավոր կասկածը) հաստատող ապացույցները, մասնավորապես՝ տուժողներ Ն.Մելիքյանի, Մ.Կիրիլյուկի, [վերջիններիս] և կասկածյալ Ա.Գրինչուկի առերես ցուցմունքները, անձին ճանաչման ներկայացնելու մասին արձանագրությունները, բացի այդ, առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հիմքերից մի քանիսը:*

[Առաջին ատյանի դատարանը] հաշվի է առնում այն հանգամանքը, որ Ալեքսեյ Գրինչուկին ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասով, 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով և 185-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված ենթադրյալ հանցորեն վտանգավոր արարքները դասվում են ոչ մեծ ծանրության և ծանր հանցանքների շարքին, որոնցից ծանրի համար նախատեսված ազատազրկման ճնով պատժի առավելագույն ժամկետը տասը տարի է, հետևաբար մեղսագրվող հանցորեն վտանգավոր արարքների բնույթն ու վտանգավորության աստիճանը, ինչպես նաև ակնկալվող պատժի խստությունը հանդիսանում են գործի քննությանը խոչընդոտելու և քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու հավանականությունը գնահատելու կարևոր տարրեր՝ գործի նյութերից բխող մյուս հանգամանքների հետ միասին, ուստին գտնում է, որ նման պայմաններում մեծ է ռիսկայնությունն առ այն, որ Ալեքսեյ Գրինչուկն, ազատության մեջ մնալով, կարող է քրեական դատավարությանը մասնակցող՝ հարցաքննված և դեռևս չհարցաքննված անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը և թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից:

Մեղադրյալի հավանական վարքագծի վերաբերյալ հետևությունը բխում է այն հանգամանքից, որ նախաքննությունը դեռևս գտնվում է ապացույցների հավաքման և ստուգման փուլում, և քրեական գործով տվյալ պայմաններում դեռևս առկա է նախաքննությամբ ճշմարտությունը բացահայտելու ընթացքին

միջամտության վտանգի հավանականություն, որպիսի պայմաններում [Առաջին ատյանի դատարանը] գտնում է, որ միջնորդությունը հիմնավորված է, այն ենթակա է բավարարման, և Ա.Գրիգչուկի նկատմամբ 2 ամիս ժամկետով որպես խափանման միջոց պետք է կիրառել կալանավորումը:

[Առաջին ատյանի դատարանը] նաև փաստում է, որ (սկզբնական կալանքի ժամանակահատվածում) մեղադրյալ Ա.Գրիգչուկի պատշաճ վարքագիծն ու վարույթն իրականացնող մարմնին ներկայանալը հնարավոր է ապահովել վերջինիս նկատմամբ առավել խիստ խափանման միջոց կալանավորում ընտրելու պարագայում:

Ինչ վերաբերում է պաշտպանի միջնորդությանը՝ իր պաշտպանյալի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը գրավով փոխարինելուն, ապա դատարանը հանգում է այն հետևության, որ մեղադրյալ Ա.Գրիգչուկի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի համարվել չի կարող:

(…) [Առաջին ատյանի դատարանի] գնահատմամբ, տվյալ դեպքում, անհրաժեշտ է նշել, որ վերագրվող հանրորեն վտանգավոր արարքների բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը, գործի մյուս հանգամանքների հետ միասին, ունեն էական նշանակություն նրա հետագա վարքագծի հավանականությունը կանխորոշելու հարցում, որ գործի կոնկրետ հանգամանքներից ելնելով այլընտրանքային երաշխիքն ի զորու չէ կանխել մեղադրյալի ոչ իրավաչափ վարքագիծը՝ նրան ազատ արձակելու դեպքում, և առկա է ողջամիտ ենթադրություն, որ ազատության մեջ մնալով՝ մեղադրյալը կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից: Հիմք ընդունելով վերը շարադրված հիմնավորումները և պատճառաբանությունները [Առաջին ատյանի] դատարանը գտնում է, որ մեղադրյալ Ա.Գրիգչուկի նկատմամբ գրավի կիրառումն անթույլատրելի է:

Միջնորդությունը քննարկելիս [Առաջին ատյանի] դատարանը հաշվի է առնում նաև մեղադրյալ Ա.Գրիգչուկի անձը բնութագրող տվյալները, մասնավորապես՝ նախկինում դատված չլինելը, մշտական բնակության վայր ունենալը, դրական բնութագիրը, սակայն միևնույն ժամանակ արձանագրում է, որ վերը շարադրվածի պայմաններում դրանք ինքնին չեն կարող որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավը կիրառելու հիմք հանդիսանալ» (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 53-59):

7. Վերաքննիչ դատարանի դատական ակտի համաձայն՝ *«(…) Առաջին ատյանի դատարան ներկայացված վերոգրյալ նյութերի՝ հիմնավոր կասկածի տեսանկյունից կատարված ուսումնասիրությունից երևում է, որ տվյալ դեպքում Առաջին ատյանի դատարանը միջնորդության քննության ժամանակ բավարար տվյալներ ունեցել է մեղադրյալ Ալեքսեյ Գրիգչուկի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասով և 185-րդ հոդվածի 1-ին մասով ենթադրյալ հանցանքները կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության մասին հետևության գալու համար: Ինչ վերաբերում*

է ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով ենթադրյալ հանցանքը կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության կամ բացակայության հարցին, ապա ներկայացված նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2017 թվականի փետրվարի 16-ին՝ ժամը 22:00-ի սահմաններում, Ալեքսեյ Գրինչուկը զանգահարել է Նազելի Մելիքյանի հեռախոսահամարին՝ սեռական հարաբերություն ունենալու նպատակով: Խոսակցության ընթացքում Մարատ Կիրիլյուկը վերցրել է հեռախոսը և վեճի բռնվել Ալեքսեյ Գրինչուկի հետ, որի ընթացքում փոխադարձ հայհոյանքներ են հնչեցվել, որից հետո Ալեքսեյ Գրինչուկը և նրա ընկերները գնացել են Մարատ Կիրիլյուկի բնակարան՝ հայհոյանքների կապակցությամբ հարաբերություններ պարզելու համար, որտեղ վիճաբանություն է սկսվել, և Ալեքսեյ Գրինչուկը, Ֆեոդոր Բոլդիրևը և Մարատ Կիրիլյուկը փոխադարձ հարվածներ են հասցրել միմյանց: Ներկայացված նյութերում առկա է նաև հակասական և իրարամերժ փաստական տվյալ, մասնավորապես՝ այն, որ Ալեքսեյ Գրինչուկը Նազելի Մելիքյանից և/կամ Մարատ Կիրիլյուկից գումար և ոսկեղեն է պահանջել: Դրանից հետո Ալեքսեյ Գրինչուկը Մարատ Կիրիլյուկի բնակարանից վերցրել է «DVD» նվագարկիչը, բջջային հեռախոսը և դուրս եկել: Ալեքսեյ Գրինչուկը բջջային հեռախոսն ավտոմեքենայի պատուհանից դուրս է նետել, իսկ «DVD» նվագարկիչը թողել է ավտոմեքենայի բեռնախցիկում:

Այսինքն՝ նշված տվյալները ողջամտորեն վկայում են այն մասին, որ Ալեքսեյ Գրինչուկի և Մարատ Կիրիլյուկի վիճաբանությունն առաջացել է վերջինիս կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու՝ հայհոյանքներ հնչեցնելու հետևանքով: Իսկ այն, որ այդ ծեծկռտուքը վերաճել է մեղադրյալի կողմից ենթադրյալ ավազակությամբ տուժողից գումար, ոսկեղեն և այլ իրեր հափշտակելուն, ապա այդ մասով ներկայացված նյութերը չեն կարող բավարար լինել հիմնավոր կասկածի առկայությունը հաստատված համարելու:

Ընդ որում՝ տուժողներն իրենց սկզբնական ցուցմունքներում նշել են, թե Ալեքսեյ Գրինչուկն ու նրա ընկերներն իրենցից գումար և ոսկեղեն են պահանջել: Այնուհետև՝ տուժող Նազելի Մելիքյանն Ալեքսեյ Գրինչուկի հետ առերես հարցաքննության ժամանակ հայտնել է, որ ինքը չի տեսել, թե ովքեր են Մարատին ծեծել և գումար ու ոսկեղեն պահանջել: Ինքը նրանց ձայները չի լսել: Մարատն առավոտյան իրեն ասել է, որ ասելու է, թե այդ դարակում եղել է 320.000 ՀՀ դրամ, որպեսզի այդ գումարը ստանա և հեռուստացույց գնի: Իսկ Ալեքսեյ Գրինչուկն էլ իր ցուցմունքում նշել է, որ իրենք Մարատ Կիրիլյուկից գումար և ոսկի չեն պահանջել: Իրենք գնացել են այնտեղ հարաբերություններ պարզելու համար, սակայն կռիվ է սկսվել, և իրենք նրան ծեծել են:

Վերը նշվածի համատեքստում Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նկատել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածով նախատես-

ված հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է նաև շահադիտական շարժառիթը: Շահադիտական նպատակը հանցավորի ձգտումն է նյութական օգուտ ստանալ հափշտակված գույքի հաշվին՝ այն վերցնելով, իրենը դարձնելով և այլն: Իսկ եթե շահադիտական նպատակը բացակայում է, և անձն ապօրինի, անհատույց տիրանում է ուրիշի գույքին այլ շարժառիթով, մասնավորապես՝ գույքի տիրոջը մերկացնելու, վրեժ լուծելու և այլ նպատակով, հափշտակության հանցակազմը բացակայում է:

Վերոգրյալ վերլուծությունների լույսի ներքո Վերաքննիչ դատարանը գալիս է այն եզրահանգման, որ Ալեքսեյ Գրիգորյանի գործողություններում շահադիտական դրդումների առկայությունը քիչ հավանական է, որպիսի պայմաններում ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նրան մեղսագրվող արարքում հիմնավոր կասկածի առկայությունը հաստատված չի կարող համարվել: Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Ալեքսեյ Գրիգորյանի ենթադրյալ գործողություններն առերևույթ կարող են պարունակել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված այլ հանցակազմի, մասնավորապես՝ 118-րդ հոդվածի կամ 322-րդ հոդվածի 2-րդ մասի (եթե տուժողին էական վնաս է պատճառվել) հատկանիշներ:

Ավելին՝ ներկայացված վերոգրյալ նյութերի ուսումնասիրությունից առերևույթ հետևում է, որ Ալեքսեյ Գրիգորյանի կողմից Մարատ Կիրիլյանի բնակարանից «DVD» նվագարկիչ վերցնելը կրել է վերջինիս պատժելու նպատակ, այլ ոչ թե նշված գործողությունը կատարվել է շահադիտական շարժառիթից ելնելով, քանի որ վկա Էդուարդ Մանուկյանն իր ցուցմունքում հայտնել է, որ Ալեքսեյն ասել է, թե «DVD» նվագարկիչը պետք չէ, թող մնա իր մոտ, որն էլ հետագայում ինքը տարել է տուն, որպեսզի այն չմնար բեռնախցիկում:

Այսպիսով՝ Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ ներկայացված նյութերում առկա են միայն մեղադրյալ Ալեքսեյ Գրիգորյանի կողմից 147-րդ հոդվածի 1-ին մասով, 185-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև 118-րդ հոդվածով կամ 322-րդ հոդվածի 2-րդ մասով ենթադրյալ հանցանքները կատարած լինելու հիմնավոր կասկածը հավաստող տվյալներ, հարկ է համարում անդրադառնալ կալանավորման հիմքերի առկայության կամ բացակայության հարցին:

(...) Տվյալ դեպքում Առաջին ատյանի դատարանը եկել է այն եզրահանգման, որ մեծ է ռիսկայնությունն առ այն, որ Ալեքսեյ Գրիգորյանն ազատության մեջ մնալով կարող է քրեական դատավարությանը մասնակցող՝ հարցաքննված և դեռևս չհարցաքննված անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը և թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, որպիսի մոտեցումը Վերաքննիչ դատարանի համար նույնպես ընդունելի է:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը հարկ է համարում անդրադառնալ մեղադրյալ Ալեքսեյ Գրիգորյանի կալանքից գրավով ազատելու հնարավորության հարցին:

(...) Վերաքննիչ դատարանի համար անընդունելի է Առաջին ատյանի դատարանի այն մոտեցումը, որ գրավի կիրառման միջոցով ողջամտորեն հնարավոր չէ ապահովել մեղադրյալ Ալեքսեյ Գրիգորյանի հետագա պատշաճ վարքագիծը մինչդատական վարույթի ընթացքում և տվյալ դեպքում գրավը՝ որպես կալանավորման այլընտրանք, չի կարող գործուն երաշխիք հանդիսանալ կալանավորման վերը նշված հիմքերի չեզոքացման համար:

Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով մեղադրյալ Ալեքսեյ Գրիգորյանի կալանքից գրավով ազատելու հնարավորության հարցին, գտնում է, որ տվյալ դեպքում այլընտրանքային երաշխիքն ի զորու է կանխելու մեղադրյալի ոչ իրավաչափ վարքագիծը՝ նրան ազատ արձակելու դեպքում:

Վերաքննիչ դատարանի վերոգրյալ եզրահանգումը պայմանավորված է հատկապես այն հանգամանքով, որ վերը նշված եզրահանգումների պայմաններում մեղադրյալ Ալեքսեյ Գրիգորյանի ենթադրյալ գործողությունների արդյունքում հիմնավոր կասկածն առկա է ոչ մեծ և/կամ միջին ծանրության հանցագործությունների կատարման համար:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նկատել, որ մեղադրյալ Ալեքսեյ Գրիգորյանի անձը հայտնի է, նա ունի մշտական բնակության վայր, ընտանիքը բաղկացած է 11 անդամներից, բնութագրվում է դրականորեն, նախկինում դատապարտված չի եղել, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ քրեական գործով վարույթի ընթացքում մեղադրյալ Ալեքսեյ Գրիգորյանի պատշաճ վարքագիծը հնարավոր է ապահովել նաև կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի՝ 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ գրավի կիրառմամբ, որը, որպես բավարար և ողջամիտ միջոց, կարող է բացառել նրա կողմից վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով վարույթն իրականացնող մարմնի աշխատանքները խոչընդոտելու հանգամանքը (...)» (տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 24-40):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի համոզմամբ՝ Վերաքննիչ դատարանի որոշմամբ խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ, 135-րդ, 143-րդ և 288-րդ հոդվածների պահանջները, ինչն ազդել է գործի ելքի վրա:

Բողոքաբերը, վերլուծելով անձի նկատմամբ խափանման միջոց կիրառելու հիմքերի, ինչպես նաև՝ գրավի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՏԴ2/0009/06/11, թիվ ԿԴ1/0062/06/12, թիվ ԱՎԴ/0022/06/08, թիվ ԵԷԴ/0138/06/13, թիվ ԱՐԴ/0121/01/11 որոշումները, եզրահանգել է, որ Վերաքննիչ դատարանը, Ա.Գրիգորյանին առաջադրված մեղադրանքը «վերաորակելով» և կալանավորումը գրավով փոխարինելով, դուրս է եկել միջնդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներից՝ կայացնելով անհիմն ու ապօրինի դատական ակտ:

Մասնավորապես, բողոքի հեղինակը գտել է, որ Վերաքննիչ դատարանն Ա.Գրիգորյանին առաջադրված մեղադրանքի ծանրությունն անհիմն կերպով նվազեցրել է՝ արդյունքում կալանքի նպատակահարմարության հարցը դիտարկելով ոչ թե ծանր, այլ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործությունների տեսանկյունից: Նման պայմաններում, ըստ բողոքաբերի, անտեսվել է կալանավորման անհրաժեշտության հիմքում ընկած հանցանքի որակական բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը:

8.1. Բողոք բերած անձը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանը սխալ եզրահանգման է եկել նաև այն առումով, որ տուժողների և մեղադրյալների կողմից տրված ցուցմունքների միջև հակասությունը մեկնաբանել է որպես հիմնավոր կասկածը հերքող հանգամանք: Ըստ բողոքաբերի՝ քրեական գործի քննության տվյալ փուլում, հատկապես, երբ առկա են վիճարկման ենթակա հանգամանքներ, հարցաքննված անձանց ցուցմունքների միջև կարող են առաջանալ հակասություններ, որոնց պատճառները և յուրաքանչյուր ցուցմունքի արժանահավատությունը, վերաբերելիությունը, հաստատումը կամ հերքումը, ապացուցողական տեսակարար կշիռն արդեն վերլուծության և քննարկման ենթակա են նախաքննության հետագա ընթացքում կամ դատարանում, բայց ոչ կալանավորման օրինականության և հիմնավորվածության վերաբերյալ դատական քննության սահմաններում:

8.2. Վերոնշյալի համատեքստում բողոքաբերը եզրահանգել է, որ մեղադրյալ Ա.Գրիգորյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը գրավով փոխարինելու հարցում Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավորված ու պատճառաբանված չէ:

9. Վերոշարադրյալի հիման վրա ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի որոշմանը:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն առ այն, որ Ա.Գրիգորյանի կողմից՝ ՀՀ քրեական օրենսգրքի

175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հանցագործության առերևույթ կատարման վերաբերյալ հիմնավոր կասկածը բացակայում է:

11. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝*

(…)

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով.

(…)»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.*

(…)

գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար.

(…)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք:

2. Ոչ ոք չի կարող արգելանքի վերցվել և պահվել անազատության մեջ այլ կերպ, քան սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով:

(…)»:

12. Կալանավորման պայմաններից մեկի՝ «հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի» էության և դրա ստուգման սահմանների վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում ձևավորել է մի շարք իրավական դիրքորոշումներ: Այդ համատեքստում Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ *Էդգար Եղիազարյանի* գործով որոշման շրջանակներում, հիմնվելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած նախադեպային իրավունքի վրա, ինչպես նաև վերահաստատելով և

զարգացնելով իր կողմից նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները, ընդգծվել են հետևյալ հանգամանքները՝

- հիմնավոր կասկածի բացակայության դեպքում անձի ազատության իրավունքը սահմանափակելն ինքնին ապօրինի է,

- հիմնավոր կասկածը չի պահանջում կատարված արարքի մեջ մեղադրյալի մեղավորությունն ապացուցող՝ հիմնավոր կասկածից վեր ապացուցման չափանիշին համապատասխան բավարար փաստերի առկայություն, այնուամենայնիվ, «կասկածը» պետք է լինի ողջամիտ, այն պետք է հիմնված լինի օրենքով սահմանված կարգով ձեռք բերված որոշակի փաստական տվյալների վրա (որոնք կվկայեն կատարված արարքին անձի առնչությունը և դեպքի, իրադարձության համընկնումը այն հանցանքին, որի առերևույթ կատարման մեջ անձը կասկածվում (մեղադրվում) է), իսկ դրա առկայության կամ բացակայության վերաբերյալ դատարանի հետևությունները *պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված,*

- կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելիս պետք է ցույց տրվի, որ հանցանք կատարած լինելու կասկածը պահպանվել է և շարունակում է մնալ «հիմնավոր»: Ազատությունից զրկելու տևողությունը կարող է լինել կարևոր գործոն կասկածի՝ պահանջվող աստիճանի համար,

- մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս, մասնավորապես՝ կալանավորման վերաբերյալ միջնորդությունը քննելիս դատարանն իրավասու չէ քննարկման առարկա դարձնելու այնպիսի հարցեր, որոնք դուրս են այդ պահին իր առջև դրված խնդիրների շրջանակից (տե՛ս, mutatis mutandis, *Ներսես Միսակյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱՐԴ-1/0003/11/08 որոշումը), ուստիև հիմնավոր կասկածի առկայությունը ստուգելիս դատարանն *իրավասու չէ կանխորոշելու մեղքի հարցը, իրավական գնահատական տալու անձի մեղավորությանը կամ անմեղությանը, անմիջականորեն փաստելու անձի արարքում հանցակազմի առկայությունը կամ բացակայությունը:* Միևնույն ժամանակ դատարանը, վերոգրյալ հարցերի շուրջ իրավական գնահատականներ չտալով, իրավասու է որոշում կայացնելու կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ ժամկետը երկարացնելու կամ վերահաստատելու վերաբերյալ քրեական հետապնդման մարմնի ներկայացրած միջնորդությունը մերժելու մասին այն դեպքում, երբ հավաստում է քրեական գործով վարույթը բացառող հանգամանքի *առերևույթ* առկայությունը և դրա *հնարավոր* կիրառելիությունը: Ընդ որում, քրեական գործով վարույթը բացառող այդ հանգամանքի առերևույթ առկայության մասին վկայությունը պետք է լինի ոչ թե ներկայացված նյութերի, այդ թվում՝ ապացույցների՝ գործն ըստ էության քննելու և լուծելու ժամանակ *պահանջվող աստիճանի չափ բազմակողմանի և խորը վերլուծության արդյունք*, այլ այդպիսի վկայությունը պետք է հիմնված լինի *ներկայացված նյութերից բխող համե-*

մատաբար ակնհայտ փաստերի վրա (օրինակ՝ արարքը, որի կատարման մեջ մեղադրվում է անձը, դրա կատարման պահին հանցագործություն չի համարվել (այդ առումով մանրամասն տե՛ս, օրինակ, *Խաչատրյանը և այլք ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 23978/06), կամ որպես մեղադրյալ է ներգրավվել քրեական պատասխանատվության ենթարկվելու տարիքի չհասած անձը, կամ անցել են վաղեմության ժամկետները, ընդունվել է համաներման ակտ և այլն),

- հիմնավոր կասկածի հարցը գնահատման ենթարկելիս վճռորոշ նշանակություն կարող են ունենալ այն իրավիճակները, երբ արարքին տրված իրավական որակումը *ակնհայտորեն* չհամապատասխանի արարքի փաստական նկարագրությանը (կամ անձին վերագրված փաստերը հաստատող՝ միջնորդության կից ներկայացված նյութերին), իսկ արարքի փաստական կողմն *առերևույթ* վկայի արարքին տրված իրավական որակման համեմատությամբ իր բնույթով առավել նվազ ծանրության ենթադրյալ հանցագործության կատարման մասին (օրինակ՝ անձին մեղսագրվել է խոշոր չափերով գողություն կատարելու հանցակազմը (ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ), ինչը, սակայն, ակնհայտորեն չի համապատասխանում արարքի փաստական նկարագրությանը, իսկ վերջինս առերևույթ վկայում է անձի արարքում գողության հասարակ հանցակազմի հատկանիշների առկայության մասին, կամ, օրինակ, անձին մեղսագրվել է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ զենքի գործադրմամբ խուլիգանություն կատարելու հանցակազմը, սակայն արարքի փաստական նկարագրությունն *ակնհայտորեն* վկայում է զենքի գործադրման բացակայության, բայց միևնույն ժամանակ առերևույթ փաստում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված որակյալ հանցակազմի առկայության մասին), (տե՛ս *Էդգար Եղիազարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԱՆԴ/0017/06/16 որոշման 15-րդ կետը):

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

ա) Վկա Է.Մանուկյանը 2017 թվականի փետրվարի 27-ի հարցաքննության ժամանակ հայտնել է, որ իր տաքսի ավտոմեքենայով Ա.Գրիգչուկի և չորս այլ երիտասարդների հետ երթևեկել է Քանաքեռի ուղղությամբ: Ա.Գրիգչուկը մեկ ուրիշ երիտասարդի հետ իջել է ավտոմեքենայից, ապա 20 րոպե անց վերադարձել՝ ձեռքին DVD նվագարկիչ, և իրեն ասել, որ բացի բեռնախցիկը: Եվս մի քանի րոպե անց մոտեցել է մյուս երիտասարդը՝ ձեռքին փայտե ժամացույց, որը նույնպես դրել են բեռնախցիկում: Իրենց իջեցնելուց հետո բեռնախցիկից վերցրել են ժամացույցը, իսկ DVD-ն Ալեքսեյն ասել է, որ պետք չէ և կարող է պահել իրեն (տե՛ս սույն որոշման 5.1-րդ կետը):

Տուժող Մ.Կիրիլյուկը 2017 թվականի փետրվարի 20-ի հարցաքննության ժամանակ հայտնել է, որ իր բնակարան են ներխուժել չորս անհայտ անձինք և հարձակվել իր վրա: Նշված անձանցից մեկը խուզարկել է բնակարանի իրերը և գումար փնտրել: Այդ անձանցից մեկ ուրիշը փորձել է հանել իր մատի մատանին՝ հարցնելով գումարի և ոսկեղենի տեղը: Ըստ տուժող Մ.Կիրիլյուկի՝ իր բնակարանից գողացել են DVD նվագարկիչ, պատի ժամացույց, ծաղկաման, 320.000 ՀՀ դրամ գումար և երկու բջջային հեռախոս (տե՛ս սույն որոշման 5.2-րդ կետը):

Ա.Գրինչուկի հետ 2017 թվականի փետրվարի 28-ի առերես հարցաքննության ժամանակ տուժող Մ.Կիրիլյուկը տվել է, ըստ էության, նույնաբովանդակ ցուցմունքներ (տե՛ս սույն որոշման 5.4-րդ կետը):

Տուժող Ն.Մելիքյանը 2017 թվականի փետրվարի 20-ի հարցաքննության ժամանակ հայտնել է, որ Մ.Կիրիլյուկի բնակարան եկած չորս անձանցից մեկն իրենից փող է պահանջել՝ հակառակ դեպքում սպառնալով սպանել Մ.Կիրիլյուկին և ամեն ինչ իր վրա բարդել: Ինքն ու Մ.Կիրիլյուկը պահանջել են վերադարձնել իրենց հեռախոսները: Մ.Կիրիլյուկը պատմել է, որ իրեն հարվածել են հարդուկով և տնից տարել են ժամացույց, ծաղկաման և DVD նվագարկիչ: Իրենից գողացել են անձնագիրը, 100.000 ՀՀ դրամ արժողությամբ բնական սև մազերը և հեռախոսը (տե՛ս սույն որոշման 5.3-րդ կետը):

Ա.Գրինչուկի հետ 2017 թվականի փետրվարի 28-ի առերես հարցաքննության ժամանակ տուժող Ն.Մելիքյանը հայտնել է, որ Ա.Գրինչուկն իր ձեռքից վերցրել է հեռախոսը, ապա սպառնացել, որ կսպանի Մ.Կիրիլյուկին և կբարդի իր վրա: Այնուհետև Ա.Գրինչուկն իրեն քաշքշել է՝ ասելով, որ ինքը նորմալ գումար է աշխատում և տանը փող կունենա: Իր բացասական պատասխանից հետո Ա.Գրինչուկը քանդել է դարակը, սակայն ինքը չի տեսել նրան գումար վերցնելիս: Չի տեսել նաև, թե ովքեր են Մ.Կիրիլյուկին ծեծել, գումար և ոսկեղեն պահանջել: Առավոտյան նկատել է, որ իր անձնագիրը, 4 շերտ բնական մազերը և հեռախոսը չկան: Մ.Կիրիլյուկի հետ նկատել են, որ չկան պատի ժամացույցը, հեռախոսները, ծաղկամանը և DVD նվագարկիչը: Ա.Գրինչուկն իրենից սպառնալիքով գումար չի պահանջել (տե՛ս սույն որոշման 5.5-րդ կետը):

բ) Առաջին ատյանի դատարանը գտել է, որ առկա են ենթադրյալ հանրորեն վտանգավոր արարքների կատարմանն Ա.Գրինչուկի առնչությունը (հիմնավոր կասկածը) հաստատող ապացույցները, մասնավորապես՝ տուժողներ Ն.Մելիքյանի, Մ.Կիրիլյուկի, ցուցմունքները, վերջիններիս և կասկածյալի առերես հարցաքննությունների ցուցմունքները և անձին ճանաչման ներկայացնելու մասին արձանագրությունները: Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով Ա.Գրինչուկին մեղսագրվող արարքների հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը, ակնկալվող պատժի խստու-

թյունը, եզրահանգել է, որ մեծ է ռիսկայնությունն առ այն, որ Ա.Գրիգչուկը, մնալով ազատության մեջ, կարող է քրեական դատավարությանը մասնակցող՝ հարցաքննված և դեռևս չհարցաքննված անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով խոչընդոտել միջնադատական վարույթում գործի քննությանը և թաքնվել վարույթն իրականացնող մարմնից: Անդրադառնալով Ա.Գրիգչուկի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը գրավով փոխարինելու հարցին՝ Առաջին ատյանի դատարանը փաստել է, որ այլընտրանքային երաշխիքն ի զորու չէ կանխելու մեղադրյալի ոչ իրավաչափ վարքագիծը, և առկա է ողջամիտ ենթադրություն առ այն, որ ազատության մեջ մնալով՝ մեղադրյալը կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

գ) Վերաքննիչ դատարանի համոզմամբ՝ ներկայացված նյութերը բավարար չեն հիմնավոր կասկածի առումով հաստատված համարելու, որ Ա.Գրիգչուկի և Մ.Կիրիլյուկի միջև ծեծկռտուքը վերաճել է մեղադրյալի կողմից ավազակությամբ տուժողից գումար, ոսկեղեն և այլ իրեր հափշտակելուն: Բացի այդ, ստորադաս դատարանն արձանագրել է, որ *ներկայացված նյութերում առկա է նաև հակասական և իրարամերժ փաստական տվյալ, մասնավորապես՝ այն, որ Ա.Գրիգչուկը Ն.Մելիքյանից և/կամ Մ.Կիրիլյուկից գումար և ոսկեղեն է պահանջել:* Վերաքննիչ դատարանը փաստել է, որ տուժողներ Ն.Մելիքյանն ու Մ.Կիրիլյուկն իրենց սկզբնական ցուցմունքներում նշել են Ա.Գրիգչուկի և նրա ընկերների կողմից գումար և ոսկեղեն պահանջելու մասին, սակայն հետագայում Ն.Մելիքյանը նշել է, որ Մ.Կիրիլյուկին ծեծելու ու նրանից գումար և ոսկեղեն պահանջելու գործողություններին ինքն ականատես չի եղել: Ասվածի, ինչպես նաև մեղադրյալ Ա.Գրիգչուկի՝ Մ.Կիրիլյուկից գումար և ոսկեղեն պահանջելու հանգամանքը հերքող ցուցմունքների հաշվառմամբ Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ *Ա.Գրիգչուկի գործողություններում շահադիտական դրդումների առկայությունը քիչ հավանական է, որպիսի պայմաններում ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նրան մեղսագրվող արարքում հիմնավոր կասկածի առկայությունը հաստատված չի կարող համարվել:* Սույն հետևությունը Վերաքննիչ դատարանը հիմնավորել է նաև նրանով, որ ըստ վերջինիս՝ Ա.Գրիգչուկի կողմից Մ.Կիրիլյուկի բնակարանից «DVD» նվագարկիչ վերցնելը կրել է վերջինին պատժելու նպատակ, այլ ոչ թե նշված գործողությունը կատարվել է շահադիտական շարժառիթից ելնելով, քանի որ վկա Է.Մանուկյանն իր ցուցմունքում հայտնել է, որ Ա.Գրիգչուկն ասել է, թե «DVD» նվագարկիչը պետք չէ, թող մնա իր մոտ, որն էլ հետագայում ինքը տարել է տուն, որպեսզի այն չմնար բեռնախցիկում:

Վերոգրյալի հետ համատեղ Վերաքննիչ դատարանը գտել է, որ Ա.Գրիգչուկի ենթադրյալ գործողություններն առերևույթ կարող են պարու-

նակել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված այլ հանցակազմի, մասնավորապես՝ 118-րդ հոդվածի կամ 322-րդ հոդվածի 2-րդ մասի (եթե տուժողին էական վնաս է պատճառվել) հատկանիշներ: Արդյունքում Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ ներկայացված նյութերում առկա են միայն մեղադրյալ Ալեքսեյ Գրինչուկի կողմից 147-րդ հոդվածի 1-ին մասով, 185-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև 118-րդ հոդվածով կամ 322-րդ հոդվածի 2-րդ մասով ենթադրյալ հանցանքները կատարած լինելու հիմնավոր կասկածը հավաստող տվյալներ:

Անդրադառնալով կալանավորման հիմքերին՝ Վերաքննիչ դատարանն ընդունելի է համարել Առաջին ատյանի դատարանի դատողությունները այն մասին, որ Ա.Գրինչուկը, մնալով ազատության մեջ, կարող է քրեական դատավարության մասնակիցների վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով խոչընդոտել միևչդատական վարույթում գործի քննությանը և թաքնվել վարույթն իրականացնող մարմնից: Միևնույն ժամանակ Վերաքննիչ դատարանը գտել է, որ այլընտրանքային երաշխիքը՝ գրավը, ի զորու է կանխելու մեղադրյալի ոչ իրավաչափ վարքագիծը՝ պայմանավորված հատկապես այն հանգամանքով, որ Ա.Գրինչուկի ենթադրյալ գործողությունների արդյունքում հիմնավոր կասկածն առկա է ոչ մեծ և/կամ միջին ծանրության հանցագործությունների կատարման համար:

Վերաքննիչ դատարանը մեղադրյալ Ա.Գրինչուկի նկատմամբ գրավի կիրառման թույլատրելիությունը պայմանավորել է նաև այն հանգամանքներով, որ նրա անձը հայտնի է, ունի մշտական բնակության վայր, ընտանիքը բաղկացած է 11 անդամից, բնութագրվում է դրական, նախկինում դատապարտված չի եղել: Ըստ Վերաքննիչ դատարանի՝ գրավը՝ որպես բավարար և ողջամիտ միջոց, կարող է բացառել Ա.Գրինչուկի կողմից վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և քրեական դատավարության մասնակիցների վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով վարույթն իրականացնող մարմնի աշխատանքները խոչընդոտելու հանգամանքները (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

14. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 11-12-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Գրինչուկի կողմից՝ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հանցագործության առերևույթ կատարման վերաբերյալ հիմնավոր կասկածի բացակայության մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր չեն:

Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով տուժողներ Ն.Մելիքյանի և Մ.Կիրիլյուկի սկզբնական, ինչպես նաև վերջիններիս՝ մեղադրյալ Ա.Գրինչուկի հետ առերես հարցաքննության ժամանակ տված ցուցմունքները (տե՛ս սույն որոշման 5.2-5.5-րդ կետերը), դրանք համադրելով

գործում առկա այլ նյութերի հետ, արձանագրում է, որ նշված փաստական տվյալների առկայությունն արդեն իսկ բավարար է դատավարության տվյալ փուլում ողջամիտ ենթադրություն անելու, որ մեղադրյալ Ա.Գրիգորյանին վերագրված արարքն առերևույթ բովանդակում է ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշները: Այլ կերպ՝ ըստ Վճռաբեկ դատարանի՝ սույն գործով առկա են բավարար հիմքեր՝ եզրակացնելու, որ Ա.Գրիգորյանն առնչություն ունի իրեն վերագրվող ենթադրյալ հանցագործությանը, և դեպքը, իրադարձությունը համընկնում են այն առերևույթ հանցանքին, որի կատարման մեջ վերջինս մեղադրվում է:

14.1. Ինչ վերաբերում է գումար և ոսկեղեն պահանջելու մասով տուժողների և մեղադրյալ Ա.Գրիգորյանի կողմից տրված ցուցմունքներում առկա հակասության, ինչպես նաև վկա Է.Մանուկյանի ցուցմունքների հիման վրա Վերաքննիչ դատարանի կողմից արված այն հետևություններին (*տե՛ս սույն որոշման 7-րդ, 13-րդ կետերը)*, որ Ա.Գրիգորյանին վերագրված արարքում ավազակության հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշի՝ շահադիտական շարժառիթի առկայության վերաբերյալ հիմնավոր կասկածը չի հաստատվում, ապա Վճռաբեկ դատարանը, հիմնվելով սույն որոշման 12-րդ կետի հատկապես վերջին երկու պարբերություններում արտահայտված իրավական դիրքորոշումների վրա, գտնում է, որ այդպիսի դատողությունն իրավաչափ չի կարող համարվել: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ հիմնավոր կասկածի հարցը գնահատման ենթարկելիս՝

- դատարանն իրավասու չէ քննարկման առարկա դարձնելու այնպիսի հարցեր, որոնք դուրս են այդ պահին իր առջև դրված խնդիրների շրջանակից,

- քրեական գործով վարույթը բացառող հանգամանքի առերևույթ առկայության մասին դատարանի վկայությունը պետք է լինի ոչ թե ներկայացված նյութերի, այդ թվում՝ ապացույցների՝ գործն ըստ էության քննելու և լուծելու ժամանակ *պահանջվող աստիճանի չափ բազմակողմանի և խորը վերլուծության արդյունք*, այլ այդպիսի վկայությունը պետք է հիմնված լինի *ներկայացված նյութերից բխող համեմատաբար ակնհայտ փաստերի վրա,*

- վճռորոշ նշանակություն կարող են ունենալ այն իրավիճակները, երբ արարքին տրված իրավական որակումն *ակնհայտորեն* չհամապատասխանի արարքի փաստական նկարագրությանը (կամ անձին վերագրված փաստերը հաստատող՝ միջնորդությանը կից ներկայացված նյութերին), իսկ արարքի փաստական կողմն *առերևույթ* վկայի արարքին տրված իրավական որակման համեմատությամբ իր բնույթով առավել նվազ ծանրության ենթադրյալ հանցագործության կատարման մասին (տե՛ս *Էդգար Եղիազարյանի* գործով թիվ ԵԱՆԴ/0017/06/16 որոշման 15-րդ կետը):

Այլ կերպ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տուժողների և մեղադրյալ Ա.Գրիգորյանի կողմից տրված ցուցմունքներում առկա վերոհիշյալ

հակասությունը, վկա Է.Մանուկյանի համապատասխան ցուցմունքները չեն կարող դիտվել որպես Ա.Գրիհչուկին վերագրված արարքում շահադիտական շարժառիթի առերևույթ բացակայության մասին վկայող համեմատաբար ակնհայտ փաստ: Ավելին՝ նշյալ հանգամանքներն ամենևին չեն փաստում այն մասին, որ Ա.Գրիհչուկին մեղսագրված արարքին տրված իրավական որակումն *ակնհայտորեն* չի համապատասխանում արարքի փաստական նկարագրությանը կամ Ա.Գրիհչուկին վերագրված փաստերը հաստատող՝ միջնորդությանը կից ներկայացված նյութերին: Վերոգրյալի առնչությամբ Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է հայտնում նաև բողոքաբերի հետևյալ փաստարկին. *«Քրեական գործի քննության տվյալ փուլում, հատկապես, երբ առկա են վիճարկման ենթակա հանգամանքներ, հարցաքննված անձանց ցուցմունքների միջև կարող են առաջանալ հակասություններ, որոնց պատճառները և յուրաքանչյուր ցուցմունքի արժանահավատությունը, վերաբերելիությունը, հաստատումը կամ հերքումը, ապացուցողական տեսակարար կշիռն արդեն վերլուծության և քննարկման ենթակա են նախաքննության հետագա ընթացքում կամ դատարանում, բայց ոչ կալանավորման օրինականության և հիմնավորվածության վերաբերյալ դատական քննության սահմաններում»* (տե՛ս սույն որոշման 8.1.-րդ կետը):

15. Նախորդ կետում արված դատողությունները Վճռաբեկ դատարանին հիմք են տալիս եզրակացնելու, որ Ա.Գրիհչուկի արարքում ավազակության հանցակազմի հիմնավոր կասկածի առկայությունը համապատասխանաբար պատճառաբանություններով հերքելով՝ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել միևչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմաններից:

16. Վճռաբեկ դատարանը փաստում է նաև, որ ստորադաս դատարանները հաստատված են համարել մեղադրյալի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու, այդ թվում՝ դատավարության մասնակիցների վրա հնարավոր անօրինական ազդեցություն գործադրելու միջոցով գործի քննությանը խոչընդոտելու և վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու հավանականությունը: Այդ համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն հետևությանը, որ մեղադրյալ Ա.Գրիհչուկի նկատմամբ գրավ կիրառելու վերջինիս եզրահանգումը *պայմանավորված է հատկապես այն հանգամանքով, որ մեղադրյալ Ա.Գրիհչուկի ենթադրյալ գործողությունների արդյունքում հիմնավոր կասկածն առկա է ոչ մեծ և/կամ միջին ծանրության հանցագործությունների կատարման համար*՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն որոշման 14-15-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումներն արդեն իսկ բավարար են (մեղադրյալին մեղսագրված արարքներից ավազակությունը դասվում է ծանր հանցանքների շարքին) անհիմն համարելու այդպիսի հետևությունը:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից մատնանշված՝ Ա.Գրիգորյանի անձը բնութագրող հանգամանքներին (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը), ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոգրյալի պայմաններում դրանք չեն կարող բավարար լինել մեղադրյալի նկատմամբ գրավի՝ որպես այլընտրանքային խափանման միջոցի կիրառման համար:

Ասվածի համատեքստում հաշվի առնելով նաև *Դ.Վարդանյանի* գործով արտահայտված իրավական դիրքորոշումներն առ այն, որ մեղադրյալի կողմից դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով վարույթի պատշաճ ընթացքին խոչընդոտելու վտանգի չեզոքացման գործում երաշխիք գրավը չի կարող հանդիսանալ *(տե՛ս Դավիթ Վարդանյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԱՔԴ/0056/06/14 որոշման 19-րդ կետը)*՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գրավի կիրառումը մերժելու հարցում Առաջին ատյանի դատարանը եկել է իրավաչափ եզրահանգման:

17. Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ, 143-րդ, 288-րդ, 358-րդ հոդվածների պահանջների խախտում, ինչն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների, հիմք է ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու համար: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ: Ուստի արդարադատության արդյունավետության շահերից ելնելով՝ անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 2-ի որոշմանը՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Վճռաբեկ դատարանը փաստում է նաև, որ Առաջին ատյանի դատարանի որոշմամբ սահմանված՝ կալանավորման 2 ամիս ժամկետին պետք է հաշվակցել Ա.Գրիգորյանին փաստացի արգելանքի վերցնելու պահից՝ 2017 թվականի փետրվարի 27-ից մինչև ազատ արձակվելը նրա՝ անազատության մեջ գտնվելու ժամկետը, իսկ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դեպոզիտ հաշվին որպես գրավի գումար մուծված 1.000.000 ՀՀ դրամը պետք է վերադարձնել գրավատուին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածնե-

րով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Մեղադրյալ Ալեքսեյ Անդրեյի Գրիճչուկի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի մարտի 28-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 2-ի որոշմանը՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշմամբ սահմանված՝ կալանավորման 2 ամիս ժամկետին հաշվակցել 2017 թվականի փետրվարի 27-ից մինչև ազատ արձակվելը մեղադրյալ Ա.Գրիճչուկի՝ անազատության մեջ գտնվելու ժամկետը:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դեպոզիտ հաշվին որպես գրավի գումար մուծված 1.000.000 ՀՀ դրամը վերադարձնել գրավատուին:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

25.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԴ1/0008/15/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2017 թվականի նոյեմբերի 15-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հունվարի 31-ի որոշման դեմ դատապարտյալ Ամալյա Սերժիկի Ղարիբյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի հոկտեմբերի 5-ի դատավճռով Ամալյա Սերժիկի Ղարիբյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-215-րդ հոդվածի 2-րդ մասով, 38-34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 38-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով: ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-215-րդ հոդվածի 2-րդ մասով Ա.Ղարիբյանի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով՝ ազատազրկում 7 (յոթ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 38-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով՝ ազատազրկում 7 (յոթ) տարի ժամկետով՝ առանց

գույքի բռնագրավման: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա Ա.Ղարիբյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 8 (ութ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Վերոնշյալ դատավճիռը օրինական ուժի մեջ է մտել 2013 թվականի փետրվարի 27-ին:

2. 2016 թվականի հուլիսի 13-ին Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) է մուտքագրվել ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալ Ա.Ղարիբյանի դիմումը, որով վերջինս խնդրել է «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2016 թվականի մայիսի 16-ի թիվ ՀՕ-83-Ն ՀՀ օրենքի հիման վրա վերանայել իր վերաբերյալ կայացված վերոնշյալ դատավճիռը:

Առաջին ատյանի դատարանը 2016 թվականի հոկտեմբերի 13-ի որոշմամբ բավարարել է դատապարտյալ Ա.Ղարիբյանի դիմումը, և վերջինիս կատարած ու Առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի հոկտեմբերի 5-ի դատավճռով հաստատված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-215-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքը «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2016 թվականի մայիսի 16-ին ընդունված թիվ ՀՕ-83-Ն ՀՀ օրենքի կիրառմամբ համապատասխանեցրել է ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-267.1-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարքին՝ այդ հոդվածով նշանակված պատիժը, ինչպես նաև հանցագործությունների համակցությամբ նշանակված վերջնական պատիժը թողնելով անփոփոխ:

3. Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ որոշման դեմ դատապարտյալ Ա.Ղարիբյանի կողմից բերված վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի հունվարի 31-ի որոշմամբ մասնակիորեն բավարարել է, բեկանել է Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 13-ի որոշումը՝ մերժելով դատապարտյալ Ա.Ղարիբյանի դիմումը:

4. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ Ա.Ղարիբյանի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 1-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Առաջին ատյանի դատարանը 2016 թվականի հոկտեմբերի 13-ի որոշմամբ արձանագրել է. *«(...) Ամալյա Մերժիկի Ղարիբյանի կատարած և (...) Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2012թ. հոկտեմբերի*

05-ի դատավճռով հաստատված ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-215-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցավոր արարքը համապատասխանում է նոր խմբագրությամբ գործող ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-267.1 հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործությանը (...)» (տե՛ս նյութեր, թերթեր 56-59):

6. Վերաքննիչ դատարանը, միանձնյա կազմով քննության առնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը, իր որոշմամբ նշել է. «*ՀՀ քրեական օրենսգրքի 267.1-րդ հոդվածի 4-րդ մասի սանկցիայով պատիժ է նախատեսված ազատազրկում՝ ութից տասներկու տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ, իսկ մինչ օրենսդրական փոփոխությունը ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայով նախատեսվել է ազատազրկում՝ չորսից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ: Այսինքն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-267.1-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարքը դասվում է առանձնապես ծանր հանցագործությունների շարքին, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-215-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքը դասվել է ծանր հանցագործությունների շարքին:*

(...)

Այսինքն, անձի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-267.1-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով որակելու դեպքում՝ անձի վիճակը, թե պատժի նշանակման և թե հետագա իրավահարաբերությունների տարածման առումով վատթարանում է: Հետևաբար, նշված նորմը չի կարող տարածվել մինչ այդ փոփոխությունը հանցանք կատարած անձանց նկատմամբ:

(...)

Եվ, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 267.1-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված արարքը համարվում է առանձնապես ծանր հանցագործություն, իսկ 215-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվածը՝ ծանր, ուստի վատթարացնող օրենքին հետադարձ ուժ չտալու սկզբունքից ելնելով՝ համապատասխանեցման անհրաժեշտությունը բացակայում է:

Այսպիսով, հաշվի առնելով վերը նշված մեկնաբանությունները, Վերաքննիչ դատարանը գալիս է եզրահանգման, որ առաջին ատյանի դատարանի դատական ակտը պետք է բեկանել և Ամալյա Ղարիբյանի դիմումը՝ ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012թ. հոկտեմբերի 5-ի դատավճիռը վերանայելու մասին, մերժել» (տե՛ս նյութեր, թերթեր 94-100):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքի հեղինակի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական չէ, այն կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի էական խախտումներով:

Ի հիմնավորումն վերոհիշյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ ըստ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2016 թվականի թիվ ՀՕ-83-Ն ՀՀ օրենքի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածը ուժը կորցրած է ճանաչվել: Ուստի դատարանը պետք է արձանագրեր, որ Ա.Ղարիբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-215-րդ հոդվածի 2-րդ մասով մեղսագրված արարքում այլևս հանցակազմ չկա: Դրանից ելնելով՝ բողոքաբերը փաստել է, որ դատարանը պետք է վերանայեր իր նկատմամբ կայացված դատավճիռը և իրեն ազատեր ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-215-րդ հոդվածի 2-րդ մասով նշանակված պատժից, որից հետո պետք է կիրառեր ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կանոնները՝ իր նկատմամբ վերջնական պատիժ սահմանելու համար:

8. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հունվարի 31-ի որոշումը և կայացնել նոր որոշում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-215-րդ հոդվածի 2-րդ մասով նշանակված պատժից իրեն ազատելու և ՀՀ քրեական օրենսգքրի 66-րդ հոդվածի կիրառմամբ իր նկատմամբ ավելի մեղմ վերջնական պատիժ սահմանելու մասին:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

9. Սույն գործի փաստերի առանձնահատկություններից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նախ անդրադառնալ դատապարտյալ Ա.Ղարիբյանի ներկայացրած վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանի կողմից միանձնյա դատական կազմով քննելու իրավաչափությանը, քանի որ դրանով է պայմանավորված վճռաբեկ բողոքի փաստարկներն ըստ էության քննարկման առարկա դարձնելու Վճռաբեկ դատարանի իրավասության հարցը:

10. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10.1-րդ կետը սահմանում է, որ գործն ըստ էության լուծող դատական ակտեր են համարվում *առաջին ատյանի դատարանի դատավճիռը, քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին որոշումը, այդ ակտերի վերաքննիչ բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտերը, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում վճռաբեկ դատարանի դատական ակտերը:*

Մեջբերված իրավանորմի առնչությամբ Վճռաբեկ դատարանն *Ա.Արծրունու* գործով կայացված որոշմամբ ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«(...) [Հ]անցանք կատարած անձի վիճակը նոր քրեական օրենքի*

ուժով բարելավելու հիմքով դատավճիռը վերանայելու, մասնավորապես՝ անձի կատարած արարքի քրեաիրավական որակումը նոր ընդունված քրեական օրենքին համապատասխանեցնելու հարցը լուծելով՝ դատարանը կայացնում է որոշում, որտեղ իրենց լուծումն են ստանում դատավճռին վերաբերող հարցեր (օրինակ՝ արարքի քրեաիրավական որակում, պատժատեսակի և պատժաչափի որոշում): Հետևաբար այդ որոշումը ևս հանդիսանում է գործն ըստ էության լուծող դատական ակտ, և այն ենթակա է բողոքարկման նույն ընթացակարգով, ինչպիսին կիրառվում է դատավճիռների բողոքարկելիս» (տե՛ս *Արսեն Արծրունու* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ՎԲ-16/11 որոշման 11-րդ կետը):

11. Վերահաստատելով և զարգացնելով *Ա.Արծրունու* գործով արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը *Է.Ծռնվերանցի* գործով որոշմամբ փաստել է. *«(…) [Ա]նձի կատարած արարքի քրեաիրավական որակումը նոր ընդունված քրեական օրենքին համապատասխանեցնելու հարցի վերաբերյալ դատարանի կողմից կայացված որոշումը որպես գործն ըստ էության լուծող դատական ակտ դիտարկելը պայմանավորված է այն հանգամանքով, որ քրեական օրենքով արգելված արարքը նոր իրավակարգավորումներին համապատասխանեցնելու հարցը լուծելիս դատարանն անդրադառնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածում նախատեսված այնպիսի իրավական հարցերի (արարքը համապատասխանո՞ւմ է արդյոք քրեական օրենսգրքի հատուկ մասի նորմերի հատկանիշներին, ենթակա՞ է արդյոք պատժի հանցավորն իր կատարած հանցանքի համար, ի՞նչ պատիժ պետք է նշանակվի հանցավորի նկատմամբ), որոնք օրենքի ուժով (ex lege) վերապահված են գործն ըստ էության լուծող դատական ակտի՝ դատավճռի լուծմանը: Հետևաբար քրեական օրենքով արգելված արարքը նոր իրավակարգավորումներին համապատասխանեցնելու հարցը լուծելիս կայացվող դատական ակտի բողոքարկումը և բողոքի քննությունը ենթակա են իրականացման նույն դատավարական ընթացակարգով, ինչը նախատեսված է գործն ըստ էության լուծող դատական ակտի համար: Այլ կերպ՝ քննարկման առարկա դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելիս կիրառման են ենթակա, ի թիվս այլոց, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի 4-րդ մասով, 379-րդ և 387-րդ հոդվածներով սահմանված՝ գործն ըստ էության լուծող դատական ակտին ներկայացվող պահանջները:*

(…)

[«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված] արդար դատաքննության իրավունքի բաղադրիչը կազմող՝ «օրենքի հիման վրա ստեղծված» եզրույթի առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նախադեպային իրավունք է ձևավորել առ

այն, որ նշյալ եզրույթը ոչ միայն կազմում է «դատարանի»՝ առհասարակ գոյության իրավական հենքը, այլև այն ներառում է յուրաքանչյուր գործով դատարանի կազմը (տե՛ս Buscarini v. San Marino գործով 2000 թվականի մայիսի 4-ի որոշումը, դանգատ թիվ 31657/96, Posokhov v. Russia գործով 2003 թվականի մարտի 4-ի վճիռը, դանգատ թիվ 63486/00, կետ 39, Yegorychev v. Russia գործով 2016 թվականի մայիսի 17-ի վճիռը, դանգատ թիվ 8026/04, կետ 64): Ուստի այն դեպքերում, երբ օրենքով դատարանի կազմին ներկայացվող պահանջներն ապահովված չեն, ապա խաթարվում է օրինականության սկզբունքը՝ անձին զրկելով արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ տարրը կազմող՝ «օրենքի հիման վրա ստեղծված» դատարանի առջև կանգնելու իրավունքից (տե՛ս, mutatis mutandis, Jorgic v. Germany գործով 2007 թվականի հուլիսի 12-ի վճիռը, դանգատ թիվ 74613/01, կետ 64, Richert v. Poland գործով 2011 թվականի հոկտեմբերի 25-ի վճիռը, դանգատ թիվ 54809/07, կետ 41)» (տե՛ս *Էդիկ Ծոնվերանցի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵՇԴ/0049/01/12 որոշման 11.1-րդ և 12-րդ կետերը):

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է.

ա) դատապարտյալ Ա.Ղարիբյանը 2016 թվականի հուլիսի 13-ին Առաջին ատյանի դատարան դիմում է ներկայացրել, որով խնդրել է վերաձայել իր նկատմամբ կայացված դատավճիռը՝ հաշվի առնելով «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2016 թվականի մայիսի 16-ի ՀՕ-83-Ն ՀՀ օրենքի ընդունումը (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը),

բ) Առաջին ատյանի դատարանը 2016 թվականի հոկտեմբերի 13-ին որոշել է դատապարտյալ Ա.Ղարիբյանի դիմումը բավարարել, նրա կատարած արարքի քրեաիրավական որակումը «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2016 թվականի մայիսի 16-ին ընդունված թիվ ՀՕ-83-Ն ՀՀ օրենքի կիրառմամբ համապատասխանեցնել ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-267.1-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետին՝ այդ արարքի համար նշանակված պատիժը, ինչպես նաև հանցագործությունների համակցությամբ նշանակված վերջնական պատիժը թողնելով անփոփոխ (տե՛ս սույն որոշման 2-րդ և 5-րդ կետերը):

գ) Վերաքննիչ դատարանը, միանձնյա կազմով քննության առնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը, 2017 թվականի հունվարի 31-ի որոշմամբ արձանագրել է, որ անձի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-267.1-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով որակելու դեպքում անձի վիճակը թե՛ պատժի նշանակման և թե՛ հետագա իրավահարաբերությունների տարածման առումով վատթարանում է, հետևաբար նշված նորմը չի կարող տարածվել մինչև օրենքի վերոնշյալ փոփոխությունը հանցանք կատարած անձանց վրա: Արդյունքում Վերաքննիչ

դատարանը եկել է եզրահանգման, որ վատթարացնող օրենքին հետադարձ ուժ չտալու սկզբունքից ելնելով՝ համապատասխանեցման անհրաժեշտությունը բացակայում է, ուստի Առաջին ատյանի դատարանի դատական ակտը պետք է բեկանել և Ա.Ղարիբյանի դիմումը՝ իր վերաբերյալ դատավճիռը վերանայելու մասին՝ մերժել (տե՛ս սույն որոշման 3-րդ և 6-րդ կետերը):

13. Նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով սույն որոշման 10-11-րդ կետերում շարադրված նորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի որոշման՝ որպես գործն ըստ էության լուծող դատական ակտի նկատմամբ պետք է կիրառվեին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի 4-րդ մասով և 387-րդ հոդվածով սահմանված՝ գործն ըստ էության լուծող դատական ակտին ներկայացվող պահանջները: Այլ կերպ՝ Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ ներկայացված բողոքը սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից պետք է քննության առնվեր կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով, մինչդեռ այն քննության է առնվել դատավորի կողմից միանձնյա՝ այդ կերպ չապահովելով արդար դատաքննության իրավունքի բաղադրիչը կազմող՝ «օրենքի հիման վրա ստեղծված» դատարանի առկայությունը:

14. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատապարտյալ Ա.Ղարիբյանի դիմումը բավարարելու մասին Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ բերված բողոքը Վերաքննիչ դատարանի կողմից միանձնյա կազմով քննության առնելն իրավաչափ չէր:

15. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի 4-րդ մասի, 387-րդ հոդվածի խախտումներ, այն է՝ դատական ակտը կայացրել է դատարանի ոչ օրինական կազմով: Նշված խախտումը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, դատական ակտն անվերապահ բեկանելու հիմք է: Հիշյալ հոդվածում ամրագրելով «բոլոր դեպքերում» ձևակերպումը՝ օրենսդիրը արտահայտել է այդ կանոնն իմպերատիվ դարձնելու կամք՝ անկախ վերադաս դատարաններում վարույթի սահմանները որոշող իրավանորմերից (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 2-րդ մաս և 415-րդ հոդվածի 1-ին մաս): Այլ կերպ՝ եթե վերադաս դատարանը հայտնաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված հանգամանքներից որևէ մեկը, ապա իրավասու է ուղղել այդ դատական սխալը՝ կաշկանդված չլինելով դատական վերանայման սահմանների վերաբերյալ կանոններով (տե՛ս *Մխիթար Էդոյանի և այլոց* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշման 12-րդ կետը):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների համաձայն՝ հիշյալ խախտումը հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն որոշմամբ արձանագրված իրավախախտման պայմաններում հնարավոր չէ անդրադառնալ բողոքաբերի բարձրացրած՝ իրավունքի ենթադրյալ խախտման վերաբերյալ փաստարկներին (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը): Նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը, վերացնելով սույն որոշմամբ արձանագրված խախտումը, պետք է օրենքով սահմանված կարգով քննության առնի ներկայացված վերաքննիչ բողոքը՝ գալով համապատասխան եզրահանգման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Դատապարտյալ Ամալյա Սերժիկի Ղարիբյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հունվարի 31-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

26.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՎԴ2/0020/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
	Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝	Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ դատախազ	Հ.ԵՆՈՔՅԱՆԻ

2017 թվականի նոյեմբերի 15-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Էմմա Գրիգորի Մոսեսի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի մայիսի 12-ի որոշման դեմ պաշտպան Հ.Պետրոսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2014 թվականի փետրվարի 14-ին և 2014 թվականի մարտի 10-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևանի քննչական վարչության կենտրոնականի քննչական բաժնում համապատասխանաբար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործութ-

յունների հատկանիշներով հարուցվել են թիվ 13115714 և թիվ 13127014 քրեական գործերն ու 2014 թվականի ապրիլի 8-ին միացվել մեկ վարույթում:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի նոյեմբերի 7-ի որոշմամբ Է.Մոսեսին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 2-րդ մասով և 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի մարտի 14-ի որոշմամբ Է.Մոսեսին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 2-րդ մասով և 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2016 թվականի մարտի 17-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան):

2016 թվականի դեկտեմբերի 16-ի որոշմամբ Է.Մոսեսին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 267.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունվարի 31-ի դատավճռով Է.Մոսեսը ՀՀ քրեական օրենսգրքի 267.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղսագրվող արարքի կատարման մեջ ճանաչվել է անմեղ և արդարացվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ ապացույցների անբավարարության հիմքով:

Նույն դատական ակտով Է.Մոսեսը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ՝ նշանակված ազատազրկման ձևով պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

3. Մեղադրող Հ.Հակոբյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2017 թվականի մայիսի 12-ի որոշմամբ մեղադրողի վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակիորեն՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունվարի 31-ի դատավճիռը պատժի մասով փոփոխել է, և ամբաստանյալ Է.Մոսեսին թողնվել է կրելու դատավճռով նշանակված պատիժը՝ 1 (մեկ) տարի ժամկետով ազատազրկումը՝ առանց ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման: Դատավճիռը մնացած մասով թողնվել է անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի մայիսի 12-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել պաշտպան Հ.Պետրոսյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 12-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննության մարմնի կողմից Է.Մոսեսին ՀՀ քրեական օրենսգրքի 267.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ. *«(...) [Նա] 2010 թվականի ապրիլի 09-ին Փարիզ-Երևան թիվ 102 չվերթով ժամանելով «Զվարթնոց» օդանավակայան, մաքսանենգությամբ՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով մաքսային հսկողությունից թաքցնելով, ձեռքի պայուսակում, առանց իրացնելու նպատակի, իր օգտագործման համար տեղափոխել է «Կոդեին» տեսակի թմրամիջոց և «Տրամադոլ» տեսակի հոգեմետ նյութ պարունակող դեղահատեր, որոնցից որոշակի քանակությամբ օգտագործել է, իսկ ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից բնակության վայրում 2014 թվականի փետրվարի 13-ին կատարված խուզարկությամբ հայտնաբերվել և առգրավվել է խոշոր չափերով՝ ընդհանուր՝ 3,75 գրամ քաշով «կոդեին» տեսակի թմրամիջոց պարունակող 93 հատ, յուրաքանչյուրը 0,7 գրամ քաշով և 32 հատ, յուրաքանչյուրը 3,26 գրամ քաշով գործարանային արտադրության «Դաֆալգան» տեսակի և ընդհանուր 0,75 գրամ քաշով «Տրամադոլ» տեսակի հոգեմետ նյութ պարունակող՝ 20 հատ, յուրաքանչյուրը 0,45 գրամ քաշով, գործարանային արտադրության դեղահատերը (...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 99-100):

6. Առաջին ատյանի դատարանը Է.Մոսեսին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և, անդրադառնալով վերջինիս նկատմամբ պատիժ նշանակելու հարցին, փաստել է. *«(...) Ամբաստանյալ Էմմա Մոսեսն առաջին անգամ կատարել է միջին ծանրության դիտավորյալ հանցանք, 65 տարեկան կին է, նախկինում դատված չի եղել, բնութագրվում է դրական, ֆիզիկապես վատառողջ է,*

- երկու անգամ տարել է իշեմիկ ինսուլտ, տառապում է հեմիպարեզով և մասնակի սենսոմոտոռաֆազիայով, առկա են կայուն մնացորդային երևույթներ իշեմիկ ինսուլտից հետո, երկկողմանի պիրամիդալ անբավարարություն, գլխուղեղի շրջանառության խրոնիկ խանգարում՝ հաճախակի իշեմիկ գրոհներով, զարկերակային հիպերտենզիա 2-րդ աստիճանի, կրիզային ընթացքով, իշեմիկ դրսևորումներով, կարդիոսկլերոզ, շողացող առիթմիա, ստենոկարդիայի նոպաներով, շաքարային դիաբետ 2-րդ տիպ, հիպերտոնիկ էնցեֆալոպաթիա 2-րդ աստիճան հիվանդություններով (...)

- երկրորդ խմբի հաշմանդամ է (...)

- նրա խնամքի տակ է գտնվում ֆիզիկապես վատառողջ, կենսաթոշակառու և երկրորդ խմբի հաշմանդամ ամուսինը՝ 1938 թվականին ծնված Էրիխ Մոսեսը (...):

Որպես պատիժը և պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք [Առաջին ատյանի] դատարանը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, համարում է ամբաստանյալի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքում իրեն լիովին մեղավոր ճանաչելը և անկեղծորեն զղջալը:

(...)

Պատիժը և պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներ չկան:

(...)

Քննության առնելով ազատազրկման ձևով նշանակվող պատիժը ամբաստանյալ Էմմա Մոսեսի կողմից կրելու նպատակահարմարության մասին հարցը, դատարանը գտնում է, որ նրա նկատմամբ պետք է կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը և պատիժը պայմանականորեն չկիրառել հետևյալ պատճառաբանությամբ.

(...)

Ամբաստանյալ Էմմա Մոսեսի կողմից առանց իրացնելու նպատակի, ապօրինի ձեռք բերված «Դաֆալգան» և «Զալդիար» տեսակի գործարանային արտադրության դեղահատերից առաջինն իր մեջ պարունակել է խոշոր չափերի՝ ընդհանուրը՝ 3,75 գրամ «կոդեին» տեսակի թմրամիջոց, երկրորդը՝ խոշոր չափերի՝ ընդհանուրը 0,75 գրամ «տրամադոլ» տեսակի հոգեմետ նյութ, որոնք համեմատելով ՀՀ քրեական օրենսգրքի թիվ 1 հավելվածում նշված, «կոդեին» տեսակի թմրամիջոցի համար սահմանված խոշոր չափի (0,2-10,0 գրամ), և «տրամադոլ» տեսակի հոգեմետ նյութի համար սահմանված խոշոր չափի (0.5-5.0 գրամ) հետ՝ ակնհայտ է դառնում, որ հայտնաբերվածներից յուրաքանչյուրի քաշը առավել մոտ է թիվ 1 հավելվածով հիշյալ թմրամիջոցի և հոգեմետ նյութի համար սահմանված խոշոր չափի նվազագույնի սահմանին:

Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Էմմա Մոսեսը տառապել է բազմաթիվ հիվանդություններով, որոնցով էլ պայմանավորված ձեռք են բերվել այդ դեղահատերը՝ գործածման նպատակով, հետևաբար, վկայակոչված հանգամանքները, ամբաստանյալի անձը բնութագրող, նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների համակցության մեջ էականորեն նվազեցնում են արարքի հանրային վտանգավորության աստիճանը:

Հաշվի առնելով ամբաստանյալ Էմմա Մոսեսի անձը բնութագրող տվյալները, նրա պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքների առկայությունը, պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, նրա խնամքին հիվանդ, զառամյալ և կենսաթոշակառու ամուսնու առկայությունը, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ

ՀՀ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները, դատարանն օբյեկտիվ տվյալների վերլուծության հիման վրա հանգում է այն հետևության, որ ֆիզիկապես վատառողջ և անժամկետ երկրորդ խմբի հաշմանդամ ճանաչված, 65-ամյա Է.Մոսեսի ուղղվելը հնարավոր է առանց նրա նկատմամբ ազատազրկման ձևով նշանակվող պատիժը ռեալ կրելու, քանի որ պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով է հնարավոր հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակներին, այն է՝ վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 131-132, 134):

7. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում արձանագրել է. *«(...) [Հ]աշվի առնելով Էմմա Մոսեսի կատարած հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, վերջինիս անձը բնութագրող տվյալները, պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև գործի փաստական հանգամանքները, վերաքննիչ բողոքում բերված փաստարկները՝ իրենց համակցությամբ, Վերաքննիչ դատարանը հանգում է հետևության, որ ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70 հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով սույն գործով հնարավոր չէ հասնել պատժի նպատակներին, այն է՝ սոցիալական արդարության վերականգնմանը, պատժի ենթարկված անձի ուղղմանը և հանցագործությունների կանխմանը:*

Այս հանգամանքները բազմակողմանի գնահատման չեն ենթարկվել [Առաջին ատյանի] [դ]ատարանի կողմից դատավճիռ կայացնելիս, ինչը հիմք է այն բեկանելու և մեղադրողի վերաքննիչ բողոքը մասնակի բավարարելու համար (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 76):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա և հանգեցրել են օրենքի պահանջներին չհամապատասխանող դատական ակտ կայացնելուն:

Ի հիմնավորումն վերոնշյալի՝ բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանը չի կատարել ամբաստանյալի անձը բնութագրող, նրա պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները հաստատող ապացույցները բարեխիղճ գնահատելու իր պարտականությունը, անտեսել է նշված ապացույցներին Առաջին ատյանի դատարանի կողմից տրված գնահատականները՝ կայացնելով անհիմն դատական ակտ: Մինչդեռ Առա-

ջին ատյանի դատարանը, Է.Մոսեսի նկատմամբ նշանակված պատժի կրման նպատակահարմարության հարցը լուծելիս, բարեխղճորեն գնահատել է նրա անձը բնութագրող, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև հաշվի է առել պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը:

8.1. Բողոքաբերի կարծիքով Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ Վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված կայուն իրավական դիրքորոշումները:

Մասնավորապես Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատականի չի արժանացրել այն, որ ամբաստանյալն առաջին անգամ է կատարել միջին ծանրության հանցանք, առաջադրված մեղադրանքում իրեն լիովին մեղավոր է ճանաչել և անկեղծորեն զղջացել, 65 տարեկան կին է, բնութագրվում է դրական, ֆիզիկապես վատառողջ է՝ երկու անգամ տարել է իշեմիկ ինսուլտ, տառապում է բազմաթիվ հիվանդություններով, երկրորդ խմբի հաշմանդամ է, նրա խնամքի տակ է գտնվում ֆիզիկապես վատառողջ կենսաթոշակառու և երկրորդ խմբի հաշմանդամ ամուսինը, ինչպես նաև բացակայում են պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքները:

9. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է մասնակի՝ Է.Մոսեսի նկատմամբ նշանակված մեկ տարի ժամկետով ազատազրկման ձևով պատիժը կրելու մասով, բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի մայիսի 12-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունվարի 31-ի դատավճռին:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր են արդյոք ամբաստանյալ Է.Մոսեսի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Եթե դատարանը, կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:*

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները (...)»:

Վերոնշյալ իրավադրույթը Վճռաբեկ դատարանի կողմից բազմիցս վերլուծության է ենթարկվել մի շարք գործերով կայացված նախադեպային որոշումներում, և մշտապես վերահաստատվել է դիրքորոշումն առ այն, որ

դատարանի համոզվածությունը, վստահությունն այն մասին, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց իրական պատիժ կրելու, պետք է հիմնվի օբյեկտիվ գոյություն ունեցող այնպիսի տվյալների համակողմանի վերլուծության վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը բազմիցս փաստել է, որ թեև պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված՝ ՀՀ քրեական օրենսգիրքն ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսում, սակայն դատարանի հետևությունները պետք է, ի թիվս այլոց, հիմնված լինեն նաև հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի ամբողջական գնահատման վրա *(հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ, ի թիվս այլ որոշումների, մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Գարուշ Մադաթյանի գործով 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵԴՀ/0029/01/08, Արմեն Շահբազյանի գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵԴՀ/0143/01/13, Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշումները)*՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթը, մեղքի ձևը և տեսակը, պատճառված վնասի չափը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, հանցագործության հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, նպատակներն ու շարժառիթները և այլն (*տե՛ս Սամսոն Ամիրխանյանի գործով 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԱԴԴ/0034/01/12, Արսեն Մկրտչյանի գործով 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԼԴ/0093/01/12, Վանյա Բեգլյանի գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ՏԴ/0018/01/13, Արամայիս Հովհաննիսյանի գործով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԳԴ/0014/01/14, Մհեր Հովհաննիսյանի գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0039/01/15 և այլ որոշումները*):

12. Անդրադառնալով պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս հանցավորի անձը բնութագրող տվյալները գնահատման ենթարկելու կարևորությանը՝ Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ պատասխանատվության և պատժի անհատականացման հիմք են ոչ միայն կատարված արարքի հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը, այլև հանցավորի անձը բնութագրող սոցիալ-հոգեբանական, սոցիալ-ժողովրդագրական, քրեաբանական և քրեաիրավական, ֆիզիկական հատկությունների համակցությունը (ընտանեկան դրությունը, վարքագիծը աշխատանքում և կենցաղում, աշխատունակությունը, առողջական վիճակը, տարիքը, սեռը, դատվածությունը և այլն): Մասնավորապես Վճռաբեկ դատարանը փաստել է հանցավորի ընտանեկան դրությունը, վեր-

ջինիս ընտանիքի կյանքի պայմանների վրա նշանակված պատժի ազդեցությունը, նրա խնամքին այլ անճանց առկայությունը, սոցիալական միջավայրում նրա զբաղեցրած տեղն ու դիրքը, սոցիալական միջավայրում նրա ունեցած բնութագիրը և մի շարք այլ հանգամանքների վերաբերյալ փաստական տվյալները գնահատման ենթարկելու անհրաժեշտությունը *(տե՛ս Հ.Հարությունյանի գործով 2007 թվականի մարտի 30-ի թիվ ՎԲ-50/07, Ն.Սարգսյանի գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0042/01/11, Մ.Սարգսյանի գործով 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՄԴ/0109/01/12, Մ.Աղախանյանի գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԱՎԴ/0082/01/12, Ջ.Շիրվանյանի գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱՔԴ/0091/01/14 և այլ որոշումները):*

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Առաջին ատյանի դատարանը, Է.Մոսեսի նկատմամբ պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս, որպես նրա անձը բնութագրող և պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ է դիտել այն, որ նա առաջադրված մեղադրանքում իրեն լիովին մեղավոր է ճանաչել և անկեղծորեն զղջացել է կատարածի համար, բնութագրվում է դրական, 65 տարեկան կին է, նախկինում դատված չի եղել, ֆիզիկապես վատառողջ է, երկու անգամ տարել է իշեմիկ ինսուլտ, տառապում է հեմիպարեզով և մասնակի սենսոմոտոռաֆազիայով, առկա են կայուն մնացորդային երևույթներ իշեմիկ ինսուլտից հետո, երկկողմանի պիրամիդալ անբավարարություն, գլխուղեղի շրջանառության խրոնիկ խանգարում՝ համախախի իշեմիկ գրոհներով, զարկերակային հիպերտենզիա 2-րդ աստիճանի, կրիզային ընթացքով, իշեմիկ դրսևորումներով, կարդիոսկլերոզ, շողացող առիթմիա, ստենոկարդիայի նոպաներով, շաքարային դիաբետ 2-րդ տիպ, հիպերտոնիկ էնցեֆալոպաթիա 2-րդ աստիճան հիվանդություններով, ինչով էլ պայմանավորված, ձեռք է բերել դեղահատերը՝ գործածման նպատակով, նրա խնամքին է գտնվում ֆիզիկապես վատառողջ, երկրորդ խմբի հաշմանդամ, 1938 թվականին ծնված կենսաթոշակառու ամուսինը: Արդյունքում Առաջին ատյանի դատարանը հանգել է հետևության, որ ֆիզիկապես վատառողջ և անժամկետ երկրորդ խմբի հաշմանդամ ճանաչված, 65-ամյա Է.Մոսեսի ուղղվելը հնարավոր է առանց նրա նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը փաստացի կրելու (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում արձանագրել է, որ Է.Մոսեսի կատարած արարքի հանրության համար վտանգավորության աստիճանի և բնույթի, վերջինիս անձը բնութագրող տվյալների, պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքների, գործի փաստական հանգամանքների և վերաքննիչ բողոքում բերված փաստարկների հաշվառմամբ հանգում է այն հետևության, որ ամբաստանյալի նկատմամբ նշա-

նակված պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով հնարավոր չէ հասնել պատժի նպատակներին (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

14. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները համադրելով սույն որոշման 11-12-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, վերացնելով Է.Մոսեսի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը, պատշաճ վերլուծության չի ենթարկել ամբաստանյալի անձը բնութագրող և պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները: Մասնավորապես Վերաքննիչ դատարանը թեպետ արձանագրել է, որ ստորադաս դատարանը բազմակողմանի գնահատման չի ենթարկել հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև գործի փաստական հանգամանքները, այնուամենայնիվ որևէ կերպ չի պատճառաբանել, թե գործի կոնկրետ որ հանգամանքներն Առաջին ատյանի դատարանի կողմից պատշաճ վերլուծության չեն ենթարկվել, որոնց հիման վրա կարելի էր եզրահանգել, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով հնարավոր չէ հասնել պատժի նպատակներին:

15. Մինչդեռ Առաջին ատյանի դատարանը, ամբաստանյալ Է.Մոսեսի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով, պատշաճ ստուգման և գնահատման է ենթարկել հանցավորի անձը բնութագրող սոցիալ-հոգեբանական և ժողովրդագրական հատկանիշները, վերջինիս պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև ծանրացնող հանգամանքների բացակայությունը:

Այսպես՝ Առաջին ատյանի դատարանը հաշվի է առել այն, որ ամբաստանյալը 65 տարեկան կին է, ֆիզիկապես վատառողջ, տառապում է բազմաթիվ հիվանդություններով, ինչի պատճառով էլ ձեռք է բերել դեղահատերը, խնամքին է գտնվում վատառողջ, 2-րդ խմբի հաշմանդամ կենսաթոշակառու ամուսինը, իրեն լիովին մեղավոր է ճանաչել և անկեղծորեն զղջացել է կատարված արարքի համար, բնութագրվում է դրական:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ վերոնշյալ հանգամանքներն էականորեն նվազեցնում են հանցավորի անձի և նրա կատարած արարքի հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը և վկայում այն մասին, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը փաստացի կրելու:

Հետևաբար Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Է.Մոսեսի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր չեն:

16. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, Է.Մոսեսի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելով, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ, 48-րդ, 61-րդ, 70-րդ հոդվածների պահանջների խախտումներ, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի իմաստով քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է և հանգեցրել է նույն օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը: Այսինքն՝ թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված՝ նյութական իրավունքի խախտում, որը Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու հիմք է:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով դատական ակտ կայացնելիս Առաջին ատյանի դատարանը դատական սխալ թույլ չի տվել, կայացված դատավճիռն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, ուստի պետք է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի դատական ակտին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Էմմա Գրիգորի Մոսեսի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի մայիսի 12-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունվարի 31-ի դատավճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

27.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0265/06/11

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2017 թվականի դեկտեմբերի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 11-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2011 թվականի ապրիլի 30-ին ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 58204511 քրեական գործը:

2011 թվականի հունիսի 13-ին որոշում է կայացվել Արման Գևորգյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-325-րդ հոդվածի 1-ին մասով և 38-215-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին: Նախաքննական մարմնի՝ նույն օրվա մեկ այլ որոշմամբ Ա.Գևորգյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2011 թվականի հունիսի 13-ի որոշմամբ Ա.Գևորգյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

Նախաքննության մարմնի՝ 2012 թվականի հուլիսի 27-ի որոշմամբ քրեական գործի վարույթը կասեցվել է մեղադրյալի՝ քննությունից թաքնվելու հիմքով, իսկ 2016 թվականի նոյեմբերի 16-ին վերսկսվել է:

2017 թվականի հունվարի 9-ին Արման Գևորգյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, ՀՀ քրեական օրենսգրքի 38-215-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը վերացվել, և նրան կրկին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-325-րդ հոդվածի 1-ին մասով:

2. 2017 թվականի փետրվարի 20-ին մեղադրյալ Ա.Գևորգյանի պաշտպան Վ.Էլբակյանը միջնորդություն է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումն այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու մասին:

Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 14-ի որոշմամբ Ա.Գևորգյանի պաշտպան Վ.Էլբակյանի միջնորդությունը մերժվել է:

3. Մեղադրյալ Ա.Գևորգյանի պաշտպան Վ.Էլբակյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 14-ի որոշումը բեկանել և մեղադրյալ Ա.Գևորգյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառել գրավը՝ 2.000.000 ՀՀ դրամի չափով:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 11-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 8-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել մեղադրյալ Ա.Գևորգյանի պաշտպան Վ.Էլբակյանը և խնդրել մերժել ներկայացված վճռաբեկ բողոքը՝ հայտնելով, որ իր պաշտպանյալը տեղեկացված է նախաքննական մարմին հարցաքննության ներկայանալու անհրաժեշտության մասին, սակայն չի կարող ներկայանալ առողջական խնդիրների պատճառով:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

5. Արման Գևորգյանին մեղադրանք է առաջադրվել այն արարքի համար, որ *«նա, գտնվելով Ամերիկայի Միացյալ Նահանգներում, կազմակեր-*

պել է՝ մաքսանենգությամբ, մաքսային կեղծ փաստաթղթերը խաբեությամբ օգտագործելու միջոցով, խոշոր չափերով ընդհանուր 507.599 ԱՄՆ դոլարին համարժեք 189.649.312 ՀՀ դրամ հաշիվ-ապրանքագրային արժեքով թվով 21 ավտոմեքենաների ԱՄՆ-ից Վրաստանի տարածքով Հայաստանի Հանրապետություն տեղափոխելը», որից *«թվով 21 ավտոմեքենաները մաքսանենգությամբ ՀՀ տեղափոխելը կազմակերպելու»* մասը վերացվել է (տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 14, 71):

6. Արման Գևորգյանն Առաջին ատյանի դատարանին և ՀՀ կառավարության առընթեր ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության պետին հասցեագրված դիմումում հայտնել է. *«(...) [Պ]ատրաստ եմ վերադառնալու Հայաստան և ինձ առաջադրված մեղադրանքի մասին ցուցմունքներ տալ, եթե իմ նկատմամբ ընտրված խափանման միջոցը փոփոխվի կամ վերացվի: (...) Հաշվի առնելով, որ Հայաստանի իրավապահ մարմինների կողմից ես քրեական հետապնդման եմ ենթարկվում ոչ մեծ ծանրության հանցագործության համար, ունեմ մշտական բնակության վայր, ցանկություն էլ անգամ չունեմ խուսափել, քրեական հետապնդման չեմ ենթարկվում ԱՄՆ իրավապահ մարմինների կողմից, ներկայումս առանց ինձ մեղսագրվող արարքի իրավաչափությունը վիճարկելու, խնդրում եմ հարգել պաշտպանիս միջնորդությունը, իմ նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը փոխարինել գրավով կամ վերացնել այն:*

Միաժամանակ, հայտնում եմ, որ ես 2017 թվականի մարտի 25-ին Հայաստան եմ ժամանելու «Զվարթնոց» օդանավակայանով, անմիջապես ներկայանալու եմ վարույթն իրականացնող մարմնին (...)» (տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 38-39):

7. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 14-ի որոշման համաձայն՝ *«(...) Միջնորդությունը քննելիս դատարանը հաշվի է առնում մեղադրյալ Ա.Գևորգյանի անձը, նրան վերագրվող արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, այն, որ նա մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 38-325-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ոչ մեծ ծանրության հանցագործություն, այն է՝ 507.599 ԱՄՆ դոլարին համարժեք 189.649.312 ՀՀ դրամ հաշիվապրանքային արժեքով, թվով 21 ավտոմեքենաները մաքսային կեղծ փաստաթղթերի օգտագործմամբ Հայաստանի Հանրապետություն տեղափոխելը կազմակերպելու մեջ, որի համար նախատեսվող ազատազրկման ճնշող պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, վերագրվող արարքի կատարմանն Ա.Գևորգյանի առնչվելու վերաբերյալ առկա է հիմնավոր կասկած, որը հաստատվում է Ա.Գևորգյանի 2011թ. հունիսի 13-ի ցուցմունքով, որի համաձայն՝ Ա.Գևորգյանը գտնվելով Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ մաքսային կեղծ փաստաթղթեր օգտագործելու միջոցով կազմակերպել է ավտոմեքենաների՝ ԱՄՆ-ից Վրաստանի տարածքով ՀՀ տեղափոխելը:*

Հաշվի առնելով, որ շարունակում են առկա լինել կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հիմքերն ու պայմանները, նկատի ունենալով, որ մեղադրյալ Ա.Գևորգյանին առաջադրված մեղադրանքի վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայությունը հաստատվում է դատարանին ներկայացված նյութերով, հաշվի առնելով նաև մեղադրյալի անձը, նրան վերագրվող արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, ինչն էական նշանակություն ունի նրա հետագա ոչ իրավաչափ վարքագծի հավանականությունը կանխորոշելու հարցում, նաև այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման համար որպես պատիժ նախատեսված է նաև ազատազրկում առավելագույնը երկու տարի ժամկետով, ինչպես նաև հաշվի առնելով քրեական վարույթն իրականացնող մարմնից Ա.Գևորգյանի թաքնվելը՝ դատարանը գտնում է, որ բավարար հիմքեր կան ենթադրելու համար, որ մեղադրյալ Ա.Գևորգյանի՝ ազատության մեջ մնալու դեպքում վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու հավանականությունը շարունակում է մնալ բարձր, ինչի պատճառով կալանավորումը գրավով փոխարինելն անթույլատրելի է» (տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 84-89):

8. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 11-ի որոշման հատվածն՝ *«(…) Առաջին ատյանի դատարանի[ի]՝ (…) կալանավորումը գրավով փոխարինելն անթույլատրելի [ճանաչելու մասին] մոտեցումը Վերաքննիչ դատարանի համար ընդունելի չէ:*

Վերաքննիչ դատարանի վերոգրյալ եզրահանգումը պայմանավորված է մասնավորապես այն հանգամանքով, որ Արման Գևորգյանին վերագրվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը դասվում է ոչ մեծ ծանրության հանցագործությունների շարքին, մեղադրյալ Արման Գևորգյանի անձը հայտնի է, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ քրեական գործով վարույթի ընթացքում մեղադրյալ Արման Գևորգյանի պատշաճ վարքագիծը հնարավոր է ապահովել նաև կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի՝ 2.000.000 (երկու միլիոն) ՀՀ դրամ գրավի կիրառմամբ, որը, որպես բավարար և ողջամիտ միջոց կարող է բացառել նրա կողմից վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու միջոցով վարույթն իրականացնող մարմնի աշխատանքները խոչընդոտելու հանգամանքը:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանի վերոգրյալ եզրահանգման համար էական նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ ՀՀ ԱՄԾ քննչական վարչության պետը 2017 թվականի մարտի 31-ի թիվ 8-1318 գրությամբ հայտնել է, որ նախաքննական մարմինը չի առարկում, որպեսզի Արման Գևորգյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը փոխարինվի գրավով՝ նկատի ունենալով, որ Արման Գևորգյանը մեղադրվում է ոչ մեծ ծանրության հանցագործություն կատարելու մեջ, քրեական

գործով արդեն իսկ լրիվ ծավալով իրականացվել են դեպքերի բացահայտմանն ուղղված անհրաժեշտ քննչական և օպերատիվ գործողությունները, նվազել է քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու, միևչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը: Ավելին՝ Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նկատել, որ Արման Գևորգյանն էլ իր հերթին դիմումով վարույթն իրականացնող մարմնին հայտնել է ՀՀ վերադառնալու հստակ երաշխիքներ (...)» (տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 32-38):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը</u>.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 11-ի որոշումն օրինական և հիմնավոր չէ, դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, որն ազդել է գործի ելքի վրա, որի պարագայում կայացված դատական ակտը ենթակա է բեկանման:

Մասնավորապես, բողոքի հեղինակը, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածը և Դ.Վարդանյանի գործով Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները, նշել է, որ քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելը և նրա հետագա ոչ պատշաճ վարքագիծը գրավի երաշխիքով զսպելու հավանականությունը հնարավոր է գնահատել միայն այն դեպքում, երբ մեղադրյալն արդեն իսկ գտնվում է վարույթն իրականացնող մարմնի տրամադրության ներքո: Իսկ վարույթն իրականացնող մարմնից նրա՝ փաստացի թաքնվելու պայմաններում, վերոնշյալի վերաբերյալ հիմնավոր ենթադրության հանգելն իրատեսական համարվել չի կարող: Հետևաբար, ըստ բողոքաբերի, վարույթն իրականացնող մարմնից մեղադրյալ Ա.Գևորգյանի թաքնվելու պայմաններում նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը, գրավով փոխարինելն իրավաչափ չէ:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի դատական ակտի պատճառաբանություններում օգտագործված նախաքննական մարմնի գրավոր դիրքորոշմանը՝ բողոք բերած անձը նշել է, որ այն կարող էր գնահատվել բացառապես մեղադրյալ Ա.Գևորգյանի՝ վարույթն իրականացնող մարմնի տրամադրության ներքո գտնվելու պայմաններում:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի դիրքորոշմանն այն մասին, որ մեղադրյալ Ա.Գևորգյանը դիմումով վարույթն իրականացնող մարմնին հայտնել է ՀՀ վերադառնալու հստակ երաշխիքներ, բողոքաբերը հայտնել է, որ Ա.Գևորգյանը ՀՀ վերադառնալու որևէ երաշխիք իր դիմումով չի հայտնել, այլ ՀՀ իրավապահ մարմինների և դատարանի առջև ընդամենը

պայման է դրել, որ իր նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը վերացնելուց կամ այն գրավով փոխարինելուց հետո կվերադառնա Հայաստան: Ընդ որում, բողոքաբերն ընդգծել է, որ ոչ իր կողմից նշված ժամկետին՝ 2017 թվականի մարտի 25-ին, ոչ էլ դրանից հետո Ա.Գևորգյանը Հայաստանի Հանրապետություն այդպես էլ չի վերադարձել:

10. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և մեղադրյալ Ա.Գևորգյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը գրավով փոխարինելը ճանաչել անթույլատրելի:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ գրավը որպես խափանման միջոց կիրառելու իրավաչափության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչա՞փ է արդյոք հետախուզման մեջ գտնվող մեղադրյալ Ա.Գևորգյանին կալանքից գրավով ազատելը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը:

13. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝*

(...)

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով.

(...)»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.*

(...)

գ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում

նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,

(...)

3. Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք (...) ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով»:

14. Վերոնշյալ իրավադրույթի կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) ձևավորած նախադեպային իրավունքի համաձայն՝ անձին կալանավորելու կամ ազատ արձակելու հարցը քննարկելիս իրավասու մարմինները պարտավորված են հաշվի առնել դատավարությանը նրա ներկայանալը երաշխավորող այլընտրանքային միջոցների առկայությունը *(տե՛ս Idalov v. Russia գործով Եվրոպական դատարանի՝ 2012 թվականի մայիսի 22-ի վճիռը, գանգատ թիվ 5826/03, կետ 140):*

ՀՀ ներպետական օրենսդրությամբ որպես այդպիսի այլընտրանքային միջոց է նախատեսված գրավը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մաս): Եվրոպական դատարանը նույնպես գրավը դիտարկում է որպես անձին մինչև դատաքննությունն ազատ արձակելու այլընտրանքային միջոց, որի կիրառման վերաբերյալ, ի թիվս այլոց, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- գրավը կարող է պահանջվել այնքան ժամանակ, որքան առկա կլինեն կալանքը հիմնավորող պատճառները *(տե՛ս Musuc v. Moldova գործով Եվրոպական դատարանի՝ 2007 թվականի նոյեմբերի 6-ի վճիռը, գանգատ թիվ 42440/06, կետ 42, Aleksandr Makarov v. Russia գործով Եվրոպական դատարանի՝ 2009 թվականի մարտի 14-ի վճիռը, գանգատ թիվ 15217/07, կետ 139)*:

- Եթե հնարավոր է խուսափել փախուստի վտանգից գրավի կամ այլ երաշխիքի միջոցով, մեղադրվող անձը պետք է ազատ արձակվի: Ընդ որում պետք է նկատի առնվի նաև այն, որ ավելի քեթև պատժի ակնկալիքը կարող է նվազեցնել անձի փախուստի վտանգը *(տե՛ս Vrencev v. Serbia գործով Եվրոպական դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 23-ի վճիռը, գանգատ թիվ 2361/05, կետ 76):*

- Գրավի չափը հիմնականում պետք է որոշվի՝ հաշվի առնելով կալանավորվածի անձը, նրա միջոցները, գրավը տրամադրող անձանց հետ կապը, այլ խոսքով՝ համոզվածության աստիճանն առ այն, որ գրավը կորցնելու վտանգը կամ դատաքննությանը չներկայանալու դեպքում վրա հասնող

հետևանքները բավարար չափով կզսպեն փախուստի ցանկացած փորձ *(տե՛ս Neumeister v. Austria* գործով *Եվրոպական դատարանի՝ 1968 թվականի հունիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 1936/63, կետ 14)*:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«(...) Գրավը համարվում է կալանավորման այլընտրանքային խափանման միջոց և կիրառվում է միայն այն դեպքում, երբ ստացվել է դատարանի որոշումը մեղադրյալին կալանավորելու մասին»*:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Դատարանը, դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը խափանման միջոց կարող են կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝*

1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2) խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4) խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց.

5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը:

2. Կալանավորումն և դրա այլընտրանքային խափանման միջոցը մեղադրյալի նկատմամբ կարող են կիրառվել միայն այնպիսի հանցագործության համար, որի համար նախատեսվող ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, կամ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ մեղադրյալը կարող է կատարել սույն հոդվածի առաջին մասով նախատեսված գործողությունները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«1. Գրավը ոչ մեծ և միջին ծանրության հանցագործության համար մեղադրվողին կալանքից ազատելու համար դրամի, արժեթղթերի, այլ արժեքների ձևով դատարանի դեպոզիտ մեկ կամ մի քանի անձանց կատարած ներդրումն է՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով: Դատարանի թույլտվությամբ որպես գրավ կարող է ընդունվել անշարժ գույքը:*

2. Դատարանը, համապատասխան շարժառիթները շարադրելով, իրավունք ունի մեղադրյալին կալանքից գրավով ազատելը ճանաչել անթույլատրելի առանձին դեպքերում, մասնավորապես, եթե հայտնի չէ մեղադրյա-

լի անձը, նա չունի մշտական բնակության վայր կամ փորձել է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից»:

16. Նախորդ կետում վկայակոչված իրավադրույթների վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել գրավը որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց կիրառելիս գնահատման ենթակա հանգամանքների վերաբերյալ, ի թիվս այլոց, արտահայտելով հետևյալ իրավական դիրքորոշումները.

- գրավը քրեական վարույթն իրականացնող մարմնից մեղադրյալի թաքնվելու վտանգը չեզոքացնելու երաշխիք է, և համապատասխան հիմքերի առկայության դեպքում իրավասու դատարանի կողմից կարող է կիրառվել վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով *(տե՛ս Դավիթ Վարդանյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԱՔԴ/0056/06/14 որոշման 16-րդ կետը),*

- գրավը՝ որպես խափանման միջոցի տեսակ, կարող է նշանակվել միայն այն դեպքում, երբ առկա է կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին դատարանի որոշում: Այլ կերպ՝ գրավը կալանավորման այլընտրանքային խափանման միջոց է և ենթակա է կիրառման բացառապես այն դեպքում, երբ դատարանը կայացրել է մեղադրյալին կալանավորելու մասին որոշում *(տե՛ս Արամ Հակոբյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0192/11/15 որոշման 14-րդ կետը),*

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրն օգտագործել է «մասնավորապես» բառը, որն արտահայտում է կալանքից գրավով ազատելու կոնկրետ դրսևորումների հատուկ ամրագրման և ոչ թե կալանքից գրավով ազատելու իրավական հիմքերի սպառիչ թվարկման նշանակություն, ուստի գրավի կիրառման անթույլատրելիության հարցը պետք է քննարկվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համատեքստում, որտեղ նշված են խափանման միջոց կիրառելու այլ հիմքեր *(տե՛ս Ասլան Ավետիսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԴ/0022/06/08 որոշման 34-րդ և 36-րդ կետերը),*

- կալանքից գրավով ազատելն անթույլատրելի ճանաչելիս դատարանը կարող է հաշվի առնել այնպիսի հանգամանքներ, որոնք ա) վերաբերում են քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելուն և բարձրացնում ոչ իրավաչափ վարքագծի հավանականությունը, բ) չեն հանգեցնում անձի այլ հիմնական իրավունքների խախտման *(տե՛ս Անդրիաս Ղուկասյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԵԱՔԴ/0533/06/16 որոշման 15-րդ կետը):*

17. Վերահաստատելով նախորդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ գրավը՝ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց, կոչված է հակակշռելու մեղադրյալի ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման ռիսկը՝ հնարավորություն տալով ապահովելու նրա ազատության իրավունքի և նրա մասնակցությամբ գործի պատշաճ քննության հանրային շահի միջև արդարացի հավասարակշռությունը: Այսինքն՝ այդ հավասարակշռության երաշխավորմամբ գրավը մի կողմից հնարավորություն է տալիս մեղադրյալին որոշակիորեն կենսագործելու իր ազատության իրավունքը, մյուս կողմից կաշկանդում է նրան գտնվել վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ և գրավի առարկան կորցնելու վտանգի սպառնալիքով չեզոքացնում նրա ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման ռիսկը:

Այսպիսով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավը կոչված է երաշխավորելու քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելը և ճնշելու նրա ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման հավանականությունը:

18. Բացահայտելով ազատության իրավունքի և այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառման սահմանադրաիրավական հարաբերակցությունը՝ ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«(...) Օրենսգիրքը նախատեսել է իրավականխիչ մի շարք միջոցներ, որոնք կոչված են անհրաժեշտ պայմաններ ապահովելու վարույթն իրականացնող մարմնի (պաշտոնատար անձի) գործունեության՝ օրենքով նախանշված նպատակների իրագործման համար: Նման իրավականխիչ միջոց է գրավի ինստիտուտը, որը, միաժամանակ, քրեադատավարական գործընթացներում անձնական ազատության իրավունքի՝ օրենքով նախատեսված հիմքով, զրկումը վերացնելու, կալանավորման (ազատությունից զրկելու) այլընտրանքային իրավական միջոց է, երբ առկա են այդպիսի «զրկումը» վերացնելու բարենպաստ իրավապայմաններ:*

Գրավը քրեական վարույթում, նախ և առաջ, խափանման (դատավարական հարկադրանքի) միջոց է, որի կիրառմամբ մեղադրյալին ազատության իրավունքից զրկումը փոխարինվում է այդ իրավունքի սահմանափակմամբ, որը (...) պայմանավորված է անձի կողմից օրենքով սահմանված որոշակի պարտականության կատարումն ապահովելու և քրեական վարույթն իրականացնող իրավասու մարմինների կողմից օրենսգրքի 2-րդ հոդվածում ամրագրված խնդիրների լուծման անհրաժեշտությամբ: Այսպիսով, «քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն» ինքնին ենթադրում է, որ քրեական վարույթի արդյունավետ իրականացման նպատակով անձը պարտավոր է գրավի, որպես խափանման միջոցի, կիրառման ողջ ժամանակահատվածում անվերապահ կատարել

վարույթն իրականացնող մարմնի օրինական պահանջները (չթաքնվել վարույթն իրականացնող մարմնից, առանց թույլտվության չմեկնել այլ տեղանք (օրենսգրքի 143-րդ հոդվածի 6-րդ մաս) և այլն): Եվ եթե մեղադրյալը խախտել է քրեական վարույթն իրականացնող մարմնի «տրամադրության տակ գտնվելու»՝ օրենքով նախատեսված իր պարտականությունը, ապա գրավի առարկա հանդիսացող գույքը կարող է օտարվել հօգուտ պետության (օրենսգրքի 143-րդ հոդվածի 6-րդ մաս), կամ՝ գրավը որպես խափանման միջոց կարող է փոխարինվել խափանման մեկ այլ միջոցով՝ կալանքով (օրենսգրքի 143-րդ հոդվածի 8-րդ մաս)» (տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 21-ի թիվ ՍԴՈ-1387 որոշման 7-րդ կետը):

19. Սահմանադրական դատարանի վերոնշյալ իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գրավը՝ որպես այլընտրանքային իրավականխիչ միջոց, կարող է կիրառվել այն դեպքում, երբ մեղադրյալը գտնվում է վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ՝ բարեխղճորեն կատարելով իր դատավարական պարտականությունները և ձեռնպահ մնալով քրեադատավարական խնդիրների լուծմանը խոչընդոտելուց: Այլ կերպ՝ մեղադրյալի՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ գտնվելու հանգամանքը գրավի կիրառման նախապայման է: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ գրավը՝ որպես պատշաճ վարքագծի ղրսևորման երաշխիք, կարող է կիրառվել այն դեպքում, երբ քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ գտնվելու պայմաններում մեղադրյալն առաջարկվող նյութական արժեքով երաշխավորում է քրեական վարույթն իրականացնող մարմնին իր մշտապես հասանելի լինելը՝ նվազեցնելով նաև քրեական վարույթն իրականացնող մարմնի գործունեության խոչընդոտելու վտանգը: Հակառակ պարագայում՝ վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի փաստացի չգտնվելու դեպքում, գրավի՝ որպես կալանքին այլընտրանքային խափանման միջոցի թույլատրելիության հարցի քննարկումն ինքնին առարկայազուրկ կդառնա:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ գրավը որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառելիս՝ մեղադրյալի՝ բացառապես քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ գտնվելու դեպքում է հնարավոր վերահսկել նրա վարքագծի պատշաճությունը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գրավը որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց կարող է կիրառվել մեղադրյալի նկատմամբ միայն այն դեպքում, երբ նա, գտնվելով քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ, առաջարկվող դրամական միջոցներով կամ անշարժ գույքով երաշ-

խավորում է ազատության մեջ գտնվելու պարագայում իր դատավարական պարտականությունների պատշաճ կատարումը:

20. Սույն գործի նյութերից երևում է, որ 2017 թվականի փետրվարի 20-ին պաշտպան Վ.Էլբակյանը միջնորդություն է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ հետախուզման մեջ գտնվող մեղադրյալ Ա.Գևորգյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումն այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու մասին: Միևնույն ժամանակ, պաշտպանը դատարան է ներկայացրել նաև Ա.Գևորգյանի դիմումն այն մասին, որ նա պատրաստ է վերադառնալ Հայաստան և իրեն առաջադրված մեղադրանքի մասին ցուցմունք տալ, եթե իր նկատմամբ կիրառված խափանման միջոցը փոփոխվի կամ վերացվի: Բացի այդ, մեղադրյալը հայտնել է, որ 2017 թվականի մարտի 25-ին Հայաստան է ժամանելու «Զվարթնոց» օդանավակայանով և անմիջապես ներկայանալու է վարույթն իրականացնող մարմնին (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը 2017 թվականի մարտի 14-ի որոշմամբ մերժել է պաշտպանի միջնորդությունը՝ հիմքում դնելով Ա.Գևորգյանին մեղսագրվող արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերի և պայմանների, այդ թվում՝ մեղսագրվող արարքին առնչվելու վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայությունը, մեղադրյալի անձը, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմնից Ա.Գևորգյանի թաքնվելը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Սինչդեռ Վերաքննիչ դատարանը 2017 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ բեկանել է Առաջին ատյանի դատարանի որոշումը և որպես խափանման միջոց կիրառել գրավը՝ 2.000.000 ՀՀ դրամի չափով՝ պատճառաբանելով, որ մեղադրյալ Ա.Գևորգյանին մեղսագրվող արարքը դասվում է ոչ մեծ ծանրության հանցագործությունների շարքին, մեղադրյալի անձը հայտնի է, որպիսի պայմաններում գրավի կիրառմամբ հնարավոր է ապահովել մեղադրյալի պատշաճ վարքագիծը և բացառել թաքնվելու միջոցով քրեական վարույթն իրականացնող մարմնի աշխատանքներին խոչընդոտելու վտանգը: Միևնույն ժամանակ Վերաքննիչ դատարանն իր պատճառաբանությունների հիմքում դրել է նախաքննական մարմնի՝ 2017 թվականի մարտի 31-ի գրությունն առ այն, որ նա չի առարկում գրավի կիրառմանը՝ հաշվի առնելով, որ Արման Գևորգյանը մեղադրվում է ոչ մեծ ծանրության հանցագործություն կատարելու մեջ, քրեական գործով արդեն իսկ լրիվ ծավալով իրականացվել են դեպքերի բացահայտմանն ուղղված անհրաժեշտ քննչական և օպերատիվ գործողությունները, նվազել է քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու, միևչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը, հղում կատարելով մեղադրյալի կողմից հասցեա-

գրված դիմումի բովանդակությանը, նշել է, որ մեղադրյալը հայտնել է ՀՀ վերադառնալու հստակ երաշխիքներ (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

21. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-19-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանը մեղադրյալ Ա.Գևորգյանի նկատմամբ կալանավորումն այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելիս պատշաճ իրավական գնահատականի չի արժանացրել մեղադրյալի՝ հետախուզման մեջ լինելով քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ չգտնվելու հանգամանքը:

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ նախաքննական մարմին ներկայանալու անհրաժեշտության մասին տեղեկացված մեղադրյալի հետախուզման մեջ գտնվելու պայմաններում հնարավոր չէ գրավի կիրառմամբ հակակշռել մեղադրյալի ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման իրական վտանգը, գրավը կիրառելուց հետո վերահսկել նրա պատշաճ վարքագիծը: Նման պայմաններում մեղսագրվող հանցագործության ոչ մեծ ծանրության և մեղադրյալի անձը հայտնի լինելու վերաբերյալ պատճառաբանությունները չեն կարող գնահատվել բավարար՝ վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ չգտնվող անձի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի համարելու տեսանկյունից:

Ինչ վերաբերում է նախաքննական մարմնի կողմից մեղադրյալ Ա.Գևորգյանի նկատմամբ գրավի կիրառմանը չառարկելու պատճառաբանությանը, ապա Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է հայտնում բողոքաբերի այն դիրքորոշման հետ, որ դրանք ենթակա էին գնահատման բացառապես մեղադրյալի՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ գտնվելու պայմաններում: Ընդ որում, թեև մեղադրյալն իր գրությամբ հայտնել էր, որ 2017 թվականի մարտի 25-ին ժամանելու է Հայաստանի Հանրապետություն և ներկայանալու քրեական վարույթն իրականացնող մարմնին, սակայն ոչ նշված օրը, ոչ էլ հետագայում այդպես էլ չի ներկայացել: Ուստի նման պայմաններում, 2017 թվականի ապրիլի 11-ի դրությամբ գրավը որպես խափանման միջոց կիրառելիս Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ մեղադրյալն իր դիմումով քրեական վարույթն իրականացնող մարմնին ՀՀ վերադառնալու մասին հստակ երաշխիքներ է հայտնել, անհիմն է:

22. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հետախուզման մեջ գտնվող մեղադրյալ Ա.Գևորգյանին կալանքից գրավով ազատելը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունն իրավաչափ չէ:

Միևչդեռ՝ Առաջին ատյանի դատարանը, պատշաճ իրավական գնահատականի ենթարկելով մեղադրյալ Ա.Գևորգյանի՝ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու հանգամանքը, իրավացիորեն մերժել է նրա նկատմամբ կալանավորումն այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու մասին պաշտպանի միջնորդությունը:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանի համար ընդունելի չէ այն հանգամանքը, որ Առաջին ատյանի դատարանը գրավի միջնորդության շրջանակներում քննարկման առարկա է դարձրել նաև կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերի և պայմանների, այդ թվում՝ հիմնավոր կասկածի, առկայության հարցը: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գրավը որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառելու միջնորդությունը (կալանքի միջնորդությունից առանձին) քննության առնելիս կալանավորման հիմքերի և պայմանների առկայության հարցը չի վիճարկվում ու դուրս է գտնվում այդ միջնորդության քննության սահմաններից, քանի որ գրավի միջնորդության շրջանակներում քննարկվում է բացառապես առաջարկվող դրամական միջոցներով կամ անշարժ գույքով (նախկինում կայացված որոշմամբ հաստատված) կալանավորման հիմքերի դրսևորումը զսպելու հավանականությունը: Այսինքն՝ Առաջին ատյանի դատարանի կողմից մեղադրյալ Ա.Գևորգյանի նկատմամբ կալանավորումն այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու մասին միջնորդությունը քննելիս թեև անդրադարձ է կատարվել նաև այդ միջնորդության շրջանակներից դուրս գտնվող այլ հանգամանքների, սակայն իրավաչափորեն մերժվել է այդ միջնորդությունը՝ հաշվի առնելով մեղադրյալ Ա.Գևորգյանի՝ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու հանգամանքը:

23. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ մեղադրյալ Ա.Գևորգյանի նկատմամբ կիրառված կալանավորումն այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու մասին միջնորդությունը մերժելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգման ընթացքում Վերաքննիչ դատարանի կողմից թույլ են տրվել քրեադատավարական օրենքի խախտումներ, որոնք էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա, Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք է:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով դատական ակտ կայացնելիս Առաջին ատյանի դատարանը քրեադատավարական օրենքի էական խախտում թույլ չի տվել, ուստի անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի որոշմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ

հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Մեղադրյալ Արման Վլադիմիրի Գևորգյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 11-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 14-ի որոշմանը՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

28.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԴ3/0012/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝
դատախազ Հ.ԵՆՈՔՅԱՆԻ
պաշտպան Ա.ՇԱՀԲԱԶՅԱՆԻ

2017 թվականի դեկտեմբերի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 14-ի որոշման դեմ ամբաստանյալ Հարություն Զոհրաբի Շահբազյանի պաշտպան Ա.Շահբազյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 58216314 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի սեպտեմբերի 11-ի որոշմամբ Հարություն Զոհրաբի Շահբազյանը ներգրավվել է որպես մեղադրյալ,

և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով: Նույն մարմնի՝ 2015 թվականի սեպտեմբերի 15-ի որոշմամբ Արամայիս Համիկի Գյադուկյանը նույնպես ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածով և 38-215-րդ հոդվածի 1-ին մասով:

2015 թվականի հոկտեմբերի 15-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 12-ի դատավճռով ճանաչվել և հռչակվել է Հ.Շահբազյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում, և նա արդարացվել է: Նույն դատավճռով ճանաչվել և հռչակվել է նաև Ա.Գյադուկյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 38-215-րդ հոդվածի 1-ին մասով և 314-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքներում:

3. Մեղադրող Հ.Հակոբյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի ապրիլի 14-ի որոշմամբ բողոքը բավարարել է մասնակիորեն, բեկանել է Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 12-ի դատավճիռը, և գործն ուղարկել է նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 14-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Հ.Շահբազյանի պաշտպան Ա.Շահբազյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 25-ի որոշմամբ ամբաստանյալ Հ.Շահբազյանի պաշտպանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Ամբաստանյալ Հ.Շահբազյանին ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. *«2012 թվականին նպատակ ունենալով իր կողմից ձեռք բերված խոշոր չափերով՝ 32.000.000 ՀՀ դրամ շուկայական արժեքով «Bentley Continental» մակնիշի, SCBCR63W55CO25846 նույնացման համարով ավտոմեքենան Վրաստանից մաքսանենգության եղանակով տեղափոխել Հայաստան, ՀՀ ֆինանսների նախարարության Շիրակի տարածաշրջանային մաքսատան «Բավրա» մաքսային կետի ՍՄՀԸ բաժանմունքի մաքսային տեսուչ Արամայիս Գյադուկյանի օժանդակությամբ, մաքսանենգությամբ՝ Հայաստանի*

Հանրապետության մաքսային սահմանով, մաքսային փաստաթղթերը խաբեությամբ օգտագործելով՝ 2012 թվականի նոյեմբերի 19-ին տեղափոխել է ՀՀ տարածք: Մասնավորապես, նախնական հանցավոր համաձայնության է եկել ՀՀ ՖՆ Շիրակի տարածաշրջանային մաքսատան «Քավրա» մաքսակետի տեսուչ Արամայիս Գյադուկյանի հետ՝ վերջինիս օժանդակությամբ՝ կեղծ փոխադրման ամփոփագիր կազմելու և իրեն տրամադրելու միջոցով, ավտոմեքենան ՀՀ տարածք տեղափոխելու վերաբերյալ: Այնուհետև, ի կատարման հանցավոր մտադրության, 2012 թվականի նոյեմբերի 19-ին նշված ավտոմեքենայով Վրաստանից մուտք է գործել «Քավրա» մաքսակետ, որտեղ մաքսատան տեսուչ Արամայիս Գյադուկյանը, դիտավորյալ խախտելով ավտոտրանսպորտային միջոցների փոխադրման ամփոփագրերի ձևակերպման կարգը, անձնական կամ այլ դրդումներով, ՀՀ ներմուծվող «Bentley Continental» մակնիշի, SCBCR63W55CO25846 նույնացման համարով ավտոմեքենայի վերաբերյալ կազմել է թիվ 2012/22/12918 կեղծ փոխադրման ամփոփագիրը՝ առանց հաշվառման բլանկի օգտագործման և նշված տրանսպորտային միջոցի տվյալների փոխարեն, ավտոտրանսպորտային միջոցի հիմքերի փաստաթղթերին է կցել «Toyota Seguoia» մակնիշի, 5TDBT48A22S078266 նույնացման համարով մեկ այլ ավտոմեքենայի տվյալներով փոխադրման ամփոփագիր՝ մաքսային էլեկտրոնային համակարգում փաստացի ներմուծվող ավտոմեքենան չարտացոլելու համար, դրանով իսկ պայմաններ է ստեղծել և օժանդակել է Հարություն Շահբազյանին վերը նշված «Bentley Continental» մակնիշի, SCBCR63W55CO25846 նույնացման համարով ավտոմեքենան Հայաստան տեղափոխելուն: Վերջինս էլ ստանալով կեղծ ամփոփագիրը, մուտք է գործել ՀՀ տարածք և մաքսանենգության եղանակով տեղափոխել ավտոմեքենան» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 286-287):

6. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում նշել է. *«(...) Հիմք ընդունելով [Առաջին ատյանի դատարանը] գտնում է, որ ամբաստանյալ Հարություն Զոհրաբի Շահբազյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով և ամբաստանյալ Արամայիս Համիկի Գյադուկյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-215-րդ հոդվածի 1-ին մասով և 314-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքներում պետք է արդարացնել՝ ճանաչելով և հռչակելով վերջիններիս անմեղությունը»* (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 212-213):

7. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է. *«(...) [Հ]արկ է նկատել, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 16.05.2016թ. ընդունված ,Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասինե ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն. օրենսգրքի 215-րդ հոդվածն ուժը կորցրած է ճանաչվել:*

Ընդ որում, սույն քրեական գործի շրջանակներում, (ամբաստանյալների նկատմամբ) այդ փոփոխության կիրառման և դրանից բխող հնարավոր իրավական հետևանքների առաջացման հնարավորության հարցին, (մեղադրողի կողմից վերջիններիս նկատմամբ կայացված արդարացման դատական ակտը (դատավճիռը) բողոքարկելու պայմաններում) հնարավոր է անդրադառնալ միայն հետագայում:

Մասնավորապես՝ ամբաստանյալ Հ.Շահբազյանին ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով (վերագրվող արարքի իմաստով՝ իրավահարաբերության ծագման ժամանակ գործող), իսկ ամբաստանյալ Ա.Գյադուկյանին 38-215-րդ հոդվածի 1-ին մասով (վերագրվող արարքի իմաստով՝ իրավահարաբերության ծագման ժամանակ գործող), այսինքն՝ վերագրվող արարքների կատարման ժամանակ գործող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածով նախատեսված, ինչպես նաև ամբաստանյալ Ա.Գյադուկյանի մասով ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածով նախատեսված հանցակազմերի հատկանիշների առկայության կամ բացակայության հարցում, վերջիններիս առնչությամբ հիմնավոր հետևությունների հանգելուց հետո նոր միայն:

Այլ կերպ ասած, մեղադրողի վերաքննիչ բողոքի հիման վրա ամբաստանյալ Հարությունյան Շահբազյանին ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով (վերագրվող արարքի իմաստով՝ իրավահարաբերության ծագման ժամանակ գործող) և ամբաստանյալ Արամայիս Գյադուկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-215-րդ հոդվածի 1-ին մասով (վերագրվող արարքի իմաստով՝ իրավահարաբերության ծագման ժամանակ գործող) և ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքներին և նշված մեղադրանքներով վերջիններիս նկատմամբ արդարացման դատական ակտ կայացնելու իրավաչափության հարցին անդրադառնալուց հետո նոր միայն:

(...)

Նոր դատաքննությամբ անհրաժեշտ է՝ պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, դատաքննությամբ վերստին քննարկման առարկա դարձնել (հետազոտել) դատաճեռագրաբանական, դատատեխնիկական և դատաքիմիական համալիր փորձաքննության եզրակացությունը, ինչպես նաև գործում առկա և մեղադրանքի հիմքում դրված մյուս փաստական տվյալներն իրենց համակցությամբ, որից հետո նոր միայն հնարավոր է հանգել հիմնավոր հետևության, սույն գործով ապացուցման առարկան կազմող այնպիսի հանգամանքի առնչությամբ, ինչպիսին է ամբաստանյալներ Հարությունյան Շահբազյանի և Արամայիս Գյադուկյանի մեղավորությունը քրեական օրենքով նախատեսված (այդ թվում նաև՝ վերագրվող արարքների իմաստով, իրավահարաբերության ծագման ժամանակ գործող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի

38-215-րդ հոդվածի 1-ին մասով) նրանց մեղսագրված արարքները կատարելու մեջ:

(...)

[Ք]րեական օրենքում նման փոփոխություն կատարելու փաստն ինքնին չի բացառում (մեղադրողի վերաքննիչ բողոքի առկայության պայմաններում) ամբաստանյալներին վերագրվող արարքների իմաստով, իրավահարաբերության ծագման ժամանակ գործող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշների առկայության կամ բացակայության հարցին անդրադառնալու իրավական հնարավորությունը:

Այսինքն, ամբաստանյալներին վերագրվող արարքների իմաստով, իրավահարաբերության ծագման ժամանակ գործող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածով նախատեսված ամբողջական հանցակազմի հատկանիշների առկայության կամ բացակայության հարցում հիմնավոր հետևության հանգելուց հետո նոր միայն հնարավոր է անդրադառնալ վերը նշված (քրեական օրենքում կատարված) փոփոխության ուժով հնարավոր իրավական հետևանքների առաջացման և վերջիններիս նկատմամբ դրանց կիրառման հնարավորության հարցին (...) (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 146-147, 170-173):

7.1. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 27-ի դատական նիստի ձայնային արձանագրության վերարտադրությունից երևում է, որ մեղադրողը, բողոքի հիմնավորումները ներկայացնելու ընթացքում պնդելով իր վերաքննիչ բողոքը, նշում է, որ *ապացույցները բավարար են Հ.Շահբազյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով և Ա.Գյադուկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-215-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրական դատավճիռ կայացնելու համար, սակայն հաշվի առնելով 16.05.2016 թվականի «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը և այն հանգամանքը, որ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածը տվյալ օրենքով ապաքրեականացվել է, ուստի դատարանին միջնորդում է բավարարել վերաքննիչ բողոքը և քրեական գործի վարույթը Հ.Շահբազյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով և Ա.Գյադուկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-215-րդ հոդվածի 1-ին մասով կարճել՝ հանցակազմի բացակայությամբ՝ արարքի ապաքրեականացման պատճառաբանությամբ, իսկ Ա.Գյադուկյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածով* (տե՛ս Վերաքննիչ դատարանի դատական նիստի ձայնային արձանագրության լազերային կրիչը, հատոր 3-րդ, թերթ 130):

7.2. Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 10-ի դատական նիստի ձայնային արձանագրության վերարտադրության համաձայն՝ *մեղադրողը վերաքննիչ բողոքը պնդում է ամբողջությամբ, սակայն*

օրենքի փոփոխության պարագայում նշում է, որ փոփոխել է վերաքննիչ բողոքի պահանջը: Մասնավորապես խնդրում է բավարարել վերաքննիչ բողոքը, բեկանել Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 12-ի դատավճիռը, 2016 թվականի մայիսի 16-ի «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչելու հիմքով, Հ.Շահբազյանի (ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով) և Ա.Գյադուկյանի (ՀՀ քրեական օրենսգրքի 38-215-րդ հոդվածի 1-ին մասով) նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել, իսկ Ա.Գյադուկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածով մեղավոր ճանաչել (տե՛ս Վերաքննիչ դատարանի դատական նիստի ձայնագրին արձանագրության լազերային կրիչը, հատոր 3-րդ, թերթ 130):

8. 2016 թվականի մայիսի 16-ին ընդունվել է «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-83-Ն ՀՀ օրենքը, որն ուժի մեջ է մտել 2016 թվականի հունիսի 25-ին: Տվյալ օրենքի 5-րդ հոդվածով ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածը:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով թույլ է տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

Ի հիմնավորում վերոհիշյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանը ճիշտ չի մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածը և օրենքի հետադարձ ուժը չի տարածել կատարված արարքի նկատմամբ: Մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչվելու հետևանքով ապրանքների մաքսանենգությունն ապաքրեականացվել է, ինչը ենթադրում է, որ Վերաքննիչ դատարանը, այդ փաստը հայտնաբերելով, պարտավոր էր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի հիման վրա ամբաստանյալ Հ.Շահբազյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել, սակայն, ի հակառակ վերոնշյալի, Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի արդարացման դատական ակտը բեկանել է և գործն ուղարկել է նոր քննության՝ կատարված արարքում ամբաստանյալների մեղավորության հարցը պարզելու նպատակով:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը քննության չի առել մեղադրողի կողմից քրեական հետապնդումը բացառող հանգամանք հայտնաբերելու հիմքով ներկայացված միջնորդությունը:

Միաժամանակ, բողոքաբերի համոզմամբ Վերաքննիչ դատարանի դատական ակտն առերևույթ հակասում է Ֆ.Գալստյանի, Ս.Սաքանյանի, Ա.Ավագյանի և Վ.Սահակյանի վերաբերյալ գործերով Վճռաբեկ դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 14-ի որոշումը և օրինական ուժի մեջ թողնել Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 12-ի դատավճիռը:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչա՞փ է արդյոք արարքի հանցավորությունը վերացնող օրենքի առկայության պայմաններում ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածով մեղսագրված արարքի կատարման մեջ ամբաստանյալ Հ.Շահբազյանի մեղավորության հարցը պարզելու համար գործը նոր քննության ուղարկելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը:

12. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Ոչ ոք չի կարող հանցագործության մեջ մեղադրվել որևէ արարք կատարելու կամ անգործության համար, որոնք կատարվելու պահին ազգային օրենքներով կամ միջազգային իրավունքով հանցագործություն չեն համարվել: Չի կարող նաև ավելի ծանր պատիժ տրվել, քան այն, որը կարող էր սահմանվել հանցանքը կատարելու ժամանակ»:*

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Ոչ ոք չի կարող մեղավոր ճանաչվել որևէ գործողության կամ քողտվության հետևանքով որևէ քրեական հանցագործություն կատարելու մեջ, որը, այն կատարվելու պահին գործող ներպետական օրենսդրության կամ միջազգային իրավունքի համաձայն, չի հանդիսացել քրեական հանցագործություն: Հավասարապես չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառման էր ենթակա քրեական հանցագործության կատարման պահին: Եթե հանցագործությունը կատարվելուց հետո օրենքով ավելի թեթև պատիժ է սահմանվում, այդ օրենքի գործողությունը տարածվում է տվյալ հանցագործի վրա»:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը, կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին»:*

ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի համաձայն՝ *«Ոչ ոք չի կարող դատապարտվել այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին հանցագործություն չի հանդիսացել: Չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը նենթակա էր կիրառման հանցանք կատարելու պահին: Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն»:*

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Իրավախախտման համար սահմանված պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող կամ իրավախախտում կատարած իրավաբանական և ֆիզիկական անձանց դրությունն այլ կերպ բարելավող իրավական ակտը տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա, այսինքն՝ ունի հետադարձ ուժ, եթե օրենքով կամ այդ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ»:*

Մեջբերված նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (nullum crimen, nulla poena sine lege) կանոնը համընդհանուր ճանաչում ստացած հիմնարար սկզբունք է և իրավունքի գերակայության կարևորագույն տարր: Այն բացառիկ նշանակություն ունի մարդու իրավունքների պաշտպանության համակարգում, հետևաբար նշված սկզբունքից շեղումը բացարձակապես անթույլատրելի է: Միևնույն ժամանակ ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության ընդհանուր կանոնն ունի նաև բացառություն: Մասնավորապես քրեական օրենքը հետադարձ ուժ է ստանում, այսինքն՝ դրա գործողությունը տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց վրա հետևյալ դեպքերում.

1. նոր օրենքը վերացնում է արարքի հանցավորությունը (ապաքրեականացում),

2. նոր օրենքը մեղմացնում է պատիժը,

3. նոր օրենքն այլ կերպ բարելավում է հանցանք կատարած անձի վիճակը:

Անդրադառնալով արարքի հանցավորությունը վերացնող օրենքին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նոր օրենքը դիտարկվում է որպես այդպիսին, եթե դրանով արարքը դադարում է հանցագործություն համարվել (լրիվ ապաքրեականացում), կամ հանցակազմն այնպիսի փոփոխություննե-

րի է ենթարկվում, որի արդյունքում հանցավոր համարվող արարքների շրջանակը նեղանում է (մասնակի ապաքրեականացում) *(տե՛ս Գասպար Արամի Պողոսյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ1/0013/01/11, Վաղարշակ Էդիկի Գալոյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԷԴ/0008/15/13 որոշումները)*:

13. Նախքան «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-83-Ն ՀՀ օրենքի ընդունումը գործող ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի համաձայն՝ *«Մաքսանենգությունը՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների, մշակութային կամ այլ արժեքների տեղափոխումն առանց մաքսային հսկողության կամ դրանից թաքցնելով կամ մաքսային և այլ փաստաթղթերը խաբեությամբ օգտագործելու կամ դրանց մասին ճշգրիտ տեղեկությունները սահմանված ձևով չհայտարարագրելու կամ ոչ իր անվամբ հայտարարագրելու միջոցով, եթե դրանք կատարվել են խոշոր չափերով, բացառությամբ սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված ապրանքների կամ արժեքների (…)»*:

2016 թվականի մայիսի 16-ին ընդունված «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-83-Ն ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ *«Օրենսգրքի 215-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել»*:

2016 թվականի մայիսի 16-ին ընդունված «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-83-Ն ՀՀ օրենքի 6-9-րդ հոդվածների համաձայն՝ քրեական օրենսգիրքը լրացվել է 215.1-րդ, 235.1-րդ և 267.1-րդ հոդվածներով, որոնք պատասխանատվություն են սահմանում համապատասխանաբար՝ *կանխիկ դրամական միջոցների և (կամ) վճարային գործիքների մաքսանենգության, խիստ ներգործող, թունավոր, պայթուցիկ, ռադիոակտիվ նյութերի, ճառագայթման աղբյուրների, միջուկային նյութերի, հրազենի կամ նրա բաղկացուցիչ մասերի, բացի ողորկափող որսորդական հրազենից և դրա փամփուշտներից, պայթուցիկ սարքերի, ռազմամթերքի, զանգվածային ոչնչացման զենքի, դրա տեղափոխման միջոցների, այլ զինամթերքի, ռազմական տեխնիկայի, զանգվածային ոչնչացման զենք կամ դրա փոխադրման հրթիռային համակարգեր ստեղծելու համար օգտագործվող այլ նյութերի կամ սարքավորումների, միջուկային, քիմիական, կենսաբանական կամ զանգվածային ոչնչացման այլ զենքի կամ երկակի նշանակության ապրանքների, ռազմավարական տեսակետից կարևոր հումքային ապրանքների կամ մշակութային արժեքների մաքսանենգության և թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և (կամ) դրանց պրեկուրսորների մաքսանենգության համար*:

Սեջբերված նորմերի վերլուծությունից երևում է, որ 2016 թվականի մայիսի 16-ին ընդունված *«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և*

լրացումներ կատարելու մասին» ՀՕ-83-Ն օրենքով տեղի է ունեցել մաքսանենգության հանցակազմի մասնակի ապաքրեականացում: Մասնավորապես՝ մաքսանենգության համար պատասխանատվություն նախատեսող ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածն ուժը կորցրած է ճանաչվել, փոխարենը՝ ՀՀ քրեական օրենսգիրքը լրացվել է 215.1-րդ, 235.1-րդ և 267.1-րդ հոդվածներով, որոնք պատասխանատվություն են նախատեսում միայն որոշակի տեսակի առարկաների մաքսանենգության համար: Հետևաբար վերոնշյալ օրենքը հանդիսանում է արարքի հանցավորությունը մասնակիորեն վերացնող, ուստի տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն (եթե, իհարկե, վերջիններիս արարքը չի համապատասխանում ՀՀ քրեական օրենսգրքի 215.1-րդ, 235.1-րդ և 267.1-րդ հոդվածների հատկանիշներին):

14. ՀՀ սահմանադրական դատարանը, անդրադառնալով մինչդատական և դատական վարույթների շրջանակներում անձի նկատմամբ արարքի հանցավորությունը վերացնող օրենքը հետադարձությամբ կիրառելու հարցին, արձանագրել է. *«(…) Արարքի պատժելիությունը վերացնող օրենքի հետադարձ ուժի կիրառումն ապահովելու վերաբերյալ իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ արարքի պատժելիության վերացումը ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից (տես՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 05.11.2010թ. ԼԴ/0286/01/09 որոշումը) գնահատվում է որպես արարքի մեջ հանցակազմի բացակայություն, ինչը ենթադրում է, որ ապաքրեականացված արարքի փաստով քրեական գործ չի կարող հարուցվել, և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման՝ հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի պահանջները:*

Հատկանշական է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի հիշյալ իրավական դիրքորոշումը վերաբերելի է միայն քրեական գործով մինչդատական և դատական վարույթների շրջանակներում անձի նկատմամբ արարքի պատժելիությունը վերացնող օրենքը հետադարձությամբ կիրառելու հարցին: Ընդ որում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համակարգային վերլուծությունը վկայում է այն մասին, որ քրեական գործով մինչդատական վարույթի շրջանակներում հիշյալ օրենքի կիրառումն իրականացվում է քրեական հետապնդման մարմնի՝ քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու, առաջադրված մեղադրանքը վերացնելու կամ մեղադրանքից հրաժարվելու մասին որոշումներով, իսկ դատական վարույթի շրջանակներում՝ դատարանի՝ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշմամբ (…)» (տե՛ս 2017 թվականի փետրվարի 14-ին կայացված թիվ ՍԴՈ-1348 որոշումը):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված հիմքերի կիրառմանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Արամ Սարգսյանի* վերաբերյալ գործով որոշմամբ՝ արձանագրելով հետևյալը. *«(…) [Թ]ևև (…) [ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված] հիմքերն իրենց բովանդակությամբ, կիրառման իրավական հետևանքներով տարբեր են, այնուամենայնիվ, բոլորն էլ կրում են իմպերատիվ բնույթ և դրանցից գեթ մեկի առկայությունն արդեն իսկ բացառում է քրեական գործի վարույթը քրեական դատավարության ցանկացած փուլում: Այլ կերպ, եթե վարույթ իրականացնող մարմինը հայտնաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված հանգամանքներից որևէ մեկը, ապա գործի վարույթը ենթակա է կարճման»* (տե՛ս Ա.Սարգսյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0503/06/10 որոշման 20-րդ կետը):

15. Սույն գործի փաստական տվյալների վերլուծությունից բխում է, որ Հ.Շահբազյանին մեղադրանք է առաջադրվել 2012 թվականի նոյեմբերի 19-ին խոշոր չափերով՝ 32.000.000 ՀՀ դրամ շուկայական արժեքով, «Bentley Continental» մակնիշի ավտոմեքենան Վրաստանից մաքսանենգության եղանակով ՀՀ տեղափոխելու համար (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը ճանաչել և հռչակել է Հ.Շահբազյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում և նրան արդարացրել է (տե՛ս սույն որոշման 2-րդ և 6-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով օրենսդրական փոփոխությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչելու հանգամանքին, գտել է, որ ամբաստանյալների նկատմամբ այդ փոփոխության կիրառման հնարավորությանը և դրանից բխող իրավական հետևանքների առաջացմանը հնարավոր է անդրադառնալ միայն հետագայում՝ դատարանի կողմից ամբաստանյալներին մեղսագրված արարքների կատարման մեջ վերջիններիս մեղավորության հարցը լուծելուց հետո: Վերաքննիչ դատարանը փաստել է նաև, որ քրեական օրենքում նման փոփոխություն կատարելու փաստն ինքնին չի բացառում ամբաստանյալներին վերագրվող արարքների՝ իրավահարաբերության ծագման ժամանակ գործող ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշների առկայության կամ բացակայության հարցին անդրադառնալու իրավական հնարավորությունը: Արդյունքում եզրահանգել է, որ դատական ակտն անհրաժեշտ է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-14-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ

դատարանը, 2016 թվականի մայիսի 16-ին ընդունված *«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-83-Ն* օրենքով ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչվելու պայմաններում Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելով և գործը նոր քննության ուղարկելով, պատշաճ իրավական գնահատականի չի արժանացրել ամբաստանյալ Հ.Շահբազյանի նկատմամբ քրեական հետապնդումը բացառող հանգամանքի առկայությունը և դրա կապակցությամբ Վճռաբեկ դատարանի՝ նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները:

Այսպես՝ քննարկվող օրենքի ընդունմամբ ամբաստանյալին մեղսագրվող արարքն ապաքրեականացվել է, ուստի Հ.Շահբազյանի արարքում հանցակազմը բացակայում է: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված հիմքերը կրում են իմպերատիվ բնույթ, և դրանցից մեկի առկայությունն արդեն իսկ բացառում է քրեական գործի վարույթը: Սինչդեռ, հակառակ առկա օրենսդրական կարգավորումների, Վերաքննիչ դատարանը գործի վարույթը բացառող հանգամանք հայտնաբերելու պայմաններում շարունակել է այն, արարքի հանցավորությունը վերացնող օրենքն անձի նկատմամբ հետադարձությամբ չի կիրառել՝ դրա կիրառումը պայմանավորելով որոշակի հանգամանքներով (արդարացման դատական ակտ կայացնելու իրավաչափության հարցին անդրադառնալուց հետո միայն) (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

17. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ արարքի հանցավորությունը վերացնող օրենքի առկայության պայմաններում ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածով մեղսագրված արարքի կատարման մեջ ամբաստանյալ Հ.Շահբազյանի մեղավորության հարցը պարզելու համար գործը նոր քննության ուղարկելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունն իրավաչափ չէ:

18. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, արարքի հանցավորությունը վերացնող օրենքին հետադարձ ուժ չտալով և քրեական հետապնդումը բացառող հանգամանքի առկայությամբ գործի քննությունը շարունակելով, կայացված դատական ակտը բեկանելով և այն նոր քննության ուղարկելով, խախտել է ՀՀ Սահմանադրության 72-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածների պահանջները, ինչպես նաև թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի ոչ ճիշտ կիրառում: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ և 398-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, ինչը Վճռաբեկ դատարանին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, հիմք է տալիս բեկանելու Վերաքննիչ դատարանի դատական ակտը և օրինական ուժի մեջ թողնելու Հ.Շահբազյանի մասով Առաջին ատյանի դա-

տարանի արդարացման դատավճիռը՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Հարություն Զոհրաբի Շահբազյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 14-ի որոշումը բեկանել և նրա մասով օրինական ուժ տալ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 12-ի արդարացման դատավճռին՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

29.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԴ/0017/13/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
	Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատապարտյալ	Գ.ՂԱԶԱՐՅԱՆԻ

2017 թվականի դեկտեմբերի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի մայիսի 29-ի որոշման դեմ դատապարտյալ Գարեգին Գագիկի Ղազարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի փետրվարի 10-ի դատավճռով Գարեգին Գագիկի Ղազարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և դատապարտվել ազատազրկման՝ 2 (երկու) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատժի ժամկետին մասնակիորեն գումարվել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն հա-

մայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2009 թվականի մայիսի 19-ի թիվ ԵՔՐԴ/0585/01/08 դատավճռով նշանակված պատժի չկրած մասից՝ 3 (երեք) տարի ժամկետով ազատազրկումը և 150.000 (հարյուր հիսուն հազար) դրամ տուգանքը, ու վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկում՝ 5 (հինգ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման և տուգանք՝ 150.000 (հարյուր հիսուն հազար) դրամի չափով:

Հիշյալ դատավճիռը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:

2. ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի Արագածոտնի բաժանմունքի պետ Լ.Ասատրյանը 2012 թվականի հունիսի 12-ին միջնորդություն է ներկայացրել Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ դատապարտյալ Գ.Ղազարյանի նկատմամբ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի փետրվարի 10-ի դատավճռով նշանակված 150.000 դրամի չափով տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու և մինչև ազատազրկման ձևով պատժի կրման ավարտը կասեցնելու մասին:

Առաջին ատյանի դատարանը 2012 թվականի հունիսի 29-ի որոշմամբ նշված միջնորդությունը բավարարել է և Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի փետրվարի 10-ի դատավճռով Գ.Ղազարյանի նկատմամբ նշանակված 150.000 ՀՀ դրամի չափով տուգանքը փոխարինել հանրային աշխատանքներով՝ հանրային աշխատանքների հինգ ժամը նվազագույն աշխատավարձի դիմաց հարաբերակցությամբ:

Նույն դատավճռով դատապարտյալ Գ.Ղազարյանի նկատմամբ նշանակված հանրային աշխատանքներ պատժի կատարումը կասեցվել է մինչև Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի փետրվարի 10-ի դատավճռով նշանակված ազատազրկման ձևով պատժի կրման ավարտը:

3. Վերոհիշյալ դատական ակտի դեմ դատապարտյալ Գ.Ղազարյանը բերել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի մարտի 20-ի որոշմամբ թողել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

2017 թվականի ապրիլի 21-ին դատապարտյալ Գ.Ղազարյանը կրկին վերաքննիչ բողոք է ներկայացրել, որը Վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2017 թվականի մայիսի 29-ի որոշմամբ թողնվել է առանց քննության:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի մայիսի 29-ի որոշման դեմ դատապարտյալ Գ.Ղազարյանը վճռաբեկ բողոք է բերել, որը Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 14-ի որոշմամբ վերադարձվել է՝ տրամա-

դրելով 5-օրյա ժամկետ՝ բողոքի ձևական սխալը շտկելու և այն կրկին ներկայացնելու համար:

Վճռաբեկ դատարանի որոշմամբ տրամադրված ժամկետում բողոքի ձևական սխալը շտկելով՝ դատապարտյալ Գ.Ղազարյանը կրկին վճռաբեկ բողոք է բերել, որը Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 20-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. 2012 թվականի հունիսի 12-ին ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի Արագածոտնի բաժանմունքի պետ Լ.Ասատրյանը միջնորդություն է ներկայացրել Առաջին ատյանի դատարան, որով փաստել է. *«(…) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 10.02.2012թ. Գարեգին Գագիկի Ղազարյանը դատապարտվել է ՀՀ քր. օր-ի 34-268 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով 5 տարի ժամկետով ազատազրկման և 150.000 (հարյուր հիսուն հազար) դրամ տուգանքի: (…) Գ.Ղազարյանը հայտարարել է, որ ներկայումս ի վիճակի չի մուծելու դատավճռով նշանակված տուգանքը: Վերոգրյալի հիման վրա (…) միջնորդում եմ Գարեգին Գագիկի Ղազարյանի նկատմամբ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից նշանակված 150.000 (հարյուր հիսուն հազար) դրամ տուգանքը փոխարինել հանրային աշխատանքներով և կասեցնել մինչև ազատազրկման ձևով պատժի կրման ավարտը (…)»* (տե՛ս նյութեր, թերթ 2):

6. Առաջին ատյանի դատարանը, բավարարելով նշված միջնորդությունը, իր դատական ակտում արձանագրել է. *«(…) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 10.02.2012թ. ԵԷԴ/0009/01/12 դատավճռով Գարեգին Գագիկի Ղազարյանի նկատմամբ նշանակված 150.000 (հարյուր հիսուն հազար) դրամի չափով տուգանքը փոխարինել հանրային աշխատանքներով՝ հանրային աշխատանքների հինգ ժամը նվազագույն աշխատավարձի դիմաց հարաբերակցությամբ:*

Գարեգին Գագիկի Ղազարյանի նկատմամբ նշանակված հանրային աշխատանքներ պատժի կատարումը կասեցնել՝ մինչև Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 10.02.2012թ. ԵԷԴ/0009/01/12 դատավճռով նշանակված ազատազրկում պատժի կրման ավարտը (…)» (տե՛ս նյութեր, թերթ 15):

7. Վերաքննիչ դատարանը 2017 թվականի մայիսի 29-ին որոշում է կայացրել դատապարտյալ Գ.Ղազարյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին՝ նշելով հետևյալը. *«(…) [Դատապարտյալ Գ.Ղազարյանի] կողմից վիճարկվող՝ (…) [Ա]ռաջին ատյանի դատարանի 2012թ. հունիսի 29-ի որոշումը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6 հոդվածի 10.1 կետում թվարկված՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի շարքում ներառված չէ, հետևաբար այն հանդիսանում է գործն ըստ էության չլուծող դատական ակտ, ուստի նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չէ (…)»* (տե՛ս նյութեր, թերթ 60):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոք բերած անձը նշել է, որ 2017 թվականի մարտի 30-ին փաստաբանական հարցում է կատարվել իր հաշվառման վայրի «Թիվ 8 պոլիկլինիկա» ՓԲԸ, որին ի պատասխան՝ 2017 թվականի ապրիլի 13-ին ներկայացվել է ամբուլատոր քարտի պատճենը, համաձայն որի՝ առաջին անգամ ինքը սրտաբանին դիմել է 2017 թվականի մարտի 14-ին, որից հետո էլ իր մոտ հայտնաբերվել է 2-րդ աստիճանի հիպերտոնիա հիվանդություն, ֆիզիկական ծանրաբեռնվածությունը պետք է լինի չափավոր, ուստի իր տարիքի և առողջական վիճակի պատճառով ներկայումս չի կարող կատարել հանրային աշխատանքներ: Առաջացած հիվանդությունների պատճառով այսօր գտնվում է գրեթե անաշխատունակ վիճակում և պարզապես ի վիճակի չէ կատարելու որևէ ֆիզիկական աշխատանք:

Բողոքաբերը նշել է նաև, որ դատավճռով նախատեսված տուգանքը վճարելուց չարամտորեն խուսափելու որևէ դիտավորություն չի ունեցել: Տուգանքը չվճարելու միակ պատճառը եղել է կալանավայրում գտնվելու հետևանքով ֆինանսական միջոցների չտիրապետելը: Առաջին ատյանի դատարանում միջնորդության դեմ ինքը չի առարկել՝ առանց ամբողջությամբ հարցի էությունը հասկանալու, իր մոտ տպավորություն է եղել, որ հանրային աշխատանքները պետք է կատարի քրեակատարողական հիմնարկում: Առաջին ատյանի դատարանն էլ իր հերթին, չպարզաբանելով ներկայացված միջնորդության էությունը, չի պարզել, թե արդյոք տարիներ հետո դուրս գալով ազատազրկման վայրից՝ կարո՞ղ է և պիտանի կլինի՞ հանրային աշխատանքներ կատարելու:

8.1. Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ բողոքարկվող որոշումը գործն ըստ էության լուծող դատական ակտ չէ, ուստի նոր երևան եկած կամ նոր հանգամանքով վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չէ, բողոքի հեղինակը, վկայակոչելով ՀՀ վե-

րաքննիչ քրեական դատարանի մեկ այլ՝ 2017 թվականի փետրվարի 6-ի թիվ ԱՐԴ/0010/13/11 գործով որոշումը, փաստել է, որ նշված որոշմամբ Վերաքննիչ դատարանը բավարարել է բողոքաբերի պահանջը և դատապարտյալին ազատել հանրային աշխատանքներ կատարելուց:

Ըստ բողոքաբերի՝ ստացվում է, որ մի դեպքում տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու մասին որոշումը բողոքարկվող ակտ է և ենթակա է նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերաքննության կարգով վերանայման, իսկ մյուս դեպքում՝ ոչ: Բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է օրենքի միատեսակ կիրառության սկզբունքը:

9. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի մայիսի 29-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով քննության նոր ծավալ:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. իրավա՞չափ է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումը գործն ըստ էության չլուծող դատական ակտ է:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10.1-րդ կետը սահմանում է, որ գործն ըստ էության լուծող դատական ակտեր են համարվում *առաջին ատյանի դատարանի դատավճիռը, քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին որոշումը, այդ ակտերի վերաքննիչ բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտերը, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում վճռաբեկ դատարանի դատական ակտերը:*

Մեջբերված իրավանորմի առնչությամբ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ դատարանի այն որոշումը, որտեղ իրենց լուծումն են ստանում դատավճռին վերաբերող հարցեր (օրինակ՝ պատժատեսակի և պատժաչափի որոշում), ևս հանդիսանում է գործն ըստ էության լուծող դատական ակտ և ենթակա է բողոքարկման նույն ընթացակարգով, ինչպիսին կիրառվում է դատավճիռները բողոքարկելիս (տե՛ս *Արսեն Արծրունու* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ՎԲ-16/11 որոշման 11-րդ կետը):

11.1. Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու միջնորդությունը լուծելիս դատարանն անդրադառնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածում նախատեսված այնպիսի իրավական հարցի (ի՞նչ պատիժ պետք է նշանակվի հանցավորի նկատմամբ), որն

օրենքի ուժով (ex lege) վերապահված է գործն ըստ էության լուծող դատական ակտի՝ դատավճռի լուծմանը: Այլ կերպ՝ այդպիսի միջնորդությունը քննության առնելով՝ դատարանը կայացնում է որոշում, որտեղ իրենց լուծումն են ստանում դատավճռին վերաբերող՝ մասնավորապես պատժատեսակին և պատժաչափին առնչվող հարցեր: Հետևաբար տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու միջնորդության քննարկման արդյունքում կայացված դատական ակտը նույնպես համարվում է գործն ըստ էության լուծող դատական ակտ:

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Առաջին ատյանի դատարանը, 2012 թվականի հունիսի 29-ի որոշմամբ բավարարելով ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի Արագածոտնի բաժանմունքի պետ Լ.Ասատրյանի միջնորդությունը, Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի փետրվարի 10-ի դատավճռով Գ.Ղազարյանի նկատմամբ նշանակված 150.000 ՀՀ դրամի չափով տուգանքը փոխարինել է հանրային աշխատանքներով՝ հանրային աշխատանքների հինգ ժամը նվազագույն աշխատավարձի դիմաց հարաբերակցությամբ (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, առանց քննության թողնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը, 2017 թվականի մայիսի 29-ի որոշմամբ արձանագրել է, որ դատապարտյալ Գ.Ղազարյանի կողմից վիճարկվող Առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի հունիսի 29-ի որոշումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10.1-րդ կետում թվարկված՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի շարքում ներառված չէ, հետևաբար այն հանդիսանում է գործն ըստ էության չլուծող դատական ակտ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

13. Նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով սույն որոշման 11-11.1-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավաչափ չէ Վերաքննիչ դատարանի այն հետևությունը, որ տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումը գործն ըստ էության չլուծող դատական ակտ է:

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. իրավաչա՞փ է արդյոք դատապարտյալ Գ.Ղազարյանի նկատմամբ որպես պատիժ նշանակված տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու մասին Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ բերված բողոքը վարույթ ընդունելու հարցը Վերաքննիչ դատարանի կողմից միանձնյա կազմով քննության առնելը:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 4. Վերաքննիչ դատարանում գործն ըստ էության լուծող դատա-*

կան ակտերի դեմ բողոքները քննվում են կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 387-րդ հոդվածի համաձայն՝ «*Գործն ըստ էության լուծող դատական ակտերը վերաքննիչ դատարանում վերանայվում են կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով, որոնցից մեկը նախագահողն է (...)»:*

15.1. Ելնելով սույն որոշման 11-11.1-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումներից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու միջնորդությունը քննության առնելու մասին կայացվող դատական ակտի բողոքարկումը և բողոքի քննությունը ենթակա են իրականացման նույն դատավարական ընթացակարգով, ինչը նախատեսված է գործն ըստ էության լուծող դատական ակտի համար: Այլ կերպ՝ քննարկման առարկա դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելիս և վերաքննիչ բողոքը քննելիս կիրառման են ենթակա, ի թիվս այլոց, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի 4-րդ մասով, 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 387-րդ հոդվածով սահմանված՝ գործն ըստ էության լուծող դատական ակտին ներկայացվող պահանջները:

16. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, Գ.Ղազարյանի կողմից վիճարկվող Առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի հունիսի 29-ի որոշումը դիտարկելով որպես գործն ըստ էության չլուծող դատական ակտ, դրա դեմ բերված վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հարցը քննարկել և որոշում է կայացրել այն առանց քննության թողնելու մասին՝ միանձնյա կազմով (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

17. Նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով սույն որոշման 15-15.1-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի որոշման՝ որպես գործն ըստ էության լուծող դատական ակտի նկատմամբ պետք է կիրառվեին, ի թիվս այլոց, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի 4-րդ մասով և 387-րդ հոդվածով սահմանված՝ գործն ըստ էության լուծող դատական ակտին ներկայացվող պահանջները: Այլ կերպ՝ Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ ներկայացված բողոքը վարույթ ընդունելու հարցը սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից պետք է քննության առնվեր կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով, մինչդեռ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծվել և որոշում է կայացվել այն առանց քննության թողնելու մասին դատավորի կողմից միանձնյա՝ այդ կերպ չապահովելով արդար դատաքննության իրավունքի բաղադրիչը կազմող՝ «օրենքի հիման վրա ստեղծված» դատարանի առկայությունը (այդ առումով

մանրամասն տե՛ս *Է.Ծոնվերանցի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԾԴ/0049/01/12 որոշման 12-րդ կետը):

18. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատապարտյալ Գ.Ղազարյանի նկատմամբ որպես պատիժ նշանակված տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու մասին Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ բերված բողոքը վարույթ ընդունելու հարցը Վերաքննիչ դատարանի կողմից միանձնյա կազմով քննության առնելն իրավաչափ չէ:

19. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի 4-րդ մասի և 387-րդ հոդվածների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են և, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, դատական ակտը բեկանելու հիմք են: Այլ կերպ՝ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների՝ հիշյալ խախտումները հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն որոշմամբ արձանագրված դատավարական իրավունքի խախտումների պայմաններում հնարավոր չէ անդրադառնալ բողոքաբերի բարձրացրած մյուս փաստարկներին (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի (2007 թվականի խմբագրությամբ) 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դատապարտյալ Գարեգին Գագիկի Ղազարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի մայիսի 29-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

30.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0115/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
	Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝	
ամբաստանյալ	Դ.ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
դատախազ	Տ.ՊՈՂՈՍՅԱՆԻ

2017 թվականի դեկտեմբերի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Դավիթ Գագիկի Վարդանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 14-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում 2015 թվականի մայիսի 18-ի որոշմամբ հարուցվել է թիվ 15103615 քրեական գործը:

2016 թվականի ապրիլի 13-ին Դավիթ Գագիկի Վարդանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ

մասի 6-րդ կետով, և նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2016 թվականի մայիսի 6-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 23-ի դատավճռով Դ.Վարդանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 տարի ժամկետով: Դ.Վարդանյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, թողնվել է անփոփոխ մինչև դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը:

Վերոհիշյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել ամբաստանյալ Դ.Վարդանյանը:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի ապրիլի 14-ին որոշել է Դ.Վարդանյանի վերաքննիչ բողոքը բավարարել մասնակիորեն, Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 23-ի դատավճիռը պատժի մասով փոփոխել, Դ.Վարդանյանի նկատմամբ դատավճռով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան՝ 1 տարի ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 14-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 1-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխաններ են ներկայացրել ամբաստանյալ Դ.Վարդանյանը և տուժող Խ.Հովհաննիսյանը՝ խնդրելով Վերաքննիչ դատարանի որոշումը թողնել անփոփոխ:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննության մարմինը Դավիթ Վարդանյանին մեղադրանք է առաջադրել այն բանի համար, որ նա *«(...) 2015 թվականի մայիսի 03-ին, ժամը 22:00-ի սահմաններում, իրեն պատկանող «Նիվա» մակնիշի 90 VV 550 պ/հ-ի ավտոմեքենայով Երևան քաղաքի Տերյան և Պուշկին փողոցների խաչմերուկի մոտ ընկել է խցանման մեջ: Հաշվի չառնելով խցանման հանգամանքը՝ խուլիգանական մղումներով, այն է՝ ինքնահաստատման, անպարկեշտ վարքագծով իր անձը հասարակությանը հակադրելու, իր գերակայությունն ի ցույց դնելու մղումով՝ ճանապարհը զիջելու նպատակով ձայնային տևական ազդանշան է տվել առջևում խցանման մեջ գտնվող «Օպել» մակնիշի 35 UU 005 պ/հ ավտոմեքենայի վարորդ Խաչատուր Հրաչի Հով-*

հանձինսյանին և տեսնելով, որ վերջինս ճանապարհը չի զիջում, բացի այդ, զրկված է ճանապարհը զիջելու հնարավորությունից՝ ճանապարհի այդ հատվածով մի պահ հավասարվել է վերջինիս ավտոմեքենային և չնչին առիթով սկսել է սպառնալ ու սեռական բնույթի հայհոյանքներ տալ Խ.Հովհաննիսյանի հասցեին: Ապա, շուրջ 5 րոպե տևողությամբ, հիշյալ վայրում, քաղաքացիների ներկայությամբ շարունակել է հայհոյել և վիճաբանել Խաչատուր Հովհաննիսյանի հետ, որի ընթացքում խուլիգանական դրդումներով, մարմնական վնասվածքներ հասցնելու դիտավորությամբ ձեռքերով հարվածներ է հասցրել Խ.Հովհաննիսյանի գլխի տարբեր մասերին՝ վերջինիս առողջությանը դիտավորությամբ պատճառելով միջին ծանրության վնաս՝ ձախ ակնակապճային շրջանի հյուսվածքների արյունազեղման, արյունահավաքի, նույն շրջանի սալջարդ վերքի, ձախ ակնագնդի 1-ին աստիճանի սալջարդի, N 24 ատամի հողախախտի և ձախ այտոսկրի բեկորային կոտրվածքի ձևերով, որն ուղեկցվել է ձախ հայմորյան խոռոչի հեմոսինուսիտով» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 195-196):

6. Առաջին ատյանի դատարանը դատավճռում արձանագրել է. *«(...) Դ.Վարդանյանը կատարել է հանցավոր արարք՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, ուստի վերջինս կատարած հանցավոր արարքի համար ենթակա է պատժի:*

Պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում ինչպես ամբաստանյալի կողմից կատարած հանցագործության բնույթն ու դրա հասարակական վտանգավորության աստիճանը, այնպես էլ նրա անձը բնութագրող, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Որպես ամբաստանյալ Դավիթ Գագիկի Վարդանյանի անձը դրականորեն բնութագրող հանգամանքներ դատարանը հաշվի է առնում այն, որ նա ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի հաշվառումներով չի անցնում, նախկինում դատված կամ որևէ այլ կերպ արատավորված չի եղել:

(...)

Դատարանը, ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ որպես ամբաստանյալ Դավիթ Գագիկի Վարդանյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է դիտում՝ պատիժ նշանակելու պահին հանցավորի խնամքի տակ մանկահասակ երեխայի՝ 30.03.2016թ. ծնված Գագիկ Դավիթի Վարդանյանի առկայությունը:

Դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Դավիթ Գագիկի Վարդանյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ գործում առկա չեն:

(...) [Դ]ատարանը գտնում է, որ ամբաստանյալ Դավիթ Գագիկի Վարդանյանի կողմից կատարված հանցավոր արարքի համար նրա նկատմամբ պետք է պատիժ նշանակվի ազատազրկման ձևով՝ որպիսի պատիժը նա պետք է կրի» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 1-25):

7. Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ արձանագրել է հետևյալը՝ *«(...) Առաջին ատյանի դատարանը եկել է ճիշտ եզրահանգման, որ ամբաստանյալ Դավիթ Վարդանյանի կատարած արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետին:*

(...)

(...) Առաջին ատյանի դատարանը Դավիթ Վարդանյանի նկատմամբ նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս պատշաճ գնահատականի չի արժանացրել կատարված հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը, մասնավորապես՝

ա) վերլուծության չի ենթարկել այն հանգամանքը, որ Դավիթ Վարդանյանը Խաչատուր Հովհաննիսյանին հարվածել է ձեռքերով,

բ) չի գնահատել հանցավորի հոգեբանական վերաբերմունքն իր արարքի և դրա հետևանքների նկատմամբ, մասնավորապես՝ այն, որ ամբաստանյալը գիտակցել է, որ իր գործողություններով տուժողի առողջությանը պատճառում է միջին ծանրության վնաս, չի նախատեսել իր արարքի և հետևանքների միջև առկա անմիջական պատճառական կապը,

գ) հաշվի չի առել խախտված հասարակական հարաբերության բնույթն ու կարևորությունը՝ այն, որ չնայած ամբաստանյալը ոտնձգել է այնպիսի հասարակական հարաբերության դեմ, որի խախտումը բացասաբար է անդրադարձել տուժողի առողջական վիճակի վրա, սակայն այն չէր կարող առաջ բերել ավելի ծանր հետևանքներ:

Վերաքննիչ դատարանի գնահատմամբ, վերոհիշյալ հանգամանքներն օբյեկտիվորեն նվազեցնում են ամբաստանյալի կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանը:

Հաշվի առնելով կատարված հանցագործության բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը, հանցագործության հանգամանքները, եղանակը, Դավիթ Վարդանյանի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ուստի նրա նկատմամբ նշանակված պատիժը պետք է պայմանականորեն չկիրառել:

(...)

Այսպիսով, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը չի համապատասխանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածով սահմանված՝ դատական ակտին ներկայացվող օրինականության, հիմնավորվածության և պատճառաբանվածության պահանջներին: Առաջին ատյանի դատարանի դատական ակտում Դավիթ Վարդանյանի նկատմամբ նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության վերաբերյալ արված հետևությունը

հիմնված չէ դատական քննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթեր 60-71):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական և հիմնավորված չէ, կայացվել է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ, 70-րդ հոդվածների խախտումներով:

Մասնավորապես Վերաքննիչ դատարանն անտեսել է Դ.Վարդանյանի կատարած արարքի բնույթը, դրա վտանգավորության աստիճանն ու կատարման հանգամանքները, անձի առողջության պահպանությանն ուղղված հասարակական հարաբերությունների կարևորությունը, Դ.Վարդանյանի կողմից հասցված հարվածների հետևանքով տուժողի ստացած վնասվածքների բնույթը և առավել վտանգավոր հետևանքների առաջացման իրական հնարավորությունը, ամբաստանյալի վարքագծի խուլիգանական շարժառիթը, ակնհայտ արհամարհանքը համակեցության կանոնների նկատմամբ:

8.1. Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ տուժողի գլխին հարվածներ հասցնելիս ամբաստանյալը գիտակցել է նրան միջին ծանրության վնաս պատճառելու հանգամանքը, բողոքաբերը նշել է, որ Դ.Վարդանյանը գործել է չկոնկրետացված դիտավորությամբ, որն ընդգրկել է նրա գործողությունների հետևանքով առաջացող բոլոր հնարավոր հետևանքները, հետևաբար այդ փաստարկը ողջամիտ չէ: Բողոք բերած անձն անընդունելի է համարել նաև ստորադաս դատարանի այն հետևությունը, որ Դ.Վարդանյանի գործողությունների արդյունքում առավել վտանգավոր հետևանքներ չէին կարող առաջանալ՝ ընդգծելով, որ այդ հանգամանքի վերաբերյալ կանխատեսական դատողություններ չեն արվում նաև դատական բժշկության բնագավառում:

Բողոքաբերի կարծիքով՝ ամբաստանյալ Դ.Վարդանյանի արարքին կամ նրա անձին դրական բնութագիր չի տալիս նաև տուժողի կարծիքն առ այն, որ նա երիտասարդ է, դրսևորել է «տաքարյուն» վարքագիծ և նրա նկատմամբ գույքային պահանջ չունի:

9. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 14-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 23-ի դատավճռին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր են արդյոք ամբաստանյալ Դ.Վարդան-

յանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Եթե դատարանը, կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:*

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները (...)»:

Սույն քրեահրավական նորմերը Վճռաբեկ դատարանի կողմից բազմիցս վերլուծության են ենթարկվել մի շարք գործերով կայացված նախադեպային որոշումներում, և մշտապես վերահաստատվել է դիրքորոշումն առ այն, որ դատարանի համոզվածությունը, վստահությունն այն մասին, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց իրական պատիժ կրելու, պետք է հիմնվի օբյեկտիվ գոյություն ունեցող այնպիսի տվյալների համակողմանի վերլուծության վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը բազմիցս փաստել է, որ թեև պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգիրքը ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսում, սակայն դատարանի հետևությունները պետք է, ի թիվս այլոց, հիմնված լինեն նաև հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի ամբողջական գնահատման վրա (հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ, ի թիվս այլ որոշումների, մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գարուշ Մադաթյանի* գործով 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԴ/0029/01/08, *Արմեն Շահբազյանի* գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԴ/0143/01/13, *Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի* գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշումները)՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթը, մեղքի ձևը և տեսակը, պատճառված վնասի չափը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, հանցագործության հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, նպատակներն ու շարժառիթները և այլն (տե՛ս թիվ ԵԿԴ/0039/01/15, ԱՐԴ/0031/01/15, ԵԱԴԴ/0038/01/15, ԵԿԴ/0130/01/15, ՍԴ/0094/01/15, ՍԴ3/0201/01/15 գործերով որոշումները):

11.1. Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ հանցագործության կատարման հանգամանքները յուրաքանչյուր քրեական գործով պետք է գնահատման ենթարկվեն հանցագործության հանրության համար վտանգավո-

րության աստիճանի ու բնույթի համատեքստում: Մասնավորապես գնահատման արդյունքում դատարանը պետք է պարզի հանցավոր վարքագծի դրսևորմանը նախորդող և ուղեկցող հանգամանքները, հանցավոր վարքագծի դրսևորման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը և այլն *(տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Հրանտ Պարանյանի գործով 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԷԴ/0132/01/13 որոշման 13-րդ կետը):*

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Դ.Վարդանյանը, անտեսելով խցանման հանգամանքը, սկսել է տնական ազդանշան արձակել առջևում խցանման մեջ գտնվող «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդ Խ.Հովհաննիսյանին: Տեսնելով, որ վերջինս ճանապարհը չի զիջում (զրկված է ճանապարհը զիջելու հնարավորությունից), աջ հատվածով հավասարվել է Խ.Հովհաննիսյանի ավտոմեքենային և սկսել սպառնալ ու սեռական բնույթի հայհոյանքներ տալ նրա հասցեին: Քաղաքացիների ներկայությամբ Դ.Վարդանյանը շուրջ հինգ րոպե շարունակել է հայհոյանքն ու վիճաբանությունը, որի ընթացքում խուլիգանական դրդումներով ձեռքերով հարվածներ է հասցրել Խ.Հովհաննիսյանի գլխի տարբեր մասերին՝ վերջինիս առողջությանը դիտավորությամբ պատճառելով միջին ծանրության վնաս (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

12.1. Մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 11-11.1-րդ կետերում վկայակոչված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալ Դ.Վարդանյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով, հանցագործության հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի համատեքստում պատշաճ վերլուծության չի ենթարկել հանցագործությանը նախորդող և ուղեկցող հանգամանքները, հանցագործության շարժառիթը, ինչպես նաև վնասված հասարակական հարաբերության բնույթը և հանցանքի կատարման եղանակը, այն է՝ տուժողի գլխի տարբեր մասերին ձեռքերով հարվածներ հասցնելը և վերջինիս առողջությանը ծախ այտոսկրի բեկորային կոտրվածքի ձևով միջին ծանրության վնաս պատճառելը: Վերոնշյալ հանգամանքներն ակնհայտորեն վկայում են հանցավորի և նրա կատարած արարքի բարձր հանրային վտանգավորության մասին:

13. Միևնույն ժամանակ, Առաջին ատյանի դատարանը, պատշաճ վերլուծելով կատարված հանցանքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, հանցավորի անձը բնութագրող տվյալները, գնահատման ենթարկելով առկա մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, պատիժ է նշանակել մեկ տարի ժամկետով ազատազրկում և եկել իրավաչափ եզրահանգման, որ Դ.Վարդանյանի կողմից նշանակված պատիժը կրելու պայ-

մաններում է հնարավոր հասնել պատժի նպատակների իրագործմանը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Դ.Վարդանյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր չեն:

14. Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև Վերաքննիչ դատարանի կողմից որպես Դ.Վարդանյանի արարքի հանրային վտանգավորության աստիճանն օբյեկտիվորեն նվազեցնող գնահատված հանգամանքներին, այն է՝ տուժողին միայն ձեռքերով հարվածելուն, վերջինիս առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու հանգամանքը գիտակցելուն, սակայն իր արարքի և հետևանքների միջև առկա անմիջական պատճառական կապը չնախատեսելուն և հանցավորի արարքի արդյունքում ավելի ծանր հետևանքների առաջացումը բացառելուն (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը): Մասնավորապես Վճռաբեկ դատարանը փաստում է, որ տուժողի գլխին միայն ձեռքերով հարվածելը դեռևս հիմք չէ եզրահանգելու, որ հանցավորի կատարած արարքը իրենից նվազ վտանգավորություն է ներկայացնում:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ *ամբաստանյալը գիտակցել է, որ իր գործողություններով տուժողի առողջությանը պատճառում է միջին ծանրության վնաս, չի նախատեսել իր արարքի և հետևանքների միջև առկա անմիջական պատճառական կապը,* Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն իր մեջ հակասություն է պարունակում, քանի որ ստորադաս դատարանը մի կողմից՝ արձանագրել է, որ ամբաստանյալը գիտակցել է իր գործողություններով տուժողի առողջությանը հենց միջին ծանրության վնաս պատճառելու հանգամանքը, մյուս կողմից՝ ընդգծել, որ Դ.Վարդանյանը չի նախատեսել իր արարքի և հետևանքների միջև առկա անմիջական պատճառական կապը: Վճռաբեկ դատարանը գործի փաստական տվյալների վերլուծության արդյունքում գտնում է, որ ամբաստանյալը տուժողի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելիս գործել է չկոնկրետացված դիտավորությամբ, որի պարագայում նախատեսել է ցանկացած հետևանքի առաջացման հնարավորությունը, և դրանցից յուրաքանչյուրի առաջացումը նրա համար եղել է ցանկալի, ուստի և այն չի կարող դիտարկվել որպես կատարված արարքի հանրային վտանգավորությունը նվազեցնող հանգամանք:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն դատողությանը, որ *չնայած ամբաստանյալը ոտնձգել է այնպիսի հասարակական հարաբերության դեմ, որի խախտումը բացասաբար է անդրադարձել տուժողի առողջական վիճակի վրա, սակայն այն չէր կարող առաջ բերել ավելի ծանր հետևանքներ,* ապա այն ընդամենը ենթադրություն է, հիմնված չէ գործի

նյութերից բխող որևէ փաստական տվյալի վրա, հետևաբար նույնպես չի կարող գնահատվել որպես կատարված արարքի վտանգավորությունը նվազեցնող հանգամանք:

15. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ և 70-րդ հոդվածների պահանջների խախտումներ, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի իմաստով քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է և հանգեցրել է նաև նույն օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, ինչը հիմք է Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, ուստի անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիման վրա բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի դատավճռին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Դավիթ Գագիկի Վարդանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 14-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 23-ի դատավճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

31.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱՔԴ/0154/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2017 թվականի դեկտեմբերի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Գալուստ Եզնիկի Կուչուրյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հունիսի 5-ի որոշման դեմ քաղաքացիական հայցվորների ներկայացուցիչ Հերմինե Ավետիսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի ապրիլի 10-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ 09113514 քրեական գործը՝ Մանվել Սամվելի Քոչինյանին անզգուշությամբ մահ պատճառելու դեպքի առթիվ:

2014 թվականի սեպտեմբերի 25-ին Գալուստ Եզնիկի Կուչուրյանը ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2014 թվականի հոկտեմբերի 10-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ մուտքագրվել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունվարի 23-ի դատավճռով Գալուստ Եզնիկի Կուչուրյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 6 (վեց) ամիս ժամկետով՝ զրկելով որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից՝ 2 (երկու) տարի ժամկետով: Դատարանը որոշել է Գալուստ Կուչուրյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան 2 (երկու) տարի ժամկետով: Դատարանը որոշել է նաև տուժողի իրավահաջորդ Վարսենիկ Քոչինյանի կողմից ներկայացված քաղաքացիական հայցը բավարարել մասնակի և Գալուստ Կուչուրյանից հօգուտ Վարսենիկ Քոչինյանի բռնագանձել 800.000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես հանցագործության հետևանքով անմիջականորեն պատճառված վնասի հատուցում:

3. Քաղաքացիական հայցվորի ներկայացուցիչ Գ.Գրիգորյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2015 թվականի հունիսի 16-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ քաղաքացիական հայցի մասով բեկանել և գործն ուղարկել է ստորադաս դատարան՝ այլ կազմով նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը:

4. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 2-ի որոշմամբ քրեական գործով վարույթը կասեցվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքով:

2017 թվականի փետրվարի 3-ին Առաջին ատյանի դատարանը Գ.Կուչուրյանի վերաբերյալ 2015 թվականի հունվարի 23-ի դատավճռի չբեկանված մասն օրինական ուժի մեջ մտնելու և այն ի կատար ածման ենթակա լինելու վերաբերյալ կարգադրություն է ուղարկել ՀՀ ԱՆ պրոբացիայի պետական ծառայություն:

5. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 2-ի որոշման դեմ վերաքննիչ բողոքներ են ներկայացրել ամբաստանյալ Գ.Կուչուրյանի պաշտպան Ա.Հակոբյանը և քաղաքացիական հայցվորների ներկայացուցիչ Հ.Ավետիսյանը:

Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 5-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները մերժվել են, իսկ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 2-ի որոշումը՝ թողնվել օրինական ուժի մեջ:

6. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 5-ի որոշման դեմ քաղաքացիական հայցվորների ներկայացուցիչ Հ.Ավետիսյանի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 19-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

7. Նախաքննության մարմինը Գ.Կուչուրյանին մեղադրանք է առաջադրել *«(...) այն բանի համար, որ նա, (...) [հ]անդիսանալով արհեստանոցի վարիչ և տեխնիկայի անվտանգության կամ աշխատանքի պաշտպանության կանոնների պահպանման համար պատասխանատու անձ՝ մետաղական խողովակների վրա պարույրներ հանելու ընթացքում միացրել է հաստոցը, խախտել է անվտանգության կանոնները, որի հետևանքով հաստոցի վրա տեղադրված խողովակը պտտվել և հարվածել է Մանվել Քոչինյանի գլխին, որը ստացած մարմնական վնասվածքներից 07.04.2014թ. «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» Բ/Կ-ում մահացել է»* (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 148):

8. Տուժողի իրավահաջորդ և քաղաքացիական հայցվոր Վ.Քոչինյանը սույն գործով քաղաքացիական հայց է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ ընդդեմ Գալուստ Կուչուրյանի և ՀՀ ԳԱԱ Ա.Բ.Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ ՊՈԱԿ-ի՝ խնդրելով վերջիններիցս համապարտության կարգով բռնագանձել 3.451.000 ՀՀ դրամ, որպես հանցագործությամբ իրենց ընտանիքին պատճառված նյութական վնասի հատուցում, ինչպես նաև 2.000.000 ՀՀ դրամ, որպես հանցագործության հետևանքով իրենց ընտանիքին պատճառված բարոյական (ոչ նյութական) վնասի հատուցում՝ բռնագանձումը տարածելով պատասխանողներին պատկանող գույքի, դրամական միջոցների և այլ եկամուտների վրա (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 45-57):

9. Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունվարի 23-ի դատավճռի համաձայն. *«Դատարանը գտնում է, որ տուժողի իրավահաջորդ Վարսենիկ Քոչինյանի կողմից ներկայացված քաղաքացիական հայցը պետք է բավարարել մասնակի՝ 800.000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով, քանի որ քաղաքացիական հայցում ներկայացվել է ոչ միայն հանցագործության հետևանքով անմիջականորեն պատճառված վնասը, այլև բաց թողնված օգուտը և բարոյական վնասը»* (տե՛ս գրեական գործ, հատոր 2, թերթեր 93-100):

9.1. Վերոնշյալ դատավճիռը քաղաքացիական հայցի մասով բեկանելու և գործը ստորադաս դատարան՝ այլ կազմով նոր քննության ուղարկելու

մասին Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի հունիսի 16-ի որոշման համաձայն. *«(...) Վերաքննիչ դատարանը հանգում է հետևության, որ Առաջին ատյանի դատարանը, քննության առարկա չդարձնելով ՀՀ ԳԱԱ Ա.Բ.Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ ՊՈԱԿ-ի դեմ ներկայացված քաղաքացիական հայցը և կայացրած դատավճռով չլուծելով այն, թույլ է տվել քրեադատավարական օրենքի էական խախտում, որը ազդել է (...) գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, (...)* [և չի] *կարող վերացվել Վերաքննիչ դատարանում՝ դատական քննությամբ:*

(...)

Նոր քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանը պետք է քննության առնի ՀՀ ԳԱԱ Ա.Բ.Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ ՊՈԱԿ-ի վերաբերյալ քաղաքացիական հայցը և լուծի այն:

(...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 57-65):

10. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 2-ի որոշման մեջ արձանագրված է հետևյալը. *«Փորձաքննության թիվ 147/հձ եզրակացության համաձայն Գ.Կուչուրյանի մոտ ներկայումս ախտորոշված հիվանդությունները հանդիսանում են խոչընդոտ՝ լիարժեք լսելու, ընկալելու, և դատական քննությանը մասնակցության համար, որը հանդիսանում է քրեական գործով վարույթի հետագա ընթացքը կասեցնելու օբյեկտիվ հիմք՝ նկատի ունենալով, որ առանց ամբաստանյալի մասնակցության նրա վերաբերյալ տարվող քրեական գործով հետագա վարույթն անհնար է:*

(...) Հետևաբար, հիմք ընդունելով վերոգրյալը՝ դատարանը գտնում է, որ թիվ ԵԱՔԴ/0154/01/14 քրեական գործի հետագա վարույթը պետք է կասեցնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով» (տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթեր 124-129):

10.1. Առաջին ատյանի դատարանի կողմից 2017 թվականի փետրվարի 3-ին ՀՀ ԱՆ պրոբացիայի պետական ծառայության պետին հասցեագրված կարգադրության մեջ նշված է հետևյալը. *«(...) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015թ. հունվարի 23-ի դատավճռի չբեկանված մասն օրինական ուժի մեջ է մտել 2015 թվականի հուլիսի 17-ին և ենթակա է ի կատար ածման»* (տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթեր 135-136, 137-138):

11. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 2-ի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 5-ին կայացված որոշման մեջ արձանագրված է հետևյալը. *«Վերաքննիչ դատարանը (...) պաշտպան Ա.Հակոբյանի և քաղաքացիական հայցվորների ներկայացուցիչ Հ.Ավետիսյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում հանգում է այն հետևության, որ (...) դատական ակտը բեկանելու հիմքեր չկան, նկատի*

ունենալով, որ դատարանը որոշում կայացնելիս թույլ չի տվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին հանգեցնել դատական սխալի» (տե՛ս քրեական գործ, հատոր 6, թերթեր 51-60):

12. Վճռաբեկ դատարան ներկայացված մահվան վկայականի պատճենից երևում է, որ Գալուստ Եզնիկի Կուչուրյանը 2017 թվականի նոյեմբերի 29-ին մահացել է (տե՛ս քրեական գործ, հատոր 6, թերթ 159):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

13. Բողոքի հեղինակի կարծիքով Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 5-ի որոշումն անօրինական է և անհիմն, այն կայացվել է նյութական և դատավարական իրավունքի խախտումներով, որոնք ազդել են գործի ելքի վրա: Բողոքաբերը մասնավորապես նշել է, որ սույն գործի վարույթը կասեցնելու որոշմամբ թույլ են տրվել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 6-րդ հոդվածի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի խախտումներ:

Բողոքաբերն ընդգծել է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունվարի 23-ի դատավճիռը բեկանվել է միայն քաղաքացիական հայցի մասով, իսկ մնացած մասով՝ մտել է օրինական ուժի մեջ: Մինչդեռ Առաջին ատյանի դատարանը, անտեսելով այդ հանգամանքը, կայացրել է գործի վարույթը կասեցնելու մասին որոշում՝ պատճառաբանելով, որ առանց ամբաստանյալի մասնակցության նրա վերաբերյալ քննվող քրեական գործով հետագա վարույթն անհնար է: Իսկ Վերաքննիչ դատարանը համաձայնել է Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ դիրքորոշման հետ և անփոփոխ թողել ոչ իրավաչափ դատական ակտը:

Բողոքաբերը նշել է, որ բազմաթիվ անբուժելի հիվանդություններ ունեցող 85-ամյա քաղաքացիական պատասխանող Գալուստ Կուչուրյանի դեմ ներկայացված քաղաքացիական հայցը քննության չառնելով և քրեական գործի վարույթը քաղաքացիական պատասխանողի առողջական խնդիրներով պայմանավորված կասեցնելով, Առաջին ատյանի դատարանն ուղղակի չի կատարել քաղաքացիական հայցը քննության ենթարկելու իր պարտականությունը՝ թույլ տալով դատական պաշտպանության և ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքների խախտում:

14. Վերոշարադրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 2-ի և Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 5-ի որոշումները և կայացնել նոր դատական ակտ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչա՞փ են արդյոք միայն քաղաքացիական հայցի մասով քրեական գործի քննության շրջանակներում ամբաստանյալի ծանր հիվանդության հիմքով գործի վարույթը կասեցնելու մասին ստորադաս դատարանների հետևությունները:

16. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝*«Տուժող է ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս: Տուժող է ճանաչվում նաև այն անձը, ում կարող էր անմիջականորեն պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, եթե ավարտվեր քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելը»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝*«Քաղաքացիական հայցվոր է ճանաչվում քրեական գործով վարույթի ընթացքում հայց ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի նկատմամբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ նրան քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառվել է քրեական դատավարության կարգով հատուցման ենթակա գույքային վնաս»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝*«Տուժողի իրավահաջորդ է ճանաչվում նրա մերձավոր ազգականներից մեկը, որը ցանկություն է հայտնել քրեական գործով վարույթում իրականացնել մահացած կամ իր կամքն արտահայտելու ունակությունը կորցրած տուժողի իրավունքները և պարտականությունները»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Տուժողի իրավահաջորդը քրեական գործով վարույթին մասնակցում է տուժողի փոխարեն և ունի վերջինիս իրավունքները և պարտականությունները, բացի ցուցմունքներ տալու և տուժողի անձից անբաժանելի այլ իրավունքներից և պարտականություններից: (...)»:*

17. Վճռաբեկ դատարանը *Ս.Ամտոնյանի* վերաբերյալ որոշմամբ իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ *«(...) քրեական դատավարությունն իրականացվում է ոչ միայն հանցագործությունը բացահայտելու և մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելու, այլև հան-*

ցագործության արդյունքում տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով: Այլ խոսքով՝ տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը հանդիսանում է քրեական դատավարության կարևորագույն խնդիրներից մեկը:

(...)

(...) տուժողի իրավահափ շահերի շրջանակում է նրան հասցված վնասի վերականգնումը, (...)» (տե՛ս *Սուսաննա Անտոնյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԵԿԴ/0077/11/12 որոշման 25-26-րդ կետերը):

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ հանցագործության արդյունքում տուժած անձն արդար դատաքննության հիմնարար իրավունքը կրող սուբյեկտ է: Ընդ որում, միջազգային-իրավական մի շարք փաստաթղթերով որպես պետության պարտավորություն է սահմանվում հենց տուժողի (հանցագործության արդյունքում տուժած անձի) իրավունքների արդյունավետ պաշտպանության ապահովումը:

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված վարույթի կարգը պարտադիր է դատարանների, հետաքննության, նախաքննության և դատախազության մարմինների, ինչպես նաև դատավարության մասնակիցների համար»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝*«Քրեական գործով վարույթը դատախազի, քննիչի կամ դատարանի որոշմամբ ամբողջությամբ կամ համապատասխան մասով կարող է կասեցվել, եթե՝ (...) մեղադրյալը ծանր հիվանդ է (...), որ[ի] պատճառով չի կարող մասնակցել քրեական գործով վարույթին, եթե առանց նրա մասնակցության քրեական գործով հետագա վարույթն անհնար է»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 302-րդ հոդվածի համաձայն՝ *«Դատական քննությունը կատարվում է ամբաստանյալի մասնակցությամբ, որի դատարան ներկայանալը պարտադիր է (...)»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 305-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է, որ՝ *«Քաղաքացիական պատասխանողի կամ նրա ներկայացուցչի չներկայանալը չի խոչընդոտում դատական քննությունը շարունակելուն և քաղաքացիական հայցը քննելուն»:*

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործով վարույթի կասեցումը, օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված, գործի վարույթի ժամանակավոր ընդմիջումն է: Գործով վարույթը կասեցվում է, եթե գործի քննության ընթացքում առաջ են գալիս դրա քննությունը շարունակելուն խոչընդոտող այնպիսի հանգամանքներ, որոնք սպառիչ թվարկված են օրենքով:

Հաշվի առնելով, որ դատական քննությանը ամբաստանյալի մասնակցությունը պարտադիր է, հետևաբար նրա՝ ծանր հիվանդության հետևանքով գործով վարույթին մասնակցելու անկարողությունը հիմք է գործի վարույթը կասեցնելու համար: Սինչդեռ օրենսդիրը հնարավոր է համարում դատական քննությունը շարունակելը և քաղաքացիական հայցը քննելը քաղաքացիական պատասխանողի բացակայությամբ: Հետևաբար այն դեպքում, երբ քրեական գործը քննվում է միայն քաղաքացիական հայցի մասով (օրինակ՝ վերադաս ատյանի կողմից միայն քաղաքացիական հայցի մասով գործը նոր քննության ուղարկելու արդյունքում) և անձը, կորցնելով ամբաստանյալի կարգավիճակը, հանդես է գալիս միայն որպես քաղաքացիական պատասխանող, ապա քրեական գործի վարույթը կասեցնելու քննարկվող հիմքը կիրառելի չէ:

19. Սույն գործի փաստերի համաձայն՝ Առաջին ատյանի դատարանի կողմից 2015 թվականի հունվարի 23-ին կայացված դատավճռի չբեկանված մասն օրինական ուժի մեջ է մտել 2015 թվականի հուլիսի 17-ին, և այդ պահից Գ.Կուչուրյանը դադարել է տվյալ գործով լինել ամբաստանյալ: Իսկ Գ.Կուչուրյանի և ՀՀ ԳԱԱ Ա.Ք.Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտի դեմ հարուցված հայցի դատական քննության շրջանակներում Գ.Կուչուրյանը հանդես է եկել միայն որպես քաղաքացիական պատասխանող, ում չներկայանալը չի խոչընդոտել գործի քննությանը:

Սինչդեռ Առաջին ատյանի դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 305-րդ հոդվածի 2-րդ մասով ղեկավարվելու և քաղաքացիական հայցը քննելու փոխարեն անհիմն որոշում է կայացրել քրեական գործի վարույթը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա կասեցնելու մասին:

20. Նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով սույն որոշման 18-րդ կետում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ միայն քաղաքացիական հայցի մասով քրեական գործի քննության շրջանակներում ամբաստանյալի ծանր հիվանդության հիմքով գործի վարույթը կասեցնելու մասին ստորադաս դատարանների հետևությունները իրավաչափ չեն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քաղաքացիական հայցը քննելու փոխարեն քրեական գործի վարույթը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով կասեցնելու մասին որոշում կայացնելով՝ Առաջին ատյանի դատարանն անհամաչափորեն սահմանափակել է տուժողի իրավահաջորդ և քաղաքացիական հայցվոր Վ.Քոչինյանի իրավունքներն ու օրինական շահերը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանները թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և 305-րդ հոդվածի 2-րդ մասի խախտումներ, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը,

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների համաձայն, հիմք է Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 2-ի և Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 5-ի որոշումները բեկանելու համար:

21. Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Գալուստ Կուչուրյանը 2017 թվականի նոյեմբերի 29-ին մահացել է, որպիսի պայմաններում քաղաքացիական հայցը պետք է թողնել առանց քննության:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 155-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Քրեական դատավարությունում հարուցված քաղաքացիական հայցը, որը դատարանի կողմից թողնվել է առանց քննության, կարող է հետագայում հարուցվել քաղաքացիական դատավարության կարգով»:*

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ դատապարտյալ Գ.Կուչուրյանի մահվան կապակցությամբ քաղաքացիական հայցն առանց քննության թողնելու հանգամանքը տուժողի իրավահաջորդին չի զրկում քաղաքացիական դատավարության կարգով համապատասխան հայց հարուցելու հնարավորությունից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Գալուստ Եզնիկի Կուչուրյանի վերաբերյալ «Քրեական գործի վարույթը կասեցնելու մասին» Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 2-ի որոշումը, և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հունիսի 5-ի որոշումը բեկանել:

2. Տուժողի իրավահաջորդ Վարսենիկ Քոչինյանի քաղաքացիական հայցը թողնել առանց քննության՝ քաղաքացիական պատասխանող Գալուստ Կուչուրյանի մահվան կապակցությամբ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

32.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՄԴ/0072/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ

Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝
դատախազ Վ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
պաշտպան Է.ՔԵԳԼԱՐՅԱՆԻ

2017 թվականի դեկտեմբերի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արմեն Հայկի Մուրադյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 29-ի որոշման դեմ պաշտպան Է.Քեգլարյանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2016 թվականի հունվարի 7-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 16100216 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի հունվարի 9-ի որոշմամբ Արմեն Հայկի Մուրադյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով:

2016 թվականի հունիսի 23-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մայիսի 10-ի դատավճռով ամբաստանյալ Արմեն Հայկի Մուրադյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով և դատապարտվել ազատազրկման՝ 6 (վեց) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: Միաժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքի 97-րդ հոդվածի կարգով, նրա նկատմամբ նշանակվել է հարկադիր բուժում՝ ալկոհոլամոլության դեմ:

3. Ամբաստանյալ Ա.Մուրադյանի պաշտպան Է.Բեգլարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի օգոստոսի 29-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մայիսի 10-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերոհիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ա.Մուրադյանի պաշտպան Է.Բեգլարյանը: Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 6-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել գործով մեղադրող Վ.Պետրոսյանը՝ խնդրելով մերժել բողոքը, և Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 29-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Առաջին ատյանի դատարանը 2017 թվականի մայիսի 10-ի դատական ակտում արձանագրել է հետևյալը. *«(…) [Դ]ատաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ հետազոտությամբ, ինչպես նաև դատարանի ներքին համոզմամբ ապացուցվել է ամբաստանյալ Արմեն Հայկի Մուրադյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հանցավոր արարք կատարելու փաստը:*

(…)

(…) Պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում ինչպես ամբաստանյալի կողմից կատարված հանցագործության բնույթը և հասարակական վտանգավորության աստիճանը, պատասխանատվությունը և պա-

տիժը մեղմացնող հանգամանքների առկայությունը, պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, այնպես էլ նրա անձը (…)» (տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթեր 168-183):

6. Առաջին ատյանի դատարանի դատական ակտը պաշտպան Է.Քեգլարյանը բողոքարկել է Վերաքննիչ դատարան՝ խնդրելով բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մայիսի 10-ի դատավճիռը և մեղսագրվող արարքում Ա.Մուրադյանին արդարացնել, կամ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ Ա.Մուրադյանի նկատմամբ նշանակել օրենքով նախատեսվածից մեղմ պատիժ, կամ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել:

7. Լսելով բողոքաբեր կողմին, ինչպես նաև վերաքննիչ բողոքի կապակցությամբ դատախազի պատասխանը՝ Վերաքննիչ դատարանը կողմերին հնարավորություն է ընձեռել հանդես գալու դատաքննությունը լրացնելու վերաբերյալ միջնորդություններով, որի կապակցությամբ 2017 թվականի օգոստոսի 17-ի նիստի ընթացքում, ամբաստանյալ Արմեն Մուրադյանը հայտարարել է, որ ցանկանում է միջնորդություն ներկայացնել և, միաժամանակ նշելով, որ վատառողջ է ու այլևս ի վիճակի չէ մասնակցելու դատական նիստին, խնդրել է ժամանակ տրամադրել՝ պաշտպանի հետ խորհրդակցելու ու միջնորդությամբ հանդես գալու համար, ինչը դատարանի կողմից բավարարվել է, և հայտարարվել է 5 րոպե ընդմիջում:

Դատական նիստը վերսկսելուց հետո նախագահող դատավորը հայտարարել է, որ ամբաստանյալը չի ներկայացվել դատական նիստին, ինչի կապակցությամբ պաշտպանը տեղեկացրել է, որ ամբաստանյալն իրեն վատ է զգացել և այս պահին որևէ բան հայտնել չի կարող՝ միաժամանակ նշելով, որ վերջինս ցանկանում է առանձնազրույց ունենալ իր հետ՝ միջնորդություն ներկայացնելու կապակցությամբ:

Արդյունքում Վերաքննիչ դատարանը բավարարել է պաշտպանական կողմի միջնորդությունը, դատական նիստը հետաձգել է ու վերանշանակել 2017 թվականի օգոստոսի 29-ին, ժամը 13:00-ին (տե՛ս դատական նիստի արձանագրությունը):

8. Նշանակված դատական նիստը բացվել է 2017 թվականի օգոստոսի 29-ին, ժամը 13:24-ին: Նախագահող դատավորը հայտարարել է, որ դատական նիստին ամբաստանյալ Ա.Մուրադյանը չի ներկայացվել՝ միաժամանակ հայտնելով, որ համաձայն ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ուղեկցող գումարտակի ներկայացուցչի բանավոր հայտարարության, ամբաստանյալին տեխնիկական խնդիրների պատճառով հնարավոր չի եղել ներկայացնել դատական նիստին: Դատական նիստը հետաձգվել է մինչև ամբաստանյալին ներկայացնելը (տե՛ս դատական նիստի արձանագրությունը):

8.1. Դատական նիստը վերսկսվել է ժամը 13:30-ին, որի ընթացքում ուղեկցող գումարտակի ներկայացուցիչը հայտարարել է, որ ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ից իրենց տեղեկացրել են, որ ամբաստանյալը հրաժարվում է ներկայանալ դատական նիստին:

Պաշտպանը հայտնել է, որ ամբաստանյալի՝ դատական նիստին չներկայանալու վերաբերյալ որևէ տեղեկություն չունի, իր վերջին տվյալներով Ա.Մուրադյանը դատական նիստին ներկայանալու է և իր առողջական վիճակի վերաբերյալ նոր փաստաթուղթ է ներկայացնելու, քանի որ նրա մոտ նոր հիվանդություն է ախտորոշվել:

Պաշտպանը խնդրել է դատական նիստը հետաձգել և ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ ամբաստանյալի մասնակցությունն ապահովելու համար, իսկ վերջինիս՝ դատական նիստին ներկայանալուց կրկին հրաժարվելու դեպքում, նրա ստորագրությամբ հաստատված գրավոր փաստաթուղթ ներկայացնել:

Վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել դատական նիստը շարունակել առանց ամբաստանյալի մասնակցության՝ հայտնելով, որ վերջինիս չներկայանալու վերաբերյալ որևէ հիմնավոր պատճառ չի ներկայացվել՝ միաժամանակ արձանագրելով, որ նախորդ դատական նիստին ամաստանյալը պաշտպանի միջնորդությամբ ժամանակ էր խնդրել՝ նոր ապացույցներ ներկայացնելու համար, ինչը բավարարվել էր, սակայն ամբաստանյալը, հրաժարվելով դատական նիստին ներկայանալուց, ինքն իրեն զրկել է կամ դրանով իսկ դիրքորոշում է հայտնել, որ որևէ նոր ապացույց ներկայացնելու ցանկություն չունի (տե՛ս դատական նիստի արձանագրությունը):

8.2. Դատարանը դատական նիստը հայտարարել է փակված և հեռացել խորհրդակցական սենյակ ժամը 13:38-ին:

Վերաքննիչ դատարանի դատական ակտը հրապարակվել է նույն օրը՝ ժամը 13:43-ին (տե՛ս դատական նիստի արձանագրությունը):

9. Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, արձանագրել է հետևյալը. *«(…) Արմեն Մուրադյանի կողմից կատարված հանցանքը հիմնավորված և նրա մեղավորությունը հաստատված է գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ, առաջին ատյանի դատարանն ամբաստանյալի արարքի քրեաիրավական որակման հարցում հանգել է ճիշտ հետևության և հաստատված է համարել Արմեն Մուրադյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հանցանքի կատարման մեջ (…):*

(…)

[Առաջին ատյանի] դատարանի դատավճիռը պատճառաբանված ու հիմնավորված է գործի փաստական հանգամանքներով, ամբաստանյալի անձը բնութագրող տվյալներով, պատիժն ու պատախանատվությունը մեղ-

մացնող հանգամանքներով, այդպիսիք ծանրացնող հանգամանքների բացակայությամբ, որոնց պայմաններում դատարանը պահպանելով ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ հոդվածների պահանջները, Արմեն Մուրադյանի նկատմամբ նշանակել է պատիժ, որը համապատասխանում է նրա կողմից կատարված հանցագործության բնույթին ու ամբաստանյալի անձնավորությանը (…)» (տե՛ս քրեական գործ, հատոր 6, թերթեր 55-66):

10. 2017 թվականի սեպտեմբերի 4-ին պաշտպան Է.Բեգլարյանին հասցեագրված՝ ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿ հիմնարկի պետի գրության համաձայն՝ 2017 թվականի օգոստոսի 29-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության գումարտակի աշխատակիցները կալանավոր Ա.Մուրադյանին Վերաքննիչ դատարան դատական նիստի տեղափոխելու համար ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿ հիմնարկ են ներկայացել և վերջինիս դուրս են գրել ժամը 14:50-ին: Նույն գրության համաձայն՝ վերոնշյալ դատական նիստի կարգագիրը ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿ հիմնարկ է ներկայացվել Երևան քաղաքի վարչության գումարտակի աշխատակիցների միջոցով՝ 2017 թվականի օգոստոսի 29-ին (տե՛ս քրեական գործ, հատոր 6, թերթ 113):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը</u>.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Բողոք բերած անձը գտել է, որ նախաքննությամբ ձեռք բերված և դատարանում հետազոտված ապացույցների հիման վրա հնարավոր չէր Արմեն Մուրադյանի նկատմամբ մեղադրական դատավճիռ կայացնել: Ըստ բողոքաբերի, սույն գործով Արմեն Մուրադյանի մեղադրանքի հիմքում դրվել են հիմնականում տուժողի ցուցմունքները, նախաքննությունն իրականացվել է ոչ թե օբյեկտիվ և բազմակողմանի, այլ կամայական և խտրական:

Բողոքաբերը նշել է, որ դատաքննության ընթացքում տուժող Աիդա Մկրտիչյանը դիմում է ներկայացրել, որով հերքել է իր նախաքննական և դատարանում տված ցուցմունքները՝ հայտնելով, որ իրականում ավազակային հարձակում տեղի չի ունեցել:

Ըստ բողոքի հեղինակի՝ գործում առկա մյուս ապացույցներով ևս, ներառյալ փորձագետի եզրակացություններն ու իրեղեն ապացույցները, հնարավոր չէ պնդել և հիմնավորել, որ Արմեն Մուրադյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված արարք:

11.1. Բացի այդ, ըստ բողոքաբերի, ամբաստանյալ Արմեն Մուրադյանի նկատմամբ նշանակվել է ենթադրյալ կատարածին անհամաչափ խիստ պատիժ: Առաջին ատյանի դատարանը քննության առարկա չի դարձրել նաև նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցը:

Բողոքի հեղինակը նշել է, որ 2017 թվականի մարտի 20-ին ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ից ստացվել է էպիկրիզ, համաձայն որի՝ Արմեն Մուրադյանի մոտ ախտորոշվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ 3-րդ կլինիկական փուլ՝ խիստ արտահայտված իմունային անբավարարություն, թոքերի ինֆիլտրատիվ տուբերկուլյոզ, բերանի խոռոչի և ըմպանի կանդիդոզ, սեբորեային դերմատիտ, քաշի կորուստ ավելի քան 10 տոկոս և սեպտիցեմիա:

Բողոքաբերը գտել է, որ Վճռաբեկ դատարանի՝ Հ.Հաբեշյանի գործով որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո վերլուծելով Ա.Մուրադյանի անձը բնութագրող, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, կարելի է փաստել, որ դրանք իրենց համակցությամբ առանձնահատուկ են և կարող են դիտվել որպես բացառիկ, հետևաբար բավարար են ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառման համար:

12. Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը գործի քննության ընթացքում թույլ է տվել դատավարական իրավունքի նորմերի կոպիտ խախտում, որն ազդել է գործի ելքի վրա:

Մասնավորապես բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանը, բավարարելով ամբաստանյալի միջնորդությունը, նրան հնարավորություն էր ընձեռել հաջորդ դատական նիստին միջնորդությամբ հանդես գալու համար, սակայն իրականում Արմեն Մուրադյանը զրկված է եղել իր այդ իրավունքն իրացնելու հնարավորությունից՝ անկախ իր կամքից դատարան չներկայացվելու պատճառով: Այսպես, ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ից ստացված հարցման պատասխանի համաձայն՝ 2017 թվականի օգոստոսի 29-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ուղեկցող գումարտակի աշխատակիցները կալանավորված անձ Ա.Մուրադյանին ՀՀ վերաքննիչ քրեական դատարան դատական նիստի տեղափոխելու համար ՔԿ հիմնարկ են ներկայացել և վերջինիս դուրս են գրել ժամը 14:50-ին: Այսինքն՝ Ա.Մուրադյանը ՔԿ հիմնարկից դուրս է գրվել դատական նիստից 1 ժամ 50 րոպե անց, երբ արդեն իսկ իր վերաբերյալ գործի քննությունը Վերաքննիչ դատարանում ավարտված է եղել: Բացի այդ, ըստ բողոքաբերի, հիշյալ գրության մեջ որևէ նշում չկա այն մասին, որ Ա.Մուրադյանը հրաժարվել է մասնակցել Վերաքննիչ դատարանի դատական նիստին:

13. Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 29-ի որոշումը և մեղսագրվող արարքում Ա.Մուրադյանին արդարացնել. կամ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ նրա նկատմամբ նշանակել օրենքով նախատեսվածից մեղմ պատիժ, կամ ՀՀ քրեական օրենսգքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել, կամ բեկանել դատական ակտը և ուղարկել նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. պատշաճորեն ապահովվե՞լ է արդյոք ամբաստանյալի՝ Վերաքննիչ դատարանի դատական նիստին մասնակցելու, դատաքննությունը լրացնելու վերաբերյալ միջնորդություն հարուցելու և նյութեր ներկայացնելու իրավունքը:

15. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի համաձայն՝

«*1. Քրեական դատավարությունն իրականացվում է մրցակցության սկզբունքի հիման վրա:*

2. Քրեական հետապնդումը, պաշտպանությունը և գործի լուծումը տարանջատված են. դրանք իրականացնում են տարբեր մարմիններ և անձինք:

(...)

4. Քրեական գործը քննող դատարանը, պահպանելով օբյեկտիվությունը և անկողմնակալությունը, մեղադրանքի և պաշտպանության կողմերի համար ստեղծում է գործի հանգամանքների բազմակողմանի և լրիվ հետազոտման անհրաժեշտ պայմաններ (...):

5. Քրեական դատավարությանը մասնակցող կողմերը քրեական դատավարական օրենսդրությամբ օժտված են իրենց դիրքորոշումը պաշտպանելու հավասար հնարավորություններով: Դատարանը դատավճիռը հիմնավորում է միայն այն ապացույցներով, որոնց հետազոտման ընթացքում կողմերից յուրաքանչյուրի համար ապահովվել են հավասար պայմաններ:

6. Քրեական դատավարության ընթացքում կողմերն իրենց դիրքորոշումը, այն պաշտպանելու եղանակները և միջոցներն օրենքի շրջանակներում ընտրում են ինքնուրույն՝ անկախ դատարանից, այլ մարմիններից և անձանցից: Դատարանը, կողմի միջնորդությամբ, սույն օրենսգրքով սահմանված կարգով, աջակցում է նրան ձեռք բերելու անհրաժեշտ նյութեր:

7. Դատարանն ապահովում է առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում գործի քննությանը կողմերի մասնակցության իրավունքը (...):

8. Դատարանում քրեական գործի քննությանը կողմերի մասնակցությունը պարտադիր է (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝

«1. Մեղադրյալն ունի պաշտպանության իրավունք: Քրեական վարույթն իրականացնող մարմինը մեղադրյալին հնարավորություն է ընձեռում օրենքով չարգելված բոլոր միջոցներով իրականացնել պաշտպանության իր իրավունքը:

2. Մեղադրյալը, սույն օրենսգրքով սահմանված կարգով, իրավունք ունի՝

(…)

10) քրեական գործին կցելու և հետազոտելու համար ներկայացնել նյութեր.

(…)

12) հարցուցել միջնորդություններ.

(…)

17) մասնակցել առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նիստերին և գործի նյութերի հետազոտմանը (…)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 302-րդ հոդվածի համաձայն՝

«Դատական քննությունը կատարվում է ամբաստանյալի մասնակցությամբ, որի դատարան ներկայանալը պարտադիր է (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 382-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

«Բացառիկ դեպքերում կողմերն իրավունք ունեն իրենց բողոքի, ինչպես նաև մյուս կողմի բողոքի կապակցությամբ տրված պատասխանների հիմքերը հաստատելու համար դատարան ներկայացնելու նոր նյութեր կամ միջնորդելու դատարան կանչել իրենց նշած վկային կամ փորձագետին, նշանակելու փորձաքննություն, եթե նրանք հիմնավորում են, որ օբյեկտիվորեն հնարավորություն չեն ունեցել ներկայացնելու այդ նյութերը, կանչելու վկային կամ փորձագետին, ինչպես նաև առաջին ատյանի դատարանում միջնորդելու նշանակել փորձաքննություն, կամ հիմնավորում են, որ ներկայացված միջնորդությունն առաջին ատյանի դատարանի կողմից մերժվել է անհիմն (…)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Վերաքննիչ դատարանի դատական նիստին, ի թիվս այլոց, պարտադիր մասնակցում է նաև ամբաստանյալը, որը ներկայացրել է բողոքը, կամ որի շահերի պաշտպանության համար բողոք է ներկայացրել պաշտպանը կամ օրինական ներկայացուցիչը:

16. Մեջբերված նորմերի առնչությամբ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ մրցակցության սկզբունքն արդար դատաքննության հիմնարար իրավունքի

բաղկացուցիչ տարր է: Այդ սկզբունքի իմաստով դատաքննության ժամանակ և՛ մեղադրանքի, և՛ պաշտպանության կողմերի համար պետք է հավասարապես երաշխավորվի ողջամիտ հնարավորություն՝ իր գործը ներկայացնելու այնպիսի պայմաններում, որը նվազ բարենպաստ չի լինի, քան այն հնարավորությունը, որը տրամադրվում է մրցակից կողմին: Այսինքն՝ մրցակցության սկզբունքն անհրաժեշտ է դիտարկել կողմերի հավասարության հիմնարար պահանջի հետ միասնության մեջ, ինչը, ի թիվս այլոց, ենթադրում է, որ կողմը պետք է հնարավորություն ունենա պաշտպանելու իր իրավունքներն ու օրինական շահերը, ծանոթանալու մյուս կողմի ներկայացրած փաստարկներին և ապացույցներին: Նշվածն արդար դատական քննության իրավունքի ապահովման կարևորագույն նախապայման է, քանի որ քննության իրականացումն առանց կողմերի հավասար տեղեկացվածության նշանակում է մրցակցության և կողմերի հավասարության հիմնարար դրույթների անհամաչափ ճնշում և առարկայազրկում: Այլ խոսքով՝ ինչպես առաջին ատյանի դատարանը, այնպես էլ նշյալ դատարանի կայացրած դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը դատական ստուգման ենթարկելիս Վերաքննիչ քրեական դատարանը պարտավոր են միջոցներ ձեռնարկել կողմերի հավասարության և մրցակցային դատավարության ապահովման ուղղությամբ: Այսպիսով, դատական քննությանը մասնակցելը կողմերի՝ քրեադատավարական օրենքով երաշխավորված իրավունքն է, իսկ նշված իրավունքի ապահովման պարտականությունը կրում է դատարանը *(տե՛ս, mutatis mutandis, Ամալյա Ղարիբյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԿԴ/0008/06/11, Նոյ Մուսայելյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԿԴ1/0007/06/12, Հակոբ Սկրտչյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ ԵԿԴ/0230/01/14, Ռաֆայել Քոթանջյանի գործով 2016 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ ԿԴ3/0010/06/15 որոշումները):*

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 17-ի դատական նիստի ժամանակ, մինչև դատաքննությունն ավարտելը, դատարանը կողմերին հնարավորություն է ընձեռել հանդես գալու դատաքննությունը լրացնելու վերաբերյալ միջնորդություններով: Ամբաստանյալ Արմեն Մուրադյանը հայտարարել է, որ ցանկանում է միջնորդություն ներկայացնել և խնդրել է ժամանակ տրամադրել՝ պաշտպանի հետ խորհրդակցելու ու միջնորդություն ներկայացնելու համար՝ միաժամանակ նշելով, որ վատառողջ է և ի վիճակի չէ շարունակել մասնակցել դատական նիստին:

Ամբաստանյալի միջնորդությունը բավարարվել է, և հայտարարվել է 5 րոպե ընդմիջում: Դատական նիստը վերսկսվելուց հետո նախագահող դատավորը հայտարարել է, որ ամբաստանյալը չի ներկայացվել դատական նիստին, ինչի կապակցությամբ պաշտպանը տեղեկացրել է, որ ամբաս-

տանյալը չի կարող ներկայանալ դատական նիստին, քանի որ վատ է զգացել: Միաժամանակ հայտնել է, որ վերջինս ցանկանում է առանձնազրույց ունենալ իր հետ՝ միջնորդություն ներկայացնելու կապակցությամբ: Արդյունքում՝ Վերաքննիչ դատարանը բավարարել է պաշտպանական կողմի միջնորդությունը և դատական նիստը հետաձգել է՝ նշանակելով 2017 թվականի օգոստոսի 29-ին, ժամը 13:00-ին (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Նշանակված դատական նիստը բացվել է 2017 թվականի օգոստոսի 29-ին, ժամը 13:24-ին: Նախագահող դատավորը հայտարարել է, որ դատական նիստին ամբաստանյալ Ա.Մուրադյանը չի ներկայացվել, քանի որ, համաձայն ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ուղեկցող գումարտակի ներկայացուցչի բանավոր հայտարարության, տեխնիկական խնդիրների պատճառով ամբաստանյալին հնարավոր չի եղել ներկայացնել դատական նիստին: Դատական նիստը հետաձգվել է մինչև ամբաստանյալին ներկայացնելը և վերսկսվել ժամը 13:30-ին, որի ընթացքում ուղեկցող գումարտակի ներկայացուցիչը հայտարարել է, որ ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿ հիմնարկում իրենց տեղեկացրել են, որ ամբաստանյալ Ա.Մուրադյանը հրաժարվել է ներկայանալ դատական նիստին:

Ամբաստանյալ Ա.Մուրադյանի պաշտպանը հայտնել է, որ ամբաստանյալի՝ դատական նիստին չներկայանալու պատճառն իրեն հայտնի չէ: Իր վերջին տեղեկություններով Ա.Մուրադյանը դատական նիստին մասնակցելու է և իր առողջական վիճակի վերաբերյալ նոր փաստաթուղթ է ներկայացնելու, քանի որ նրա մոտ նոր հիվանդություն է հայտնաբերվել: Արդյունքում՝ պաշտպանը խնդրել է դատական նիստը հետաձգել և ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ ամբաստանյալի մասնակցությունն ապահովելու համար՝ միաժամանակ փաստելով, որ որևէ գրավոր փաստաթուղթ չի ներկայացվել այն մասին, որ ամբաստանյալը հրաժարվում է իրացնել իր իրավունքը:

Սինչդեռ Վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել դատական նիստը շարունակել ամբաստանյալի բացակայությամբ՝ այն հիմնավորմամբ, որ ամբաստանյալի չներկայանալու վերաբերյալ որևէ հիմնավոր պատճառ չի ներկայացվել, նախորդ դատական նիստին ամբաստանյալը միջնորդել է ժամանակ տրամադրել՝ նոր ապացույցներ ներկայացնելու համար, ինչը դատարանի կողմից բավարարվել էր, սակայն ամբաստանյալը, հրաժարվելով դատական նիստին ներկայանալուց, ինքն իրեն զրկել է կամ դրանով դիրքորոշում է հայտնել, որ որևէ նոր ապացույց ներկայացնելու ցանկություն չունի (տե՛ս սույն որոշման 8.1-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն արձանագրելով, որ այլ միջնորդություններ չկան դատաքննությունը լրացնելու վերաբերյալ, դատական նիստը հայտարարել է փակված և ժամը 13:38-ին հեռացել խորհրդակցական սենյակ՝ դատական ակտ կայացնելու: Դատական ակտը հրապարակվել է նույն օրը՝ ժամը 13:43-ին (տե՛ս սույն որոշման 8.2-րդ կետը):

Ըստ ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿ հիմնարկի պետի՝ 2017 թվականի սեպտեմբերի 4-ի գրության՝ 2017 թվականի օգոստոսի 29-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության գումարտակի աշխատակիցները կալանավոր Ա.Մուրադյանին Վերաքննիչ դատարան դատական նիստի տեղափոխելու համար ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿ հիմնարկ են ներկայացել և վերջինիս դուրս են գրել ժամը 14:50-ին: Նույն գրության համաձայն՝ վերոնշյալ դատական նիստի կարգագիրը ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿ հիմնարկ է ներկայացվել Երևան քաղաքի վարչության գումարտակի աշխատակիցների միջոցով՝ 2017 թվականի օգոստոսի 29-ին (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

18. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով սույն որոշման 15-րդ կետում մեջբերված նորմերի և 16-րդ կետում վկայակոչված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի նյութերում բացակայում է ամբաստանյալի՝ Վերաքննիչ դատարանի դատական նիստին մասնակցելուց հրաժարվելու մասին որևէ կերպ ձևակերպված տվյալ: Ավելին՝ Ա.Մուրադյանի պաշտպանը դատարանի ուշադրությունն է հրավիրել այդ հանգամանքի վրա, ինչպես նաև հայտնել, որ իր վերջին տվյալներով Ա.Մուրադյանը պետք է ներկայանար դատական նիստին և իր առողջական վիճակի վերաբերյալ նոր փաստաթուղթ ներկայացներ, քանի որ նրա մոտ նոր հիվանդություն է ախտորոշվել: Նման պայմաններում միայն ուղեկցող գումարտակի ներկայացուցչի հայտարարությունը՝ առանց դրա պարզաբանման ուղղությամբ պատշաճ միջոցներ ձեռնարկելու, չէր կարող իրավաչափ հիմք համարվել ամբաստանյալի բացակայությամբ գործի քննությունը շարունակելու համար:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը պատշաճորեն չի ապահովել ամբաստանյալ Ա.Մուրադյանի՝ դատական նիստին մասնակցելու, դատաքննությունը լրացնելու վերաբերյալ միջնորդություն հարուցելու և նյութեր ներկայացնելու իրավունքը: Նշված խախտումներն իրենց հերթին հանգեցրել են ամբաստանյալ Ա.Մուրադյանի արդար դատաքննության իրավունքի խախտման:

19. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել ՀՀ Սահմանադրության 63-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 23-րդ, 65-րդ հոդվածների խախտումներ, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա դատական ակտը բեկանելու հիմք է:

20. Ինչ վերաբերում է բողոքաբերի՝ սույն որոշման 11-11.1.-րդ կետերում բարձրացրած փաստարկներին, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանց հնարավոր է անդրադառնալ միայն սույն որոշմամբ արձանագրված խախտումը վերացնելուց հետո:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 398-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Արմեն Հայկի Մուրադյանի վերաբերյալ Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մայիսի 10-ի դատավճռով անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 29-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Արմեն Հայկի Մուրադյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

33.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴ/0061/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
	Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝	
պաշտպան	Կ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
դատախազ	Ա.ԾԱՀԲԱԶՅԱՆԻ

2017 թվականի դեկտեմբերի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հունիսի 26-ի որոշման դեմ Սամվել Քյարամի Ավդոյանի պաշտպաններ Հունան Քաբայանի և Կարեն Հովհաննիսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչի պաշտոնակատար Ա.Կարապետյանի՝ 2014 թվականի նոյեմբերի 6-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 62227514 քրեական գործը:

2015 թվականի ապրիլի 1-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ա.Կարապետյանը (այսուհետ՝ նաև Քննիչ) որոշում է կայացրել Սամվել Քյարամի Ավդոյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ վերջինիս արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ և 315-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերի բացակայության հիմքով:

2015 թվականի ապրիլի 9-ին ՀՀ գլխավոր դատախազության ՀԿԳ քննության վարչության ավագ դատախազ Ա.Շահբազյանը որոշում է կայացրել քրեական հետապնդում չիրականացնելու վերաբերյալ վերոհիշյալ որոշումը վերացնելու մասին:

2. Քննիչի՝ 2015 թվականի ապրիլի 20-ի որոշմամբ Ս.Ավդոյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով:

2015 թվականի ապրիլի 27-ին Քննիչը որոշում է կայացրել թիվ 62227514 քրեական գործից մաս անջատելու, դրան թիվ 62209115 համարը շնորհելու, այն վարույթ ընդունելու և նախաքննության կատարմանը ձեռնամուխ լինելու մասին:

2015 թվականի մայիսի 11-ին ՀՀ գլխավոր դատախազության ՀԿԳ քննության վարչության ավագ դատախազ Ա.Շահբազյանը որոշում է կայացրել թիվ 62209115 քրեական գործով մեղադրական եզրակացությունը հաստատելու և գործը դատարան ուղարկելու մասին:

3. Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2015 թվականի նոյեմբերի 25-ի դատավճռով ճանաչվել և հռչակվել է Ս.Ավդոյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում՝ հանցակազմի բացակայության և ապացույցների անբավարարության պատճառաբանությամբ:

4. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2016 թվականի մարտի 22-ին որոշում է կայացրել գործով մեղադրող Ա.Շահբազյանի վերաքննիչ բողոքը մասնակիորեն բավարարելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 25-ի դատավճիռը բեկանելու և գործը նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության ուղարկելու մասին:

5. Ս.Ավդոյանի պաշտպաններ Հ.Քաբայանը և Կ.Հովհաննիսյանը Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի մարտի 22-ի որոշման դեմ բերել են վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 23-ի որոշմամբ բավարարվել է մասնակիորեն, Ս.Ավդոյանի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի մարտի 22-ի որոշումը բեկանվել է և գործն ուղարկվել նույն դատարան՝ նոր քննության:

6. Վերաքննիչ դատարանը 2017 թվականի հունիսի 26-ին որոշել է մեղադրող Ա.Շահբազյանի վերաքննիչ բողոքը բավարարել, Առաջին ատյանի

դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 25-ի դատավճիռը բեկանել, Ս.Ավդոյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ պատիժ նշանակել տուգանք՝ 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով՝ իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող պաշտոններ զբաղեցնելու իրավունքի զրկմամբ՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

7. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 26-ի որոշման դեմ Ս.Ավդոյանի պաշտպաններ Հ.Բաբայանը և Կ.Հովհաննիսյանը բերել են վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 2-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

8. Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի ապրիլի 20-ի որոշմամբ Ս.Ավդոյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով՝ այն բանի համար, որ *«(...) [Ն]ա, զբաղեցնելով ՀՀ ոստիկանության նախկին քննչական գլխավոր վարչության Արմավիրի մարզային քննչական բաժնի Վաղարշապատի քննչական բաժանմունքի ավագ քննիչի պաշտոնը, ունենալով ոստիկանության մայորի հատուկ կոչում, լինելով մշտապես իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ, անձնական այլ դրդումներով կատարել է պաշտոնեական կեղծիք՝ 2014 թվականի սեպտեմբերի 21-ին կազմել և հանձնել, շրջանառության մեջ է դրել պաշտոնեական կեղծ փաստաթուղթ:*

Այսպես.

Սամվել Ավդոյանը որպես հերթապահ քննիչ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածով սահմանված կարգով հանցագործության մասին հաղորդման քննարկման և լուծման իր լիազորությունների շրջանակներում 2014 թվականի սեպտեմբերի 21-ին ոստիկանության Վաղարշապատի բաժնի հերթապահ մասից տեղեկանալով բնակարանից գողություն կատարելու վերաբերյալ Թեհմինա Արգամի Գրիգորյանի ահազանգի մասին, օպերատիվ-քննչական խմբի կազմում մեկնել է հանցագործության դեպքի վայր հանդիսացող Արմավիրի մարզի Նորակերտ գյուղի 1-ին շենքի 6-րդ բնակարան: Սամվել Ավդոյանը, հանդիսանալով դեպքի վայրի զննության ընթացքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված դատավարական գործողությունների իրականացման ընթացքի, արդյունքների ճշգրիտ և ըստ էության արձանագրման համար պատասխանատու պաշտոնատար անձ, փորձագետի՝ դեպքի վայր ժամանելուն չսպասելու և ժամանակ չվատնելու նկատառումներով, ինչպես նաև առանց փորձագետի

մասնակցության դեպքի վայրը զննելու համար նյութերի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի, քննչական բաժնի ղեկավարության բացասական վերաբերմունքին չարժանանալու և կարգապահական պատասխանատվության չենթարկվելու անձնական դրդումներից ելնելով, դեպքի վայրի զննության՝ 2014 թվականի սեպտեմբերի 21-ի արձանագրությունում մտցրել է ակնհայտ կեղծ տեղեկություններ: Մասնավորապես, նույն օրը՝ ժամը 14:40-ից 15:30-ն ընկած ժամանակահատվածում վերը նշված հասցեի բնակարանում դեպքի վայրի զննություն կատարելու ընթացքում խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի պահանջները՝ պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող դեպքի վայրի զննության արձանագրությունում մտցրել է դեպքի վայր չժամանած և զննությանն իրականում չմասնակցած ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության փորձաքրեագիտական խմբի փորձագետ Արմեն Ղարիբյանի՝ որպես զննության մասնակցի, ինչպես նաև վերջինիս՝ որպես փորձագետի իրավունքներն ու պարտականություններն իր կողմից բացատրելու և պարտականությունները չկատարելու համար նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացնելու վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ, այնուհետև նշված արձանագրությունը կցելով դեպքի առթիվ նախապատրաստվող նյութերին՝ այն դրել է շրջանառության մեջ» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 315-316):

9. Հետազոտելով գործով ձեռք բերված ապացույցները՝ Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում, ի թիվս այլնի, արձանագրել է. *«Սամվել Ավդոյանն առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չճանաչեց և դատարանին հայտնեց, որ (…) Հերթական անգամ, սահմանված գրաֆիկով, 2014 թվականի սեպտեմբերի 21-ին հանդիսացել է Վաղարշապատի քննչական բաժանմունքի հերթապահ քննիչը: Նույն օրը՝ կեսօրին, ոստիկանության հերթապահ մասի տեսուչ-հերթապահ Արման Վարդանյանից տեղեկացել է բնակարանային գողության դեպքի մասին: Դրանից հետո դուրս է եկել աշխատասենյակից, մոտեցել ոստիկանության բաժնի հերթապահ մասին և հաշվի առնելով, որ գործող կարգի համաձայն փորձագետին դեպքի վայր հրավիրելու պարտականությունը կատարում է հերթապահ մասի անձնակազմը, ուստի ինքը հերթապահ մասից տեղեկացել է, որ դեպքի վայր է ժամանելու փորձագետ Արմեն Ղարիբյանը: Այնուհետև, ահազանգի հիման վրա օպերատիվ-քննչական խմբի կազմում (…) մեկնել է դեպքի վայր (…): Ընդ որում դեպքի վայր է ուղևորվել Մ.Խաչատրյանի հետ և նրան հայտնել է փորձագետ Ա. Ղարիբյանի՝ դեպքի վայր ժամանման մասին: Դեպքի վայրում (…) ձեռնամուխ են եղել դեպքի վայրի զննությանը՝ մինչև փորձագետի դեպքի վայր ժամանելը: Այդ կապակցությամբ լրացրել է դեպքի վայրի զննության արձանագրության ձևաթղթի առաջին էջը՝ հիշյալ քննչական գործողության մասնակիցների և ներկաների տվյալներով, այդ թվում՝*

ձևաթղթի վրա նախատեսված տողում լրացրել է նաև փորձագետ Ա.Ղարիբյանի անունը, կրկին պնդում է՝ նախապես տեղեկացած լինելով դեպքի վայր վերջինիս ժամանման մասին: Զննության տվյալներն արձանագրելուց հետո, արձանագրությունը բարձրաձայն ընթերցել է, որից հետո, քանի որ ինքն ապամոնտաժել է բնակարանի մուտքի դռան փականի միջուկը՝ օտար մարմնի կամ հարմարեցված բանալու հնարավոր ներգործության հանգամանքը հետագայում պարզելու համար, այդ ընթացքում խնդրել է օպեր լիազոր Փայլակ Շմավոնյանին, որպեսզի մասնակիցներին ստորագրել տա արձանագրությունը՝ ձևաթղթում նախատեսված համապատասխան տեղերում: Փականի միջուկն ապամոնտաժելուց հետո, տեսնելով, որ դեպքի վայրի զննության արձանագրության նախանշված տեղերում ստորագրություններն առկա են, վերջում ստորագրել է ինքը և վերադարձել ոստիկանության Վաղարշապատի բաժին: Ճիշտ է, փորձագետ Ա.Ղարիբյանը չի ժամանել դեպքի վայր՝ իրեն անհայտ պատճառներով, և այդ հանգամանքն անուշադրության է մատնել, ուշադրություն չի դարձրել նաև այն հանգամանքին, որ դեպքի վայրի զննության արձանագրության՝ առաջին էջում նախատեսված տողում որպես գրառում մնացել է փորձագետ Ա.Ղարիբյանի անունը: Ինքն ընդունում է, որ մինչև փորձագետի դեպքի վայր ժամանելը նրա տվյալները լրացրել է արձանագրության նախանշված տողի վրա, սակայն կրկին պնդում է, որ նախապես տեղեկացված է եղել Ա.Ղարիբյանի դեպքի վայր ժամանման մասին և հաշվի առնելով Արմավիր քաղաքից մինչև Վաղարշապատ քաղաք, այնուհետև Նորակերտ գյուղ ընկած ճանապարհահատվածը՝ ավելի շուտ հասնելով՝ համոզված է եղել, որ փորձագետը կժամանի դեպքի վայր: (...) Վերջնական արդյունքում ինքը դեպքի վայրի զննության հիշյալ արձանագրությունում չի լրացրել մտացածին տվյալ, այսինքն ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության փորձաքրեագիտական խմբում աշխատում է ոստիկանության մայոր Ա.Ղարիբյանը, և փորձագետների միջև կատարված աշխատանքային բաշխման համաձայն, նա է սպասարկել էջմիածնին հարող համայնքները: (...) Հատկանշական է նաև, որ վարույթն իրականացնող մարմինը, 01.04.2015թ. որոշում է կայացրել իր նկատմամբ քրեական հետապնդում չհրականացնելու մասին՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով: (...) Ինքը՝ հաստատապես համոզված է եղել, որ փորձագետը գալու է, դրա համար էլ գրել է նրա տվյալները, նրա չգալը չի նշել, քանի որ դուրս է մնացել իր ուշադրությունից: Կարող էր հետո պատռել փոխել, սակայն չի արել, շահ չի ունեցել, պարզապես չի նկատել, որ փորձագետ չի եղել՝ տեղը բաց է մնացել: Եթե շահ ունենար, վարչություն կմտներ, կասեր, որ ստորագրի, և նա կաներ, կստորագրեր և հիմա չէր կանգնի դատարանի առջև: Այդ (...) պահին անուշադիր է եղել, ինքը կեղծիք չէր գնա (...):

Նախաքննական մարմնի կողմից Սամվել Քյարամի Ավդոյանին առաջադրված մեղադրանքի հիմքում դրվել են հետևյալ ապացույցները.

(…)

Քրեական գործի դատական քննությամբ վկա Արմեն Ղարիբյանը պնդեց իր նախաքննական ցուցմունքը և դատարանին հայտնեց, որ իր ստորագրությունը կեղծված է եղել: Դեպքի վայրից ահազանգ չի ստացել: Ինքը դեպքերի մասին տեղեկացվում է հեռախոսով հերթապահ մասի միջոցով: Ս.Ավդոյանի հետ ինքը գտնվել է նորմալ աշխատանքային հարաբերությունների մեջ: Թե ով է կեղծել իր ստորագրությունը, դա իր իրավասություններից դուրս է: (…) Փորձագետ ուզելու ահազանգ չի եղել, Ավդոյանը լավ քննիչ է:

(…) Վկա Փայլակ Բարիսի Շմավոնյանի ցուցմունքն այն մասին, որ (…) ոստիկանության Արմավիրի մարզային վարչության փորձաքրեագիտական խմբի փորձագետ Արմեն Ղարիբյանին ճանաչել է, սակայն իր հիշողության մեջ չի տպավորվել, որ վերջինս դեպքի օրը Թեհմինա Գրիգորյանի բնակարան ժամանած լինի:

Մինչ դեպքի վայր մեկնելը, քննիչին սպասել է ոստիկանության Վաղարշապատի բաժնի շենքի բակում, ուստի չի լսել, թե Սամվել Ավդոյանն ու հերթապահը ինչ են խոսել՝ փորձագետի կողմից դեպքի վայր ժամանելու մասին: (…) Քրեական գործի դատական քննությամբ վկա Փայլակ Շմավոնյանը պնդեց իր նախաքննական ցուցմունքը (…):

Վկա Գարիկ Հրայրի Հովհաննիսյանի ցուցմունքն այն մասին, որ 2010 թվականից աշխատում է ոստիկանության Վաղարշապատի բաժնում՝ որպես օպերլիազոր: Չի հիշում փորձագետը դեպքի վայր ժամանե՞լ է, զննությանը մասնակցե՞լ է, թե՞ ոչ: (…) Քրեական գործի դատական քննությամբ վկա Գարիկ Հովհաննիսյանը պնդեց իր նախաքննական ցուցմունքը (…):

Վկա Արման Գևորգի Վարդանյանի ցուցմունքով՝ այն մասին, որ 2011 թվականից աշխատում է ոստիկանության Վաղարշապատի բաժնում սկզբում որպես տեսուչ-հերթապահ, ապա՝ որպես ավագ տեսուչ-հերթապահ: (…) 2014 թվականի սեպտեմբերի 21-ին եղել է ոստիկանության Վաղարշապատի բաժնի հերթապահը: (…) Չի հիշում՝ Սամվել Ավդոյանը մինչ դեպքի վայր մեկնելը փորձագետի՝ դեպքի վայր մեկնելու անհրաժեշտության մասին իրեն տեղյակ պահել է, թե ոչ, սակայն անգամ իր կողմից այդ հանգամանքը մոռանալու և փորձագետին դեպքի վայր մեկնելու մասին չհայտնելու դեպքում Սամվել Ավդոյանը՝ որպես դեպքի վայր մեկնած քննիչ, պետք է հետևողական լիներ փորձագետի կողմից դեպքի վայր ժամանելու հարցում:

Քրեական գործի դատական քննությամբ վկա Ա.Վարդանյանը պնդեց իր նախաքննական ցուցմունքը և դատարանին հայտնեց, որ (…) Ս.Ավդոյանը չի ասել, դրա համար էլ ինքը չի կանչել փորձագետ:

(…) Քրեական գործի դատական քննությամբ վկա Թ.Գրիգորյանը դատարանին հայտնեց, որ մտածելով, թե իր կասը գողացել են, դիմել է ոստիկանություն: Ինքը չի խաբել: Եկել են, գրել, ինքը հարցերին է պատասխանել: Ս.Ավդոյանը հարցեր է տվել, նկարել, գրել: Փականը հանել է, որ տանի փորձաքննության (…): Գործը կարճվել է, ինքը վատ է զգում, որ իր պատճառով է եղել:

(…) Փորձաքննությանը տրամադրված՝ ՀՀ ոստիկանության ՔԳՎ Վաղարշապատի քննչական բաժնի ավագ քննիչ Ս.Ավդոյանի կողմից 2014 թվականի սեպտեմբերի 21-ին կազմված՝ դեպքի վայրի զննության մասին արձանագրության 4-րդ էջի ստորին «Ստորագրություններ» հատվածում՝ «3.Մասնագետ» տպագիր գրառման և ստորագրության դիմաց տեղավորված «Ա.Ղարիբյան» ձեռագիր գրառումը կատարվել է Ս.Ավդոյանի կողմից:

(…) Դատաձեռագրաբանական հանճաժողովային կրկնակի փորձաքննության թիվ 15-0174 եզրակացությունը, համաձայն որի, փորձաքննության ներկայացված՝ 2014 թվականի սեպտեմբերի 21-ի դեպքի վայրի զննության մասին արձանագրության առաջին թերթի դիմերեսի ստորին աջ մասում՝ «Ստորագրություն» տողագծի վրա և 2-րդ թերթի դարձերեսի ստորին մասում՝ «3.Մասնագետ» տպագիր գրառման դիմաց տեղավորված ստորագրությունները չեն կատարվել Արմեն Ղարիբյանի կողմից:

2014 թվականի սեպտեմբերի 21-ի՝ դեպքի վայրի զննության մասին արձանագրության 2-րդ թերթի դարձերեսի ստորին մասում՝ «3.Մասնագետ» տպագիր գրառման դիմաց տեղավորված «Ա. Ղարիբյան» ձեռագիր գրառումը կատարվել է Սամվել Ավդոյանի կողմից:

(…) Իրեղեն ապացույց ճանաչված՝ դեպքի վայրի զննության մասին 2014 թվականի սեպտեմբերի 21-ի արձանագրությունը, համաձայն որի՝ որպես զննությանը մասնակից փորձագետի տվյալներ լրացվել են ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության փորձագիտական խմբի փորձագետ Արմեն Ղարիբյանի տվյալները:

(…) Իրեղեն ապացույց ճանաչված՝ դեպքի վայրի զննության մասին 2014 թվականի սեպտեմբերի 21-ի արձանագրության զննության մասին արձանագրությունը, համաձայն որի՝ զննության է ենթարկվել Վաղարշապատի քննչական բաժանմունքի ավագ քննիչ Սամվել Ավդոյանի կողմից 2014 թվականի սեպտեմբերի 21-ին կազմված՝ դեպքի վայրի զննության մասին արձանագրությունը, որի ընթացքում պարզվել է, որ արձանագրության 1-ին էջի և 4-րդ էջի վրա որպես զննությանը մասնակից փորձագետի տվյալներ լրացվել են ոստիկանության Արմավիրի մարզային վարչության փորձաքրեագիտական խմբի փորձագետ Արմեն Ղարիբյանի տվյալները, բացի այդ, 1-ին էջի վրա Սամվել Ավդոյանը նշում է կատարել Արմեն Ղարիբյանին՝ որպես փորձագետի իրավունքներն ու պարտականությունները բացատրելու և պար-

տականությունները չկատարելու համար նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացնելու վերաբերյալ:

(…) Բջջային հեռախոսահամարների մուտքային և ելքային զանգերի վերծանումների զննության մասին 2015 թվականի մարտի 31-ի արձանագրությունը, համաձայն որի, 2014 թվականի սեպտեմբերի 21-ին՝ Արմավիրի մարզի Նորակերտ գյուղի Բարեկամության փողոցի 1-ին շենքի 6-րդ բնակարանի զննությանը նախորդած ժամանակահատվածում, Արմեն Ղարիբյանի 093-52-16-12 բջջային հեռախոսահամարին զանգահարել են միայն 077-33-02-09 բջջային հեռախոսահամարից, որն օգտագործում է Արմեն Ղարիբյանի եղբայրը՝ Նորայր Ղարիբյանը (…):

10. Վերլուծելով հետազոտված ապացույցները՝ Առաջին ատյանի դատարանը փաստել է. «*(…) Համակցության մեջ գնահատելով նախաքննությամբ ձեռք բերված և դատական քննությամբ հետազոտված ապացույցները, դատարանը, գտնում է, որ Ս.Ավդոյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 314 հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը հիմնավորված չէ, ավելին, նրա արարքում բացակայում է նշված հոդվածի հանցակազմը, մասնավորապես դրա բաղկացուցիչ մաս հանդիսացող սուբյեկտիվ կողմը:*

(…)

(…) գործով ձեռք չեն բերվել բավարար ապացույցներ՝ հիմնավորելու Ս.Ավդոյանին մեղսագրվող արարքը:

(…) Գործի հանգամանքները, դատարանի համոզմամբ, խեղաթյուրվել են, իրավական գնահատականը և որակումը տրված են ոչ ճիշտ: Գործի հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն չի կատարվել: Բացակայում է գործին վերաբերելի և փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությունը, արդյունքում՝ մեղադրանքն ապացուցված չէ, բացակայում է նաև հանցակազմը:

(…)

Քրեական գործի քննությամբ ձեռք բերված և դատական քննությամբ հետազոտված որևէ ապացույցով չի հիմնավորվել այն, որ Ս.Ավդոյանին վերագրվող որևէ գործողություն նա կատարել է անձնական, շահադիտական դրդումներով, կամ այլ նպատակով կամ խմբային շահերից ելնելով, ինչը հանդիսանում է պարտադիր և միաժամանակյա պայման՝ տեղի ունեցած հանցագործությունը հիմնավորված համարելու և փաստելու համար:

(…)

(…) [Դ]ատարանը գտնում է, որ ամբաստանյալ Ս.Ավդոյանի մեղքը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 314 հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքում հիմնավորված չէ, վերջինիս արարքում բացակայում է հանցակազմը, գործի ապացույցներն անբավարար են՝ մեղադրական դատական ակտ կայացնելու համար, նա ենթակա է արդարացման» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 150-157):

11. Վերաքննիչ դատարանն իր՝ 2017 թվականի հունիսի 26-ի որոշման մեջ արձանագրել է. *«(...) [Ա]պացույցների ուսումնասիրությամբ Վերաքննիչ դատարանը հաստատված է համարում այն փաստական հանգամանքները, համաձայն որոնց՝* [նշվում են առաջադրված մեղադրանքի հիմքում ընկած փաստերը]:

(...) [Այդ] փաստական հանգամանքները հաստատվել են ամբաստանյալ Սամվել Ավդոյանի, վկաներ Արմեն Ղարիբյանի, Փայլակ Շմավոնյանի, Գարիկ Հովհաննիսյանի, Արման Վարդանյանի, Թեհմինա Գրիգորյանի, Գոհար Թադևոսյանի, Լյուսյա Պետրոսյանի, Ալվարդ Դավթյանի նախաքննական և դատարանում տված ցուցմունքներով, վկա Նորայր Ղարիբյանի նախաքննական ցուցմունքով, դատաձեռագրաբանական փորձաքննության թիվ 54251401 եզրակացությամբ, դատաձեռագրաբանական հանճաժողովային կրկնակի փորձաքննության թիվ 15-0174 եզրակացությամբ, իրեղեն ապացույց ճանաչված՝ դեպքի վայրի զննության մասին 2014թ. սեպտեմբերի 21-ի արձանագրությամբ, բջջային հեռախոսահամարների մուտքային և ելքային զանգերի վերծանումների զննության մասին 2015թ. մարտի 31-ի արձանագրությամբ, ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության՝ դեպքի վայրի զննություններում և քննչական գործողություններում մասնակցելու գրանցման մատյանի զննության մասին արձանագրությամբ:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ վերը նշված փաստական հանգամանքներով հերքվում են ամբաստանյալ Սամվել Ավդոյանի այն պատճառաբանությունները, որ ինքը դիտավորություն չի ունեցել փաստաթուղթ կեղծելու, ինչպես նաև՝ տեղյակ չի եղել, որ փորձագետ Արմեն Ղարիբյանն ի վերջո չի ժամանել դեպքի վայր, և այդ մասին տեղեկացել է միայն ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հրավիրվելուց հետո:

Վերաքննիչ դատարանը նման եզրահանգման է գալիս հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ փորձագետ Արմեն Ղարիբյանը դեպքի վայր ներկայանալիս պարտավոր էր աջակցություն ցույց տալու համար անհրաժեշտ ամբողջ ժամանակահատվածում գտնվել դատավարական գործողության կատարման վայրում և չլքել նշված գործողության կատարման վայրն առանց այն կատարող անձի՝ քննիչ Սամվել Ավդոյանի թույլտվության:

Հատկանշական է նաև այն, որ Սամվել Ավդոյանի կողմից դեպքի վայրի զննության մասին 2014թ. սեպտեմբերի 21-ի արձանագրության մեջ փորձագետ Արմեն Ղարիբյանի տվյալները լրացվել են ոչ միայն առաջին, այլ նաև վերջին էջերում, որտեղ դատավարական գործողություններն ավարտելուց հետո նշված գործողությանը մասնակցած անձանց կողմից ստորագրությամբ հաստատվում է արձանագրությանը ծանոթանալու հանգամանքը:

Անդրադառնալով Առաջին ատյանի դատարանի այն դատողությանը, որ Սամվել Ավդոյանի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի

314-րդ հոդվածի հանցակազմը, մասնավորապես դրա բաղկացուցիչ մաս հանդիսացող սուբյեկտիվ կողմը, ապա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ նման դատողությունն անհիմն է, քանի որ քրեական գործով ձեռք բերված և Առաջին ատյանի դատարանում հետազոտված ապացույցներով, ինչպես նաև ներքին համոզմամբ կարելի է գալ եզրահանգման, որ Սամվել Ավդոյանը պաշտոնեական կեղծիքը կատարել է ուղղակի դիտավորությամբ՝ փորձագետի դեպքի վայր ժամանելուն չսպասելու և ժամանակ չվատնելու նկատառումներով, ինչպես նաև առանց փորձագետի մասնակցության դեպքի վայրը զննելու համար նյութերի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի, քննչական բաժնի ղեկավարության բացասական վերաբերմունքին չարժանանալու և կարգապահական պատասխանատվության չենթարկվելու անձնական դրդումներից ելնելով:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ նախաքննության մարմնի կողմից ամբաստանյալ Սամվել Ավդոյանի կատարած արարքը որակված է ճիշտ, և այն համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասին:

(...)

Վերաքննիչ դատարանն օբյեկտիվ ստուգման ու գնահատման ենթարկելով Սամվել Ավդոյանի կողմից կատարված հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, գործի կոնկրետ հանգամանքները, հանցագործության կատարման շարժառիթները, եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, դրանք համադրելով ամբաստանյալի անձը բնութագրող տվյալների, նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների հետ, պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայության պայմաններում գտնում է, որ Սամվել Ավդոյանի նկատմամբ պատիժ պետք է նշանակվի տուգանքի ձևով, ինչն արդարացի է և համապատասխանում է նրա կատարած հանցագործության ծանրությանը և հանցավորի անձին *(...)»* (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթեր 26-50):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

12. Բողոքի հեղինակները գտնում են, որ Առաջին ատյանի դատարանի արդարացման դատավճիռը հիմնավորված է և օրինական, իսկ Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 26-ի որոշումն անօրինական է, չհիմնավորված և չպատճառաբանված, այն կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի էական խախտումներով:

Ի հիմնավորումն վերոհիշյալ փաստարկի՝ վճռաբեկ բողոքի հեղինակները, ի թիվս այլ հիմնավորումների, անդրադարձել են *Նարեկ Արմենակյա-*

ճի գործով Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԿԴ/0231/01/14 որոշման մեջ ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված նորմին տրված մեկնաբանությանը, և կատարելով համեմատական վերլուծություն՝ փաստարկել են, որ Ս.Ավդոյանի գործողություններում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածով սահմանված հանցակազմը:

13. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերները խնդրել են բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 26-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 25-ի դատավճռին կամ գործը վերադարձնել ստորադաս դատարան՝ այլ կազմով նոր քննության:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Ս.Ավդոյանին մեղսագրված արարքը արդյոք ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով չի՞ համարվում նվազ կարևոր:

15. ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ *«Քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանքը, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Արարքի հանցավորությունը, դրա պատժելիությունը և քրեաիրավական այլ հետևանքները որոշվում են միայն քրեական օրենքով»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Անձը ենթակա է քրեական պատասխանատվության միայն հանրության համար վտանգավոր այնպիսի գործողության կամ անգործության և հանրության համար վտանգավոր հետևանքների համար, որոնց վերաբերյալ նրա մեղքը հաստատված է իրավասու դատարանի կողմից»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցագործություն է համարվում մեղավորությամբ կատարված՝ հանրության համար վտանգավոր այն արարքը, որը նախատեսված է սույն օրենսգրքով:

2. Հանցագործություն չի համարվում այն գործողությունը կամ անգործությունը, որը թեև ձևականորեն պարունակում է սույն օրենսգրքով նախատեսված որևէ արարքի հատկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով հասարակական վտանգավորություն չի ներկայացնում, այսինքն՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը կամ պետությանը էական վնաս չի պատճառել և չէր կարող պատճառել»:

16. Մեջբերված նորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Նարեկ Արմենակյանի* գործով որոշման շրջանակներում՝ արտա-

հայտելով հետևյալ իրավական դիրքորոշումները. «*Հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի ու բնույթի հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Գ.Մաղաքյանի գործով որոշման մեջ՝ ճևավորելով հետևյալ իրավական դիրքորոշումը. «Արարքի հանրային վտանգավորության բնույթը հանցագործության որակական կողմն է, այն որոշվում է մեղքի ճևի և տեսակի, հանցագործության նպատակի և շարժառիթի, ինչպես նաև քրեական օրենսդրությամբ պահպանվող հասարակական հարաբերության՝ հանցանքի կատարման պահին ունեցած սոցիալական նշանակության վերաբերյալ փաստական տվյալների ամբողջությամբ:*

Արարքի հանրային վտանգավորության աստիճանի որոշման ժամանակ դատարանը պետք է բացահայտի կատարված հանցագործությամբ պատճառված վնասի չափը, հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը (...)» (տե՛ս Գարուշ Նորիկի Մաղաքյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԴ/0029/01/08 որոշման 14-րդ կետը):

Վճռաբեկ դատարանը փաստել է նաև, որ հանցագործության հանրային վտանգավորության տիպային բնութագիրն արտացոլվում է օրենսդրի կողմից սահմանված սանկցիայում, իսկ յուրաքանչյուր կոնկրետ գործով արարքի հանրային վտանգավորության գնահատականը դատարանի կողմից կարող է որոշվել կոնկրետ հանցագործության տարրերի առանձնահատկությունների, դրա կատարման հանգամանքների, հանցավորի անձնավորության, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների հիման վրա (տե՛ս Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 39-րդ կետը):

(...) Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի բովանդակությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանրային վտանգավորությունը հանդիսանում է հանցագործության պարտադիր հատկանիշներից մեկը: Ընդ որում, ՀՀ քրեական օրենսգրքի վերոգրյալ հոդվածի 2-րդ մասի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը հանցագործություն է համարում միայն հանրային (հասարակական) վտանգավորության որոշակի աստիճան ունեցող արարքը:

Քրեական իրավունքը պաշտպանում է հասարակական հարաբերությունները վերջիններիս էական վնաս պատճառելուց: Ուստի որևէ արարքի հատկանիշների միայն ճևական համընկնումը քրեական օրենքով արգելված արարքի հատկանիշների հետ՝ չի կարող հանգեցնել այդ արարքը հանցավոր ճանաչելուն, եթե քրեական օրենքով պահպանվող հասարակական հարաբերություններին դրանով էական վնաս չի պատճառվել և չէր կարող պատճառվել: Այդպիսի արարքը պետք է ճանաչվի քրեաիրավական առումով նվազ կարևոր:

Վերոգրյալից հետևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով արարքը դիտարկվում է որպես նվազ կարևոր և չի համարվում հանցագործություն հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

1) այն ձևականորեն պարունակում է քրեական օրենքով նախատեսված որևէ արարքի հատկանիշներ,

2) չի ներկայացնում հասարակական (հանրային) վտանգավորություն, այսինքն՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը կամ պետությանը էական վնաս չի պատճառել և չէր կարող պատճառել:

(...) Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ հանրային վտանգավորությունը՝ որպես հանցագործության նյութական հատկանիշ, ունի որակական և քանակական արտահայտություն. հանրային վտանգավորության որակական արտահայտությունը հանրային վտանգավորության բնույթն է, իսկ քանակականը՝ հանրային վտանգավորության աստիճանը (տե՛ս mutatis mutandis Գ.Մաղաքյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԴ/0029/01/08 որոշման 14-րդ կետը):

Այդ համատեքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ արարքի նվազ կարևոր լինելու հարցը յուրաքանչյուր գործով որոշվում է ինքնուրույն, սակայն միևնույն ժամանակ այդ հարցի լուծման հիմքում պետք է դրվեն ենթադրյալ հանցագործության որակական և քանակական կողմերը բնութագրող գործոնները (մեղքի ձև և տեսակ, հանցագործության նպատակ ու շարժառիթ, հանցագործությամբ պատճառված վնասի չափ, հանցագործության կատարման եղանակ և այլն): Ընդ որում, միայն դրանց համակցությունն է հնարավորություն տալիս որոշելու արարքի նվազ կարևոր լինելը կամ չլինելը:

(...) Վերոգրյալի լույսի ներքո Վճռաբեկ դատարանը փաստում է, որ արարքի նվազ կարևոր լինելու հարցը լուծելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նվազ կարևոր կարող է լինել, որպես կանոն, դիտավորյալ արարքը, ընդ որում, ուղղակի դիտավորությամբ կատարված: Արարքը կատարողի գիտակցությունը և կամքը պետք է ուղղված լինի հասնելու հենց այն արդյունքին, որը հանդիսանում է կատարողի գործողության կամ անգործության հետևանք: Եվ հենց այս տեսանկյունից պետք է գնահատական տրվի, թե արդյո՞ք արարքը քրեաիրավական առումով նվազ կարևոր է, թե՞ ոչ: Եթե արարքը կատարողի դիտավորությունը ուղղված է եղել էական վնաս պատճառելուն, սակայն նրա կամքից անկախ պատճառներով դա նրան չի հաջողվել, ապա կատարված արարքը չի կարող համարվել նվազ կարևոր (անձի դիտավորության և փաստացի կատարածի անհամապատասխանության դեպքում պատասխանատվություն է առաջանում հանցափորձի համար): Այլ կերպ ասած՝ արարքը կատարողի կամքը և գիտակցությունը պետք է ուղղված լինեն հենց ոչ էական վնասի առաջացմանը: Ընդ որում, դա վերաբե-

րում է վնասի բոլոր տեսակներին (նյութական, ֆիզիկական և այլն), և եթե արարքի հետևանք հանդիսացող վնասի մի տեսակն աննշան է, իսկ մյուսը՝ էական, ապա այդ դեպքում արարքը չի կարող համարվել նվազ կարևոր:

Հարկ է ընդգծել նաև, որ ենթադրյալ հանցավոր արարքի սուբյեկտի հատկանիշները (անչափահաս, պաշտոնատար անձ լինելը և այլն) չպետք է ազդեն նրա կատարած արարքի նվազ կարևոր լինելու հարցը որոշելու վրա, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ անհրաժեշտ է գնահատել ոչ թե անձի, այլ արարքի հանրային վտանգավորությունը:

Այդ համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ արարքի նվազ կարևորությունը կարող են պայմանավորել միայն այն հատկանիշները, որոնք արտահայտվել են կատարված արարքի մեջ: Իսկ հանգամանքները, որոնք չեն արտահայտվել արարքի մեջ (դրսևորած վարքագիծը մինչ ենթադրյալ հանցավոր արարքի կատարումը, զղջալը, վնասը կամովին հատուցելը, ընտանեկան դրությունը և այլն), արարքի նվազ կարևորության հարցը լուծելիս հաշվի չպետք է առնվեն:

(...) Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ արարքի նվազ կարևոր լինելու հարցը լուծելիս, ի թիվս այլ հանգամանքների, անհրաժեշտ է հաշվի առնել.

ա) պատճառված վնասը,

բ) արարքի կատարման եղանակը,

գ) մեղքի ձևը և տեսակը,

դ) շարժառիթը և նպատակը (տե՛ս *Նարեկ Արմենակյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0231/01/14 որոշման 13-16-րդ կետերը):

17. Սույն գործի նյութերից երևում է, որ, ի թիվս այլնի, սույն որոշման 9-րդ կետում մատնանշված ապացույցների վերլուծության արդյունքում Առաջին ատյանի դատարանը եկել է այն եզրահանգման, որ ամբաստանյալ Ս.Ավդոյանի մեղքը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքում հիմնավորված չէ, վերջինիս արարքում բացակայում է հանցակազմը, գործի ապացույցներն անբավարար են մեղադրական դատական ակտ կայացնելու համար, և նա ենթակա է արդարացման (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

Իսկ Վերաքննիչ դատարանը, չհամաձայնելով Առաջին ատյանի դատարանի կողմից արված դատողություններին, իր հերթին արձանագրել է, որ նախաքննության մարմնի կողմից Ս.Ավդոյանին մեղսագրված արարքը որակված է ճիշտ, և այն համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասին: Ի թիվս այլ հիմնավորումների՝ Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով Առաջին ատյանի դատարանի այն դատողությանը, որ Ս.Ավդոյանի արարքում բացակայում է համապատասխան

հանցակազմի սուբյեկտիվ կողմը, արձանագրել է, որ այդպիսի դատողությունն անհիմն է, և նշել է, որ Ս.Ավդոյանը պաշտոնեական կեղծիքը կատարել է ուղղակի դիտավորությամբ՝ փորձագետի դեպքի վայր ժամանելուն չսպասելու և ժամանակ չվատնելու նկատառումներով, ինչպես նաև առանց փորձագետի մասնակցության դեպքի վայրը զննելու համար նյութերի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի, քննչական բաժնի ղեկավարության բացասական վերաբերմունքին չարժանանալու և կարգապահական պատասխանատվության չենթարկվելու անձնական դրդումներից ելնելով: Արդյունքում Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով, ի թիվս այլնի, Ս.Ավդոյանին մեղսագրված արարքի հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը, այդ թվում՝ գործի կոնկրետ հանգամանքները, հանցագործության կատարման շարժառիթները, եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, եզրահանգել է, որ Ս.Ավդոյանի նկատմամբ պետք է նշանակվի տուգանքի ձևով պատիժ, ինչն արդարացի է և համապատասխանում է նրա կատարած հանցագործության ծանրությանը և հանցավորի անձին (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

18. Սույն որոշման 15-16-րդ կետերում շարադրված վերլուծությունը կիրառելով սույն որոշման 8-11-րդ, ինչպես նաև 17-րդ կետերում մեջբերված փաստական հանգամանքների նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանը նախևառաջ արձանագրում է, որ անհիմն են Առաջին ատյանի դատարանի այն դատողությունները, որ Ս.Ավդոյանի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի սուբյեկտիվ կողմը, ինչպես նաև այն, որ գործով ձեռք բերված ապացույցները բավարար չեն Ս.Ավդոյանին մեղսագրված արարքին վերջինիս մասնակցությունը ապացուցված համարելու համար (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը): Վճռաբեկ դատարանը փաստում է, որ համապատասխան հետևությունների ոչ իրավաչափ լինելը հիմնավորվում է Վերաքննիչ դատարանի կողմից ներկայացված փաստարկներով, որոնք Վճռաբեկ դատարանի համոզմամբ՝ բավարար չափով հիմնավորված և պատճառաբանված են (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը): Այլ կերպ՝ Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է հայտնում Վերաքննիչ դատարանի այն հետևությանը, որ Ս.Ավդոյանին մեղսագրված փաստերը հաստատվում են սույն գործով ձեռք բերված և հետազոտված ապացույցներով: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ս.Ավդոյանին մեղսագրված արարքը չի համարվում հանցագործություն, քանի որ այն թեև ձևականորեն պարունակում է ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմերի հատկանիշները, սակայն իր նվազ կարևոր լինելու ուժով չի ներկայացնում հասարակական վտանգավորություն, այսինքն՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը կամ պետությանը էական վնաս չի պատճառել և չէր կարող պատճառել:

Վճռաբեկ դատարանի վերջին դիրքորոշումը հիմնավորվում է նրանով, որ տվյալ դեպքում Ս.Ավդոյանի կողմից կատարված արարքի հետևանքով դեպքի վայրի զննության իսկությունը կասկածի տակ չի առնվել, դրա լիարժեքությունը կամ օբյեկտիվությունը չի տուժել, հանցագործության մասին հաղորդման լուծման հարցում սխալ թույլ չի տրվել, դրանով չեն խախտվել հաղորդում տված անձի կամ այլ անձի իրավունքները, որևէ մեկը քրեական պատասխանատվությունից չի խուսափել, ավելին՝ գործի նյութերից երևում է, որ ՀՀ քննչական կոմիտեի՝ Արմավիրի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ա.Ումուրշատյանի՝ 2015 թվականի մարտի 26-ի որոշմամբ Թեհմինա Գրիգորյանի հաղորդման կապակցությամբ հարուցված թիվ 57200414 քրեական գործով վարույթը կարճվել է՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 274-276): Այլ կերպ՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Ս.Ավդոյանի կողմից կատարված արարքը ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը կամ պետությանը էական վնաս չի պատճառել և չէր կարող պատճառել: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ս.Ավդոյանին մեղսագրված արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով համարվում է նվազ կարևոր:

18.1. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Ս.Ավդոյանին վերագրված արարքը վերջինիս կողմից կատարված լինելու մասին փաստող բավարար ապացույցների, ինչպես նաև տվյալ արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի սուբյեկտիվ կողմի առկայության առնչությամբ Վերաքննիչ դատարանը հանգել է ճիշտ հետևության, սակայն անտեսել է, որ թեև Ս.Ավդոյանի արարքը ձևականորեն պարունակում է ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի հատկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով հասարակական վտանգավորություն չի ներկայացնում:

19. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով դատական ակտ կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի ոչ ճիշտ կիրառում: Այսինքն՝ թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված նյութական իրավունքի խախտում:

20. Նախորդ կետում նշված խախտումները, որոնք ազդել են գործի ելքի վրա, Վճռաբեկ դատարանին հիմք են տալիս բեկանելու Վերաքննիչ դատարանի դատական ակտը: Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թեև սույն գործով արդարացման դատավճիռ կայացնելիս Առաջին ատյանի դատարանը սխալ է պատճառաբանել իր կողմից կայացված դատական ակտը, սակայն դա չի ազդել գործի ելքի վրա: Ուստի հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին

մասի 6-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը պետք է բեկանել և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի արդարացման դատավճռին՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Սամվել Քյարամի Ավդոյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հունիսի 26-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 25-ի արդարացման դատավճռին՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

34.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱՆԴ/0025/11/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝
դիմողների ներկայացուցիչ Մ.ԴԱՎԹՅԱՆԻ

2017 թվականի դեկտեմբերի 20-ին ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հունիսի 20-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. Տատյանա Բելյավցևայի և Շահեն Գևորգյանի հաղորդումների հիման վրա ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Նոր Նորքի բաժնում 2015 թվականի հոկտեմբերի 26-ին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 17174315 քրեական գործը:

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Հայրապետյանի (այսուհետ՝ նաև Քննիչ)՝ 2016 թվականի հունիսի 27-ի

որոշմամբ թիվ 17174315 քրեական գործով վարույթը կարճվել է, և Անահիտ, Գյուլնարա և Վահան Սիմոնյանների, Հովսեփ Հովհաննիսյանի, Վարդան Մելքոնյանի, Ալեքսանդր Քեշիշյանի և Աստղիկ Ղազարյանի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել՝ վերջիններիս արարքներում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ և 38-178-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերի բացակայության հիմքով:

Երևան քաղաքի դատախազ Ր.Ասլանյանի (այսուհետ՝ նաև Դատախազ)՝ 2016 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ վերոնշյալ որոշման դեմ դիմողներ Տ.Բելյավցևայի և Շ.Գևորգյանի ներկայացուցիչ Մ.Դավթյանի բողոքը մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

2. Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2017 թվականի հունվարի 23-ի որոշմամբ դիմողներ Տ.Բելյավցևայի և Շ.Գևորգյանի ներկայացուցիչ Մ.Դավթյանի բողոքը մերժվել է:

3. Ներկայացուցիչ Մ.Դավթյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի հունիսի 20-ի որոշմամբ բողոքը բավարարել է՝ Առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանել և վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցրել է վերացնել դիմողներ Տ.Բելյավցևայի և Շ.Գևորգյանի իրավունքների ու ազատությունների խախտումները:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 20-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 11-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել դիմողների ներկայացուցիչ Մ.Դավթյանը և դիմող Տ.Բելյավցևան՝ խնդրելով մերժել այն՝ պատճառաբանելով, որ Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 20-ի որոշումն օրինական է և հիմնավոր:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

5. Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2013 թվականի ապրիլի 3-ի վճռով մերժվել է Տատյանա Բելյավցևայի՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու և 2010 թվականի նոյեմբերի 12-ին կնքված անշարժ գույքի գրավի և վարկային պայմանագրերն անվավեր ճանաչելու մասին հայցը: Վերջինս վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 3-ի և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի՝ 2013 թվականի նոյեմբերի 27-ի որոշումներով մնացել է անփոփոխ (տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 68-75):

5.1 Քրեական գործի նախաքննության ընթացքում վկա Շ.Գևորգյանի՝ 2015 թվականի նոյեմբերի 3-ի հարցաքննության արձանագրության համաձայն՝ *«(...) 2010թ. հոկտեմբեր ամսին ինձ օգնության հարցով դիմեցին Անահիտը, Գյուլնարան և Վահանը՝ խնդրելով, որ օգնեմ իրենց, զարգացնելու իրենց համատեղ բիզնեսը: Ես գիտեի, որ նրանք զբաղվում էին քաղցրավենիքի արտադրությամբ՝ ընտանիքի անդամներով, և ՍՊԸ-ի տնօրենը Անահիտ Սիմոնյանն էր: Վահանը, Անահիտը և Գյուլնարան ինձ ասացին, որ իրենց բիզնեսն աշխատում է 30 տոկոս հզորությամբ, իրենց գումար է անհրաժեշտ բիզնես ծավալելու համար, չունեն կանխիկ գումար՝ հասելով կոնկրետ որքան, իսկ բանկն էլ իրենց գումար կարող է տրամադրել այն դեպքում, երբ անշարժ գույք գրավադնեն, ուստի ինձ խնդրեցին գրավադնել իմ բնակարանը: Ես փորձեցի օգնել նրանց և ասացի, որ կընդառաջեմ և բնակարանը կգրավադնեմ բանկում՝ հաշվի առնելով մեր վաղեմի ծանոթությունը և մտերմությունը: (...) [Ի]նձ առաջարկեցին, որ ես լիազորագիր տամ Գյուլնարա Սիմոնյանի տվյալներով, որ նա իմ փոխարեն կարողանա բնակարանը գրավադնել «Հայբիզնեսբանկի» Արցախ մասնաճյուղում: Ես համաձայնեցի նրանց առաջարկին և խնդրանքին՝ առանց որևէ շահագրգռվածության, միայն ասացի նրանց, որ իմ կողմից լիազորագիր տալու մասին չհայտնեն կնոջս կամ ընտանիքիս որևէ անդամին, որ ավելորդ խոսակցություններ չլինեն մեր ընտանիքում (...)»* (տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 113-116):

5.2 Նախաքննական մարմնի կողմից 2016 թվականի ապրիլի 4-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Էրեբունի բաժնից ստացված նյութերում առկա է Անահիտ, Գյուլնարա և Վահան Սիմոնյանների կողմից 2011 թվականի մարտի 5-ին գրված և Շահեն Գևորգյանի ստորագրությամբ հաստատված պարտավորագիրն այն մասին, որ նրանք պարտավորվել են բնակարանը գրավից չհանելու դեպքում վճարել 90.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ (տե՛ս նյութեր, հատոր 2, թերթ 228):

6. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունվարի 23-ի որոշման համաձայն՝ *«(...) Քրեական գործի նախաքննության ընթացքում Շ.Գևորգյանը հայտնել է, որ իր կամքով, առանց որևէ հարկադրանքի Սիմոնյաններին լիազորել է իր բնակարանի գրավադրման միջոցով բանկից վարկ ստանալու համար և պարտավոր էր գնահատել նաև այդ գործարքի հետևանքով առաջացած ռիսկերը: Ավելին, հենց ինքն է խնդրել նշված գործարքի մասնակից չդարձնել իր կնոջը՝ Տ.Բելյավցևային և երեխաներին:*

(...) Դատարանը հանգում է հետևության, որ վարույթն իրականացնող մարմինը պատշաճ քննություն է կատարել Անահիտ, Գյուլնարա և Վահան Սիմոնյանների կողմից խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով Շահեն Գևորգյանին պատկանող գույքի հափշտակության, Վարդան Մելքոնյանի, Ալեքսանդր Քեշիշյանի, Հովսեփ Հովհաննիսյանի և Աստղիկ Ղազարյանի կողմից հանցակցությամբ նրանց օժանդակելու փաստերի

շուրջ, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չհրականացնելու մասին 2016թ հունիսի 27-ի որոշումը կայացվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ, և չեն խախտվել Ծ.Գևորգյանի ու Տ.Բելյավցևայի իրավունքներն ու օրինական շահերը» (տե՛ս նյութեր, հատոր 4, թերթեր 81-84):

7. Վերաքննիչ դատարանը, 2017 թվականի հունիսի 20-ի որոշմամբ վերլուծության ենթարկելով ՀՀ ընտանեկան, քաղաքացիական, քաղաքացիական դատավարության օրենսգրքերի և «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի մի շարք իրավադրույթներ, նշել է. *«(…) Վերաքննիչ դատարան[ն] (…) արձանագրում է, որ Շահեն Գևորգյանի կողմից ամուսնության ընթացքում ձեռք բերված վիճելի՝ ք.Երևան Ավան համայնք, Դուրյան թաղ. 38 շենքի թիվ 34 բնակարանը՝ 82,3 քմ մակերեսով, օրենքի ուժով հանդիսանում է Շահեն Գևորգյանի և Տատյանա Միխայլովնա Բելյավցևայի համատեղ սեփականությունը:*

(…) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Շահեն Գևորգյանի կողմից վիճելի՝ ք.Երևան Ավան համայնք, Դուրյան թաղ. 38 շենքի թիվ 34 բնակարանը՝ 82,3 քմ մակերեսով, ձեռք է բերվել օրենքով սահմանված կարգով գրանցված ամուսնության ընթացքում:

(…) Հիմք ընդունելով վերոգրյալ հանգամանքներն իրենց համակցությամբ՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է հետևյալը.

ա. Շահեն Գևորգյանը չի ունեցել Տատյանա Բելյավցևայի կողմից տրված լիազորություններ՝ լիազորել Գյուլնարա Սիմոնյանին տնօրինման իրավունքը համատեղ սեփականություն հանդիսացող վիճելի բնակարանի նկատմամբ,

բ. Գյուլնարա Սիմոնյանը և մյուսներն ի սկզբանե տեղյակ են եղել, որ Շահեն Գևորգյանը և Տատյանա Բելյավցևան համատեղ ամուսնության կյանքում միասին են ձեռք բերել վիճելի բնակարանը,

գ. Երևան քաղաքի Նոր Նորքի նոտարական տարածքի նոտար Նոնա Գասպարյանը, տեղյակ լինելով, որ վիճելի բնակարանն օրենքի ուժով հանդիսանում է Շահեն Գևորգյանի և Տատյանա Միխայլովնա Բելյավցևայի համատեղ սեփականությունը և բացակայում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված՝ գույքն ամուսիններից մեկի սեփականությունը հանդիսանալու հիմքերը, հաստատել է նոտարական գործողության կատարումը:

(…) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Նոր Նորքի նոտարական տարածքի նոտարի վավերացված փաստաթղթում (…) փոփոխությունը կատարվել է փաստաթուղթը վավերացնելուց հետո, ինչը [«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 45-րդ] հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ համարվում է առոչինչ:

(…)

Դատարանը սույն գործով ձեռք բերված ապացույցները պատշաճ գնահատման չի ենթարկել և չի հիմնավորել, թե արդյո՞ք Անահիտ, Գյուլնարա և Վահան Սիմոնյանների շահադիտական նպատակը ծագել է համապատասխան գործարքի կնքումից առաջ:

Ավելին՝ Դատարանը չի ներկայացրել որևէ ողջամիտ պատճառաբանություն առ այն, որ մինչև Շահեն Գևորգյանի գույքը վերցնելը կամ գույքին տիրանալը, Անահիտ, Գյուլնարա և Վահան Սիմոնյանները չեն դրսևորել գույքի հափշտակման ուղղակի դիտավորություն և չեն ունեցել այն հափշտակելու նպատակ:

Վերաքննիչ դատարանը փաստում է այն հանգամանքը, որ սույն որոշմամբ արված եզրահանգումները չեն կարող դիտվել որպես հանցանքի կատարման մեջ որևէ անձի մեղքի կանխորոշված լինելու վերաբերյալ պատշաճ դատողություններ, այլ արձանագրում է, որ քրեական հետապնդման մարմինները պետք է ստուգման և իրավական գնահատման արժանացնեն քրեական գործի նախաքննությամբ ձեռք բերված բոլոր փաստական տվյալները և դրանց արդյունքներով գան համապատասխան եզրահանգման:

Քրեական հետապնդման մարմնի կողմից թույլ տրված խախտումներն ընդհանուր իրավասության դատարանի կողմից պատշաճ ստուգման և իրավական գնահատականի չեն արժանացել, ինչի արդյունքում կայացվել է դիմողներ Շահեն Գևորգյանի և Տատյանա Բելյավցևայի իրավունքները և ազատությունները խախտող դատական ակտ: (...)» (տե՛ս նյութեր, հատոր 5, թերթեր 128-140):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, քրեադատավարական օրենքի էական խախտում, ինչպես նաև չի հետևել Վճռաբեկ դատարանի՝ Ռ.Բալասանյանի գործով 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵԿԴ/0199/01/13 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին:

Մասնավորապես, բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի դատական ակտի բեկանման հիմքում դրված պատճառաբանությունները քաղաքացիաիրավական բնույթի վեճերի առարկա են կազմել և լուծվել են քաղաքացիաիրավական և քաղաքացիադատավարական կանոններով: Նման պայմաններում, ըստ բողոքաբերի, Վերաքննիչ դատարանն իր դատական ակտով արձանագրել է անհրաժեշտություն՝ դիմողների ենթադրյալ խախտված իրավունքները վերականգնելու նպատակով արդեն իսկ գործադրված քաղաքացիաիրավական և քաղաքա-

ցիաղատավարական գործիքակազմը փոխարինելու քրեահրավական և քրեադատավարական միջոցներով, ինչն էլ նախադեպային իրավունքի ուժով անթույլատրելի է:

8.1 Անդրադառնալով Առաջին ատյանի դատարանի դատական ակտի բեկանման հիմքում դրված այն պատճառաբանությանը, որ վերջինս չի ներկայացրել որևէ ողջամիտ պատճառաբանություն այն մասին, որ Անահիտ, Գյուլնարա և Վահան Սիմոնյանները չեն դրսևորել գույքը հափշտակելու նպատակ և ուղղակի դիտավորություն՝ բողոքաբերն ընդգծել է, որ Առաջին ատյանի դատարանը քննության է առել ոչ թե քրեական գործ, այլ քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու որոշման դեմ բերված բողոք, ուստի որևէ մեկի գործողություններում շահադիտական նպատակի և ուղղակի դիտավորության առկայության կամ բացակայության մասին չէր կարող հանգել նման հետևության:

Բողոքաբերը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանը գործն ըստ էության չլուծող դատական ակտի բեկանման հիմքում դրել է գործն ըստ էության լուծող դատական ակտերի բեկանման պատճառաբանությունը, արդյունքում դուրս գալով վերոնշյալ երկու տեսակի դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները քննելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իր համար սահմանված կանոններից:

9. Վերոշարադրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի որոշմանը:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր են արդյոք դիմողներ Տ.Բելյավցևայի և Շ.Գևորգյանի իրավունքների և ազատությունների խախտման և վարույթն իրականացնող մարմնին այդ խախտումը վերացնելուն պարտավորեցնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին (…)»:

Վերոնշյալ իրավադրույթի կապակցությամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «(...) դատարանը միևչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելու շրջանակներում ներկայացված բողոքը հիմնավորված ճանաչելու դեպքում իր դատական ակտում պետք է հստակ պատճառաբանի՝

ա) վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեադատավարական օրենսդրության որ պահանջն է խախտվել և ինչում է այն դրսևորվել,

բ) դրա հետևանքով անձի որ իրավունքը կամ ազատությունն է խախտվել» (տե՛ս Մանվել և Լիդա Հովհաննիսյանների գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԱՐԱԴ/0001/11/14 որոշման 13-րդ կետը):

12. Քաղաքացիական իրավունքների ենթադրյալ խախտման դեպքերում քրեադատավարական կառուցակարգերի գործադրմամբ իրավական պաշտպանություն հայցելու հնարավորության կապակցությամբ Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել այն մասին, որ քրեադատավարական ռեսուրսները չեն կարող օգտագործվել քաղաքացիական բնույթի իրավահարաբերությունները (վեճը) պարզելու և այդպիսի վեճի առարկան կազմող իրավաբանական փաստերը հաստատելու ուղղությամբ: Վերջինս պայմանավորված է համապատասխան փաստերը հաստատելու քաղաքացիադատավարական կանոնների՝ քրեադատավարական կանոններից սկզբունքային տարբերությամբ և դրանք մեկը մյուսով փոխարինելու անթույլատրելիությամբ: Այսպես, եթե քաղաքացիաիրավական հարաբերության հենքը վերաբերում է կարգավորիչ գործառույթ իրականացնող իրավունքի ճյուղին, ապա քրեական իրավունքը և դատավարությունը, մարմնավորելով իրավունքի պահպանիչ գործառույթը, իրենց բնույթով ածանցյալ են իրավունքի տվյալ ճյուղերից, մասնավորապես քաղաքացիական իրավունքից և դատավարությունից: Ուստի, ներգործության քրեաիրավական և քրեադատավարական միջոցները չպետք է այնպիսին լինեն, որ խաթարեն քաղաքացիաիրավական ու քաղաքացիադատավարական հարաբերությունների ներքին տրամաբանությունը, անորոշություն ու անկանխատեսելիություն ստեղծեն քաղաքացիաիրավական շրջանառության մեջ: Հակառակ պարագայում կարող է առաջանալ իրավիճակ, երբ նույն փաստի վերաբերյալ առկա լինեն քաղաքացիական դատավարության կարգով և քրեական դատավարության կարգով կայացված՝ օրինական ուժի մեջ մտած իրար հակասող դատական ակտեր, ինչն անթույլատրելի է, քանի որ իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից եթե դատարանները վերջնականապես որոշել են որևէ հարց, նրանց որոշումը չպետք է կասկածի տակ դրվի (*տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Լ.Ավետիսյանի վերաբերյալ թիվ ԵԿԴ/0176/01/09 գործով 2011 թվականի փոտրվարի 29-ի որոշման 30-րդ կետը, Վ.Մաթևոսյանի վերաբերյալ թիվ ԵՇԴ/0037/01/11 որոշման 25-27-րդ կետերը, Ռ.Քալասանյանի վերաբերյալ թիվ ԵԿԴ/0199/01/13 գործով 2014 թվականի դեկտեմբերի 16-ի որոշման 17-րդ կետը):*

12.1 Վերահաստատելով նախորդ կետում վկայակոչված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեադատավարական իրավահարաբերություններում իրավական պաշտպանություն հայցելու մեխանիզմները չեն կարող օգտագործվել այն դեպքերում, երբ պաշտպանության առարկան կազմող իրավահարաբերություններն իրենց

բնույթով ենթակա են կարգավորման քաղաքացիական իրավահարաբերությունների գործադրման արդյունքում: Այլ կերպ, քրեադատավարական կառուցակարգերը, այդ թվում՝ վերջնական որոշումների օրինականության նկատմամբ հետագա դատական վերահսկողությունը, չեն կարող կիրառվել քաղաքացիական իրավունքների ենթադրյալ խախտումները վերացնելու ուղղությամբ:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը, քննության առնելով Քննիչի և Դատախազի որոշումների դեմ դիմողներ Տ.Քելյավցևայի և Շ.Գևորգյանի ներկայացուցիչ Մ.Դավթյանի բողոքը, մերժել է այն՝ նշելով, որ քրեական գործի նախաքննության ընթացքում Շ.Գևորգյանը հայտնել է, որ իր կամքով, առանց որևէ հարկադրանքի Սիմոնյաններին լիազորել է իր բնակարանի գրավադրման միջոցով բանկից վարկ ստանալու համար և պարտավոր էր գնահատել նաև այդ գործարքի հետևանքով առաջացած ռիսկերը: Միևնույն ժամանակ Առաջին ատյանի դատարանն ընդգծել է, որ հենց Շ.Գևորգյանն է խնդրել նշված գործարքի մասնակից չդարձնել իր կնոջը՝ Տ.Քելյավցևային, և երեխաներին: Նման պայմաններում Առաջին ատյանի դատարանը գտել է, որ վիճարկվող որոշումները կայացվել են քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ, իսկ Շ.Գևորգյանի ու Տ.Քելյավցևայի իրավունքներն ու օրինական շահերը չեն խախտվել (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Սինչդեռ Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել, որ՝

- վեճի առարկա բնակարանը ձեռք է բերվել Շ.Գևորգյանի և Տ.Քելյավցևայի՝ օրենքով սահմանված կարգով գրանցված ամուսնության ընթացքում,

- վեճի առարկա բնակարանը հանդիսանում է Շ.Գևորգյանի և Տ.Քելյավցևայի համատեղ սեփականությունը,

- Շ.Գևորգյանը չի ունեցել Տ.Քելյավցևայի կողմից տրված լիազորություններ՝ վեճի առարկա բնակարանի նկատմամբ տնօրինման իրավունքը Գ.Սիմոնյանին փոխանցելու համար,

- Գ.Սիմոնյանը և այլ անձինք ի սկզբանե տեղյակ են եղել, որ Շ.Գևորգյանը և Տ.Քելյավցևան համատեղ ամուսնական կյանքում միասին են ձեռք բերել վիճելի բնակարանը,

- նոտար Ն.Գասպարյանը, տեղյակ լինելով, որ վիճելի բնակարանն օրենքի ուժով հանդիսանում է Շ.Գևորգյանի և Տ.Քելյավցևայի համատեղ սեփականությունը, և բացակայում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված՝ գույքն ամուսիններից մեկի սեփականությունը հանդիսանալու հիմքերը, հաստատել է նոտարական գործողության կատարումը,

- նոտար Ն.Գասպարյանի կողմից վավերացված փաստաթղթում ուղղում կատարվել է «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտմամբ:

Ընդ որում Տատյանա Բելյավցևայի՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու և 2010 թվականի նոյեմբերի 12-ին կնքված անշարժ գույքի գրավի և վարկային պայմանագրերն անվավեր ճանաչելու մասին հայցն արդեն իսկ քաղաքացիադատավարական կարգով իրավասու դատարանի կողմից քննվելու արդյունքում 2013 թվականի ապրիլի 3-ի վճռով մերժվել է, որը վերադաս ատյանի դատարանների կողմից վերանայվելու արդյունքում մտել է օրինական ուժի մեջ:

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը գտել է, որ ստորադաս դատարանը պատշաճ գնահատման չի ենթարկել գործով ձեռք բերված ապացույցները և չի հիմնավորել, թե արդյոք Անահիտ, Գյուլնարա և Վահան Սիմոնյանների շահադիտական նպատակը ծագել է համապատասխան գործարքի կնքումից առաջ, ինչպես նաև այն, որ մինչև Շահեն Գևորգյանի գույքը վերցնելը կամ գույքին տիրանալն Անահիտ, Գյուլնարա և Վահան Սիմոնյանները չեն դրսևորել գույքի հափշտակման ուղղակի դիտավորություն և չեն ունեցել այն հափշտակելու նպատակ:

Միևնույն ժամանակ Վերաքննիչ դատարանը նշել է, որ այդ որոշմամբ արված եզրահանգումները չեն կարող դիտվել որպես հանցանքի կատարման մեջ որևէ անձի մեղքը կանխորոշված լինելու վերաբերյալ պատշաճ դատողություններ, այլ արձանագրում է, որ քրեական հետապնդման մարմինները պետք է ստուգման և իրավական գնահատման արժանացնեն քրեական գործի նախաքննությամբ ձեռք բերված բոլոր փաստական տվյալները և դրանց արդյունքներով գան համապատասխան եզրահանգման (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

14. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 11-12.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը բավարարել է դիմողների ներկայացուցչի բողոքը և վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցրել վերացնել դիմողների իրավունքների ենթադրյալ խախտումները, առանց պատշաճ իրավական գնահատականի արժանացնելու այն, որ դիմողների կողմից Քննիչի որոշման դեմ ներկայացված բողոքով հայցվող իրավական պաշտպանության առարկան կազմում են բացառապես քաղաքացիական իրավահորմերի գործադրմամբ լուծման ենթակա և այդ ընթացակարգերով արդեն իսկ քննարկված հարցեր:

Այսպես՝ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առնել այն, որ Շահեն Գևորգյանի և Անահիտ, Գյուլնարա, Վահան Սիմոնյանների միջև ծագած իրավահարաբերություններն իրենց բնույթով քաղաքացիական են, կնքվել են կողմերի փոխադարձ կամահայտնության հիման վրա: Ընդ որում, այդ մասին հայտնել է հենց Շ.Գևորգյանը նախաքննության ընթացքում տված իր ցուցմունքում՝ նշելով, որ առանց կնոջը և ընտանիքի այլ անդամներին հայտնելու,

ինքը համաձայնել է 2010 թվականին գրավադնել իր բնակարանը՝ ցանկանալով օգնել Սիմոնյանների ընտանիքին՝ հաշվի առնելով նրանց հետ ունեցած վաղեմի ծանոթությունն ու մտերմությունը (տե՛ս սույն որոշման 5.1-րդ կետը): Ավելին՝ բնակարանը գրավադնելուց հետո նշված քաղաքացիական իրավահարաբերության փաստը կողմերի միջև վերահաստատվել է նաև Անահիտ, Գյուլնարա և Վահան Սիմոնյանների կողմից գրված և Շ.Գևորգյանի ստորագրությամբ հաստատված 2011 թվականի մարտի 5-ի պարտավորագրով առ այն, որ բնակարանը գրավից չհանելու դեպքում Սիմոնյանները պետք է վճարեն 90.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ (տե՛ս սույն որոշման 5.2-րդ կետը):

Այսինքն՝ վերոնշյալ հանգամանքների համակցությունը ցույց է տալիս, որ Շ.Գևորգյանի և Սիմոնյանների ընտանիքի միջև ձևավորված իրավահարաբերությունները կրում են բացառապես քաղաքացիական բնույթ, սակայն Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման չի ենթարկել վերոնշյալ հանգամանքները, ավելին՝ վերլուծության ենթարկելով ՀՀ ընտանեկան, քաղաքացիական, քաղաքացիական դատավարության օրենսգրքերի, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի մի շարք իրավադրույթներ՝ արձանագրել է վեճի առարկա բնակարանի նկատմամբ ինչպես Շ.Գևորգյանի, այնպես էլ Տ.Բելյավցևայի սեփականության իրավունքի առկայության, ինչպես նաև շահագրգիռ անձանց կողմից ոչ իրավաչափ գործողությունների կատարման փաստերը: Այնինչ, նշված փաստական հանգամանքների հաստատման իրավասությունը դուրս է գտնվել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում դատական ակտի օրինականությունը վերանայող դատարանի լիազորությունների սահմաններից: Ավելին՝ Վերաքննիչ դատարանի կողմից ուշադրության չի արժանացվել այն հանգամանքը, որ, ըստ էության, նշված փաստական հանգամանքների վերաբերյալ առկա է քաղաքացիական օրենսդրության պահանջներին համապատասխան կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտ (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Նման պայմաններում Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով վեճի առարկա իրավահարաբերության քաղաքացիահրավական բնույթը, հանգել է իրավաչափ հետևության այն մասին, որ վարույթն իրականացնող մարմինը պատշաճ քննություն է կատարել ներկայացված հաղորդումներում նկարագրված դեպքի առթիվ, և կայացված որոշմամբ չեն խախտվել դիմողներ Շ.Գևորգյանի ու Տ.Բելյավցևայի իրավունքներն ու օրինական շահերը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դիմողներ Տ.Բելյավցևայի և Շ.Գևորգյանի իրավունքների և ազատությունների խախտման և վարույթն իրականացնող մարմնին այդ խախտումը վերացնելուն պարտավորեցնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր չեն:

15. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականության և հիմ-

ճավորվածության ստուգման ընթացքում Վերաքննիչ դատարանի կողմից թույլ են տրվել քրեադատավարական օրենքի խախտումներ, որոնք էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի հիման վրա, Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 20-ի որոշումը բեկանելու հիմք է:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով դատական ակտ կայացնելիս Առաջին ատյանի դատարանը դատական սխալ թույլ չի տվել, կայացված որոշումն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, ուստի պետք է օրինական ուժ տալ Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունվարի 23-ի որոշմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմողներ Տատյանա Միխայլովնա Բելյավցևայի և Շահեն Նիկոլայի Գևորգյանի ներկայացուցիչ Մ.Դավթյանի բողոքի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հունիսի 20-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունվարի 23-ի որոշմանը՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

35.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0097/06/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
	Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝	
պաշտպան	Վ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ

2017 թվականի դեկտեմբերի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով մեղադրյալ Շահեն Սեդրակի Կեշիշյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 16-ի որոշման դեմ պաշտպան Վ.Կարապետյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2016 թվականի հուլիսի 2-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 267.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 15127616 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի ապրիլի 18-ի որոշմամբ Շահեն Սեդրակի Կեշիշյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մե-

դաղրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 267.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: Նույն օրվա մեկ այլ որոշմամբ Ծ.Կեշիշյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2017 թվականի ապրիլի 18-ի որոշմամբ մեղադրյալ Ծ.Կեշիշյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի մայիսի 5-ի որոշմամբ քրեական գործով վարույթը կասեցվել է, իսկ նույն թվականի մայիսի 18-ի որոշմամբ՝ վերսկսվել:

Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մայիսի 18-ի որոշմամբ մեղադրյալ Ծ.Կեշիշյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումն անփոփոխ թողնելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարվել է:

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 14-ի որոշմամբ նախաքննության մարմնի միջնորդությունը՝ մեղադրյալ Ծ.Կեշիշյանին կալանքի տակ պահելու ժամկետը՝ 2 (երկու) ամսով երկարացնելու մասին, մերժվել է: Նույն որոշմամբ մերժվել է նաև պաշտպանի միջնորդությունը՝ մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորման ժամկետը երկարացնելու դեպքում այն այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու վերաբերյալ:

3. Դատախազի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի օգոստոսի 16-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 14-ի որոշումը բեկանել է և մեղադրյալ Ծ.Կեշիշյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորման ժամկետը երկարացրել 2 (երկու) ամսով՝ կալանավորման սկիզբը հաշվելով նրան արգելանքի վերցնելու պահից:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 16-ի որոշման դեմ մեղադրյալ Ծ.Կեշիշյանի պաշտպան Վ.Կարապետյանը վճռաբեկ բողոք է ներկայացրել, որը Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 20-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները Վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Մեղադրյալ Ծ.Կեշիշյանին ՀՀ քրեական օրենսգրքի 267.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար,

որ նա. *«[բ]նակվելով ԱՄՆ-ում, 2016 թվականի հունիս ամսվա ընթացքում, իր ծանոթ, ԱՄՆ-ում բնակվող ոմն Հարությունի օգնությամբ «Զվարթնոց» օդանավակայանով, մաքսանենգությամբ՝ մաքսային հսկողությունից թաքցնելու եղանակով, խախտելով թմրամիջոցների տեղափոխման համար սահմանված կանոնները, ՀՀ է ուղարկել թվով 3 ճեղքի ծանրոցներ, որոնց մեջ գտնվող «Նիվեա մեն» գրառմամբ թվով 4 շամպունի տարաների մեջ առկա է եղել խոշոր չափերի՝ ընդհանուր 11,54 գրամ մարիխուանա տեսակի թմրամիջոց»* (տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 29):

6. Առաջին ատյանի դատարանի կողմից կալանքի տակ պահելու ժամկետի երկարացման միջնորդության քննարկման ընթացքում՝ 2017 թվականի հուլիսի 14-ի դատական նիստի ժամանակ, պաշտպան Վ.Կարապետյանը գրավոր առարկություն է ներկայացրել՝ խնդրելով մերժել վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը, իսկ այն բավարարելու դեպքում՝ թույլատրելի ճանաչել գրավի կիրառումը և Շ.Կեշիշյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը փոխարինել այլընտրանքային խափանման միջոց գրավով (տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 60-72):

7. Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ *«(…) Քննության առնելով քննիչի միջնորդությունը բավարարելու դեպքում գրավը որպես կալանքի այլընտրանքային խափանման միջոց կիրառելու հնարավորության մասին պաշտպանի միջնորդությունը, դատարանը գտնում է, որ այն ենթակա է մերժման, քանի որ քննիչի միջնորդությունը մերժելու դեպքում պաշտպանի միջնորդությունը դառնում է առարկայազուրկ (…)»* (տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 78-82):

8. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ բավարարելով դատախազի վերաքննիչ բողոքը և բեկանելով Առաջին ատյանի դատարանի որոշումը, բավարարվել է վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը՝ մեղադրյալ Շ.Կեշիշյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորման ժամկետը 2 (երկու) ամսով երկարացնելու մասին՝ հաշվի առնելով այն, որ *«(…) առկա է մեղադրյալ Շահեն Կեշիշյանի կողմից նրան վերագրվող արարքը կատարելու հիմնավոր կասկած, ինչպես նաև նրան վերագրվող արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, գտնում է, որ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ ազատության մեջ մնալու դեպքում մեղադրյալ Շահեն Կեշիշյանի կողմից վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու միջոցով վարույթն իրականացնող մարմնի աշխատանքները խոչընդոտելու հավանականությունը բարձր է, որպիսի պայմաններում թիվ 15127616 քրեական գործով մեղադրյալ Շահեն Կեշիշյանի կալանավորման ժամկետը պետք է երկարացնել 2 (երկու) ամիս ժամկետով (…)»* (տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 59-63):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակը գտել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 5-րդ հոդվածը, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված մի շարք նորմեր և սկզբունքներ, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա: Արդյունքում Վերաքննիչ դատարանը կայացրել է չպատճառաբանված ու չհիմնավորված որոշում, որը կարող է առաջացնել ծանր հետևանքներ:

9.1. Մասնավորապես, ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը, կալանավորման ժամկետը երկարացնելով, պատշաճ չի պատճառաբանել դրա հիմքերի առկայությունը, ինչպես նաև գնահատման չի արժանացրել Ծ.Կեշիշյանի կողմից իրեն մեղսագրվող արարքը կատարելու հիմնավոր կասկածի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի հիմնավորումները:

9.2. Բացի այդ, բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանն ընդհանրապես չի անդրադարձել Ծ.Կեշիշյանի նկատմամբ կալանավորման ժամկետը երկարացնելու դեպքում գրավ կիրառելու վերաբերյալ պաշտպանական կողմի միջնորդությանն այն պայմաններում, երբ Առաջին ատյանի դատարանն այն մերժել էր կալանավորման ժամկետը երկարացնելու միջնորդությունը մերժելու պատճառաբանությամբ: Ըստ բողոքաբերի՝ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու դեպքում, անձի արդար դատաքննության իրավունքից ելնելով, Վերաքննիչ դատարանը պարտավոր էր անդրադառնալ նաև գրավի թույլատրելիության հարցին:

10. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է.

«Բեկանել ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի 16.08.2017 թվականի (...) որոշումը՝ փոփոխել այն մերժել (...) Շահեն Կեշիշյանի նկատմամբ կալանավորման ժամկետը երկու ամսով երկարացնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը և ուժի մեջ թողնել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 14.07.2017թ. կայացրած որոշումը և (...) Շահեն Կեշիշյանին անհապաղ ազատել կալանքից.

(...) սույն խնդրանքը չբավարարելու դեպքում՝ կայացնել նոր դատական ակտ և (...) Շահեն Կեշիշյանին կալանքից գրավով ազատելը ճանաչելով թույլատրելի՝ գրավի կիրառմամբ նրան ազատել կալանավորումից»:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Ծ.Կեշիշյանին կալանքի տակ պահելու ժամկետը

երկարացնելու պայմաններում իրավաչա՞փ է արդյոք Վերաքննիչ դատարանի կողմից կալանավորումը գրավով փոխարինելու հարցը չքննարկելը, երբ պաշտպանական կողմը նման միջնորդություն է ներկայացրել Առաջին ատյանի դատարանում:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«(…) Գրավը համարվում է կալանավորման այլընտրանքային խափանման միջոց և կիրառվում է միայն այն դեպքում, երբ ստացվել է դատարանի որոշումը մեղադրյալին կալանավորելու մասին»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Կալանավորումը, գրավը կիրառվում են միայն դատարանի որոշմամբ՝ քննիչի կամ դատախազի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ՝ դատարանում քրեական գործը քննելիս: Գրավը կալանավորման փոխարեն դատարանը կարող է կիրառել նաև պաշտպանության կողմի միջնորդությամբ»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«Կալանավորման մասին որոշում կայացնելու հետ միաժամանակ դատարանը լուծում է մեղադրյալին գրավով կալանքից ազատելու հնարավորության հարցը և, ճանաչելով նման ազատման հնարավորությունը, նշանակում է գրավի գումարը: Հետագայում դատարանը կարող է պաշտպանության կողմի միջնորդությամբ վերանայել գրավի անբուլլատելիության կամ գրավի գումարի մասին որոշումը»:

Ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 139-րդ հոդվածի 2-րդ մասի՝ *«Կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու հարցը որոշելիս դատարանն իրավունք ունի ճանաչել մեղադրյալին գրավով ազատելու հնարավորությունը և նշանակել գրավի գումարը»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի համաձայն՝

«1. Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու անհրաժեշտության դեպքում դատախազը կամ քննիչը միջնորդություն է հարուցում դատարան՝ խափանման միջոցի այդ տեսակը ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին: (…)

(…)

5. Քննելով միջնորդությունը՝ դատավորը որոշում է կայացնում մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ միջնորդությունը մերժելու մասին (…)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածը սահմանում է, որ.

«1. Որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը կատարվում է վերաքննիչ դատարանի կողմից:

(…)

5. Դատական ստուգման արդյունքում դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից որևէ մեկը՝

1) կալանքը որպես խափանման միջոց վերացնելու և անձին կալանքից ազատելու մասին.

2) որպես խափանման միջոց կալանք ընտրելու կամ դրա ժամկետը երկարացնելու մասին.

3) բողոքն առանց բավարարման թողնելու մասին:

6. Այն դեպքում, երբ նիստին ներկայացված չեն կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու օրինականությունը և հիմնավորվածությունը հաստատող նյութեր, դատարանը որոշում է կայացնում տվյալ խափանման միջոցը վերացնելու և անձին կալանքից ազատելու մասին»:

Վերաքննիչ դատարանի կողմից կալանքը գրավով փոխարինելու իրավասության վերաբերյալ Վճռաբեկ դատարանը դիրքորոշումներ է արտահայտել *Տ.Հակոբյանի* գործով որոշմամբ: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ. *«(…) կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու հարցերում առաջին ատյանի դատարանի և վերաքննիչ դատարանի իրավասությունն էականորեն տարբերվում է: Առաջին ատյանի դատարանը լիազորված է քննիչի կամ դատախազի միջնորդության հիման վրա ըստ էության լուծում տալ մեղադրյալին կալանավորելու (կալանքի ժամկետը երկարացնելու) կամ կալանքից ազատ արձակելու հարցին: Մասնավորապես՝ առաջին ատյանի դատարանը, ինչպես տվյալ միջնորդությունը քննարկելիս, այնպես էլ հետագայում, լիազորված է կալանքը փոխարինելու դրա այլընտրանքային խափանման միջոց գրավով:*

Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածին համապատասխան՝ վերաքննիչ դատարանն իրավասու է միայն իրականացնելու որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու, կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու օրինականության և հիմնավորվածության դատական ստուգում:

Ընդ որում, այս գործունեությունն իրականացնելիս ՀՀ քրեական վերաքննիչ դատարանն իրավասու չէ ղեկավարվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ բաժնի դրույթներով, քանի որ (…) մեղադրյալին կալանավորելու կամ չկալանավորելու, կալանքի ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու մասին առաջին ատյանի դատարանի

որոշումների բողոքարկման և բողոքի քննության կարգը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ և 288-րդ հոդվածներով ստացել է առանձին օրենսդրական կանոնակարգում:

Հետևաբար՝ մեղադրյալին կալանավորելու կամ չկալանավորելու, կալանքի ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումների բողոքարկման և բողոքի քննության ընթացքում վերաքննիչ դատարանն իրականացնում է ոչ թե գործի ամբողջ ծավալով ըստ էության քննություն (վերաքննություն), այլ ավելի սահմանափակ գործունեություն՝ համապատասխան որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգում:

Մասնավորապես՝ եթե բողոքարկվել է մեղադրյալին կալանավորելու կամ կալանքի ժամկետը երկարացնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը, վերաքննիչ դատարանն իրավասու չէ անդրադառնալ կալանքը գրավով փոխարինելու հարցին: Մինչդատական վարույթի ընթացքում առաջին ատյանի դատարանի կայացրած՝ անձի կալանավորման կամ կալանքի ժամկետը երկարացնելու մասին որոշման բողոքարկման դեպքում կալանքը գրավով փոխարինելու հարցի լուծման լիազորությամբ օրենսդիրը Վերաքննիչ դատարանին չի օժտել: Օրենքի այս մեկնաբանությունը հիմնված է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 5-րդ մասի վրա, որը սահմանում է քննարկվող գործերով դատական ստուգման արդյունքում Վերաքննիչ դատարանի կողմից կայացվող որոշումների սպառիչ ցանկը, և այն չի ներառում ստորադաս դատարանի որոշման փոփոխումը և ստորադաս դատարանի ընտրած խափանման միջոց կալանքի փոխարեն գրավի կիրառումը:

Այսինքն՝ օրենսդիրն անձին կալանավորելու կամ կալանքի ժամկետը երկարացնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման՝ վերադասության կարգով դատական ստուգման առարկայի մեջ գրավի հարցի լուծումը չի ներառել: Փոխարենը, այդ դեպքերում պաշտպանության կողմն ազատ է ցանկացած պահի կալանավորված անձին գրավով ազատելու (կալանքը գրավով փոխարինելու) միջնորդություն հարուցել Առաջին ատյանի դատարան (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 4-րդ մաս), քանի որ գրավը կիրառվում է միայն այն դեպքում, երբ առկա է դատարանի որոշումը մեղադրյալին կալանավորելու մասին (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մաս)» (տե՛ս *Տարոն Հակոբյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2007 թվականի հուլիսի 13-ի թիվ ՎԲ-115/07 որոշումը):

Սեջբերված իրավական դիրքորոշումները Վճռաբեկ դատարանը վերահաստատել է *Ա.Ճուղուրյանի* վերաբերյալ որոշմամբ, որով արձանագրելով նաև, որ Առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում կալանավորման փոխարեն գրավ կիրառելու մասին դատախազի կամ

պաշտպանության կողմի միջնորդություն չի հարուցվել և քննարկման առարկա չի դարձել, եզրահանգել է, որ առաջին ատյանի դատարանի կողմից ընտրված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու որոշումը Վերաքննիչ դատարանը կայացրել է այն պայմաններում, երբ օրենքով լիազորված չէր նման որոշում կայացնելու *(տե՛ս Արամ Ճուղուրյանի գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի օգոստոսի 30-ի թիվ ՎԲ-132/07 որոշումը)*:

13. Վերահաստատելով վերը մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ Առաջին ատյանի դատարանի կողմից կայացվում է կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ դրա ժամկետը երկարացնելու վերաբերյալ որոշում, վերաքննիչ դատարանն իրավասու չէ այն փոփոխել և ստորադաս դատարանի ընտրած խափանման միջոց կալանքի փոխարեն գրավ կիրառել, երբ վերջինիս հարցը չի ներկայացվել և չի քննարկվել առաջին ատյանի դատարանում:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ վերաքննիչ դատարանը հանդես է գալիս որպես առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը վերանայելու իրավասությամբ օժտված դատական ատյան: Մասնավորապես, վերաքննիչ դատարանը դատական վերանայման գործառույթի շրջանակներում բացահայտում է կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ ընտրելը մերժելու, կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու մասին որոշում կայացնելիս առաջին ատյանի դատարանի կողմից օրենքի բոլոր պահանջների պահպանման, ինչպես նաև կալանավորման հիմքերի առկայության կամ բացակայության վերաբերյալ հետևությունների իրավաչափության հարցերը: Վերաքննիչ դատարանում դատական վերանայման առարկան սահմանափակվում է Առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգմամբ, որն էլ պետք է իրականացվի միայն Առաջին ատյանի դատարանում քննության ենթարկված կալանավորման հիմքերի, հետազոտված փաստերի կամ ապացույցների շրջանակներում *(տե՛ս Գոռ Դուրյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ՏԴ/0052/06/14 որոշման 17-19-րդ կետերը)*:

Հետևաբար, առաջին ատյանի դատարանում ներկայացված կամ քննարկված լինելու դեպքում ստորադաս դատարանի որոշման ստուգման և վերանայման գործառույթից ելնելով, վերաքննիչ դատարանն իրավասու է քննարկման առարկա դարձնել և որոշում կայացնել գրավի՝ որպես այլընտրանքային խափանման միջոցի կիրառելիության հարցի կապակցությամբ: Ընդ որում, առաջին ատյանի դատարանի կողմից կալանքի կամ դրա ժամկետի երկարացման վերաբերյալ միջնորդությունը մերժելու որոշման վե-

րաքննիչ վերանայման արդյունքում Վերաքննիչ դատարանի կողմից կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ դրա ժամկետը երկարացնելու դեպքում վերջինս պարտավոր է քննարկման առարկա դարձնել և համապատասխան լուծում տալ Առաջին ատյանի դատարանում ներկայացված՝ գրավ կիրառելու վերաբերյալ միջնորդությանը: Հակառակ դեպքում անձի դատական պաշտպանության և դատաքննությանը ներկայանալու երաշխիքներով ազատ արձակվելու իրավունքները կկրեն վերացական և պատրանքային բնույթ, ինչն անթույլատրելի է:

14. Անդրադառնալով սույն գործի փաստերին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, բավարարելով նախաքննական մարմնի միջնորդությունը՝ մեղադրյալ Շ.Կեշիշյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը), քննարկման առարկա չի դարձրել Առաջին ատյանի դատարանում պաշտպանության կողմի ներկայացրած միջնորդությունը՝ կալանքի ժամկետը երկարացնելու դեպքում այն այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու վերաբերյալ:

Վերաքննիչ դատարանի որոշման բովանդակությունից հետևում է, որ դատական ստուգման արդյունքում, բավարարելով մեղադրյալ Շ.Կեշիշյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունը, Վերաքննիչ դատարանն անտեսել է ինչպես այն հանգամանքը, որ գրավը կալանավորման այլընտրանքային խափանման միջոց է և կիրառվում է միայն այն դեպքում, երբ ստացվել է դատարանի որոշումը մեղադրյալին կալանավորելու մասին (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մաս), այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը, համաձայն որի՝ դատարանը գրավով կալանքից ազատելու հնարավորության հարցը լուծում է կալանավորման մասին որոշումը կայացնելու հետ միաժամանակ:

15. Նախորդ կետում շարադրված փաստական վերլուծությունը գնահատելով 12-13-րդ կետերում առկա իրավական դիրքորոշումների համատեքստում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Շ.Կեշիշյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու պայմաններում իրավաչափ չէ Վերաքննիչ դատարանի կողմից կալանավորումը գրավով փոխարինելու հարցը չքննարկելը, երբ պաշտպանական կողմը նման միջնորդություն է ներկայացրել Առաջին ատյանի դատարանում:

16. Անդրադառնալով բողոքաբերի՝ սույն որոշման 9.1-րդ կետում բարձրացրած փաստարկներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանց կապակցությամբ ստորադաս դատարանը թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող այնպիսի դատական սխալ, որը կարող էր բավարար հիմք համարվել հիշյալ դատարանի դատական ակտն այդ մասով բեկանելու համար:

17. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել քրեադատավարական օրենքի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների համաձայն, այն բեկանելու հիմք է: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ բողոքարկված դատական ակտը եղել է ժամանակավոր, այն կորցրել է իր իրավական նշանակությունը և սույն որոշումը կայացնելու պահին դադարել է իրավաբանորեն գոյություն ունենալուց, հետևաբար՝ այն չի կարող բեկանվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Մեղադրյալ Շահեն Սեդրակի Կեշիշյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 16-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

36.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԴ3/0029/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝
դատախազ Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

2017 թվականի դեկտեմբերի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Դավիթ Հովհաննեսի Փաշայանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի մարտի 3-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2016 թվականի մարտի 18-ին ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 18103216 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի մարտի 29-ի որոշմամբ Դավիթ Հովհաննեսի Փաշայանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան

մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:

2016 թվականի մարտի 22-ին Դ.Փաշայանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2016 թվականի մայիսի 11-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի սեպտեմբերի 27-ի դատավճռով ամբաստանյալ Դ.Փաշայանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա ամբաստանյալ Դ.Փաշայանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 3 (երեք) տարի ժամկետով:

3. Մեղադրող Գ.Գրիգորյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի մարտի 3-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի սեպտեմբերի 27-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի մարտի 3-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 4-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Ամբաստանյալ Դ.Փաշայանի պաշտպան Թ.Յայլոյանը ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան՝ խնդրելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը թողնել առանց քննության:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

5. Ամբաստանյալ Դ.Փաշայանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա *«2016 թվականի մարտի 18-ին՝ ժամը 18:00-ի սահմաններում, Գյումրի քաղաքի Տ.Ճարտարապետ փողոցի 7/5-րդ շենքի հետնամասում գտնվող ավտոտնակի դիմաց, Գյումրի քաղաքի Տ.Ճարտարապետ փողոցի 9/6-րդ շենքի 4-րդ բնակարանի բնակիչ Հարություն Հրայրի Թովմասյանի քրոջը՝ Անետա Թովմասյանին սիրահետելու հարցով ծագած վիճաբանության ընթացքում մարմնական վնասվածք պատճառելու դիտավորությամբ, իր մոտ եղած դանակով մեկ անգամ հարվածել է Սերգեյ Արտավազդի Խաչատրյանի կրծքավանդակի ձախ կեսին՝ վերջինիս առողջությանը կրծքավանդակի*

ձախ կեսի ծակած-կտրած թափանցող վնասվածքի ճնով պատճառելով կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 150):

6. Առաջին ատյանի դատարանը, անդրադառնալով ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելու և այն կրելու նպատակահարմարության հարցին, փաստել է. *« (...) Դատարանը Դավիթ Փաշայանի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի է առնում ինչպես նրա կատարած հանցագործության բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը, հանցագործության կատարման եղանակը՝ դանակի գործադրումը, պատճառված վնասվածքի տեղակայումը, այնպես էլ նրա անձը բնութագրող տվյալները՝ այն, որ դատված չի եղել, բնակության վայրում բնութագրվում է դրական կողմերով (...):*

Դատարանը (...) որպես Դավիթ Փաշայանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ հաշվի է առնում այն, որ նա հանցանքը կատարել է անչափահաս տարիքում, փոխադարձ կռվի ընթացքում, կամովին ներկայացել է վարույթն իրականացնող մարմնին, աջակցել է հանցագործությունը բացահայտելուն, ինչն արտահայտվել է նրանով, որ մասնակցել է դեպքի վայրի զննությանը, որի ընթացքում մատնացույց է արել հանցանքը կատարելու վայրը, նկարագրել է հանցանքի կատարման եղանակը, մատնացույց է արել հանցագործության գործիք հանդիսացող դանակը նետելու վայրը, անկեղծորեն զղջացել է կատարածի համար, տուժողը որևէ բողոք, պահանջ չունի:

(...) Դատարանն արձանագրում է, որ Դավիթ Փաշայանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

(...) [Ա]մբաստանյալ Դավիթ Փաշայանը հանցագործությունը կատարել է անչափահաս տարիքում, տուժողի հետ հաշտվել են, և նա որևէ բողոք կամ պահանջ չի ներկայացրել, անկեղծորեն զղջացել է կատարվածի համար: Դատարանը նաև հաշվի է առնում, որ Դավիթ Փաշայանը զորակոչիկ է և պետք է մեկնի ՀՀ զինված ուժեր ծառայության: Այս հանգամանքները համեմատաբար նվազեցնում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և հիմք են եզրահանգելու, որ սույն գործով որոշ չափով վերականգնվել է սոցիալական արդարությունը և պատժի ենթարկված անձի ուղղումը հնարավոր է առանց նշանակված պատիժը կրելու: Բացի այդ, գնահատման է արժանի այն հանգամանքը, որ ամբաստանյալը դատված չի եղել, նա բնութագրվում է որպես օրինակելի, համեստ, շնորհքով, մեծերին հարգող և լսող, դաստիարակված երեխա, ինչը նույնպես վկայում է, որ նրա ուղղմանը կարելի է հասնել առանց պատիժը կրելու: Հանցանքը կատարելուց հետո Դավիթ Փաշայանի դրսևորած վարքագիծը, մասնավորապես այն, որ նա ինքնակամ ներկայացել է վարույթն իրականացնող մարմնին, մատնացույց է արել հանցագործության գործիք հանդիսացող դա-

նակը նետելու վայրը, առաջադրված մեղադրանքում իրեն լիովին մեղավոր է ճանաչել, տվել է խոստովանական ցուցմունքներ, անկեղծորեն զղջացել է կատարածի համար, լինելով ազատության մեջ, որևէ կերպ չի խոչընդոտել գործի քննությանը: Այս հանգամանքները նույնպես կարող են վկայել, որ պատժի նպատակների իրագործման տեսանկյունից բացակայում է պատիժը փաստացի կրելու անհրաժեշտությունը: Հիշյալ հանգամանքները համադրելով Դավիթ Փաշայանի անձին վերաբերող մյուս տվյալների ու նրա պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքի բացակայության հետ՝ դատարանը գտնում է, որ նշված հանգամանքներն իրենց համակցությամբ հնարավորություն են տալիս հանգելու հետևության, որ անչափահաս տարիքում հանցագործություն կատարած Դավիթ Փաշայանի ուղղումն ու վերադաստիարակումը հնարավոր է առանց նշանակված պատիժը կրելու, և վերջինիս նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով տվյալ գործով հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակներին (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 82-83):

6.1. Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ բերված վերաքննիչ բողոքում մեղադրող Գ.Գրիգորյանը, անդրադառնալով պատիժ նշանակելու և այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս որպես ամբաստանյալի անձը բնութագրող, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող՝ Առաջին ատյանի դատարանի կողմից գնահատված առանձին հանգամանքներին, փաստել է. «(...) *[Մ]տորադաս դատարանը հաշվի չի առել այն, որ՝*

- ամբաստանյալ Դավիթ Փաշայանը, թեև ներկայացել է ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզի քննչական վարչություն, սակայն դա կատարել է դեպքից շուրջ 4 օր անց, երբ արդեն իրավապահ մարմիններին հայտնի է եղել նրա մասնակցությունը դեպքին,

- ամբաստանյալ Դավիթ Փաշայանը, վարույթն իրականացնող մարմնին չի ներկայացրել հանցագործության գործիք հանդիսացող դանակը, իսկ դեպքի վայրի զննության ընթացքում այն նետելու վայրը մատնացույց անելը չի կարող դիտվել որպես պատիժը մեղմացնող հանգամանք,

- որպես պատիժը մեղմացնող հանգամանք չի կարող դիտվել նաև փոխադարձ կռվի ընթացքում դանակով որևէ մեկին դիտավորությամբ հարվածելը,

- ամբաստանյալ Դավիթ Փաշայանի 18 տարին լրացել է 2016 թվականի հունիսի 3-ին, դատաքննության պատճառով վերջինը բաց է թողել 2016 թվականի ամառային զորակոչը, հետևաբար բժշկական հետազոտությունների չի ենթարկվել, նրա՝ զինվորական ծառայության պիտանելիության հարցը չի որոշվել, ուստի փաստել, որ նա պետք զորակոչվի ՀՀ զինված

ուժեր, առավելապես ենթաղրություն է (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթ 6):

7. Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, արձանագրել է. *«(...) [Առաջին ատյանի դ]ատարանի (...) եզրահանգումները հիմնավոր են, քանի որ դրանք բխում են ինչպես գործող օրենսդրության պահանջներից, այնպես էլ գործի փաստական հանգամանքներից ու տվյալներից:*

[Առաջին ատյանի] դատարանը, ամբաստանյալ Դավիթ Փաշայանի նկատմամբ պատիժ նշանակելիս (...) բավարար չափով հաշվի առնելով ամբաստանյալի կողմից կատարված հանցագործության բնույթը, վտանգավորության և ծանրության աստիճանը, վերջինիս անձը բնութագրող տվյալները, նրա պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայության պայմաններում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառելիության հարցում հանգել(...) [է] ճիշտ եզրահանգման (...):

Նման եզրահանգման հանգելիս Վերաքննիչ դատարանը հաշվի է առնում նաև այն հանգամանքը, որ գործի քննության ողջ ընթացքում ամբաստանյալ Դավիթ Փաշայանը, գտնվելով ազատության մեջ, զերծ է մնացել այլ հակաօրինական արարքներ կատարելուց, չի խոչընդոտել գործի քննությանը, ավելին՝ վերջինս շուտով պետք է զորակոչվի ՀՀ զինված ուժեր՝ զինվորական ծառայության (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթ 86):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

8. Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները սույն գործով թույլ են տվել դատական սխալ, սխալ են կիրառել նյութական իրավունքի նորմերը, որն ազդել է գործի ելքի վրա:

Ի հիմնավորումն վերոհիշյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով՝ դատարանները բավարար չափով ստուգման և գնահատման չեն ենթարկել Դ.Փաշայանի կողմից կատարված հանցանքի հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, գործի կոնկրետ հանգամանքները: Մասնավորապես՝ բողոքաբերը, մեջբերելով Վճռաբեկ դատարանի մի շարք նախադեպային որոշումներում (Դ.Հովհաննիսյանի, Գ.Մադաթյանի, Վ.Բեգյանի, Թ.Տեր-Գրիգորյանի, Ա.Շահբազյանի վերաբերյալ գործերը) արտահայտված իրավական դիրքորոշումները, նշել է, որ պատժի կրման հարցը լուծելիս հաշվի չի առնվել ամբաստանյալի դիտավորության ուղղվածությունը, տեսակը, օգտագործված գործիքը, մարմնական վնաս-

վածքի բնույթն ու տեղակայումը, վերջինիս հանցավոր մտադրության իրականացման աստիճանը և մեղքի ձևը:

Բացի այդ, բողոքաբերը, հիմնվելով առանձին գործերով Վճռաբեկ դատարանի ձևավորած նախադեպային իրավունքի վրա, փաստել է, որ ստորադաս դատարանները ճիշտ չեն գնահատել ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, ինչն էլ արդյունքում հանգեցրել է նրա նկատմամբ նշանակված պատիժը կրելուց անարդարացիորեն ազատելուն:

8.1. Բողոքաբերը նշել է նաև, որ ստորադաս դատարանները հաշվի են առել իրավական նշանակություն չունեցող այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են լսող, մեծերին հարգող լինելը:

8.2. Վերոգրյալի հետ միաժամանակ բողոքի հեղինակը փաստել է, որ ստորադաս դատարանները Դ.Փաշայանի նկատմամբ պատիժ նշանակելիս որպես մեղմացնող հանգամանք, ի թիվս այլոց, հաշվի են առել նրա կողմից դատապարտված չլինելը, քննությանը չխոչընդոտելը, մինչդեռ հիշյալ մեկնաբանությունը ոչ միայն ուղղակիորեն հակասում է Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշմանը, այլ նաև չի կարող բավարարել որպես մեղմացնող հանգամանք դիտվելու համար անհրաժեշտ օրենսդրական նվազագույն չափանիշներին:

9. Հիմք ընդունելով վերոնշյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է պատժի մասով բեկանել Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների դատական ակտերը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչա՞փ են արդյոք ամբաստանյալ Դ.Փաշայանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու նպատակահարմարության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Եթե դատարանը, կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:*

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները (...)»:

Սույն քրեաիրավական նորմերը Վճռաբեկ դատարանի կողմից բազմիցս վերլուծության են ենթարկվել մի շարք գործերով կայացված նախադեպային որոշումներում, և մշտապես վերահաստատվել է դիրքորոշումն առ այն, որ դատարանի համոզվածությունը, վստահությունն այն մասին, որ ամ-

բաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց իրական պատիժ կրելու, պետք է հիմնվի օբյեկտիվ գոյություն ունեցող այնպիսի տվյալների համակողմանի վերլուծության վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը բազմիցս փաստել է, որ թեև պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգիրքն ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսում, սակայն դատարանի հետևությունները պետք է, ի թիվս այլոց, հիմնված լինեն նաև հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի ամբողջական գնահատման վրա (*հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ, ի թիվս այլ որոշումների, մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Գարուշ Մադաթյանի գործով 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԴ/0029/01/08, Արմեն Շահբազյանի գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԴ/0143/01/13, Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշումները*)՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթը, մեղքի ձևը և տեսակը, պատճառված վնասի չափը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, հանցագործության հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, նպատակներն ու շարժառիթները և այլն (ԵԱԴԴ/0034/01/12, ԼԴ/0093/01/12, ՏԴ/0018/01/13, ԵԷԴ/0132/01/13, ԵԱՆԴ/0060/01/13, ԵԿԴ/0096/01/13, ԵԿԴ/0252/01/13, ԵՄԴ/0027/01/14, ԳԴ/0014/01/14, ՍԴ/0204/01/13, ՏԴ/0031/01/14, ՍԴ3/0174/01/14, ԵԱԴԴ/0011/01/14, ԵԱՔԴ/0091/01/14, ԵԿԴ/0039/01/15, ԱՐԴ/0031/01/15 և այլն):

Հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վրա ազդող վերը նշված գործոններից մեղքի ձևի հետ կապված՝ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում նաև արձանագրել է. «*(...) [Մ]եղքի դիտավորյալ ձևով կատարվող հանցագործությունների ժամանակ առավել բարձր հանրային վտանգավորություն ունեն ուղղակի դիտավորությամբ կատարվող արարքները, որոնք ենթադրում են հանցավորի կողմից հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացման անխուսափելիության կամ իրական հնարավորության նախատեսում: (...) Բոլոր այն դեպքերում, երբ հանցանք կատարած անձի կողմից հստակ գիտակցվում է արարքի և վտանգավոր հետևանքների միջև առկա միանշանակ պատճառական կապը և դրա զարգացումը, այսինքն՝ առկա է վտանգավոր հետևանքների առաջացման անխուսափելիության նախատեսումը, օբյեկտիվորեն բարձրանում է նաև արարքի հանրային վտանգավորության աստիճանը (...)*» (տե՛ս *Ա.Շահբազյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԴ/0143/01/13 որոշման 14-րդ կետը):

12. ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. *«Դիտավորությամբ մեկ ուրիշին մարմնական վնասվածք պատճառելը կամ առողջությանն այլ ծանր վնաս պատճառելը (…)*

(…) պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով»:

Սեջբերված հանցակազմը Վճռաբեկ դատարանը վերլուծել է *Ա.Շահբազյանի* գործով որոշման շրջանակներում՝ ձևավորելով հետևյալ իրավական դիրքորոշումը. *«(…) ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում մարդու առողջության դեմ ուղղված հանցագործություններից ամենավտանգավորի՝ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու համար: Քննարկվող հանցագործության հանրային առավել բարձր վտանգավորությունը պայմանավորված է ոչ միայն նրանով, որ համապատասխան հակաիրավական արարքի արդյունքում մարդուն պատճառվում է վնաս, որը խիստ բացասական է անդրադառնում նրա առողջական վիճակի վրա, այլև նրանով, որ կարող է առաջ բերել ավելի ծանր հետևանքներ՝ ընդհուպ մինչև տուժողի մահ: Այս հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է դիտավորությամբ, որը կարող է լինել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի (…):*

(…) ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված՝ հանրորեն վտանգավոր արարքը կարող է կատարվել տարբեր եղանակներով: Մասնավորապես, հանցավորը տուժողի առողջությանը ծանր վնաս կարող է պատճառել՝ իր ֆիզիկական հնարավորությունները գործադրելով (ձեռքով կամ ոտքով հարվածելով, հրել-վայր գցելով, մարմնի որևէ մաս ջարդելով և այլն), տարբեր գործիքներ, իրեր կամ առարկաներ (դանակ, կացին, մուրճ, մետաղյա ձող, քար և այլն) օգտագործելով, զանազան մեխանիզմներ, միջոցներ կամ նյութեր (հրազեն, թույն, թմրանյութ և այլն) կիրառելով, տարերային աղետի իրադրությունը կամ առավել վտանգի աղբյուրն օգտագործելով և այլն: Քննարկվող հանցագործության կատարման նշված եղանակները, ելնելով գործի փաստական հանգամանքների առանձնահատկություններից, տարբեր կերպ են բնորոշում հանցավորի անձնավորության և կատարված հանցագործության վտանգավորության աստիճանը: Այսպես՝ տուժողի կենսական կարևոր օրգանների շրջանում դանակով հարված հասցնելիս հանցավորը ոչ միայն նախատեսում է հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացման անխուսափելիությունը, այլև գիտակցում է կամ առնվազն պարտավոր է գիտակցել, որ իր գործողություններով տուժողին պատճառում է առողջության ծանր վնաս, որը վտանգավոր է կյանքի համար և անգամ կարող է հանգեցնել մահվան: Այլ խոսքով՝ հանցավորը գործում է ուղղակի դիտավորությամբ և հստակ նախատեսում է իր արարքի և վտանգավոր հետևանքների միջև առկա միանշանակ պատճառական կապը և դրա զարգացումը, այդ թվում՝ գիտակցում է կամ պարտավոր է գիտակցել, որ տուժողին կարող է պատճառել մահ, սակայն ինքնավստահությամբ կամ անփու-

թությամբ հույս է ունենում, որ նշված ծանր հետևանքը չի առաջանա: Վերոգրյալն ինքնին վկայում է հանցավորի անձնավորության և կատարված հանցագործության վտանգավորության առավել բարձր աստիճանի մասին, ուստի օբյեկտիվորեն պետք է գնահատվի և հաշվի առնվի դատարանների կողմից պատիժ նշանակելիս:

(...) ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը ճիշտ գնահատելու և որպես արդյունք հանցավորի նկատմամբ քրեաիրավական ներգործության համաչափ միջոց կիրառելու համար դատարանները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն արարքի կատարման եղանակին, օգտագործված գործիքներին, միջոցներին, մարմնական վնասվածքների քանակին, բնույթին ու տեղակայմանը: Համապատասխան գնահատականի պետք է արժանացվի նաև կատարված հանրորեն վտանգավոր արարքի և դրա հետևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը: (...)» (տե՛ս *Արմեն Շահբազյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԴ/0143/01/13 որոշման 15-17-րդ կետերը):

13. Վերահաստատելով *Ա.Շահբազյանի* որոշմամբ արտահայտված և վերը մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանցակազմն առողջության դեմ ուղղված հանցագործությունների շարքում առանձնանում է իր առավել բարձր հանրային վտանգավորությամբ, ինչը պահանջում է համարժեք պատժողական քաղաքականության իրականացում: Այդ համատեքստում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ քննարկվող հոդվածով նախատեսված հանցանք կատարելու դեպքում պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս ստորադաս դատարանները պետք է հաշվի առնեն ինչպես խախտվող սույն հասարակական հարաբերության բնույթն ու կարևորությունը, այնպես էլ արարքի հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են անձի հոգեբանական վերաբերմունքն իր կատարած արարքի և դրա հետևանքների նկատմամբ, հանցագործության հանգամանքները, այդ թվում՝ հանցագործությանը նախորդող և ուղեկցող *(տե՛ս, mutatis mutandis, Հրանտ Պարանյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԷԴ/0132/01/13 որոշման 13-րդ կետը)* եղանակը, գործիքներն ու միջոցները, մարմնական վնասվածքների քանակը, տեղակայումը, բնույթը և այլն:

13.1. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ կոնկրետ գործի փաստական հանգամանքների շրջանակներում վնաս պատճառելու համար օգտագործված տարատեսակ գործիքները կամ առարկաները *(հրազեն, դանակ, կացին, մուրճ, մետաղյա ձող և այլն),* կյանքի համար վտանգ ներկա

յացնող վնասի պատճառումը, մեղքի դիտավորյալ ձևը (հատկապես՝ ուղղակի դիտավորությունը) իրենց ամբողջության մեջ անկանխելի են դարձնում հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացումը, մեծացնում հանցագործությունը հաջողությամբ ավարտին հասցնելու կամ ավելի մեծ վնաս պատճառելու հավանականությունը: Հետևաբար՝ նման դեպքերում օբյեկտիվորեն բարձրանում է նաև արարքի հանրային վտանգավորության աստիճանը *(տե՛ս, mutatis mutandis, Սարգիս Խաչատրյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի մարտի 27-ի թիվ ՏԴ/0031/01/14, Նարեկ Խաչատրյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԿԴ/0191/01/14, Արսեն Կարապետյանի և Ռուբեն Գուլգուլյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԱԴԴ/0011/01/14 որոշումների համապատասխանաբար 14-րդ, 13-րդ և 15-րդ կետերը, Սերգեյ Աբովյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԱԴԴ/0038/01/15 որոշման 13.1.-րդ կետը):*

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Դ.Փաշայանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա տուժողի հետ վիճաբանության ընթացքում մարմնական վնասվածք պատճառելու դիտավորությամբ իր մոտ եղած դանակով մեկ անգամ հարվածել է տուժող Ս.Խաչատրյանի կրծքավանդակի ձախ կեսին՝ վերջինիս առողջությանը կրծքավանդակի ձախ կեսի ծակած-կտրած թափանցող վնասվածքի ձևով պատճառելով կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով, ի թիվս այլոց, ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, ծանրացնող հանգամանքների բացակայությունը, արդյունքում եզրահանգել է, որ Դ.Փաշայանի ուղղվելը հնարավոր է առանց նշանակված պատիժը կրելու (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Մեղադրողն իր վերաքննիչ բողոքում վիճարկել է Առաջին ատյանի դատարանի կողմից որպես ամբաստանյալի անձը բնութագրող, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող գնահատված առանձին հանգամանքների իրավաչափությունը՝ արդյունքում փաստելով, որ ստորադաս դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառելիության հարցում եկել է սխալ հետևության (տե՛ս սույն որոշման 6.1.-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, դատական ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատավճռի օրինականությունը և հիմնավորվածությունը, իր որոշման «Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը» բաժնում մանրամասն շարադրել է դատախազի վերաքննիչ բողոքը, սակայն դատական ակտի պատճառաբանական մասում, ըստ էության, որևէ անդրադարձ չի կատարել բողոքի փաստարկներին՝ բա-

վարարվելով Առաջին ատյանի դատարանի կողմից հաշվի առնված հանգամանքները վերաշարադրելով: Արդյունքում իր անունից կրկին մատնանշելով Առաջին ատյանի դատարանի կողմից արդեն իսկ գնահատված առանձին հանգամանքները՝ Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառելիության հարցում Առաջին ատյանի դատարանը հանգել է ճիշտ հետևության (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

15. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները համադրելով սույն որոշման 11-13.1.-րդ կետերում շարադրված վերլուծության հետ՝ Վճռաբեկ դատարանը նախ արձանագրում է, որ ստորադաս դատարանները Դ.Փաշայանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս պատշաճ վերլուծության չեն ենթարկել կատարված հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը: Մասնավորապես՝ ստորադաս դատարանները պատշաճ չեն գնահատել՝

- խախտված հասարակական հարաբերության բնույթն ու կարևորությունը՝ այն, որ ամբաստանյալը ոտնձգել է առողջության և այն ապահովող այնպիսի հասարակական հարաբերության դեմ, որի խախտումը ոչ միայն խիստ բացասաբար է անդրադարձել տուժողի առողջական վիճակի վրա, այլև կարող էր առաջ բերել ավելի ծանր հետևանքներ՝ ընդհուպ մինչև մահ,

- հանցավորի հոգեբանական վերաբերմունքը իր արարքի և դրա հետևանքների նկատմամբ, մասնավորապես այն, որ ամբաստանյալը գիտակցել է, որ իր գործողություններով տուժողի առողջությանը պատճառում է ծանր վնաս, նախատեսել է իր արարքի և հետևանքների միջև առկա անմիջական պատճառական կապը,

- ամբաստանյալի մոտ դանակի առկայության և հանրորեն վտանգավոր արարքը դանակի գործադրմամբ կատարելու հանգամանքը,

- պատճառված մարմնական վնասվածքի տեղակայումն ու բնույթը, մասնավորապես այն, որ ամբաստանյալը հարվածը հասցրել է կրծքավանդակի ձախ կեսին և պատճառել կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

15.1. Վերոգրյալի հետ միաժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը չի պահպանել վերաքննիչ բողոքի հիմքերին և հիմնավորումներին անդրադառնալու առնչությամբ *Մ.Պողոսյանի, Հ.Մարտիրոսյանի և այլնի* գործով Վճռաբեկ դատարանի ձևավորած իրավական դիրքորոշումները (տե՛ս *Մ.Պողոսյանի, Հ.Մարտիրոսյանի և այլնի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԾԴ/0034/01/15 որոշումը): Այդ համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրողի վերաքննիչ բողոքի՝ սույն որոշման 6.1.-րդ կետում մատնանշված հիմնավորումները ողջամտորեն կարող են ազդել պատժի կրման ընդհանուր հարցի լուծման վրա: Նման պայմաններում դատա-

կան ակտի պատճառաբանվածության չափանիշի իմաստով Վերաքննիչ դատարանը պարտավոր էր քննարկման առարկա դարձնել բողոքի նշված հիմնավորումները և արդյունքում պատճառաբանված որոշում կայացնել այն մասին, թե որ իրավանորմերով ղեկավարվելու արդյունքում և/կամ ինչ հանգամանքների հիման վրա է եկել այս կամ այն հետևության: Հետևաբար մեղադրողի վերաքննիչ բողոքում ներկայացված համապատասխան փաստարկները գնահատման չենթարկելու պայմաններում Վերաքննիչ դատարանի որոշումը չի բավարարում դատական ակտի պատճառաբանվածության վերաբերյալ պահանջին:

15.2. Ինչ վերաբերում է ամբաստանյալի անչափահաս լինելու հանգամանքին, ապա Վճռաբեկ դատարանը նշում է, որ միայն այն փաստը, որ անձը հանցանք կատարելու պահին եղել է անչափահաս, չի կարող մեխանիկորեն հանգեցնել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմանը, այլ այդ դեպքում նշյալ հոդվածի կիրառման հնարավորությունը պետք է քննարկվի գործում առկա մեղմացնող հանգամանքների համակցության, հանցագործության՝ հանրային վտանգավորության բնույթի ու աստիճանի և այլ հանգամանքների համատեքստում *(տե՛ս, mutatis mutandis, Նարեկ Մադյանի և Դավիթ Հովհաննիսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի մարտի 30-ի թիվ ՏԴ/0045/01/14 որոշման 14.1.-րդ կետը):*

Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է հայտնում նաև բողոքաբերի՝ սույն որոշման 8.1.-րդ կետում բարձրացրած փաստարկին՝ արձանագրելով, որ այդպիսի հանգամանքներն իրենց բնույթով չունեն այնպիսի իրավական նշանակություն, որպեսզի դրվեն պատիժ նշանակելու կամ պատժի կրման նպատակահարմարության հարցի լուծման հիմքում:

Իսկ ինչ վերաբերում է բողոքաբերի՝ սույն որոշման 8.2.-րդ կետում բարձրացրած փաստարկներին, ապա Վճռաբեկ դատարանը դրանք անհիմն է համարում, քանի որ համապատասխան հանգամանքները ստորադաս դատարանների կողմից դիտարկվել են որպես ոչ թե պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող, այլ անձը բնութագրող տվյալներ (տե՛ս սույն որոշման 6-րդ, 7-րդ կետերը):

16. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Դ.Փաշայանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու նպատակահարմարության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևություններն իրավաչափ չեն:

17. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ, 385-րդ հոդվածների խախտումներ, որոնք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի իմաստով հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, օրենքով սահմանված կարգով պետք է հանգի համապատասխան հետևության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Դավիթ Հովհաննեսի Փաշայանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի սեպտեմբերի 27-ի դատավճիռը օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի մարտի 3-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Դավիթ Հովհաննեսի Փաշայանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

37.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԲ-04/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
	Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝	Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ՝ պաշտպան	Կ.ՄԵԺԼՈՒՄՅԱՆԻ

2017 թվականի դեկտեմբերի 20-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Սիլվա Վարազդատի Ասատրյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի դեկտեմբերի 15-ի որոշման դեմ դատապարտյալ Ս.Ասատրյանի պաշտպան Կ.Մեժլումյանի վճռաբեկ բողոքի հիման վրա նոր հանգամանքի հիմքով հարուցված վարույթով գործը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2001 թվականի դեկտեմբերի 29-ին ՀՀ քրեական օրենսգրքի 15-100-րդ հոդվածի և 232-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 17228101 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2005 թվականի սեպտեմբերի 19-ի որոշմամբ Յուրի Գրիգորիի Վոլֆսոնը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի

2-րդ մասի 6-րդ, 8-րդ կետերով, 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 235-րդ հոդվածի 1-ին մասով և 236-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ 2005 թվականի սեպտեմբերի 26-ի որոշմամբ Սիլվա Վարազդատի Ասատրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 8-րդ կետերով:

Նույն մարմնի՝ 2006 թվականի հունվարի 25-ի և փետրվարի 10-ի որոշումներով Յու.Վոլֆսոնին և Ս.Ասատրյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել ու լրացվել է, Յու.Վոլֆսոնին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 8-րդ կետերով, 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 235-րդ հոդվածի 1-ին մասով, 236-րդ հոդվածի 1-ին մասով, 268-րդ հոդվածի 2-րդ մասով, իսկ Ս.Ասատրյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 8-րդ կետերով, 38-185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով:

2006 թվականի մարտի 15-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2007 թվականի հոկտեմբերի 12-ի դատավճռով Ս.Ասատրյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 8-րդ կետերով, 38-185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով:

Ս.Ասատրյանը ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 8-րդ կետերով դատապարտվել է ազատազրկման՝ 8 (ութ) տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 38-185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով՝ ազատազրկման՝ 2 (երկու) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա՝ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, նրա նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 9 (ինը) տարի ժամկետով:

Նույն դատավճռով դատապարտվել է նաև Յուրի Գրիգորիի Վոլֆսոնը:

3. Ամբաստանյալ Յու.Վոլֆսոնի և նրա պաշտպան Ա.Կարապետյանի, ամբաստանյալ Ս.Ասատրյանի և նրա պաշտպան Կ.Մեժլումյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2008 թվականի հունիսի 18-ի դատավճռով ամբաստանյալ Յու.Վոլֆսոնի նկատմամբ նշանակված պատժի մասով Առաջին ատյանի դատարանի՝ 2007 թվականի հոկտեմբերի 12-ի դատավճիռը փոփոխել է, իսկ ամբաստանյալ Ս.Ասատրյանի մասով դատական ակտը թողել է անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2008 թվականի հունիսի 18-ի դատավճռի դեմ վճռաբեկ բողոք են բերել դատապարտյալ Ս.Ասատրյանը, նրա պաշտպան, Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբան Կ.Մեժ-

լումյանը: Վճռաբեկ դատարանը 2008 թվականի դեկտեմբերի 15-ի որոշմամբ ներկայացված բողոքը վերադարձրել է:

5. Ս.Ասատրյանի գանգատի հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) 2017 թվականի ապրիլի 27-ին *Ասատրյանն ընդդեմ Հայաստանի* գործով (գանգատ թիվ 3571/09) կայացրել է վճիռ՝ արձանագրելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի և 6-րդ հոդվածի 3-րդ կետի «գ» ենթակետի խախտում:

6. Դատապարտյալ Ս.Ասատրյանի պաշտպան Կ.Մեժլումյանը, որպես նոր հանգամանք վկայակոչելով Եվրոպական դատարանի հիշյալ վճիռը, բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան:

Պաշտպան Կ.Մեժլումյանի բողոքի հիման վրա Վճռաբեկ դատարանը 2017 թվականի նոյեմբերի 29-ին որոշում է կայացրել նոր հանգամանքի հիմքով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի դեկտեմբերի 15-ի որոշման վերանայման վարույթ հարուցելու և վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

7. Առաջին ատյանի դատարանի դատավճռով Ս.Ասատրյանը ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 8-րդ կետերով, 38-185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով մեղավոր է ճանաչվել այն բանի համար, որ նա *«2001թ. նոյեմբերին իր մտերիմ Յուրի Վոլֆսոնին պատվիրել է շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով՝ ավտոմեքենան պայթեցնելու միջոցով, սպանել իր և իր ընտանիքի հետ բշնամական հարաբերությունների մեջ գտնվող Մելիք Գասպարյանին՝ դրա դիմաց գումարային վարձատրություն կամ գույքային փոխհատուցում տալու պայմանով: Հանցավոր մտադրությունն իրագործելու նպատակով Յուրի Վոլֆսոնը 2001թ. դեկտեմբեր ամսին պատրաստել է էլեկտրական շղթայի միջոցով ավտոմեքենայի տատանումներից գործարկվող պայթուցիկ սարք, որը 2001թ. դեկտեմբերի 29-ին՝ ժամը 04-ի սահմաններում, մագնիսի միջոցով ամրացվել է Երևան քաղաքի Ամառյան 18 հասցեում գտնվող Մ.Գասպարյանի բնակության վայրի բակում կայանված «Միքսուբիշի Պաջերո» մակնիշի 61 ԼԼ 637 պ/հ ավտոմեքենայի տակ՝ վարորդի նստատեղի ուղղությամբ, և այն բերելով մարտական աշխատունակ վիճակի՝ հեռացել է:*

Նույն օրը՝ ժամը 10-ի սահմաններում, Մ.Գասպարյանի կողմից ավտոմեքենան գործարկելու հետևանքով պայթուցիկ սարքը գործի է դրվել ու պայթել, սակայն վերջինիս սպանությունը ավարտին չի հասցվել հանցա-

վորների կամքից անկախ հանգամանքներով, և Մ.Գասպարյանի առողջությանը պատճառվել է միջին ծանրության վնաս:

Պայթյունի հետևանքով դիտավորությամբ վնասվել են նաև (...) գույքը՝ (...) ընդհանուր առմամբ նրանց պատճառելով 2.647.250 ՀՀ դրամի խոշոր չափի գույքային վնաս» (տե՛ս քրեական գործ, հատոր 15-րդ, թերթ 374):

8. Վերաքննիչ դատարանը 2008 թվականի հունիսի 18-ի դատավճռով արձանագրել է. *«(...) Վերաքննիչ դատարանը, քննարկելով պաշտպան Կ.Մեժլումյանի վերաքննիչ բողոքի (...) փաստարկները, (...) գտնում է, որ սույն գործի քննության ընթացքում թույլ չեն տրվել քրեադատավարական կամ նյութական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին հիմք հանդիսանալ առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանելու և Ս.Ասատրյանի նկատմամբ արդարացման դատավճիռ կայացնելու համար:*

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ արդարացման հիմքով բերված վերաքննիչ բողոքները հիմնավոր չեն, ամբաստանյալների արարքների քրեաիրավական որակման և առաջադրված մեղադրանքներում նրանց մեղավորությունը հաստատված լինելու մասին առաջին ատյանի դատարանի հետևությունը հիմնավորված է և պատճառաբանված, հետևաբար՝ բերված բոլոր վերաքննիչ բողոքները պետք է թողնել առանց բավարարման(...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 16-րդ, թերթ 334):

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքաբերի պնդմամբ՝ Եվրոպական դատարանի կողմից 2017 թվականի ապրիլի 27-ին *Ասատրյանն ընդդեմ Հայաստանի* գործով կայացված վճիռը նոր հանգամանք է ՀՀ վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին 2008 թվականի դեկտեմբերի 15-ի որոշումը վերանայելու և ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար:

Բողոք բերած անձը, մեջբերելով Եվրոպական դատարանի հիշյալ վճռի հիմնավորումները, նշել է, որ ներպետական դատարանների կողմից կայացված դատական ակտերով խախտվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքը: Մասնավորապես, բողոքաբերը փաստարկել է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը Ս.Ասատրյանի մեղավորությունն ապացուցելու համար դատավճռի հիմքում դրել է դատարանում չհարցաքննված վկաներ Լ.Գյուրջյանի, Ա.Աղեյանի, Ա.Բաղդասարյանի, Ա.Աթանեցյանի՝ դատարանում չհետազոտված նախաքննական ցուցմունքները, և պաշտպանական կողմը հնարավորություն չի ունեցել դատարանում հարցաքննելու այդ վկաներին:

10. Վերոշարադրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է վերանայել Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի դեկտեմբերի 15-ի որոշումը,

բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2008 թվականի հունիսի 18-ի դատավճիռը և գործն ուղարկել Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք *Ասատրյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման արձանագրման փաստը ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի դեկտեմբերի 15-ի որոշումը վերանայելու հիմք է:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդվածի համաձայն՝

«1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:

2. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է Վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ Վճռաբեկ դատարանը»:

Նույն օրենսգրքի 426.4-րդ հոդվածի համաձայն՝

«1. Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում.

(...)

2) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը.

(...):

2. Սույն հոդվածի առաջին մասի (...) 2-րդ կետ[ով] նախատեսված նոր հանգամանք[ը] հաստատված [է] համարվում (...) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող տվյալ միջազգային դատարանի որոշմամբ դր[ա] ուժի մեջ մտնելու պահից:

(...)»:

Մեջբերված նորմերի բովանդակությունից բխում է, որ նոր հանգամանքով դատական ակտերի վերանայման հիմք է նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի, այդ թվում՝ Եվրոպական դատարանի ուժի մեջ մտած վճիռը, որով հաստատվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը (տե՛ս, *mutatis mutandis, Գրիշա Վիրաբյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՎԲ-05/13, *Ժիրայր Սեֆիլյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014

թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13, *Բագրատ, Արևիկ և Նարինե Նալբանդյանների* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-06/15, *Բագրատ և Նարինե Նալբանդյանների* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-04/15, *Արայիկ Զալյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ՎԲ-02/16, *Հրաչյա Մուրադյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 30-ի, *Դավիթ Ավետիսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 21-ի թիվ ՍԴ3/0088/01/09 որոշումները):

13. Այսպես՝ *Ասատրյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի «գ» ենթակետի խախտում, քանի որ դիմումատու Ս.Ասատրյանը զրկված է եղել իր դեմ ցուցմունք տված վկաներին հարցաքննելու հնարավորությունից:

13.1. Մասնավորապես՝ Եվրոպական դատարանը քննարկվող գործի շրջանակներում վերահաստատել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առնչությամբ իր նախադեպային իրավունքի շրջանակներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ փաստելով. *«(…) Արդար դատաքննության հասկացությունը ենթադրում է, inter alia, մրցակցային դատավարության իրավունքը, ինչը քրեական գործի պարագայում նշանակում է, որ և՛ մեղադրանքի, և՛ պաշտպանության կողմերին պետք է տրվի մյուս կողմի ներկայացրած փաստարկներին ու ապացույցներին ծանոթանալու և դրանք մեկնաբանելու հնարավորություն (…): Այս առնչությամբ դատարանը նշում է, որ հնարավոր է, որ դատավարական այնպիսի իրավիճակը, որի դեպքում մի կողմի համար հակառակ կողմի համեմատ անբարենպաստ պայմաններ չեն ստեղծվում, այնուամենայնիվ հանդիսանա մրցակցային դատավարության իրավունքի խախտում, եթե տվյալ կողմին չի տրվել ներկայացված բոլոր ապացույցներին կամ փաստարկներին ծանոթանալու և դրանք մեկնաբանելու հնարավորություն, ինչը թույլ կտար ազդել դատարանի որոշման վրա (…):*

(…) [Ո]րպես ընդհանուր կանոն, [Կոնվենցիայի] 6-րդ հոդվածի 1-ին կետով և 3-րդ կետի «գ» ենթակետով պահանջվում է, որ ամբաստանյալին տրվի վկայի՝ իր դեմ տված ցուցմունքի թույլատրելիությունը վիճարկելու կամ իր դեմ ցուցմունք տված վկային հարցաքննելու համարժեք և պատշաճ հնարավորություն՝ վկայի կողմից ցուցմունք տալու ժամանակ կամ հետագա փուլերում (…) Աստիճանության կողմից հետաքննության կամ դատական քննության փուլերում ստացված ցուցմունքները որպես ապացույց օգտագործելն ինքնին չի հակասում վերոնշյալ դրույթներին՝ պայմանով, որ դրա արդյունքում պաշտպանության կողմի իրավունքները չեն խախտվել (…):

Ալ-Խավաջայի և Թահերիի գործում (…) Մեծ պալատը հստակեցրել է այն սկզբունքները, որոնք պետք է կիրառվեն այն դեպքում, երբ վկան դռնբաց դատական քննությանը չի ներկայանում: Այդ սկզբունքները կարող են ամփոփ ներկայացվել հետևյալ կերպ՝

i) դատարանը նախապատրաստական փուլում նախ պետք է քննի այն հարցը, թե արդյոք հիմնավոր պատճառ կա չներկայացած վկայի տված ցուցմունքը որպես ապացույց ճանաչելու համար՝ հաշվի առնելով, որ վկաները պետք է, որպես ընդհանուր կանոն, ցուցմունք տան դատական քննության ժամանակ, և որ պետք է ձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ նրանց ներկայանալն ապահովելու համար.

ii) չներկայանալու ամենահաճախ հանդիպող պատճառներն են, օրինակ, ինչպես Ալ-Խավաջայի և Թահերիի գործում (վերեւում հիշատակված), վկայի մահը կամ վախը վրեժխնդրությունից: Այնուամենայնիվ, վկան դատական քննությանը կարող է չներկայանալ նաև այլ օրինական պատճառներով.

iii) այն դեպքում, երբ վկան չի հարցաքննվել վարույթի նախորդ որեւէ փուլում, դատական քննության ժամանակ դատարանում ցուցմունք տալու փոխարեն վկայի՝ նախկինում տված ցուցմունքի գրավոր հաստատումը որպես ապացույց ճանաչելը պետք է ծայրահեղ միջոց լինի.

iv) չներկայացած վկաների՝ նախկինում տված ցուցմունքը որպես ապացույց ճանաչելն անբարենպաստ հետևանքներ է առաջացնում ամբաստանյալի համար, որը, ըստ էության, քրեական դատավարության ժամանակ պետք է ունենա իր դեմ ներկայացված ապացույցների թույլատրելիությունը վիճարկելու արդյունավետ հնարավորություն:

Մասնավորապես, նա պետք է կարողանա ստուգել վկաների տված ցուցմունքների ճշմարտացիությունը և հավաստիությունը՝ իր ներկայությամբ վկաներին բանավոր հարցաքննելու միջոցով՝ վկայի կողմից ցուցմունք տալու ժամանակ կամ վարույթի հետագա փուլերում.

v) «միակ կամ վճռորոշ ապացույցի սկզբունքի» համաձայն՝ այն դեպքում, երբ ամբաստանյալին դատապարտելու համար հիմք են ծառայում բացառապես կամ հիմնականում այն վկաների տված ցուցմունքները, որոնց մեղադրյալը չի կարող հարցաքննել դատավարության փուլերից որևէ մեկում, նրա պաշտպանության իրավունքներն անհիմն սահմանափակվում են.

vi) այս համատեքստում «վճռորոշ» ցուցմունք պետք է նշանակի միայն այնպիսի նշանակության կամ կարևորության ցուցմունք, որը կարող է որոշել գործի ելքը: Եթե վկայի չստուգված ցուցմունքը հիմնավորվում է այլ հաստատված ապացույցներով, ապա գնահատականն այն մասին՝ արդյո՞ք այն վճռորոշ է, կախված կլինի հիմնավորող ապացույցների հավաստիությունից. որքան հավաստի են մեղավորությունը հաստատող մյուս ապացույցները, այնքան քիչ հավանական է, որ չներկայացած վկայի ցուցմունքը կհամարվի վճռորոշ.

vii) այնուամենայնիվ, քանի որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետը պետք է մեկնաբանվի դատաքննության արդարացիության ընդհանուր ուսումնասիրության համատեքստում, միակ կամ վճռորոշ ապացույցի սկզբունքը չպետք է կիրառվի ոչ ճկուն եղանակով.

viii) մասնավորապես, եթե ուրիշի խոսքի վրա հիմնված ցուցմունքը միակ կամ վճռորոշ ապացույցն է ամբաստանյալի դեմ, ապա այն որպես ապացույց ճանաչելն ինքնըստինքյան չի հանգեցնի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման: Միևնույն ժամանակ, եթե դատապարտման համար միակ կամ վճռորոշ հիմք են չներկայացած վկաների ցուցմունքները, ապա դատարանը պետք է դատական քննությունը հանգամանորեն ուսումնասիրի: Պայմանավորված այն վտանգներով, որոնք կարող են առաջանալ այդ ցուցմունքները որպես ապացույց ճանաչելու հետևանքով, դրանք մեծ ազդեցություն կունենան հավասարակշռության վրա, և անհրաժեշտ կլինեն դրանց հակակշռող բավարար գործոններ, այդ թվում՝ հուսալի դատավարական երաշխիքներ: Ամեն դեպքում հարցն այն է, թե արդյո՞ք առկա են բավարար հակակշռող գործոններ, այդ թվում՝ միջոցներ, որոնք թույլ կտան արդարացի և պատշաճ գնահատել այդ ցուցմունքների հավաստիությունը՝ դրանք որպես ապացույց ճանաչելու համար: Սա թույլ կտա, որ դատապարտումը հիմնված լինի այդ ցուցմունքների վրա միայն այն դեպքում, երբ դրանք բավականաչափ հավաստի են՝ հաշվի առնելով գործի համար դրանց կարևորությունը:

(…) [Եվրոպական դատարանը նշում է, որ] վկայի չներկայանալու համար հիմնավոր պատճառի բացակայությունը չի կարող ինքնին վկայել դատաքննության արդարացի չլինելու մասին, թեև ընդհանուր արդարացիությունը գնահատելիս այն ամեն դեպքում կարևոր գործոն է հավասարակշռությունը որոշելու համար և կարող է որոշիչ դեր ունենալ 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում արձանագրելու հարցում: Ավելին, հաշվի առնելով, որ դատարանի խնդիրն է պարզել՝ արդյո՞ք դատաքննությունն ընդհանուր առմամբ արդարացի է եղել, այն պետք է ուսումնասիրի բավարար հակակշռող գործոնների առկայությունը ոչ միայն այն գործերում, որոնց դեպքում չներկայացած վկայի ցուցմունքը միակ կամ վճռորոշ հիմքն է եղել դիմումատուին դատապարտելու համար, այլ նաև այն գործերում, որոնց դեպքում այն չի կարողացել հստակ պարզել՝ արդյո՞ք խնդրո առարկա ցուցմունքը միակը և վճռորոշն է եղել, սակայն, այնուհանդերձ, համոզվել է, որ այդ ցուցմունքը կարևոր նշանակություն է ունեցել, և այն որպես ապացույց ճանաչելը, հնարավոր է, սահմանափակել է պաշտպանության կողմի հնարավորությունները: Հակակշռող գործոնների՝ դատաքննությունն արդար համարելու համար անհրաժեշտ շրջանակը կախված է չներկայացած վկայի ցուցմունքի նշանակությունից: Որքան կարևոր նշանակություն ունենա այդ ցուցմունքը, այնքան ավելի կարևոր նշանակություն պետք է ունենան հակակշռող գործոնները, որպեսզի դատաքննությունն ընդհանուր առմամբ համարվի արդարացի (…)» (տե՛ս *Ասատրյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 52-55-րդ կետերը):

14. Վերոգրյալ սկզբունքները կիրառելով քննարկվող գործի փաստական տվյալների նկատմամբ՝ Եվրոպական դատարանը վերլուծության ա-

ռարկա է դարձրել այդ չափանիշների՝ ներպետական դատարանների կողմից պահպանված լինելու հարցը:

14.1. Մասնավորապես՝ Եվրոպական դատարանը նշել է. *«(…) Վարչական շրջանի դատարանի դատավճռի մեջ նշված ապացույցներից բացի, Վերաքննիչ դատարանը հիմնվել է վկաներ Ա.Աթ.-ի, Լ.Գ.-ի, Ա.Ա.-ի և Ա.Բ.-ի նախաքննության ցուցմունքների վրա (…) և եկել է այն եզրահանգման, որ դիմումատուի՝ դատական քննության ժամանակ և իր վերաքննիչ բողոքում ներկայացրած արդարացումն արժանահավատ չէ:*

(…)

Դատարանն այս առնչությամբ նշում է, որ վարչական շրջանի դատարանի դատավճռում, որն այնուհետև ամբողջությամբ անփոփոխ է թողնվել Վերաքննիչ դատարանի կողմից այնքանով, որքանով այն վերաբերում էր դիմումատուի դատապարտմանը, անշուշտ նշվել են դիմումատուի մեղավորությունն ուղղակիորեն հաստատող այլ ապացույցներ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն փաստը, որ Վերաքննիչ դատարանն անհրաժեշտ է համարել հիմք ընդունել նաև վկաներ Լ.Գ.-ի, Ա.Ա.-ի, Ա.Բ.-ի և Ա.Աթ.-ի նախաքննական ցուցմունքները՝ հաստատելու համար վարչական շրջանի դատարանի եզրահանգումն այն մասին, որ դիմումատուն՝ հակառակ իր արդարացումներին, Մ.Գ.-ին սպանելու շարժառիթ է ունեցել, դատարանը գտնում է, որ այդ ցուցմունքները նշանակություն են ունեցել գործի համար: Ինչ վերաբերում է այդ ապացույցներին, ապա Վերաքննիչ դատարանը պարտավոր էր մեղադրյալին իր պաշտպանությունը պատշաճորեն կազմակերպելու և իր բոլոր համապատասխան փաստարկները ներկայացնելու հնարավորություն ընձեռել:

(…)

Ճիշտ է, որ Վերաքննիչ դատարանը դիմումատուի մեղավորության վերաբերյալ նոր եզրակացության չի հանգել: Այնուամենայնիվ, ունենալով Վարչական շրջանի դատարանի դատավճիռը փաստերի և օրենքի տեսանկյունից վերանայելու ամբողջական իրավասություն՝ Վերաքննիչ դատարանն իր եզրահանգումները կատարելիս ոչ միայն հիմք է ընդունել վկաների՝ Վերաքննիչ դատարանում չստուգված ցուցմունքները, այլ նաև խնդրո առարկա վկաները չեն հարցաքննվել Վարչական շրջանի դատարանի կողմից (…):

Վարչական շրջանի դատարանն այդ ապացույցներին չի անդրադարձել նաև դիմումատուին դատապարտելիս: Այս հանգամանքներում այն փաստը, որ Վերաքննիչ դատարանն անձամբ չի քննել այն վկաներին, որոնց ցուցմունքները հետագայում օգտագործվել են դիմումատուի դեմ, կարող էր մեծապես ազդել դիմումատուի պաշտպանության իրավունքների վրա» (տե՛ս *Ասատրյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 57, 60-61-րդ կետերը):

14.2. Եվրոպական դատարանը նշել է նաև. *«(…) [Վ]կա Լ.Գ.-ն, լինելով դիմումատուի դուստրը, ներպետական օրենսդրության համաձայն, ունեցել է ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելու իրավունք և օգտվել է*

այդ իրավունքից (…): Ուստի, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «գ» ենթակետի համաձայն վերլուծելու տեսանկյունից՝ Լ.Գ.-ն, օգտվելով մերձավոր ազգականի՝ դիմումատուի դեմ ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելու իր օրինական իրավունքից, դիմումատուի վերաբերյալ գործով դատական քննությանը չներկայացած մյուս երեք վկաներից տարբեր կարգավիճակ է ունեցել: Այնուամենայնիվ, չնայած այն փաստին, որ Լ.Գ.-ն օգտվել է ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելու՝ օրենքով սահմանված իր իրավունքից, Վերաքննիչ դատարանը, այնուամենայնիվ, հիմնվել է նրա նախաքննական ցուցմունքների վրա, որոնք նա տվել էր այն փուլում, երբ դիմումատուն վարույթում դեռևս մեղադրյալի կարգավիճակ չուներ:

(…) Ինչ վերաբերում է վկաներ Ա.Ա.-ին, Ա.Բ.-ին և Ա.Աթ.-ին, ապա (…) այդ վկաները Վերաքննիչ դատարանի կողմից չեն հարցաքննվել: Նրանք նաև չեն հարցաքննվել առաջին ատյանի դատարանի կողմից և ոչ էլ ընդգրկվել են դատական նիստին կանչվելու ենթակա անձանց ցուցակում: Վերաքննիչ դատարանը, այնուամենայնիվ, հիմնվել է նախաքննության ընթացքում նրանց տված ցուցմունքների վրա, երբ մեղադրյալին դեռ որևէ մեղադրանք առաջադրված չի եղել, ինչի արդյունքում դիմումատուն զրկված է եղել նրանց ցուցմունքները վիճարկելու հնարավորությունից, մինչդեռ քրեական դատավարության ներպետական օրենսդրության համաձայն՝ Վերաքննիչ դատարանը չէր կարող հիմնվել վերաքննիչ վարույթին չներկայացած և Առաջին ատյանի դատարանում չհարցաքննված վկաների ցուցմունքների վրա (…)» (տե՛ս *Ասատրյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 62-63-րդ կետերը):

14.3. Անդրադառնալով չներկայացած վկաների ցուցմունքները «միակը և վճռորոշը» լինելու հարցին՝ Եվրոպական դատարանն արձանագրել է. *«(…) Դատարանի համար պարզ չէ՝ արդյո՞ք վկաներ Ա.Ա.-ի, Ա.Բ.-ի եւ Ա.Աթ.-ի ցուցմունքները միակը և վճռորոշ են եղել, սակայն այն այդուհանդերձ համոզված է, որ դրանք ձշանակալի դեր են ունեցել, և դրանք որպես ապացույց ճանաչելը, հնարավոր է, սահմանափակել են պաշտպանության կողմի հնարավորությունները (…): Դատարանը նշում է, որ պաշտպանության կողմի հնարավորությունների սահմանափակումը փոխհատուցելու համար որևէ դատավարական երաշխիք չի եղել: Մասնավորապես, դիմումատուն նախաքննության ընթացքում այդպես էլ հնարավորություն չի ունեցել խնդրո առարկա վկաների ցուցմունքների թույլատրելիությունը վիճարկելու եւ հիմնավոր պատճառով չէր կարող այդպիսի պահանջ ներկայացնել դատական քննության ժամանակ, քանի որ այդ վկաները չէին ընդգրկվել դատական նիստին կանչվելու ենթակա անձանց ցուցակում: Ավելին, քանի որ խնդրո առարկա ապացույցները չէին հետազոտվել դրնբաց դատական քննության ժամանակ, պաշտպանության կողմը տեղյակ չէր անգամ, որ Վերաքննիչ դատարանը դիմումատուի մեղավորությունը հաստատելու համար*

հիմնվելու է այդ ապացույցների վրա (…)» (տե՛ս *Ասատրյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 64-րդ կետը):

15. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ «*(…) վերոնշյալ դատողությունները բավարար են, որպեսզի դատարանը գա այն եզրահանգման, որ տվյալ դեպքում խախտվել է դիմումատուի արդար դատաքննության իրավունքը:*

(…) Հետևաբար տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում» (տե՛ս *Ասատրյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 65-66-րդ կետերը):

16. Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ *Ասատրյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման արձանագրման փաստը ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի դեկտեմբերի 15-ի որոշումը վերանայելու հիմք է:

17. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. *Ասատրյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով արձանագրված՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտումը վերացնելու ամենապատշաճ միջոցն արդյոք վիճարկվող դատական ակտերը բեկանելը և գործը նոր քննության ուղարկելն է:

18. *Ասատրյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանը, վերահաստատելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում արձանագրվելու դեպքում վարույթը վերաբացելու առնչությամբ իր նախադեպային իրավունքում ձևավորած իրավական դիրքորոշումները, արձանագրել է. *«(…) Դատարանը անհրաժեշտ է համարում նաև նշել, որ վճիռը, որով այն Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում է արձանագրում, պատասխանող պետության վրա իրավական պարտավորություն է դնում ոչ միայն շահագրգիռ անձանց վճարելու արդարացի փոխհատուցման կարգով տրամադրվելիք գումարները, եթե այդպիսիք կան, այլ նաև նախարարների կոմիտեի վերահսկողությամբ ընտրել ընդհանուր և (կամ), անհրաժեշտության դեպքում, անհատական բնույթի միջոցներ, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել իր ներպետական իրավական համակարգում՝ դատարանի կողմից արձանագրված խախտմանը վերջ դնելու և դրա հետևանքների համար այնպիսի հատուցում տրամադրելու համար, որ հնարավորինս վերականգնվի խախտումից առաջ առկա իրավիճակը (…): Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում արձանագրելու դեպքում դիմումատուի համար պետք է հնարավորինս վերականգնվի այն իրավիճակը, որում նա կգտնվեր, եթե սույն դրույթի պահանջները չանտեսվեին (…):*

(…) Դատարանն այս առնչությամբ նշում է, որ քրեական դատավարության օրենսգրքի 426.1 և 426.4 հոդվածներով նախատեսվում է ներպե-

տական դատական ակտը վերանայելու հնարավորություն, եթե դատարանն արձանագրել է Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում (...): Ինչպես Դատարանը սահմանել է սույն գործին նման նախորդ գործերում՝ հատուցման ամենապատշաճ ձևը, որպես կանոն, կլինի գործի պատշաճ կարգով վերանայումը՝ արդար դատաքննության բոլոր պահանջների պահպանմամբ (...)» (տե՛ս *Ասատրյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 73-74-րդ կետերը):

19. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ *Ասատրյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով արձանագրված՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտումը վերացնելու ամենապատշաճ միջոցը վիճարկվող դատական ակտերը բեկանելը և գործը նոր քննության ուղարկելն է: Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2007 թվականի հոկտեմբերի 12-ի և Վերաքննիչ դատարանի՝ 2008 թվականի հունիսի 18-ի դատական ակտերը պետք է բեկանել և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361[1]-րդ, 397-րդ, 398-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426.1-րդ, 426.2-րդ, 426.4-րդ, 426.7-րդ և 426.9-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Սիլվա Վարազդատի Ասատրյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի դեկտեմբերի 15-ի որոշումը վերանայել:

2. Դատապարտյալ Ս.Ասատրյանի մասով Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի՝ 2007 թվականի հոկտեմբերի 12-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի հունիսի 18-ի դատավճիռը բեկանել և գործն այդ մասով ուղարկել Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

2017 թվական

Հատոր IX

ՄԱՍ II

Թուղթը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84 1/16:
Տպագրական 36.5 մամուլ:
Տպաքանակ՝ 500:

Տպագրված է «Էդիթ Պրինտ» ՍՊԸ տպարանում:

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Հեռախոս՝ 52 08 88
56 08 41